

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ

ՀՐՆԵՒՆՈՐ


ԿՏԵԿԵՐԵՆԵՑ

ԵՇԽՆՏԵՍՐԵԱՑ

Հ. ՅԼՐՈՒԹԻՒՆ ԵՆԳՈՒԹՃԵԱՆ

Ի ՄԻՒԹ. ՈՒԽՏԷՆ

A I  
8982



ՎՃԻՆՆԵ

ՊԵՏՏՊ. Ս. ԵՍՏՈՒԵՆԵՆԻ ՎԱՆՔԸ

1851, ԹԵ





## ՅԵՌԵՅԱԲԵՆ

ՍՈՒՐԲ կամ ինչպէս մենք աւելի բացայայտ կ'ըսենք, Աստուծոյն զինքէն մեր Արարչին ու Աստուծոյն ազգեցութեամբ եւ առաջնորդութեամբ շարադրուած գրքերուն հաւաքումն է, որոնց մէջ Աստուած իր սուրբ կամքն ու մարդկային ազգին փրկութեան եւ երջանկութեան հարկաւոր եղածը մեզի կը յայտնէ: Մենք ողորմելի եւ մահկանացու մարդիկ չէ թէ միայն պարտաւոր ենք Աստուծոյ յայտնեալ կամքին հնազանդիլ, իր յայտնութեան հաւատալ ու իր հրամանները ճշգիւ կատարել<sup>1</sup>, հապա նաեւ պէտք ենք մեծապէս շնորհակալ ըլլալ Աստուծոյ եւ զմեզ բախտաւոր ու երջանիկ սեպել, որ իր ամենակարող բարեբարութեան խնամքն իսկզբանէ մինչեւ հիմա մեզի շնորհելէն զատ՝ նաեւ իր աստուածային կամքը սուրբ եկեղեցւոյն կը

<sup>1</sup> «Ուսուցէք նոցա պահել զամենայն, որ ինչ պատուիրեցի ձեզ»: Մատթ. ԻԸ. 20:



յայանէ, որպէս զի անով աս աշխարհ-  
քիս խաւարին մէջ մեր երթալու ճամբան  
որոշ ճանչնանք<sup>1</sup> :

Աստուածային կամաց յայանութիւնը  
բուն դրախտի մէջ սկսաւ, եւ անկից  
ետքն ալ աստուածազգեստ ու հոգեկիր  
մարդիկներուն ձեռքով միշտ կը շարու-  
նակուէր: Քրիստոսի դալստեան ատեն՝  
մինչեւ նոյն ժամանակ եղած աստուա-  
ծաշունչ Գրքին մասերը չէ թէ միայն  
չվերցան, այլ նաեւ նորէն հաստատուե-  
ցան ու առաւել եւս բարձրութեան հա-  
սան: Ան որ յառաջագոյն իբրեւ ապա-  
դայի պատրաստութիւն ու զուշակութիւն  
մին էր, Քրիստոսի դալստեամբ կատարե-  
լութիւն, մեկնութիւն, լրումն ու պայ-  
ծառութիւն դտաւ: Սրբազան Գրոց աս  
նոր ու ամբողջարար մասերը՝ Քրիստոսէ  
ու իր առաքեալներէն իբրեւ նոր կտակ  
մը եկեղեցւոյ յանձնուեցան, ինչպէս  
նաեւ առաջինն ալ դարձեալ կտակի  
կամ կտակարանի անուամբ տրուած էր:

<sup>1</sup> «Երանի է մեզ Իօրայէլ, զի հաճոյքն Աս-  
տուծոյ ծանօթք մեր են», Բար. Գ. 3:

տեսութեամբ մեզի մեր բարերար Արար-  
չէն գրուած հարկաւոր օրէնք ու մեր  
զթած հօրէն յայտնուած վերջին կամք  
կամ կտակ մըն է:

Բայց որպէս զի օրէնք մը կատարուի  
կամ կտակ մը կարող ըլլայ ի դործ  
գրուիլ, պէտք է որ ծանուցուի, տարա-  
ծուի ու գիտցուի: Անոր համար սուրբ  
եւ ուղղափառ եկեղեցւոյ մէջ միշտ սո-  
վորութիւն եղած է աս աստուածային  
օրէնքը ծանօթ ընել ամէն հասակին իր  
հասողութեան համեմատ, եւ մանաւանդ  
տղոց անմեղ սրտին մէջ նոյնը տպաւորել:  
Մենք աս մեր դասագիրքը հրատարակել  
ուզած ատեն՝ շէնք կրնար ուրիշ վախ-  
ճան գիտել, բայց եթէ նոյն սուրբ եւ  
կաթողիկէ եկեղեցւոյն գիտած վախճա-  
նը, այօինքն է՝ ճշմարիտ կրօնին համա-  
ռօտ պատմութիւնը տղոց պզտիկուց սոր-  
վեցընելով՝ իրենց փափուկ մտքին կրօ-  
նական ու բարոյական ողջամիտ սկզբունք  
հաղորդել: Մեզաց գարշութիւնն ու ա-  
նոնց շարաշար հետեւութիւնները ցուցը-  
նել, Աստուծոյ երկիւղն իրենց սրտին մէջ  
տնկել. աստուածպաշտութեան, արդա-

բութեան եւ առաքինութեան պատուա-  
կանութիւնն ու անհամեմատ յարզն ի-  
րենց աչքին առջեւ դնել, եւ ասոնցմով  
իրենց առաջնորդել, որ ուղղափառ եկե-  
ղեցւոյ եւ ազգին ստուգիւ բարեկիրթ ու  
բարեխրատ անդամներն ըլլան: Տայց աս  
վախճանէն անանջատ կը դիտուին նաեւ  
չափահասները, որոնք աս սրբազան պատ-  
մութեան մէջ կը գտնեն Աստուծոյ՝ մարդ-  
կային ազգին վրայ ցոյց տուած անհա-  
մար խնամքը, իր արդարութեան, գթու-  
թեան ու ամենակարող զօրութեան օրի-  
նակները, երկնային մխիթարութեան  
անսպառ աղբիւր, անձնական ու հասա-  
րակաց նեղութեան մէջ վստահութեան  
եւ յուսոյ խարիսխ, ճշմարտութեան  
վկայութիւն, եւ ընդհանրապէս վերջին  
աստիճանի շինութիւն ու կրթութիւն  
տուող գիրք մը:

Այս ամենայն օգուաները քան զոչս  
արեգական պայծառ ու յայտնի ըլլա-  
լով՝ մեզի հազիւ թէ հարկ կ'ըլլայ տղա-  
քը յորդորել որ Աստուածաշնչի գեղե-  
ցիկ պատմութիւնը մտադրութեամբ սոր-  
վին, եւ չափահասներուն թելադիր ըլ-

լալ՝ որ ասկից իրենց հողեւոր ու բարոյական բարիք քաղելէն զատ՝ մասնաւոր փոյթ մը տանին՝ աս ցանկալի պատմութիւնը տղոց պարտուպատշաճ յարգութեամբ մը սորվեցընելու եւ անոնց կեանքը պզտիկուց ողջ հիման մը վրայ հաստատելու: Մենք արդէն մեր պարտաւորութիւնները միշտ աչքերնուս առջեւ ունենալով՝ աս պատմութիւնը դրած ատեն ջանացած ենք որ դիւրին եւ միտք առնելու յարմար ու լուսաւոր կերպով մը եւ որչափ կարելի է նէ՝ ամբողջութեամբ աւանդենք, դէպքերուն ներքին կապակցութիւնը ցուցընենք, յառաջ բերենք անոնց հետեւութիւնը կամ անոնցմէ քաղելի օգուտը, եւ պէտք եղած տեղ ծանօթութիւններով զարգարենք:

Բայց որովհետեւ սուրբ Գիւրքն Աստուծմէ եկեղեցւոյ համար եւ եկեղեցւոյ ձեռքն աւանդուած է, ինք իրեն մնալով՝ մեռեալ նշանագիր եւ բազմապատիկ մեկնութիւններու կարօտ կը համարուի, եւ միայն եկեղեցւոյն ձեռքով կրնայ իր բուն իմաստը, շիտակ մեկնութիւնն ու կենդանի վարդապետութիւնը

գանեւ, մենք ալ փոյթ տարինք որ աս  
 գործքս գրելու ատեն ողջամիտ ու ան-  
 կասկած հեղինակներու խորհրդին եւ ա-  
 ռաջնորդութեան հետեւինք ու մեր կող-  
 մանէ ամէն զգուշութիւնն ընենք: Այսու  
 ամենայնիւ չենք գանդաղիր մեր ընթեր-  
 ցողներուն ազգարարութիւնն ընելու, որ  
 չըլլայ թէ իրենց կարգացածէն կամ սոր-  
 վածէն արձակ համարձակ հետեւութիւն-  
 ներ հանեն, եւ իրենց մտքին մէջ հաւա-  
 տոյ կամ բարոյականի վտանգաւոր սկըզ-  
 բունք շինեն, այլ ասանկ դիպուածներու  
 մէջ իմաստուն եւ ողջամիտ վարդապետաց  
 առաջնորդութիւնը խնդրեն:

Մենք հիմակ աս մեր աշխատասիրու-  
 թիւնը մեր սիրելի ազգին նուիրելով ու  
 յուսալով որ ասիկայ թէ տղոց եւ թէ  
 չափահասներուն վրայ դիտուած օգուտ-  
 ները յառաջ բերելու յաջողութիւնը կ'ու-  
 նենայ, կը մխիթարուինք եւ կ'ուրախա-  
 նանք, որ ասով մեր կարողութեան հա-  
 մեմատ գործակից կ'ըլլանք՝ Աստուծոյ  
 փառաց եւ հոգւոց փրկութեան, որն որ  
 մեր աշխատութեան վարձքը կը համարինք:



# ՊԵՏՐՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

## Կ Տ Ե Կ Ե Ր Ե Ն Ե Յ

### ՊԵՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ կամ Աստուածաշունչը երկու մաս կը բաժնուի, այս ինքն՝ Հին և Նոր Կտակարան։ առաջինը քառասունուհինգ գիրք ունի ու կը խօսի աշխարհքիս ստեղծուելուն, մարդկան բազմանալով զանազան ազգ ձեւանալուն եւ Աստուծոյ՝ մէկ նաճապետէն իրեն սեպհական ժողովուրդ հանելուն վրայ, որուն ինք մինչեւ Քրիստոսի գալուստն առաջնորդութիւն ըրաւ՝ զանազան խոստումներ ընելով եւ օրէնքներ տալով։ Երկրորդը՝ քսանուեօթը գիրք ունի եւ կը պատմէ թէ ինչպէս Քրիստոս գալով նոր խոստում ու նոր օրէնք տուաւ եւ Աստուծոյ սեպհական ժողովուրդը զինքը շնորհունելուն համար երեսէ ինկաւ։

Հոս պէտք ենք մեկնել թէ Ա. Ինչ է կանոնական եւ Անկանոն, Առաջնականոն ու

Երկրորդականն . Բ . Իւրաքանչիւր Ա . Գրոց  
 Հեղինակն ո՞վ է եւ ինչ լեզուաւ գրած է . Գ .  
 Աստուածաշունչ գիրքը քանի լեզուաւ թարգ-  
 մանուեցաւ :

Ա . Կանոն բառը՝ յունարէն է ու Ա-  
 --ԴԼ--ՔԷ--Ն , Ի--ԸԷ , Դ--Դ--ԷԷ կը նշանակէ . Իսկ  
 Քրիստոսէ 200 տարի ետքը նշանակութիւնն  
 ընդարձակելով՝ եկեղեցական անձանց եւ ամէն  
 անոնց վերաբերած իրերուն ցանկին տեղ ալ  
 սկսաւ գործածուիլ : Բայց մասնաւորապէս  
 սուրբ Գրոց մէջ եկեղեցւոյն ընդունած ու  
 վաւերական համարած գրքերուն ցանկը նշա-  
 նակելու կը գործածուի , որոնք աս սպառճա-  
 ռաւ Ա--Ն--Ն--Է--Ն գիրք ալ կ'ըսուին եւ եկեղե-  
 ցւոյ մէջ հրատարակաւ կրնան կարդացուիլ :  
 Իսկ Ա--Է--Ն--Ն գիրք ըսելով՝ աս ցանկին մէջ  
 չընդունուած կամ հրատարակաւ չկարդա-  
 ցուելու գրքերը կ'իմացուին . աս ալ՝ կամ ա-  
 նոր համար որ ան գրքին՝ Աստուծոյ լուսաւո-  
 թեամբը եւ Հոգւոյն սրբոյ առաջնորդու-  
 թեամբը գրուած ըլլալուն վրայ բաւական  
 ստուգութիւն չկայ , եւ կամ՝ անոր համար  
 որ հերձուածապետներն անոր քանի մը կտոր-  
 ները փոխած , ուղածներնուն պէս յարմար-  
 ցուցած են :

Ա--Ք--Է--Ն--Ն--Է ու ԵԷԷԷԷԷԷԷ ինչ ըլ-  
 լալն իմանալու համար , գիտնալու է որ Հին եւ  
 նոր կտակարանին այլեւայլ գրքերը՝ Հին ատեն-  
 ները հիմակուան պէս ամէնը մէկտեղ հաւա-

քամ չէր գործածուեր. այլ ան երկու մասին տակ գացող գրքերէն ամէն մէկը զատ գիրք կը կազմէր: Եզր առաջինն եղաւ՝ որ Բարեւոյնի գերութենէ գառնալէն ետեւ՝ սկսաւ իր ատենները գանուած բոլոր սուրբ գրքերը մէկ ընել, զորն որ իրմէ ետքը Հրէից ժողովրդանոցին վարդապետները՝ Պարսից միահեծան իշխանութեան վերնալուծն մտա ատենները գլուխ հանեցին: Արնաճք ասիկա հին կտակարանին՝ Նախնականն ըսել. եւ ասկէ ետքը եղած՝ հին կտակարանի վերջին գրքերու հաւաքումն ալ Երկրորդականն կոչել<sup>1</sup>: Պաղեստին բնակող Հրէաները՝ երկրորդականոնները, որ չէ թէ Հրէից յատուկ լեզուաւ՝ այլ երբայեցերենէ ու քաղզէացերենէ խառն լեզուաւ գրուած էին, Նախնականոններուն պէս չէին յարգեր. ասոր հակառակ՝ ասդին անդին ջրուած ու հէլլենացի անուանեալ Հրէաները, մանաւանդ Երկրպտոսի Աղէքսանդրական ժողովրդանոցը եր-

1 Հասարակօրէն երկրորդականն համարուածներն ասոնք են.

1. Եսթեր.

2. Տփթիթ.

3. Յուդիթ.

4. Իմաստութիւն.

5. Սերաք.

6. Բարուք.

7. Ագարեայի աղօթքը.

8. Երէց մանկանց որհութիւնը.

9. Շուշանոց պատմութիւնը.

10. Բելայ ու Ախշապին պատմութիւնը.

11. Ա. եւ Բ. Մակարայեցւոց գրքերը:

կու հաւարութիւն ալ կ'ընդունէր եւ հաւասարապէս կը յարգէր: Նոյնպէս նոր կտակարանի գրքերուն մէջէն՝ ամենէն յառաջ չորս Աւետարաններու հաւարութիւն ելաւ. եւ ասոնք էին նոր կտակարանին Նախնականոնները: Ետքը Պօղոս առաքելոյն 14 ու մէկալ առաքելոց թղթերուն հաւարութիւն ելաւ, որոնք չէ թէ Պօղոս առաքելոյն թղթերուն պէս մինակ մէկ եկեղեցւոյ, այլ շատ եկեղեցիներու ուղղուած ըլլալուն՝ կաթուղիկէ ըսուեցան. ասոնք ալ նոր կտակարանի Երկրորդականոններն էին:

Բայց որովհետեւ աս նախնականոն ու երկրորդականոն գրքերու զանազանութիւնը՝ մասնաւորներէ եղած բան էր եւ ո՛չ թէ ընդհանուր եկեղեցիէն. մանաւանդ որ ամէն ուղղափառ վարդապետ՝ Ս. Գրոց մէյմէկ առաջնականոնի ու երկրորդականոնի ցանկեր կը շինէր իրեն համար. դարձեալ որովհետեւ հետզհետէ առաքելոց անուամբ զանազան շինծու գրքեր եւ աւետարաններ կ'ելլէր, մէկ կողմանէ ոմանք ալ բուն հարազատ ու ճշմարիտ Ս. Գրքերն՝ իրրեւ այնպէս չէին ընդուններ, աս պատճառներուն համար՝ հարկ եղաւ որ եկեղեցին իր որոշումն ընէ: Արդ ասոնք են ընդհանուր եկեղեցիէն ընդունուած ու հաստատուած Ս. Գրքերը:

## Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Մ-Է-Է-Է ՀԻՔ ԳՐԵՐԸ .

1. Ծնունդք .
2. ԵԼք .
3. Ղեւտականք .
4. Թիւք .
5. Երկրորդու մն օրինաց .
6. Յետու Որդի Նաւեայ .
7. Գատաւորք .
8. Հռութ .
- 9—12. Չորս գիրք թագաւորութեանց .
- 13, 14. Երկու գիրք մնացորդաց .
15. Երկրորդ (ըստ լտ. Ա.) Եզր .
16. Նեեմի (ըստ լտ. Բ. Եզր)<sup>1</sup> .
17. Եսթեր .
18. Յուդիթ .
19. Տովբիթ .
- 20, 21. Առաջին եւ երկրորդ Մակա-  
բայեցիք .
22. Յովթ .
23. Սաղմոսք Գաւթի 150 .

1 Հոս մեր Աստուածաշնչի թարգմանութիւնը լա-  
տիներէն Առ-Ղի-Գ-ը ըսուած թարգմանութեան  
ասով կը տարբերի՝ որ մերինը Եզրի գիրք ժԸ  
(այս ինքն՝ Ա. Եզրը) աւելի ունի. բայց սա Եզրը  
մեր Բ. Եզրէն ըստ գոյացութեան տարբեր բան  
չիպատմեր. իսկ մեր Բ. Եզրը ըստին թարգմա-  
նութեան Ա. Եզրն է, եւ մեր Նեեմին՝ նոյն թարգ-  
մանութեան Բ. Եզրը՝ որն որ նոյն թարգմանու-  
թեան մէջ Նեեմի ալ կ'ըսուի :





որ իրենք են գրողները, անուննին ալ վրան է  
եւ երբայեցերէն գրեցին :

Գատաւորաց գիրքն՝ ըստ հին աւանդու-  
թեան՝ Սամուէլ գրեց :

Չորս թագաւորութեանց գրքերը՝ որոշակի  
չի գիտցուիր թէ ո՞վ գրեց : Ոմանք կ'ըսեն թէ  
առջի երկուքը՝ Սամուէլ, Գաղ ու Նաթան  
մարգարէները գրեցին (Ա. Մնաց. 1Թ. 30.)  
Սկիւլ երկուքը՝ Եզր կամ Երեմիա մարգարէն :  
Ոմանք ալ կ'ըսեն որ Բարեւրնի գերութեան  
վերջերը անծանօթ մատենագիր մը՝ իր ատենը  
գտնուած աղբիւրներէն ու թագաւորաց տա-  
րեգրութենէն (Ա. Մնաց. 1Թ. 29. Գ. Թագ. ԺԱ. 41 եւ ԺԳ. 19, 29.) չորս թագաւորու-  
թեանց պատմութիւնը հանեց :

Նոյնպէս ոմանք Ա. եւ Բ. Մնացորդաց  
գրքին մատենագիրն ո՞վ ըլլալը բոլորովն ան-  
յայտ կը դնեն, իսկ ոմանք՝ հաւանականագոյնս  
Եզրը կը համարին :

Եզրայ կամ Նեեմեայ գրքերն՝ արդէն ի-  
րենց հեղինակաց անունը կը կրեն :

Հասարակագոյն կարծեաց նայելով՝ Տով-  
բիթայ գիրքը գրողը՝ ինք Տովբիթ եւ իր որ-  
դին Տուբիա եղաւ, մինչեւ իր մահը, անկէ  
ետեւ իրենց ազգականներէն մէկը շարունա-  
կեց : Չի գիտցուիր թէ աս գիրքն ինչ լեզուաւ  
գրուած է : Ս. Յերոնիմոս նոյնը քաղղէացե-  
րենին վրայէն լատիներէն թարգմանած է եւ  
ան քաղղէացերէն օրինակը հիմա կորսուած



է, չկայ: Բայց աս դիրքն ուրիշ թարգմանութիւններ ալ ունի, որոնց մէջ ամենէն երեւելին՝ եօթանասնից յունարէն թարգմանութիւնն է:

Յուդթայ գրքին որմէ՛ գրուած ըլլալը չի գիտցուիր. ոմանք կը կարծեն որ Եղիակիմ կամ Յովակիմ քահանայապետը գրած ըլլայ. ոմանք ալ կ'ըսեն թէ ասոր բնագիրը յունարէն էր ու Ս. Յերոնիմոս իր թարգմանութիւնն ասոր վրայէն ըրաւ:

Եսթերայ գիրքը՝ ինչպէս որ նոյն գրքէն (թ. 20. ժԲ. 4.) կ'երեւայ, Մուրթքէ ու Եսթեր գրեցին. բայց ոմանք կ'ըսեն թէ ետքի ատենուան սուրբ մատենագիրներէն գրուած է: Ասոր մինչեւ ժ. գլխոյն Յամարը՝ երբայեցերէն ալ գրուած կայ. անկէ անդիիններուն՝ որ առանձինն քանի մը կտոր բաներ են, միայն յունարէնը կը գտնուի:

Յովբայ գիրքը՝ հաւանական է որ նոյն իսկ ինք Յովբ գրած եւ Մովսէս՝ Ասորոց կամ Արարացոց լեզուէն թարգմանած ըլլայ:

Սաղմոսաց գիրքը՝ որն որ հոգեւոր երգերու հաւաքում մըն է, կէս մը Գաւթէն կէս մըն ալ ուրիշ Ս. մատենագիրներէ շարագրուած եւ ետքի ատենները մէկտեղ ժողովելով՝ կարգի գրուած է: Ասոր մէջ սրբունակուած հոգեւոր երգերը 150 հատ են, եւ մեծ մասը Գաւթի մարգարէն շարագրած ըլլալով՝ Սաղմոսք Գաւթի կը կոչուի:

Առակաց, ժողովողի ու Երգոց երգոյն մատենագիրը՝ Սողոմոնն է :

Իմաստութեան գիրքը՝ երեւելի մեկնիչներուն մեծ մասին կարծեաց նայելով՝ Մակարայեցոց ժամանակները (որ ատենն որ Հրեաներէն ոմանք հալածանքէ ազատելու համար հաւատքնին ուրացան ու հեթանոսական իմաստութիւնը, այս ինքն՝ կուսպաշտութիւնն յանձն առին) աստուծմէ լուսաւորեալ Հրէի մը ձեռքով գրուեցաւ : Ասիկա՝ Իմաստութիւն կը կոչուի, ինչու որ անոր մէջ հեղինակը ճշմարիտ իմաստութիւնը, այս ինքն՝ Աստուծոյ երկիւղը կը սորվեցընէ : Ա՛րեւայ որ ասոր բուն բնագիրը՝ յունարէն գրուած ըլլայ :

Յետու Սիրաքայ գիրքը գրողը, նոյն իսկ ինք Յետու՝ Սիրաք Երուսաղէմացոյն որդին է, որ երբայեցերէն գրեց եւ իր եղբորորդին կամ քեռորդին յունարէն թարգմանեց :

Մարգարէից գրոց վրայ ըսելու բան չկայ, վասն զի անոնց ամէն մէկն իր հեղինակին անուամբը կը յորջորջի. միայն Երեմիային մարգարէութիւնները՝ իր Բարուք աշակերտը գրեց, որն որ նաեւ յատուկ գիրք ալ ունի իր անուամբը : Ասոնք երբայեցերէն գրուած են :

Գանիելի գիրքը կէս մը երբայեցերէն, կէս մը քաղցեացերէն գրուած է. Շուշանայ, Ալիշապին պայթելուն ու Բելայ պատմութեան՝ հիմա միայն յունարէն թարգմանութիւնը կը գանուի : Բոլորը գրողը՝ նոյն իսկ Գանիէլ է :

Մակարայեցւոց առաջին գիրքն Երբայե-  
ցերէն գրուած է . իսկ երկրորդը՝ յունարէն :  
Ասոնց հեղինակը ստոյգ չի գիտացուիր թէ ո՛վ  
է . ոմանք հաւանական կը համարին թէ Հիւր-  
կանոս Ա.ին ատենը Պաղեստինացի բարեպաշտ  
Հրէի մը ձեռքով գրուած ըլլան : Ասոնց մա-  
տենագրին ո՛վ ըլլալուն վրայ ո՛րչափ որ ան-  
ստոյգ ալ ըլլանք, ի վերայ այսր ամենայնի  
Ճշմարիտ Ս. Գիրք ըլլալուն վրայ ստոյգ ու  
ապահով ենք . ինչու որ Ս. եկեղեցին իսկըզ-  
բանէ իր անօխալ եւ աստուածուստոյց դա-  
տաստանովն անոնց Ճշմարիտ Ս. Գիրք ըլլալը  
ճանչցած ու հաստատած է :

Նոր կտակարանին գրքերն ընդհանրապէս  
(բացի Մատթէոսի Աւետարանէն եւ Երբայե-  
ցւոց թղթէն, որոնք երբայեցերէն գրուած են)  
յունարէն շարադրուած են, եւ իւրաքանչիւր  
գիրք՝ իր հեղինակին անունովը կ'անուանուի :  
Անոր համար ասոնց վրայ ամենեւին տարակու-  
սական բան չկայ : Բայց հարկ կը սեպենք քա-  
նի մը հարկաւոր տեղեկութիւններ տալ :

Մատթէոս՝ իր աւետարանը Քրիստոսէն  
ու թը տարի ետքը՝ Երուսաղեմի քրիստոնէից  
աղաչելովը՝ երբայեցերէն գրեց : Մարկոս՝ Պե-  
տրոս առաքելոյն աշակերտն ու գործակիցը,  
նոյն Առաքելոյն պատմելովն ու Մատթէոսի  
աւետարանն առջեւն ունենալով՝ իր աւե-  
տարանը յունարէն գրեց : Ղուկաս՝ անախ-  
բացի ըստ իշկն ու Պողոս առաքելոյն աշակերտն



եւ ընկերն, իր աւետարանը յունարէն գրեց : Ասկից զատ՝ Գործոց առաքելոց մատենագիրն ալ ինքն է : Յովհաննէս առաքեալն եւ աւետարանիչն, Յակովբոս մեծին եղբայրը՝ Աօրայի եկեղեցիներուն եպիսկոպոսաց ազաշելովն իր աւետարանը յունարէն գրեց, ինչպէս նաեւ իր պարտանաց մէջ Պապմոս կղզին՝ իր Յայտնութեան գիրքը, որուն մէջ նմանութեամբ ու մարգարէութեամբ՝ եկեղեցւոյ գլխէն անցնելիքներուն վրայ կը խօսի :

Չորս աւետարանաց վրայ Ս. Հարց մէջէն շատերն աս մեկնութիւնը կու տան թէ անոնցմով մեզի համար մարդացեալ Աստուած Փրկչին չորս տեսակ կատարելութիւնները մեր առջեւը կը դրուին, որն որ նաեւ Եզեկիէլ մարգարէին յայտնուեցաւ (Եզեկ. Ա.), եւ են՝ Մարդացեալ, Արքունական, Հաշտարար, Աստուածային Տէր : Անոր համար Ս. Հարք ամէն մէկ աւետարանչին պատմութեան սկզբնաւորութեան եղանակին համաձայն իւրաքանչիւր աւետարանին գլուխը մէյմէկ առականոր պատկեր դրին : Մատթէոսին՝ մարդ, իր աւետարանը Քրիստոսի մարմնաւոր ծնողաց ազգահամարէն սկսելուն համար : Մարկոսին՝ առիւծ, վասն զի իր պատմութիւնը Յովհաննէս ապաշխարութեան մկրտութեան զօրաւոր քարոզութենէն կը սկսի, որն որ առիւծի ձայնի նման կը հնչէր : Ղուկասին՝ երինջ, վասն զի ասիկա Զաքարիային քահանայական պաշտօն

կատարելէն սկսաւ իր պատմութիւնը գրել : Յովհաննու՝ արծիւ, վասն զի ինքն ալ բարձրէն, այս ինքն՝ Յիսուսի յաւիտենական Աստուածութենէն սկսաւ իր պատմութիւնը :

Գ. Հին կտակարանին գրքերը իրենց գրուած լեզուէն զատ՝ ուրիշ զանազան լեզուներու թարգմանուեցան, զոր օրինակ ասորերէն, արարերէն, յունարէն : Աս վերջին լեզուաբանի մը անգամ թարգմանուեցան, բայց ամենէն երեւելին է՝ Եզրիպտոս թագաւորոջ առաջին Պտղոմեանց ժամանակ՝ Մովսիսի հինգ գրքերուն երրայեցերէնէն յունարէն թարգմանուիլը : Արիստէաս՝ որն որ Պտղոմէոս Փիղադեղփոսին ծառայութեան մէջ էր, իր եղբորը Փիղոկրատէսին գրած թղթոյն մէջ՝ աս թարգմանութեան վրայ հետեւեալ տեղեկութիւնը կու տայ : Գեմետրիոս Փաղերիոս՝ աղէքսանդրիայի գրքապետը, կ'ըսէ, Պտղոմէոս Փիղադեղփոս Եզրիպտոսի թագաւորին խորհուրդ տուաւ որ Հրէից օրինաց գիրքն յունարէն թարգմանել տայ եւ Աղէքսանդրիայի գրքատունը դնէ : Աս խորհուրդը թագաւորին հաճելի ըլլալով՝ շուտ մը առատ պարգեւներով քանի մը հոգի Երուսաղէմ իրկեց, հոնտեղը քահանայապետէն Մովսիսական օրինաց երրայեցերէն բնագիր օրինակ մ'առնելու համար : Գացողներէն մէկն ալ ինք Արիստէասն էր : Քահանայապետն անոնց ինդիրքը կատարելէն ետեւ՝ եօթանասուն գիտուն Հրէայ Ա-

զէքսանդրիա խրկեց, թարգմանութեան օգնե-  
 լու համար: Ասոնք Գեմետրիոս Փաղէրիոսին  
 հետ փարոս կղզին դացին, ամենքը միարան  
 թարգմանութիւնը գլուխ հանեցին, իրենք  
 զրուցելով ու Գեմետրիոս գրելով: Իսկ ո-  
 մանք, որոնց մէջն է Ալուրեղ Երուսաղեմայ  
 հայրապետը՝ կ'ըսեն թէ իւրաքանչիւր թարգ-  
 մանչին, կամ երկերկու հոգւոյ մէկ խուց մը  
 տրուեցաւ, մէյ մ'ալ արագագիր դպիր, ու-  
 զուած թարգմանութիւնը գլուխ տանելու  
 համար: Գործքը լմբննալէն ետեւ՝ 72 կամ  
 36 թարգմանութիւններն իրարու հետ հա-  
 մեմատեցին եւ ամէն կողմանէ նոյն գտան:  
 Մովսիսի հինգ գրոց թարգմանութենէն ետքը՝  
 հին կտակարանին մէկալ գրքերն ալ սկսան  
 թարգմանուիլ, եւ անտարակոյս քիչ ատե-  
 նուան մէջ ասոնք ալ եղած լմնեցած պիտ'որ  
 ըլլան. վասն զի յունախօս Հրէից ամենատի-  
 պողական կարօտութիւնը լեցնելու համար  
 աս գործքը շատ հարկաւոր էր: Բովանդակ  
 թարգմանութեան վրայ ընդհանրապէս աս  
 կրնայ ըսուիլ, որ Մովսիսի հինգ գրոց թարգ-  
 մանութեան ունեցած ճշդութիւնն ու կա-  
 տարելութիւնը՝ մէկալ գրքերը չունին: Թարգ-  
 մանիչներուն թիւը թէպէտ եօթանասունու-  
 երկու էր, բայց հասարակօրէն՝ Եզեմ-ն-նէց  
 Բորտ-ն-նէց կը կոչուի:

Մեր հայերէն Աստուածաշունչը՝ չորրորդ  
 դարու մէջ թարգմանուեցաւ Ս. Մեարոփայ

եւ իրեն օգնականներուն ձեռքով . ետքն ալ երբ որ իր աշակերտները Աստանդնուպոլսէն ետ դարձան, հետերնին՝ ուրիշ գրքերէ զատ՝ յունարէն ընտիր ձեռագիր Աստուածաշունչ մ'ալ բերին : Աս ընտիր օրինակին վրայէն Ս . Սահակ առաջին [Թարգմանուած Աստուածաշունչը սրբագրեց, որով եւ մեր Թարգմանութիւնը շատ հին եւ ընտիր է :

Յիշատակաց արժանի է Լատինացւոց Աստուածաշնչի Թարգմանութիւնն ալ : Պինդ յառաջ Ս . Գիւրքը Եօթանասնից վրայէն լատիններէն Թարգմանուեցաւ, որն որ Հին կ'ըսուէր : Ետքը Ս . Յերսնիմոս ըստ մեծի մասին նորէն Թարգմանեց Ս . Գիւրքը՝ ամէն մէկն իր սկզբնական լեզուէն Թարգմանելով . աս ալ նոր Թարգմանութիւն կոչուեցաւ : Ասկէ ետքը հին եւ նոր Թարգմանութեանց սրբագրութենէն ուրիշ օրինակ մ'ելաւ, որուն մեծ մասը նոր Թարգմանութիւնն էր, որ ճիշդ ու հաւատարիմ ըլլալուն համար՝ անփոփոխ պահուեցաւ : Արքայապետ Ս . Եկեղեցին ասիկա հաստատեց եւ հրամայեց որ ամէն տեղ գործածուի . անոր համար Առ-Վ-Գ կը կոչուի, որ Հրատարակած ըսել է :





ԵՌԵՋՒՆ ՄԵՍ

ՀՐՆ ԿՏԸԿԸՐԸՆ



# ԱՌՆԱԳՆՈՒՄ ՄԵՍ ՀՒՆ ԿՏԵԿԵՐԱՆ

## Ա. ԳՆՈՒՄ

ԱՇԽԱՐՀՔԻՍ ՍՏԵՂԾՄԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ  
ԶՐՀԵՂԵՂ

(4000 — 2345 ՔՐԻՍՍ · ՅԱՌ ·)

## Ա. Դ Ա Ս

1. Աստուած բոլոր արարածքը քանի որուան մէջ ստեղծեց · վեցօրեայ արարչագործութենէն յառաջ անոնք ինչ կերպարանք ունէին: — 2. Ինչ կարգաւ ստեղծուեցան: — 3. Աստուած եօթներորդ օրն ինչ բրաւ:

1. ԹՎՊԵՏ աշխարհքիս բիւրաւոր արարածները ստեղծելու համար՝ Աստուծոյ ամենակարողութեան առջեւ մէկ վայրկեանն ալ բաւական էր · բայց որպէս զի ամէն բան խորհրդով ու կարգաւ գործելու մեզի օրինակ ըլլայ, վայրկեանի մը մէջ լմննցընելու բանը՝ վեց օրուան մէջ ստեղծեց: Ան ալ մեր հասարակ օրը (24 ժամ) չէր, հասարակ մէկը հազարաւոր տարիներ էր: Աս օրերուն մէջ ստեղծուած բոլոր արարածները՝ երկու գլխաւոր մաս կը բաժնուին, մէյ մը երկրիս վրայ, մէյ մ'ալ երկինք գտնուածները: Անոր համար Մովսէս մարգա-

րէն ընդհանրապէս երկնից վերաբերող մարմինները Երկէն + Կ'անուանէ, իսկ երկրի վերաբերողները՝ Երկէր: Աս երկու մասին արարածոց կազմիչ նիւթերն Աստուած արդէն իսկզբան ոչընչէ պատրաստած էր, որոնք դեռ նոյն ատեն անկերպարան եւ իրարու հետ խառնափնդոր ըլլալուն համար՝ Մովսէս՝ Աներեւոյթ եւ անպատրաստ, Կ'անուանէ: Աստուծոյ հրամանն ու կարգադրութիւնն՝ անոնց խառնափնդորութիւնը պարզելու եւ իրենց հիմապուան կերպարանքը խոթելու բաւական եղաւ:

Ձ. Ա--ԷԷն օրը Աստուած հրամայեց որ Լ--յ ըլլայ, ու եղաւ: Աս լոյսն արեւուն լոյսը չէր, մանաւանդ թէ նոյն իսկ արեւն ու աստղներն՝ ետքէն ասկէ շինուեցան: Երէր-բբ օրը հրամայեց որ Հ--բբ--բէն ըլլայ: Մէյ մ'ալ ջրերուն մէկ մասը վեր ելաւ ու վարիններէն միջոցով մը զատուեցաւ: Մենք վերի մասին Երկէն + Կ'ըսենք: Եբբ-բբ օրը հրամայեց որ երկնքի տակ եղող ջրերը տեղ մը ժողվուին ու ցամաքն երեւայ, եւ անանկ եղաւ: Մենք ցամաքին Երկէր կ'ըսենք ու ջրերուն ժողված տեղւոյն՝ Ծ--ւ: Ետքը հրամայեց որ երկիրը կանաչ Բ--բբ ու պտղատու շ--բբ բուսցընէ, անոնց ամէն մէկ տեսակն իր առանձին պտուղը բերէ, եւ տեսակնին պահելու համար մէջերնին հունտ ունենան. անանկ ալ եղաւ: Չ--բբ օրը հրամայեց որ երկնքին հաստատութեան վրայ Լուսարարներ ըլլան: Ան ատեն բբ-բ, լ--բնն ու բբ-բնն եղան, ժամանակ, օր, տարի եւ անոր շորս եղանակներն որոշելու եւ իրենց սպայծառութեամբն երկիրը

լուսաւորելու համար : Հինգերորդ օրը հրամայեց որ ծովը Յէշ եւ օղային Բել-Նէշ յառաջ բերէ : Ասոնք լմբնալէն ետեւ՝ Աստուած ամենուն մէկէն՝ Աճեցէք ու շատցէք, բաւ : Վէշերորդ օրը հրամայեց որ երկիրը կերպ կերպ Խնդ-Նիշ յառաջ բերէ, եւ այնպէս եղաւ : Նոյն վեցերորդ օրը ամենէն վերջը ստեղծուեցաւ Դերշ՝ որ մէկալ արարածոց տէրն եւ վայելողը պիտ'որ ըլլար :

**Յ.** Եօնիշերորդ օրը՝ Աստուած ալ արարած ստեղծելէն դադրեցաւ ու սահմանեց որ մարդիկ վեց օր իրենց գործքերուն զբաղելէն ետեւ՝ Եօթներորդ օրը հանգչին, եւ ան օրը բարի ու սուրբ զբաղմունքով անցընեն : Նոյն պատուէրը միշտ բռնուեցաւ, մինակ ստարբերութեամբ որ հին Ադամայ որդիքը՝ նոյն վախճանաւ Եօթներորդ օրը սուրբ կը բռնէին ու Շ-բ-Բ կ'անուանէին. իսկ մենք նոր Ադամայ (Քրիստոսի) որդիքս՝ անոր փրկագործ Յարութեան յիշատակին համար՝ Եօթներորդ օրը սուրբ կը բռնենք ու Վէշ-Նիշ կ'անուանենք, որ տէրունական կը նշանակէ :

## Բ. Դ Ա Ս

1. Երկնքի ու երկրի գլխաւոր զարդերն որոնք են: Հրեշտակներն երբ ստեղծուեցան. Ինչու մէջերնին մեծ որոշում մտաւ: — 2. Աստուած մարդս Բնչպէս ստեղծեց: — 3. Ձեռքն ուր բնակեցուց եւ Բնչ պատուէր տուաւ: — 4. Կինն ուստի ստեղծեց:

1. Ահաւասիկ աս կերպով երկինք ու երկիր իրենց ամէն զարդովն եղան լմրնցան, որոնց ամենէն գլխաւորներուն (որ Հրէշտակն է, եւ ասոնցմէ քիչ մը վար՝ Մարտիկն են) ստեղծման պատմութիւնը հոս զատ կը դնենք: Հրեշտակներուն ստեղծումն անտարակոյս ուրիշ ամէն արարածներէն յառաջ եղած պիտ'որ ըլլայ: Իրենց վախճանը՝ մարդուն վախճանին հետ նոյն է, որ է զԱստուած իրենց տէր ճանչնալ, անձնիչխանութեամբ իրենք զիրենք անոր հպատակել եւ պսպէս անոր հետ միացեալ յաւիտեան երջանիկ ըլլալ: Բայց մէջերնէն շատերը Աստուած ըլլալու բաղձանքով՝ ելան Աստուծմէ ապստամբեցան. աս պատճառաւ երկինք մեծ պատերազմ գրդուեցաւ, եւ Աստուծոյ հաւատարիմ Ֆաջոզներն ապստամբներուն դէմ մարան կռուեցան ու յաղթեցին: Այսպէսով հաւատարիմ Ֆաջոզները յաւիտեան երանելի ըլլալու եւ ապստամբողներն յաւիտեանս տանջուելու մեծ որոշումը մէջերնին մտաւ: Առջինները՝ Հրէշտակն անուանենք, իսկ մէկայնորդի՝ Դիւ կամ Սարմայ: >

2. Մարդուն ստեղծումն ուրիշ արարածներուն ստեղծմանէն շատ պատուաւոր կերպով եղաւ: Աստուած՝ երկրիս վրայի կենդանիները վեցերորդ օրն ստեղծելէն ետեւ՝ նոյն

օրը խորհուրդ ըրաւ, որ Մարդ ստեղծէ եւ ըսաւ. Մեր պատկերին ու նմանութեան համեմատ մարդ ստեղծենք, որն որ ծովու ձկերուն, երկինքի թռչուններուն ու երկրի վրայի կենդանիներուն իշխէ: Աս ըսելէն ետեւ՝ գետնի հողէն մարմինը ստեղծեց եւ երեսը շունչ (մարմինը կենդանացնող հոգի) փչեց, անունն ալ Ադամ դրաւ: Աս առաջին մարդէն յառաջ եկած է բոլոր մարդկային ազգը, ուստի եւ ինքն է բովանդակ աշխարհքիս բնակչաց նախահայր:

**Յ.** Ադամ՝ նոր ստեղծուած ատենն անմեղ, հանգիստ ու շատ երջանիկ վիճակ մ'ունէր: Աստուած արդէն իսկզբան իրեն համար գեղեցիկ ու զուարճալի պարտէզ մը պատրաստած էր, որն որ Գրեթ կամ Փռիսթիս Գրեթ կ'ըսուի, ամէն տեսակ ազուր ու պտղատու ծառերով զարդարուած, մէջը մեծ գետ մ'ալ կար՝ որն որ չորս ճիւղ կը բաժնուէր, Փիսոն, Գեհոն, Տիգրիս ու Եփրատ: Ուստի զինքն հոն դրաւ, որ գործելով իր զբօսանքը գտնէ եւ անիկա պահէ: Նոյն դրախտին մէջ ամէն տեսակ պտղաբեր ծառեր ըլլալէն զատ՝ երկու ուրիշ ծառ ալ կար, մէկը՝ Ծառ Ինչ, մէկալը՝ Ծառ Գրեթիս Բարեկամութիւնն: Որպէս զի Ադամ իր անձնիշխան ազատութեամբն Աստուծոյ բարեկամութիւնն ու իր հանգիստ վիճակը պահէ, Աստուած իրեն աս պատուէրը տուաւ. Գրախտին ամէն ծառերուն պտղէն կերէք, ըսաւ, բայց ծառ գիտութեան բարեոյ եւ չարի ըսուածէն մի ուտէք, ապա թէ ոչ՝ կը մեռնիք (մահկանացու կ'ըլլաք):

4. Աստուած բոլոր կենդանիներն Ազա-  
մայ տարաւ, որ ամէն մէկուն իր բնութեան  
համեմատ զատ անուն դնէ: Ան ալ գրաւ:  
Բայց Ազամայ նմանութիւնն ունեցող մէկը  
չկար՝ որ իրեն օգնական ըլլար: Անոր համար  
Աստուած ըսաւ. Մարդուն մինակ ըլլալն ա-  
զէկ չէ, իրեն նման օգնական մը ստեղծենք:  
Էւ այսպէս զինքը քնացուց ու քնոյն մէջ ա-  
նոր մէկ կողէն Կէշ ստեղծեց, Ազամայ առ-  
ջեւ հանելով՝ իրեն ընկեր տուաւ, որն որ ա-  
նունը Էւա գրաւ: Աստուած երկուքն ալ  
օրհնեց, Աճեցէք ու շատցէք, ըսաւ, եւ ամէն  
բոյս ու ծառ ձեզի ու կենդանիներուն կերա-  
կուր ըլլայ:

#### Գ. Գ Ա Ս

1. Ազամ ու Էւա Աստուծոյ դէմ ինչպէս անհնազան-  
դեցան. ինչ պատժ ընդունեցան: — 2. Ո՞վ է Կոյէն  
ու Արէլ. Արէլ ինչպէս մեռաւ:

1. Մեր առաջին ծնողք Ազամ ու Էւա՝  
Աստուծոյ հաւատարիմ շինացիին, տուած պա-  
տուէրը չբռնեցին, անոր համար անմեղ վիճակ-  
նին կորսընցուցին ու պէսպէս նեղութեանց,  
վշտաց եւ մարմնաւոր մահուան տակ ինկան:

Այսչափ մեծամեծ շարեաց դուռ բացողն  
Էւա եղաւ. վասն զի Աստուծոյ պատուէրը  
գիտնալով՝ երբ որ արդելուած ծառին քով  
գացած էր, հոն օձ մը տեսաւ, որն որ զինքը  
նենդաւոր խօսքերով անհնազանդութեան յոր-  
դորեց: Նախ հարցուց օձը թէ Գրախտին  
մէջի ամէն ծառէն ուտելն Աստուած ինչու  
արգելեց: Երբ որ կնոջմէն պատասխան առաւ



Թէ Մինակ անոր մէջտեղը տնկուած ծառէն չենք կրնար ուտել, Թէ չէ՛ կը մեռնինք, Անանկ չէ, ըսաւ օձը, Աստուծոյ պատուէրը ձեր մեռնելուն համար չէ, հապա որովհետեւ զիտէ որ ուտելու ըլլաք նէ՛ աչու ընիդ կը բացուի, չարն ու բարին կը ծանչնաք Աստուծոյ նման կ'ըլլաք: Էււա մէկ կողմանէ խարեբային խօսքին հատալով, մէկալ կողմանէ ալ պտղոյն աղու ուրու թեւէն ու ախորժաշարժ տեղքէն շարժելով փրցուց կերաւ. Աղամայ ալ տուաւ, որն որ առաւ կերաւ: Աս որ եղաւ՝ անմիջապէս երկուքին ալ աչքը բացուեցաւ, մերկութիւննին իմացան, ամբչցան, շփոթեցան ու թզէնւոյ տերեւէ իրենց զգեստ կարեցին վրանին առին: Մէյ մ'ալ անդիէն ծառերուն մէջէն Աստուծոյ գալուն ձայնն առին. խղճերնուն զարնէլէն շուզեցին անոր երեւալ, գացին դրախտի ծառերուն մէջ պահուրտեցան: Աստուած Աղամը կանչեց, Ուր ես Աղամ, ըսաւ: Ան ալ պատասխանեց. Քու գալը իմացայ եւ մերկ ըլլալուս վախցայ ու պահուրտեցայ: Աստուած հարցուց. Հապա մերկ ըլլալդ ուստի իմացար, չըլլայ թէ արգելած ծառէս կերած ըլլաս: Աղամ յանցանքը կնոջը վրայ ձգեց, ըսելով՝ Ինձի օգնական տուած կինդ, բերաւ տուաւ, ես ալ կերայ: Իսկ երբ որ կնոջ հարցուց, ան ալ յանցանքն օձին վրայ ձգեց, ըսելով՝ Օձը զիս խարեց ու կերայ:

Աս ջատագովութիւններով զիրենք չէին կրնար արդարացնել, ուստի Աստուծոյ արդարութիւնն՝ իրենց անհնազանդութեան համեմատ զիրենք արժանապէս պատժեց: Էւ ու

բովհետեւ սատանան էր, որ օձի կերպարանգր  
աս մեծ խարէութիւնը գործեց, Աստուած  
ալ անոր բանեցուցած նենգութեան համե-  
մատ՝ խօսքն արտաբուստնիւթական օձին ուղ-  
ղելով՝ զինքն անիծեց: Աս բանս ընելուդ հա-  
մար, ըսաւ, Էրկրի վրայի կենդանիներուն ա-  
մենէն անիծեալն ըլլաս, բոլոր կենացդ մէջ  
փորիդ վրայ քալես ու հող ուտես. քու եւ  
կնոջ (Նււային) մէջ, քու զաւկիդ եւ անոր  
զաւկին մէջ թշնամութիւն ըլլայ. ինք քու  
գլուխդ ջախջախէ, դուն ալ անոր գարշա-  
պարը խածնելու ջանաս<sup>1</sup>: Անկէ ետեւ դար-  
ձաւ կնոջ զրուցեց. քու արամութիւններդ  
ու ցաւերդ պիտի սաստկացընեմ, ցաւով զա-  
ւակ բերես ու էրիկդ վրագ իշխէ: Ազամայ ալ  
ըսաւ. Կնոջդ խօսքը մտիկ ընելուդ համար՝ եր-  
կիրը քեզի փուշ ու տատասկ բերէ, ուտելու  
հացդ երեսիդ քրտինքովը ճարես, մինչեւ որ  
հող դառնաս՝ ուստի որ ստեղծուեցար: Ասոնք  
ըսելէն ետեւ՝ Աստուած երկուքին ալ կաշիէ  
զգեստ հագցուց ու դրախտէն հանեց<sup>2</sup>, անոր

- 1 Այս ինքն թէ Փրկիչը քու զօրութիւնդ ձեռքդ  
տանէ, դուն ալ շարագործ. մարդիկներն անոր  
դէմ գրգռելով՝ պարսպ տեղ անոր յաղթելու  
ջանաս: Ասով Աստուած մեր առաջին ծնողաց  
Փրկիչ խոստանալով, զանոնք իրենց յանցանքին  
արժանի պատժով՝ արգարութեամբը շարժած՝  
Նախ իր անսահման ոգորմութեամբը մոխիթարեց:
- 2 Ասոնց որչափ ատեն դրախտին մէջ կենալուն վրայ  
ստոյգ տեղեկութիւն չունինք. մեկնիչներն ալ մե-  
ջերնին միաբան չեն, 30 տարիէ մինչեւ մէկ քանի  
ժամ զնոց կայ: Իսկ դրախտին տեղը՝ հաւանա-  
կանագոյն կ'երեւայ որ Հայտատանի մէջ եղած  
Ըլայ:

դիմացը բնակեցուց, որպէս զի կորսընցուցած երջանկութիւննին միշտ աչքերնուն առջեւ ունենալով՝ բրածներնուն վրայ ցաւին եւ Աստուծակ թողութիւն խնդրեն: Եւ որպէս զի չբլայ թէ անկէ ետեւ մէկը կենաց ծառին մտօնկնայ եւ պողէն ուտէ, քերովրէից պատուիրեց որ նոյն ծառին ճամբան պահեն:

Ձ. Մեր առաջին ճնողքն աստառապանաց տեղը մտնելէն ետքը՝ մեղքերնուն պտուղն առջի անգամ՝ իրենց որդւոցը վրայ տեսան: Ապէն ու Արէլ իրենց ամենէն առջի զուկրներն եղան: Ապէն առջինէկնին մշակ էր ու երկիր կը բանէր, իսկ Արէլ երկրորդը հովիւ էր ու ոչխար կ'արածէր: Երկուքն ալ Աստուծոյ շնորհակալութեան համար (գուցէ Ազամայ խորհրդովը) պատարագ մատուցին. Ապէն՝ երկրին պտուղները եւ Արէլ՝ իր ոչխարներուն անդրանիկներուն ամենէն գէրը: Աստուած՝ որ մարդու սիրտն ու երիկամունքը կը քննէ, Արելի պատարագին վրայ իր հաճութիւնը յայտնեց. իսկ Ապէնին նոյն հաճութիւնը չցուցուց: Անոր համար ինքն ալ առնուեցաւ, երեսը կախեց, եղբորը վրայ սկսաւ ծուռ աչքով նայիլ: Աստուած զինքը հօր պէս խրատեց՝ որ եղբորը դէմ ատելութիւն ու նախանձ չունենայ. բայց օգուտ մը չեղաւ: Օր մը Արէլին՝ Եկուր դաշտ ելլենք պարտինք բսելով, զինքը հեռացուց, ու հօն մէկէն վրան ինկաւ սպաննեց: Բայց անմիջապէս երկնաւոր դատաւորին ձայնն առաւ, որն որ իրմէ եղբայրը կը պահանջէր, հարցընելով թէ Ապէն, ո՞ր է Արէլ եղբայրդ: Արուն եղբայրասպանն յանգզնութեամբ պա-

տասխանեց թէ Էս եղբորս պաշապանն եմ, ինչ գիտնամ: Ան ատեն Աստուած յանցանքը երեսը զարկաւ. Եղբորդ արիւնը գետնէն ինծի կը բողբոջէ, ըսաւ. որովհետեւ երկիրն եղբորդ արիւնովը թաթախեցիր, անոր համար երեւեալ ու տատանեալ ըլլաս, երկիր բանիս եւ անկէ պտուղ չգտնես: Ապէն իր մեղքին ծանրութիւնն իմացաւ, բայց ապաշխարութեամբ Աստուծմէ ողորմութիւն յուսալու տեղ՝ յոյսն անկից կտրեց ու սրտի խռովութեան մէջ ինկաւ, կարծելով որ զինքը տեսնողը պիտի սպաննէ: Աստուած իր ողորմութիւնն անոր չզրացաւ, սիրտը հանդարտեցընելու համար վրան նշան մը դրաւ, որ մէկը զինքը չմեռցընէ, եւ մեռցընողին՝ Ապլենին ընդունած պատժէն մեծագոյն պատիժ սպառնացաւ: Այսպէսով Ապլեն երկայն ատեն ապրեցաւ. բայց վերջապէս՝ Ղամէք իր թոռը զինքն սպաննեց, կըսուի թէ որսի մէջ՝ երէ կարծելով:

## Դ . Դ Ա Ս

1. Ադամ ու Էւա գրախտէն ելլելէն ետեւ կեանքերնին ինչպէս անցուցին եւ ինչ մահուամբ մեռան: Իրենց ծանօթ որդիքն որոնք են: — 2. Որդիք մարդկան եւ Որդիք Աստուծոյ ըսուածներուն մէջ որոնք երեւելի եղան:

1. Մեր առաջին ծնողք դրախտէն արտաքսուելէն ետեւ՝ շատ տարիներով ապրեցան (Ադամ՝ 930 տարի), օրերնին բոլոր ապաշխարութեամբ կ'անցընէին. բարի մահուամբ ալ մեռան: Իսկ իրենց այնչափ շատ զաւկըններուն մէջէն՝ մինակ երեքին վրայ Ս. Գրքէն ծանօթութիւն ունինք, որոնք են Ապլեն, Արէլ ու

Սէթ՝ զորն որ Աստուած Աբելի տեղ Ագամայ տուաւ, երբ որ անիկա 130 տարւան էր: Կայենի ու Սէթայ զաւկրներն եղան, որ առջի անգամ երկրիս վրայ կրօնական բաժանում խոթեցին: Ասան զի Կայենին զաւկրներն իրենց հօրմէն առած չար կրթութեամբը զԱստուած թողուցին եւ ամբարիշտ մարդիկ եղան, անոր համար ալ Որդի՝ Կորդի՝ ըսուեցան. իսկ Սէթայ զաւկրներն իրենց հօրմէն առած բարի կրթութեամբն աստուած ապաշտ մարդիկ եղան, անոր համար ալ Որդի՝ Արդի՝ ըսուեցան:

Չ. Որդւոց մարդկան մէջէն երեւելիներն ասոնք են. Էնոք՝ Կայենի երէց որդին, որուն անուամբը կոչեց հայրն իր շինած քաղաքը՝ Էնոք: Ասոր որդին Ղամէք շատ զաւակ ունեցաւ, որոնց մէջէն ամենէն յիշատակաց արժանին աս չորսն է. Ա. Յովբէլ՝ որն որ վրանարնակ հովիւներու հայր անուանուեցաւ, աս տեսակ կեանքն իրմէ սկսելուն համար. Բ. Յովբաղ՝ որ երաժշտութեան գործիքներ գտաւ. Գ. Թովբէլ՝ որն որ առջի պղինձ ու երկաթ գործողն եղաւ. Դ. Նոյեմա՝ Թովբէլայ քոյրը, որ կը կարծուի թէ կտաւ գործելու արուեստը գտած ըլլայ: Աս չորսն ալ թէպէտ մէկ հօրմէ են, բայց մի եւ նոյն մօրմէ չեն:

Որդիք Աստուծոյ ըսուածներուն մէջէն ամենէն երեւելիներն ասոնք են. Ա. Էնոփս՝ Սէթայ անգրանիկ որդին՝ որ 905 տարի ապրեցաւ. Բ. Կայնան՝ Էնոփսայ որդին՝ որ 910 տարի ապրեցաւ. Գ. Մաղաղայէլ՝ Կայնանայ որդին՝ որ 895 տարի ապրեցաւ. Դ. Յարէդ՝ Մաղաղայէլի որդին՝ որ 962 տարի ապրեցաւ. Ե.

Ենովք՝ Յարեղայ որդին՝ որ Աստուծոյ ընելու ետքի ընդհանուր դատաստանը մարգարեացաւ եւ իր 365երորդ տարին՝ Աստուած զինքը վերացուց ու դեռ ողջ կը պահէ որ մը գալու ապաշխարութիւն քարոզելու համար. Զ. Մաթուսաղա՝ Ենովքայ որդին՝ որ 969 տարի ապրեցաւ. Է. Ղամէք՝ Մաթուսաղային որդին՝ որ 777 տարի ապրեցաւ. իր մինչեւ 566երորդ տարին՝ Ադամ դեռ կենդանի էր, հետը կրնար խօսիլ. Ը. Նոյ՝ Ղամէքայ որդին՝ ջուրհեղեղէն յառաջ 600 տարի ապրեցաւ: Ասոնք ջրհեղեղէն առջի նահապետները կ'ըսուին, որոնց վրայ Ադամ ու Սէմ (Նոյայ որդին) ալ աւելցրնելով՝ 10 կ'ըլլան:

Որդիք Աստուծոյ քանի որ Որդւոց մարդկան հետ հաղորդակցութիւն չունէին՝ բարի էին. բայց երբ որ անոնց հետ խնամութիւն ընելու սկսան, կամաց կամաց չարացան, մինչեւ աշխարհքիս բոլոր մարդիկներուն բարքը գէշցաւ: Ասոնցմէ ծնած հսկայ ու ամբարիշտ մարդիկները զԱստուած մոռցան, թէպէտ անոր հրաշալի գործքերը միշտ աչքերնուն առջեւն էր:

# Բ. ԳՒՆՈՒԽ

ՋՐՀԵՂԵՂԷՆ ՄԻՆՁԵՒ ԸՐԲԱՄԲՆ ԿՈՉՈՒՄԸ  
(2345 — 1915)

## Ե. ԳՆՍ

1. Աստուած մարդկան անկարգութիւնն ինչպէս պատ-  
ժեց. 'Նոյի ինչ պատուէր տուաւ: — 2. 'Նոյ տապանին  
մէջ սրշափ տանն կեցաւ, ցամաք ելած տանն ինչ բրաւ.  
Աստուած ինչ նոր խոստում բրաւ: — 3. Ինչու վամ ա-  
նիծուեցաւ ու Սէմ եւ Յարէթ որհնուեցան:

1. ԱՍՏՈՒԱԾ տեսնելով որ մարդկային  
ազգին բարբը 'գէշնալով' մարդիկ իրենց վախ-  
ճանին բոլորովին հակառակ ընթացք կը բռնեն,  
միտքը դրաւ որ թէ մարդն ու թէ անասուն-  
ներն երկրիս վրայէն ջնջէ:

Աս մեղաւոր ազգին մէջ մինակ 'Նոյ նահա-  
պետը գանուեցաւ, որ արդար եւ Աստուծոյ  
հաճոյ բլալուն' անոր շնորհելովն իր ընտանի-  
քովը մեկտեղ աշխարհքիս կրելու ընդհանուր  
պատուհասէն ազատեցաւ: Աստուած' բլալիքն  
յառաջունէ 'Նոյի իմացուց: Բոլոր երկիրը  
ջուր կոխել պիտի տամ', բաւ, ու շնչաւոր  
մը ողջ չծգեմ'. բայց գրեզ ու քուկիներդ  
պիտի փրկեմ: Ուստի մեծ նաւ մը շինէ 300  
կանգուն երկայն, 50 կանգուն լայն ու 30  
կանգուն բարձր: Քու կնիկդ ու երեք որդիքդ  
իրենց կնիկներովը մեկտեղ հետդ առած' մէջը  
մտէք. նաեւ ամէն անասկ կենդանիներէն ներս  
խոթէ, սուրբ բլալներէն' եօթնական ջուխտ,  
անսուրբ բլալներէն' մէյմկ ջուխտ. եւ ձեր ու

կենդանիներուն ապրուստին համար պէտք է զածն յառաջուց հոգա ու պատրաստէ : Նոյին աս նաւը Տապան կը կոչուի : Նոյ ջրհեղեղէն 100 տարի յառաջ աս պատուէրներն առած ըլլալով՝ այնչափ ժամանակ մեղաւ որ ազն ապաշխարութեան կը յորդորէր՝ գալու ջրհեղեղն անոնց քարոզելով . բայց անօգուտ :

Երբ որ Աստուծոյ առած պատուէրը կատարեց լմնացուց, ջրհեղեղ գալէն եօթն օր յառաջ նաւը մտաւ . Աստուած ալ դուռը վրայէն դոցեց : Մէյ մ'ալ սկսաւ սաստիկ անձրեւ մը, որ քառասուն օր քառասուն գիշեր տեւեց, անանկ որ ջուրը բարձր լեռանց վրայ տասնուհինգ կանգուն բարձրացաւ : Ասանկով տապանէն դուրս ինչ որ կար՝ ջրի մէջ ընկզմեցաւ : Ջուրը 150 օր երկրին երեսը մնալէն ետեւ՝ Աստուած Նոյ նահապետն եւ հետն ըլլողները յիշեց . երկրին տակն եզոզ ազբիւրներն ու սահանքն արդելեց եւ անձրեւը դադարեցուց : Ջրերն իջնալ սկսելով՝ տապանն Հայաստանի Արարատ կամ՝ Մասիս լեռան վրայ նստաւ : Քիչ մը ետքը լեռներուն գլուխներն ալ երեւալու սկսան : Ասկէ 40 օր ետքը Նոյ տապանին պատուհանը բացաւ, դուրս ազաւնի մը թողուց, որն որ կենալու տեղ չգրանելով՝ ետ դարձաւ . Նոյ ալ ձեռքն երկրնցուց ներս առաւ : Եօթն օր անցաւ՝ մէյ մ'ալ ազաւնի մը թողուց, որն որ գնաց եւ իրիկուան դէմ՝ բերանը ձիթենուոյ ճիւղ մ'առած ետ դարձաւ : Ասոր վրայ անցաւ եօթն օր մ'ալ երրորդ անգամ ազաւնին թողուց, որ գնաց եւ ալ չերեւցաւ :



Չ. Նոյամբողջ տարի մը տապանին մէջ կենալէն ետեւ՝ Աստուծոյ հրամանաւն իր ընտանիքովն ու ներս առած կենդանիներովը մէկտեղ դուրս ելաւ : Ոտքը ցամաք գնելուն պէս՝ շուտ մը սեղան շինեց ու Աստուծոյ շնորհակալ ըլլալու համար սուրբ կենդանիներէն ողջակէզ մատոյց, որ Աստուծոյ շատ հաճոյ եղաւ : Անոր համար զինքն ու որդիքն օրհնեց, Ադամայ տուած օրհնութիւնն իրենց ալ տուաւ . Աճեցէք, շատցէք ու բովանդակ երկրին տիրեցէք, բաւ : Հոս նոր ուտելիք մ'ալ աւելցուց . Ամէն կենդանի ձեզի կերակուր ըլլայ, բաւ : Բայց միանգամայն զրուցեց որ Մարդն իմպատկերիս համեմատ ստեղծած եմ, անոր համար ով որ մարդու արիւն կը թափէ՝ իր արիւնն ալ թափի : Եւ աս բանիս մէջ զիրենք աւելի զգուշացընելու համար՝ ապապրեց որ Անդանոյ միսն արիւնտաշուտն : Ետքը խոստացաւ որ մարդկային ազգն ու բոլոր արարածները մէյ մ'ալ ջրհեղեղով չպատժէ, եւ իր խոտման նշան՝ ծիրանի գօտին տուաւ, ըսելով թէ Որպէս զի երկինք ամպերով ծածկած ատենս՝ անիկա տեսնելով՝ խոստումս յիշեմ :

Յ. Նոյն ատեն բոլոր երկրին վրայի մարդիկը՝ միայն Նոյ եւ իր ընտանիքն էին, որոնց ձեռքովը մարդկան ազգը նորէն պիտ'որ աճէր : Նոյի երեք որդւոցն անունն է՝ Սեմ, Քամ ու Յաբէթ : Նոյ երկիր բանել սկսելով, այդի անկեց ու գինւոյ ոյժը չգիտնալուն՝ հեղ մը շատեկեկ խմելով, գինովցած՝ գնաց մերկ պառկեցաւ : Իր մեծ որդին Քամ՝ հայրն առանկ վիճակի մէջ տեսնելով՝ գնաց ծաղրելով մէկալ

եղբարցը պատմեց : Սէմ՝ ու Յարէթ՝ երկուքը մէկտեղ կռնակնին լաթ մ'առին, ու ետեւ ետեւ երթալով՝ հայրերնին ծածկեցին, առանց զինքը տեսնելու : Նոյ երբոր սթափեցաւ ու Քամին բաժը լեց, շատ բարկացաւ, անոր Քանան որդին անիծեց, որ իր եղբարցը ծառայ բլայ : Իսկ Սէմն ու Յարէթն օրհնեց : Նոյ ջրհեղեղէն ետեւ 350 տարի ապրելէն ետքը՝ 950 տարւան մեռաւ :

## Զ . Գ Ա Ս

1. Աստուած մարդկան լեզուն ինչու խառնակեց : — 2. Մարդիկ ինչպէս ջրուեցան, եւ Աստուած ինչու իրեն մասնաւոր ազգ մը բնարեց :

1. Աստուծոյ օրհնութեամբը քիչ ատենուան մէջ աս նոր մարդկային ազգն ան առտիճանի բազմացաւ, որ տեղերնին իրենց քիչ գալով՝ հարկադրեցան ուրիշ երկիր փնտուելու ելլել . ուստի եւ Ափրատ ու Տիգրիս գետերուն մէջտեղը Սենաարոյ երկիրը՝ դաշտ մը եկան բնակեցան : Հոն իրարու բսին թէ Աշկէք գետ երկրիս երեսը չջրուած՝ հոս քաղաք ու աշտարակ մը շինենք, որուն ծայրը մինչեւ երկինք հասնի եւ անով մեծ անուն վաստակինք : Եւ սկսան շէնքը շինել : Աստուած անոնց ամբարտաւան խորհուրդը չհաւնեցաւ . Քանի որ, բսաւ, ասոնք մէկ լեզու կը խօսին, ուղածնին կ'ընեն . եկէք լեզունին խառնակենք, որ իրար չհասկընան : Իրօք լեզունին խառնակելով՝ մշտեանին շփոթութիւն ձգեց, ալ չկրցան սկըսածնին յառաջ տանիլ : Աս պատճառաւ նոյն տեղը Բարէլ (Խառնակութիւն) կոչուեցաւ :

Չ. Ահաւայ խառնակութենէն ետեւ՝ մարդիկ երկրիս վրայ ասդին անդին ջրուեցան: Սեմայ զաւկըներն արեւմտեան կողմանէ՝ Եփրատ գետէն մինչեւ Միջերկրական ծով, արեւելքէն՝ մինչեւ Ովքսոս գետ տարածուեցան: Յարեթայ զաւկըներն Ասիայի հիւսիսային արեւմտեան դին ու Եւրոպան ընտրեցին եւ հոն բնակեցան: Իսկ Քամայ զաւկըները գրիսաւորաբար Ափրիկէ ու Ասիայի արեւելեան կողմերուն մէկ մասն իրենց բնակութիւն ըրին. թէպէտ եւ իրենցմէ քանի մը ցեղ Եփրատ գետին քովերն, Արաբացւոց հարաւային կողմերն եւ Ասորւոց ծովեզերքը բնակեցան, բայց ետքէն կէս մը Սեմայ զաւկըներէն մերժուեցան եւ կէս մ'ալ անոնց հետ խառնուեցան: Մարդիկ ասանկ ջրուելէն ետեւ՝ շար ցանկութիւններնուն հետեւելով՝ Աստուծոյ սրտերնուն վրայ տպաւորած բնական օրէնքին փոյթ չտարին, սրտերնին անցաւոր բաներու հետ կապեցին եւ սկսան յափշտակութիւններ, պատերազմներ ու բռնութիւններ ընել: Քամայ որդւոցմէ՝ Ներբովթ անունով հսկայ ու որսորդ մարդ մը՝ առաջինն եղաւ, որ բռնութեամբ երկիրներու տիրեց. ասիկա իր տէրութեան զլիսաւոր քաղաքը Բաբելոնն ըրաւ:

Արովհետեւ նոյն ատենուան մարդիկներուն խելքն ու միտքը աշխարհքիս ունայնութիւնները վայելելու ետեւէ էր, աս մեծ ծիզր՝ նոյն վախճանին ծառայող արուեստները յառաջացուց. անոր հակառակ մտքերնին հոգեւոր բաներու նկատմամբ կոյրցուց, ան աստիճանի, որ Արարիչն արարածներէն չկրնալով զա-

տել՝ թանձր կապաշտութեան մէջ ինկան :  
 Անոր համար ջուրը, հողը, արեւը, լուսինը,  
 նոյն իսկ մարդն ու կենդանիներն՝ Աստուծոյ  
 տեղ պաշտեցին : Այսպէսով նորէն այնպիսի  
 դժբախտ զիճակի մէջ ինկան՝ որուն համար որ  
 ջրհեղեղէն առջի մարդիկը ջնջուած էին :  
 Բայց Աստուած՝ որ խոստացած էր թէ աշ-  
 խարհքս մէյ մ'ալ ջրհեղեղով չիպատէր,  
 ասոր ճարն ուրիշ կերպով մը գտաւ : Աւղեց  
 ան ատենուան մեղաւոր ու կապաշտ մարդկան  
 մէջէն մեծ ազգ մը հանել, եւ անոր մէջ ճշմա-  
 րիտ Աստուծոյ ծանօթութիւնն ու պաշտօնը  
 պահել, որպէս զի սահմանուած ատենին՝ ճրշ-  
 մարիտ կրօնն անկից նորէն բոլոր աշխարհք  
 տարածի : Աս ազգին սկիզբն եղաւ Աբրամ  
 անունով մէկը՝ որն որ Սեմայ ցեղէն էր. իսկ  
 ընտրուած ազգն՝ Եբրայեցի, Իսրայելացի ու  
 Հրեայ անուանեցաւ :

# Գ. ԳԼՈՒԽ

ԱՅՐԱՄՈՒ ԿՈՉՈՒՄԷՆ ՄԷՆՉԵՒ ԻՍՐԱՅԵԼԱ-  
ՑԻՈՑ ԵՊԻՊՏՈՍԷՆ ԵԼԼԵԼԸ

(1915 — 1500 կամ 1485)

## Է. Գ Լ Ս

1. Արբամ ով է. Աստուած զինքն ուր կանչեց. ինչ խոս-  
տացաւ. Եգիպտոս իրեն ինչ պատահեցաւ: — 2. Ղով-  
տէն ինչու բաժնուեցաւ: — 3. ՉՂովտ ինչպէս փրկեց:

1. ԱՅՐԱՄ քաղաքացւոց Ուր քաղաքը  
ծնաւ. Սեմէն տասներորդ ու Եբերէն եօթ-  
ներորդ է: Հօրն անունն էր Թարա ու եղ-  
բարցը՝ Նափոփր եւ Առան: Աս վերջինը Ղովտ  
անունով մէկ մանչ զաւակ, երկու ալ աղջիկ  
զաւակ ունեցաւ, որոնք հասարակօրէն կը կար-  
ծուի թէ Սարա ու Մեղքա եղած ըլլան:  
Կա ապաշտու թիւնը՝ նոյն իսկ Արբամին տոհմին  
մէջն ալ մտաւ, թէպէտեւ ինք ճշմարիտ Աս-  
տուծոյ հաւատարիմ մնաց: Արբամ՝ Աստու-  
ծոյ հրամայելովն իր հայրենի երկրէն ելաւ ու  
Միջագետքի Խառան քաղաքը պանդխտացաւ:  
Քիչ ատենէն՝ Աստուած իրեն խոստացաւ որ  
զինքն իր Ժողովրդեանը նահապետը պիտ'որ  
ընէ, եւ հրամայեց ըսելով որ Ել քու երկրէդ  
ու հօրդ տնէն եւ հոն գնա՛ ուր որ ես քեզի  
կ'ըսեմ: Նաեւ խոստացաւ որ գալու Փրկչին  
ալ նախահայր պիտ'որ ըլլայ ու ըսաւ. Երկրի  
վրայի ազգերը քեզմով պիտի օրհնուին: Ա-  
րբամ հնազանդեցաւ եւ երթալու տեղը չգիտ-  
նալով՝ Ղովտայ ու Սարա իր կնոջը հետ ճամօ

բայ ելաւ : Հօրը մահուընէ ետեւ երբ որ Քանանացւոց երկրին մէջ Սիւքէմ եկաւ, Աստուած հոն իրեն նորէն երեւցաւ ու խոստացաւ որ ան երկիրներն իր զաւկըներուն կուտայ : Արբամ ալ Աստուծոյ սեղան շինեց ու շնորհակալ եղաւ. ետքը Բեթէլ գնաց, հոն ալ սեղան շինեց եւ անկէ անապատ գնաց :

Ան ատենները Քանանացւոց երկիրը մեծ սով ելլելով՝ Արբամ ելաւ Եգիպտոս գնաց : Իսրայելացիք իրենց մերձաւոր ազգականին ընդհանրապէս Եղբայր կամ Քոյր կ'ըսէին. ուստի Արբամ վախճալով որ չըլլայ թէ Եգիպտացիք Սարային գեղեցկութեանը համար զինքը սպաննեն, որպէս զի անիկա ձեռքէն առնեն, անոր խրատ տուաւ որ մինակ Արբամին քոյր (ազգական) ըլլալն անոնց յայտնէ : Ասանկով մտան Եգիպտոս : Սարա Արբամին խրատը կատարեց. Փարաօնն հոնտեղաց թագաւորը՝ Սարան Արբամին պարզ ազգականը կարծելով, իրեն կնիկ առաւ : Եգիպտացիք ալ Արբամը Սարային ազգականը բռնելով՝ անոր շատ բարիք կ'ընէին. ասանկով Արբամ շատ հարստացաւ : Բայց Աստուած Փարաօնը ծանր ծանր հարուածներով պատժեց, եւ իմացուց որ ան չարիքը Սարային համար գլուխը կու գան : Ան ատեն Փարաօնն Արբամը կանչեց, Սարան անոր յանձնեց, ու նեղացաւ որ անոր իր կինն ըլլալը չիմացուց. իր մարդիկներուն ալ հրամայեց որ Արբամը բոլոր ունեցածովը Ղոփոն ալ հետը ճամբեն :

2. Արբամ երկրորդ անգամ Բեթէլ գալով՝ Աստուծոյ շնորհակալութեան զոհ մա-

տոյց : Բայց որովհետեւ Աբրամայ ու Ղովտայ ստացուածները խիստ շատցեր էին ու տեղերնին իրենց նեղ կու դար, անոր համար իրենց հովիւներուն մէջ կռիւն անպակաս էր : Աբրամ աս տեսնելով՝ Ղովտէն բաժնուիլ ուղեց : Իրարու եղբայր ենք, ըսաւ, մէջերնիս խառնութիւն չըլլայ. ուստի եթէ դուն աջ դին կ'ուզես, ես ձախ կ'երթամ, եթէ դուն ձախը՝ ես աջ : Ասանկով իրարմէ բաժնուեցան : Ղովտ Յորդանան գետին քովի երկիրներուն աղուորութեան համար՝ ան կողմերն ընտրեց ու Սոդոմ քաղաքին մէջ գնաց նստաւ, առանց մտածելու թէ ինչպիսի անզգամ ազգերու մէջ կը բնակի : Աստուած նոյն ատեն իր խոստումներն Աբրամին նորէն կրկնեց : Երկնից աստղներուն ու ծովու աւազներուն չափ անթիւ անհամար զաւակ պիտ'որ ունենաս ու Քանանացւոց երկիրները քու զաւկներուդ պիտ'որ տամ, ըսաւ. եւ հրամայեց որ ան երկիրներն ելլէ պտրտի տեսնէ : Աբրամ ելաւ պտրտեցաւ, ու Քերքոնի մէջ Մամբրէի բարձր կաղնի ծառին քով բնակեցաւ, եւ հոն ալ Աստուծոյ սեղան շինեց :

**Յ.** Քանի մը տարիէն մեծ պատերազմ բացուեցաւ : Չորս թագաւոր մէկ եղած՝ Աղտից ձոր ըսուած տեղը՝ հինգ թագաւորի դէմ ելան. աս ետրիններուն մէջն էր նաեւ Սոդոմացւոց Բազակ թագաւորը : Չորս թագաւորք մէկալնոնց յաղթեցին, Սոդոմ թշնամեաց ձեռք ինկաւ, մէջինները գերի եղան. Ղովտ ալ բռնուեցաւ, բոլոր ունեցածը կորսընցուց եւ գերի տարուեցաւ : Պատերազմէն փախչողներէն մէ-

կը՝ բանն Արրամին ահանջը հասուց : Արրամ շուտ մը իր ծառաներէն 318 հոգի հետն առած՝ երեք դաշնակից թագաւորներով գիշերանց յաղթողներուն ետեւէն վազեց, զանոնք ջարդեց հալածեց, Ղովան ու մկալ գերի խնկածներն ազատեց եւ բոլոր առածնին ետ դարձուց : Պատերազմէն ետ դառնալու ատեն՝ Սողոմոնոց թագաւորն Արրամէն խնդրեց որ մինակ գերութենէ ազատած մարդիկներն իրեն տայ, իսկ դարձուցած աւարն իրեն ըլլայ : Բայց Արրամ յանձն չառաւ, որպէս զի անոր առիթ չտայ բտելու որ ՁԱրրամ եւ հարստացուցի, մարդիկ ալ զԱրրամ հարստցնողն Աստուած կարծելու տեղ՝ Սողոմոնոց թագաւորը կարծեն, եւ այսպէսով Աստուծոյ փառաց անիրաւութիւն ըլլայ : Աւստի եւ ուզեց որ դաշնակից թագաւորները բաժիննին առնեն : Մելքիսեղեկ ալ՝ որ անտեղաց (Սաղիմոյ) թագաւոր եւ Աստուծոյ բարձրելոյ քահանայ էր, Արրամին առջեւն ելաւ անոր հաց ու գինի հանեց ու զինքն օրհնեց : Արրամ առած աւարէն անոր տասանորդ տուաւ :

## Ը • Դ • Ա • Ս

1. Աստուած Արրամու յոյսը չկտրելու համար ինչ ըրաւ :
- 2. Ագար ինչու փախաւ, ինչպէս նորէն դարձաւ : —
3. Աստուած Արրամին ու Սարային անունն երբ փոխեց թլփատութեան օրէնքն երբ դրաւ : — 4. Արրահամին օտարասիրտութիւնն ինչ աստով երեւցաւ :

1. Արրամ չէր կարծեր որ Աստուծոյ խոստացած մեծամեծ խոստումներն ամուլ Սարային ձեռքով պիտի կատարուին, անոր հա-



մար Աստուծակ խնդրեց, որ իր տան հազարապետը՝ Եղիազարին որդին իրեն ժառանգ ըլլայ: Աստուած զինքը քաջալերելու համար որ յոյսը չկարէ: Խոստամունքը նորէն կրկնեց: Հրամայեց որ երեք տարւան երինջ, երեք տարւան խոյ, երեք տարւան այծ, տասրակ, աղաւնի առնուել զանոնք իրեն պատարագ մատուցանէ: Արբամ թռչուններէն զատ՝ մէկալ անասուններն առաւ կարտեց, ինքն ալ զլուխնին կեցած՝ զանոնք թռչուններէն կը պահէր, որոնք ուտելու կու գային: Արեւու մտնելուն մտա՝ Արբամու վրայ թմբու թիւն ինկաւ. նոյն միջոցին Աստուած անոր յայտնեց որ տարիներով ետքն իր զաւկրներն Եղիազարու մէջ մեծ նեղութիւն պիտի քաշեն, բայց ցուցուց ալ որ զանոնք ետքէն շատ փառաւոր կերպով հոնկից պիտ'որ հանէ: Ետքը ան կարտուած ու զատ զատ գիշուած կտորուանքներուն մէջէն հրոյ ճառագայթ անցուց<sup>1</sup>:

2. Արբամ՝ Սարային յորդորելովն իր 866-րորդ տարին՝ Ազար անուն ազախինն իրեն կին առաւ, եւ անկից իր առջինեկ զաւակն ունեցաւ: Բայց Ազար՝ տեսնելով որ Աստուած իրեն զաւակ կու տայ, դեռ որդին չծնած՝ սկսաւ իր տիկինն արհամարհել: Սարա բանն

1 Նոյն ատենուան գաշինք հաստատելու հասարակ սովորութեան համակայն Աստուած ասանկ գործքով մը իր խոստումը հաստատեց: Հին ատենները կենդանի մը կ'առնէին կտոր կտոր կ'ընէին, եւ կտորները զատ զատ գիշելով՝ գաշները դնողներն անոնց մէջէն կ'անցնէին: Իբրեւ թէ նշանակելու համար որ նոյն գաշները չպահողն եւ անոր դէմ գործողը՝ անանկ կտոր կտոր ըլլայ:

ըլլայ, բոլորին չէս խնայեր: Այս կը խնայեմ,  
բաւ: Աբրահամ ասով համարձակութիւն  
առնելով՝ թիւն ետեւէ ետեւ պահուեցուց,  
մինչեւ տասը հասուց: Աստուած ալ յանձն  
առաւ որ եթէ տասն արդար գտնուելու ըլ-  
լայ՝ բոլորին խնայէ:

### Թ. Գ Ա Ս

1. Ղովտայ ստարափրութիւնն ինչ բանի մէջ երեւ-  
ցաւ, եւ անկէ ինչ բարիք գտաւ: — 2. Գերարայի մէջ  
Աբրահամին ինչ պատահեցաւ: — 3. Սասան որդի ու-  
նեցաւ: Ագարն ինչու ճամբեց: — 4. Աբրահամ որդին  
պատարագելու հրամանն ինչպէս կատարեց:

1. Սողոմոյ ու Գոմորայ եւ անոր շրջակայ  
տեղերուն բնակիչքը սաստիկ չար մարդիկ էին  
եւ ամէն տեսակ անկարգութիւն կ'ընէին: Մի-  
նակ Ղովտ՝ որ անոնց մէջ կը բնակէր, անոնց  
մեղանշական գործքերուն հաղորդ չէր. ինք  
զինքը սուրբ պահելէն զատ՝ իր քաղաքակից-  
ներուն չար վարքը սրտին մեծ ցաւ կ'ըլլար:  
Ան օրն՝ որ երկու հրեշտակներն Աբրահամու  
քովէն ելան, շիտակ Սողոմ եկան Ղովտայ  
տունը մօտեցան: Ղովտ դրան քով նստած  
ըլլալով՝ զանոնք տեսնելուն պէս, առանց ո՛վ  
ըլլալնին գիտնալու, առջեւնին վազեց տունը  
հրամցուց: Անոնք չէին ուզեր մտնել, բայց  
Ղովտ շատ ստիպեց, ներս առաւ, առջեւնին  
կերակուր հանեց: Գիշեր եղաւ, մէյ մ'ալ  
քաղքըցիք տան շորս դին առած՝ բանութեամբ  
ան երկու օտարականները կը պահանջէին:  
Ղովտ դուրս ելաւ գուռը գոցեց ու շիտած  
ուրիշ բանի միտ չէր դնէր, բայց եթէ զանոնք

Հանդարացրնելու, ուստի եւ կ'առաջարկէր որ ան երկուքին տեղ՝ իր երկու աղջիկներն իրենց տայ: Իսկ անդգամները խօսք մտիկ չէին ընէր. մանաւանդ թէ աւելի բարկանալով՝ դռները ձեռք առին, քիչ մնաց որ կը կոտորուէին: Ասոր վրայ երկու օտարականները (հրեշտակները) զՂովտ քաշեցին ներս առին, դուռն ալ դռցեցին ու բոլոր տունը պաշարողներն այնպէս կոյրցուցին, որ տան դուռը փնտռելէն յոգնեցան ու չկրցան գտնել, ելան դացին:

Ան ատեն հրեշտակներն ըսին Ղովտայ, որ իրենները բոլոր հեան առնէ, քաղքէն հեռանայ, վասն զինոյն տեղը պիտի կործանեն: Ղովտ իր փեսայացուներուն աս բանս պատմեց, բայց անոնք չհաւտացին: Առտուանց լուսըննալու մօտ՝ հրեշտակք զՂովտը կը փութացրնէին որ ժամ մը յառաջ քաղքէն ելլէ. ետքը անոր ու կնոջը եւ իրենց երկու աղջկանց ձեռքէն բռնած՝ քաղքէն դուրս հանեցին: Ղովտայ պատուիրեցին որ ամենեւին ետեւ չնայի ու ասդին անդին չկենայ, հապա որչափ կարելի է շուտ՝ լերան վրայ ելլէ, որպէս զի չըլլայ թէ իրեն ալ բան մը հանդիպի: Ղովտ աղաչեց որ մօտ տեղի Սեզովր պղտիկ քաղաքը մանէ: Խնդիրն ընդունելի եղաւ. Աստուած իրեն համար ան տեղւոյն խնայեց: Արեւը ծագեցաւ շճագեցաւ՝ մէյ մ'ալ Սողոմոյ եւ անոր շրջակայ տեղուանքը ծծումբ եւ հուր տեղաց, ինչ որ գտաւ՝ այրեց, լափեց, մխիթ դարձուց: Իսկ Ղովտայ կինը ճամբան ետեւ դառնալ նայելուն համար՝ աղի արձան կտրած մնաց<sup>1</sup>:

<sup>1</sup> Կրնայ ըլլալ որ, ինչպէս Քրիստոսի խօսքէն ալ

Ղոփա Սեգօփըէն լերան վրայ ելաւ. հոն այրի մը մէջ բնակեցաւ ու երկու որդի ունեցաւ, մէկը Մոփար մէկալն Ամն: Առջինէն՝ Մոփարացիք, ու երկրորդէն Ամնացիք յառաջ եկան:

**2.** Սողոմ ու Գոմոր քաղաքներուն այրելէն ետեւ՝ Արրաճամ տեղը փոխեց՝ Գերարա գնաց, հոն ալ դարձեալ մահուան վտանգէն վախնալով, Սառային համար՝ քոյրս է ըսաւ: Արիմելէք տեղւոյն թագաւորը՝ Սառան իրեն կին առաւ: Բայց Աստուած անոր բոլոր տան մջիներն անդաւակութեան պատժով պատժեց ու զիչերն երեւցաւ անոր հրամայեց որ Սառան ետ դարձնէ, թէ չէ՝ բոլոր ընտանիքով կը մեռնի: Արիմելէք ինք զինքն արդարացուց, Սառան Արրաճամու քոյրը կարծեցի, ըսելով: Աստուած իրեն ապսպրեց որ Արրաճամին աղօթքը խնդրէ: Արիմելէք առտուանց Արրաճամը կանչեց, զինքը խաբելուն վրայ նեղացաւ, Սառան ետ դարձուց եւ ըսաւ. Երկրիս մէջ ազատ ես, ուր որ կ'ուզես գնա եւ անոր աղօթքը խնդրեց ու աղօթքովն անդաւակութեան պատժէն ազատեցաւ:

**3.** Աստուծոյ խոստմանը վրայ ճիշդ տարի մ'անցած էր, եւ Սառա որդի ունեցաւ: Արրաճամ՝ որ ան ատեն 100 տարւան էր, աղուն

կ'երեւայ, (Ղուկ. ժէ. 32.) ճամբան ետ դարձուցած ըլլայ եւ այնպէս ան քաղաքներուն վրայ տեղացած կիզիչ նիւթերէն ծածկուելով՝ քարացած ըլլայ: Ասանկ բնական կերպով իր անհաւատութեան եւ անհնազանդութեան պատժն Աստուծոյ գտաւ:

անուէն Իսահակ գրաւ , ու թը օր ետքը թրփա-  
տեց ու կաթէն կտրած օրը մեծ ու բախու թիւն  
բրաւ : Սառա տեսնելով որ Իսմայէլ Իսահա-  
կայ հետ կ'իյնայ , Արրահամին ըսաւ որ Ազարը  
տղովը մէկտեղ անէն հեռացրնէ : Աս բանս  
Արրահամին խիստ երեւցաւ : Բայց Աստուած  
իրեն ըսաւ որ Սառայի խօսքին անսայ : Արրա-  
համ առտու մ'ելաւ Ազարին կռնակը հաց ու  
տիկ մը ջուր տուաւ եւ Իսմայէլ տղովը մէկտեղ  
ճամբեց : Ազար ճամբան կորսընցընելով՝ անա-  
պատին մէջ կը թափառէր . ունեցած ջուրն ալ  
հասնելով՝ զաւկին մահը շտեմնելու համար՝  
զանիկա ծառի մը տակ թողուց , ինքն ալ դի-  
մացը հեռու քաշուած նստեցաւ : Տղան ձայնը  
ձգեր կու լար : Ան ատեն հրեշտակ մ'եկաւ ,  
Ազար , ըսաւ , մի վախնար , Աստուած տղուդ  
ձայնը լսեց : Ազարին աշուրները բացուելով՝  
մօտ տեղ ջրհոր մը տեսաւ , զնաց անկէ տիկը  
լեցուց , տղուն ալ խմցուց : Աս ատեններս էր  
որ Արիմէլէր Արրահամին հարստնայը տես-  
նելով , ուզեց հեար դաշինք գնել . Արրահամ  
աս առ թով ան ջրհորն՝ որուն քովերն որ Ա-  
զար թափառած էր , ուզեց առաւ . որովհե-  
տեւ ինք բացած էր ու Արիմէլէրին ծառա-  
ները ձեռքէն առած էին : Եւ դաշինքն աս  
ջրհորին քով դրուելուն՝ անիկա Ջրհոր երդ-  
ման ըսուեցաւ :

▲ . Հագիւ թէ Իսահակ մեծցաւ , Աստուած  
զԱրրահամ փորձելու համար գիշեր մը իրեն  
երեւցաւ ըսաւ . Մէկհատիկ սիրելի զաւակդ  
Իսահակն աս , իմ ցուցընելու լերանս վրայ  
տար եւ հոն ինձի զոհ ըրէ : Արրահամ հնա-

զանդեցաւ, զիչերանց ելաւ փայտ ջարդեց, էջը համետեց ու երկու ծառայով Իսահակն ալ հետն առած ճամբայ ելաւ: Երեք օր ճամբայ ընելէն ետեւ՝ երբ որ Աստուծոյ ուզած լերան ոտքն հասան, ծառաները հոն թող տուաւ, ողջակիզի համար պատրաստած փայտն Իսահակայ կոնակը տուաւ, իսկ սուրն ու հուրն ինքն առած՝ ելան գացին: Ճամբան Իսահակ հօրը հարցուց, Հայր, հուր ու փայտ ունինք, զոհին ոչխարն ո՞ւր է: Հայրը պատասխանեց թէ Աստուած կը հոգայ, որդեակ: Ասանկով ճամբանին յառաջ տարին: Երբ որ Աստուծոյ ցուցուցած տեղը հասան, Արրահամ սեղան շինեց, փայտերը վրան դիզեց, որդին ալ կապած վրան հանեց: Չեռքի սուրը վերցուց որ զարնէ, մէյ մ'ալ յանկարծ հրեշտակ մը զինքը կանչեց ու ըստ. Տղուդ մի դպչիր, հիմա խմացայ որ Աստուծակ կը վախնաս եղեր, որովհետեւ իրեն համար քու մէկհատիկ զաւկիդ շինայեցիր: Արրահամ աչքը վեր վերցուց, տեսաւ որ հոնտեղի մէկ ծառին վրայ խոյ մը եղ ջիւրներէն կախուեր կեցեր է, գնաց առաւ ու որդւոյն տեղ Աստուծոյ ողջակէզ մատոյց, տեղոյն անունն ալ Տէրեաես դրաւ: Աստուած Արրահամին աս մեծ հնազանդութեան համար՝ հրեշտակի ձեռքով իրեն երկինքի աստղներուն եւ ծովու առաջներուն չափ անթիւ անհամար զաւակ խոստացաւ:

## Ժ · Դ Ը Ս

1. Արբաճամ իր որդւոյն բարեպաշտ կին մը հոգալու համար ինչ բտաւ : Եղիազար իր խոստումը կրցան կատարել : — 2. Իսահակայ երկուորեակ զաւկրնեքն որոնք են : անդ բանիկն իր իրաւունքն ինչու հրամարեցաւ :

1. Սառայ 127 տարւան մեռաւ : Քանանացւոց Քեբրոն քաղաքը : Արբաճամ վրան սուգ բռնեց ու Մամբրէին դիմացի կրկին այրը 400 արծաթ սասերի Եփրոնէն գնելով՝ Սառային մարմինը մէջը թաղեց : Ետքը տեսնելով որ ինքն ալ ծերութենէն շատ ինկած է, շմեռած՝ Իսահակին համար բարեպաշտ կին մը հոգալ ու զեց : Ուստի իր տան հաւատարիմ ծառան Եղիազարը կանչեց երդու ընցուց որ չըլլայ թէ Քանանացւոց աղջիկներէն իր տղուն կին առնէ, հապա իր հայրենիքն երթայ ու իր աղգականներէն մէկը բերէ : Եղիազար հարցուց որ Աղջիկը հոս գալ չուզէ նէ՝ ան ատեն տղադ հոն կրնամ տանիլ : Արբաճամ՝ Չէ բտաւ : Եւ Աստուծոյ իրեն բրած խոստումներուն ապաւինած՝ զստահութեամբ զրուցեց որ Աստուած իր հրեշտակն առջեւէդ կը խրկէ, որ անոր օգնութեամբը կարենաս զաւկիս աղջիկ մը գտնել բերել : Բայց թէ որ աղջիկը հետդ գալ չուզէ, երդումէդ ազատ ես, միայն թէ որդիս հոն պիտի շտանիս :

Եղիազար տիրոջն ուղտերէն 10 հատ հետն առաւ, ազնիւ ու պատուական բաներով բեռնաւորեց ու ճամբայ ելաւ : Միջագետքի մէջ Նաբոփրայ (Արբաճամու մեռած եղբորը) քաղաքն եկած ատեն՝ իրիկուան դէմ էր : Քաղքին

դիմացի աղբեր քով ուղտերը նստեցընելով՝ աղօթքի կեցաւ ու Աստուծակ խնդրեց որ իր բանը յաջողէ . աղօթքին մէջ աս ալ զրուցեց որ Հիմա քաղքին աղջիկները ջուր առնելու կու գան . ես որուն բտելու բլամ որ Սափորդ ասոյին ծռէ՝ որ քիչ մը ջուր խմեմ, ան ալ՝ Խմէ եւ ուղտերուդ ալ խմցընեմ, բտէ եւ խմցընելու բլայ, նշան բլայ՝ որ նոյն աղջիկը քու ծառայիդ Իսահակին համար ընտրած ես : Աղօթքը լմնցուց թէ շմնցուց՝ մէյ մ'ալ Ռեբեկա Բաթուէլին աղջիկը եւ Աբրահամին՝ Նաբոփը եղբորը թողը սափորն ուսը՝ եկաւ, ջրհորէն սափորը լեցուց ու ելաւ որ երթայ : Եղիազար առջեւն եկաւ, խմելու ջուր ուղեց : Ան ալ՝ Խմէ, տէր իմ, բսաւ, . ետքը ուղտերուդ ալ կը խմցընեմ, ու սափորը վար առաւ խմցուց, աւելցած ջուրն աւաղանին մէջ թափեց ու նորէն ջուր քաշելու գնաց : Եղիազար աս միջոցիս անծայն կեցեր կը նայէր . երբ որ Ռեբեկա ուղտերուն ջուր խմցընելը լմնցուց, Եղիազար հանեց անոր ոսկի օղեր ու ոսկի ապարանջաններ պարզեւեց . եւ հարցուց թէ Արոն աղջիկն ես, հօրդ տունն ինձի բնակելու տեղ կայ : Աղջիկը պատասխան տուաւ որ Բաթուէլին դուստրն եմ, տեղ ունինք եւ ուղտերուդ համար բաւական խոտ կայ : Ան ատեն Եղիազար Աստուծոյ առջեւն ինկաւ շնորհակալ եղաւ . աղջիկն անկէ տուն վազեց եղածը մօրը պատմեց :

Լարան Ռեբեկային եղբայրն ասիկա լսելուն պէս՝ Եղիազարին դիմացը գնաց զինքն առաւ տուն բերաւ, ուղտերուն հարկաւոր եղածն



Հոգաց եւ Եղիազարին ու հետն եղողներուն ստուքները լուայու ջուր բերաւ : Աերակրոյ շնատած՝ Եղիազար իր ուղ եւ ինչ պատճառաւ եկած ըլլայր եւ Աստուծոյ ինդրած նշանին՝ Ռերեկայի վրայ կատարուելը տեղն ի տեղը պատմեց ու հարցուց որ զՌերեկա Իսահակայ կնութեան համար իր հետը խաւրել կ'ուզէն թէ չէ : Լարան ու Բաթուէլ միարան բոին որ Հոս Աստուած իր կամքը յայտներ է, մեղի բսելու բան չմնաց, ահաւասիկ Ռերեկա կեցեր է, առ տար : Եղիազար աս պատասխանն առնելուն պէս՝ նախ ծնկան վրայ ինկաւ Աստուծոյ շնորհակալ եղաւ, ետքը ոտք ելաւ Ռերեկային եւ իր մօրն ու եղբօրն սսկիէ, արծրթէ պարզեւներ տուաւ ու սեղան նստաւ : Հետեւեալ առտու երբ որ կանուխ ճամբայ ելել ուզեց, աղջրկան մայրն ու եղբայրն աղաչեցին որ դանկ տասն որ մը աղջիկը քովերնին մնայ : Եղիազար դէմ կեցաւ եւ կ'ուզէր անմիջապէս ճամբայ ելել, որ որ մը յառաջ տիրոջը քովն հասնի : Ծնողքն ուզեցին բանը Ռերեկային թողուլ. եւ երբ որ անիկա յանձն առաւ շուտ մը երթալ, իրեն շատ բարեմաղթութիւններ բրին ու Եղիազարին հետ ճամբայ դրին :

Ասոնք որ մը իրիկուան դէմ Արրահամին երկիրն հասան, որ ատենն որ Իսահակ գաշտ ելած էր. Ռերեկա զինքը տեսաւ ու Եղիազարէն ուղ ըլլալն իմանալով՝ վրան լաթ մ'առաւ ու շուտ մը ուղտէն վար ինջաւ : Իրարու մօտ եկած ատեննին՝ Եղիազար ճամբան իրեն հանդիպած բաներն Իսահակայ պատմեց : Իսահակ

զիրենք իր տունը տարաւ ու Ռեբեկան իրեն կին առնելով՝ մօրը մահուան վրայ ունեցած տրամուխիւնն ասով փարատեցաւ : Արբա-  
 չամ Աստուծոյ ազգեցութեամբն անկէ ետեւ նորէն ամուսնացաւ : Քետտուրա անունով կնոջմէն շատ զաւկրներ ունեցաւ . բայց իր կենդանութեան աստն բոլոր ունեցած ինչքն Իսահակայ տուաւ . իսկ մեկալ որդւոցը պարգեւներ բաշխելով՝ քովէն հեռացուց , որոնք Իսմայելացւոց հետ ապառաժ Արարիայի մէջ բնակեցան : Արբաչամ 175 տարւան մեռաւ . Իսահակ ու Իսմայել որդիքը զինքը կրկին այրին մէջ թաղեցին :

Չ . Իսահակ ու Ռեբեկա 20 տարի առանց զաւկի մնալէն ետեւ՝ Աստուած Իսահակայ աղօթքը լսելով՝ իրենց երկուորեակ զաւակ տուաւ : Անդրանիկն՝ որ շառագոյն ու մազոտ էր , Եսաւ անուանեցին , իսկ պզտիկը՝ Յակովբ : Եսաւ մեծնալով քաջ որսորդ եղաւ , ասոր հակառակ Յակովբ հեղ եւ ընտանի բնութիւն մ'ունէր : Իսահակ հայրերնին՝ զԵսաւ կը սիրէր , որովհետեւ իր որսովը զինքը կը կերակրէր . իսկ Ռեբեկա՝ զՅակովբ : Օր մը երբ որ Յակովբ ոսպէ թան եփած էր , Եսաւ սաստիկ անօթեցած՝ որսէն եկաւ , իրմէ խնդրեց որ ոսպնաթանն իրեն տայ : Յակովբ՝ Անդրանիկութեանց իրաւունքը <sup>1</sup> կու տա նէ՝

<sup>1</sup> Արբաչամն մինչեւ Մոսիսի սրկնագրութեան ատեն (500 տարիէն աւելի) նահապետական կառավարութիւն էր : Յեզբու գլխի ընդներն իրենց ցեղն վրայ հայրական իշխանութիւն կը բանեցընէին : Իրենց հայրական իշխանութեան հետ քահանայական իշխանութիւնն ալ միացուցած ըլլալով

կեր, ըսաւ : Ան ալ պատասխանեց . Էրբ որ ա-  
նօթ ութ ենէս մեռնիմ, անդրանկու թեանս  
իրաւունքն ինծի ինչ, օգուտ կ'ունենայ : Յա-  
կոքը երդում ուզեց : Էսաւ երդամբն անդրան-  
կու թեան իրաւունքէն հրաժարեցաւ, նստաւ  
սսպնաթանը կերաւ :

## Ժ Ա . Գ Ա Ս

1 . Քանանացոց երկիրը սով էլաւ նէ՛ Իսահակ ինչ ը-  
րաւ . Գերարա իրեն ինչ պատահեցաւ : — 2 . Յակոբը Ե-  
սաւայ տեղ հօրմէն ինչպէս օրհնուեցաւ : — 3 . Ռեբեկա  
Յակոբը անէն ինչու՛ հետաքրնել ուզեց եւ հօրն ինչ  
պատճառ բերաւ :

1 . Ան ատենները Քանանացոց երկիրը սով  
ըլլալով՝ Իսահակ էլաւ Եգիպտոս կ'երթար .  
բայց Աստուած ճամբան իրեն երեւցաւ . Եգիպ-  
տոս մ'երթար եւ աս երկիրներէն դուրս մ'ել-  
լէր, ես հետոյ եմ, ըսաւ : Միանգամայն հօրն  
ըրած խոստումներն իրեն ալ կրկնեց : Իսահակ  
զնաց Փղշտացոց երկիրը Գերարա բնակեցաւ  
եւ հոն շատ հարստցաւ : Տեղացիք վրան նա-  
խանձելով՝ իր հօրը բանալ տուած ջրհորները  
գոցեցին : Բայց ետքէն Իսահակ զանոնք նորէն

պատարագն ու զոհն իրենք կը մատուցանէին : Աս  
կրկին իշխանութիւնն անդրանկու թեան իրաւունք  
կ'ըսուէր, վասն զի յեզապետ մը մեռնելէն ետեւ՝  
անդրանիկը մինակ կրնար իր տեղն անցնիլ : Յե-  
զապետներն ազատ էին, իրենց որ կնոջ անդրա-  
նիկ զաւակը կ'ուզէին նէ՛ զանիկա իրենց աս կրկին  
իշխանութեան ժառանգ կ'ընէին : Բաց տակէ, աս  
անք՝ իրենց եզրարցը ժառանգութեան կրկինը  
կ'առնէին . եւ աս իրաւունքը մշտ հաստատուն  
պահուեցաւ :

բացաւ : Աբխազիք Փղշտացւոց թագաւորն ալ իրմէ վախնալով՝ ուղեց որ քովէն երթայ : Իսաճակ Գերարայի ձորը քաշուեցաւ , ուր քանի մը ջրհոր բացաւ : Ետքը Երդման ջրհորին քով գնաց , ուր զիշերն Աստուած իրեն երեւցաւ , զինքն օրհնեց , հօրն բրած խոստմունքն անոր մէյ մ'ալ կրկնեց : Իսաճակ նոյն տեղը սեղան շինեց , Աստուծոյ զոհ մատոյց : Հոս եղած ատեն Աբխազիք պարատականներոջն անոր եկաւ , որ հետը գաշինք գնէ : Իսաճակ իրենց սեղան տուաւ , երկրորդ օրն ալ հետերնին գաշինք գրաւ , զանոնք խաղաղութեամբ արձրկեց :

Չ . Երբ որ Իսաճակ անանկ ձերացաւ որ աշուրներն ալ չէին տեսներ , զԱռաւ իրեն կանչեց եւ ըսաւ . Մրդեակ , կը տեսնես որ ալ ես ձերացեր գացեր եմ ու մեռնիլս մտէ . գնա որս մը գտիր եւ ուղածիս պէս եփէ , որ չմեռած՝ ուտեմ եւ զքեզ օրհնեմ : Ռեբեկա աս խօսքս լսելով՝ Ասաւ երթալուն պէս՝ բանն Յակովբայ հասկրցուց , եւ խրատ տուաւ որ երթայ ոչխարներուն հօտին մէջէն երկու աղու որ ուլ զատէ բերէ : Աս , ըսաւ , հօրդ սիրած կերակուրը կ'եփեմ , ձեռքդ կու տամ , որ իրեն տանիս , որպէս զի զքեզ օրհնէ : Յակովբ վախցաւ որ չըլլայ թէ հայրն իմանայ ու զինքն օրհնելու տեղ անիծէ . բայց երբ որ մայրն անէծքն իր վրայ տաւ , Յակովբ գնաց ըսածը կատարեց : Ռեբեկա կերակուրն եփեց , Ասաին զգեստները Յակովբին հագցուց , ձեռուրներն ու վիզն ուլերուն մօրթովը ծածկեց , եփած կերակուրը ձեռքը՝ հօրը խրկեց , Իսաճակ իրեն հարցուց թէ ո՞վ է . Յակովբ

Քու անդրանիկ զուակդ եմ<sup>1</sup>, ըսաւ . եւ որ-  
սէս կեր ու զիս օրհնէ : Հայրը՝ կերակուրն ա-  
սանկ շուտ պատրաստելէն ու ձայնէն տարա-  
կուսելով՝ մտա կանչեց ու շօշափեց եւ ըսաւ .  
Չայնդ Յակովբայ ձայնն է, բայց ձեռուը-  
ներդ Եսաւինն են : Ետքը բերածն առաւ  
կերաւ, վրայէն գինի ալ խմեց ու զանազան  
օրհնութիւններ տալով՝ խրկեց : Հազիւ թէ  
Յակովբ գուրս ելած էր, անդիէն Եսաւ ալ  
իր պատրաստած կերակրովը ներս մտաւ : Ի-  
սասակ երբ որ անոր ո՞վ ըլլալն իմացաւ, շատ  
զարմացաւ . բայց Յակովբայ տուած օրհնու-  
թիւնն ետ չառաւ, մանաւանդ թէ հաստա-  
տեց : Եսաւ ասոր վրայ այլայլած՝ հօրն աղաչեց  
որ զինքն ալ օրհնէ . եւ այնչափ բրաւ, որ  
հօրը սիրտը շարժելով՝ իրեն ալ մէկ քանի  
օրհնութեան խօսքեր ըսաւ :

**3.** Եսաւ հօրն օրհնութենէն զրկուելուն  
համար՝ եղբօրն յիս պահեց . միտքը դրաւ որ  
հօրը մեռնելէն ետեւ զինքն սպաննէ : Ռեբե-  
կա աս բանս իմանալով՝ Յակովբայ խրատ  
տուաւ որ Միջագետքի Խառան քաղաքը Լա-  
բանայ քով երթայ ու հօն մնայ՝ մինչեւ որ

1 Թէպէտ եւ անդրանկութեան իրաւանց Յակովբայ  
անցնելէքը՝ Ռեբեկա յառաջագոյն գիտէր . որով-  
հետեւ երկուօրեակ զուկըները ծնանելու տանն՝  
Աստուած աս բանս իրեն յայտնած էր, ըսելով  
որ Մեծը պզտիկին պիտի ծառայէ . Յակովբ ալ  
եղբօրսն անդրանկութեան իրաւունք գնած ը-  
լլովով՝ հօրն օրհնութեան իրաւունք ուներ . այսու  
ամենայնիւ թէ իր եւ թէ մօրը բանեցուցած՝ ըստ  
ինքեան խաբէական եւ ապօրինաւոր միջոցը չիկը-  
նար օրինաւոր ըսուիլ :

Եղբորը բարկութիւնն անցնի: Իսկ Իսահակէն հրաման առնելու համար՝ Էսաւայ առած քետացի ու խեւացի կնիկներէն քաշածները պատճառ բերելով՝ բաւ որ Յակոբ ալ անոնցմէ կին առնելու ըլլայ նէ՝ ալ ապրիլն ինծի անկարելի է: Իսահակ Ռերեկային անապ, զՅակոբը կանչեց, օրհնեց ու պատուիրեց որ Քանանացւոցմէ կին չառնէ, այլ մօրը հայրենիքն երթայ, եւ մօրեղբօրն աղջիկներէն կին առնէ: Յակոբը ճամբայ ելաւ, եւ հարկ եղաւ որ ան զիշեր բաց դաշտի վրայ անցընէ. ուստի քար մ'առաւ, զխուն տակ դրաւ պաակեցաւ: Քնոյն մէջ սանդուղ մը տեսաւ, որուն ծայրը մինչեւ երկինք կը հասնէր ու վրայէն հրեշտակներ կ'ելլէին կ'իջնային, Աստուած ալ վրան կեցեր՝ իրեն ասանկ կ'ըսէր. Էս Աբրահամայ եւ Իսահակայ Աստուածն եմ, քնացած տեղդ քեզի ու զաւկըներուդ պիտի տամ, որոնք երկրի աւազներուն չափ պիտի բազմանան եւ իրենց ձեռքերկրի վրայի ազգերը պիտ'որ օրհնուին. ուր որ երթալու ըլլաս՝ զքեզ պիտի պահպանեմ ու ետքը նորէն աս երկիրը պիտի դարձընեմ: Յակոբը առտուն ելաւ բարձրրած քարն եղով օձեց, եւ տեսած տեւեան յիշատակին համար հոն կանգնեց. տեղւոյն անունն ալ Բեթէլ դրաւ, որ տուն Աստուծոյ ըսել է: Միանգամայն ուխտեց որ եթէ Աստուած իր պանդխտութեան ատեն բանը գործքը յաջողէ ու ետքն ալ հօրը տունը դարձընէ, մասնաւոր կերպով զանիկա պատուէ (անոր սեղան շինելով եւ ունեցածներէն տասանորդ տալով):

## Ժ Բ . Գ Ե Ս

1. Յակովբ զԼարան ինչպէս գտաւ . Ռափէլոյ համար քանի տարի ծառայելու հարկադրեցաւ : — 2. Լարանայ քով եղած ատեն քանի զուակ ունէր . ինչ նոր պայմանաւ վեց տարի մ'ալ անոր ծառայեց : — 3. Կրցաւ իր երկիրը դառնալ եւ եղբօրը հետ ինչպէս հաշտուեցաւ : — 4. Ռափէլ եւ Իսահակ երբ մեռան :

1. Յակովբ ասկէ ճամբան յառաջ տանելով՝ վերջնապէս դաշտի մէջ ջրհոր մը հասաւ, որուն բերանը մեծ քարով գոցած էին : Անիկա բանալու եւ ոչխարները խմցընելու համար՝ հովիւները կը սպասէին որ ամէնքը ժողովին ու քարը վերցընեն : Հովիւներն արդէն սկսած էին գալ . Յակովբ իրենց Լարանը հարցընելու ատեն՝ մէյ մ'ալ անոր Ռափէլ աղջիկը հօրն ոչխարներովն եկաւ : Յակովբ անմիջապէս ջրհորին բերնի քարը վերցուց, եւ անոր ոչխարներուն ջուր խմցընելէն ետեւ՝ սիրտն ելաւ, լալով իր սով ըլլալն անոր զրուցեց : Ռափէլ երբ որ անոր՝ իր հօրաքեռորդին ըլլալն իմացաւ, վազեց գնաց հօրն իմացուց : Ան ալ եկաւ, զինքը գրկեց պազաւ, առաւ տունը տարաւ : Լարան տեսնելով որ Յակովբ քովը շատ ատեն պիտի կենայ, ամիս մ'անցնելէն ետեւ ըսաւ . Ազգականս ըլլալուդ համար ինծի ձրի՞ պիտի ծառայես . անանկ բան չ'ըլլար . ինչ վարձք կ'ուզես նէ՛ ըսէ : Յակովբ խնդրեց որ եօթը տարի ծառայէ եւ անոր փոխարէն՝ Ռափէլն իրեն կին առնէ : Լարան ասոր հաւանեցաւ, Օտարի մը տալուս՝ քեզի կու տամ, ըսաւ : Բայց ատենն

եկաւ նէ, Ռաբելայ տեղ՝ Լիա մեծ աղ ջիկն անոր կնուծեան տուաւ, Չելփա աղախինն ալ անոր նաժիշտ բրաւ: Երբ որ բանն իմացուեցաւ, Լարան ինք զինքը ջատագովեց ըսելով որ Պղտիկ քոյրը մեծէն յառաջ կարգելու սովորութիւն չունինք: Յակոբը եօթը տարի մ'ալ նորէն ծառայելու պայմանով Ռաբէլն ալ առնել ուզեց, անոր ալ նաժիշտ Բալլա աղախինն եղաւ:

Ձ. Յակոբ Լարանայ քովն եղած ատեն՝ տասնումէկ մանչ ու մէկ աղ ջիկ զաւակ ունեցաւ. բայց ամէնքը մէկ մօրմէ չէին. Լիայէն՝ վեց մանչ զաւակ ունեցաւ, որոնց անունն է, Ռուբէն, Շմաւոն, Ղեւի, Յուդա, Իսաքար, Չարուղոն, մէյ մ'ալ աղ ջիկ՝ Գինա անունով: Ռաբէլ ամուլ ըլլալով՝ նոյն ատենուան հասարակ սովորութեան համաձայն՝ թողուց որ Յակոբ զԲալլա իր նաժիշտն առնէ, ուսկից Գան ու Նեփթաղիմ ունեցաւ. Լիա ալ իր Չելփա նաժիշտը տուաւ, որն որ Գադն ու Ասերը ծնաւ: Ետքէն Աստուած Ռաբելայ աղօթքը լսելով՝ իրեն զաւակ տուաւ, որուն անունը Յովսէփ գրին: Նոյն ատեն Յակոբայ ծառայութեան տասնուչորսերորդ տարին լմրնալով՝ Լարանայ ըսաւ. Ալ զիս թող՝ որ իմ երկիրս երթամ. այնչափ տարի ինչպէս որ պէտք էր նէ՝ քեզի հաւատարմութեամբ ծառայեցի. եկած ատենս քիչ մը բան ունէիր, հիմա այսչափ հարստցար. ես՝ ալ ասկէ ետեւ իմ զակրներս պիտի հոգամ: Լարան անոր պատճառաւն օրհնութիւն գտած ըլլալը զիանալով՝ զինքը թողուլ չուզեց, եւ անոր խնդրելովն՝



ոչխարին խայտախարիւր եւ այծին սպիտակը խոստացաւ վարձք տալ : Յակովբ աս պայմանով կեցաւ ու խիստ մեծ աշխատութիւն քաշելով՝ վեց տարի մ'ալ ծառայեց : Եւ թէպէտ Լարան կ'ուզէր զինքը խարել, բայց Աստուած Յակոբայ խեղճութիւնն ու աշխատութիւնը տեսաւ, զինքը չթողուց, հապա հարստացրնելով՝ ոչխարի եւ այծի, խել մը ծառաներու եւ աղախիններու տէր ըրաւ :

**Յ .** Լարան Յակովբայ հարստնալը տեսնելով՝ սկսաւ վրան նախանձիլ ու ծուռ աչքով նայիլ : Իսկ Յակովբ Աստուծմէ հրաման առնելով որ ելէ իր երկիրը դառնայ, շուտ մը կանայքն ու որդիքն ուղտ հեծցուց ու բոլոր հարստութեամբը ճամբայ ելաւ : Նոյն ատեն Լարան հոն չէր, ուրիշ տեղ ունեցած ոչխարները խուզելու գացած էր. ուստի եւ երբ որ երեք օր ետքը Յակովբայ երթալն իմացաւ, բարկանալով՝ մէկէն առանց ժամանակ կորսընցընելու իր մարդիկներն առած՝ ետեւէն գնաց, որ բռնի ետ դարձընէ : Բայց Գաղաադու լեռներուն վրայ դեռ զՅակովբ չգտած՝ Աստուած զինքը զգուշացուց որ չըլլայ թէ անոր դէմ բան մ'ընէ : Անոր համար Լարան անկէ միայն իր Աստուածներն (կուռքերն) ուզեց, զորոնք Ռաբէլ առած՝ հեծած ուղտին պատատին տակ դրած վրան նստած էր : Շատ փնտռելէն ետեւ չկրնալով գտնել՝ Յակովբայ հետ բարեկամութեան դաշինք դրաւ, եւ երկրորդ օրը երկու աղջկանցը հետ պագտուեցաւ, թոռունքն օրհնեց ու ետ դարձաւ :  
 Յակովբ անկէ բաժնուելէն ետեւ՝ ճամբ

բան յառաջ տանելով՝ հրեշտակներու խմբի մը պատահեցաւ, զորոնք Աստուած իրեն խորհած էր՝ նշանի համար որ զինքն եզրօրմէ պիտի պաշտպանէ, պարապ տեղ չվախնայ: Յակովբ նոյն տեղը Բանակ անուանեց: Իր ձեռքէն եկած զգուշութիւնն ու պահանջուած խոհեմութիւնն ալ ի գործ դնելու համար՝ Քանանացւոց երկրին սահմանները մտտեցած ատեն՝ զԵսաւ շահելու համար՝ առջեւէն անոր մարդ խրկեց: Գացողները դարձան պատմեցին որ անիկա 400 հոգւով կու գայ: Յակովբ ասոր վրայ աւելի սկսաւ վախնալ եւ հեան ունեցած մարդիկն ու անասուններն երկու բաժնեց, մտածելով որ եթէ Եսաւ մէկը զարնելու ըլլայ, գէթ մէկալն ազատի: Միանգամայն ունեցած կենդանիներէն անոր պարգեւ խրկեց, որոնք գունդ գունդ բաժնած եւ զատ զատ մարդու ձեռք տուած ու պատուիրած էր, որ եզրօրը հանդիպելու ըլլան եւ հարցնելու ըլլայ թէ որուն մարդիկն են եւ ո՞ւր կ'երթան, բտն թէ Քու ծառայիդ Յակովբայ մարդիկն ենք, որ աս ընծաներն իր տիրոջը՝ Եսաւայ կը խրկէ, ինքն ալ ետեւէս կու գայ: Իսկ ինք Յակովբ նոյն գիշերը մասնաւոր աղօթքով ինք զինքն ու իրեններն Աստուծոյ յանձնեց եւ աղաչեց որ զիրենք Եսաւայ ձեռքէն ազատէ: Աղօթքէն ետեւ իրեն հրեշտակ՝ մ'երեւցաւ, որուն հետ մինչեւ առտու կուտեցաւ ու յաղթեց, եւ մինչեւ որ զինքը շօրհնեց նէ՝ չթողուց: Հրեշտակն

° Շատ Ս. Հարք ու մեկնիք աս հրեշտակին համար՝ Աստուծոյ Որդին էր, կ'ըսեն:

անոր անունը փոխեց Խորայել զբաւ, որ Գիմակալ Աստուծոյ ըսել է: Յակովբ ալ նոյն տեղը Փանուէլ անուանեց, որ Տեսիլ Աստուծոյ կը նշանակէ:

Արեւը ծագեցաւ նէ՛ ինք Փանուելէն արդէն ճամբայ ելած էր. մէյ մ'ալ Լսաւը տեսաւ՝ որ 400 հոգւովը կու գար: Հուտ մ'ընտանիքը շորս բաժին ըրաւ, եւ ինք զինքն Աստուծոյ յանձնելով՝ գիմացը գնաց եօթն անգամ երկրպագութիւն ըրաւ: Իսկ Լսաւ մէկէն Յակովբայ վիզն ինկաւ պաղաւ, եւ ուրախութենէն լացաւ ու գժուարաւ անոր տուած ընծաներն առաւ: Թէպէտ ուղեց որ ճամբան մէկտեղ գայ, սակայն Յակովբ զաւկրներն ու արջառի եւ սլխարի ծնունդը պատճառ բերելով՝ յանձն չառաւ: Ասանկով երկուքն ալ խաղաղութեամբ իրարմէ բաժնուեցան:

4. Յակովբ կամաց կամաց ճամբան յառաջ տանելով՝ երբ որ Լփրաթա (Բեթղահէմ) մտնելու մօտ էր, Ռաբէլ՝ զԲենիամին ծնաւ, եւ գժուարածին ըլլալուն համար՝ մեռաւ ու հոնտեղը թաղուեցաւ: Յակովբ անոր շիրմին վրայ յիշատակի համար արձան կանգնեց՝ որն որ Արձան շիրմին Ռաբելայ ըսուեցաւ: Հոնկէ՛ Մամբրէի վիճակին մէջի կրկին այրը գնաց, ուր որ իր պապերը թաղուած էին. հոն հօրը հետ տեսնուեցաւ, որն որ շատ չանցաւ մեռաւ 180 տարւան: Յակովբ ու Լսաւ որդիքը զինքը կրկին այրը թաղեցին:

## Ժ Գ . Գ Ա Ս

1. Յովսէփ եղբարցն ինչո՛ւ ատելի եղաւ : — 2. Անոնք իրեն ինչ ըրին : — 3. Եզրպատա որո՛ւն ծախուեցաւ , ինչո՛ւ բանտարկուեցաւ ու բանտին մէջ ինչ ըրաւ : — 4. Բանտէն ինչպէս ազատեցաւ :

1. Յակովբ Իսահակայ մեռնելէն ետեւ՝ Հօրը պանդխտացած տեղերը Քանանացւոց երկիրը կը բնակէր : Իր զաւկրներուն մէջ ամենէն աղէկն ու գեղեցիկը՝ Յովսէփն էր , որն որ 16 տարւան՝ Հօրն ոչխարները կ'արածէր : Հայրը զինքը շատ կը սիրէր ծերութեան որդին ըլլալուն համար , ուստի եւ անոր առանձին ծաղկեայ պատմութեան (գոյնզգոյն ազուոր հագուստ մը) շինած էր : Եղբարքն ասոր վրայ սկսան իրեն նախանձիլ ու հետը թշնամացան . թշնամութիւննին աւելի եւս մեծցաւ՝ երբ որ Յովսէփ տեսած երկու երազն իր տղայական միամտութեամբն անոնց պատմեց : Երազին առջինն աս էր . Տեսայ որ , ըսաւ , ամէնքս մէկտեղ դաշտ գացեր որայ կը կապէինք . մէյ մ'ալ իմ կապած որաս ելաւ տնկուեցաւ , ու ձեր կապածներն իմինիս դարձան երկրագոլթիւն ըրին : Եղբարքը միաբերան ըսին որ Ի՛նչ , մեր վրայ թագաւոր ըլլալ կ'ուզես : Երկրորդ երազն ալ աս էր . Տեսայ որ , ըսաւ , արեւը , լուսինն ու 11 աստղ ինծի երկրագոլթիւն կ'ընէին : Ասիկա Հօրն առջեւը պատմելուն՝ Հայրը զինքն յանդիմանեց ըսելով՝ Աս ի՛նչ է , Հայրդ , մայրդ քեզի պիտի գան երկրագոլթիւն ընեն :

2. Ասոր վրայ եղբարքն՝ անգամ մը իրենց  
 Տօրն ոչխարներն արածելու՝ Սիւքէմ գացած  
 ըլլալով, Յակովբ զՅովսէփ խրկեց որ զիրենք  
 տեսնէ: Անոնք երբ որ իր գայլը հեռուանց  
 տեսան, սկսան մէջերնին ըսել. Ահա երազա-  
 տեսը կու գայ. եկէք զինքը բռնենք սպան-  
 նենք, որ տեսած երազներուն ինչ բանի ծա-  
 ւայելը հասկընայ: Ռուբէն մեծ եղբայրնին աս  
 զարհուրելի առաջարկութեան չհաւանեցաւ.  
 Յովսէփը ձեռուրներնէն ազատելու եւ Տօրը  
 տանելու համար խորհուրդ տուաւ որ հոն  
 գրի մը մէջ իջեցընեն: Նոյն միջոցին Յով-  
 սէփ հասաւ, եղբարքն անմիջապէս ծաղկեայ  
 պատմութեանը քաշեցին վրայէն մէկ դի առին,  
 զինքը տարին գրին մէջ իջուցին եւ իրենք  
 կերակրոյ նստան: Մէյ մ'ալ տեսան որ ան-  
 դիէն Իսմայելացի վաճառականներ՝ տեսակ  
 տեսակ խնկերով ուղտերնին բեռնաւորած՝  
 Գաղաադէն Եգիպտոս կ'երթային: Մէջերնէն  
 Յուդա ելաւ ըսաւ որ Եղբօրնուս մահը մեզի  
 ինչ օգուտ կ'ունենայ. լաւագոյն է որ զինքը  
 ծախենք: Աս բանիս մէկայնոնք ալ հաւանե-  
 լով՝ գացին Յովսէփը գրէն հանեցին եւ ան  
 վաճառականներուն 20 դահեկանի ծախեցին:  
 Ռուբէն նոյն ատեն քովերնին չէր. ուստի  
 երբ որ ետքը զՅովսէփ գրոյն մէջ չգտաւ, շատ  
 ցաւեցաւ: Իսկ մէկայնոնք Յովսէփայ ծաղկեայ  
 պատմութեանն այժի արեան մէջ թաթխած՝  
 Տօրերնուն խրկեցին, ըսելով թէ Աս զգեստը  
 դտանք, նայէ տղուդ պատմութեանն է: Յա-  
 կովբ տեսածին պէս՝ ճանչցաւ. Չար գաղանք  
 Յովսէփս պատուեր է, ըսելով, սկսաւ լալ ող-

բալ, ու վրան երկայն ատեն սուգ բռնեց : Պարապ տեղ մէկալ որդիքը զինքը միտիթա-  
րելու կը ջանային . Մինչեւ որ գերեզման  
մտնելու ըլլամ, որդիս պիտի լամ, կ'ըսէր :

**Յ.** Աճառականները զՅովսէփ Ազգիպտոս  
Փարաւոնի դաճապետին ծախեցին, որն որ  
Պետափրէս կ'ըսուէր : Յովսէփ իրեն հաւա-  
տարմութեամբ կը ծառայէր, եւ Աստուած  
հետն ըլլալուն՝ տիրոջը բանը յաջողեցաւ :  
Ասով Պետափրէսին շատ սիրելի ըլլալով՝ բո-  
լոր տան հողաբարձութիւնն իր ձեռքն անցաւ :  
Բայց Պետափրէսին կինը վրան աչք ձգելով՝  
կ'ուզէր մեղքի խոթել . սակայն ինք միշտ քա-  
ջութեամբ դէմ կը կենար : Օր մը աս ժանտ  
կինը զՅովսէփ առանձին գտնելով՝ զինքը նեղ  
խոթեց, վերարկուէն բռնած թող չէր տար .  
ինքն ալ մէկէն վերարկուն թողուց ելաւ փա-  
խաւ : Աինն ասով պղտիկ կյնալուն վրայ բար-  
կացած՝ պռալով կանչուրուտելով տան մէջ  
եղողները կանչեց, իր յանցանքը Յովսէփայ  
վրայ ձգեց . Պետափրէսին առջեւն ալ նոյն  
զրպարտութիւնն բրաւ, որն որ Յովսէփայ դէմ  
խիստ բարկանալով՝ բանտ դնել տուաւ :

Բայց Աստուած՝ որ զանմեղն երբեք ձեռքէ  
թող չիտար, Յովսէփայ հետն ըլլալով՝ զինքը  
բանտապանին ալ սիրելի բրաւ, որն որ քիչ  
մը վերջը բանտին բովանդակ պահպանութիւնն  
անոր ձեռքը տուաւ : Աս միջոցիս՝ Ազգիպտոսի  
Փարաւոն թագաւորին տակառապետն ու մա-  
տակարարը յանցանքի մը համար նոյն բանտը  
դրուեցան : Անգամ մը Յովսէփ առտուանց  
քովերնին երթալով՝ զիրենք խիստ տրտում

տեսաւ, եւ կարեկից ըլլալով՝ տրտմութիւն-  
ներնուն պատճառն հարցուց : Անոնք ալ՝ Երազ  
տեսանք ըսին, եւ մէկը շկայ որ մեկնէ : Յով-  
սէփ հաստատութեամբ յուսալով որ անոնց  
տեսած երազին միտքն Աստուած իրեն կը  
յայտնէ, ուզեց որ պատմեն : Ան ատեն տա-  
կառապետն իրենը պատմեց . Արթատունկ մը  
տեսայ, ըսաւ, որն որ երեք կանաչ սատուներ,  
անոնց վրայ ալ հասած խաղողի երեք ողկոյղ .  
Իսկ ես Փարաւոնին բաժակը ձեռքս բռնած՝  
խաղողը մէջը քամելով՝ իրեն կու տայի : Յով-  
սէփ պատասխանեց թէ Երազիդ մեկնութիւնն  
աս է : Երեք սսան՝ երեք որ կը նշանակէ, ու-  
րոնք անցնելէն ետեւ՝ Փարաւոն զքեզ նորէն  
քու առջի պաշտօնիդ պիտի հասցընէ, որպէս  
զի առաջուան պէս բաժակն անոր մատուա-  
կես : Աս ըսելէն ետեւ՝ անոր աղաչեց որ իրեն  
համար Փարաւոնին միջնորդ ըլլայ, զինքը բան-  
տէն ազատէ : Մատակարարն ալ տեսնելով  
որ ընկերին երազին միտքն աղէկ մեկնեց, ինքն  
ալ իր տեսածը պատմեց . Գլխուս վրայ երեք  
աղնիւ ալիւրի աման կը կրէի, ըսաւ, որոնց  
ամենէն վրայինին մէջ տեսակ տեսակ համա-  
դամ կերակուրներ կային, ու թռչուններն  
եկած՝ մէջէն կ'ուտէին : Յովսէփ պատասխա-  
նեց . Ան երեք ամանն՝ երեք որ կը նշանակէ .  
նոյնչափ օրէն ետեւ՝ Փարաւոն զքեզ պիտի  
կախէ ու թռչունները մարմինդ պիտ'որ ու-  
տեն : Յովսէփայ ըսածներն եղան : Բայց տա-  
կառապետը զինքը մոռցաւ :

4 . Երկու տարի ետքը Փարաւոնն ալ երազ  
մ'ունեցաւ : Տեսաւ որ գետէն եօթը գէր ե-

րինջ ելեր՝ ուրիշ երինջներուն հետ կ'արածուէին. ետքը ուրիշ եօթը վտիտ երինջ ելան առջինները կլլեցին: Ասոր վրայ արթընցաւ եւ նորէն քնանալով՝ ուրիշ տեսիլք մ'ալ տեսաւ. եօթը լեցուն հասկով ցորենի տունկ մը տեսաւ. ետքը եօթը պարապ ու խորշակահար ցորենի հասկ ելան, առջի եօթը լեցուն հասկերը կլլեցին: Աս երազներէն Փարաւոն սաստիկ խռովելով՝ առտու ըլլալուն պէս՝ Եգիպտոսի երազահաններն ու իմաստուններն առջեւը բերել տուաւ: Բայց երազները մեկնող չեղաւ: Նոյն ժամանակը Յովսէփ մէկէն տակառապետին միտքն իյնալով՝ սկսաւ զինքը Փարաւոնին առջեւը խիստ գովել որ քաջ երազահան է: Շուտ մը զՅովսէփ՝ Փարաւոնին հրամանաւր՝ բանտէն հանեցին, մազերը կտրեցին, հագուստը փոխեցին եւ թագաւորին առջեւը տարին: Փարաւոն զինքը տեսածին պէս՝ Երազ տեսայ, ըսաւ, եւ մէկը չկայ որ մեկնել տեսցի որ դուն քաջ երազահան ես եղեր: Եւ երբ որ Յովսէփ խոստացաւ որ Աստուծով իր երազն ալ կը մեկնէ, թագաւորը տեսածները պատմեց: Յովսէփ պատասխանեց թէ Երկու երազն ալ մի եւ նոյն բանը կը ցուցնէ: Աստուած անոնցմով իր ետքի ընելիքը կը յայտնէ: Եօթը գէր երինջներն ու եօթը պարարտ հասկերն՝ առատութեան եօթը տարիներ, իսկ մէկալները՝ սովի եօթը տարիներ կը նշանակեն: Ուստի պէտք է որ, ըսաւ, հիմակուրնէ իմաստուն մէկը գտնես, որ անմիջապէս գալու առատութեան տարիները համբարանոցները ցորենով աղէկ մը լեցընէ, որպէս զի՝ չըլլայ թէ



սովի տարիները հպատակներդ անօթ ու թենէն մեռնին: Փարաւոն Յովսեփայ ըսածներուն հաւանելով՝ զինքը բոլոր Եգիպտոսի վրայ դրաւ, եւ հրամայեց որ անկէ ետեւ բոլոր ժողովուրդն անոր հնազանդի: Անունն ալ Փսոմֆթոմֆանէ դրաւ, որ Աշխարհք փրկող ըսել է: Ետքը փառաւոր զգեստներ հագցրնել տուաւ, զիզն ոսկի մանեակ դրաւ, եւ թագաւորական կառքով քաղքին մէջ պտըտցրնել տալով՝ առջեւն քարոզ կը կարդացրնէր, որ Ամէնքը Յովսեփայ երկրպագութիւն ընեն, զինքը բովանդակ Եգիպտոսի կառավար ճանչնան: Ասանկով Յովսեփ Փարաւոնին երկրորդն ըլլալով՝ անոր խորհուրդ տուածներն ինք անձամբ կատարեց: Նոյն ատեն ինք 30 տարեան էր: Արեգ քաղքին քրմին Ասանէթ ազջկան հետ կարգուելով՝ երկու զաւակ ունեցաւ, Մանասէ ու Եփրեմ:

Ժ Գ . Դ Ա Ս

1. Յովսեփայ եղբարքն ինչո՞ւ Եգիպտոս եկան եւ Յովսեփ իրենց ինչ ըրաւ: — 2. Երկրորդ անգամուն՝ Յակոբ զԲենիամին թողուց: — 3. Յովսեփ Բենիամինին ինչ ըրաւ: — 4. Ինք զինքն եղբարքն ինչպէս յայտնեց:

1. Յովսեփայ ըսածին համաձայն՝ առատութեան եօթը տարիները հասնելով՝ ցորենի համբարանոցները լեցրնել ու պահել տուաւ: Ետքը ատենին՝ սովի տարիներն ալ սկսան: Ան ատեն Յովսեփ համբարանոցները բացաւ, բոլոր երկրին հաց հասցուց. անանկ որ մերձաւոր երկիրներէն ցորենի համար Եգիպտոս կը վազէին: Քանանացւոց երկիրն ալ սովը սաստ-

կանալով՝ Յակովբ իր որդիքն Եզիպտոս խրկեց, որ ցորեն գնեն: Բայց զԲենիամին քովը պահեց, վախճալով որ չըլլայ թէ գլուխը բան մը գայ: Յակովբայ որդիքը՝ վաճառականաց զՅովսէփ ուր տարած ըլլալը չէին գիտեր: Երբ որ Եզիպտոս՝ Յովսէփայ առջեւն ալ ելան, անոր ո՞վ ըլլալը չճանչնալով՝ իրեն երկրպագու թիւն բրին: Իսկ Յովսէփ զիրենք տեսածին պէս՝ ճանչցաւ ու տղայութեան ատեն տեսած երազներն յիշեց: Բայց ինք զինքը չյայտնելու համար՝ հետերնին թարգմանով մը կը խօսէր: Հարցընել տուաւ թէ Ո՞վ էք, ուստի՞ կու գար: Եղբարքը պատասխան տուին որ Քանանացուոց երկրէն ենք: Յովսէփ անանկ ձեւացուց որ զիրենք լրտեսի տեղ կը գնէ: Անոնք վախերնէն ինչ ընելիքնին չէին գիտեր: Ըսին որ Մենք ցորեն գնելու եկած ենք, լրտես չենք, խաղաղ մարդիկ ենք. մենք տասուերկու եղբարք ենք, հայրերնիս ալ դեռ ողջ է. մէջերնէս ամենէն պզտիկը հօրերնուս քովն է. իսկ մէկ եղբայրնիս չենք գիտեր ինչ եղաւ: Յովսէփ նորէն առջի բաժը կրկնեց, եւ ըսաւ թէ Չձեզ չեմ թողուր որ ետ դառնաք, մինչեւ որ պզտիկ եղբայրնիդ հոս չիգար. ուստի մէջերնէդ մէկը խրկեցէք, որ երթայ բերէ: Ասոր վրայ հրամայեց որ զամէնքը մէկէն բանա գնեն: Երեք օրէ ետեւ զիրենք նորէն առջեւը բերել տալով՝ ըսաւ որ Մէջերնէդ մէկը թող բանա գրուի, մէկալնոնք ցորեննիդ առէք գացէք, ու ետքը պզտիկ եղբայրնիդ հետերնիդ առած՝ եկէք: Ան ատեն սկսան Յովսէփայ դեմ՝ բրած անիրաւութիւննին ճանչնալ, եւ իրարու

ըսին . Եղբայրներնուս դէմ մեղանք , լացքք , ողբը լսեցինք ու վրան չգթացինք . անոր համար աս ամէն շարիքները գլուխնիս եկան : Յովսէփ ասոնք լսելով՝ ինք զինքը չկրցաւ բռնել , մէկ դի քաշուած լացաւ : Ետքը եկաւ Շմաւոնը մէկալ եղբարցն անջեւը կապել տուաւ : Ծառաներուն ալ ծածուկ ապսպրեց որ մէկալներուն ամանները ցորեն լեցուցած ատեննին՝ բերած ստակնին ալ մէջը դնեն , նաեւ ծամբու պաշար տան : Հրամանը կատարուեցաւ : Յովսէփայ եղբարքն իջեվան մը գալով՝ երբ որ մէջերնէն մէկն իշուն կերակուր տալու համար քուրձը բացաւ , բերած ստակը մէջը գտնելով՝ զարմացաւ եւ մէկալնոնց պատմեց : Անոնք շփոթած՝ սկսան իրարու ըսել . Աս ի՞նչ է , որ Աստուած մեզի բրաւ : Բայց աւելի շփոթեցան՝ երբ որ տեղերնին հասած ատեննին տարած ստակնին ամէնքը քուրձերնուն մէջ գտան : Գլուխնին եկածն ու Յովսէփայ պահանջածն Յակոբայ պատմեցին նէ՛ Չիս անորդի՛ թողուցիք , ըսաւ իւեղճ՝ ձերը . Յովսէփս զնաց , Շմաւոնս զնաց , հիմա Բենիամինս ալ կ'ուզէք : Ռուբէն պատասխան տուաւ որ Եթէ ետ չբերելու ըլլամ՝ իմ երկու որդիքս սպաննէ : Յակոբ՝ Չ'ըլլար , ըսաւ , տղաս հետերնիդ չեմ խրկեր . իր եղբայրը մեռաւ , ծամբան ասոր ալ բան մ'ըլլայ նէ՛ ձերութիւնս անմխիթար գերեզման կը խոթէք :

Չ . Երբ որ բերած ցորեննին հատաւ եւ Յակոբ որդիքն երկրորդ անգամ Եգիպտոս խրկել ուզեց , Յուդա գարձաւ՝ Ինչպէս կրնանանք ան մարդուն անջեւն ելլել , ըսաւ , որ

կրկին կրկին ապապրեց որ Պզախկ եղբայրնիդ հետերնիդ բերէք, թէ չէ՝ երեսս չէք տեսներ. եւ հօրն երաշխաւ որ եղաւ ըսելով թէ Տղան ինձ մէ պահանջէ, ես քեզի ողջ առողջ ետ կը դարձնեմ: Յակովբ վերջապէս հաւանեցաւ որ Բենիամինն ալ հետերնին երթայ: Միանգամայն հրամայեց որ երկրին ամէն տեսակ աղնիւ պտուղներէն ան մարդուն ընծայ տանին. եւ աս անգամ հետերնին տանելու ստակներնէն զատ՝ քուրձերնուն մէջ գտած ստակնին ալ առնեն: Ասանկով Յակովբայ որդիքը Բենիամինն հետերնին առած՝ Ազիպտոս եկան:

Յ. Յովսէփ զԲենիամին հետերնին տեսնելով՝ իր տան հաղարապետին հրամայեց որ զանոնք տուն տանի ու սեղան պատրաստէ, որ կէսօրուան կերակուրը հետերնին ուտէ: Իսկ եղբարքը տուն երթալու ատեննին՝ սկսան վախնալ, կարծելով թէ առջի անգամ՝ արծաթը հետերնին ետ տանելուն համար կը բռնուին: Ուստի երբ որ տան մօտիկցան, ստակնին քուրձերնուն մէջ գտնելին եւ հիմա նորէն ետ բերելին հաղարապետին պատմեցին: Անկազիրենք հանդարտեցուց ու զնաց Շմաւոնն ալ բերաւ: Յովսէփ եկաւ նէ՝ եղբարքն իրեն երկրրպազու թիւն բրին ու բերած ընծանին հանեցին տուին: Ինք զիրենք սիրով ողջունելէն ետեւ՝ հօրերնուն ինչպէս ըլլալը հարցուց. Բենիամինին համար ալ հարցուց որ ըսած պրզտիկ եղբայրնիդ ան է. ու սիրան ելլելով՝ մօտ սենեակ մը դնաց՝ լացաւ: Քիչ մը վերջը երեսը լուաց, քովերնին եկաւ ու հետը սեղանի նստեցուց: Աերակրոյ ատեն Բենիամինին աւելի

մեծ սէր ցուցուց, ամէն բանէն՝ անոր աւելի կու տար: Սեղանէն ելլելէն ետեւ՝ Յովսէփ ասան հազարապետին հրամայեց որ յառաջուան պէս քուրձերնին ցորենով լեցընէ, եւ ամէն մէկուն բերած ստակն իր քուրձին մէջ դնէ, իսկ իր արծրթէ գաւաթը՝ Բենիամինին քուրձը ձգէ: Հազարապետն հրամանը կատարեց:

4. Յովսէփայ եղբարքն ու բախու թեամբ ճամբայ ինկան. բայց հազիւ թէ քաղքէն դուրս ելած էին, մէյ մ'ալ հազարապետն ետեւնէն վազելով՝ բարկութեամբ ըսաւ. Գտած բարիքնուդ փոխարէն՝ ինչո՞ւ չարիք հատուցիք. տիրոջս արծրթէ գաւաթն ինչո՞ւ գողցաք: Անոնք մէկէն ըսին որ Գաւաթն՝ որուն քովէն որ ելէ նէ՝ թող մեռնի եւ մենք ամէնքս ալ գերի ըլլանք: Աս ըսին ու բեռերնին վար առին: Հազարապետը մեծէն կարգաւ ամենուն քուրձը քննեց եւ վերջապէս Բենիամինին քուրձին մէջէն արծրթէ գաւաթը գտաւ հանեց: Աս որ տեսան՝ խելքերնին դուխներնէն զնաց, զգեստնին պատռեցին ու դարձան Յովսէփայ եկան, ոտքն ինկան, եւ Յուդա ըսաւ. Ա՛լ զրուցելիք մը շունինք. ամէնքս ալ քու գերիներդ ենք: Յովսէփ՝ Չէ, ըսաւ, մինակ գաւաթս գողցողը հոս մնայ, մէկախոնք ելլեն երթան: Ան ատեն Յուդա՝ Բենիամինին հօրն աչքին լոյսն ըլլալն եւ զանիկա ինչչափ դժուարութեամբ հետերնին խրկելը պատմեց, եւ ըսաւ որ Էս սղուն երաշխաւոր եղած եմ, անոր տեղ ես մնամ, թող ինք մէկալ եղբարցը հետ հօրը քովը դառնայ. թէ որ Բենիամինը հետս չ'ըլլար, հօրս ինչ երեսով երեւամ:

իրեն ցան ու ողբը չեմ կրնար տեսնել : Յովսէփ ալ չկրնալով դիմանալ, բոլոր ծառաները դուրս հանեց ու ինք զինքն յայտնեց բնւով : Ես Յովսէփ՝ ձեր եղբայրն եմ. ստուգիւ հայրս դեռ ո՞ղջ է : Եղբարքը պաղեցան մնացին . իսկ ինք զիրենք մտտ կանչեց՝ հետերնին քաղցրութեամբ խօսեցաւ : Չեր ինձի դէմ նիւթած չարիքն՝ Աստուած ի բարին դարձուց, բնաւ, եւ զհայրն Եգիպտոս հրաւիրեց, որպէս զի զինքը կերակրէ սովին ատեն՝ որ դեռ հինգ տարի պիտի տուէր : Ետքը ինք ու Բենիամին իրարու վիզը պլոււած լացին : Յովսէփ մէկալներուն հետ ալ պագտուելով՝ անոնք ալ սկսան հետը խօսիլ : Քիչ մը վերջը Փարաւոն բանն իմանալով՝ շատ ուրախացաւ, անոր հայրն ու բոլոր ընտանիքը բերել տալու համար՝ կռքեր խաւրեց : Յովսէփ ալ իր կողմանէ ամենուն երկ'երկու զգեստ պարզեւեց . իսկ Բենիամինին՝ 300 դահեկան, հինգ ալ զգեստ տուաւ, խել մ'ալ արծաթ ու զգեստ հօրը պարզեւ խրկեց : Դարձեալ տասն էշ երկրին բարիքներով բեռնաւորուած, տասն ալ ջորի ամէն տեսակ պարենով՝ հետերնին ճամբայ դրաւ :

Ժ Ե . Դ Ա Ս

1 . Յակոբք քանի հոգւով ճամբայ ելաւ : Երդման ջրհորին քով ինչ ըսաւ : Յովսէփ զինքն ո՛ւր բարեւեց : — 2 . Յակոբք մեռնելու տանն Յովսէփայ եւ անոր որդւոցն ինչ ըսաւ : — 3 . Իր որդւոցը տուած որհնութեան մէջ ամենէն աւելի յիշատակաց արժանին ո՛րն է . քանի տարւան մեռաւ , ո՛ւր թաղուեցաւ : — 4 . Յովսէփայ եղբարքը հայրերնին թաղելէն ետեւ ինչ ըրին . Յովսէփ քանի տարւան մեռաւ :

1 . Յովսէփայ եղբարքը Բանանացւոց երկիրն հասնելուն պէս՝ առջի խօսքերնին հօրերնուն աս եղաւ . Յովսէփ որդիդ ողջ է եւ Եգիպտոսի վրայ կ'իշխէ : Յակոբք առջի բերան չհատաց . բայց ետքը ամէն բան տեղն ի տեղ լսելով եւ իրկուած ընծաներն ու սայլերը տեսնելով՝ հատաց ու ըսաւ . Մինակ անոր ողջ ըլլալն ինծի բաւական է , չմեռած՝ կ'ուզեմ զինքը տեսնել : Հուտ մը ինչ ունէր չունէր՝ առաւ ճամբայ ելաւ : Երդման ջրհորը գալով՝ զոհ մատոյց : Հոն գիշերը տեսլեան մէջ Աստուած իրեն ըսաւ . Մի վախնար , քու որդիքդ Եգիպտոս մեծ ազգ պիտ'որ ընեմ ու ետքը անկէ պիտի հանեմ : Յակոբք իր որդիքներոջն ու թոռնե-րոջն՝ որոնք ամէնքը մէկէն 75 հոգի էին , անկէ շիտակ Եգիպտոսս եկաւ : Բայց դեռ հոնտեղը չմտած՝ Յովսէփ անոր գալուն լուրը Յուդային ձեռքոյն առնելով՝ անմիջապէս կառք մտաւ , զինքը գիմաւ որելու գնաց . տեսնելուն պէս՝ վազեց վիզն ինկաւ ու սրտին ուրախութենէն լացաւ : Յակոբք կանչեց . Զքեզ տեսնելս ինծի բաւական է , ալ մեռնիմ : Յովսէփ եղբարցն ու մէկալնոնց ըսաւ . Երթամ ձեր գալը Փա-

բաւոնին իմացընեմ՝ եւ ձեզի համար ըսեմ որ հոգիւ են, որպէս զի զձեզ առանձին տեղ մը բնակեցընէ՝, ինչպէս է Գեւեմ: Եղբարցն ալ խրատ տուաւ, որ Փարաւոն զիրենք կանչէ արուեստնին հարցընելու ըլլայ նէ, Հոգիւ ենք ըսեն: Ինք գնաց անոնց դալը թագաւորին իմացուց եւ ետքը եկաւ եղբարցմէ հինգ հոգի առաւ անոր առջեւը հանեց: Փարաւոն Յովսեփայ ըսաւ. Բոլոր երկիրը քու ձեռքդ է, ասոնք ուր որ կ'ուզես բնակեցուր, թէ որ մէջերնին յաջողակներ կան նէ, իմ ոչխարներս անոնց ձեռքը տուր: Յովսեփ հայրն ալ Փարաւոնին բերաւ, որն որ զինքը տեսնելուն շատ ուրախացաւ, քանի տարւան ըլլալն հարցուց: Ան ալ՝ 130 տարւան եմ, ըսաւ. ետքը զՓարաւոն օրհնեց ու դուրս ելաւ:

Ձ. Ասկէ 17 տարի ետեւ՝ Յակոբ ալ մեռնելու օրը մտտիկցած տեսնելով, Յովսեփը կանչեց երդուընցուց որ մեռնելէն ետեւ մարմինը հօրը գերեզմանը թաղէ: Ասոր վրայ քիչ ատեն անցաւ՝ Յակոբ հիւանդացաւ: Յովսեփ լսելով՝ երկու օրդիքն առած՝ եկաւ: Յակոբը իր դալն իմանալով՝ զօրացաւ անկողնին մէջ ելաւ նստաւ, եւ Աստուծոյ իրեն բրած խոստմունքն անոր պատմելով՝ զինքն իր անդրանիկ զաւակն բրաւ ու մէկայնեքուն կրկինն անոր ժառանգութիւն տուաւ, անոր Մանասէ ու Եփրեմ որդիքն իր որդւոցը կարգը դասեց եւ անոնց ժառանգակից բրաւ: Յովսեփ ազաքը հօրը զրկէն առաւ, ձախ դին պղտիկն (Ե-

1 Հոգիւները Եփրատացուց աստիկ էին՝ իրենց Աստուածներն (արջառ ու ոչխար) կարեւրուն համար:



փրկեմ) ու աջ դին՝ մեծը (Մանասէն) գրաւ : Յակովբ՝ ձեռքը խաչածեւ երկընցընելով՝ աջն Եփրեմին ու ձախը Մանասէին վրայ գրաւ ու ղերենը օրհնեց : Եւ թէպէտ Յովսէփ հօրը ձեռքը կ'ուզէր փոխել, կարծելով որ կը սխալի, բայց հայրը շիտողուց, ըսելով՝ Գիտեմ, սրդեակ, գիտեմ : Բայց պղտիկ եղբայրն աւելի մեծ ազգ պիտ'որ ըլլայ<sup>1</sup> :

**Յ.** Յակովբ մեկալ որդիքն ալ կանչեց, աւմէն մէկն առանձին առանձին օրհնեց : Անոնց տուած օրհնութեանց մէջ ամենէն յիշատակաց արժանին՝ Յուդայի տուածն է : Յակովբ Մեսիային դաշն անոր մարգարէացաւ, ըսելով թէ Քու զաւկընէրէդ իշխան չպակսի, մինչեւ որ հեթանոսաց ակնկալութիւնը (Մեսիան կամ Քրիստոս) գայ : Ետքը իրենց ալ մասնաւորապէս ապապրեց որ մեռնելէն ետեւ ղինքը Քանանացւոց երկիրը՝ կրկին այրին մէջ թաղեն : Աս ըսելէն ետեւ՝ 147 տարւան՝ հոգին աւանդեց : Յովսէփ հօրը մարմինը զմռսել տուաւ . 40 օր բոլոր Եգիպտոս վրան սուգ բռնելէն ետեւ՝ Փարաօնին հրամանաւը մեծ հանդիսութեամբ՝ եղբարքը հետ առաւ տարաւ կրկին այրին մէջ թաղեց :

**Ա.** Յովսէփայ եղբարքը հայրերնին թաղելէն ու Եգիպտոս դառնալէն ետեւ՝ վախճալով որ չըլլայ թէ Յովսէփ իրենց վրէժխնդրութիւն

<sup>1</sup> Աս առած օրհնութեամբ՝ Եփրեմ չէ թէ մինակ Մանասէն, այլ (Յուդայի ցեղը գուրս ձգելով) մեկալ ամէն ցեղերը գերազանցեց : Տասը ցեղերուն թագաւորութեան մէջ իր ցեղն ամենէն բազմամարդն ու իշխողն եղաւ . մինչեւ մարգարէք Եփրեմ ըսելով շատ անգամ սա թագաւորութիւնը կ'իմանային :

ընէ, գացին անոր աղաչեցին թէ բրած անի-  
րաւու թիւններնուն թողութիւն տայ: Յով-  
սէփ աս լսելով՝ լացաւ, մանաւանդ երբ որ  
առջեւն ինկած՝ Մենք քու ծառայքդ ենք ըսին:  
Արտերնին հանդարտեցուց ու ըսաւ. թէպէտ  
դուք ինծի չարիք մտածեցիք, բայց Աստուած  
ի բարին դարձուց: Չիբենք ապահով բրա-  
ւոր առաջուան պէս կը նայի: Հօրը մեռնելէն  
50 տարի ետեւ եղբարքը կանչեց իրենց ըսաւ.  
Ահա ասիկ ես կը մեռնիմ, բայց Աստուած  
զձեզ պիտի պահպանէ, ու ետքը ասկէ պի-  
տի հանէ ու մեր հարցը խօստացուած եր-  
կիրը տանի: Ա երջապէս զիրենք երդուընցուց  
որ ելած ատեննին՝ իր սակրներն ալ հետերնին  
տանին. անոնք ալ խօսք տուին: Ասանկով  
Յովսէփ 110 տարեան մեռաւ, Աստուծոյ խոստ-  
մունքին կատարեալ հաւատարմով:

## Ժ Զ. Գ Ա Ս

1. Յովսէփ և Ինչպէս մտրդ էր: — 2. Սասանան ա-  
նոր առաքինութիւնները շինուցուցընելու համար՝ Աս-  
տուծմէ առած առի իշխանութեամբն անոր ինչ քնա-  
հասուց: — 3. Սասանան առած երկրորդ իշխանու-  
թեամբն անոր ինչ բրաւ: Չիբքը տեսնելու եկող բարե-  
կամեալքը քոֆ ինչ ըրին: Յովսէփ վերջն ինչպէս եղաւ:

1. Յովսէփ արարացի հարուստ իշխան մըն  
էր, շատ արջառի ու ոչխարի տէր: Իր ծնըն-  
դեան երկիրը՝ Քաղզէացուց ու Արարացուց  
երկրին մէջտեղը՝ Անապատ Արարիայի մասին  
Ասիոյ աշխարհն էր, որն որ Պաղեստինի ա-  
րեւելեան գին ինչալուն՝ Ս. Գիլքն անոր բնա-  
կիչները Արեւելեայք կը կոչէ: Իսկ իր ժամա-

նակն Արբաճամին ու Մոփսիսին մէջի ատեն, ներք կ'իյնայ: Ասիկա զճշմարիտ Աստուած կը պաշտէր, եւ արդար ու երկիւղած ըլլալուն՝ մեղքէ եւ նոյն իսկ մտոք մեղանչելէն շատ կը զգուշանար. անոր համար ուխտ դրած էր որ ֆնասակար բաներու եւ ոչ աչքը դարձնէ նայի: Բնութեամբ սիրտը փափուկ ըլլալուն՝ ուրիշներուն խեղճութեան գիւրաւ կարեկից կ'ըլլար, անանկ որ՝ ինչպէս ինք կ'ըսէ՝ Որբերուն հայր, կուրաց աչք ու կաղաց սոսք եղած էր: Ինք Եօթը մանչ ու երեք աղջիկ զաւակ ունէր եւ անոնք Աստուծոյ երկիւղովը կը կրթէր: Երբ որ անոնք ժողոված միաբան խնճոյք կ'ընէին, Յովբ երկրորդ առտուն կ'ելլէր զամէնքը կը կանչէր եւ ամէն մէկուն համար առանձին զոհ կը մատուցանէր, ըսելով թէ Ո՛գիտէ՛ կարելի է որդիքս մտոք ըլլայ մեղք մը գործած են:

**2.** Օր մը Աստուած սատանային հարցուց որ Իմ Յովբ ծառաստեսա՞ր. անանկ աստուածավախ, արդար ու ամէն տեսակ շար բանէ ետ կեցող մարդ մէկհատիկ է: Սատանան ըսաւ. Յովբ զքեզ ձրի՞ կը պաշտէ. զինքը քու օրհնութիւններովդ լեցուցած չե՞ս. ունեցածք քիչ մը ատեն ձեռքէն առ, կը տեսնես թէ ինչպէս զքեզ կ'անիծէ: Ան ատեն Աստուած սատանային իշխանութիւն տուաւ որ Յովբայ ընչիցն ինչ որ կ'ուզէ նէ՛ ընէ, մինակ անոր անձին չգպչի: Ասոր վրայ անգամ մը երբ որ Յովբայ որդիքը մեծ եղբայրներնուն քով ժողոված՝ կ'ուտէին կը խմէին, մէկն եկաւ իրեն պատմեց թէ Եզրըը հերկած ու մատակ է:

չերն անոնց մտերն արածած ատեն՝ արարացի էլուզակները վրանիս եկան, ծառաները զարկին մեռցուցին, կենդանիներն առին տարին. մինակ ես ձեռքերնէն ազատելով՝ եկայ որ եղածը քեզի պատմեմ: Աս զուցելու ատեն՝ ուրիշ մ'եկաւ ըսաւ. Աշրկինքէն հուր իջաւ, ոչխարներուն հօտը հովիւներովը մէկտեղ այրեց. մինակ ես ազատելով՝ եկայ որ եղածը քեզի պատմեմ: Ասիկա ալ խօսքը լմնցուց չլմնցուց՝ երրորդ մը վրայ հասնելով՝ ըսաւ թէ Որդիքդ՝ մեծ եղբայրներնուն քով կերած խմած ատեննին՝ յանկարծ փոթորիկ մ'ելաւ տունը կործանեց, ասանկով որդիքդ փրատակներու տակ մեռան. ես մինակ կրցայ ազատիլ ու եկայ որ եղածը քեզի պատմեմ: Ան ատեն Յովք ելաւ զգեստը պատռեց, մազերը կտրեց, գետինն ինկած՝ Աստուծոյ երկրպագութիւն ըրաւ եւ ըսաւ. Աստուած տուած էր, Աստուած առաւ, իրեն ինչպէս որ հաճոյ երեւցաւ նէ՛ անանկ ալ եղաւ. իր կամքն օրհնեալ ըլլայ:

**3.** Սատանան աս շարիքները Յովքայ գլուխը բերելէն ետեւ՝ Աստուած իրեն ըսաւ. Յովք ծառաս տեսար, աշխարհքիս մէջ անոր պէս մէկը չկայ, դեռ իր անմեղութիւնը չկորսընցուց: Սատանան պատասխանեց. Մարդս իր կեանքն ազատելու համար՝ ամէն բան, նոյն իսկ իր սիրելի զաւկըները դուրսաւ կը զոհէ. ուստի ասիկա մեծ բան մը չէ: Մէյ մը անոր մարմնոյն դպիր, կը տեսնես որ զքեզ ինչպէս կ'անիծէ: Ան ատեն Աստուած Յովքն իրեն ձեռքը թող տուաւ, ըսելով՝ Ինչ որ կ'ուզես զնա ըրէ, մինակ մի մեռցընէր: Սատանան

ալ գնաց Յոփըր գլխէն մինչեւ ոտք բորտեց : Յոփը հարկադրեցաւ քաղքէն դուրս՝ աղբիւսի վրայ նստիլ ու խեցւով վրայի թարախնէրը մաքրել . բայց սիրտը գոհ՝ միշտ Աստուծոյ փառք կու տար : Իսկ խորամանկ սատանան՝ Յոփրայ կինն ողջ էր թողուցեր, որպէս զի սատանայ մ'ալ ան բլայ : Արդ կինն անոր խեղճութենէն ձանձրանալով՝ օր մ'եկաւ ըսաւ . Ինչ կեցեր ես, Աստուծոյ դէմ անէ՞ծք մը ըսէ, որ մեռնիս ազատիս : Յոփը անոր պատասխանեց . Ստուգիւ անդգամ կնկան մը պէս խօսեցար . Աստուծոյ տուած բարիքը վայելեցինք, խրկած չարեաց ալ պիտի չհամբերենք մի : Մէյ մ'ալ Աշխիփաղ, Բաղդատ ու Սովփար՝ իր բարեկամներն անոր գլուխն եկած մեծ չարիքները լսելով՝ մտիթարելու եկան : Առջի անգամ՝ զինքը հեռուէն տեսան նէ՛ չկրցան ճանչնալ . բայց ետքէն ճանչնալով՝ ձայներնին թողուցին սկսան լալ . զգեստնին ալ պատուեցին ու գլուխնին մոխիր ցանեցին : Առանց բերան բանալու՝ եօթն օր եօթը գիշեր գետնի վրայ քոփը նստան : Աերջապէս Յոփը սկսաւ քաշածները պատմել : Իսկ բարեկամներն Աստուծոյ՝ արդարները փորձելու համար խրկած վշտերը՝ չարերը պատժելու համար խրկածէն չզանազանելով, զինքը մեղաւորի ու Աստուծոյ թշնամոյ տեղ գրին ու կը խրատէին որ խոնարհութեամբ ու ասպշխարութեամբ զինքն Աստուծոյ արդար դատաստանին յանձնէ եւ ըսէ թէ Քաշածս՝ մեղացս պատիժն է : Ասոր հակառակ Յոփը իր անմեղութիւնը կը ջատագովէր, իր խղճին մաքրութեան վրայ կը վկայէր

Եւ կը հաստատէր որ Աստուած շատ անգամ արդարները փորձելու համար եւ կամ ուրիշ մեզի անյայտ պատճառի համար վիշտ ու նեղութիւն կը խրկէ : Երկու կողմն ալ ասանկ իրարու հակառակ սկզբան վրայ բլլալով՝ մեջերնին մեծ վէճ ելաւ ու երկայն տեւեց, մինչեւ որ Աստուած ամպերու մէջէն երեւնալով՝ խնդիրը Յովբայ կողմն որոշեց, եւ անոր բարեկամներուն բսածին վրայ բարկանալով՝ հրամայեց որ Յովբայ եօթը զուարակ ու եօթը խոյ տանին, որ մեղքերնուն թողութեան համար՝ անոնք իրեն ողջակէզ մատուցանէ, եւ իրենց համար աղօթէ : Աստուծոյ հրամանը կատարուեցաւ եւ Յովբայ աղօթքովը մեղքերնուն թողութիւն եղաւ :

Աստուած զՅովբ նորէն առաջին առողջութեան վիճակը դարձուց եւ առջի ունեցած հարստութիւններուն կրկինը տուաւ. կորորնցուցած զաւկրներուն տեղ ալ՝ դարձեալ նոյնչափ մանչ եւ աղջիկ զաւկրներ ունեցաւ : Ասոր վրայ 170 տարի ապրելէն ետեւ՝ իր որդւոցն որդիքը տեսաւ ու 288 տարւան մեռաւ :

# Գ. Գ. Լ. ՈՒԻ

ԻՍՐԱԵԵԼԱՅԻՈՅ ԵԴԻՊՏՈՒՆ ԵԼԼԵԼԷՆ  
ՄԻՆՁԵՒ ԸՒԵՏԵԼՑ ԵՐԿԻՐ ՄՏԵԵԼԸ

(1500 — 1460)

## ԺԷ. ԳԼՍ

1. Իսրայելացիք Եգիպտոս սրչափ ատեն հանդիստ կեցան. վիճակնին երբ գեչցաւ: — 2. Մովսէս երբ ծնաւ, Փարաւոնի ազգիան ինչպէս որդեգիր եղաւ: — 3. Ինչո՞ւ Մագիանացոց երկիրը փախաւ, հոն որոնք քով մտաւ: — 4. Վառած մտքնին երբ տեսաւ. Իսրայելացիքը հաստացրնելու Աստուծակ ինչ նշան առաւ: — 5. Եգիպտոս հասած ատեն ինչ ըրաւ: Մովսէս եւ Ահարոն Փարաւոնին առջեւն ինչ ըրին:

1. ԻՍՐԱԵԵԼԱՅԻՔ Եգիպտոսի մէջ երթալով բազմացան, ու Յովսէփայ կենդանութեան ատեն եւ ինք վախճանելէն ետեւ մինչեւ 150 տարի՛ զինքը ճանչցող կամ յիշող թագաւորներուն պաշտպանութեան տակ՝ շատ հանդիստ կեցան: Բայց երբ որ անանկ թագաւորներ եկան, որոնք զՅովսէփ ոչ կը ճանչնային ոչ ալ անոր գործքերը լսած էին, իրենց վիճակը շատ խեղճ ու ողորմելի եղաւ: Վասն զի նոյն թագաւորներէն մէկն անոնց զարմանալի կերպով աճելը տեսնելով՝ աչքը վախցաւ. եւ որոշեց որ անոնք տառապեցրնելով թող չտայ որ աճին: Աս վախճանաւ վրանին վերակացուներ դրաւ, որոնք զիրենք տէրութեան գործքերու անխնայ կը ծառայեցրնէին: Այսու ամենայնիւ Իսրայելացիք առաջուան պէս

կը բազմանային : Ան ատեն թագաւորը Սեփով-  
րա ու Փուա դայեակներուն պատուիրեց որ  
Խորայեւրացիք մանչ զաւակ ծնանելու ըլլան  
նէ՛ մեռցնեն : Բայց իրենք աւելի Աստուծոյ  
վախնալով՝ Փարաւոնին պատուէրը չբռնեցին ,  
որուն համար Աստուծոյ շատ բարիք գտան :  
Ասոր վրայ թագաւորը հրաման հանեց որ ան-  
կէ ետեւ Խորայեւրացւոց որչափ մանչ զաւակ  
կը ծնանի նէ՛ դեռ ձգեն :

Չ . Աս անօրէն հրամանը խտալու պահուած  
ատեն Յովբարէթ՝ Վեւեայ ցեղէն Ամրամ ա-  
նունով մէկու մը կինը՝ մանչ զաւակ մը ծնաւ ,  
որն որ կայտառ տղայ մ'ըլլալուն՝ երեք ամիս  
գաղտուկ տան մէջ պահեց : Բայց ալ աւելի  
պահելու վախնալով՝ կողով մ'առաւ , կպրա-  
ծիւթով ծեփեց ու տղան մէջը դրած՝ տարաւ  
գետին օփունքը ջրի մէջ ձգեց , գուցէ յու-  
սալով թէ Աստուած մէկը կը խրկէ որ տղուն  
վրայ գթայ ու ազատէ : Իսկ տղուն քոյրը  
գետին օփունքը տրտում տխուր կեցեր կը  
նայէր որ վերջն ինչ պիտ'որ ըլլայ : Անցաւ քիչ  
մը , մէյ մ'ալ Փարաւոնին ազջիիկը գետը լուա-  
ցուելու գալով ու կողովը տեսնելով՝ նաժիշ-  
տը խրկեց հանել տուաւ եւ մէջի տղուն  
վրայ մեծ գութ ունեցաւ : Տղուն քոյրն աս  
տեսնելով՝ անօրջապէս բովը գնաց՝ Վուղես  
նէ , ըսաւ , տղան սնուցանելու համար երբայե-  
ցի կին մը կանչեմ : Երբ որ հաճեցաւ , գնաց  
մայրը բերաւ , որուն տղան յանձնուեցաւ՝ աս  
պայմանաւ որ մեծցընելէն ետեւ նորէն անոր  
պիտի տանէր տար ու վարձքը պիտ'որ ընդու-  
նէր : Տղան մեծցաւ , Փարաւոնին պալատը



գնաց, անոր աղջկան որդեգիրն եղաւ: Փարաւոնին աղջիկն՝ անունը Մոփսէս գրաւ, որ ջրէ հանուած բսել է: Մոփսէս հանտեղը Եզրիպտացւոց ամէն կերպ գիտութիւնները սորվեցաւ:

**3.** Մոփսէս զօրաւոր երիտասարդ մընէր, թէպէտ ծանրալեզու, բայց միանգամայն քաջասիրտ, եւ ամենեւին անիրաւութեան չէր կրնար տանիլ: Քառասուն տարւան եղաւ նէ՛ր իր աղգակից եղբարցը կրածները տեսնելու ելլելով՝ ճամբան Եզրիպտացւոց մը հանդիպեցաւ, որ Եբրայեցւոցմէ մէկն անխնայ կը ծեծէր: Մոփսէս ինք զինքը չկրնալով բռնել՝ աս գինան գին նայեցաւ, տեսաւ որ մարդ չկայ (առանց կարծեաց Աստուծոյ ազդեցութեամբն) Եզրիպտացին մէկէն զարկաւ սպաննեց, կարելի է եղբարցը նշան տալու համար՝ որ օր մը զիրենք ասանկ Եզրիպտացւոց ձեռքէն պիտի փրկէ, ու մարմինն աւազի տակ թաղեց: Երկրորդ օրը տեսաւ որ երկու Եբրայեցիք իրարու հետ կը կռուէին. դարձաւ զրկանք ընողին ըսաւ. Ինչո՞ւ եղբորդ կը զարնես: Անիկա պատասխանեց թէ Չքեզ վրանիս ո՞վ իշխան ու դատաւոր գրաւ. Ի՞նչ, երեկուան Եզրիպտացւոյն պէս՝ զի՞ս ալ սպաննել կ'ուզես: Մոփսէս աս որ լսեց՝ տեսնելով թէ բանն յայտնուեր է, միանգամայն իմանալով որ Փարաւոնն ալ լսեր ու զինքը փնտռել կու տայ, Եզրիպտոս թողուց Մագիանացւոց երկիրը փախաւ: Հոն հասած ատեն՝ գնաց ջրհորի մը քով նստաւ: Մէյ մ'ալ նոյնտեղաց քրմին աղջիկները՝ որոնք իրենց հօրն ոչխարները կ'արածէին, անոնց ջուր

խմցընելու համար ջրհորն եկան : Անդիէն ուրիշ հովիւներ ալ գալով՝ զիրենք մէկդի բրին ու կարգերնին առին : Մովսէս աղջկանց կողմը բռնեց եւ անոնց ոչխարներուն ջուր խմցուց : Կ'երեւայ որ աս բանս ամէն օր կը պատահէր, որովհետեւ Հռապուէլ՝ իրենց հայրը նոյն օրն անանկ շուտով դառնալնուն վրայ զարմանալով՝ պատճառը հարցուց, եւ իմանալով՝ զՄովսէս կանչեց, իր աղջկանց բրած բարւոյն համար՝ զինքը քովն առաւ : Մովսէս 40 տարի Մադիանացուց երկիրը՝ Յոթորին ոչխարներն արածեց, եւ անոր Սեփովրա աղջրկան հետ կարգուելով՝ երկու զաւակ ունեցաւ, որոնց անունն է Գերսամ ու Էղիազար :

4. Անգամ մը Մովսէս Յոթորին ոչխարներն արածելու համար անապատի մէջ հեռու տեղ մ'երթալով՝ մինչեւ Քորէք լեռն եկաւ : Հոն բռնկած մորենի մը տեսաւ, որ այրելով չէր հատներ : Ասոր վրայ զարմանալով՝ ուզեց քովն երթալ նայիլ թէ ինչ է : Բայց բոցին մէջէն ձայն առաւ որ կ'ըսէր թէ Կոխած տեղդ սուրբ է, կօշիկներդ ոտքէդ հանէ : Ես Աբրահամայ, Իսահակայ ու Յակովբայ Աստուածն եմ : Մովսէս սուրբ երկիւղով մը լեցուելով եւ ոչ կը համարձակէր ան տեսիլքին նայիլ : Բայց Աստուած խօսքն յառաջ տանելով՝ Իմ

1 Ասիկա ճշմարիտ Աստուծոյ քահանայէր, ու Մեչքիսեղեկին, Յովբին եւ ուրիշ սասնց նմաններուն պէս՝ թէ քահանայութիւն կ'ընէր եւ թէ իր ընտանիքը կը կառավարէր : Ոմանք զինքն Յոթորին հայրը եւ ան աղջրկանց պապը կը կարծեն : Ոմանք ալ Հռապուէլ ու Յոթոր մէկ մարդու անուն է, կ'ըսեն :

Ժողովրդեանս Եզրիպտոսի մէջ կրածները տեսայ, ըսաւ, եւ հիմա զքեզ Փարաւոնին պիտի խրկեմ, որ զիրենք անկից հանեա ու կաթ եւ մեզը բխող երկիրը տանիս: Մովսէս խոնարհութեամբ եւ իր տկարութիւնը ճանչնալով՝ Ես ո՞վ եմ, Տէր, ըսաւ, որ Փարաւոնին երթամ ու Իսրայելի որդիքն Եզրիպտոսէն հանեմ: Ես հետոյ եմ, պատասխանեց Աստուած, ես եմ որ զքեզ կը խրկեմ: Ետքը հրամայեց որ երթայ Իսրայելացւոց ձերերը ժողովէ, իր կամքն անոնց յայտնէ, եւ զանոնք հետն առած՝ Փարաւոնին առջեւն ելլէ, իրեն ըսէ որ Մեր Աստուածն զմեզ կը կանչէ. ուստի մենք երեք օրուան հետու անապատ տեղ պիտ'որ երթանք եւ իրեն զո՞հ մատուցանենք: Մովսէս ըսաւ թէ Հապա Իսրայելացիք չհաւտան որ Գուն ինձի երեւցար, ինչ ընեմ: Աստուած անոր հարցուց թէ Չեռփինդ ինչ է, եւ պատասխան առնելով՝ որ Գաւազան, հրամայեց որ գետինը ձգէ: Անիկա ձգելուն պէս՝ գաւազանն է օձ եղաւ ու Մովսէս վախէն ետեւ ետեւ գնաց: Աստուած ըսելով որ՝ Նորէն ձեռքն առնէ, Մովսէս անանկ բրաւ, եւ օձը նորէն գաւազան դարձաւ: Աստուած իրեն ուրիշ նշան մ'ալ տուաւ. հրամայեց որ ձեռքը ծոցը տանի: Մովսէս տարաւ ու հանեց տեսաւ որ բորոտեր է: Ետքը նորէն Աստուծոյ հրամանաւ ձեռքը ծոցը տանելով՝ հանեց տեսաւ որ բորոտութիւնն անցեր է: Ասոնք ըլլալէն ետեւ՝ Աստուած իրեն ըսաւ որ Իսրայելացիք աս նշանները տեսնելով՝ կը հաւտան որ զքեզ խրկողն ես եմ: Բայց թէ որ չհաւտան, գե-

տէն ջուր առ՝ ցամաք թափէ, ան թափած ջուրդ արիւն կը կարի: Մովսէս ասոնց պատասխան՝ իր նրբաձայն ու ծանրալեզու բլլալն յառաջ բերելով՝ հրաժարեցաւ: Եւ թէպէտ Աստուած զինքը քաջալերեց, բայց անիկա միշտ ինք զինքն ասանկ մեծ պաշտօնի անարժան սեպելով՝ Աստուծոյ կ'աղաչէր որ իր տեղն ուրիշ մը խրկէ: Աստուած բարկացաւ, Ահարոն եղբայրն անոր ընկեր տուաւ. Ինք խօսող է, ըսաւ, հիմա առջեւդ պիտ'որ ելլէ, ըսած բաներս իրեն պատմէ. դուն իմ բերանս եղիր, ան ալ քու բերանդ բլլայ, ու իմ պատգամներս քեզմէ լսելով՝ ժողովրդեան պատմէ. օձ դարձած դաւաղանն ալ հետդ առ:

5. Մովսէս՝ Աստուծոյ հրամանն յանձն առնելով՝ Յոթորին եկաւ, անոր վերջին ողջոյնը տուաւ. կինն ու որդիքը գրաստ հեծցուցած՝ գաւաղանն ալ ձեռքը ծամբայ ելաւ, ու Ահարոն եղբորը հանդիպելով՝ Աստուծոյ խօսածները պատմեց: — Երկուքը մէկտեղ Եգիպտոս եկան, Իսրայելացւոց ձերերը ժողովեցին: Ահարոն Աստուծոյ կամօն անոնց յայտնեց, Մովսէս ալ ձեռքի գաւաղանաւն Աստուծոյ սահմանած նշանները գործեց: Ասով ժողովուրդն անոնց Աստուծակ խրկուած բլլալուն հաւատաց ու Աստուծոյ շնորհակալ եղաւ:

Առ բլլալէն ետեւ՝ Մովսէս 80 տարւան եւ Ահարոն 83 տարւան ձերունիները Փարաօնին առջեւն ելան, Աստուծոյ կողմանէ իրեն ըսին թէ Իսրայելացիքը թողու որ երեք օրուան հեռու անապատ տեղ երթան եւ իրենց Աս-

տուժոյն զո՛հ մատուցանեն : Փարաւոնն հպարտութեամբ պատասխանեց . Ո՞վ է եղեր ան Աստուածն՝ որուն որ ես պիտի հնազանդիմ . զինքը չեմ ճանչնար եւ զԻսրայէլ չեմ թողուր : Բաներնիդ գացէք . Ժողովուրդն ինչո՞ւ կ'արդէլէք : Աս ըսելով՝ զանոնք ճամբեց . Իսրայելացւոց վրայ դրած վերակացուններուն ալ ապսպրեց որ անոնց աշխատութիւնն աւելցընեն . աղիւս շինելու պէտք եղած յարդն իրենք չտան , այլ թողուն որ ան ալ անոնք իրենցմէ հոգան եւ միանգամայն յառաջուան չափ ալ աղիւս շինեն : Այսպէսով Իսրայելացիք սկսան յառաջուընէ աւելի տանջուիլ . եւ ասով Աստուծոյ քիչ մը յառաջ իրենց բրած խոստումը մոռնալով՝ Մովսիսին ու Ահարոնին դէմ գանդատանք բրին : Աստուած Մովսիսին սիրտ տուաւ որ երթայ Իսրայելացւոց ըսէ թէ իրենց հարց եղած խոստումը վայելելու համար քիչ մը համբերեն : Միանգամայն հրամայեց որ Ահարոնն առնէ Փարաւոնին երթայ եւ իր կողմանէ ասանկ զրուցէ . Իսրայելացիքը թող , թէ չէ՝ զքեզ չարաչար կը պատժեմ , անանկ զանոնք Ազիպատոսէն կը հանեմ : Միանգամայն ապսպրեց որ եթէ Փարաւոն նշան ուզելու ըլլայ՝ Ահարոնին ըսէ որ դաւաղանն օձ դարձընէ : Մովսէս Աստուծոյ հրամանները կատարեց : Բայց գաւազանին օձ ըլլալը Փարաւոնին օգուտ չբրաւ , մանաւանդ թէ սիրտը խստացաւ , տեսնելով որ Ազիպատոսի կախարդներն ալ նոյնն բրին , թէպէտ եւ Ահարոնինը մէկաշնոնքը կլլեց :

## Ժ Ը . Դ Ա Ս

1 . Եգիպտացւոց ինը հարուածներն որոնք են : — 2 . Աստուած տասներորդ հարուածը չբերած՝ Մոփսիսին ինչ պատուիրեց : — 3 . Նշյն տասներորդ հարուածն Աստուած ինչպէս խրկեց : — 4 . Աստուած Իսրայելացիքն Եգիպտոսէն հանելէն ետեւ իրենց ինչ պատուիրեց :

1 . Աստուած տեսնելով որ զիջում ընելը՝ Փարաւոնին օգուտ չ'ըներ, ալ սկսաւ խրատութիւն բանեցընել : Ուստի եւ անոր ամէն անգամ յամառութիւն ցուցընելուն՝ ինքն ալ վրան ետեւէ ետեւ աւելի խստագոյն պատիժ խրկեց : Ա-Յ պատիժն ու հարուածը գետին ջուրն արիւն դարձընելն եղաւ : Փարաւոն առտու կանուխ գետին քով գացած ատեն՝ Մովսէս Աստուծոյ հրամանաւը՝ գետին զիմացի կողմն անցաւ, եւ անոր առջեւը կեցած՝ դաւազանը ջրին զարնելով, մէկէն արիւն դարձուց . ձկերը սատկեցան, ջուրն ալ անոնց պականութենէն նեխեցաւ : Ահարոն ալ Աստուծոյ հրամանաւը նոյն դաւազանով Եգիպտոսի մէկալ ջրերն արիւն դարձուց : Եգիպտացիք ասդին անդին գետին քովերը փորեցին ու խմելու ջուր չկրցան՝ գտնել : Ասանկ եօթն օր անցաւ . բայց Փարաւոնին սիրտը խստանալով՝ Իսրայելացիքը չթողուց, երբ որ տեսաւ որ Եգիպտացւոց կախարդներն ալ նոյնն բրին :

1 Ասոնց բրածն առերեւոյթ ու շինծու բաներ էին . իրենց արեան փոխած ջրին համար՝ Ս . Հարբ կ'ըսեն թէ կամ մտա տեղ փորուած ազդիւրներէն բերին եւ կամ արտաքրուտ անանկ երեւցուցին : Նշյնպէս իրենց օձի փոխած դաւազանը կամ առերեւոյթ բան մըն էր եւ կամ դաւազանը վերջընելով՝ ուրիշ տեղէ բուն օձ բերին :

Աստուած վրան բարկանալով երբ-բո՞ւ հարուածը խրկեց: Մովսիսին ձեռքովն անոր ըսաւ որ Խորայեւրացիքը թող շտալուդ. համար՝ բովանդակ քու սահմաններդ գորտով պիտի լեցնես: Ահարոն ձեռքն Էզրիպտոսի ջրերուն վրայ երկրնցընելով՝ գորտեր դուրս հանեց, որոնք իրենց աներուն եւ կերակուրներուն մէջ կը վիտային, անանկ որ մինչեւ Փարաւոնին վրայ ելան: Աս բանս կախարդներն ալ ըրին: Փարաւոն Մովսէսն եւ Ահարոնը կանչեց. Խորայեւրացիքը թող տալու խօսք տուաւ. միայն թէ գորտերուն վերնալուն համար Աստուծոյ աղաչեն: Մովսէս անոնց վերնալն Աստուծոյ ըլլալը ցուցընելու համար՝ ըսաւ թէ ատենն ինք թագաւորն որոշէ, որ նոյն ատեն Աստուծոյ աղօթէ: Փարաւոն ատենն որոշեց. Մովսէս նոյն որոշեալ ատենին Աստուծոյ դիմեց. մէկէն գորտերը ցամաքին վրայ սատկած թնացին ու երկիրը հոտեցուցին, մինակ դեռին մէջիններն ողջ թնացին, ինչպէս որ Մովսէս արդէն Փարաւոնին ըսած էր: Բայց Փարաւոն խոստմունքը չբռնեց եւ սիրաբ խտացուց:

Ան ատեն Աստուած երբ-բո՞ւ հարուածը խրկեց: Ահարոն Աստուծոյ հրամանաւ դառաղանը դեռինը զարնելով՝ բովանդակ Էզրիպտոս մունով լեցուց, որոնք մարդու եւ անասնոյ վրայ կ'ելլէին, զիրենք կը շարշարէին: Կախարդներն ալ փորձեցին, բայց չկրնալով յաջողընել՝ խոստովանեցան, որ հոս Աստուծոյ մատը կայ: Բայց ի՞նչ օգուտ, Փարաւոնին սիրաբ խտացած թնաց:

Անոր համար շրբ-բո՞ւ հարուածն ընդունե-

ցաւ : Աստուած Մովսիսին ապազրեց որ աստու կանուխ Փարաւոնին երթայ, իր կողմանէ աս խօզերն ըսէ . Ժողովուրդս թող տուր, թէ չէ՝ բոլոր ժողովրդեանդ վրայ շանաճանճ կը խաւրեմ, բայց իմ ժողովրդեանս բնակած Գ-եռէմ՝ տեղն ասկից ազատ պիտի պահէմ : Երկրորդ օրը բոլոր երկիրը շանաճանճով լեցուեցաւ, որոնք շատ մարդ կը մեռցնէին : Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը կանչեց՝ Ար թողում, ըսաւ, բայց իմ երկրիս մէջ : Մովսէս յանձն շառաւ, ըսելով որ Եթէ Եզրիպտացիք տեսնեն որ իրենց պաշտած Աստուածները կը զոհենք, զմեզ կը քարկոծեն . ուստի երեք օրուան հետո՛ւ անապատ պէտք է որ երթանք : Փարաւոն հաւանեցաւ ու խոտացաւ որ զիրենք թողու . միայն թէ անկհետո՛ւ չերթաք ըսաւ : Մովսիսին ազօթքովը շանաճանճը վերցաւ, բայց Փարաւոնին սիրտը խոտանալով խոտամուկքը չբռնեց :

Ասոր հետեւ ութ իւնն եղաւ հինգերորդ հարուածը : Մովսէս եւ Ահարոն իր առջևն ելան Աստուծոյ կողմանէ ասանկ ըսին . Որովհետեւ ժողովուրդս դեռ չթողուցիր, անոր համար դաշտի վրայի արջառն ու ոչխարն, էչն եւ ուղտը պիտի մեռցնեմ : Երկրորդ օրն ասոնք եղան : Փարաւոն տեսնելով որ Իսրայելացւոց կենդանիներուն փեսս մը չէ եղեր, սիրտը խոտացաւ եւ զանանք չթողուց :

Աստուած ալ քերտորդ հարուածը բերաւ :

1 Ս . Օգոստինոս կ'ըսէ որ Իսրայելացիք չէ թէ մնակ աս հարուածէն, այլ նաեւ մկառնեղն ալ ազատ էին :



Մովսէս եւ Ահարոն նորէն Փարաւոնին առջեւն ելան, եւ Մովսէս՝ Աստուծոյ հրամանաւը՝ ձեռքը մոխիր առնելով՝ երկինք ցանեց: Անմիջապէս բոլոր Եգիպտոսի վրայ փոշի մը տարածեցաւ. որով մարդիկներուն ու մնացած անասուններուն վրայ խաղաւարտներ ելան. նոյն իսկ կախարդներուն վրայ ալ ելլելով թագաւորին առջեւը չկրցան երեւալ:

Բայց աս ալ Փարաւոնին սիրտը չկակղացրնելով՝ Աստուած Էօֆեօրօք հարուածը վրան խրկեց: Երկրորդ առտու՝ Մովսէս Աստուծոյ հրամանաւը զաւաղանն երկինք երկրնցուց: Մէյ մ'ալ երկինքն անմիջապէս սկսաւ որտտալ, փայլատակել ու կարկուտ տեղալ, որով դաշտի վրայ եղած մարդիկն ու անասունները մեռան, անկերն ու ծառերը կոտրուեցան: Ասոր վրայ Փարաւոն Մովսէսն ու Ահարոնը կանչեց եւ ըսաւ. Աստուած արդար է, իսկ ես ու ժողովուրդս՝ ամբարիշտ. ուստի Աստուծոյ աղաչեցէք որ կարկուտը վերջացնէ, ես ալ զձեզ կը թողում: Մովսիսին աղօթքովը կարկուտը վերջացաւ, բայց Փարաւոնին սիրտը չափէ դուրս խտացաւ:

Աստուած ալ Էօֆեօրօք հարուածը բերաւ: Մովսէս Աստուծոյ հրամանաւը Փարաւոնին ըսաւ որ Խորայելայիքը թող չտալուդ համար՝ Աստուած քու սահմաններուդ վրայ մարախ պիտի բերէ: Փարաւոն հարցուց որ դացողներն ո՞վ պիտ'որ ըլլան: Մովսէս՝ Ամէնքս, ըսաւ, ունեցածնիս ալ հետերնիս պիտի տանինք: Փարաւոն՝ Անանկ բան չ'ըլլար, բսելով՝ Մովսէսն ու Ահարոնն առջեւէն վաճնուեց:

Մովսէս ան ատեն ձեռքն երկինք երկրնցընելով՝ սաստիկ հով մ'ելաւ, որն որ շատ մարտիս բերաւ ու երկրին երեսը ծածկեց. այսպէսով կարկտէն ազատ մնացող ծառերն ու կանաչեղէնները մարտիսէն փճացան գացին: Փարաւսն շուտ մը Մովսէսն ու Ահարոնը կանչեց, Մեղայ, աս անգամս ալ ներեցէք, ըսաւ, եւ Աստուծոյ ազաչեցէք որ մարտիսը փարատի: Մովսիսին աղօթքովը սաստիկ հով մ'ելաւ, մարտիսը տարաւ. կարմիր ծովը թտփեց, Բայց Փարաւսնին սիրտը դարձեալ խտացաւ:

Աստուած ան ատեն Ինէրորդ հարուածը խրկեց: Մովսէս Աստուծոյ հրամանաւը ձեռքն երկինք երկրնցընելով՝ երէք օր երէք զիշեր շոշափելի խաւար (թանձր մէզ) եղաւ, անանկ որ իրար չէին կրնար տեսնել: Փարաւսն՝ զՄովսէս եւ զԱհարոն կանչեց, յանձն առաւ զիրենք թողուլ: Բայց արջառնիդ ու ոչխարնիդ հոս թողուցէք, ըսաւ: Մովսէս՝ Չէ, եւ ոչ կծղակի չափ բան կը թողունք, պատասխանեց: Փարաւսն ալ սիրտը խտացած՝ զինքն առջեւէն վաճնտեց. Մէյ մ'ալ աչքիս մ'երեւար, ապա թէ ոչ՝ կը մեռնիս, ըսաւ: Մովսէս՝ Լաւ, չեմ գար, ըսելով՝ բարկութեամբ էլաւ գնաց:

2. Աստուած Մովսիսին ըսաւ որ փարաւսնին վրայ ուրիշ հարուած մը պիտի բերեմ, ան ատեն զձեզ կը թողու: Ուստի բովանդակ Իսրայելացւոց ըսէ որ՝ Նիսան (Մարտ) ամիսը՝ տարւոյն առջի ամիսն ըլլայ, անոր տասներորդ օրը տան գլուխ գառն մը առնուի, որն որ մէկ տարւան, անարատ եւ արու, ըլ-

լայ: Մինչև և նոյն ամսոյն տասնուչորսերորդ օրը պահէն, նոյն օրն իրիկուան դէմ մտթեն: Բայց մտթած ատեննին զգուշանան որ անոր ամենեւին մէկ սկիբը չկոտորի կամ չմտասի. արիւնն ալ աներնուն դրան երկու կողմը ու բարաւորին (դրան շրջանակին վերին կողման) վրայ քսեն, իսկ միտը խորոված՝ բազարջով (անխմոր հացով) ու եղեգով (դառն աղցանով) ուտեն: Ուտելնին շտապաւ ըլլայ, գօտինին մէջ քերնին կտպած, կօշիկնին հագած ու գաւազաննին ձեռքերնին: Նոյն գիշեր Եզդիպտոս պիտի մտնեմ՝ մարդու եւ անասնոյ անդրանիկ ողջ պիտի չթողում. իսկ ձեր դրան վրայի արիւնը տեսնելով՝ զձեզ կը թողում կ'անցնիմ: Մովսէս Իսրայելացիքը ժողվեց. Աստուծոյ ըսածները պատմեց. անոնք ալ կատարեցին:

Յ. Ատենն եկաւ՝ մէյմ՝ ալ ինչ կը նայիս, Եզդիպտոս անդրանիկ մը ողջ չմնաց. Փարաւոնին անդրանկէն մինչև իրենց գերիներուն ու կենդանիներուն անդրանիկն ամէնն ալ մեռան: Ուստի ամէն տուն մեռել գտնուելուն՝ գիշերանց աղաղակ ու վայնասուն մըն է փրթաւ: Փարաւոն գիշերուան մէջ Մովսէսն ու Ահարոնը կանչել տուաւ, ըսաւ որ ելլեն երթան, ունեցածնին ալ հետերնին առնեն: Իսկ Եզդիպտացիք՝ Չըլլայ թէ ամէնքս ալ մեռնինք, ըսելով՝ Իսրայելացիքը կը փութացընէին որ բույէ մը յառաջ ճամբայ ելլեն: Իսկ անոնք իրենց դեռ չխմորած հացը՝ որմէ որ նախընթաց օրը կերած էին, լաթի մէջ փաթտած՝ մէկտեղ առին եւ ետքը անկից բազարջ

Հաց ու նկան եփեցին կերան : Աստուած միանգամայն իրենց ըսած ըլլալով որ Եգիպտացւոցմէ սսկիկ, արծրթէ ամաններ ու հագուստ ուզէն, իրենք՝ բարեմտութեամբ ետքէն ետ տալու մտքով՝ ուզեցին եւ առին տարին : Բայց Աստուած՝ որ ամէն ընչից եւ ստացուածոց վրայ վերին սեպհական իշխանութիւն ունի, զանոնք Իսրայելացւոց պարզեւեց, իրենց այնչափ տարւան Եգիպտացւոց ըրած ծառայութեան վարձքի տեղ : Եգիպտոսէն ելող Իսրայելացւոց հետեւակը, տղաքն ու խառնիճաղանճ ամբողջ չհամբելով, 600,000 հոգի էր : Մովսէս ելլելու ատեն Յովսեփայ սսկրնէրը հետն առաւ, ինչպէս որ անիկա ապսպրած էր :

4. Աս երեւելի գործքին յիշատակին համար Աստուած հրամայեց որ ամէն տարի Նիսան ամսոյն 14ին իրիկունը գառն մը մորթեն ուտեն, եօթն օր տօն բռնեն, եւ նոյն օրերն ամենեւին խմորեալ հաց չուտեն, հապա մինակ բաղարջ հաց : Բայց անթրփատն անկից չէր կրնար ուտել . իսկ ուրիշ ազգերէն մջերնին մանողներն՝ որոնք Ե՛՛կ՝ ըսուէին, թրփատուած ըլլալուն՝ կրնային ուտել : Նոյնպէս Աստուած հրամայեց՝ որ Եգիպտացւոց՝ մարդու եւ անասնոց անդրանիկներուն մեռնելուն յիշատակին համար՝ Իսրայելացւոց մարդու եւ անասնոյ անդրանիկներն իրեն ընծայեն : Բայց Աւետեաց երկիրը մանելէն ետեւ՝ մարդունը ստրկով կը փրկանաւորուէր (կ'ազատուէր) . որովհետեւ հօն Աստուծոյ պաշտաման համար՝ միայն Ղեւեայ ցեղը բաւական էր :

## Ժ Թ . Գ Ա Ս

1. Իսրայելացիք Կարմիր ծովէն ինչպէս անցան . Փարաւոնին զօրքն ինչպէս խղզուեցաւ : — 2. Անկէ մինչեւ Սին անապատն ինչպէս եկան . սոփե համար արտնչելով ինչ հաց ու միս գտան : — 3. Ռափիզիմ ինչպէս չուր գտան : — 4. Ամազեկացւոց ինչպէս յաղթեցին :

1. Իսրայելացիք Աստուծոյ հրամանաւ ճամբանին դէպ ի Կարմիր ծովին քովի անապատն յառաջ տարին : Աստուած ցորեկները ամպէ սիւնով ու գիշերները հրեղէն ամպով իրենց կ'առաջնորդէր : Երբ որ Կարմիր ծովին եղերքն հասան, հոն բանակեցան : Իսկ Փարաւոնն զիրենք թող տալուն զղջալով՝ առտուանց խիստ շատ ձիաւոր ու ստանաւոր զօրք ժողովեց, ետեւնէն ինկաւ ու Կարմիր ծովին քով բանակած ատեննին վրանին հասաւ : Իսրայելացւոց (զիմացը) արեւելեան դին՝ Կարմիր ծով, հիւսիսային դին՝ Եզրիպտոսի անապատն, արեւմտեան դին՝ չորս կողմը գոց լեռներ ու անապատ ըլլալով, եւ հարաւէն Եզրիպտացիք գալով, մարդկօրէն մտածելով՝ անտարակոյս ձեռք պիտի իյնային, անոր համար ալ յուսահատութեան մէջ իյնալով՝ Մովսիսին ըսին . Եզրիպտոս մեզի դերեզման պահառ էր, որ առիր հոս բերիր : Մովսէս Աստուած ձեր տեղը կը պատերազմի, ըսելով՝ զիրենք քաջալերեց, եւ գիշերուան մութը կոխելուն պէս՝ զանոնք Աստուծոյ հրամանաւ ճամբայ հանեց : Ամպէ սիւնն Իսրայելացւոց ու Եզրիպտացւոց բանակին մէջտեղը մտնելով, Իսրայելացւոց՝ լոյս ու Եզրիպտացւոց՝ խաւար եղաւ, անանկ որ բոլոր գիշեր Եզրիպտացիք անոնց չկրցան

Հասնիլ : Մովսէս ձեռքը կարծիր ծովին վրայ երկընցուց . մէյ մ'ալ սաստիկ հով մ'ելլելով՝ ծովն երկու բաժնուեցաւ , որով Իսրայելացիք առանց ստուընին թրջելու՝ մէջէն անցան գացին : Եզրիպտացիք աս որ տեսան՝ անոնց ետելէն մէջը մտան : Բայց երբ որ առտու եղաւ , Աստուած սրտերնին վախ ձգելով՝ սկսան իրարու ըսել . Ետ դառնանք , վասն զի Աստուած անոնց կողմանէ մեզի դէմ՝ կը պատերազմի : Աս միջոցիս Իսրայելացիք արդէն ցամաք ելած ըլլալով՝ Մովսէս ձեռքի գաւազանը դէպ ի ծով երկընցուց , եւ մէկէն ջրերը քովէ քով եկան : Փարաւոն իր զօրքին հետ մէջը ծածկուեցաւ խղուեցաւ : Իսրայելացիք աս տեսնելով՝ Աստուծա՛ւ ու Մովսիսէն՝ սկսան վախնալ , եւ էրիկ մարդիկ ու կնիկ մարդիկ երկու գաս եղած՝ մէկուն պարագլուխ՝ Մովսէս ու մէկային Մարիամ՝ իր քոյրը , նուազաբանով Աստուծոյ փառք տուին :

Ձ . Մովսէս Իսրայելացիներն առաւ Սուր անապատին մէջ յառաջ տարաւ , ուր որ խմելու ջուր չգտան , եւ երեք օրէն Մեռա բերաւ : Հոն թէպէտ ջուր կար , բայց լեզի ըլլալուն՝ չկրցան խմել , եւ անոր համար սկսան Մովսիսին դէմ արանջել : Մովսէս Աստուծոյ դիմեց . Աստուած ալ իրեն փայտ մը ցուցուց , զորն որ ջրին մէջ ձգելով՝ անուշցուց : Անկէ Աղիմ՝ եկան բանակեցան , ուր որ 12 ագրիւր ու 70 արմաւենի կար : Անկէ ալ Սին անապատը գացին : Հոն ժողովուրդը Մովսիսին եւ Ահարոնին դէմ արանջեց , ըսելով որ Լաւագոյն էր Եզրիպտոս մեռնէինք , ուր որ կշտա-

նալու չափ հաց ու միս կ'ուտէինք . ինչո՞ւ զմեզ հոս բերիք, որ սովէն կը մեռնինք : Աստուած Մովսիսին ձեռքովն անոնց խոստացաւ որ միս ու հաց կ'ուտեն : Մէյ մ'ալ իրիկուան դէմ այնչափ լորամարդի իջաւ, որ բոլոր բանակը ծածկեց . առտուանց ալ բանակին չորս դին ցօղ իջնալով՝ գետնի վրայ եղեամի պէս հատեր երեւցան : Իսրայելացիք աս տեսնելով՝ սկսան Մ-ն-ն-ն պոռալ, որ Աս ի՞նչ է, ըսել է . եւ ասկէ անունը Ման կամ Մանանայ մնաց : Մովսէս՝ Ասիկա Աստուծոյ խրկելու հացն է, ըսաւ . եւ պատուիրեց որ ամէն մարդ հարկաւոր եղածին չափ ժողովէ՝ առանց երկրորդ օրուան բան մ'աւելցրնելու : Թէպէտ ոմանք մտիկ չընելով՝ երկրորդ օրուան պահէցին, բայց փոտած ու որդնոտած գտան : Նոյն օրէն սկսեալ՝ Մանանան ամէն օր երկինքէն կ'իջնար : Պէտք էր որ առտուանց կանուխ արեւը չելած՝ ժողովին . արեւուն ելլելէն ետքը կը հարէր : Իսկ շարթուն վեցերորդ օրը սովորականէն կրկինը կը ժողովուէր, երկրորդ օրուան կը պահուէր եւ բան մը չէր ըլլար . վասն զի Մովսէս ըսած էր որ շարթած օրերը չեն կրնար գտնել : Մանանան գինձի պէս բան մըն էր, զորն որ կ'աղային, անկանի մէջ կը ձեռքէն կ'եփէին ու նկան կը շինէին : Իսրայելացիք 40 տարի շարունակ ասիկա կերան :

**Յ.** Սին անապատէն Ռափիդիմ՝ եկան, ուր խմելու ջուր չգտնելնուն՝ դարձեալ Մովսիսի դէմ տրանջեցին եւ իրմէ ջուր ուղեցին, ըսելով որ Չմեզ մեր տղոցմոջն ու անասուններով Եզրպատոսէն հանեցիր հոս բերիք, որ

ճարաւէն մեռնինք : Մովսէս Աստուծոյ զի-  
մելով ըսաւ . Ես աս ժողովրդեան հետ ինչ  
պիտ'որ ընեմ, քիչ մնաց զիս կը քարկոծէին :  
Աստուած ըսաւ որ ձերերէն քանի մը հոգի  
հետն առած՝ գաւազանն ալ ձեռքը՝ Քորէր  
լեռն երթայ, անտեղի ապառաժ քարէն՝ գա-  
ւազանը զարնելով՝ ջուր հանէ : Մովսէս պա-  
տուէրը կատարեց ու յաջողեցաւ : Նոյն տե-  
ղւոյն անունը Բամբասանք ու Փորձութիւն  
գրաւ . վասն զի զինքը բամբասեցին ու զԱս-  
տուած փորձեցին որ հետերնին է թէ չէ :

4 . Նոյն տեղն եղած ատեննին Ամաղեկա-  
ցիք (Եսաւայ զաւկրները) իրենց դէմ պատե-  
րազմի ելան : Մովսէս՝ Էփրեմի ցեղէն Նաւայ  
որդւոյն Յեսուայ ըսաւ որ քանի մը հոգի ըն-  
արէ, անոնցմով երկրորդ օրն Ամաղեկացւոց  
գիմացն էլլէ : Յեսու հրամանը կատարեց : Ինքն  
ալ Ահարոնին եւ Ովրին հետ՝ հրաշագործ  
գաւազանը ձեռքը՝ բլրոյն վրայ ելաւ : Հոն ձե-  
ռուրներն երկինք վերցուցած՝ Աստուծոյ աղօ-  
թելու ժամանակ՝ Խորայելացիք կը յաղթէին,  
իսկ վար իջեցուցած ատեն՝ Ամաղեկացիք :  
Անոր համար Մովսէս ստիպուեցաւ երկայն  
ժամանակ ձեռուրները վեր բռնած կենալ,  
եւ երբ որ յոգնեցաւ՝ Ահարոն ու Ովր զինքը  
քարի մը վրայ նստեցուցած՝ թեւերուն տակ  
մտան, անանկ կեցան, մինչեւ որ Ամաղեկա-  
ցիք աղէկ մը ջարդուեցան : Ետքը Աստուած  
Մովսէսին ըսաւ որ Յաղթութեան յիշատակը  
զրի անցընէ, Յեսուայ ալ ըսէ որ Ամաղեկա-  
ցիքը կ'ուզէ ջնջել : Մովսէս հոն սեղան մը շի-  
նեց եւ անունը՝ Տէր ապաւէն իմ, գրաւ :



Ի . Գ . Ա Ս

1. Իսրայելացիք Սինա լեռը հասած տանն՝ Աստուած իրենց ինչ բառ : — 2. Տանաբանեաց պատուէրներն որոնք են : — 3. Մովսէս գաղիւքն ինչպէս հաստատեց : Աստուած ինչո՞ւ զինքը մէջ մ'ալ լերան վրայ կանչեց : — 4. Իսրայելացիք ինչո՞ւ հորթ պաշտեցին : — 5. Մովսէս քարեզէն տախտակներն ինչ բառ : Իսրայելացիքն ինչով պատժեց . զանոնք ինչպէս Աստուծոյ հետ հաշտեցուց : — 6. Մովսէս երբ երեսը փառասորած ետ դարձաւ : — 7. Յոթ որ՝ Մովսիսին ո՞ւր եկաւ եւ ինչ բառ :

1. Իսրայելացիք Եզրիպտոսէն ելլելէն երեք ամիս ետքը՝ Սինա անապատն եկան, եւ մէկ տարւան չափ Սինա լերան դիմացը բանակեցան : Աստուած զՄովսէս ան լերան վրայ կանչեց. Եզրիպտոս գործածներն ու մինչեւ նոյն ատեն իրենց բրած բարիքները կարճ խօսքով առջեւը դրաւ, եւ խոստացաւ որ Իսրայելացիքն իր սեպհական ժողովուրդը կ'ընէ, միայն թէ իրենք ալ տալու օրէնքներն ու պատուէրները պահեն : Ետքը զինքը խրկեց որ երթայ ասոնք ժողովրդեան պատմէ : Մովսէս լեռնէն իջաւ, Իսրայելացիքը ժողովեց ու Աստուծոյ կամքն անոնց յայտնեց : Երբ որ անոնք հաւանեցան, ինք նորէն լեռն ելաւ՝ ժողովրդեան հաւանութիւնն Աստուծոյ իմացընելու : Ան ատեն Աստուած հրամայեց որ Նոյն օրն ու երկրորդ օրը ժողովուրդը պատրաստուի, զգեստնին լուան եւ ամէն բաներնին մաքուր՝ երրորդ օրուան պատրաստ կենան : Եւ ժողովրդեան առջեւն առ լերան վրայ պիտ'որ իջնամ, բառ . լերան բոլորտիքը սահման որոշէ, որ անկէ ասդին չանցնին ու լերան վրայ չելլեն, ելլողը

կը մեռնի : Փողերուն հնչուած ասենը՝ թող լերան ստորը գան :

Ջ . Երբորդ օրը լուսըննալուն պէս՝ մէկէն փայլատակել մը տեսնուեցաւ , որոտալու ձայն մը փրթաւ ու միգախառն ամպ մը լեռք պատելով՝ փողերուն ձայնն սկսաւ դալ : Ան ասեն Մովսէս ժողովուրդը լերան ստորը տարաւ . Աստուած ալ սկսաւ աս տասնարանեայ պատուէրներն ըսել :

Ա . Էս եմ քու Տէրդ եւ Աստուածդ , զքեզ Էզրիպտոսէն՝ ծառայութեան տնէն ես հանեցի . Ինծմէ ուրիշ Աստուած մի պաշտեր , ինչ եւ իցէ կուռք մի պաշտեր :

Բ . Աստուծոյ՝ քու տիրոջդ անունը պարապ տեղ բերանդ մ՝ առնուր :

Գ . Շարաթ օրերը սուրբ բռնէ . վեց օր գործքի օր է , նոյն օրերն ամէն գործքդ գործէ լմնցուր . Եօթներորդ օրը Շարաթն՝ Աստուծոյ նուիրեալ օր է , նոյն օրը ամենեւին մի գործեր , ո՛չ դուն , ո՛չ որդիքդ , ո՛չ աղջիկդ , ո՛չ ծառայ , ո՛չ աղախինդ , ո՛չ անասունդ , ո՛չ ալ եկդ կամ պանդուխտդ :

Դ . Հայրդ մայրդ պատուէ , որպէս զի բանդ գործքդ յաջողի ու երկայնակեաց ըլլաս :

Ե . Մի սպանաներ :

Զ . Մի շնար :

Է . Մի գողանար :

Ը . Եղբորդ դէմ սուտ մի վկայեր :

Թ . Ընկերիդ կնոջը մի ցանկար :

Ժ . Ընկերիդ տան եւ անոր ամէն ունեցած բաներուն աչք մի տնկեր :

Յ . Ժողովուրդն ան սոսկալի տեսարանէն

Եւ Աստուծոյ ձայնէն զարհուրած՝ Մովսիսին  
 աղաչեցին որ ասկէ ետեւ ինք հետերնին խօսի,  
 Աստուած չխօսի, Չըլայ թէ մեռնինք, կը-  
 սէին: Մովսէս զանոնք քաջալերեց. Մի վախ-  
 նաք, բաւ, Աստուած աս բանս բաւ, որպէս  
 զի իր վախը սրտերնիդ մանելով՝ չյանդզնիք  
 անոր դէմ՝ մեղանշելու: Էւ ժողովուրդն իր  
 տեղը խրկելէն ետեւ՝ ինք նորէն լեռն էլաւ,  
 Աստուծմէ Իսրայելացւոց համար՝ Աւետեաց  
 երկիրը պահուելու օրէնքներ բնդունեցաւ, ո-  
 բոնք ուրիշ բան չէին, բայց էթէ տասնարա-  
 նեայ պատուէրներուն մեկնութիւնը: Մովսէս  
 լեռնէն իջաւ. Իսրայելացիքը կանչեց, ան օ-  
 րէնքներն առջեւնին դրաւ ու զիր անցուց եւ  
 զանոնք պահելու իրենցմէ հաստատուն խօսք  
 առնելով՝ երկրորդ օրը նոյն լեռան ոտքը սե-  
 զան շինեց եւ Իսրայելացւոց ցեղերուն թուա-  
 վը տասուերկու քար անկեց, Աստուծոյ դա-  
 շինքը (իւր օրէնքները պահելու պայմանաւ Իս-  
 րայելացւոց բրած խոստումները) հանդիսու-  
 թեամբ հաստատելու ձեռք զարկաւ: Նախ սե-  
 զանին վրայ ողջակէզ ու զոհ մատոյց. եւ զոհ  
 եղած կենդանւոյն արեան կէսը սեղանին առ-  
 ջելը թափեց, մեկալ կէսն ալ բաժակի մէջ  
 առաւ. ետքը դրած օրէնքներն առջեւնին կար-  
 դաց եւ անոնք պահելու երկրորդ անգամ  
 բերներնէն խօսք առնելով՝ բաժակին մէջի  
 արիւնէն ժողովրդեան վրայ սրկեց: Մովսէս  
 դարձեալ Աստուծմէ կանչուելով՝ Յեսուա  
 հետ լեռը գնաց: Այց օր լեռան վարի դին  
 Յեսուայ հետ կենալէն ետեւ՝ ալ յառաջ  
 կանչուելով՝ Յեսուն թողուց, լեռան գլուխը

զնայ եւ հոն 40 օր 40 գիշեր կեցաւ : Նոյն օրերն Աստուած իրեն համար հաստատել տալու սուրբ պաշտամանց կարգը, եւ վկայութեան խորանին, տապանակին, առաջաւորաց հացին, ողջակիզի ու խնկոց սեղաններուն ինչպէս շինուելիքն, Ահարոնին եւ իր որդւոցն ինչպէս քահանայութեան նուիրուելիքն, անոնց հազուստին ինչ կերպով ըլլալէրը Մովսիսին սորվեցուց : Աւ տասնաբանեայ պատուիրաններն երկու քարեղէն տախտակի վրայ իր ձեռքովը գրած տուաւ :

4. Իսկ ժողովուրդն աս միջոցիս՝ Աստուծոյ պատուէրները պահելու խոստումը մտնարով՝ Ահարոնին գլուխը թափեցան, ըսելով որ Մովսիսին ինչ եղաւ՝ չենք գիտեր . Աստուած մը չինէ, որ մեզի առաջնորդութիւն ընէ : Ասան զի միշտ կը բաղձային որ օր մը յառաջ իրենց խոստացուած երկիրը մտնեն : Ահարոն իրենց կամօցը զիջաւ . կանանց եւ աղջրկանց ականջի ոսկիէ գինդերը բերել տուաւ, անոնցմէ ոսկի հորթ մը ձուլեց . ժողովուրդն ալ ուրախացած՝ կանչեց . Ահա ասիկ զքեզ Էգիպտոսէն հանող Աստուածը, Իսրայէլ : Ահարոն հորթին առջեւ սեղան շինեց ու հրատարակեց որ երկրորդ օրը տօնը պիտի կատարուի : Աստու կանուխ անոր զոհ մատոյց, ժողովուրդն ալ կերաւ խմեց ու խաղալու ելաւ<sup>1</sup> :

<sup>1</sup> Կրնայ ըլլալ որ Ահարոն աս բանս բարի մտօք բրած ըլլայ, ցուցընելու համար որ կոչոյ վոչ ունեցած հեթանոսական համարումներն՝ սնտակ բան է, վասն զի պաշտած կուսքերնին Աւետեաց երկիրն երթալու իրենց շառաջնորդեց : Բայց Ս . Գերբ՝ Ահարոն ժողովրդեան մեղաց պատճառ եղաւ, կ'ըսէ :

**5.** Աս բանիս համար Աստուած վրանին արտաքոյ կարգի բարկացաւ, եւ եթէ Մովսէս ազաշելու չըլար, զանոնք բոլոր կը ջնջէր: Բայց իրեն զիջանելով՝ խրկեց որ երթայ իր բարկութիւնը ժողովրդեան յայտնէ: Մովսէս երկու քարեղէն տախտակները ձեռքը՝ Յետուայ հետ լեռնէն իջաւ: Բանակ մտաիկցած ատեննին՝ Յետու ժողովրդեան ազազակը լսելով՝ դարձաւ Մովսիսին ըսաւ. Բանակէն պատերազմելու ձայն կու գայ: Մովսէս պատասխանեց. Ասիկա քաջ պատերազմողներու ձայն չէ. ես զինովներու ձայն կ'առնեմ: Յառաջ դացին ու բանակին մտաւ երթալով՝ Մովսէս հորթն ու պարելնին որ տեսաւ՝ բարկացաւ երկու քարեղէն տախտակները լերան օտքը ձգեց կտարեց: Քովերնին հասնելուն պէս՝ կռապաշտութիւնն իրենց արհամարհելի ու ծաղրական բան ընելու համար՝ բռնեց հորթն այրեց, խարտոցեց ու փռին ջրի մէջ խառնած՝ ժողովրդեան խմուց: Ահարոնին ալ հարցուց թէ ժողովուրդը քեզի ինչ ըրած էր, որ անոնց մեծ մեղացը գործակից եղար: Ան ալ՝ Մի բարկանար, ըսաւ, ասոնց ինչպէս յանդուգն ժողովուրդ ըլլալը զիտես: Մովսէս բանակին դուռը կեցած՝ Աստուծոյ կողմն ըլլողը քովը կանչեց: Շուտ մը Ղեւեպցեղը քովը ժողովեցաւ: Մովսէս Աստուծոյ կողմանէ անոնց ըսաւ որ սրերնին քաշեն բանակ մտնեն, եղբօր, մերձաւորի եւ ընկերի շինայեն, ամէնքը թրէ անցրեն: Հրամանն ի գործ դրուելով՝ նոյն օրը 3000 հոգւոյ չափ մեռացին: Արկրորդ օրը Մովսէս ժողովրդեան ըսաւ. Մեղքերնիդ մեծ

է, ուստի նորէն լեռ ելլեմ՝ Աստուծոյ աղա-  
 շեմ, կարելի է թողութիւն կու տայ: Աստու-  
 ծոյ աղաչելու ատեն կ'ըսէր որ Եթէ անոնց  
 մեղքը չես թողուր, զիս ալ դպրութենէն  
 հանէ: Աստուած աս առաջարկութիւնը մեր-  
 ժեց. Անանկ չէ, ըսաւ, այլ ինձի դէմ մե-  
 ղանչոզը մինակ դպրութենէն (իմ բարեկամնե-  
 րուս կարգէն) կը հանեմ: Գուն ժողովրդեան  
 առաջնորդութիւն ըրէ, եւ անոնց խոստացած  
 երկիրս տար: Ա՛լ ես չեմ ուզեր իբրեւ թա-  
 գաւոր մէջերնին ըլլալ, վասն զի խոստապարա-  
 նոց ազգ մըն են, չըլլայ թէ կէս ճամբան զա-  
 մէկքը ջարդեմ լմընցընեմ. բայց իմ հրեշտակս  
 առջեւէդ կը խրկեմ: Ժողովուրդն ասանկ  
 զարհուրելի խօսքեր լսելով՝ ըրածին վրայ զըզ-  
 ջաց եւ սուգ բռնեց: Մովսէս ալ՝ Աստուծոյ  
 իբրեւ թագաւոր մէջերնին չըլլալուն նշան՝ իր  
 խորանն առաւ բանակէն դուրս տեղ մը դրաւ,  
 ուր ժողովուրդը հարցընելու բան մ'ունեցած  
 ատեն՝ կ'երթար ու Մովսէս մէջը մտնելով՝  
 ամպէ սիւնը խորանին դրան առջեւը կ'իջնար  
 եւ Աստուած Մովսիսին հետ կը խօսէր: Բայց  
 Մովսէս ըրաւ չըրաւ զԱստուած հաշտեցուց  
 եւ առաջուան պէս՝ հետերնին ըլլալուն խօսք  
 առաւ: Ետքը նաեւ Աստուծմէ խնդրեց որ  
 զինքը մէյ մը տեսնէ: Աստուած անիկա քարի  
 մը ձերպի առջեւ դրաւ, եւ այնպէս միայն իր  
 փառքը ցուցուց:

6. Մովսէս դարձեալ Աստուծմէ հրաման  
 առաւ որ կտորած երկու քարեղէն տախտակ-  
 ներուն նման՝ ուրիշ երկու տախտակ շինէ,  
 տասը պատուիրանները վրան գրելու համար,

Եւ անոնք առնէ Սինա լեռը զայ: Հուա մը  
 հրամանը կատարեց ու նորէն 40 օր 40 գիշեր  
 առանց ուտելու խմելու հոն կենալէն ետեւ՝  
 երեսը փառաւորուած՝ լեռնէն իջաւ. բայց  
 ինք ամենեւին չէր գիտեր: Իսկ Ահարոն ու  
 ժողովուրդն անոր երեսին փառաւորութիւնը  
 տեսնելով՝ քովն երթալու չէին համարձակեր:  
 Մովսէս զանոնք քովը կանչեց եւ Աստուծոյ  
 ըսածներն առ ջեւնին գնելէն ետեւ՝ իմանա-  
 լով որ ժողովուրդն երեսին փառաւորութեան  
 համար իրմէ կը խորշի, քողով երեսը ծածկեց  
 եւ միայն Աստուծոյ առջեւ ելած աստէն վար  
 կ'առնէր:

7. Իսրայելացիք աս անապատին մէջ եղած  
 ատեննին, Յոթոր՝ Մովսիսի աներն, անոր կինն  
 ու երկու զաւկրներն առած՝ այցելութեան ե-  
 կաւ: Մովսէս զինքը զիմաւորեց առաւ բանակ  
 բերաւ, եւ Աստուծոյ՝ Էզրիպտոս ըրածները,  
 նոյնպէս իրենց ճամբայ ելլելէն ետեւ գլուխ-  
 նէն անցածները կարգաւ պատմեց: Ան ալ  
 աս բաներուս համար Աստուծոյ փառք տուաւ  
 ու զոհ մատոյց: Էտքը Մովսէս աներոջն ի-  
 մաստուն խորհրդեան համաձայն՝ ժողովրդեան  
 մէջէն հազարապետներ, հարիւրապետներ, յիս-  
 նապետներ ու տասնապետներ ընտրեց, ժո-  
 ղովրդեան փոքր դատերը քննելն ու հոգալն  
 անոնց յանձնեց: Ինք անկէ ետեւ մինակ մեծ  
 ինդիրներու մէջ կը մտնէր, որով եւ ընտր քիչ  
 մը թեթեւցաւ:

Իւր-յիւշ-ոց-ոց -ո-րք -պ-ռն-ի-րը, +հ-ն-յի-ց -պ-լ-  
 ք-ռն -ու- ե-ր-ի- + ի-լ-ի-ո-ո-ր ք-ռն-ի-րը :

Աստուած լերան վրայ Մովսիսին ըսած էր որ Իւրարանչիւր որ սսկի, արծաթ, ծիրանի, ազնիւ քարեր եւ ասոնց նման ուրիշ ինչ որ կ'ուզէ նե՛ ընծայ բերէ : Մովսէս ժողովրդեան բերածը մէկ ըրաւ՝ Բեսեւիէւլին ու Եղիարին, եւ աս բանիս համար որոշուած ուրիշ մարդիկնեւրուն յանձնեց, որպէս զի Ակայութեան խորանը, Տապանակն եւ ուրիշ սուրբ սպասները շինեն :

Ակայութեան խորանը՝ անփուտ սսկեպատ փայտէ շինուած վրան մըն էր, ու երկու մաս կը բաժնուէր. մէկը Սրբութիւն կ'ըսուէր, ուր որ ամենէն յառաջ կը մտցուէր, մէկաւր՝ Սրբութիւն Սրբութեանց որն որ վարագոյրներու մէջ էր : Ակայութեան խորանին բոլորաթիւն՝ անփուտ փայտի սիւներէ կախուած վարագոյրներով զոց սրահ մը կար, որուն մէջն էր պղնձէպատ ողջակիզի սեղանը՝ Ակայութեան խորանին դրան շխարհութեամբ, որուն վրայ զո՛հ Ըլլալու կենդանւոյն միսն ու ճարպը կ'այրէր : Աս սեղանին ու Ակայութեան խորանին մէջտեղը՝ պղնձէ աւազան մը կար, որուն մէջ քահանայք՝ պաշտամունքը շսկսած՝ կը լուացուէին :

Սրբութիւն ըսուած մասին մէջ, մէկ կողմն եօթը ճրագարանով զուտ սսկիէ աշտանակ մը կար. իսկ մէկաւ կողմն՝ անփուտ փայտէ սսկեպատ սեղան մը, որուն վրայ ամեն շարաթ տասուերկու նոր եփած հաց կը դրուէր, որոնք առաջաւորաց հաց կ'ըսուէին : Մէջտեղը դէպ ի Տապանակին դիմացը՝ սսկեպատ անփուտ փայտէ շինուած խնկոց սեղանը կար, որուն վրայ ամեն օր առու իրիկուն ազնիւ խնկեր կը նուիրուէր : Սրբութիւն Սրբութեանց ըսուած մասին մէջ անփուտ փայտէ շինուած՝ ներսէն դրսէն սսկեպատ՝ ուխտի կտակարանաց Տապանակը



կար, որն որ լայն սնաուկ մըն էր, իսկ կափա-  
րիշն՝ որ քաւութիւն կ'ըսուէր, զուտ սսկի էր.  
Աստուած ասոր վրայէն իր կամքը կը յայտնէր:  
Քաւութեան վրայ երկու սկեղէն քերովքէ կար,  
որոնք շիմացէ շիմաց կեցած՝ իրենց թեւովը  
Քաւութիւնը կը ծածկէին: Իսկ Տապանակին  
մէջն օրինաց տախտակներն ու սափորով մա-  
նանայ կար:

Ասոնք եւ ուրիշ զոհ մատուցանելու համար  
հարկուոր եղած կահքը շինուելէն լմբննալէն  
եաեւ՝ Մովսէս Աստուծոյ հրամանին համաձայն՝  
զանոնք օծութեան իւզով օծեց ու Աստուծոյ  
նուիրեց: Նոյն ատեն ամպէ սիւնը Ակայութեան  
խորանն ինջուաւ եւ անտեղն Աստուծոյ փառքովը  
լեցուեցաւ, անոր համար Մովսէս մէջը շէր  
կրնար մտնել: Աս ժամանակէն սկսեալ՝ միշտ  
ցորեկն ամպէ ու գիշերը հրեղէն սիւնը Ակայու-  
թեան խորանին վրայ կը կենար. ժողովուրդն  
ալ բանակնին աս խորանին բոլորախըն անանկ  
կը դնէին, որ իրենց բնակութեան մէջէն ամպէ  
սիւնը կը տեսնէին եւ անոր առաջնորդութեան  
կը հետեւէին:

Մովսէս ժողովուրդը նոյն խորանին գուռը  
ժողվեց, Ահարոնն ու իր որդիքն առջեւը բե-  
րել տուաւ եւ ոտուրնին լուաց: Ահարոնին՝  
քահանայապետական զգեստներ հագցուց, օ-  
ծութեան իւղէն գլուխը թափելով՝ զինքը քա-  
հանայապետ օծեց ու գլուխը՝ քահանայապե-  
տական խոյր գրաւ: Խոյրին ճակարը՝ զուտ սսկի  
թիթեղի վրայ ՍԷԲ--ԻԷ--Ն ՏԷ--Ն բառերը քան-  
դակուած էին: Նոյնպէս Ահարոնին որդւոցը՝  
քահանայական զգեստներ հագցուց եւ օծու-  
թեան իւզով զիրենք ալ օծեց: Նոյն ատեն  
Ահարոն առջի անգամ ողջակէզ մատայց եւ  
ժողովուրդն օրհնեց, երկնքէն ալ կրակ իջնա-  
լով ողջակէզը լափեց լմբնցուց ու ժողովուրդն  
երեսի վրայ ինկած՝ Աստուծոյ փառք տուաւ:  
Աս ամէն հանդէսներն եօթն օր տեւեցին: Քա-

Հանայութեան պաշտօնը Ղեւեպ ցեղէն Ահարոնի տան կամ որդւոցը ժառանգութիւն արուեցաւ . իսկ նոյն ցեղին ուրիշ աներն՝ անոնց օգնական եղան ու Ղեւեպի կ'ըսուէին :

Քահանայից պաշտօնն ընդհանրապէս ասոնք են . ժողովրդեան համար աղօթել , օրէնքներն անոնց մեկնել , զոհ մատուցանել , Աստուծոյ պաշտաման վերաբերած բաները հոգալ : Իսկ իրենց օրըստօրական գործքը՝ Ահայութեան խորանին մէջ՝ էր կանթեղներուն եղը հոգալ , Ողջակիզաց սեղանին սուրբ հուրը վառած պահել , ամէն օր աստու իրիկուն Սրբութեան մէջ անոյշ խունկ վառել , սրահին մէջ ամէն օր աստու իրիկուն գառն պատարապել :

Ասոնց ու Ղեւեպացւոց կենաց պահպանութեան համար , տասուերկու ցեղերը տարե տարի տասանորդ կու տային . բաց ասկէ՝ շատ պատարապներէ իրենց մաս կ'ելլէր :

Արը յիշուած պատարապներէն զատ՝ զանազան պարագաներու մէջ ու ասնի օրերն ուրիշ պատարապներ կը մատչէին , եւ բաց ասկէ՝ ուրիշ կամայական պատարապներ ալ կային : Ասոնց ամենուն ալ նիւթը ժողովուրդը կը բերէր , որոնք էին զլխաւորարար գառն , ոչխար ու հորթ : Ասոնք եւ ասոնց նման ուրիշ կենդանիներն՝ որոնք Աստուած որոշած էր ու սուրբ կ'ըսուէին , (զանազանելու համար ուրիշ դուրս մնացածներէն որոնք անսուրբ կամ սխալ կը կոչուէին ,) ամենեւին պակտութիւն մը պիտի չունենային : Պատարապին նիւթը բերողը Ահայութեան խորանին առջեւը քահանային կը տանէր , ան ալ ձեռքը կենդանւոյն զլուխը դնելէն ետեւ՝ կենդանին հոն կը կտրուէր . արիւնը քահանայք կ'առնէին սեղանին առջեւը կը թափէին . եւ ըլլալու պատարապին կերպին համաձայն կամ ամբողջ կամ մէկ մասը կ'այրէին :

Պատարապներն առհասարակ չորս տեսակի կրնան ամփոփուիլ : Առաջինն Ողջակիզի կամ

Երկրպագութեան, որով՝ մէկալ պատարագնե-  
րուն հասարակ վախճանէն զատ՝ նաեւ Աստու-  
ծոյ երկրպագութիւն կ'ըլլար եւ նիւթը բոլոր  
կ'այրէր: Երկրորդը խնդրուածոյ կամ Գոհու-  
թեան, որ երկու վախճանաւ կը մատչէր, մէյ  
մը ընդունուած բարիքին գոհանալու, մէյ մ'ալ  
ուրիշ նոր բարիք խնդրելու համար: Երրորդ՝  
երրոր աս երկու վախճանին համար մէկէն մա-  
տուցուելու ըլլար, Խաղաղական կ'ըսուէր: Աս  
երկու տեսակ պատարագներուն նիւթին մինակ  
ճարպն ու երիկամունքը կ'այրէր. կուրծքն եւ  
աջ ուսը՝ քահանայից, իսկ մնացածը պատա-  
րագը մատուցանել տուողինն էր: Զորրորդը՝  
Քաւութեան, որն որ մեղաց քաւութեան հա-  
մար կը մատուցուէր, անոր միւր քահանայից  
կը տրուէր, որոնք սրահին մէջ կ'ուտէին. իսկ  
պատարագը մատուցանել տուողին՝ ասկէ մաս  
շէր ելլեր:

Աստուած ըսած էր որ շարաթ օրերէն եւ ա-  
մէն ամսոյն առաջին օրը կատարուելու տօնե-  
րէն զատ՝ տարւոյն մէջ երեք մեծ տօն ալ կա-  
տարեն, Զատիկի, Պենտեկոստէի ու Տաղաւա-  
րահարաց: Առաջինն Իսրայելացւոց Եզիպտոսէն  
ելլելուն յիշատակին համար էր, որն որ սատա-  
կիչ հրեշտակին Իսրայելացւոց դրան վրայի ա-  
րիւնը տեսնելով զիբենք թող տալ անցնելուն  
համար՝ Պասեք (անցք) ու հայերէն՝ Զատիկ  
կ'ըսուի: Նաեւ Բաղարջակերաց կամ Անխմորից  
տօն ալ կ'ըսուի, որովհետեւ նոյն տօնին օրե-  
րը՝ միայն շխմօրած հաց պիտի ուտէին: Պեն-  
տեկոստէինը՝ Զատիկէն 50 օր ետքը կու դարեւ  
Աստուծոյ տուած օրինաց յիշատակին համար էր,  
որոնք Եզիպտոսէն ելլելէն 50 օր ետքն ընդու-  
նեցան: Տաղաւարահարացը՝ Իսրայելացւոց ա-  
նապատի մէջ ճամբորդութիւն ընելուն յիշա-  
տակին համար էր, եւ եօթն օր կը տեւէր. նոյն  
օրերն՝ ամէնքը (Աւետեաց երկիրը) վրանի տակ  
կը կենային: Աս երեք մեծ տօնի օրերը՝ Իսրայել-

Լացւոց էրիկ մարդիկը Վկայութեան խորանը  
 (կամ Տաճարը) պիտի ժողվէին : Չեռքերնին պա-  
 րապ շէին կրնար երթալ, այլ ամէն մարդ՝ իր  
 վիճակին համեմատ՝ Աստուծոյ պատարագ մը  
 պիտի տանէր : Տաղաւարահարաց տօնէն հինգ  
 օր յառաջ՝ Քաւութեան տօնը կու գար . ա-  
 մէնքը նոյն տօնին ապաշխարելու էին : Քահա-  
 նայապետը բոլոր տարւոյն մէջ միայն աս տօ-  
 նին՝ առանձին Սրբութիւն Սրբութեանց կը  
 մտնէր, Աստուծակ՝ ժողովրդեան մեղաց թողու-  
 թիւն առնելու համար : Բայց ներս չմտած՝ Աս-  
 տուծոյ հորթ մը կը պատարագէր, ետքը մէկ  
 ձեռքն անոր արիւնը, մէկալ ձեռքը վառած  
 բուրվառ՝ ներս կը մտնէր, եւ արիւնէն զէպ ի  
 Քաւութիւն եօթն անգամ կը սրսկէր : Անկից  
 շուրս կ'ելէր ժողովրդէն երկու նոխազ կ'առ-  
 նէր, վրանին վիճակ կը ձգէր, վիճակն որուն  
 կ'ելէր նէ՝ ան ժողովրդեան համար քաւութեան  
 պատարագ կը մատուցանէր, եւ արիւնը զէպ ի  
 Քաւութիւն կը սրսկէր, բոլոր Վկայութեան խո-  
 րանն ու սեղանն ալ անով կը սրբէր : Մէկալ  
 նոխազը Վկայութեան խորանին առջեւը քահա-  
 նայապետին կը տարուէր, որն որ ձեռքը կեն-  
 ղանւոյն զլուխը գրած՝ ժողովրդեան մեղքն ա-  
 նոր զլուխը կը բաղձար . ետքը կենդանին կ'առ-  
 նէին անապատ կը տանէին ու կը թողուին :

Ի Ա . Կ Ա Ս

1. Նարադ եւ Աբիուդ ով են . ինչու Աստուած պատ-  
 ժուեցան : — 2. Հոյհոյիները քարկածելու օրէնքն ինչ  
 առթով տրուեցաւ : — 3. Հրոյրեաց ինչու բուեցաւ :  
 Խառնիճադանձին միս ուտելու բարձանքն Աստուած ին-  
 չով պատժեց : — 4. Մարիամ եւ Ահարոն՝ զՄովսէս  
 ինչու բամբասեցին . վերջը ինչ եղաւ : — 5. Մովսէս  
 Փառանու անապատն ինչ բրաւ . ժողովուրդը քառասուն  
 տարի անապատի մէջ թափառելու ինչու դատապարտուե-  
 ցաւ : — 6. Արիւ , Ղաթան եւ Աբիւրոն ինչ բրին եւ ինչ  
 վերջ ունեցան :

1. Ահարոն եւ իր օրդիքը քահանայու-  
 թեան նուիրուելէն ութ օր ետեւ՝ Աստուած  
 սուկայի օրինակաւ մը ցուցուց թէ իր պաշ-  
 տաման մէջ եղած փոքր մէկ զանցառութիւնն  
 ալ որչափ մեծ յանցանք է : Ահարոնին երի-  
 ցադոյն օրդիքը՝ Նարադ եւ Աբիուդ՝ բուր-  
 վառներնուն մէջ օտար հուր դրին , ուր որ  
 սղջակիցի սեղանին սուրբ կրակէն զատ կրակ  
 պիտի չգործածէին : Մէյ մ'ալ մէկէն հուր  
 բորբոքելով , (կարելի է ամպէ սիւնէն շանթ  
 արձակելէն ըլլայ .) ան երկուքն անշնչացուց :  
 Մովսէս անոնց մարմինը բանակէն դուրս հա-  
 նել տուաւ եւ պատուիրեց որ ամէնքը վրանին  
 սուգ բանեն : Աստուած ալ Ահարոնին բրաւ  
 որ թէ ինք եւ թէ օրդիքն ու իրենց յաջորդ-  
 ները Ակայութեան խորանը մտած ատեննին՝  
 զինի եւ օղի չխմեն , որպէս զի կարող ըլլան  
 սուրբն անսուրբէն , պատշաճն անպատշա-  
 ճէն զանազանել եւ օրէնքներն Խորայելացւոց  
 խնայրնել : Ասկէ կը հետեւի որ Նարադ եւ  
 Աբիուդ զինով ըլլայնուն՝ սուրբն անսուրբէն

չկրնալով որոշել՝ բուրվառներնուն մէջ օտար հուր դրած ըլլան :

**2.** Անգամ մը տղայ մը՝ որուն մայրը Գանայ ցեղէն՝ Իսրայելացի էր, իսկ հայրն Եգիպտացի, բանակին մէջ Իսրայելացւոյ մը հետ կռուելու ատեն՝ Աստուծոյ անունը հայհոյելով՝ բռնուեցաւ, Մովսիսին առջևը բերուեցաւ : Մովսէս զինքը բանտարկել տուաւ մինչև որ Աստուծոյ հարցընէ ու պատասխան առնէ : Աստուած հրամայեց որ զանիկա բանակէն դուրս հանեն եւ իր հայհոյութիւնը լսողներն՝ ըրած յանցանքին վկայ ըլլալնուն նշան՝ ձեռքերնին գլուխը դնեն ու ժողովուրդը զանիկա քարկոծէ : Աստուած աս առթով հայհոյիչները քարկոծելու օրէնքը տուաւ :

**3.** Իսրայելացւոց Եգիպտոսէն ելլելուն երկրորդ տարւոյն սկիզբն՝ Աստուծոյ հրամանաւը ժողովուրդը 13 ցեղի՝ ու զանազան զնդերու բաժնուեցան եւ առաջին անգամ համրուեցան : Տասուերկու ցեղին մէջէն՝ 603,550 հոգի պատերազմող էլաւ . իսկ տասուիրեքերորդ՝ Ղեւեայ ցեղէն 22,300 հոգի աստուածային պաշտաման ծառայող մարդ էլաւ : Աս ետքիններն երեք զունդ բաժնուեցան, եւ Աստուծոյ պաշտաման վերաբերեալ մէյմէկ գործք

<sup>1</sup> Մովսրաբար՝ Ղեւեայ ցեղը դուրս ձգելով՝ Յակոբոց տասը եւ Յովսեփոց երկու որդւոցն առնուամբ՝ 12 ցեղ կը յիշատակուի : Ինչու որ Ղեւեայ ցեղն՝ իրեն յանձնուած Աստուածային ծառայութեան պատճառաւ՝ մկալներէն իրրեւ զատ կը մտածուի, ասոր համար նաեւ Քանանացւոց երկիրը ժառանգելու ատեն՝ անոնց առանձին տեղ շարուեցաւ :

ընդունեցան: Ետքը Աստուծոյ հրամանին համաձայն՝ տարւոյն առաջին ամիսը Չատկի տունը կատարելէն ետեւ՝ դէպ ի հիւսիս՝ Փառանու անապատը ճամբայ ելան: Երեք օր քալելով յոգնեցան եւ Աստուծոյ դէմ՝ արտնջեցին: Աստուած ալ (ամպէ սիւնէն) հուր բորբոքելով՝ բանակին մէկ մասն այրեց: Ասոր վրայ ժողովուրդը Մովսիսին դիմեց, ան ալ՝ Աստուծոյ: Իսկ Աստուած անոր աղաչանքին համար կրակը մարեց: Մովսէս նոյն ակզը Հրայրեաց անուանեց:

Բայց աս զարհուրելի պատուհասն ալ անոնց աչքը վախցընելու բաւական չեղաւ: Խառնիճաղանճը միս ուտելու սաստիկ բաղձանք ունենալով՝ Մեղի ուտելու միս ո՛վ պիտի տայ, կ'ըսէին. Եզրիպտոս կերած ձկերնիս, սեխերնիս ու սոխը սխտորը մտրերնիս կու գայ. հոս մանանայէն ուրիշ բան տեսած չունինք: Մովսէս Աստուծոյ դիմելով՝ ըսաւ. Այսչափ բազմութեան՝ միս ես ուստի գտնեմ. ես առանձին այսչափ բազմութիւնը չեմ կրնար նայիլ: Աստուած անոր պատուիրեց որ Իսրայելացւոց ծերերէն 70 հոգի առնէ Ակայութեան խորանը տանի: Քու հոգիէդ անոնց ալ կու տամ, ըսաւ. որպէս զի քեզի օգնեն ու բեռդ թեթեւցընեն: Ժողովրդեան ալ զրուցէ որ վաղը միս պիտի՛որ ուտեն եւ չէ թէ մէկ երկու օր, այլ ամբողջ ամիս մը, մինչեւ որ քթերնէն բերներնէն դալով՝ տրտունջներնուն պատիժը գտնեն: Մովսէս ասոնք ժողովըրդեան իմացուց: Աստուած ամպէ սիւնով իջաւ, Մովսիսին ընտրած ծերերուն խոստացած

պարգեւները տուաւ : Աս բլլայէն ետեւ՝ Աստուած հով մը հանեց ու ծովէն բանակին չորս կողմն այնչափ լորամարդի բերաւ դիզեց, որ մէկ օրուան հետաւորութեամբ գետնէն կանգնոյ չափ բարձրացած էին : Իսրայելացիք ամբողջ օր մը ժողովելով՝ ապխանցին ու կերան : Բայց գեռ միտը բերաննին էր՝ Աստուծոյ բարկութիւնը վրանին հասաւ, ծանր հարուածներ կրեցին, շատ մարդիկ հոն մեռան ու թաղուեցան. անոր համար տեղւոյն անունը՝ Գերեզման ցանկութեան ըսուեցաւ :

4. Անկէ Ասերովթ եկան, ուր Մարիամ գլուխ բլլալով՝ Ահարոնին հետ զՄոփսէս վար զարկաւ՝ անոր կնոջը Սեփոփրային համար, որն որ կ'երեւայ թէ անոնց առջեւ՝ իր երկանն Աստուծմէ ընդունած շնորհաց վրայ պարծած բլլայ : Անոնք կ'ըսէին թէ Աստուած մինակ իրեն հետ խօսեցաւ, մեզի հետ չխօսեցաւ : Աստուած՝ զԱհարոն եւ զՄարիամ Մոփսիսին հետ Ակայութեան խորանը կանչեց, զիրենք յանդիմանեց եւ Մոփսիսին առաւելութիւնը յայտնեց : Մարիամ նոյն ատեն բորոտեցաւ : Ահարոն Մոփսիսին աղաչեց որ տգիտութեամբ գործած մեղքերնուն համար չարաչար չպատժուին ու Մարիամ՝ բորոտութենէ ազատի : Ան ալ Մարիամին համար աղաչելով՝ Աստուած ըսաւ որ թող եօթը օր մը բանակէն դուրս ձգուի : Անոր պատճառաւ ժողովուրդն Ասերովթ եօթն օր մ'ալ կեցաւ :

5. Անկէ Փառանու անապատը հասան նէ՝ Մոփսէս Աստուծոյ հրամանաւը՝ Քանանացւոց երկիրը լրտեսելու համար Իսրայելացւոց



12 ցեղին մէջէն մկսէկ հոգի ընտրեց, իրկեց : Ասոնց մէջն էր Քաղէբ ու Ովսէա զորն որ Մովսէս Յետու (Յիսուս, Փրկիչ) անուանեց : Լրտեսները 40 օրէն դարձան՝ լրտեսած երկիրներուն պտուղներէն հետերնին առած, որոնց մէջ խաղողի խիստ խոշոր սղկոյլ մը կար : Թէպէտ եւ երկրին բերրիութիւնը գովեցին, բայց բնակչացը վրայ չափազանց խօսքեր ըսին : Հոն հսկաներու ցեղէն մարդիկ տեսանք, կ'ըսէին, որոնց քով մենք մարտիս չափ կ'երեւայինք : Թեթեւամիտ ժողովուրդն ասոնք լսելով՝ աչքերնին վախցաւ, սկսան լալ ու գանգատել, եւ կ'ուզէին իրենց զատ առաջնորդ ընտրելով՝ Եզրպտոս դառնալ : Յետու ու Քաղէբ կը ջանային զանոնք քաջալերել ու մտքերնին փոխել : Բայց ժողովուրդը զիրենք մտիկ չէր ըներ, մինչեւ կ'ուզէր քարկոծել : Երջն ատեն Աստուած Մովսիսին սպառնաց որ Իսրայելացիքը պիտի ջնջէ : Մովսէս անոնց համար թողութիւն ուզեց : Աստուած ալ ներեց, բայց պատիժ տուաւ որ ճամբորդութիւննին անապատի մէջ 40 տարի տեւէ, եւ երջն ատեն քսան տարւոնէ վեր ըլլողներէն մէկն սղջ չմնայ, որպէս զի Աւետեաց երկիրը չմտնեն : Մովսէս ասոնք ժողովուրդեան իմացուց, որով շատ տրտմեցան : Երկրորդ օրն եկան իրեն ըսին որ Հիմն պատրաստ ենք Աւետեաց երկիրն երթալու : Մովսէս՝ Աստուած հետերնիդ չէ, բսելով՝ իրենց դէմ կեցաւ : Անոնք մտիկ չըրին, ելան գացին : Բայց Ամովրացիք եւ ուրիշ ազգերը վրանին քալելով՝ զիրենք աղէկ մը ջարդեցին :

**6.** Անգամ մը անապատի մէջ մէկը գտան , որ շարաթ օրով փայտ կը ժողվէր , ու բըռնեցին Մովսիսին տարին : Ան ալ յանցաւորը բանտարկել տուաւ , ետքը Աստուծոյ խորհուրդ հարցուց եւ անոր հրամայելովն ան մարդը բանակէն դուրս քարկոծել տուաւ : Հեղ մ'ալ՝ մէկ մեծ ապստամբութիւն ելաւ , որուն գլխաւորներն էին Աորիս՝ Մովսիսին եւ Ահարոնին հօրեղբորորդին , Գաթան ու Արիւրոն երկու եղբարք , եւ Աւնան՝ Ռուբենի ցեղէն : Աորիս Ահարոնին կը նախանձէր՝ քահանայապետութիւնն ու քահանայութիւնն անոր տան սեպհականուելուն համար , մէկաշնոնք ալ Մովսիսին առաջնորդութեան վրայ : Ասոնք Ղեւեայ ցեղին գլխաւորներէն 250 հոգի հետերնին առած՝ Մովսիսին եւ Ահարոնին եկան ըսին որ Ա՛լ բաւական է , այսչափ ատեն վրանիս իշխեցիք . ժողովուրդը սուրբ է , Աստուած ալ՝ հետերնին , ինչո՞ւ զձեզ անոնցմէ վեր կը դասէք ու վրանին իշխանութիւն կը բանեցընէք : Մովսէս անոնց առջեւն երեսին վրայ ինկաւ , Աորիսայ եւ անոր քովիններուն ըսաւ . Ղեւեայ օրդիք , Աստուած ձեզի քիչ բարիք ըրաւ . զձեզ ժողովրդեան մէջէն ընտրեց՝ իր տաճարին սպասաւոր դրաւ : Աս բաւական չէ՞ , կ'ուզէք քահանայ ալ ըլլալ եւ Աստուծմէ ապստամբիլ : Ետքը ըսաւ որ Վաղը Աստուած կը յայտնէ որ քահանայական պաշտօնին զով կոչած է եւ զով չէ կոչած . բուրվառնիդ առէք եկէք եւ Ահարոնին հետ Աստուծոյ խունկ մատուցէք : Երկրորդ օրն ան 250 հոգին եկան : Մովսէս՝ Աստուծոյ կողմանէ ժողովրդեան պա-

տուիրեց որ իրենց վրանները կորխայ, Գաթանայ եւ Արիւոնի վրաններէն զատեն, որ չըլլայ թէ իրենք ալ անոնց հետ պատժուին: Եթէ անոնք հասարակ մահուամբ մեռնելու ըլլան, ըսաւ, զիտցէք որ Աստուած զիս խրկած չէ. իսկ եթէ գլուխնին անլուր բան մը՝ գայ, զոր օրինակ երկիրը պատուի, զիրենք ողջ ողջ կլլէ, ան ատեն զիտցէք որ ես Աստուծմէ խրկուած եմ եւ անոնք զԱստուած բարկացուցին: Աս ըսաւ շրտաւ՝ մէյ մ'ալ երկիրն է պատուեցաւ, կորիս առանձինն, Գաթան եւ Արիւոն իրենց բոլոր ընտանեօրն ու աղիւի՝ զետինն անցան: Ակայութեան խորանին առջեւն ալ հուր բորբոքելով՝ ան 250 հոգին սյրեց: Մովսէս Աստուծոյ հրամայելովն աս բանիս յիշատակին համար՝ անոնց պղնձէ բուրվառներէն լայն տախտակ շինել ու սեղանին վրայ հաստատել տուաւ:

Երկրորդ օրը ժողովուրդը Մովսիսին եւ Ահարոնին դէմ տրտնջեց. Գուք էիք, կ'ըսէին, Աստուծոյ ժողովուրդը մեռցընողը: Անոնք տեսնելով որ բանը գէշի կ'երթայ, Ակայութեան խորանն ապաւինեցան: Աստուած ժողովուրդն ուզեց բոլոր մեռցընել. անոնք ազաչեցին որ աս բանս չընէ: Բայց արդէն Աստուծոյ բարկութիւնն անոնց վրայ հասած ըլլալով՝ Մովսէս Ահարոնը խրկեց, որ բուրվառին մէջ սուրբ հուր գրած՝ ժողովրդեան մէջ մտնէ մեղքերնին քաւելու համար ինկէ: Ահարոն անանկ ըրաւ ու մահը դադրեցուց. բայց մինչեւ որ աս եղաւ՝ ժողովրդեան մէջէն 1700 հոգի մեռան: Ետքը Աստուած զԱհարոն

քահանայապետ ընտրած ու քահանայութիւնն անոր տան սեպհականած ըլլալն ուրիշ նշանով մ'ալ ցուցուց : Մովսիսին պատուիրեց որ տասուերկու ցեղի գլխաւորներուն գաւազանն առնէ եւ իւրաքանչիւր ցեղի գաւազանին վրայ նոյն ցեղի գլխաւորին անունը գրելով՝ Վկայութեան խորանը դնէ . Ես զով որ ընտրած եմ նէ , ըսաւ , անոր գաւազանը կը ծաղկեցընեմ : Պատուէրն ի գործ գրուեցաւ : Երկրորդ օրն Ահարոնին գաւազանը դալարեր , ծաղիկ բացեր եւ ընկոյզ էր տուեր : Մովսէս նոյն գաւազանը ժողովրդեան ցուցընելէն ետեւ՝ Աստուծոյ հրամանաւը Վկայութեան խորանին մէջ յիշատակի համար պահեց :

## Ի Բ . Գ Լ Ս

1 . Մարիամ ուր մեռաւ : Մովսէս եւ Ահարոն զԱստուած ինչ առթի մէջ վտառցուցին եւ ինչ պատիժ առին : — 2 . Եզովի թագաւորն իրենց անցք տուաւ թէ յէ : Ահարոն ուր մեռաւ : — 3 . Ըրտցադ թագաւորն իրենց ինչ ըրաւ եւ ինչ հատուցում ընդունեցաւ : Աստուած Իսրայելացոց վրայ ինչու օձ իրկեց . անոնց ձեռքէն ինչպէս ազատեցան : — 4 . Սեհոն եւ Ովդ թագաւորին երկիրներն ինչպէս առին եւ ով ժառանգեց : — 5 . Բազակ ով է . Բաղձամն ինչու կանչեց եւ ան ինչ ըրաւ : — 6 . Բազաամ Իսրայելացիքը կրցաւ անիծել : Մադիանացիք ինչպէս յազիմուեցան :

1 . Իսրայելացիք անապատի մէջ 40 տարի թափառելու պատիժ առնելէն 39 տարի ետեւ՝ վերջապէս Սին անապատը կաղէս եկան բանակեցան , ուր որ Մարիամ մեռաւ : Հոս ժողովուրդը ջրոյ պակասութեան համար Մով-

սխին եւ Ահարոնին դէմ՝ արանջեց : Անոնք  
 Վկայութեան խորանք դիմեցին, երեսի վրայ  
 ինկած՝ Աստուծոյ աղաչեցին որ ջուր տայ :  
 Աստուած իրենց հրամայեց որ ժողովուրդն  
 ապառաժ քարին քովը ժողվեն եւ Մովսէս  
 դաւազանն առած ան քարին հրամայէ որ ջուր  
 բխէ : Մովսէս ժողովուրդը քարին քով ժող-  
 վեց, իր եւ Ահարոնին կողմանէ երկմտելով մը՝  
 Չխ մտիկ բռէք, անհաւատներ, ըսաւ, ձեզի  
 աս քարէն ջուր պիտ'որ հանենք<sup>1</sup> : Աս ըսաւ  
 ու քարին երկու անգամ որ զարկաւ՝ քարը  
 պատռեցաւ եւ մէջէն ջուր սկսաւ վազել :  
 Մովսէս ու Ահարոն իրենց երկմտութեան պա-  
 տիժը գտան. Աստուած անոնց իմացուց որ  
 Աւետեաց երկիրը պիտի շմանեն : Եւ ան  
 ջրոյն անունը Բամբասանաց ջուր ըսուեցաւ :

Չ. Մովսէս Եզրովի թագաւորին հրեշտակ  
 խրկեց ու ըսաւ. թող տուր որ երկրիդ մէ-  
 ջէն անցնինք երթանք. անդերուդ եւ այդինե-  
 րուդ չենք գպչիր, ջրհորներէդ ջուր չենք խմեր,  
 խաչինքներնուս ալ չենք խմցրներ : Եզրովի թա-

<sup>1</sup> Աս բանիս մէջ երկուքն ալ պակեցան, չէ թէ  
 Աստուծոյ ամենակարողութեան վրայ տարակոչ-  
 ունենալով, ոչև միմայ երկմտելով որ արդեօք  
 Աստուած՝ զինքն այսչափ անգամ քարկայքնող ժո-  
 ղովորեան աս մեծ շորհքը կ'ընէ թէ չէ : Աս-  
 տուած ալ անոնց երկմտութեան համար քարին  
 երկու անգամ զարնելուն ջուր հանել տուաւ : Ա-  
 սանկ կ'ըսէ Ս. Օգոստինոս : Բայց ոմանք կ'ըսեն  
 թէ իրենց բուն անգատահաւթիւնը՝ նոյն իսկ աս  
 զարնելուն մէջ երեւցաւ. վասն զի Աստուծոյ հրա-  
 մանին նայելու ըլլանք՝ Մովսէս գաւազանը ձեռքն  
 առած պիտի հրամայէր եւ ոչ թէ անով պիտի  
 զարնէր :

գաւորը յանձն չառաւ եւ սպառնացաւ որ պատերազմի կ'ելլէ : Իսրայելացիք խնդրեցին որ գոնէ լեռներուն քովէն անցնին երթան եւ ջուր ալ խմելու բլան՝ զինք կը վճարեն : Բայց ինք աս ալ յանձն չառաւ ու զօրքով վրանին եկաւ : Իսրայելացիք փախան Հովր լեռն եկան : Հոն Աստուած Մովսիսի հրամայեց որ զԱհարոն եւ անոր Եղիազար որդին ան լեռան վրայ հանէ, Ահարոնի քահանայապետական զգեստներն անոր որդւոյն հագցընէ եւ այսպէս Ահարոնին տեղ՝ զԵղիազար դնէ, վասն զի Ահարոն պիտի մեռնի : Մովսէս Աստուծոյ հրամանը կատարեց . Ահարոն 123 տարւան՝ Հովր լեռան վրայ մեռաւ . բոլոր ժողովուրդն 30 օր վրան սուգ բռնեց :

**3.** Արագագ Քանանացւոց թագաւորն՝ Իսրայելացւոց իր երկիրները մօտիկնալը տեսնելով, զօրքով վրանին եկաւ եւ իրենցմէ շատ գերի բռնեց տարաւ : Անոնք ալ Աստուծոյ ուխտեցին որ եթէ թշնամին ձեռքերնին մատնելու բլայ, զամէնքը տնով տեղով ջնջեն : Աստուած բաներնին յաջողեց ու կրցան անոնց երկրին մէկ մասին վրայ ուխտերնին կատարել : Իսրայելացիք անկէ Աարաֆր ծովին մօտ տեղուանքը դառնալով՝ ճամբու աշխատութենէն յոգնած՝ սկսան Մովսիսի եւ Աստուծոյ դէմ տրտնջել . Չմեզ Եզրիպտոսէն հանեցիր հոս բերիք՝ որպէս զի մեռնինք, կ'ըսէին . հացերնիս ջրերնիս հատաւ, մանանայ ուտելն ալ ձանձրացանք : Աստուած իրենց բարկանալով՝ վրանին օձեր խրկեց, որոնք զիրենք խայթելով կը սպաննէին : Անոնք Մովսիսին

դիմեցին՝ որ օձերուն վերնալուն համար Աստուծոյ աղաչէ : Ան ատեն Աստուած Մովսիսի ապապրեց որ Պղնձէ օձ մը շինէ ու կանգնէ, եւ խոստացաւ որ անոր նայողն օձին խայթուածքէն կը բժշկուի : Մովսէս օձը կանգնեց. օձահարներն անոր նայելով՝ բայց ապաշխարութեամբ ու դալու Փրկչին հաւատարով՝ վերքերնէն կը բժշկուէին :

4. Իսրայելացիք Աարօր ծովին մօտերէն նորէն ետ դարձան, եւ հոս հոն հանդիպելով՝ վերջապէս Մովարացւոց երկրին սահմանները մեծ ձոր մը հասան, եւ սկսան Քանանացւոց երկրին արեւելեան կողմէն բոլոր երկրին կամաց կամաց տիրել : Մովսէս Ամովհրացւոց Աեհոն թագաւորին մարդ խրկեց, անոր երկրին մէջէն անցնելու համար հետը խօսիլ ուզեց. խոստանալով որ այգիներուն ու արտերուն մէջէն չ'անցնիր եւ աղբիւրներէն ջուր չ'իմեր. հապա մինակ արքունի ճամբէն կ'անցնի կ'երթայ : Բայց Աեհոն թող շտուաւ ու զօրք ժողոված՝ անոնց դէմ պատերազմի ելաւ : Իսրայելացիք անոնց յաղթեցին ու բոլոր երկիրը նուաճեցին : Անկէ Բասանու երկիրն անցան : Տեղւոյն Ովգ թագաւորը զօրք ժողոված՝ իրենց դէմ պատերազմի ելաւ : Աստուած իր ժողովուրդը քաջալերեց, զՈվգ եւ անոր ժողովուրդը ձեռքերնին տալ խոստացաւ : Իրօք՝ Իսրայելացիք զանոնք ջարդեցին ու երկիրնին ժառանգեցին : Պատերազմով առնուած աս երկու երկիրը բերրի եւ անասնոց յարմար ըլլալուն՝ Ռուբէնի ու Գադայ ցեղերն եւ Մանասէի կէս ցեղը խնդրեցին որ ան երկիրներն իրենց կա-

լուած արուի: Մովսէս հաւանեցաւ . բայց աս պայմանով որ մէջերնէն պատերազմիլ կրցողները մէկանոնց հետ Յորդանանէն անցնին Աւետեաց երկիրը ժառանգելու օգնեն:

**Տ** . Աս յաղթու թիւններէն ետեւ Իսրայէացիք՝ Մովսէսացւոց երկրին արեւմտեան գին եկան, Յորդանանին քով Երիբովին գիմացը բանակեցան: Բաղակ Մովսէսացւոց թագաւորն անոնցմէ վախնալով՝ Բաղաամին մարդ խաւրեց՝ որ գայ զիրենք անիծէ: Բաղաամ եկողները նոյն գիշեր քովը պահէց, ըսելով թէ Աստուած ինչ որ կ'ըսէ նէ՝ վաղը ըստ այնմ պատասխան կ'առնէք: Աստուած գիշերը Բաղաամին ապսպրեց որ հետերնին չերթայ եւ իր ժողովուրդը չանիծէ: Բաղաամ երկրորդ օրը պատգամաւորներուն պատասխան տուաւ որ Աստուած զիս չիթողուր, չեմ կրնար գալ: Բաղակ երկրորդ անգամ՝ աւելի պատուաւոր մարդիկ խրկեց եւ մեծ մեծ խտտումներ ըսաւ: Բաղաամ կեղծաւորութեամբ անոնց ըսաւ որ Բաղակ իր տունն սուկով եւ արծաթով լեցուն ինծի տալու ըլլայ, ի վերայ այսր ամենայնի Աստուծոյ խօսքէն չեմ անցնիր եւ տարբեր բան չեմ ըսեր: Չիրենք ալ նոյն գիշեր քովը պահէց, որպէս զի երկրորդ օրն Աստուծմէ առած հրամանին համաձայն՝ անոնց որոշ պատասխան մը տայ: Աստուած գիշերը Բաղաամին ըսաւ . Ել գնա, բայց քեզի ինչ ըսելու ըլլամ՝ ան պիտի խօսիս: Աստու կանուխ Բաղաամ էշը պատրաստեց ու եկող իշխաններուն հետ ճամբայ ելաւ: Բայց Աստուած Բաղաամին սրտին չարութիւնը տեսնե-



լով՝ որ պարզապէս արծաթսիրութեան ու փառասիրութեան համար կ'երթար, բարկացաւ, հրեշտակի մը ձեռքով ճամբան զինքը յանդիմանեց: Հրեշտակը սուրբբաց՝ Բաղասմին անցնելու ճամբուն վրայ կեցաւ: Եւ շն ափկա տեսնելով՝ վախցաւ, ճամբէն խտտրեցաւ ու դաշտի մէջ մտաւ, թէպէտ մէկ կողմանէ Բաղասմ իրեն կը զարնէր որ հասարակ ճամբան դարձրնէ: Ետքը հրեշտակն ելաւ՝ երկու կողմը պատ հիւսուած այգիներուն առուամէջը զնաց կեցաւ, ուստի որ Բաղասմ պիտ'որ անցնէր: Եւ շն երբ որ հրեշտակը տեսաւ, զնաց պատին անանկ կռթռնեցաւ որ Բաղասմին ոտքը ձգվեց: Ան ալ սկսաւ նորէն իրեն զարնել: Հրեշտակն ասկէ ալ ելաւ զնաց ուրիշ նեղ տեղ մը կեցաւ եւ Բաղասմին անցքը բոլորովին արգելեց: Ասով է շն ո՛չ ձախ ո՛չ աջ կրնալով խտտրիլ՝ ճարը հատաւ, ճամբուն վրայ նստաւ: Բաղասմ աս բանիս վրայ սաստիկ կատղելով՝ սկսաւ բոլոր զօրութեամբ իշուն զարնել: Ան ատեն Աստուած իշուն բերան տուաւ, որն որ Բաղասմին բտաւ. Աս երբորդ անդամն է որ զիս կը ծեծես, ես քեզի ի՞նչ բրի: Իսկ Բաղասմ ժամ մը յառաջ Բաղակին հասնելու բաղձանքով վառուած ու սիրտն ալ խտտացած ըլլալուն՝ անբան անասնոյն առանց իմաստը հասկրնալու մարդկօրէն խօսելէն զարհուրելու տեղ՝ հասարակ մարդու մը հետ խօսելու պէս՝ սպառնալիքով պատասխանեց որ Ձիս ծաղր ընելուդ համար՝ չէ թէ զարնել՝ հապա ձեռքս սուր մ'ըլլար նէ՝ հիմա զքեզ կը սպաննէի: Իսկ էշը Բաղասմին ը-

սաւ . քու պզտիկուց վեր հեծած էշդ չեմ մի  
ես , ուրիշ անգամ ասանկ բան բրած էի :  
Աստուած նոյն բողեն Բաղասամին աչքը բա-  
նարով՝ սուրբ բաց հրեշտակը տեսաւ , մէկէն  
առջեւն ինկաւ երկրպագութիւն բրաւ . հրեշ-  
տակն Աստուծոյ կողմանէ զինքը յանդիմանեց .  
իսկ Բաղասամ՝ Մեղայ , ըսաւ , թէ որ երթալս  
քեզի հաճոյ չէ՝ ետ կը դառնամ : Հրեշտակը՝  
Վնա , ըսաւ , բայց ինչ որ կ'ըսեմ նէ՝ ան  
պիտ'որ խօսիս : Ասանկով Բաղասամ ճամբան  
յառաջ տարաւ :

Գ . Բաղակ անոր դայը լսեց նէ՝ առջեւն  
ելաւ , սիրով ընդունեցաւ : Ատքը զինքը երեք  
զատ զատ լերան վրայ հանեց , ուստի որ Իս-  
րայելացւոց բանակը կը տեսնուէր : Բաղասամ  
աս լեռներուն վրայ՝ Իսրայելացւոց բանակը  
քանի անգամ որ անիծել ուզեց , ամէն ան-  
գամուն Աստուած բերանն օրհնութիւն զնե-  
լով՝ զիրենք օրհնեց : Իր ըսած բոլոր խօսքե-  
րուն մէջ երեւելի է Փրկչին վրայ բրած մար-  
դարէութիւնը . Յակովբէն աստղ մը պիտի  
ծագի , ըսաւ , եւ Իսրայելէն իշխան մը պիտ'որ  
գայ , որն որ Մովարը պիտի զարնէ եւ Սե-  
թայ որդիքը (բոլոր , մարդիկը) պիտ'որ աւար  
առնէ : Բաղակ ասոնք լսեցնէ՝ բարկութեամբ  
ձեռու ընէրն իրարու զարնելով՝ ըսաւ . Չքեզ  
կանչեցի՝ որ գաս թ շնամիս անիծես . աս երեք  
անգամ է որ զիրենք կ'օրհնես . ել զնա , քե-  
զի բրած մեծամեծ խոստումներէս զրկուեցար :  
Բաղասամ պատասխանեց . Պատգամաւորնե-  
րուդ չցրուցեցի՞ թէ Աստուած ինչ որ կ'ըսէ՝  
ան կը խօսիմ : Բայց չգացած՝ անոր խորհուրդ

տուաւ որ Իսրայելացւոց բանակին մօտ տեղուանքը Բերփեզովը շաստուածոյն պատուոյն համար տօն կատարէ : Ասով իրենց որոգայթ պատրաստած կ'ըլլաս, ըսաւ, որ զոհեալ ուտելով եւ ուրիշ անարժան գործքեր ընելով՝ իրենց Աստուածը բարկացրնեն, ան ալ զիրենք քու ձեռքդ մատնէ : Բաղասամին աս անօրէն խորհուրդն յաջողեցաւ : Աստուած ալ Մովսիսին հրամայեց որ յանցաւորներուն գլխաւորները բռնէ կախէ : Մովսէս հրամանը կատարեց, եւ ամէն ցեղերուն ալ պատուիրեց որ մէջերնէն Բերփեզովին պաշտօն մատուցողները սպաննեն : Հրամանն ի գործ դրուելու ատեն՝ Աստուած ալ մէկ կողմանէ ժողովրդեան վրայ հիւանդութիւն մը խաւրեց, որով մէջերնէն շատ մարդ մեռաւ : Երբ որ ժողովուրդը Ակայութեան խորանին դուռը ժողոված՝ աս հիւանդութեան համար կու լար, միջ մ'ալ տեսան որ Շմաոնի ցեղէն Չամբրի՝ Աստուծոյ բարկութիւնը շարժող անարժան գործք կը գործէր : Փենեէս՝ Եղիազարին որդին՝ ասոր չկրնալով դիմանալ, Աստուծոյ նախանձովը լեցուած՝ դնաց թէ՛ Չամբրին եւ թէ՛ անոր մեղաակիցը մեռցուց : Ասոր վրայ Աստուծոյ բարկութիւնն իջաւ՝ հիւանդութիւնը վերցուց ու Փենեէսը վարձատրելու համար քահանայապետութիւնը ժառանգութեամբ անոր զաւկներուն թողուց : Այդն ատեն հիւանդութեամբ ու սրով մեռնողներուն թիւը 24,000ի հասաւ : Աստուած Մովսիսի ձեռքով Իսրայելացւոց ըսաւ որ Մադիանացւոց (Մովաբացւոց երկիրը՝ Առնոնայ

քովերը բնակողներուն) դէժ էլլեն եւ անոնց-  
մէ վրէժ առնուն, զիրենք կռապաշտութեան  
մէջ ձգելուն համար: Միանգամայն հրամայեց  
որ Մովսէս ու Էդիպար Իսրայելացւոց մէ-  
ջէն քսան տարւոնէ վեր ըլլողներն համրեն:  
Անոնք ալ համրեցին, ու տասուերկու ցեղին  
մէջէն՝ 601,730 հոգի պատերազմող գտան,  
որոնց մէջ առաջին անգամ համրուողներէն՝  
մէկը ողջ չէր մնացեր, բաց ի Յեսուէն ու Քա-  
ղերէն, ամէնքն ի պատիժ մեռած էին: Իս-  
րայելացիք հնազանդեցան, ամէն մէկ ցեղէն  
1000ական հոգի պատերազմի էլան. Փենէէս  
ալ սուրբ սպասները, տապանակը եւ անոր  
վերաբերածներն առաւ հետերնին զնաց: Մա-  
դիանացիք յաղթուեցան եւ իրենց իշխանքն  
սպաննուեցան, որոնց մէջն էր Բաղակ ալ:

### Ի Գ . Գ Լ Ս

1. Մովսէս իր մտնելիքն Աստուծոյ իմացաւ նէ ինչ  
ըբար: — 2. Վերջին անգամ ինչ իտակցաւ, ո՞ր մե-  
տաւ ու թաղուեցաւ:

1. Իսրայելացւոց Էդիպտոսէ ելլելուն 40ե-  
րորդ տարւոյն վերջերը Աստուած Մովսիսին ի-  
մացուց որ պիտի մեռնի: Մովսէս իսկզբան խըն-  
դրեց որ Յորդանանէն անցնի. բայց Աստուած  
իր արդարութեան խստութիւնը ցուցնելու եւ  
միանգամայն օրինակաւ մը նշանակելու համար,  
որ Մովսիսի ձեռքով տրուած հին օրէնքնե-  
րը ճշմարիտ Աւետեաց երկիր (Արքայութիւն)  
չեն կրնար տանիլ, հապա սպասելու է Փր-  
կչին (Յիսուսին՝ որուն օրինակ էր Յեսուէն)

անոր խնդիրքը չընդունեցաւ : Ան ատեն Մովսէս Աստուծոյ կամացը միարանելով՝ իրեն յանձնուած ժողովրդեան համար աղաչեց որ առանց առաջնորդի չմնան, իր տեղը մէկը դնէ : Աստուած ալ հրամայեց որ ժողովուրդը ժողովէ՝ Եղիազար քահանայապետին առջեւը ձեռքը Յեսուայ գլուխը դնելով՝ իր յաջորդը կարգէ եւ ամէնքն անոր անսան :

Ձ . Մովսէս աս հրամանը կատարելէն ետեւ՝ իր մեռնելիքը ժողովրդեան իմացուց, բայց միանգամայն զիրենք ասպահով բրաւ որ Աւետեաց երկիրը պիտի մտնեն : Աստուծոյ իրենց բրած շնորհքները մէկիկ մէկիկ յիշատակեց եւ տուած տասը պատուիրաններն ուրիշ օրէնքներուն մեծ մասին հետ (զորոնք տեղ տեղ աւելցուց ու տեղ տեղ փոխեց) կրկնելէն ետեւ՝ զիրենք յորդորեց որ Աստուծմէ վախնան, անոր ճամբան երթան, սրտանց ու բոլոր զօրութեամբ զանիկա սիրեն ու պաշտեն : Աստուծոյ պատուէրները միշտ մտքերնին ըլլայ եւ իրենց որդւոցը միշտ սորվեցընեն : Օտար ազգերու հետ ամենեւին խնամութիւն չընեն, հասպա անոնց կռոյ սեղանները կործանեն, արձանները փշրեն, անտառները ջարդեն ու կուռքերն այրեն : Եթէ աս ամէն բան ինչպէս որ պէտք է կը պահէք նէ, ըսաւ, ան ատեն Աստուած ալ իր ուխտը կը պահէ, զձեզ կը սիրէ, ձեր ծնունդը, ձեր երկրին պտուղներն ու ձեր անասունները կ'օրհնէ : Իսկ թէ որ Աստուծոյ պատուէրները չէք պահեր, ան ատեն անոնք ձեզի անէծք կը բերեն : Միանգամայն պատուիրեց որ Յորդանանէն անցնէ-

լէն ետեւ՝ Գերազ լերան վրայ մեծ քարեր կանգնեն, անոնց վրայ աս օրէնքները գրեն եւ անտաշ քարերով սեղան շինելով՝ վրան զոհ մատուցանեն: Ետքը Իսրայելացւոց ցեղերուն կէսը Գարիզին լերան վրայ ելլեն՝ օրինապահներն օրհնեն, ու մէկալ կէսը Գերազ լերան վրայ ելլեն՝ օրինազանցներն անիծեն: Մովսէս աս ըստը խօսածները կարգաւ գիր անցուց, քահանայից ու ծերերուն տուաւ, ըսելով որ Ան գրուածքն առնեն Աստուծոյ տապանակին քովը դնեն, եւ եօթը տարի մէյ մը Տաղաւարահարաց տօնին օրը հրապարակաւ կարդան, որպէս զի ժողովուրդը լսէ ու մէջինները կատարէ: Գարձեալ Աստուած՝ Իսրայելացիքն օրինաց զանցառութենէ զգուշացընելու համար՝ անոնց ետքի ընելիքներն եւ իր անոնց ցուցընելու սղորմութիւնները Մովսիսին յայտնեց, պատուիրեց ալ որ աս իմաստով երգ շինէ եւ Իսրայելացւոց բերան առնել տայ: Մովսէս այս ամենայն լմնցընելէն ետեւ՝ ամէն մէկ ցեղն օրհնեց, Աստուծոյ հրամանաւը՝ Նաբաւ լեռն ելաւ, Աւետեաց երկիրը տեսաւ, հոն մեռաւ 120 տարւան, եւ հաւանականաբար հրեշտակի ձեռքով թաղուեցաւ. Իսրայելացիք ալ երեսուն օր վրան սուգ բռնեցին <sup>1</sup>:

1 Աստուած Մովսիսի գերեզմանը ծածկեց, կ'ըսէ Ս. Ոսկերեբան, որպէս զի Իսրայելացւոց կոպալտութեան առիթ չլլայ: Սատանան ալ նոյն վախճանաւ ուզեց որ ան գերեզմանն յայտնէ եւ աս բանիս համար Միքայէլ հրեշտակապետին հետ կռուեցաւ, բայց չկրցաւ յաղթել: Ասանկ կը մեկնեն շատ Ս. Հարք Յուդա առաքելոյն խօսքը:

# Ե . Գ . Լ . Ո . Ի . Խ

ԻՍՐԱԵԵԼԱՑԻՈՑ ԱՒԵՏԵԱՑ ԵՐԿԻՐԸ ՄՏՆԵԼԷՆ  
ՄԻՆՉԵՒ ՍԱՒՈՒՂԱՅ ԹԵԳԱՒՈՐԵԼԸ

(1460—1092)

## Ի Գ . Գ Լ Ս

1. Յետու Երկրով երբ ցտես խրկեց . անոնք ինչ ըրին :  
— 2. Ժողովուրդն Յորդանանէն ինչ կերպով անցաւ :  
— 3. Երկրով ինչպէս անուեցաւ : — 4. Առջի ան-  
գամ Գալին աննելու գացողներն ինչու յաղթուած եւ  
դարձան : — 5. Գալին ինչպէս առին . առածնուն պէ-  
ս ինչ ըրին :

1. ՄԱՂԱՍՍ մեռնելէն ետքը Աստուած Յե-  
սուայ ըսաւ . Մովսէս ծառաս վախճանեցաւ .  
Ժողովուրդս Յորդանանէն անցուր : Ինչպէս  
որ Մովսիսին հետն էի , անանկ ալ քու հետոյ  
կ'ըլլամ , դքեզ չեմ' թողուր . զորացիր քա-  
ջացիր , նայէ որ տուած պատուէրներս աղէկ  
կատարես , օրէնքներս բերնէդ չիյնան . եւ որ-  
պէս զի անոնք աղէկ կատարելով բանդ յա-  
ջող երթայ , զիչէր ցորեկ անոնց վրայ մտա-  
ծէ : Յետու բանակին մէջ քարոզ կարգալ  
տուաւ որ պատրաստուին երեք օրէն Յորդա-  
նանէն անցնելու եւ Աւետեաց երկիրը մտնե-  
լու : Նոյն միջոցին Երկրով լրտեսելու երկու  
հոգի խրկեց : Լրտեսները գացին Ռահար ա-  
նունով կնկան մը տուն մտան : Աս բանս ան  
տեղաց թագաւորին ահանջը հասնելով , մարդ  
խրկեց զանոնք փնտռել տուաւ : Ռահար զի-  
րենք տանկը կտաւ ի խրճուկներու տակ պա-

Հելլով՝ թագաւորին մարդիկներուն պատասխան տուաւ, որ Լուսրնցաւ չլուսրնցաւ՝ անոնք ճամբայ ելան, ո՞վ ըլլալնին եւ ո՞ւր երթալնին չեմ գիտեր. ածապարեցէք դացէք, կարելի է ետեւնէն կը հասնիք: Խնդրակներն երթալուն պէս՝ ինք զնաց լրտեսներուն ըսաւ. Գիտե՛մ որ Աստուած աս երկիրները ձեզի տուած է. ձեր Կարմիր ծովէն անցնիլը, Յորդանանէն անդին եղող՝ Ամովհրացւոց թագաւորներուն յաղթուիլը լսեցինք նէ՛ վրանիս մեծ վախ ինկաւ: Չեր Աստուածն է երկնից ու երկրի Աստուածը: Ուստի ինչպէս որ ես ձեզի ողորմեցայ, անանկ ալ դուք ինձի ողորմեցէ՛ք, զիս ու հօրս տունն ազատելու խօսք ու նշան տուէք: Անոնք ալ խոստացան: Ռահաբին տունը պարսպին վրայ ըլլալով՝ կարմիր չուանով մը զանոնք պատուհանէն վար իջեցուց: Լրտեսներն իրեն պատուիրեցին որ ան չուանը պատուհանէն դուրս կախէ, որպէս զի նշան ըլլալով՝ նոյն տան փնաս մը չըլլայ: Ասանկով լրտեսները բանակ դարձան, եղածներն ու լսածնին պատմեցին:

Չ. Ան ատեն Յեսու Խորայելացիքը Յորդանանին մօտ տարաւ եւ բանակին մէջ հրատարակել տուաւ, թէ երբ որ կը տեսնեն քահանաներն՝ որ Աստուծոյ տապանակն առջեւնէն կը տանին, իրենք ալ 2000 կանգուն հեռաւորութեամբ անոնց ետեւէն երթան: Մէկ կողմանէ ալ քահանայք առաջուց ճամբայ հանեց: Նոյն ատենները Յորդանանին յորդութեան ժամանակն ըլլալով՝ ջուրը շատցած էր: Քահանայք գետն հասնելով՝ ոտուրնին



Ջուրը խոթելնուն պէս՝ մէկէն վերի կողմանէ եկող ջրերը մէկմէկու վրայ դիզուած մնացին. իսկ մէկալ մասը Մեռեալ ծովը վազեց : Ասով ժողովուրդն՝ որ 2000 կանգուն հեռաւորութեամբ տապանակին ետեւէն կու գար, ոտուրնին չթրջած՝ Յորդանանին մէջէն անցան զացին, եւ մինչեւ որ ամէնքն անցան՝ քահանայք տապանակը վերցուցած զետին մէջտեղը կեցան : Յետու Աստուծոյ հրամանովն Խորայելացւոց ցեղերուն մէջէն տասուերկու հոգի բնարեց, Յորդանանին մէջ տապանակով քահանայից կեցած տեղէն յիշատակի համար տասուերկու քար առնել եւ անոնց տեղ՝ ուրիշ նոյնչափ թուով քար դնել տուաւ : Ժողովուրդեան անցնիլը լմբննալով՝ երբ որ քահանայք ճամբայ ելան ու ոտուրնին ցամաք դրին, մէկէն Ջուրը սկսաւ իր առջի սովորական ընթացքը բռնել : Խորայելացիք Երիքովին արեւելեան դին Գաղղաղա եկան բանակեցան. հոն Յետու՝ զետին մէջէն հանած քարերը տնկեց, ու անապատի մէջ ծնած անթրփատ արուները Աստուծոյ հրամայելովը թրփատեց : Հոն նաեւ առջի անգամ Աւետեաց երկիրը Չատկի տօնը կատարեցին, եւ երկրին ցորենէն բաղարջ հաց կերան : Անկէ ետեւ ալ Մանանն գաղղեցաւ եւ ամպէ սիւնը վերցաւ :

**Յ.** Երիքով թէպէտ շատ ամուր քաղաք էր, այսու ամենայնիւ Աստուած խոստացաւ որ իր թագաւորովն ու բոլոր զօրքովն Յետուայ ձեռքը կը մատնէ : Բայց միանգամայն որպէս զի ցուցրնէ թէ Աւետեաց երկիրը ժառանգելնին մարդկային գործ չէ, հապա

Աստուծոյ դործ, Յեսուայ պատուիրեց որ վեց  
 օր վրայէ վրայ օրը մէկ անգամ ժողովուրդն ու  
 զօրքը քաղքին բոլորափր դառնան, եւ առ-  
 ջէւէն եօթը քահանայ եօթն եղջերեայ փող  
 հնչեցընեն. վերջին օրը փողերուն հնչելու ա-  
 տենը՝ բոլոր ժողովուրդը միաբերան աղաղակէ:  
 Նոյն աղաղակին ձայնէն, ըսաւ, քաղքին պա-  
 րիսպները փըւելով՝ ներս պիտի մտնէք: Իս-  
 րայելացիք Աստուծոյ ըսածները կատարեցին  
 եւ քաղքին պարիսպները կործանելով՝ ներս  
 մտան, մէջի բնակիչները՝ բաց ի Ռահարէն եւ  
 իր տանը մէջիններէն՝ բոլոր թրէ անցուցին.  
 նոյնպէս քաղքին հարստութիւնը գրեթէ բոլոր  
 այրեցին, միայն ոսկիէ, արծրթէ, պղնձէ ու եր-  
 կրթէ ամաններն առին Աստուծոյ գանձը գրին,  
 որովհետեւ Աստուած պատուիրած էր որ ժո-  
 ղովուրդը նոյն տեղէն բան մը չառնէ: Յեսու-  
 քաղքին աւերակին վրայ անէճք կարգաց. Ով  
 որ, ըսաւ, անիկա շինելու ձեռք կը զարնէ,  
 անդրանկովն հիմը դնէ ու վերջի զաւկովը  
 պարսպին դռները կանգնէ. ինչպէս որ եղաւ  
 ալ. անկէ քանի մը դար ետքը՝ Իսրայելացւոց  
 Աքաաբ թագաւորին ատենը՝ Ազան կամ Ա-  
 քիէլ Բեթելացին, անդրանիկ որդւովը սկսաւ  
 ան քաղաքը շինել ու վերջին որդւովը լմըն-  
 ցուց: Իսկ Ռահար՝ Յուդայի ցեղէն Սաղմոն  
 անունով մէկու մը հետ ամուսնացաւ եւ ծնաւ  
 զԲոոս՝ Հռութայ երիկը:

4. Երիբովի առնուելէն ետեւ՝ Յեսու մարդ  
 խրկեց, որ երթան Գային լրտեսն, որն որ  
 նոյն քաղքին մօտ էր: Լրտեսները դարձան  
 ըսին որ Մէջը քիչ մարդ ըլլալով՝ պաշարելու

Համար ամէնքս տանիլ պէտք չէ, 2—3000 հոգի բաւական է: Եւ այսպէս 3000 հոգի նոյն քաղաքն առնելու գացին: Բայց մէջերնէն 36 հոգի մեռան, մէկաշնոր յաղթուած էտ դարձան: Ասով Խորայելացւոց սիրտը կոտորեցաւ ու վհատութեան մէջ ինկան: Յետու զգետար պատուած, գլուխը մօխիր ցանած՝ տապանակին առջեւը գնաց ինկաւ, մինչեւ իրիկուն ժողովրդեան համար Աստուծոյ աղաչեց: Աստուած աղօթքը լսելով՝ յայտնեց որ նոյն գէպքն իրենց պատիժ է, որովհետեւ իր հրամանին դէմ մէկը պակասած էր. եւ պատուիրեց որ երկրորդ օրն ամէն ցեղերուն վրայ վիճակ ձգելով՝ յանցաւորը փնտռեն գտնեն ու տնով տեղով այրեն: Յետու հրամանը կատարելով՝ վիճակը Յուդայի ցեղէն Աքարին վրայ ելաւ, որն որ խոստովանեցաւ թէ Աւարին մէջէն բանուած վերարկու մը եւ ուրիշ ծանրազին բաներ առած՝ վրանի մէջ հոգի տակ պահեցի: Յետու մարդ խրկեց ըսած տեղէն ան զողունի բաները բերել տուաւ, եւ հրամայեց որ զմէքը բոլոր իր մարդիկներովը քարկոծեն ու այրեն:

5. Ասանկով Աստուած ժողովրդեան հետ հաշտուելով՝ Յետուայ հրամայեց որ իր մարդիկներովը Քայեայ վրայ երթայ: Յետու 5000 հոգի ընտրեց, քաղաքին ետեւի կողմը դարանի խոթեց. իսկ ինքն ան գիշեր բանակը մնալով՝ երկրորդ առտու կանուխ քովն ունեցած զօրքովը քաղաքին վրայ գնաց: Թագաւորն ան միջապէս քաղաքէն դուրս ելաւ Խորայելացւոց դէմ պատերազմելու: Յետու փախչել ձեւա-

ցընելով՝ ետ քաշուեցաւ. բայց երբ որ թշնամին քաղքէն խել մը հեռացած էր, դարանի մէջ եղողներուն նշան տուաւ, որոնք էլան քաղքին տիրեցին, եւ Յեսուայ յառաջագոյն տուած հրամանին համաձայն՝ կրակ տուին: Յեսու միտէն քաղքին առնուիլն խմանալով՝ զօրքն ետ դարձուց, որով Գայեացիք ետեւէն առջևէն Իսրայելացւոցմէ պաշարած մնացին, եւ սաստիկ ջարդ կերան, մէջերնէն 12,000 հոգի ինկան մեռան: Թագաւորնին ալ բռնուելով՝ մինչեւ արեւուն մտնելը երկճիւղ փայտէ մը կախուեցաւ. ետքը վար առին՝ քաղքին դրան քովի դուրը ձգեցին ու վրան քար կուտեցին:

## Ի Ե . Գ Ա Ս

1. Իսրայելացիք Գարաւոնացւոց հետ ինչու դաշինք դրին: — 2. Յեսու Քանանացւոց հինգ թագաւորնեւորուն ինչպէս յաղթեց: — 3. Քանի տարի պատերազմեցաւ: Այնչափ տարւան մէջ քանի թագաւորաց յաղթեց: Քանանացւոց երկիրներն ինչպէս բաժնեց. Ղեւեայ ցեղին քանի քաղաք տուաւ: Իրեն ու Քազերին առանձին ինչ ժառանգութիւն ինկաւ: Ներքին պատերազմ ելլելու վտանգն ինչպէս անցաւ: — 4. Յեսու կենացը վերջին օրերն ինչպէս անցուց ու քանի տարւան մեռաւ:

1. Քանանացւոց երկրին մէկալ թագաւորները՝ Երիթովի ու Գայեայ պատահածները լսելով՝ մէջերնին խօսք մէկ ըրին որ ամէնքը մէկէն Իսրայելացւոց վրայ քալեն: Բայց Գարաւոնացիք անոնց հետ չմիարանեցան, այլ խորամանկ կերպով մը Իսրայելացւոց հետ դաշինք դրին: Հեռու տեղէն եկած ձեւացընելու

Համար՝ էշերու վրայ պատառատուն տիկեր գրին, ոտուընին հին կօշիկներ, վրանին հին հագուստներ հագան եւ ճամբու պաշարի համար չոր ու որդ կերած հացի կտորուանք առնելով՝ Գաղզաղա Խորայելացւոց բանակն եկան։ Երբ որ Յեսու անոնց հարցուց թէ՛ Աւսկից եկած էք, պատասխան տուին որ Հեռու տեղէ կու գանք. եւ ասոր հաստատութեան համար՝ վրայի հագուստնին ու ճամբու պաշարնին ցուցընելով ըսին որ Չեր Աստուծոյն անունը եւ ձեզի տուած յաղթութիւնները լսելով՝ ծերակոյտնիս զմեզ իրկեց, որ գանք հետերնիդ դաշինք դնենք։ Խորայելացւոց իշխաններն անոնց խօսքին հաւտայով՝ քահանայապետին ձեռքով Աստուծոյ կամքը չհարցուցած՝ հետերնին դաշինք գրին։ Բայց ետքէն իմանալով որ Գարաւանացիք իրենց մօտը կը բնակին եղեր, գացին քաղաքնին առին. սակայն մէջի բնակիչներուն չդպան։ Երբ որ ժողովուրդն աս բանիս վրայ իշխաններուն գէ՛մ տրանջաց, անոնք պատասխան տուին որ Աստուծոյ անուամբն անոնց երդումը բրած ենք, չենք կրնար բան մ'ընել. բայց կրնանք զիրենք Աստուծոյ տան ծառայութեան գործածել, ուստի թող պէտք եղած փայտը, ջուրը կրեն։ Յեսու Գարաւանացիքը կանչեց, աս բանս անոնց հասկըցուց. անոնք ալ յանձն առին։

Չ. Քանանացւոց մեկալ թագաւորներն ասիկա լսելով՝ օրտերնին մեծ վախ ինկաւ, վասն զի Գարաւան մեծ եւ ամուր քաղաք էր։ Մէկէն Ադոնիրեզէկ Երուսաղէմայ թագաւորն՝ ուրիշ չորս թագաւորներու հետ միանալով՝

զօրքով եկաւ Գարաւոնի քով բանակեցաւ : Գարաւոնացիք Յեսուայ դիմեցին : Իսկ Աստուած՝ ան թագաւորներն իրենց ձեռք տալու խօսք տուաւ : Յեսու գիշեր ատեն յանկարծակի անոնց վրայ յարձակեցաւ : Աստուած ալ թշնամեաց վրայ մեծ վախ ձգելով՝ զօրութիւննին կոտորեց , որով սկսան փախչիլ , միանգամայն վրանին քարէ կարկուտ թափելով՝ շատ մարդ մեռաւ : Յեսու տեսնելով որ օրը կարճ կու գայ , վախցաւ որ պիտի չկրնայ թշնամին կատարեալ յաղթել , եւ աս բանիս համար Աստուծոյ աղօթելէն ետեւ՝ ներքին ազդեցութեամբ՝ աչքի երեւցածին ու մեր հասարակ խօսելու եղանակին համաձայն՝ ժողովրդեան առջեւը հրամայեց որ Արեւը Գարաւոնի ու լուսինն Եղոնայ ձորին դիմացը կենայ : Աստուած իր աղաչանքն ընդունեցաւ , եւ այսպէս օրն երկրննալով՝ Յեսու կրցաւ թշնամիներն աղէկ մը ջարդել : Հինգ թագաւորները Մակեդայ այրին մէջ պահոււտեր էին . Յեսու նախ այրին բերանը գոցել տալով՝ զիրենք հոն արդէլեց , մինչեւ որ պատերազմը լմրնցաւ , ետքը Խարայելացոց զօրապետները քաջալերելու համար՝ ան թագաւորներն առջեւը բերել պառկեցընել տուաւ , զօրապետներուն հրամայեց որ անոնց վիզը կոխեն : Ալեքսանդրոս հինգն ալ սպաննել ու մարմիննին մինչեւ իրիկուն փայտէ կախել տուաւ , իրիկունը վար առին ու պահոււտած այրերնուն մէջ նետելով՝ այրին բերանը մեծ քարերով գոցեցին :

**Յ .** Յեսու այսպէս վեց տարի Քանանացոց դէմ շարունակ պատերազմի մէջ էր , եւ նոյն-

չափ ատենուան մէջ 29 թագաւորաց յաղթեց, քանանացւոց երկիրներուն մեծ մասն առաւ: Գարաւոնացւոցմէ ուրիշ անձնատուր ըլլող չէզաւ, վասն զի Աստուծոյ վճիռն ան էր որ Խորայելացւոց դէմ պատերազմին եւ ջնջուին:

Թէպէտ եւ երկիրները բովանդակ առնուած չէին, այսու ամենայնիւ Յեսու անոնք Խորայելացւոց իննուկէս ցեղերուն (Տես ԻԲ. Գաս, ԹԻԷ 4.) վիճակով բաժնեց: Աստուծոյ հրամանին համաձայն՝ վեց քաղաք ապաստանի սրոշեց. թէ որ մէկն անոցուչու թեամբ սպանութիւն մը ընէր նէ՝ հոն ապաւինելու եւ մինչեւ քահանայապետին մահը հոն կենալու էր: Իսկ Ղեւեայ ցեղին առանձին երկիր չտրուեցաւ, այլ ցեղերուն երկիրներուն մէջ քանի մը քաղաք սահմանուեցաւ, որոնք ապաստանի քաղաքներուն հետ մէկտեղ 48 քաղաք էին: 'Նոյնպէս Քաղերին՝ իր բարի վկայութեան համար (Տես ԻԱ. Գաս, ԹԻԷ 5.) Աստուծոյ խոստման համաձայն՝ մասնաւոր ժառանգութիւն տուաւ, այս ինքն Քերրոնը: Ժողովուրդն ալ Աստուծոյ հրամանովը Թամնաթասրան՝ Եփրեմի լեռան վրայ՝ Յեսուայ տուին, զորն որ ինք ընդարձակեց, շէնցուց եւ հոն բնակեցաւ:

Ասոր վրայ խել մը ատեն անցնելէն ետեւ յանկարծ մէջերնին շիթութիւն ինկաւ. Յորդանանէն սողին ըլլողներն անդիիններուն դէմ պատերազմ բանալ ուղեցին. ինչու որ լսելով թէ անոնք մեծ սեղան մը կանգներ են, կարծեցին թէ կռապաշտութեան սկսեր են: Բայց նախ Փենեհէսը տասը իշխաններով խրկեցին, որ գնաց զիրենք յանդիմանեց: Անոնք պատասխան

տուին թէ Մենք աս սեղանը՝ միայն անոր համար շինեցինք, որպէս զի մեր ետեւէն եկող զաւկրներնուս վկայութիւն ըլլայ թէ ձեզի հետ եղբայր ենք: Երբ որ աս իմացան՝ ամէնքն Աստուծոյ փառք տուին: Ասկէ Յետու նոյն սեղանին անունը՝ Վկայութիւն դրաւ:

4. Յետու ծերացած ու մահճը մօտիկցած ըլլալով՝ ինքն ալ Մոսիսին պէս իր վերջին օրերն Աստուծոյ բրած երախտիքները ժողովրդեան յիշեցրնելով եւ անոր օրինացը պահպանութեան յորդորելով անցուց: Իրենց ըսաւ որ թէպէտ եւ հոս առջի բնակող ազգերէն դեռ կան, բայց դուք Աստուծոյ հաւատարիմ մնաք նէ՛ ինք զանոնք ալ դուրս կը հանէ: Իսկ եթէ անոնց հետեւիք, հետերնին խնամութիւն ընէք նէ, Աստուած զանոնք չիջնջէր, այլ մանաւանդ թէ իրենք ձեզի որոգայթ ու խոչ կ'ըլլան, մինչեւ նաեւ աս բարի երկիրը կը կորսնցընէք: Եւ վերջապէս իրենցմէ Աստուծոյ հաւատարիմ մնալու երդում առնելէն ետեւ՝ Սիւքէմ (որն որ Գարիգին ու Գերաղ լերանց մէջ կ'ըյնայ) Վկայութեան խորանին առջեւն օրէնքներն անոնց կարդաց, ինքն ալ ուրիշ օրէնքներ տուաւ, զորոնք օրինաց զիրքն անցուց: Եւ աս հանդիսութեան յիշատակին համար Վկայութեան խորանին առջեւի բուսկնոյն գիմացը քար մը կանգնեց: Ետքը ժողովուրդն արձակեց եւ ինք 110 տարւան մեռաւ: Վրայէն շատ շանցաւ Էզրիազար քահանայապետն ալ մեռաւ ու տեղն անցաւ իր որդին Փենեհէս:



Ի Ձ . Գ Ա Ս

1. Յեսուայ մեռնելէն ետեւ Իսրայելացւոց քաղաքական կառավարութիւնն ինչպէս էր : — 2. Ինչ պատերազմներ ըրին : — 3. Իննիսամբնի ցեղին զէժ ինչու պատերազմի ելան : — 4. Պանայ ցեղին մէջ ինչ անկարգութիւն պատահեցաւ : — 5. Պատաւորք ո՛վ են եւ իրենց ատենն Իսրայելացւոց բարբն ինչպէս էր :

1. Մովսիսի ու Յեսուայ առաջնորդական իշխանութիւնը, որն որ ամենէն վերինն ու պատուաւորն էր, արտաքոյ կարգի եւ միայն իրենց անձին սեպհական իշխանութիւն մըն էր : Անոնք մեռնելէն ետեւ ամենէն մեծը՝ քահանայապետական պատիւն եղաւ : Եւ Յեսուայ մահուընէն վերջը 358 տարի ընդհանրապէս խօսելով՝ կրնանք ըսել որ բովանդակ ազգին վրայ վերին զուխ մը չեղաւ . հապա իւրաքանչիւր ցեղ իրարմէ անկախ առանձին առանձին տէրութիւն կը կացուցանէր ու իր ցեղապետէն կը կառավարուէր : Աս բաժնուած մասերն իրարու հետ կը կապուէին եկեղեցական ու ազգային ժողովքով, որոնց առջինը Սելով՝ տապանակին առջեւը կ'ըլլար, եւ իր անդամներն էին քահանաները, իսկ երկրորդը՝ Սիւբէժ՝ կը կատարուէր, ասոր ալ անդամներն ուրիշ առանձին ժողովքներուն զահերէցներն ու իւրաքանչիւր ցեղին պատգամաւորներն էին :

2. Յեսուայ մահուընէն՝ մինչեւ քսան տարի վերջը՝ Իսրայելացւոց մէջ պատահածներուն վրայ ունեցած ծանօթութիւննիս ասոնք են : Իսրայելացիք ուզելով Բանանացիները նուաճել, Աստուծոյ հարցուցին թէ Ո՞վ ելլէ անոնց զէժ պատերազմի : Աստուած Յուդայի

ցեղը ցուցուց, ան ալ Շմաւոնի ցեղին հետ միանալով՝ Քանանացւոց ու Փերեզացւոց վրայ քալեց, մեծ ջարդ տալով՝ յաղթեց, իրենց Ադոնիրեզեկ թագաւորը բռնեց, ձեռքի ու ոտքի մատուըներուն ծայրերը կտրեց: Ադոնիրեզեկ խոստովանեցաւ որ բրածին պատիժը գտաւ: Ես ալ, ըսաւ, եօթանասուն թագաւորաց ձեռքի ու ոտքի մատուըներուն ծայրերը կտրած՝ սեղանիս փշրանքը ժողովել կու տայի: Նմանապէս Արուսազէմը պատերազմաւ առին եւ այրեցին ու Քերբոնին տիրեցին: Քաղէբ մէջի հսկաները ջարդեց ջնջեց, իր եղբայրը Գոթունիէլ՝ Գարիի քաղաքն առաւ, ու Քաղերին խոստման համաձայն՝ անոր աղջիկն իրեն կին առաւ: Աւերջապէս Աստուած հետերնին ըլլալով՝ ան քաղաքներէն զառ՝ ուրիշ շատ քաղաքներ եւ ամուր տեղեր առին: Մէկալ ցեղերն ալ Քանանացւոց դէմ՝ յաջողութեամբ պատերազմեցան, բայց զիրենք չէին ջնջեր, այլ հարկատու կ'ընէին: Աստուած աս բանիս համար զիրենք մասնաւորապէս յանդիմանեց. անոնք թէպէտ իսկզբան բրածններուն վրայ զղջացին, բայց շուտով նորէն իրենց առաջուան ընթացքը բռնեցին:

**3.** Կ'երեւայ որ աս քսան տարւան միջոցին մէջ պատահած ըլլայ Բենիամինի երկիրն ըլլող Գարաայի բնակիչներուն՝ Ղեւտացւոյ մը կին շարշարելով մեռցրնելուն համար ելած պատերազմը: Աս անհնարին ոճիրը մէկալ ցեղերը լսեցին նէ՛ յանցաւորները Բենիամինի ցեղէն ուզեցին. եւ երբ որ ինդիրքնին մերժուեցաւ, միարան որոշեցին որ բոլոր Բենիամինի

ցեղն որ 27,000 հոգի էր, ջարդեն լմընցընեն. աս մտքով մէկէն անոնց վրայ 40,000 հոգի խրկեցին: Բայց Աստուած զիրենք խրատելու համար՝ որ նախ իրենք զիրենք ուղղեն ու ետքը ուրիշին մեղաց վրէժինդիր ըլլան, թողուց որ առջի երկու անգամ՝ յարձակելուն՝ չարաչար յաղթուին. որով ան 40,000ը բոլորովին ջարդուեցաւ: Իսկ երրորդ անգամ՝ յարձակելուն՝ Բենիամինի ցեղի մարդիկն յաղթուեցան. մէկալ ցեղերն անոնց բոլոր քաղաքներն ու գեղերն այրեցին, մէջի կանայքն ու տղաքը կոտորեցին. անանկ որ Բենիամինի ցեղէն միայն 600 հոգի մնաց, որոնք ձի հեծած փախան գացին: Իսրայելացիք աս յաղթութենէն ետքը Սելով գացին, Աստուծոյ տապանակին առջևը Բենիամինի ցեղին վրայ լացին: Այլ թէպէտ կ'ուզէին նորէն աճեցընել, բայց երգումըրած ըլլալով՝ որ ան փախչողներուն կին չտան, ինչ ընելիքնին չէին գիտեր: Ա երջապէս հնարք մը գտան առանց երգումնին քակելու՝ նոյն ցեղն աճեցընելու:

4. Հաւանականարար աս պատերազմէն ետեւ՝ Գանայ ցեղին տեղը քիչ գալով՝ ուզեց զաղթականութիւն մը հանել: Նախ տեղ փնտռելու համար հինգ հոգի խրկեց, որոնք Ափրեմի ցեղին մէջէն անցած ատեննին՝ Միքա անունով մէկու մը տունը գալով՝ հանտեղը կուռք մը եւ Աւետացի մը գտան՝ որն որ քրմնութիւն կ'ընէր. անկէ ելան Պաղեստինի հիւսիսային զին՝ Լիրանան ու Անտիլիրանան հովտին մէջ Լայիսա քաղաքն եկան եւ անկա առնելու շատ յարմար գտնելով՝ դարձան

պատմեցին : Ան ատեն անսփջապէս 600 հոգի  
 Այլիսան առնելու համար ճամբայ ելան . եւ  
 Միքային տան առջեւէն անցած ատեննին՝  
 դրան առջին կեցան , ան հինգ լրտեսը ներս  
 մտան կուռքն ու բուրմն առին քալեցին : Թէ-  
 պէտ Միքա ետեւնէն կը պոռար ու կը բողո-  
 քէր , բայց անօգուտ . անոնք առանց մտիկ ը-  
 նելու անցան գացին Այլիսան առին , անունն  
 ալ փոխեցին Գան դրին եւ հոն նոյն կուռքը  
 պաշտեցին :

Ճ . Աս քսան տարին անցնելէն ետեւ՝  
 մինչեւ 338 տարի Աստուած անոնց մէջէն ա-  
 տեն ատեն երեւելի զօրազարներ հանեց , որոնք  
 Իսրայելացւոց մէկ քանի եւ կամ բոլոր ցեղե-  
 բուն զլուխն անցած՝ Աստուծոյ օգնութեամբը  
 զիրենք թշնամեաց ձեռքէն ազատեցին , եւ  
 ետքը մինչեւ իրենց մահը վրանին կ'իշխէին ու  
 դատերնին կը կտրէին , որուն համար ալ Գա-  
 ուր կ'ըսուէին . բայց օրէնք գնելու իշխա-  
 նութիւն ու ստճիկ չունէին : Հաւանական է  
 թէ ասանկ դատաւորներ շատ ելած ըլլան .  
 բայց Ս . Գիրքը մինակ տասնութեց հատին ա-  
 նունն ու գործքերը կը յիշէ :

Իսրայելացւոց բարուց վրայ խօսելով՝ քանի  
 որ Յեսուայ ատենուան ցեղապետներն ողջ  
 էին , որոնք Աստուծոյ Յեսուայ ձեռքովն բրած  
 գործքերը տեսած էին , ամէնքն ալ Աստուծոյ  
 ազէկ ծառայեցին . բայց երբ որ անոնք եւ ի-  
 իրենց ատենուան Իսրայելացիք մեռան եւ բո-  
 լորովին նոր ազգ մ'ելաւ , որոնք ոչ զԱստուած  
 կը ճանչնային , ոչ ալ անոր իրենց մէջ գոր-  
 ծած այնչափ զարմանալի գործքերը լրած էին ,

սկսան կուռք պաշտել : Աստուած վրանին բարկանալով՝ զիրենք օտար ազգաց ձեռք կը մատնէր, որ նեղութիւն : Եւ թէպէտ ետքը լացքերնին լսելով՝ դատաւորներու ձեռքով կ'ազատէր, բայց դատաւորին մեռնելէն ետքը՝ աւելի կը չարանային : զԱստուած կը թողութիւն կուռք կը պաշտէին : Ասանկ մէյ մը Աստուծակ կ'ապրատամբէին եւ օտար ազգաց գերի կ'ըլլային, մէյ մը կ'ապաշխարէին ու խօսք կու տային ճշմարիտ Աստուածը պաշտելու, եւ այնպէս օտար ազգաց ձեռքէն կ'ազատէին : Խոստումնին չպահելնին սրչափ որ ծանր կ'ըլլար, այնչափ ալ Աստուած զիրենք՝ օտար ազգաց ձեռքով՝ երկայն ու չարաչար կը պատժէր : Ամենէն զիսաւոր յանցանքնին աս էր, որ օրինաց դէմ՝ Քանանացոց ազգերուն հետ խնամութիւն կ'ընէին, եւ աս բանս իրենց պատճառ կ'ըլլար կապաշտութեան մէջ լինալու :

## Ի Է . Գ Ա Ս

1. Գողոնիէլ եւ Ասփղ սփ են եւ ինչ բրին : Սամեգար ինչպէս մարդ էր : — 2. Գերոփա ու Բարակ Իսրայել լացիքը Եսրէնին ձեռքէն ինչպէս փրկեցին :

1. Առջի դատաւորն եղաւ Քաղերին պզտիկ եղբայրը՝ Գողոնիէլ : Ասիկա Իսրայելացիները Միջագետի Ասորոց Քուսարսամէմ թագաւորին ձեռքէն փրկեց, որուն ու թը տարի չարաչար կը ծառայէին : Գողոնիէլ՝ պատերազմաւ առնուած երկիրները 40 տարի խաղաղ պահելէն ետեւ՝ մեռաւ :

Իսրայելացիք անգլուխ Ֆալով՝ նորէն մե-

զաց մէջ ինկան : Աստուած ալ զիրենք Մո-  
 վաբացւոց Եզզում թագաւորին ձեռքը մատ-  
 նեց , որուն 18 տարի ծառայեցին , ու ետքը  
 Աւովդին ձեռքը փրկուեցան : Ասիկա Բենիա-  
 մինի ցեղէն քաջ մարդ մըն էր , որն որ երկու  
 ձեռքովն ալ կրնար հաւասարապէս գործել :  
 Անգամ մը տարեկան հարկը վճարելու համար  
 թագաւորին գացած ատեն՝ վերաբերուին տակ  
 աջ դին դիզ մը երկայն երկայրի սուր պա-  
 հեց , եւ թագաւորին քովինները դուրս հա-  
 նել տուաւ դադաուկ խօսք բսելու պատրուա-  
 կաւ : Երբ որ սենեկին մէջ ինք ու թագաւորն  
 առանձին մնացին , Աւովդ անոր բաւ թէ  
 Աստուծոյ կողմանէ քեզի առանձին բսելիք  
 մ'ունիմ . Եզզում աւելի քովը մօտեցաւ որ  
 լսէ . Աւովդ շուտ մը սուրբ հանեց կուշար  
 խոթեց , դուրս ելաւ , դուռը վրայէն կղպեց ,  
 փախաւ գնաց : Թագաւորին մարդիկը դուռը  
 կղպուած գտնելով՝ խել մը ատեն դուրսը  
 սպասեցին . բայց ետքը տեսնելով որ դուռը  
 չիբացուիր , իրենք բացին ու թագաւորը գե-  
 տինը փռուած գտան : Ասկէ երբ որ մէջերնին  
 շփոթութիւն ինկած էր , անդիէն Աւովդ Իս-  
 րայելացիքն առած վրանին վազեց եւ մեծ ջարդ  
 տուաւ , մէկ օրուան մէջ անոնցմէ 10,000 հո-  
 գի սպաննեց : Մովաբացւոցմէ ազատելէն ե-  
 տեւ Իսրայելացիք Աւովդին դատաւորութեան  
 ատեն 80 տարի խաղաղ մնացին : Անոր մեռ-  
 նելէն ետեւ թէպէտ Փղշտացիք վրանին յար-  
 ձակեցան , բայց Սամեզար՝ որն որ կտրիճ մարդ  
 մըն էր , դիմացնին ելաւ , արօրի մաճով ա-  
 նոնցմէ 600 հոգի սպաննեց եւ շատ մը արջառ

եւ ոչխար աւար առաւ, ասանկով Իսրայելացիք վտանգէն ազատեց :

Չ. Սամեղար մեռնելէն ետեւ՝ ժողովուրդը նորէն մեղաց մէջ իյնալով՝ Աստուած զիրենք Քանանացւոց Յարին թագաւորին ձեռքը մատնեց, որուն 20 տարի ծառայեցին : Էտքը երբ որ Աստուծոյ գիմեցին, Գերովրա անունով կին մարգարէի մը իր կամքը յայտնեց, որն որ ան ժամանակներն Իսրայելացւոց դատաւորութիւն կ'ընէր՝ Էփրեմին լեռը արմաւենւոյ մը տակ նստած : Գերովրա Բարակ Ներթաղիմացին կանչեց, Աստուծոյ կողմանէ հրամայեց որ Ներթաղիմայ ու Չարուզոնի ցեղէն 10,000 հոգի առնէ, Ախսոնի հեղեղատը՝ Յարին թագաւորին Սիսարա զօրապետին դէմ ելլէ : Բարակ յանձն առաւ, բայց միանգամայն խնդրեց որ ինքն ալ մեկտեղ գայ : Գերովրա հաւանեցաւ ու Սիսարային կնոջ մը ձեռքը մատնուելիքը գուշակեց : Աս գուշակութիւնը կատարուեցաւ. Սիսարա պատերազմի մէջ նեղ մտնելով՝ ստիպուեցաւ փախչիլ, եւ կառքէն վար իջնելով՝ դէպ ի Աինեցւոց կողմը գիմեց, յուսալով որ հոն ապաւեն մը կը գտնէ : Աինեցիք թէպէտ նոյն ատեն Յարին թագաւորին հետ աղէկ էին, բայց միանգամայն Մովսիսի կնկան դիէն Իսրայելացւոց խնամի ըլլալով՝ իրենց հետ ալ բարեկամութիւն ունէին : Քաբեր Աինեցւոյն կինը Յայէլ՝ Սիսարային գալը տեսնելով՝ զինքն իր խորանը հրաւիրեց : Սիսարա ներս մտաւ ու խմելու ջուր ուզեց. Յայէլ ջրի տեղ կաթ խմցուց եւ ուղածին պէս՝ գաղտուկ պառկեցուց, վրան լա-

Թով ծածկեց : Ետքը վրանի ցիցով զլուխը գետինը դամեց ու սպաննեց : Բարակ Սիսարային ետեւէն ինկած ըլլալով՝ Յայելին եկաւ , անիկա ալ զինքը ներս առաւ Սիսարային դիակը ցուցուց : Ասանկով Յարին թագաւորին զօրքն առանց առաջնորդի մնալով՝ յաղթուեցաւ : Գերովրա ու Բարակ ալ նոյն օրը Աստուծոյ իրենց տուած յաղթութեան համար գոհութեան երգ երգեցին :

## Ի Ը . Գ . Ա . Ս

1 . Հ ո ու թ ո վ է . Նոսոփնին հետ ինչպէս Բեթզեհէմ եկաւ : — 2 . Բոսոփն հետ ինչպէս ծանօթացաւ ու համամուսնացաւ :

1 . Վէրը պատմուած յաղթութեան վրայ՝ Իսրայելացւոց երկիրները 40 տարի խաղաղ մնացին . բայց աս տարիներն անցնելէն ետեւ երբ որ նորէն չարանալու սկսան , Աստուած զիրենք Մագիանացւոց , Ամաղեկացւոց եւ Արարացւոց ազգերուն ձեռքը մատնեց , որոնք եօթը տարի վրայէ վրայ անդադար Իսրայելացւոց երկիրներն աւարառութիւն ընելով՝ ան տեղուանքը մեծ սովի մէջ ձգեցին :

Հաւանական կ'երեւայ որ աս սովին ատենն ըլլայ՝ Եղիմեղէք անունով մէկու մը՝ Բեթզեհէմ քաղքէն ելլելով՝ Նոսոփն կնոջմովն ու երկու որդիներովը Մովաբացւոց երկիրն երթալը : Հոն Եղիմեղէք մեռաւ . իր երկու որդիներն ալ՝ որ նոյն տեղը Մովաբացի ազգիկներ առած էին , մեռնելով՝ Նոսոփն ուզեց անոնց Որփա ու Հոութ կանայքը տներնին դարձը-



նել եւ ինք հայրենիքը դառնալ : Որքան շատ  
 դժուարութեամբ իր սկեսրէն բաժնուեցաւ,  
 բայց Հառութ ամենեւին չուզեց բաժնուիլ :  
 'Նոսովնայ ետեւէն կու գար բսելով՝ Քու ժո-  
 ղովուրդդ՝ իմ ժողովուրդս, քու Աստուածդ՝  
 իմ Աստուածս է, դուն ուր որ երթալու  
 ըլլաս՝ ես ալ հոն կ'երթամ. ուրիշ կերպով  
 իրարմէ չենք կրնար բաժնուիլ, բայց եթէ  
 մահուամբ : 'Նոսովն տեսաւ որ ճար չկայ, թո-  
 ղուց որ հետը գայ, եւ այսպէս երկուքը մեկ-  
 տեղ Մովսէսացւոց երկրէն՝ Յուդայի երկիրը  
 Բեթղեհէմ՝ եկան : Հառութ դարձաւ Իսրայել-  
 ացւոց կրօնն ընդունեցաւ. բայց երկուքն ալ  
 մեծ կարօտութեան մէջ էին : Իրենց եկած  
 ժամանակը գարի հնձելու ատենն ըլլալով՝  
 Հառութ 'Նոսովնէն հրաման առաւ որ մէկուն  
 արտը մտնէ եւ հնձողներէն ինկած հատերը  
 ժողովէ :

2. Աստուած Հառութայ ընթացքը Բոս-  
 սին անդն ուղղեց, որն որ հոն գալով ու  
 զինքն իր հնձողներուն մէջ տեսնելով՝ երբ որ  
 անոնց զխաւորէն ո՛վ ըլլալն իմացաւ, Հառ-  
 ութայ պատուիրեց որ ուրիշ տեղ չերթայ, հա-  
 պա իր աղախիններուն մէջ խառնուի, անոնց  
 քալած տեղն երթայ եւ ինկած հատերը ժող-  
 վէ : Իր մարդիկներուն ալ սպասարէր էր, որ  
 թէ եւ հասկերուն վրայէն ալ քաղելու ըլլայ՝  
 բան մը չխօսին, զինքը չամբշցրնեն : Հառութ  
 ասոնք տեսնելով՝ Բոսսին ուրն ինկաւ եւ ը-  
 սաւ : Ինչպէս կրնայ ըլլալ որ քեզի անձանթ  
 կին մ'ըլլալովս՝ քեզմէ ասանկ մեծ շնորհք  
 գտնեմ : Բոսս պատասխանեց թէ Էրկանդ



## Ի Թ . Գ Ա Ս

1. Աստուծոյ խրկուած հրեշտակը զՊեդէոն ուր բարեւոյց, Աստուծոյ նոյն զիշեր իրեն ինչ հրամայեց: — 2. Պեդէոն Աստուծոյ ինչ նշան ուղեց, ոտք հանած զօրքէն վերջապէս քանի հոգի մնաց: — 3. Պեդէոն թնամուսն բանակը մտած տանն ինչ լոյց. պատերազմն ինչ վերջ ունեցաւ: — 4. Եփուզն ուստի եւ ինչ վախճանաւ շինեց: — 5. Արիմեւէր ով է, ինչպէս թագաւոր եղաւ: Յօգնութան Արիմեւցոց բրածն ինչ կերպով վար զարկաւ: Արիմեւէր ու Արիմեւցիք պատիժնին ինչպէս գտան:

1. Երբ որ Խորայեւրացիք քաշած նեղութիւններնէն խելքերնին, գլուխնին ժողովելով՝ Աստուծոյ զխմեցին, Աստուծոյ զիրենք մարգարէի մը ձեռքով խրատելէն ետեւ՝ Մանասէի ցեղէն Պեդէոնին հրեշտակ մը խրկեց, որ հօրը կայր ցորեան ձեծած տանն՝ անոր բարեւտալով ըսաւ. Տէր ընդ քեզ, հոգի զօրութեամբ: Պեդէոն պատասխանեց թէ Աստուծոյ հետեւնիս ըլլար նէ՛ աս շարիքները գլուխնիս չէին դար: Հրեշտակն ըսաւ. Խորայեւրացիքը քու զօրութեամբդ Մագիանացոց ձեռքէն պիտ'որ ազատես: Պեդէոն հրեշտակին պատասխանեց. Ես ինչպէս կրնամ զիրենք փրկել, որովհետեւ իմ ընտանիքս Մանասէի ցեղին մէջ ամենէն ստորինն է եւ ես հօրս տան մէջ ամենէն պրզափէն եմ: Հրեշտակը զինքը քաջալերեց. Ես հետդ եմ, ըսաւ, դուն Մագիանացիները գլուխու կը յաղթես: Պեդէոն կարծելով որ հետը խօսողը մարգարէ մըն է, որ Աստուծոյ կողմանէ եկեր կը խօսի, ուղեց իրեն կերակուր հանելով՝ զինքը պատուել. անոր համար աղաչեց որ մինչեւ կերակուր բերէ նէ՛ կաղնիի ծա-

ռին տակ կենայ, ան ալ յանձն առաւ : Գեղէոն շուտ մը գնաց բաղարջ հաց եւ ուլ մը եփեց բերաւ : Հրեշտակն անոնք քարի վրայ դնել տալով՝ ձեռքի զաւազանովը դպչելուն պէս՝ մէկէն կրակ ելաւ անոնք այրեց, ինքն ալ աներեւոյթ եղաւ : Գեղէոն նոյն ատեն անոր ո՛վ ըլլալը ճանչնալով՝ կը վախնար որ չըլլայ թէ մեռնի, որովհետեւ Խորայելացւոց մէջ հասարակ կարծիք էր թէ հրեշտակ տեսնողը կը մեռնի : Ան գիշեր Աստուած Գեղէոնին ապապրեց որ երթայ հօրը Բահաղ կուռքը կործանէ, քովի անտառը կտրէ, անոր փայտերէն նոր սեղան մը շինէ, եւ հօրն եօթը տարւան գէր եզը վրան իրեն ողջակէզ մատուցանէ : Գեղէոն աս բանս ցորեկն ընելու վախնալով՝ գիշերն իր ծառաներէն տասուիրեք հօգի առաւ, գնաց Աստուծոյ հրամանը կատարեց : Տեղացիք երբ որ սեղանը կործանած գտան, եւ իմացան որ ընողը Գեղէոնն է, հօրը եկան ուզեցին որ որդին ձեռուրնին տայ : Ան ալ ըսաւ : Չեր ինչ վրան պէտք է. թէ որ Բահաղ Աստուած է, թող իր սեղանը կործանողն ինք պատժէ : Ասկէ Գեղէոն՝ Յերօբուաղ ըսուեցաւ, որ ըսել է Թող Բահաղ վրէժ խնդրէ :

**Չ.** Մագիսանացիք ու Ամաղեկացիք՝ երբ որ աւարառութեան համար Յորդանանին քովերն եկան, Գեղէոն Աստուծոյ հոգւովը զօրանալով՝ մարդ խրկեց ու Խորայելացւոցմէ 32,000 հոգի ոտք հանեց : Բայց պատերազմը չսկսած, Աստուծմէ՛ իր ձեռքովն Խորայելացիքը փրկելուն աս նշանը խնդրեց, որ գիշերը

ասուէ գզաթը կայր ձգէ ու ցօղը մինակ անոր վրայ իջնայ. իսկ քովի տեղուանքը չոր մնան: Աստուած խնդիրքը կատարեց: Գեղէոն առտու ելաւ գզաթը քամեց, կոնք մը ջուր հանեց: Ետքը վախկոտ Խորայելացիքը համոզելու համար խնդրեց որ գզաթը չոր մնայ ու քովի տեղուանքը թըջին: Աստուած աս ալ կատարելէն ետքը՝ Գեղէոնին զօրքն անհամեմատ քիչացուց, որպէս զի Խորայելացիք ետքէն չբսնն որ Մենք մեր զօրութեամբն ազատեցանք: Ուստի նախ չուզողներն ետ դարձնել տուաւ, որով 32,000էն՝ 10,000 մնաց: Ասոնք ալ ջուր խմելու տանել տուաւ, եւ հրամայեց որ շան պէս լափելով խմողները՝ ծնկան վրայ ինկած խմողներէն զատէ եւ միայն առջինները հետն առնէ: Ան լափելով խմողներն 300 հոգի էին: Աստուած խոստացաւ որ այնչափ հոգւով զիրենք փրկէ. իսկ մեկայնոնց համար հրամայեց որ ետ դառնան:

**3.** Մադիանացւոյ բանակը՝ որ 135,000 հոգւոյ կը հասնէր, Գեղէոնին կեցած տեղէն վար հովտի մը մէջ էր: Գեղէոն իր Փուա ծառային հետ զիշերանց ասոնց բանակը մրանելով՝ Մադիանացւոյ մը հանդիպեցաւ, որն որ կեցեր տեսած երազն ընկերին կը պատմէր: Քարիէ նկան մը տեսայ, կ'ըսէր, որ վերէն վար գլտորելով՝ եկաւ Մադիամին վրանը կործանեց: Ընկերն ասոր պատասխանեց թէ Ասիկա ուրիշ բան չէ, բայց եթէ Գեղէոնին սուրբ, որովհետեւ Աստուած զմեզ անոր ձեռքը պիտի մատնէ: Գեղէոն աս որ լսեց, Աստուծոյ շնորհակալ ըլլալով՝ տեղը դարձաւ,

իր 300ին՝ Աստուած Մադիանացիքը ձեռքերնիս մատնեց, ըսաւ : Ձիրենք երեք մաս բաժնեց, ձեռուրնին մէյմէկ փող տուաւ, մէյմէկ ալ դատարկ սափոր՝ որոնց մէջ վառած ջահար . եւ պատուիրեց որ երբ որ ինք փող զարնելու ըլլայ՝ իրենք ալ զարնեն, եւ ձեռքի սափորնին զետինը զարնելով կոտորեն եւ բսեն . Սուր Տեառն եւ Գեղէոնի : Աս ասանկ որ եղաւ՝ Աստուած թշնամեաց վրայ անանկ վախ մը ձգեց, որ շփոթելով՝ սկսան մէկզմէկ կոտորել ու փախչիլ : Ան ատեն Գեղէոն Էփրեմի ցեղին հրաման իրկեց որ փախչողներուն առջին առնեն : Անոնք էլան Մադիանացւոց առջեւը կարեցին, անոնց Արեբ ու Ձեր իշխանները բռնեցին զլուխնին կարեցին Գեղէոնին իրկեցին :

Գեղէոն իր 300ովը Մադիանացւոց Ձերէի ու Սաղմանայ թագաւորներուն ետեւէն ինկաւ . բայց Յորդանանէն անցնելէն ետեւ տեսնելով որ զօրքը յողներ ու անօթեցեր է, Սղքքովթ գնաց հաց ուղեց . երբ որ քաղաքացիք շտուին, Գեղէոն ըսաւ . Եթէ Աստուած Ձերէին ու Սաղմանան ձեռքս տալու ըլլայ նէ, զձեզ պիտի բռնեմ՝ անապատին փշերովը խոշտանգելով սպաննեմ : Անկէ Փանուէլ գնաց, հոն ալ խնդիրքը մերժուելով՝ սպառնացաւ որ Ձերէի ու Սաղմանայ թագաւորներուն յաղթէ նէ՝ աշտարակնին կործանէ : Անցաւ գնաց ան թագաւորներուն վրայ, եւ զիրենք անհոգ կեցած գտնելով՝ մէկէն զարնուեցաւ, զօրքերնին ցրուեց, զիրենք ալ բռնեց . Սղքքովթի ու Փանուէլի բնա-

կիշներուն ըրած սպառնալիքները կատարելէն ետեւ՝ իր Եթեր անդրանիկ որդւոյն ըսաւ որ ելլէ ան երկու թագաւորներն սպաննէ : Անիկա տղայ ըլլալուն՝ վախցաւ շքրաւ նէ, ինք անձամբ սպաննեց :

4. Իտրայելացիք Գեդէոնին աս գործքերուն համար՝ ուղեցին որ իր տունն որդւոց որդի վրանին իշխէ . բայց Գեդէոն յանձն չառաւ, հապա իրենցմէ խնդրեց որ առած անարներնէն մարդ գլուխ իրեն մէյմէկ օղ տան : Էւ ան օղերէն առաւ աս իր ձեռքովը գործուած յաղթութիւններուն յիշատակին համար Եփուդ շինեց Եփրա քաղաքը դրաւ, որն սր ետքը իր զաւկրներուն եւ բոլոր Իտրայելացւոց կռապաշտութեան մէջ իյնալու պատճառեղաւ : Բայց ինք 40 տարի ժողովրդեան դատաւորութիւն ընելով՝ զանոնք Աստուած պաշտութեան մէջ բռնեց ու բարի մահուամբ մեռաւ :

5. Գեդէոն 70 զաւակ թողուց, ասոնցմէ զաս Սիկիմացի կնոջմէ մը Աբիմելք անունով որդի մ'ալ : Ասիկա իր մօրն ազգականներն համոզեց որ մինակ ինք վրանին իշխէ, եւ անոնց ձեռքովը բոլոր Սիկիմացիքը շահելէն ետեւ՝ աւելի ապահովութեան համար՝ իրենցմէ վարձած սրիկաներով՝ դնաց հօրն Եփրա քաղաքը բոլոր եղբարքը բռնեց մէկ քարի վրայ զամէնքը սպաննեց : Մինակ Յովաթամ՝ ամենէն պզտիկ եղբայրնին պահուրտելով՝ ձեռք չինկաւ : Երբ որ Սիկիմացիք Աբիմելքը թագաւոր կը դնէին, Յովաթամ՝ Գարիզնի լերան վրայէն՝ որն որ Սիկիմի վրայ կը նայէր, Սիկիմացւոց ըրածն

առահով մը վար զարնելէն ետեւ՝ թէ որ Գեղէնին տան ըրածնիդ արդար էր նէ, ըսաւ, պտու զը բարով վայլէք, ապա թէ ոչ՝ պատիժնիդ Արիմելքէն գտնէք: Աս ըսաւ ելաւ փախաւ: Յովաթամին խօսքն ելաւ. երեք տարիէն վերջը Սիկիմացիք Արիմելքին տանիլ չկրնալով, անկէ ապստամբեցան, որն որ զօրքով քաղաքնին առաւ կործանեց, եւ մէջի բնակիչներուն մէկ մասը ջարդեց: Բայց որովհետեւ քաղաքացւոց շատերը Սիկիմի բերդը փախած էին, գնաց բեռ մը փայտ կտրեց, ուսը զարկաւ, իր զօրքն ալ նոյնն ընելով՝ բերին զանոնք բերդին բոլորտիքը դիպեցին, եւ կրակ տալով՝ բերդը մէջիններովն այրեցաւ, որոնք ամէնքը մեկտեղ 1000 հոգւոյ շափ կային: Անկէ թեբէս քաղքին վրայ գնաց, առաւ. բայց մեծամեծներն ամուր բերդը փախած ըլլալով՝ Արիմելք հոն գնաց որ առնէ. սակայն բերդին դրան մտիկցած ատեն՝ վերէն կին մը վրան երկանի կտոր մը նետելով՝ գլուխը ջախջախեց: Ան ատեն Արիմելք յուսահատած՝ կապարճակրին ըսաւ որ զինքը սպաննէ, որպէս զի չըլլայ թէ կնոջ մը ձեռքով սպաննուած սեպուի: Ասանկով թէ Սիկիմացիք եւ թէ Արիմելք ըրածներնուն պատիժը գտան:



Լ . Գ Ա Ս

1. Թողզան ու Յայիր քանի տարի դատաւոր եղան : —
2. Յեփթայէ ո՛վ է . զրան ինչ կը պատճառի : — 3. Եսերան, Եղան եւ Արդան ո՛վ են :

1. Արիմեյէքէն կտքը Թողզա ու Յայիր դատաւորներն եկան, որոնք հաւանականաբար մի եւ նոյն ժամանակն էին : Թողզա՛ որն որ Արիմեյէքին ազգականներէն էր, Յորդանանէն ասդին Եփրեյմին լեռը դատաւորութիւն բրաւ . իսկ Յայիր Գաղաադացին՝ Յորդանանէն անդին՝ Իսրայելացիքը 22 տարի դատեց :

2. Ասոնց մեռնելէն ետեւ՝ Իսրայելացիք սկսան իրենց մտաբլուղ ազգերուն աստուածները պաշտել : Անոր համար Փղշտացւոց եւ Ամոնացւոց ձեռքը մատնուեցան, որոնց տասնուութը տարի չարաչար ծառայելէն ետեւ՝ Աստուծոյ դիմեցին, որ զիրենք ազատէ : Աստուած ալ՝ իր այնչափ անգամ զիրենք զանազան ազգերուն ձեռքէն փրկելն եւ իրենց ասոր փոխարէն օտար աստուածներու երկրպագութիւն ընելով՝ իրեն ցուցուցած ապերախտութիւնն երեսնին զարկաւ ու խնդիրքնին մերժեց . Թող էրթան, բսաւ, բնտրած աստուածնին օգնութեան կանչէն : Անոնք բրածներնուն զբայ սրտանց զղջացին . օտար աստուածները մէջերնէն հանեցին : Ան ատեն Աստուած ալ իրենց լացքն ու ողբը լսելով՝ ազատիչ մը խրկեց :

Ամնացիք Գաղաադ բանակած ըլլալով՝ Իսրայելացիք անոնց դէմ Մասեփա ժողովեցան եւ որոշեցին որ թշնամեաց դէմ առջի անգամ պատերազմի ելլողն՝ իրենց գլուխ ըլ-

լայ : Նոյն ատենները Յեփթայէ Գաղաաղացին՝ իր խորթ եղբայրներէն հօրը տնէն վարնտուելով՝ գլուխը խել մը սրիկաներ ժողված աւարառութիւն կ'ընէր : Գաղաաղացիք իր մէ խնդրեցին որ իրենց առաջնորդ ըլլայ : Յեփթայէ իսկզբան յանձն չառաւ . բայց վերջէն աս պայմանաւ հաւանեցաւ որ յաղթելու ըլլայ նէ՝ ինք վրանին իշխէ , եւ ելաւ Մասեփազնաց , ուր որ Խորայելացիք ժողված էին : Պատերազմի չսկսած՝ Ամենացոց թագաւորին մարդ խրկեց հարցուց որ իրենց դէմ ինչու պատերազմի ելեր է : Անիկա պատասխան տուաւ թէ Իմ երկիրներս առնելնուդ համար : Յեփթայէ նորէն մարդ խրկեց , ըսաւ որ Առջի անգամ աս տեղերն եկած ատեննիս՝ Աստուծոյ օգնութեամբը , պատերազմական իրաւունքով՝ նոյն երկիրներն առ ինք , եւ անկէ մինչեւ այսօր մեր ձեռքը մնաց : Հիմա քու աս անիրաւութեանդ դատաստանն Աստուած տեսնէ : Երբ որ թագաւորը մտիկ չըրաւ , Յեփթայէ Աստուծոյ զօրութիւն ընդունելով՝ շուտ մը պատերազմի պատրաստուեցաւ : Բայց չսկսած՝ ուխտեց որ եթէ յաղթութեամբ ետ դանալու ըլլայ , իր տնէն դիմացն ելող առջի անձն՝ ողջակէզ մատուցանէ : Աս ըսաւ , մէկէն թշնամեոյն վրայ յարձակեցաւ : Աստուած Ամենացիներն իր ձեռքը մատնեց , որոնց մեծ ջարդ տուաւ եւ ձեռքերնէն քսան քաղաք առաւ :

Յաղթութեամբ՝ Մասեփա իր քաղաքը դանալու ատեն՝ մէկէն իր մէկհատիկ սիրելի աղջիկը տեսաւ՝ որ պար բռնած , թմբուկ զար-

նելով դիմացը կ'ելէր: Յեփթայէ թէպէտ շատ ցաւեցաւ ու զգեստը պատռեց, այսու ամենայնիւ ուխտը զանց չառաւ: Ազջիկն ալ երբ որ բանն իմացաւ՝ սիրով յանձն առաւ, մինակ երկու ամիս հասակակիցներուն հետ կուսութիւնը լեռներու վրայ լալու հօրմէն ատեն ուզեց: Ժամանակին հօրը դառնալով՝ հայրը ուխտը կատարեց<sup>1</sup>: Անկէ ետեւ Իսրայէլացւոց մէջ սովորութիւն եղաւ որ ազջիկները մէկտեղ դալով տարին չորս օր Յեփթայէին ազջիկը կու լային:

**Յ.** Աս պատերազմէն զատ՝ Յեփթայէ Եփրեմի ցեղին հետ ալ պատերազմ ունեցաւ, որուն մէջ նոյն ցեղէն 42,000 հոգի մեռան, Յեփթայէ վեց տարի Իսրայէլացիքը դատելէն ետքը մեռաւ: Ասոր ետեւէն եկող դատաւորներն եղան Եսերոն Բեթղէհէմացին՝ որ եօթը տարի դատաւորութիւն ըրաւ. Եղոն Չարուղոնացին՝ որ տասը տարի Աստուծոյ ժողովուրդը դատեց եւ Արդոն Փարաթոնացին Եփրեմի ցեղէն, որ ութը տարի դատաւորութիւն ըրաւ:

1 Թէպէտ եւ հին մեկնիչներն ու Ս. Հարց մեծ մասն անանկ կը կարծեն որ Յեփթայէ երբ էր ազջիկն ողջակէզ հանեց, եւ առ բանս էր միամտութեամբ տալով՝ զինքն անմեղագիր կ'ընեն. բայց նորերը՝ զանազան պատճառներով ասոր հակասակը կը պաշտպանեն, եւ կը զբուցեն որ մշտնջենաւոր կուսութիւն պահել տուաւ, որն որ նոյն ատեն բարոյական մահ կը սեպուէր:

## Լ Ա . Դ Ա Ս

1. Սամփսոն չձնած՝ Աստուած հրեշտակի մեռքով իր ծնողացն ինչ պատուիրեց : — 2. Սամփսոն ծնողացը հետ ինչո՛ւ թժամեաթա գնաց . զինացն ելլող առիւծին ինչ ըրաւ . երկրորդ անգամ հոն գալուն՝ անոր բերանն ինչ գտաւ . ինչպէս կրցան երիտասարդները Սամփսոնին ըսած հանելուկը լուծել : — 3. Թժամեաթացիք Սամփսոնին կնիկն ինչո՛ւ սյրեցին : Սամփսոն իշու ծննտով երբ խել մը Փղշտացի սպաննեց : — 4. Գաղա քաղաքն իր դարանակարներուն մեռքէն ինչպէս կրցաւ ազատիլ : — 5. Թշնամփներուն մեռքն ինչպէս ինկաւ ու մեռաւ :

1. Իսրայելացիք նորէն կռապաշտութեան սկսելով՝ Աստուած վրանին թշնամփներ յարոյց . մանաւանդ Փղշտացիքը . որոնք 40 տարի զիրենք շատ նեղեցին : Աս ատենս իրենց քահանայապետ ու գատաւոր Հեղին էր . որն որ հասարակ հաշուին նայելով՝ Արդոնին յաջորդն եղաւ : Ասիկա թէ քահանայապետ ու թէ գատաւոր ըլլալուն՝ աս կրկին իշխանութեամբ Աստուծոյ ժողովուրդը 40 տարի կռաւժարեց : Բայց իր գատաւորական իշխանութեան՝ քսան տարի ընկեր եղաւ Սամփսոն . որն որ Հեղինն՝ իշխանութեան հասնելուն առաջին տարին ծնաւ :

Սամփսոն չձնած՝ Աստուած անոր ուխտաւոր ըլլալն իր ծնողացն աս կերպով յայանեց : Գանայ ցեղէն Մանովէ անունով մէկու մը ամուլ կնոջը հրեշտակ երեւնալով՝ Գուն որդի մը պիտի ծնանիս . ըսաւ . որուն գլխոյն երկաթ պիտի չգաչի . վասն զի Նազովրեցի (ուխտաւոր Աստուծոյ) պիտ'որ ըլլայ եւ Իսրայելացիները Փղշտացւոց մեռքէն պիտ'որ ազատէ : Երբ որ կինն աս բաներս էրկանը

պատմեց, անիկա Աստուծոյ աղաչեց որ կնոջն եկողը նորէն խրկէ, որպէս զի ծնանելու տղուն ընելիքնին աղէկ մ'իմանան: Ետքը կինն առանձին անդը կեցած ատեն՝ հրեշտակը նորէն տեսաւ, եւ անմիջապէս գնաց բանն երկանը զրուցեց, որն որ շուտ մը եկաւ հարցուց թէ որդի ունենայ նէ՞ ինչ պէտք է ընել: Հրեշտակը պատասխանեց. Տղան որթէն ելած բան բերանը պիտի չխոթէ, զինի եւ օղի պիտի չիմէ, անսուրբ բան պիտի չուտէ: Մանովէ անոր աղաչեց որ քովը կերակուր ուտէ. իսկ հրեշտակն յանձն չառաւ. Բայց եթէ Աստուծոյ օղջակէզ մատուցանել կ'ուզես նէ՞ բեր, բտաւ: Մանովէ անունն հարցուց, որ եթէ խօսքը կ'ելլէ նէ՞ կարող ըլլան զինքն օրհնել: Հրեշտակը պատասխանեց. Անունս ինչ կը հարցընես, Սքանչելի է: Մանովէ գնաց ու մը բերաւ ու Աստուծոյ օղջակէզ մատուցց, որմէ ելած բոցոյն մէջէն հրեշտակն երկինք վերացաւ: Ան ատեն իմացան որ իրենց երեւցողն հրեշտակ է եղեր ու երեսներնուն վրայ ինկան:

Ձ. Տղան ժամանակին ծնաւ ու մեծցաւ, եւ ունեցած անսովոր զօրութենէն կ'երեւար որ Աստուծոյ օրհնութիւնը վրան է: Սամփսոն չափահաս ըլլալէն ետեւ՝ ուզեց թամբաթացի աղջիկ մը կին առնել: Ծնողքն աս բանիս Աստուծոմէ ըլլալը չգիտնալով՝ առջի բերան դէմ կեցան, ըսելով որ Մեր ազգին մէջ քեզի յարմար աղջիկ չկայ, այլազգիներէն ինչո՞ւ համար պիտ'որ առնես: Բայց ետքը հաւանելով՝ աղջկան ծնողացը հետ խօսելու

Համար՝ Սամփսոնին հետ ճամբայ ելան, դէպ ի Փղշտացւոց երկիրը թափնաթա: Հոն հասան նէ՝ Սամփսոն գլուխն առած՝ մինակ այգիներուն մէջ մտաւ, ուր առիւծի ձագի մը հանդիպելով, Աստուծոյ զօրացած՝ բռնեց այծի ձագի պէս երկու ճեղքեց. ետքը հօրը մօրը քովը դարձաւ, եւ անոնց բան մը չիմացուցած՝ մէկտեղ աղջկան տունը գացին: Ասոր վրայ քիչ մը ատեն անցնելով՝ երբ որ հարսնիք ընելու համար երկրորդ անգամ՝ ծնողացը հետ թափնաթա կու գար, գնաց որ մեռցուցած առիւծը նայի: Մէյ մ'ալ տեսաւ որ մեղուններն անոր բերանը մեղր են շիներ. առաւ մեղրն ու ճամբան ուտելով՝ ծնողաց եկաւ իրենց ալ տուաւ, բայց առիւծի բերնէն գտած բլլալը չիմացուց:

Ասանկով աղջկան տունն եկան. հարսնիքը սկսաւ ու եօթն օր տեւեց: Տեղացիք իրմէ վախնալով՝ Փղշտացւոց իշխաններն ան ատենուան սովորութիւնն առիթ առնելով՝ Սամփսոնին քովը 30 կտրիճ երիտասարդներ դրին, աւելի պահպանութիւն ընելու քան թէ պատուոյ համար: Սամփսոն աս երիտասարդաց առաջարկեց որ իրենց հանելուկ մը զրուցէ, եւ եթէ հարսնիքին եօթն օրերը գտնելու բլլան, իրենց երեսուն կտոր բարակ կտաւ ու երեսուն պատմութեան տայ, իսկ եթէ չէ՝ իրենք տան: Եւ հանելուկն աս էր. Աերողէն ելաւ կերակուր, հզօրէն՝ անուշ: Անոնք երբ որ աշխատելէն ետեւ՝ չկրնալով գտնել, Սամփսոնին կնոջն եկան զրուցեցին որ կերպով մը հանելուկին միտքն էրկանը բերնէն

առնէ, Ապա թէ ոչ, ըսին, զքեզ հօրդ տնօրէ տեղորէ կ'այրենք: Աինք Սամփսոնին եկաւ շատ լացք ողբ բրաւ, որ հանելուկին միտքն իրեն զրուցէ: Սամփսոն թէպէտ առջի բերան դէմ դրաւ, ըսելով որ Հօրս մօրս չյայտնածս հիմա քեզի պիտի յայտնեմ, բայց վերջապէս չկրնայով դիմանալ հարսնիքին վերջին օրը զրուցեց: Աինն ալ գնաց իր ազգայիններուն պատմեց, որոնք նոյն օրն՝ արեւը մտնելէն առաջ Սամփսոնին ըսին. Մեղրէն անուշ ինչ կայ. ո՞վ առիւծէն աւելի զօրաւոր է: Ան ալ պատասխան տուաւ. Եթէ երինջս չճնշէիք, հանելուկս գտնելիք չունէիք: Ետքը Աստուծոյ զօրացած՝ Ասկաղոն իջաւ, երեսուն այլազգի մեռցուց, լաթերնին ան երիտասարդներուն տարաւ եւ բարկութեամբ հօրը տունը դարձաւ:

**3.** Ասոր վրայ խել մ'ատեն անցնելէն ետեւ՝ ցորենի հունձքի ատեն՝ օր մը ելաւ կինը տեսնելու գնաց: Տուն մտած ատեն՝ աները դիմացն ելաւ ըսաւ որ Ուրիշին տուի: Սամփսոն ասոր վրայ սաստիկ բարկանալով՝ մէկէն գնաց 300 դայլ կամ շնագայլ բռնեց, երկ երկու հատ պոչերնէն իրարու հետ կապեց ու մէջտեղը վառուած ջահեր հաստատած՝ Փղըշտացւոց ցորենի արտերուն մէջ թողուց, որով անոնց կտրած ցորենի հասկերը մինչեւ նաեւ իրենց այգիներն ու ձիթենիներն այրեցան մոխիր դարձան: Փղշտացիք աս բանս Սամփսոնին գործքն ըլլալը եւ պատճառն իմանալով՝ անոր կինն ու աները բռնեցին տնով տեղով այրեցին: Բայց Սամփսոն իրենց դէմ

ուրիշ յաղթութեան ու քաջութեան գործ-  
քեր ալ ըրաւ : Ինք Գանայ սահմանին քով  
Ետեմայ այրը կը բնակէր, որն որ Շմառոնի  
ցեղին երկրին մէջն էր : Փղշտացիք իրեն գէմ  
պատերազմի ելլելով՝ Յուդայի ցեղին երկրին  
քովերը բանակեցան եւ կ'ուզէին որ Սամփսո-  
նը ձեռքերնին տրուի : Յուդայի ցեղին մար-  
դիկը վախցան ու 3000 հոգի մէկ եղած՝ Սամ-  
փսոնը բռնելու ելան : Սամփսոն անոնց բերնէն  
երգմամբ խօսք առնելով որ իրենք չեն սպան-  
ներ, յանձն առաւ որ զինքը կապեն ու Փղշտա-  
ցիներուն ձեռքը մատնեն, եւ այսպէս երեք  
նոր չուանով կապուած տարուեցաւ : Փղշտա-  
ցիք զինքը կապուած տեսնելուն պէս՝ մէկէն  
աղաղակով վրան թափեցան. իսկ ինք Աս-  
տուծակ զօրացած՝ չուանները փրցուց, եւ հոն  
իշու ծնօտ մը գանելով՝ անով 1000 մարդ  
սպաննեց : Ասկէ տեղւոյն անունը կոտորած  
ծնօտի ըսուեցաւ : Սամփսոն ծարուած ըլլա-  
լով՝ Աստուծոյ դիմեց . Աստուած ալ անոր  
աղաչանքը լսելով՝ ան ծնօտին ծակէն կամ  
ծնօտին գետինն ինկած տեղէն ջուր բխեցուց,  
որմէ խմելով Սամփսոն հոգի առաւ :

4 . Ասոր վրայ անգամ մ'ալ՝ երբ որ Փղշ-  
տացւոց Գազա քաղաքը կը գտնուէր, տեղացիք  
քաղքին դրան քովերը մարդ սպասցուցին, որ  
առտուանց դուրս ելած ատեն՝ մէկէն բռնեն  
մեռցընեն : Իսկ Սամփսոն մինչեւ կէս գիշեր  
քնանալէն ետեւ՝ ելաւ, քաղքին դուռը սե-  
մնփն ու նգովը տեղէն հանեց, կռնակը զար-  
կաւ, տասը ժամ հեռու լերան մը գլուխը  
ձգեց գնաց :



Յ. Աստուած թէպէտ եւ իր փառացն ու ժողովրդեան ազատութեանը համար՝ Սամփսոնին խիստ զարմանալի զօրութիւն մը տուած էր, բայց զինքը մարդուս կրքերէն բոլորովին ազատ չէր բրած, որով մեղանշէց ու զօրութեանէն ալ զրկուելով՝ ձեռք խնկաւ: Փղշտացւոց նախարարները տեսնելով որ Սամփսոն իրենց երկիրը Գալիլա անունով կնոջ մը շատ հեղկու դայ կ'երթայ, անոր խոստացան որ ամէն մէկերնին 1100 արծաթ կու տան, եթէ Սամփսոնին բերնէն առնելու ըլլայ որ զօրութիւնն ինչ բանի վրայ է եւ ինչով կրնայ յաղթահարիլ: Ասոր վրայ Գալիլա սկսաւ Սամփսոնին ետեւէն կնալ որ բռէ: Սամփսոն անոր ձեռքէն ազատելու համար՝ առջի անդամները մէկ երկու փուճ խօպեր բտաւ. զոր օրինակ զրոցէց որ Եթէ զնս եօթը նոր ջղով կապելու ըլլաս, ոյժս կ'երթայ: Գալիլան աս բանը նախարարներուն խմացուց, որոնք եօթը նոր ջիղ բերին ու քանի մը հողի ալ մտաբեր դարանի դրին: Գալիլան զինքը նոյն ջղերով կապելէն ետեւ՝ Ալլազգիք եկան, Սամփսոն, բսելուն պէս՝ մէկէն ցաթքեց ու թօթուելով ջղերը կտրակցբայց տեսնելով որ մարդ չկայ, կատակ կարծեց: Գալիլան նորէն աղաչեց որ իրան բռէ: Սամփսոն մէկ երկու անգամ մ'ալ խարեց: Բայց վերջնապէս կինն ինչ բրտա չբրտա՝ զինքը խոստովանցուց: Սամփսոն՝ իր Աստուծոյ ուխտաւոր ըլլալը, գլխոյն ածելի չգպչելիքը, իր զօրութեան մազերուն վրայ ըլլալն անոր պատմեց: Գալիլան տեսնելով որ աս անգամ Սամփսոն բուն սրտինը բացաւ, նախարարներուն ի-

մացուց : Անոնք ալ խոստացած ստակնին հետերնին առած՝ եկան : Գալիլան Սամիսոնը ծնկան վրայ քնացրնելով՝ վարսաւիրայի ձեռքով գլխի եօթը գիտակն ածիլել տուաւ : Ասով մէկէն զօրութիւնը վրայէն երթալով՝ երբ որ Գալիլան՝ Այլաղղիք եկան, Սամիսոն, կանչեց նէ, թէպէտ ուղեց ելլել առջի անդամներուն պէս հալածել, բայց անօգուտ . Փղշտացիք եկան զինքը բռնեցին, աչուքները փորեցին ու Գազա տարին, ուր շղթայի զարկած՝ երկանով ալիւր աղալ կու տային :

Քիչ մը ատեն էտքը Փղշտացուոց նախարարները ժողվեցան իրենց Գազան շաստուածին շնորհակալ ըլլալու համար՝ որ Սամիսոնը ձեռքերնին տուաւ : Անոր զոհ մատուցանելէն ետեւ՝ երբ որ շատ զուարթացան, Սամիսոնը բերին իրենց ժողված տան երկու սիւներուն մէջտեղը կեցուցին : Նոյն ատեն Սամիսոնին մագերը բաւական երկրնցած ըլլալով՝ զօրացած էր . ձեռքէն բռնողին ըսաւ որ զինքը քիչ մը թողու, որ երթայ սիւները զննէ : Էւ Աստուծոյ փառաց նախանձովը բորբոքած՝ անոր ժողովրդեան դատաւորը ծաղր ընող այլազգիներէն վրէժ առնելու համար՝ Աստուծմէ զօրութիւն խնդրեց, եւ երկու սիւներն ամուր բռնելով ու՝ թող Փղշտացուոց հետ Սամիսոնն ալ մեռնի, կանչելով՝ սիւներն անանկ թօթուեց, որ տունը փլցուց, ինքն ալ տան փլատակներուն տակ՝ 3000ի չափ Փղշտացուոց հետ մեռաւ : Մարմինն իր ազգականներուն ձեռքովը հօրը գերեզմանը թաղուեցաւ :

## Լ Թ . Դ Ա Ս

1. Աստուած Սամփասնին տեղ զո՛վ պատրաստած էր : Աննա ո՛վ է . Աստուած անոր ազօթքն եւ ուխտը լսեց թէ շէ : — 2. Ոփնի ու Փեննհէս ո՛վ էին եւ ինչ կ'ընեին : — 3. Սամուէլին Աստուծոյ հաճոյ ըլլալն ու հնազանդութիւնն ինչ բանի մէջ երեւցաւ : — 4. Աստուծոյ Հեղին զէմ ըրած սպաննալիքն ինչպէս կատարուեցաւ :

1. Աստուած Սամփասնին տեղ՝ իր ժողովրդի ան առաջնորդելու համար Սամուէլը հոգացած էր, որն որ նմանապէս Հեղեայ դատաւորութեան ատեն ծնաւ : Իր հայրն Եղկանա՝ որ Ղեւտացւոց ցեղէն էր, Եփրեմի երկրին մէջ Արիմաթէմ քաղաքը կը բնակէր, եւ տարին քանի մը անգամ Սելով կ'երթար Աստուծոյ զոհ մատուցանելու համար, Աննա ու Փեննանա իր կանայքն ալ հետը : Անգամ մը Սելով զոհ մատուցանելէն ետեւ իրեննէրուն սեղան մը տուաւ . եւ որովհետեւ Փեննանա որդի ունէր, իրեն շատ մաս ինկաւ, իսկ Աննան՝ որդի չունենալով՝ միայն մէկ մաս ընդունեցաւ : Եւ թէպէտ զԱննան Փեննանայէն աւելի կը սիրէր, այսու ամենայնիւ Աննա ամուլ ըլլալուն վրայ շատ կը տրտմէր . ամէն անգամ Սելով գալուն՝ աս բանիս համար կուլար, կերակուր չէր ուտեր, եւ երկանը զինքը մխիթարելու համար ըսած խօսքերն օգուտ մը չէին ընէր : Անգամ մը սեղանը լմբննալէն ետեւ՝ Աննա ելաւ վկայութեան խորանը գնաց, Աստուծոյ առջեւը սիրտը բանալու համար : Հոն Աստուծոյ ուխտեց որ եթէ իրեն մանչ զաւակ մը տայ նէ՝ զանիկա իր մշտնջենաւոր ծառայութեան նուիրէ : Ազօթքներն

եւ աս ուխար մտօք ընելուն՝ ոչ բերանն ոչ շրթունքը կը շարժէին . ուստի Հեղի՝ որ նոյն ատեն հոն նստած էր, Աննան աս վիճակին մէջ տեսնելով՝ զինով կարծեց եւ իր պատանին խրկեց՝ որ հոնկից վերցընէ : Բայց երբ որ Աննա պարկեշտութեամբ ինք զինքն արդարացուց ու վշտացը պատճառն ըսաւ նէ, Հեղի իրեն պատասխանեց թէ Խաղաղութեամբ զնա, Աստուած խնդիրքդ կը կատարէ : Աննա ասոր վրայ մխիթարուած եւ ուրախ սրտով՝ էրկանը քովն եկաւ, նստաւ կերակուր կերաւ : Աստուած իրօք ալ անոր խնդիրքը կատարեց՝ իրեն որդի մը տալով, որուն անունը Սամուէլ գրին : Աննա մինչեւ որ որդին կաթէն չկտրեց՝ Սելով չգնաց . կտրելէն ետքը զուարակ մը, ստփորով զինի եւ ուրիշ ընծաներ առած՝ տղուն ու էրկանը հետ Հեղիին զնաց եւ իր ուղիքը ու տղան Աստուծոյ նուիրելն իմացուց : Աննա գոհութեան դեղեցիկ աղօթք մ՝ ընելէն ետեւ՝ որդին Հեղիին ձեռքն յանձնելով, տեղը դարձաւ : Այսպէսով Սամուէլ իր տղայութեան ատեն՝ եփուդ հագած Աստուծոյ կը ծառայէր : Մայրն ամէն անգամ իր սովորութեան համաձայն Աստուծոյ երկրպագութիւն ընելու համար Սելով գալուն՝ պղտիկ կրկնոց մը շինած իրեն կը բերէր :

Ձ . Հեղի ծերանալով՝ իր Ոփնի ու Փենէհէս որդիքը, որոնք Աստուծոյ քահանայ էին, շատ անկարգութիւն կ'ընէին : Քահանայք իրաւունք ունէին ժողովրդեան բերած պատարագէն իրենց մաս հանելու . բայց Հեղիին որդիքը չէին սպասեր որ ըստ օրինաց միսն եփ ելլէ . հապա մէ-

կը զոհի համար բան մը բերելուն պէս՝ ծառանին կը խրկէին, որ երեքժանի մնահանով կու գար՝ քահանային խորովելու միս տուր, եփած միս չեմ ուզեր, կ'ըսէր: Եւ տէրը դէմ դնելու որ ըլլար, ծառան առանց մտիկ ընելու՝ երեքժանին սանը կ'երկընցընէր, ու զած հում միսը մէջէն կ'առնէր կը տանէր: Հեղի աս բանս ինչպէս նաեւ որդւոցն ուրիշ անկարգութիւնները կը լսէր. բայց զիրենք ըստ արժանւոյն պատժելու, մանաւանդ թէ պաշտօններնէն վար առնելու տեղ՝ քանի մը թեթեւ խօսքերով կը խրատէր: Անոր համար Աստուած զինքը յանդիմանեց եւ յայտնեց որ անոր ցեղը պիտի ջնջէ, եւ իր կամօցն ու յօժարութեան համաձայն հաւատարիմ քահանայ մը պիտի դնէ: Եւ աս բաներուն կատարուելուն նշան ան տուաւ, որ Ռփնի ու Փենեհէս մէկէն մէկ օրուան մէջ մեռնին:

Յ. Իսկ Աամուէլ թէպէտ եւ Ռփնիին ու Փենեհէսին պէս ընկերներու մէջ մնացած էր, ի վերայ այսր ամենայնի անոնց չար օրինակին չհետեւելով՝ Աստուծոյ հաճոյ ըլլալու կը նայէր եւ ամէն բանի մէջ Հեղիին ալ հնազանդ էր: Գիշեր մը Ակայութեան խորանին մէջ Հեղեայ բնակարանին մօտ քնացած ատեն՝ զինքը կանչելու ձայն մ'առաւ, եւ կարծելով որ Հեղին է՝ անմիջապէս ելաւ անոր գնաց: Հեղի՛ Զքեղ չկանչեցի, ըսելով տեղը խրկեց: Աամուէլ՝ քիչ մը ետքը նորէն նոյն ձայնն առնելով՝ մէկէն անկողնէն ցատքեց քահանայապետին եկաւ. եւ դարձեալ նոյն պատասխանն առնելով՝ գնաց տեղը պառկեցաւ: Բայց ձայնը երրորդ անգամ

որ կրկնուեցաւ, ելաւ նորէն Հեղիին եկաւ : Ան ատեն քահանայապետն իմանալով որ զինքը կանչողն Աստուած է, խրատ տուաւ որ ձայնը մէյ մ'ալ առնելու ըլլայ նէ՛ պատասխանէ որ Խօսէ, Տէր, որ ծառադ լսէ : Սամուէլ տեղը զնաց . եւ ձայնը կրկնուելուն՝ առած խրատն ի գործ դրաւ : Աստուած ալ Հեղիին եւ անոր տան վրայ խրկուելու պատիժն իրեն յայտնեց : Առտուանց Հեղի Սամուէլը ստիպելով՝ ամէն բան բերնէն առաւ . եւ ինք զինքն Աստուծոյ յանձնելով ըսաւ . Ինք Տէր է . Թող իրեն բարի երեւցածն ընէ :

4. Իսրայելացիք արդէն նոյն ատենները Փղշտացւոց հետ պատերազմի մէջ էին ու բաներնին գէշ կ'երթար . մինչեւ անգամ մը 4000 հոգի կորսընցընելով՝ փախչելու ստիպուեցան : Եւ Թէպէտ իմացան որ Աստուած հետերնին չըլլալուն համար՝ եղաւ աս բանս, բայց հետը հաշտուելով՝ իրմէ օգնութիւն գտնելու բուն պատշաճ միջնորդ չբանեցուցին, հապա պարզապէս արտաքին գործքը կամ մէջերնին սուրբ բան մ'ունենալը բաւական սեպելով՝ տապանակը բերել տալու համար՝ Սելով մարդ խրկեցին : Ոփնի ու Փենեհէս տապանակն առին եկան, որն որ ժողովուրդը տեսնելով՝ մէկէն ուրախութեան աղաղակ փրցուց : Փղշտացիք իմանալով որ աս աղաղակը տապանակին համար է, Թէպէտ մէկ կողմանէ վհատեցան, բայց մէկալ կողմանէ ալ իրար կը քաջալերէին : Ասանկով պատերազմն սկսաւ : Իսրայելացիք 30,000 հոգի կորսընցընելով՝ յաղթուեցան, տապանակն ալ Թշնամեաց ձեռքն ինկաւ : Աս-

տուած Հեղինն բրած սպառնալիքն ալ կատարեց, Ոփնի ու Փենեհէս նոյն պատերազմին մէջ մեռան: Հեղի՛ որ նոյն ժամանակ 98 տարւան էր, աթոռով Ակայութեան խորանին դրան քովը նստած ատեն՝ նոյն պատերազմէն փախչողէ մը եղածներուն լուրն առնելով եւ մանաւանդ տապանակին՝ թշնամեաց ձեռքն իյնալը լսելով՝ սրտի ցաւէն կոնրկի վրայ աթոռէն ինկաւ եւ ողը կտարելով՝ մեռաւ: Նմանապէս Փենեհէսին կինն՝ որ ան օրերը տղաբերքի մօտ էր, իր սկեսրայրին ու էրկանը մեռնելը լսելով՝ ցաւերը բռնեցին տղան ծնաւ ու մեռաւ:

## Լ Գ . Գ Ա Ս

1. Փղշտացիք Աստուծոյ տապանակն առին ինչ բոն ինչու եւ գարձընելու հարկազրեցան. եւ ինչ կերպով եւ գարձուցին: — 2. Սամուէլ Իսրայելացիքը Փղշտացոց ձեռքէն ինչպէս կրցաւ ազատել:

1. Իսրայելացւոց Աստուծոյն ահն ու երկիւղը Փղշտացւոց սրտին մէջ տպաւորուած ըլլալով՝ տապանակը մեծ յարգութեամբ առին Ազովտոս քաղաքը Գագոնայ տաճարը դրին: Բայց Աստուած բարկանալով՝ թէ՛ Գագոնէն եւ թէ՛ զանիկա պաշտողներէն վրէժ առաւ, ցուցընելու համար որ ինք խառն պատիւ չ'ուզէր, այլ կ'ուզէ որ մինակ ինք փառաւորուի: Փղշտացիք երկրորդ օրը տաճար մտնելով՝ Գագոնը տապանակին առջևը գետինը փռուած տեսան, վերցուցին նորէն իր տեղը հաստատեցին: Բայց երրորդ օրը տեսան որ Գագոնը ջախջախեր է, գլուխը մէկ կողմը

գացեր, ոտքի թաթերը կտոր կտոր եղեր դետնի վրայ ցրուեր են. ձեռքի մէկ մասն ալ դրան սեմին քովերն է ինկեր: Նոյնպէս քաղաքացւոց վրայ վէրքեր ելան, որոնցմէ չարաչար կը տանջուէին եւ շատ մեռնողներ ալ կ'ըլլար: Նաեւ արտերնուն վրայ ալ մկեր ելան, որոնցմէ բոլոր վարուցաննին կ'աւրուէր: Ազովտացիք ասոնք տեսնելով՝ տապանակը Գէթ խաւրեցին. բայց հոն ալ նոյն հարուածներն ըլլալով՝ ուզեցին Ասկաղոն խաւրել: Եւ երբ որ տեսան թէ չ'ըլլար, որոշեցին որ տեղը դարձրնեն:

Բայց քրմերը խրատ տուին որ տապանակը պարապ էտ չխաւրեն, հապա անոր եղած անարդու թեան հատուցում մ'ընելու, գործուած մեղքը քաւելու համար՝ երկրին հինգ նախարարութիւններուն թուովը՝ ընծաներ ընեն: Ասով Իսրայելացւոց Աստուածը փառաւորած կ'ըլլար, ըսին, ան ալ զձեզ աս հարուածներէն կ'ազատէ: Իսկ եթէ կը տարակուսիք որ գլուխնիդ եկածներն արդեօք իրմէ՛ է թէ չէ, շուտով նոր կառք մը շինեցէք եւ առջի անգամ նոր ձագ բերող երկու երինջ լծեցէք՝ ձագերնին քովերնէն առնելով: Եւ տապանակը ձեր ընծաներովը մեկտեղ նոյն կառքը դնելէն ետեւ՝ երինջները թողուցէք որ իրենք իրենցմէ կառքը քաշեն տանին: Թէ որ շիտակ Իսրայելացւոց սահմանը Բեթսամիւս կը տանին, նշան է թէ աս հարուածներն անոնց Աստուծմէն է. իսկ եթէ հոն չեն երթար, նշան է թէ ան չարիքներն ըստ պատահման վրանիս եկեր են: Քրմերուն տուած խորհուրդն ի գործ դրուե-



ցաւ. տապանակն եօթն ամիս Փղշտացւոց երկիրը մնալէն ետեւ՝ ասանկ զարմանալի կերպով Իսրայելացւոց երկիրը Բեթսամիւս դարձաւ, որն որ քահանայից քաղաք էր: Տեղացիք՝ որ ան ատեն ցորեն կը հնձէին, տապանակին զալը տեսնելով՝ շատ ուրախացան: Ղեւտացիք տապանակն ու ընծաներն առին, հոն կեցած մեծ քարի մը վրայ դրին: Էւ ուրովհետեւ աս ժամանակներս՝ Իսրայելացւոց երկիրները գրեթէ շարունակ խռովութեան մէջ ըլլալով՝ Վկայութեան խորանէն դուրս ալ, ուր որ յարմարութիւնը կը բերէր, Աստուծոյ զոհ մատուցանելը գրեթէ սովորական բան եղած էր, անոր համար քահանայք սայլերուն փայտովն՝ ան երկու երինջներն Աստուծոյ ողջակէզ մատուցին: Հոս ալ հանդէսը տեսնելու համար առդիէն անդիէն ժողովող բազմութեան վրայ Աստուծոյ բարկութիւնն երեւցաւ. հետաքրքրութեամբ օրինաց դէմ՝ տապանակին անծածկոյթ նայելուն համար՝ յանկարծ մէջերնէն 50,070 հոգի ինկան մեռան: Ասկէ Բեթսամիւսացիք փախնալով՝ տապանակը կարիսթարիմի մէջ Ամինադարին տունը խրկեցին, որն որ բլրոյ մը վրայ էր: Ամինադար՝ Ղեւեայ ցեղէն ըլլալով՝ իր Լղիազար տղան քահանայութեան նուիրուեցաւ, տապանակն անոր ձեռքը յանձնուեցաւ:

Ք. Սամուէլ՝ Հեղինն ու իր որդւոցը մեռած տարին դատաւորնստելով՝ Իսրայելացւոց խրատ կու տար որ կուռք պաշտելէն ետ կենան, մինակ Աստուծոյ ծառայեն, որպէս զի Փղշտացւոց ձեռքէն ազատին: Իսրայելացիք երբ որ

իրեն անսացին եւ ըսածն ի գործ դրին, Սամուէլ զիրենք Մասեփաթ ժողկեց, անոնց հետ Աստուծոյ աղաչեց որ զիրենք Փղշտացւոց ձեռքէն փրկէ. ամէնքը նոյն օրը պահք բռնեցին եւ բրածներնուն վրայ զղջալով՝ Աստուծակ թողութիւն խնդրեցին: Փղշտացիք ասոնց Մասեփաթ ըլլալն իմանալով եւ կարծելով որ վրանին յարձակելու պատրաստութիւն կը տեսնեն, անմիջապէս ժողկեցան անոնց վրայ քալեցին: Իսրայելացիք Սամուէլին դիմեցին. ան ալ գիեցիկ գառն մ'առաւ՝ Աստուծոյ ողջակէզ մատոյց: Նոյն միջոցին թշնամիք պատերազմն սկսան: Բայց Աստուած որոտալու ձայնով մը անոնց մէջ շփոթութիւն ձգեց, որով Իսրայելացիք զիրենք ջարդեցին եւ մնչեւ իրենց սահմանները հալածեցին: Այսպէսով Իսրայելացիք կորսընցուցած տեղերնին նորէն առին: Սամուէլ աս յաղթութեան յիշատակին համար՝ քար մը տնկեց եւ անունը Աէմ՝ օգնականի դրաւ: Ինք Աստուծոյ մշտնջենաւոր ծառայութեան նուիրուած ըլլալով՝ միշտ Ակայութեան խորանը պիտի կենար: Բայց դատաւորութեան պաշտօնն աս բանս չէր թողուր, անոր համար Արիմաթէմ իր ծնած քաղաքը սեղան շինեց, զորն որ անտարակոյս Աստուծոյ հրամանաւն բրած պիտի ըլլայ. հոն աղօթք կ'ընէր, պատարագը կը մատուցանէր, հոն կը պառկէր կ'ելէր ու ժողովրդեան դատը կը հոգար. բայց միանգամայն տարւէ տարի ալ իր դատաւորութեան գլխաւոր տեղերուն այցելութեան կ'ելէր: Որոնք են Բեթէլ, Գազգաղա ու Մասեփաթ:

# Օ. Գ. Լ. ՈՒՒ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՍԿՋԲԷՆ ՄԻՆՁԵՒ  
ԵՐԿՈՒ ԲԱԺՆՈՒԻԼԸ

(1092—970)

## Լ. Գ. Գ. Ա. Ս

1. Իսրայելացիք ինչու թագաւոր ուզեցին: Աստուած աս ինդիրքնին ընդունեցաւ թէ չէ. Սամուէլին ինչ պատուիրեց: — 2. Սաուուզ ո՞վ է. ինչ առթով Սամուէլին եկաւ թագաւոր օծուեցաւ. օծուած ըլլալուն՝ քանի նշան առաւ: — 3. Սամուէլ Աստուծոյ ընտրած թագաւորը ժողովրդեան ինչպէս յայտնեց: — 4. Սաուուզ Նասաին զէ՞ իսրայելացիքն ինչպէս սոք հանեց ու յազմեց:

1. ՍԱՄՈՒԷԼ քսան տարի ժողովուրդն առանձին դատելէն ետեւ՝ ծերութենէն շատ ինկած ըլլալով՝ Յովէլ ու Աբիա իր երկու որդիքն իրեն օգնական առաւ, ու Բերսարէ քաղաքը դատաւոր դրաւ: Բայց ասոնք հօրերնուն չհետեւեցան. արծաթասէր ըլլալով՝ դատաստանի մէջ կաշառք կ'ուտէին եւ անիրաւ դատաստան կը կտրէին: Ասով ժողովուրդն իրենցմէ ձանձրացած՝ Սամուէլին եկան ըսին որ Ուրիշ ազգերուն պէս մենք ալ թագաւոր կ'ուզենք: Սամուէլ իրենց պատասխան չտուած՝ Աստուծոյ խորհուրդ հարցնելու համար աղօթքի կեցաւ: Աստուած յայտնեց որ աս ինդիրքն ընելնին՝ իրեն հաճոյ բան չէ. Ասան զի ուրիշ ազգերու նման թագաւոր ինդրելովնին, ըսաւ, ուզեցին զրուցել որ Ես ալ իրենց շխառնուիմ: Բայց եւ այնպէս Սա-

մուելին հրամայեց որ ուղածներն կատարէ . սակայն նախ՝ վրանին իշխելու թագաւորին իրաւունքներն անոնց պատմէ : Սամուէլ Աստուծոյ պատուէրն ի գործ դնելու ատեն՝ զիրենք յորդորեց որ ըրած առաջարկութիւննին մէկդի ձգեն : Իսկ անոնք մտիկ չըրին ու ոտք կոխեցին որ ուրիշ ազգաց պէս վրանին մէկը թագաւոր դնէ : Սամուէլ զիրենք տեղերնին խրկեց խոստանալով որ խնդիրքնին կատարելու ատենը գալու ըլլայ նէ՝ զիրենք նորէն կը կանչէ :

Չ. Հատ չանցաւ՝ Աստուած թագաւոր ըլլալու մարդը Սամուելին յայտնեց, որ էր Սաւուղ՝ Բենիամինի ցեղէն Աիս անունով հարուստ մարդու մը որդին : Անգամ մը Աիսին էշերը կորսուելով՝ զորդին ծառայով մը խրկեց որ փնտռէ : Սաւուղ աս պատճառաւ մինչեւ Արիմաթէմ գալով՝ երբ որ էշերը չգտաւ, կ'ուզէր ետ դառնալ որ չըլլայ թէ հայրը իրենց համար հողի մէջ իյնայ : Բայց ծառան խրատ տուաւ որ մէյ մը Սամուելին երթան հարցնեն : Սաւուղ հաւանելով՝ երկուքը մէկտեղ քաղաք մտան : Ճամբան երթալու ատեննին՝ զիմացնին ելաւ Սամուէլ, որուն Աստուած արդէն որ մը յառաջ թագաւոր օծուելու մարդն իմացուցած ըլլալով՝ երբ որ Սաւուղ իրեն եկաւ հարցուց թէ Մարգարէն ո՞ւր է, Սամուէլ Աստուծով զինքն անմիջապէս ճանչցաւ, եւ իր ո՞վ ըլլալն իմացնելով՝ Բամա հրաւիրեց. Այսօր հոն մէկտեղ կերակուր ուտե՛ք, ըսաւ, վաղը կ'ելլես կ'երթաս. էշերն ալ մի հողար, արդէն դտնուած են :

Այսպէսով երկուքն ալ Բամա եկան. հոն զոհ մատուցանելը լմննայէն ետեւ՝ Սամուէլ զոհին Ֆնացորդէն՝ Սաւուղայ կերակուր հանեց, ու կերակրոյ ատեն զինքն ուրիշ հրաւիրուողներէն վեր նստեցուց՝ որ երեսուն հոգւոյ չափ կային: Սեղանէն ետեւ Սաւուղն առաւ, Արիմաթէմ եկաւ, ան իրիկուն քովը պահեց եւ իր տան տանեացը վրայ պառկեցուց: Երկրորդ օրը զՍաւուղ ճամբայ դնելու ատեն՝ հետը մինչեւ քաղքին վերջին սահմանը դնաց. հոն Սաւուղին քովի ծառան յառաջ անցնելով՝ երբ որ երկուքը մինակ մնացին, Աստուծոյ կամքն անոր յայտնեց ու քովէն շիշ մը իւղ հանելով՝ զինքը թագաւոր օծեց: Էտքը Աստուծակ թագաւոր դրուած ըլլալուն՝ երեք նշան տուաւ. մէյ մը՝ որ Բենիամինի երկրին մէջ երկու հոգի դիմացը պիտի ելլէր ու էշերուն գտնուելուն լուրը տար. երկրորդ՝ որ ուխտի գացող երեք մարդու պիտի հանդիպէր, որոնք իրեն երեք հաց ընծայ պիտի տային. եւ երրորդ՝ Բամայէն դարձող մարգարէից զընդին հանդիպելով՝ ինքն ալ պիտի մարգարէանար (կամ երգէր եւ կամ Աստուածային բաներու վրայ ճառէր): Սամուէլ առ երեք նշանը տալէն ետեւ՝ ուրիշ ըսելիքներն ալ ըսաւ լմննցուց ու իրմէ բաժնուեցաւ: Աստուած ալ Սաւուղին սիրտը փոխեց ու Սամուէլին տուած երեք նշանը կատարեց: Էտքի նշանէն առակ եղաւ, որ կարողութենէն վեր բան ընողին Էւ Սաւուղ ի մարգարէս, կ'ըսուէր:

Յ. Սաւուղ իր թագաւոր օծուիլը մէկու մը չյայտնեց. իսկ Սամուէլ զանիկա ժողովր-

դեան իմացընելու համար՝ զամէնքը Մասեփաթ ժողովելով՝ հոն տասուերկու ցեղին վրայ վիճակ ձգեց՝ իմանալու համար որ Աստուած որ ցեղէն թագաւոր պիտի ընտրէ: Ա իճակը Բենիամինի ցեղին ելլելով՝ նորէն ան ցեղին մէջ վիճակ ձգեց. այսպէսով վերջապէս Սաւուղին վրայ ելաւ: Ան ատեն ամէնքը զՍաւուղ փնտռելու սկսան, եւ երբ որ չգտան, Սամուէլ Աստուծոյ տեղեկանալով մարդ խաւրեց բերել տուաւ: Սաւուղ մէջերնին կեցած ատեն՝ թիկունքով ամենէն վեր երեւցաւ: Սամուէլ ամենուն առջեւը զինքը գովելէն եւ ըսելէն ետեւ՝ որ Աստուծոյ ժողովըրդեան մէջ անոր պէս մէկը չկայ, թագաւորին իրաւունքները նորէն ժողովրդեան իմացուց, ու զրի անցընելով՝ տապանակին քովը դրաւ: Ասոնք ըլլալէն վերջը ժողովուրդն արձակեցաւ: Սաւուղ ալ Գարաա իր տունը դարձաւ: Բայց ամէնքը զինքը թագաւոր չձանչցան. շատերը զինքն արհամարհելով՝ կ'ըսէին թէ Աս ո՞վ է, որ զմեզ պիտի փրկէ:

4. Անցաւ ամիս մը Նասա Ամոնացւոց թագաւորը պատերազմի ելաւ եւ Գաղաադացւոց Յարիս քաղաքը բռնակեցաւ: Քաղաքացիք ուղեցին հետը դաշնակցիլ, բայց ինք ըսաւ թէ Ան ատեն յանձն կ'առնեմ, երբ որ ամէնքդ աջ աչքերնիդ հանելու ըլլաք: Յարիսացիք որոշ պատասխան մը տալու համար՝ իրմէ եօթն օր ատեն ուղեցին, եւ նոյն օրերը Խորայելացւոց երկիրները մարդ խրկեցին, որ իրենց օգնեն: Խրկուողներէն մէկը Գարաա՝ Սաւուղին բնակած տեղն եկաւ, հոն ալ հրատարակեց:

Երբ որ Սաւուղ աս բանս իմացաւ, Աստուծ-  
մէ զօրանալով՝ երկու եղ առաւ, կտոր կտոր  
ըրած՝ Իսրայելացւոց երկիրները խրկեց, ըսե-  
լով որ Սաւուղին ու Սամուելին հետ պատե-  
րազմի չեկողին եզերն անանկ պիտ'որ ըլլան:  
Այսպէսով 670,000 հոգի ոտք հանեց: Եւ ե-  
կող մարդուն ձեռքովը Յարիտացւոց ըսել  
տուաւ որ Աշղը առտու օգնութեան կու գանք:  
Իրոք ալ երկրորդ օրը զօրքն առած՝ Ամո-  
նացւոց վրայ քալեց, աղէկ մը ջարդեց: Աս-  
յաղթութեան վրայ ժողովրդեան սիրտը Սա-  
ւուղայ հետ անանկ կապուեցաւ, մինչեւ Սա-  
մուելին ուզեցին որ Սաւուղն անարդողները  
ձեռքերնին տայ, որպէս զի սպաննեն. բայց  
Սամուել չթողուց. զիրենք առաւ Վաղգաղա  
բերաւ, հոն հրապարակաւ Սաւուղը թագա-  
ւոր օծեց եւ խաղաղական զոհեր մատուցուե-  
լէն ետեւ՝ նախ անոնցմէ վկայութիւն ուզեց  
եւ առաւ, որ մինչեւ նոյն ատեն զիրենք ար-  
գարութեամբ դատած է. ետքը Աստուծոյ  
իրենց ըրած բարիքներն յիշեցընելով՝ յորդո-  
բեց որ իրենց թագաւորին հետ մէկտեղ Աս-  
տուծմէ վախնան: Միանգամայն աս կերպով  
թագաւոր ուզելնին աղէկ չըլլալը՝ նշանով մը  
հաստատելու համար, ցօրենի հունձքի ատեն  
աղօթքի կենալով՝ երկինքը գոռալով սաս-  
տիկ անձրեւ եկաւ՝: Ժողովուրդն յանցանքը  
ճանչցաւ եւ Սամուելին աղաչեց որ Աստուծ-  
մէ ներում ինդրէ:

1 Գօրենի հունձքը Յունիս ու Յուլիս ամիսներուն  
մէջտեղը կ'էջնար, որ ատենուան համար Ս. Հե-  
րոնիմոս՝ Երբեք անձրեւ տեսած չեմ, կ'ըսէ:

## Լ Ե . Դ Ա Ս

1. Իսրայելացւոց ու Փղշտացւոց մէջ ինչէն պատերազմ  
 փրթաւ . Սաւուղայ առաջին անհնազանդութիւնն որն ե-  
 ղաւ . Յովնաթանին Աստուծոյ վստահութեան գործքն  
 որն է : — 2 . Սաւուղ ինչ ուխտ դրաւ . նոյն ուխտը  
 ճիշդ պահուեցաւ : Սաւուղ ուրիշ որ ազգաց դէմ պա-  
 տերազմեցաւ : — 3 . Իր երկրորդ անհնազանդութիւնն  
 որն է . առ բանիս համար Սամուելին ձեռքովն Աստուծ-  
 մէ ինչ լսեց : — 4 . Սաւուղայ տեղ՝ Սամուել զով թա-  
 գաւոր օծեց եւ ինչպէս :

1 . Անգամ մը երբ որ Իսրայելացիք ժող-  
 վուած էին , Սաւուղ մէջերնէն 3000 հոգի  
 առաւ , որ անոնցմով Փղշտացւոց դէմ ելլէ ,  
 որոնք ձեռքէն քաղաքներ առնելու կ'աշխա-  
 տէին , եւ արդէն շատ քաղաքներու ամրոցաց  
 մէջ պահապան զօրք դրած էին : Ան 3000ին  
 մէջէն հազարն իր Յովնաթան որդւոյն ձեռքը  
 տուաւ , Գարաա խրկեց . խկ ինք՝ քովը մնա-  
 ցած 2000ով Մաքմաս ու Բեթէլ քաշուե-  
 ցաւ : Յովնաթան իր հազարովը Գարաայի մտա-  
 ըլնող բլրոյն վրայի ամրոցը զնաց , մէջի պա-  
 հապան զօրքին աղէկ մը ջարդ տալով՝ վարն-  
 տեց : Ասով Իսրայելացւոց ու Փղշտացւոց մէջ  
 մեծ պատերազմ՝ բացուեցաւ : Երկու կողմն  
 ալ պատերազմի պատրաստութիւն կը տես-  
 նէր . բայց Իսրայելացիք Փղշտացւոց անթիւ  
 անհամար բազմութենէն եւ անոնց անչափ պա-  
 տերազմի կազմածքէն վախնալով՝ սկսան ծակէ  
 ծակ փախչիլ : Սաւուղ Մաքմաս թշնամիներ  
 ուն բանակած տեղը չէր երթար , հապա Գազ-  
 գաղա Սամուելին գալուն կը սպասէր , որն որ  
 Աստուծոյ կողմանէ իրեն պատուիրած էր որ  
 եօթն օր իրեն սպասէ : Բայց երբ որ օրն եկաւ



անցաւ եւ Սամուէլ ուշացաւ, Սաւուղ տեսնելով որ զօրքն երթալով կը քիչնայ, այլ չուզեց սպասել, խաղաղական զոհերը մատուցանել տուաւ: Չօհերը լմբնցան չմբնցան՝ Սամուէլ վրայ հասաւ, եւ Սաւուղայ անհամբերութեան ու Աստուծոյ չվտահանալուն վրայ սրդողեցաւ, եւ հասկրցուց որ ասոր համար թագաւորութիւնն իր տան պիտի չմնայ:

Սաւուղ քովը մնացած զօրքովը թշնամոյն դէմ պատերազմելու համար Գարաա եկաւ, ուր զօրքը համրեց տեսաւ որ 600 հոգի մնացեր են: Թշնամիք երեք բաժին եղած՝ Իսրայելացւոց երկիրը կը մտնէին, կը թալէին ու կ'աւրրչտէին: Գացած տեղերնին դարբին չէին թողուր, որ չըլլայ թէ Իսրայելացիք սուր կամ գեղարդ շինեն, ուստի եւ Իսրայելացիք մշակութեան գործիքնին շտկել կամ նորէն շինել տալու համար՝ պէտք էր որ Փղըշտացւոց երկիրն երթային: Սաւուղին քովի զօրքին ձեռքը ղէնք չկար, հապա բոլոր երկրագործութեան գործիքներէին, մինակ Սաւուղ եւ Յովնաթան սուր ու գեղարդ ունէին: Թշնամոյն երեք բաժնէն զատ՝ խել մը զօրք ալ Մարմասէն Գարաա երթալու կիրճը բռնած էր: Անգամ մը Յովնաթան՝ հօրը բան մը չըսած՝ Աստուծոյ ապաւինելով՝ իր կապարճակիին հետ խօսք մէկ բրաւ, որ թշնամոյն բանակը մտնեն: Երբ որ թշնամիք զիրենք տեսան, ծագրելով ըսին. Նայէ, նայէ, Երբայեցիք պահուրտած ծակերնէն կ'ելլեն: Մօա եկէք, պոռացին իրենց, ձեզի ըսելիք ունինք: Ան ատեն Յովնաթան կապարճակիին՝ Ետեւէս

եկուր, ըսաւ. եւ ասդին անդին բռնելով՝ շատ աշխատութեամբ ժայռի մը վրայէն թշնամեաց մօտ գացին, նետով ու քարով անոնցմէ 20 հոգի մեռցուցին եւ մէջերնին մեծ շփոթութիւն ձգեցին: Սաւուղ անդիէն թշնամեոյն բանակին մէջ մէկէն շփոթութիւն ելլելը տեսնելով եւ իմանալով որ Յովնաթան իր կապարճակրովը գացեր է, անմիջապէս բոլոր զօրքովը վրանին քայեց ու զիրենք աղէկ մը ջարդեց: Ան ատեն վախնալով փախչող Իսրայելացիք ալ եկան ժողվեցան եւ ամէնքը մէկէն 10.000 հոգի եղան:

Չ. Սաւուղ ուխտ ըրաւ որ ան որը մինչեւ իրիկուն բան մը չուտեն, եւ կերողը մեռնի: Բոլոր զօրքն աս ուխտը բռնելով՝ մինչեւ իրիկուն բերաննին բան չդրին. իսկ Յովնաթան՝ որ հօրն ուխտը չէր գիտեր, մեղրի անտառին մէջէն անցնելու ատեն՝ գաւազանին ծայրովը մեղր առաւ՝ կերաւ, եւ անով քիչ մը հոգի առնելով՝ աչքը բացուեցաւ: Յովնաթան թէպէտ տգիտութեամբ ուտելով՝ անմեղ էր, բայց հօրն ուխտն իմանալէն ետքը յանդգնութեամբ անոր կարգադրութիւնը վար զարնելով մեղանչեց: Այնն զի ըսաւ. Դուք ալ կը տեսնէք որ քիչ մը մեղր ուտելովս՝ ինչպէս զօրացայ ու աչքս բացուեցաւ. թէ որ զօրքն առած աւարէն քիչ մը բան ուտելու ըլլար, աւելի զօրութիւն ստանալով՝ թշնամիները բոլորովին կը ջարդէին: Իսրայելացիք թշնամին իրենց սահմանէն դուրս հանելէն ետեւ՝ իրիկունը յոգնած ու անօթի զօրքը կը փութային ժամ մը յառաջ բերաննին բան մը

գնելու . ուստի եւ ոչխարները մերկ գետնի վրայ կը մորթէին ու արիւնով կ'ուտէին, որն որ օրինաց դէմ էր : Սաւուղ աս բանս իմացածին պէս՝ հրամայեց որ մեծ քար մը գնեն ու վրան մորթեն : Էտքը գիշերանց նորէն թշնամեաց վրայ երթալ ուզելով՝ Աստուծոյ խորհուրդ հարցուց եւ անկէ պատասխան չառնելով՝ հասկըցաւ որ Աստուած բարկացեր է, ուստի հրամայեց որ պատճառ ըլլողը փնտռեն գտնեն, բտելով թէ Յանցաւորը որդիս ալ ըլլայ նէ՝ չեմ նայիր, մեռցընել կու տամ : Ահձակ ձգեցին եւ Յովնաթանին ելաւ : Սաւուղ հարցուց ըրածն իմացաւ . եւ թէպէտ ինք ուզեց ուխտը կատարել, բայց ժողովուրդը թող չտուաւ : Ինքն ալ Աստուծմէ պատասխան չառնելուն համար՝ գիշերանց թշնամեոյն վրայ երթալը թող տուաւ : Աս զարմանալի յաջողութեամբ Սաւուղ իր իշխանութեան մէջ աւելի հաստատուելով՝ Մովբացուց, Ամոնացուց ու Էգիպտացուց դէմ պատերազմ բացաւ, եւ Աստուած իր բանն յաջողելով՝ Իսրայէլացիքն ամէն թշնամիներէն ազատեց :

Յ . Աս բաներս ըլլալէն ետեւ՝ Աստուած Սամուէլ մարգարէին ձեռքովը Սաւուղայ պատուիրեց որ Ամաղեկացուց վրայ երթայ, անոնցմէ վրէժ առնէ, բոլոր Ամաղեկացիք իրենց անասուններովը ջարդէ, մէկը ողջ չձգէ . որովհետեւ Էգիպտոսէն նոր ելած ատեննին՝ վրանին ինկած, իրենց շատ անգթութիւններ ըրած էին : Սաւուղ 430,000 հոգով անոնց վրայ քալեց, մեծ յաղթութիւն ըրաւ եւ զամէնքը

Թրէ անցուց, բայց Աստուծոյ հրամանին գէժ անոնց Ազագ Թագաւորն ու կենդանիներուն ամենէն աղէկները զատեց առաւ : Աստուած անոր աս գործքին վրայ շատ բարկացաւ, եւ Սամուէլին յայտնեց որ զինքը Թագաւոր օծելուն վրայ զղջացած է : Սամուէլ ասոր վրայ այլայլելով՝ բոլոր գիշեր Աստուծոյ աղօթելէն ետեւ՝ առտուանց կանուխ ելաւ Գաղգազա գնաց, ուր Թագաւորն առած աւարէն Աստուծոյ զոհ կը մատուցանէր :

Սաւուղ զինքը բարեւեց եւ ըսաւ. Ահաւաւակ Աստուծոյ հրամանը կատարեցի : Սամուէլ ըսաւ Թէ էս արջառի ու ոչխարի ձայն կ'առնեմ, ան ինչ պիտ'որ բլլայ : Սաւուղ պատասխան տուաւ որ Զօրքն՝ Աստուծոյ պատարագ մատուցանելու համար՝ կենդանեաց աղէկներէն ընտրեց առաւ : Սամուէլ զինքը սաստիկ յանդիմանեց. Հնազանդութիւնը զօհէն աւելի հաճոյ է Աստուծոյ, ըսաւ : Որովհետեւ դուն զԱստուած արհամարհեցիր, Աստուած ալ զքեզ պիտ'որ արհամարհէ, զքեզ Իսրայելի Թագաւորութենէն պիտի զրկէ : Սաւուղ՝ Մեղայ, ըսաւ, եւ Սամուէլին աղաչեց որ Աստուծակ թողութիւն գտնելու համար մէկտեղ աղօթքի կենան : Բայց Սամուէլ անոր ահանջ չկատարելով՝ ելաւ որ երթայ : Թագաւորն անոր վերարկուէն բռնելով՝ զինքն արգելել ուզեց, եւ վերարկուին կտորը ձեռքը թեաց : Ան ատեն Սամուէլ դարձաւ ըսաւ. Ասանկ ալ Աստուած քու Թագաւորութիւնդ ձեռքէդ պիտի պատռէ առնէ, քեզմէ լաւագոյն մէկու մը պիտի տայ : Բայց

տեսնելով թէ Սաւուղ շատ կ'աղաչէ որ ժողովրդեան առջեւն իր պատիւը պահէ, ինդիրքը յանձն առաւ, մէկտեղ Աստուծոյ աղօթք բրաւ: Ետքը զԱգագ առջեւը բերել տալով՝ ինչպէս որ քու սուրբ շատ մայրերն իրենց որդւոցմէ զրկեց, ըսաւ, ասանկ ալ քու մայրդ քեզմէ զրկուի: Աս ըսաւ ու Ագագը մեռցուց, եւ Սաւուղը թող տալով՝ Արիմաթէմ գնաց, կենացը մէջ մէյ մ'ալ երեսը շտեսաւ, միշտ վրան կու լար:

4. Ասոր վրայ քանի մը տարի անցնելէն ետեւ՝ Աստուած զՍամուէլ Բեթղեհէմ խրրկեց որ հոն Յուդայի ցեղէն Յեսսէ անունով մէկու մը որդին թագաւոր օժէ: Սամուէլ ձայն հանելով որ զոհի կ'երթայ՝ հեան երինջ մ'առած՝ Բեթղեհէմ գնաց. վասն զի կը վախնար որ Սաւուղ երթալուն բուն պատճառն իմանայ նէ՝ զինքը կը մեռցրնէ: Ձոհէն ետեւ Յեսսէն ալ հրաւիրեց որ իր որդիքներովը գայ ան զոհէն ուտէ: Յեսսէն իր որդիքը Սամուէլին առջին հանած տունն՝ ասիկա անոր մեծ որդին Եղիարը հաւնելով՝ կարծեց որ թագաւոր օժուելիքն ան է, բայց Աստուած իմացուց որ ան չէ: Ետքը Յեսսէին մէկալ վեց որդիքն առջեւէն անցրնելով եւ Աստուծոյ ընտրածը մէջերնին շտեսնելով՝ հօրերնուն հարցուց որ Բողոք որդիքդ ասոնք են: Ան ալ Պղափկը հոս չէ, ըսաւ, ոչխարներուն քովն է: Սամուէլ ան ալ կանչել տուաւ, ըսելով որ Անիկա չեկած՝ սեղանի չենք նստիր: Երբ որ Դաւիթ եկաւ, Աստուած Սամուէլին յայտնեց որ թագաւոր օժելիքն ան է, ինքն ալ

ելաւ զանիկա եղբարցը առջեւը թագաւոր օ-  
 ծեց ու ետքը նստան կերակուր կերան: Աոյն  
 օրէն սկսեալ՝ Աստուծոյ Հոգին Սաւուղէն  
 ելաւ՝ Գաւթին վրայ եկաւ: Իսկ սատանան  
 Սաւուղի գործած մեղքն ու անոր համար ա-  
 ռած վճիռը միտքը ձգելով՝ զինքը վախ բերող  
 ու կիրքը շարժող տեսակ տեսակ խորհուրդ-  
 ներով կը լեցընէր, եւ այսպէս սեւամազ ձուտ  
 ըրաւ: Սաւուղ աս ախտէն շարժեալ՝ երբեմն  
 կը կատողէր, մինչեւ նաեւ ինք իրմէն կ'ելլէր:  
 Իր մարդիկները խորհուրդ տուին թէ քնար  
 զարնող մը գտնեն, որ շար հոգիէն նեղուած  
 ատեն՝ քնար զարնելով, զգացած նեղութիւնն  
 անցնի ու սիրտը բացուի: Սաւուղ աս բանս  
 յանձն առնելով՝ նոյն մարդիկներուն խօսքին  
 համեմատ՝ Գաւթիթը կանչեց որ քնար զարնէ:  
 Աս առթով Գաւթիթ Սաւուղին եկաւ եւ ա-  
 նոր սիրելի ըլլալով՝ իր կապարճակիրն եղաւ:<sup>1</sup>

1 Երած շտութիւններու եւ նուագարաններու ձայնին  
 մարդուս կրիցը վրայ ազդեցութիւն ունենալն ար-  
 զէն յայտնի բան է: Բայց առանձինն Գաւթին  
 քնարին վրայ կրնայ միանգամայն աս ալ ըսուիլ  
 թէ Աստուած՝ որ ամէն բանի մէջ իրեն կ'առաջ-  
 նորդէր, անոր քնարին ձայնին առանձին գորու-  
 թիւն մը տուած էր, որպէս զի Սաւուղ զինքը  
 քոֆ առնէ, եւ այսպէս անոր ճամբայ բանայ ետ-  
 քէն իսրայելի սթոսն անցնելու:

Լ Ձ . Գ Ա Ս

1. Գողիաթ ո՛վ է, զինքն ո՛վ սպաննեց եւ ինչպէս :
- 2. Սաւուզի Գաւթայ զոյ ունեցած սէրն ինչու նա. խանձի փոխուեցաւ. անոր կենացն ինչ դաւաճանութիւն բրաւ : ՂՄեղքող ինչպէս անոր կնութեան տուաւ : —
3. Յովնաթան զինքը Գաւթայ հետ ինչպէս հարշակեցաւ. ետքը Գաւթի ինչու ձեռքէն փախաւ : Սամուելին քոփը զնաց : Սաւուզ ան ասեն ինչ բրաւ : —
4. Գաւթի Սամուելին քովէն Յովնաթանին զնաց ինչ բրաւ : անկա հօրը միտքը Գաւթին ինչպէս յայտնեց :

**Ա** . Փղշտացիք Իսրայելացւոց դէմ պատերազմ ընելու համար նորէն ժողվելով՝ Սաւուզ ալ զիմացնին ելլելու պատրաստուեցաւ, եւ երկու կողմն ալ զիմացէ զիմաց զատ զատ լեռներու վրայ բանակեցան : Փղշտացւոց բանակին մէջ Գողիաթ անունով հսկայ մէկը կար, որուն հասակին բարձրութիւնը վեց կանգուն ու մէկ թիղ էր, վրայի զգեստներն ալ իրեն համեմատ խոշոր ու ծանր բաներ էին : Աս հսկան ամէն օր բանակէն դուրս կ'ելէր Իսրայելացիքը նախատելով՝ Ինչ պարապ տեղ ելեր մեզի դէմ ճակատեր էք, կ'ըսէր. մէջերնէդ մէկն ընտրեցէք՝ որ զիմացս ելլէ ու մէկտեղ մենամարտինք, որ կողմի նահատակն յաղթելու ըլլայ՝ յաղթութիւնն ան կողման սեպուի : Ասանկ քառասուն օր առտու իրիկուն վրայէ վրայ՝ կ'ելէր Իսրայելացւոց բանակը կը նախատէր եւ իրենց նոյն առաջարկութիւնը կ'ընէր : Սաւուզ բոլոր բանակովն ահ ու գողի մէջ ինկաւ, եւ Գողիաթին հետ մենամարտելով մեռցընողին մեծամեծ խոստումներ բրաւ, մինչեւ իրազիկը կնութեան տալ խոստացաւ :

Նոյն ասեանները Գաւիթ Սաւուղը թողուցած Բեթղէմէմ՝ հօրը տունը դարձած էր, եւ անոր ոչխարները կ'արածէր: Բայց եղբարքը Սաւուղայ բանակն ըլլալով՝ որ մը հայրը ձեռքն ուտելիք տուաւ, որ եղբարցը տանի-ասկէ ուրիշ հետը անոնց հազարապետին համար տասը մաճառակ պանիր խրկեց: Գաւիթ բանակ եկած ատեն՝ տեսնելով որ Գողիթաթ ելեր կը խօսէր, կեցաւ մտիկ ըրաւ, ուր որ ուրիշներն անոր գալը տեսնելուն պէս՝ փախչող փախչողի կ'ըլլային: Եւ անոր յանդգնութեան վրայ բարկանալով՝ Ո՛վ է ան այլազգին, կ'ըսէր, որ Աստուծոյ բանակը պիտի թշնամանէ: Եղիար իր մեծ եղբայրն աս խօսքը հպարտութեան հագւով ըսուածի պէս առնելով՝ զինքը յանդիմանեց: Իսկ Գաւիթ՝ առանց միտ դնելու՝ իր բանին կը նայէր, մէկուն մէկային նոյն խօսքը կը կրկնէր, մինչեւ բանը Սաւուղին ահանջը հասնելով՝ զինքն առջեւը կանչեց: Գաւիթ անոր ըսաւ. Տէր իմ, մի այլայիբ, ես կ'երթամ անոր հետ կը պատերազմիմ: Սաւուղ պատասխանեց թէ Գուն չես կրնար անոր դիմացն ելլել, դուն դեռ տղայ ես. իսկ ինք պզտիկուց վեր պատերազմի մէջ մտած ելած մարդ է: Գաւիթ ըսաւ որ Հօրս ոչխարներն արածելու ատենս՝ առիւծ կամ արջ մը գար՝ հօտին մէջէն ոչխար մը յափշտակելու ըլլար, ես մէկէն կը վազէի՝ յափշտակածը բերնէն կ'առնէի, թէ որ վրաս ելլէր՝ վզէն բռնած գետինը զարնելով՝ կը սպաննէի: Ասանկ ալ նաեւ ան այլազգին՝ Աստուծոյ օգնութեամբ կը զարնեմ կը մեռցընեմ: Ան ատեն Սաւուղ ի-



րեն ըսաւ. Գնա, Աստուած հետդ ըլլայ. եւ իր անձնական զէնքն ու զարդն հանեց իրեն տուաւ: Բայց Գաւիթ անոնք վրան կրելու վարժած չըլլալուն՝ չէր կրնար հանգիստ քալել, մինչեւ մէկ երկու անգամ սահեցաւ ինկաւ: Անոր համար հանեց մէկ դի գրաւ, իր գաւազանն ու պարսատիկը ձեռքը՝ գնաց հեղեղատէն հինգ ողորկ քար ընտրեց, հովուական մախաղը գրաւ ու Գողիաթին դիմացն ելաւ: Հսկան զինքը տեսաւ նէ՝ ծաղր ընելով ըսաւ. Ես շո՞ւն եմ, որ գաւազանով ու քարով վրաս կու գաս: Շնէն ալ վար ես, պատասխանեց Գաւիթ: Եկուր եկուր, կրկնեց Գողիաթ, որ զքեզ թռչուններու կերակուր ընեմ: Գաւիթ ալ պատասխան տուաւ. Գուն սրով, գեղարդով ու ասպարով վրաս կու գաս. իսկ ես՝ Իսրայելացւոց Աստուծոյն զօրութեան ապաւինած կու գամ ու կը յուսամ որ զլուխդ կ'առնեմ, եւ թէ՛ քու թէ՛ բոլոր բանակիդ մարմինը թռչուններու եւ դազաններու կերակուր կ'ընեմ, որպէս զի ամէնքն իմանան որ մեր Աստուածն է ճշմարիտ Աստուածը, որն որ ուզած ատեն՝ առանց զէնքի ալ կը յաղթէ: Աս ըսաւ ու Գողիաթին դէմ վազեց, պարսատիկով քարը նետելուն պէս՝ քարը ճակատը գալով՝ մէկէն երեսին վրայ ինկաւ գետինը փռուեցաւ: Գաւիթ անմիջապէս վրան ցատքեց, անոր սուրը մէջքէն քաշեց, զլուխը կտրեց առաւ տարաւ: Փղշտացիք աս տեսնելուն պէս՝ փախչող փախչողի եղան. Իսրայելացիք ալ ետեւնէն վազեցին, աղէկ մը ջարդ տալէն ետեւ՝ աւար առնելու սկսան:

Ձ. Կոյն միջոցին Գաւիթ Գողթաթին գլուխն առած՝ Սաուզին եկաւ. Սաուզ խկզրան իրեն շատ սէր ցուցուց, ուզեց ալ միշտ քովը պահել: Յոփնաթանին սիրտն ալ հետը կապուելով՝ զինքն իր անձին պէս կը սիրէր, անոր համար իր հազուստն ու զէնքն հանեց անոր պարգևեց: Գաւթին ու Յոփնաթանին մէջ եղած սէրը միշտ հաստատուն մնաց. բայց Սաուզայ սէրը շատ շտեւեց՝ նախանձի փոխուեցաւ: Աշան զի երբ որ Գաւթայ հետ Գարաա կ'երթար, Իսրայելացիք զիրենք բարեւելու համար զխնացնին ելելով՝ պարբանող կանայք ծնծղաներով կ'երգէին ու կ'ըսէին. Սաուզ հազար մեռցուց, Գաւթ՝ տասը հազար: Թագաւորն աս բանիս համար նեղացաւ եւ ըսաւ. Գաւթի տասը հազար տուին, ինծի՝ հազար. անդին ինչ մնաց, բայց միայն թագաւորութիւնս: Աս պատճառաւ սկսաւ Գաւթին ծուռ աչքով նայիլ. եւ անգամ մը երբ որ՝ շար հողիէն բռնուելով նեղուած ատեն՝ Գաւթ առջեւը քնար կը զարնէր, Սաուզ ձեռքի գեղարդը վրան նետեց. բայց բախտով Գաւթ կրցաւ խոյս տալով ձեռքէն պրծիլ: Սաուզ տեսնելով որ Աստուած անոր հեան ըլլալուն՝ ամէն բանն յաջող կ'երթայ, ինք ետ կեցաւ, ուզեց այլազգիներուն (Փղշտացւոց) ձեռք անոր կենացը դաւաճան ըլլալ: Ուստի զինքն հազարապետ բրաւ եւ իր հազարովն այլազգիներուն վրայ խրկեց, որոնք խուճր խուճր Իսրայելացւոց երկիրներուն վրայ կը քալէին: Իսկ Գաւթ շատ կարծութիւն ցուցընելով՝ մեծ անուն վաստակեցաւ,

որով Սաւուղին նախանձն աւելի սաստկացաւ : Ուստի զինքը զրգռելու համար, որ աւելի վտանգաւոր պատերազմներու մտնէ, կանչեց իրեն խոստացաւ որ իր Մերովք աղջիկն իրեն կին կու տայ, միայն թէ Լստուծոյ պատե-  
րազմը քաջութեամբ յառաջ տանի : Գաւիթ  
աս պայմանը կատարեց . բայց Սաւուղ իր  
խոստման վրայ հաստատուն չկենալով՝ նոյն  
աղջիկն ուրիշին տուաւ : Եւ իմանալով որ իր  
Մեղքող աղջիկն անոր սիրելի է, ուրիշ որո-  
գայթ մըն ալ աս առթով լարեց, ուզելով  
որ Գաւիթ ասոր համար 100 Փղշտացի սպան-  
նէ : Գաւիթ գնաց ուղածը կատարեց ու Մեղ-  
քողն առաւ :

**3.** Սաւուղ ասոր վրայ աւելի եւս Գաւ-  
թէն վախցաւ, Յովնաթանին եւ իր մարդիկ-  
ներուն ապապրեց որ կերպով մը զինքը բռնեն  
սպաննեն : Իսկ Յովնաթան աս բանս Գաւ-  
թայ իմացուց եւ խոստացաւ որ երկրորդ առ-  
տու աս բանիս վրայ հօրը հետ խօսի եւ անկէ  
լսածն իրեն իմացընէ : Հօրն առջեւն ալ  
Գաւթի վրայ այնչափ բարի խօսեցաւ, որ միտ-  
քը դարձուց եւ բերնէն երգմամբ խօսք առաւ  
որ զինքը չիմեացըներ : Գաւիթ աս բանս իմա-  
նալով՝ Սաւուղայ քովն եկաւ, սկսաւ հետն  
առաջուան պէս վարուիլ : Բայց որ մը նորէն  
Սաւուղայ կատաղութիւնը բռնելով՝ ձեռքի  
գեղարդը վրան նետեց . Գաւիթ ալ տունը  
փախաւ : Սաւուղ մարդ խրկեց որ գիշերանց  
զինքը բռնեն բերնն, որպէս զի առտուն ինք  
անձամբ սպաննէ : Իսկ Մեղքող՝ հօրը միտքն  
իմանալով՝ զԳաւիթ պատուհանէն վար իջե-

ցուց փախցուց: Գաւիթ Արիմատէմ՝ քաղաքը Սամուելին գնաց, Սաւուղին բրածները պատմեց: Թագաւորն անոր ուր ըլլալն իմանալուն պէս՝ զինքը բերել տալու համար մարդ խրկեց, որոնք երբ որ եկան Սամուելին քով ժողոված մարգարէից գունդը տեսան որ կը մարգարէանային, իրենց վրայ ալ Աստուծոյ հոգին գալով՝ իրենք ալ սկսան մարգարէանալ: Սաւուղ ասանկ երեք անգամ մասնաւոր մարդ խրկեց, տեսաւ թէ ամենուն ալ նոյնը պատահեցաւ, ելաւ ինք անձամբ եկաւ, բայց իրեն վրայ ալ Աստուծոյ հոգին գալով՝ ինքն ալ մարգարէացաւ:

4. Գաւիթ Սամուելին քովէն ելաւ Յովնաթանին եկաւ եւ ըսաւ. Ես քու հօրդ ինչ բրի որ զիս մեռցընել կ'ուզէ: Չէ, չ'ուզեր որ մեռնիս, պատասխանեց Յովնաթան. հայրս ինձի չիմացուցած՝ բան մը չ'ըներ: Գաւիթ պատասխան տուաւ թէ Հայրդ գիտէ որ զիս կը սիրես, անոր համար աս խորհուրդը քեզի չ'այտնեց, մտածելով որ կարելի է դուն չես ուզեր: Յովնաթան ան ատեն ըսաւ. Քեզի աղէկ երեւցածն ըսէ, որ ընեմ: Գաւիթ՝ Ես աս դաշտին վրայ տեղ մը կը պահուրտիմ, ըսաւ. վաղը թէ որ հայրդ սեղանի ատեն վրաս խօսք բանայ բան մ'ըսէ կամ հարցընէ նէ՛ դուն զրուցէ որ արտորնօք Բեթղէմ գնաց: Սաւուղ ասոր կը հաւնի նէ, նշան է թէ վախ չկայ. իսկ եթէ կը բարկանայ նէ, յայտնի է թէ բանս զէշ է: Ուստի ասիկա ինձի իմացուր: Յովնաթան խօսք տուաւ եւ անոր փոխարէն աս աղաչանքն ըրաւ. Եթէ Աս-

տուած իմ կենդանութեանս ատեն թշնամի-  
 ներդ ջնջելու ըլլայ, ըսաւ, ինծի ողորմէ: Իսկ  
 թէ որ ես մեռած կ'ըլլամ, իմ տանս վրայէն  
 ողորմութիւնդ չպակսի: Ետքը հօրը միտքն ի-  
 բեն յայտնելու նշան մը որոշեց. Գուն այսօր  
 գնա դաշտ պահուրտած կեցիր, ըսաւ, ես  
 հօրս միտքն իմանալէն ետեւ՝ փքին նետելու  
 պատրուակով հետս տղայ մ'առած՝ կեցած  
 դաշտդ կու գամ: Թէ որ փքինը նետեմ՝ ու  
 տղուն ըսեմ. Ասդին դէպ իմ կողմս ինկած  
 է, ան ատեն ըսել է թէ վախ չկայ. իսկ թէ  
 տղուն ըսելու ըլլամ. Փքինը քեզմէ անդին  
 է, ան ատեն փախիր գնա, վասն զի ըսել է  
 թէ բանդ գէշ է: Իրարմէ չբաժնուած՝ մէ-  
 ջերնին դրած բարեկամական դաշինքը նորէն  
 հաստատեցին, եւ այնպէս զատուեցան: Եր-  
 կրորդ օրը երբ որ սեղանի նստան, Սաւուղ  
 Յովնաթանին Գաւթին հարցուց. ան ալ՝  
 Թող տուի որ Բեթղեհէմ երթայ, ըսաւ:  
 Սաւուղ ասոր վրայ խիստ բարկացաւ եւ զինքն  
 արհամարհելով ըսաւ. Գաւթին՝ քու բարե-  
 կամը ըլլալը կարծես թէ չեմ գիտեր. բայց  
 դիտցիր թէ քանի որ ինք կենդանի է՝ քու  
 թագդ ապահով չէ, ուստի մահուան արժանի  
 է, նայիս որ զինքը բռնել տաս: Յովնաթան  
 սկսաւ զԳաւթի ջատագովել. որով Սաւուղ  
 այնչափ այլայլեցաւ որ գեղարդը վերցուց, զար-  
 նել կ'ուզէր: Յովնաթան բարկութեամբ ու  
 Գաւթին վրայ արամած՝ սեղանը թողուց ե-  
 լաւ գնաց: Երկրորդ առտու հետը տղայ  
 մ'առած՝ Գաւթին եղած դաշտը գնաց, ու  
 նշանը տալէն ետեւ՝ փքինը տղուն տուաւ

ճամբեց : Դաւիթ ու Յոֆնաթան նոյն տեղը նորէն իրարու հետ խօսեցան ու պագտուեցան, եւ բարեկամութիւննին հաստատուն բռնելու համար իրարու խօսք տալէն ետեւ՝ բաժնուեցան :

## Լ Է . Դ Ա Ս

1. Դաւիթ Նամբա ինչ բրաւ, անկէ Յուզայի երկիրը շոնցած՝ ուր գնաց : Սաւուղ Նամբայի քահանայքն ինչու սպաննել տուաւ : — 2. Դաւիթ Կելլան ինչպէս առաւ, ինչու Ջիփ անապատը գնաց, հան ինչ վտանգէ ազատեցաւ : Սաւուղայ վերարկուին ծայրն երբ կարեց առաւ եւ ինչու : Սաւուղ ինչ բրաւ : — 3. Արիգեա ո՛վ է, ինչ իմաստուն գործք գործեց : — 4. Դաւիթ երբ Սաւուղայ բանակը մտաւ, անոր գեղարգն ու չրին ամանն առաւ : — 5. Սիկելակն այրողներն ո՛վ էին : Դաւիթ անոնցմէ ինչպէս վրէժ առաւ :

1. Դաւիթ Բենիամինի երկրին մէջ քահանայից Նամբա քաղաքը՝ Աքիմելէք քահանայապետին քովն եկաւ, անկէ հաց ուզեց. ան ալ հասարակ հաց չունենալուն՝ առաջաւորաց հացէն տուաւ. եւ երբ որ զէնք ուզեց, հանեց Գողիաթին սուրը տուաւ : Դաւիթ անկէ ելաւ՝ Փղշտացւոց երկիրը Գեթացւոց Անրուս թագաւորին քովը գնաց, ուր Գողիադը մեռցրնողն ըլլայն իմացուելով՝ վախցաւ եւ այսօհար ձեւանալով վախաւ, Ողոզումայ այրը գնաց, ուր իր եղբարցմէն ու ընտանիքէն զատ՝ խել մը մարդիկ ալ գալով՝ 400 հոգի եղան : Դաւիթ անկէ Մովաբացւոց Մասեփաթ քաղաքն եկաւ, հայրը մայրն անոնց թագաւորին յանձնեց, եւ ինք քիչ մը

վերջը Գաղ մարգարէին խօսքովը՝ Յուդայի երկիրը դարձաւ : Նոյն ատենն Սաւուղ տրտունջէլով մը իր բոլորախիբն ըլլողներուն ըսաւ . Գաւթէն ինչ կը յուսաք՝ որ ամէնքդ ինծի դէմ՝ միարաներ էք, մէկը ինծի ցաւակից չըլլար, անոր վրայ ինծի լուր բերող մը չկայ : Ան ատենն Գովեկ Ասորին իր ջորեպանն՝ որ Աքիմեյէքին՝ Գաւթայ ըրածը տեսած էր, կարգապատմեց : Սաւուղ կատղելով՝ Աքիմեյէքն ու Նամբա ըլլող բոլոր քահանաներն առջեւը բերել տուաւ, որոնք 305 հոգի էին, եւ հրամայեց որ զամէնքն ալ թրէ անցընեն : Երբ որ մէկը չյանդգնեցաւ անոնց ձեռք վերցընել, Գովեկին հրամայեց, որն որ ելաւ զամէնքը սպաննեց : Սաւուղ Նամբա ալ մարդ խրկեց, բոլոր քաղաքը մարդ եւ անասուն թրէ անցընել տուաւ : Միայն Աքիմեյէքին Աքիադար որդին փախաւ, Գաւթին քովը գնաց ու եղածներն անոր պատմեց :

2. Նոյն ատենները Փղշտացիք Սաւուղայ երկիրներուն վրայ եկած Աելիան պաշարած էին : Գաւթ Աստուծոյ հարցուց եւ զօրքով գիմացնին գնաց, զարկաւ ցրուեց զանոնք, եւ քաղաքն ազատեց : Սաւուղ իրեն շնորհակալ ըլլալու տեղ՝ Աելիա ըլլալն իմանալով՝ Ալ Աստուած զինքը ձեռքս մատնեց ըսելով, զօրքն առած՝ զինքը պաշարելու գնաց : Գաւթ Աստուծոմով իմանալով թէ Սաւուղ զինքը պաշարելու կու գայ եւ թէ Աելիացիք զինքն ու իր մարդիկներն անոր ձեռքը պիտի մատնեն, ելաւ Զիփ անապատը գնաց, լերան մը վրայ ելաւ : Այսպէսով Սաւուղ զինքն ամէն տեղ

փնտռեց չկրցաւ գտնել : Բայց Յովնաթան գտնելով՝ հետը բարեկամութեան գաշինքը նորոգեց : Քիչ մը վերջը Չիփացիք գացին Սաւուղին ըսին որ Գաւիթ քովերնիս է, կ'ուզես նէ՛ եկուր զինքը բռնենք ձեռքդ տանք : Սաւուղ ալ գնաց : Գաւիթ նեղ մտնելով՝ Աստուծոյ դիմեց, որն որ ասանկ մեծ վտանգի մէջ անոր օգնութեան հասաւ : Սաւուղ լուր առնելով որ Փղշտացիք վրան կու գան, զԳաւիթ թողուց, անոնց դէմ գնաց :

Գաւիթ Չիփ անապատէն Անձուկ Գաղղայ ըսուած տեղը գալով՝ Սաւուղ 3000 ընտիր զօրքով նորէն իր ետեւէն ինկաւ : Ճամբուն վրայ այր մը տեսնելով՝ ներս մտաւ որ հանգչի : Գաւիթ ալ նոյն այրին ներսի դին էր : Քովինները զինքն յորդորեցին որ թագաւորն սպաննէ . բայց ինք դէմ դրաւ, եւ անոր սիրան առնելու համար՝ կամացուկ մը գնաց վերարկուին ծայրէն կտոր մը կտրեց : Երբ որ Սաւուղ այրէն ելած կ'երթար, Գաւիթ վերարկուին կտորը ձեռքն առած՝ զինքը կանչելով ետեւէն գնաց, եւ առջեւն ինկած երկրպագութիւն ըրաւ ու ըսաւ . Տէր իմ, Գաւիթ քեզի չարութիւն ընել կ'ուզէ ըսողներուն ինչո՞ կը հաւտաս : Աստուած այսօր քքեղ ձեռքս տուաւ . բայց ես քեզի ինայեցի : Աս ըսաւ ու վերարկուին կտորը ցուցուց : Ասոր վրայ Սաւուղին սիրտը կակղցաւ եւ լալով ըսաւ . Որդեակ իմ Գաւիթ, դուն ինձմէ արդար ես, որ ինձի չարեաց տեղ՝ բարիք հատուցիր : Այսօրուան ինձի ըրած բարիքիդ հատուցումն Աստուծմէ գտնես : Ես գիտեմ՝ Իս-



բայելի թագաւորութիւնը քու ձեռքդ պիտի անցնի. ուստի կ'աղաչեմ՝ ինծի երդմամբ խօսք տուր որ զաւերներուս կը խնայես եւ անունս աշխարհքէն չես ցնջեր: Գաւիթ երդմամբ խօսք տուաւ եւ իրարմէ բաժնուեցան:

Յ. Անկից Գաւիթ Մանայ անապատն եկաւ, ուր Նաբաղ անունով հարուստ եւ ազահ մարդուն մէկը կարմեղոս լերան վրայ իր ոչխարներն արածել կուտար: Գաւթայ քովը նոյն ատեն 600 հոգւոյ չափ մարդ կար, որոնք չէ թէ միայն Նաբաղայ վնաս մը չէին հասցըներ, հապա նաեւ իր ինչքերն ու ոչխարները կը պաշտպանէին: Երբ որ ասոր ոչխարներուն խուզելու օրն եկաւ, Գաւիթ իրեն տասը հոգի խրկեց՝ որ իր կողմանէ զինքն ողջունեն եւ խնդրեն որ բրած բարիքներուն փոխարէն՝ քիչ մը բան տայ: Բայց Նաբաղ զանոնք չճանչնալու զարկաւ եւ նախատելով՝ ձեռքերնին պարապ ետ դարձուց: Անոր վրայ Գաւիթ խիստ բարկացաւ. եւ իր մարդիկներէն 200 հոգի պահպանութեան համար թող տալով՝ ինք 400 հոգւով ճամբայ ելաւ, որ Նաբաղն իրեններովը բռնէ սպաննէ: Բայց ինք չհասած՝ Նաբաղին Արիգեա կ'ինն իր մարդիկներուն մէկէն՝ Գաւթին ասանկ պատրաստութեամբ գալն եւ պատճառն իմանալով՝ շուտ մը 200 հաց, երկու աման գինի ու հինգ ոչխար ճարեց, իշուն վրայ դրաւ, Գաւթին գիմացն ելաւ եւ իմաստուն խօսքերով բարկութիւնն իջեցուց: Ան ատեն Գաւիթ Ասուծոյ փառք տուաւ՝ զինքն արիւնհեղութենէ եւ անձին համար վրէժ խնդրելէն ա-

զատելուն համար : Նարազ նոյն օրը զինով  
բլալով՝ Արիգեան իրեն բան չբաւ . բայց  
երբ որ երկրորդ օրը զինովութիւնն անցաւ  
եւ կինն՝ անցուցած մեծ վտանգը պատմեց,  
Նարազ շատ վախցաւ ու տասն օր ետքը մե-  
ռաւ : Գաւիթ ալ Արիգեան իրեն կին առաւ :

4. Գաւիթ նորէն իր մարդիկներովը Չի-  
փացուց երկիրը գալով՝ Չիփացիք Սաւուղին  
իմացուցին . ան ալ հազար հոգւով ելաւ գնաց :  
Գաւիթ լրտեսի ձեռքով Սաւուղին կեցած  
տեղն իմացած բլալով՝ երբ որ բոլոր բանակը  
քնոյ մէջ էր՝ Արեսասային հեռ գնաց մէջերնին  
մտաւ : Արեսաս տեսնելով որ Սաւուղ գե-  
ղարդը գլխոյն կողմը գետինը խոթեր՝ իր խորա-  
նին մէջ կը քնանայ, նմանապէս անոր Արեն-  
ներ զօրապեան ու բոլոր զօրքը կը քնանան,  
Գաւիթին ըսաւ . Աստուած թշնամիդ հիմա  
ձեռքդ մատնեց . թող որ գեղարդով մէկ  
զարնելով՝ սպաննեմ : Բայց Գաւիթ թող  
չտուաւ . մինակ գեղարդն ու ջրին ամանն ա-  
ռաւ բանակէն դուրս ելաւ ու լերան վրայէն  
Արենները կանչելով՝ ըսաւ . Ինչու տերդ ա-  
ղէկ չես հոգար, անոր գեղարդն ու ջրին ա-  
մանն ո՞ւր է : Սաւուղ ձայնէն ո՞վ բլալն ի-  
մանալով՝ Ան քու ձայնդ է, որդեակ իմ՝  
Գաւիթ, ըսաւ : Գաւիթ պատասխան տուաւ  
որ Ի՞նչ բրած եմ՝ որ զիս կը հալածես : Սա-  
ւուղ՝ Մեղայ, ալ բան չեմ ըներ, քովս ե-  
կուր, ըսաւ : Գաւիթ՝ Գեղարդդ հոս է, մէ-  
կը խրկէ առ, ըսաւ եւ ինք ելաւ գնաց :

5. Գաւիթ հոնկից Գեթացուց Անբու  
Թագաւորին գնաց, բնակութեան համար ան.

կէ Սիկելլակն առաւ : Ինք նոյն տեղն եղած  
 ատեն՝ Փղշտացիք Իսրայելացւոց դէմ սկսան  
 պատերազմի պատրաստութիւն տեսնել . Ան-  
 քուս ալ զինքը պատերազմի կանչեց, որով  
 անոր հաւատարմութիւնն ուզեց փորձել : Գա-  
 ւիթ թէպէտ իր թագաւորին եւ ազգին դէմ  
 պատերազմելու միտք չունէր, ի վերայ այսր  
 ամենայնի՝ Աուգամ եւ կը տեսնես թէ ինչ  
 կ'ընեմ, ըսելով՝ անոր անորոշ պատասխան մը  
 տուաւ : Փղշտացիք Անքուսին դէմ կեցան,  
 չուզեցին որ Գաւիթ եւ իր մարդիկը մէկտեղ  
 դան, վախնալով որ կարելի է թէ զիրենք  
 Սաուդին կը մատնէ. անոր համար զինքն իր  
 մարդիկներովն էտ դարձուցին : Գաւիթ երեք  
 օր ետքը Սիկելլակ հասնելով՝ տեսաւ որ Ա-  
 մազեկացիք նոյն քաղաքն այրած եւ իր մար-  
 դիկներն, իր եւ անոնց կնիկներն ու տղաքը  
 գերիտարած էին : Քովինները ձայներնին ձգե-  
 ցին սկսան լալ ու սրտերնուն կսկծէն զԳա-  
 ւիթ կ'ուզէին քարկոծել : Իսկ ինք Աստուծ-  
 մէ զօրանալով՝ իր 600 մարդիկներովն աւար  
 առնողներուն ետեւէն ինկաւ : Ճամբան Ե-  
 զիպտացւոյ մը պատահեցաւ, որն որ երեք օր  
 էր բան կերած չէր. քիչ մը ուտելու բան  
 տալով զօրացնելէն ետեւ՝ հարցուց իմացաւ  
 որ Սիկելլակն այրող Ամազեկացիներէն մէկուն  
 ծառան է եղեր եւ հիւանդ ըլլալուն՝ զինքը  
 ճամբան թող են տուեր : Աս երիտասարդը  
 Գաւիթէն երգամամբ խօսք առնելէն ետեւ՝ որ  
 զինքը չիսպաններ եւ իր տիրոջը ձեռքը չիտար,  
 առաւ զինքն անոնց ետեւէն տարաւ : Ամա-  
 ղեկացիք՝ նոյն ատեն դաշտին վրայ ցրուած

կ'ուտէին կը խմէին : Դաւիթ իր մարդիկնե-  
րովը վրանին ինկաւ , առտուընէ մինչեւ եր-  
կրորդ օրուան իրիկունը սաստիկ ջարդեց , ա-  
նանկ որ բաց ի 400 հոգիէ՝ որոնք ուղտի վրայ  
հեծած փախան , ուրիշ ամէնքն ալ մեռան ,  
եւ ինք Սիկելլակէն յափշտակուած բաներն  
առնելէն զատ՝ նաեւ մեծ աւար ժողոված ետ  
դարձաւ :

## Լ Ը . Դ Ա Ս

1. Ե՛րբ Սաուլ զՍամուէլ տեսնել ուզեցեւ անկէ ինչ  
լոյց : — 2. Սաուլ եւ Յոֆնաթան ո՛ր եւ ինչպէս մե-  
ռան : — 3. Դաւիթ անոնց մահուան լուրն որով առաւ  
եւ ինչ բռաւ : — 4. Դաւիթ ինչպէս նախ Յուդայի եւ  
ետեք բոլոր Իսրայելի թագաւոր եղաւ :

1. Որովհետեւ՝ վերը ըսածնուս պէս՝ Փղըշ-  
տացիք Իսրայելացւոց դէմ պատրաստութիւն  
կը տեսնէին , Սաուլ ալ իրենց դէմ պատ-  
րաստուեցաւ եւ երկու կողմն ալ բանակին  
Գեղբուայ լեռը գրին : Սաուլ թշնամեաց  
արտաքոյ կարգի բազմութիւնը տեսնելով՝ սիրտն  
ահու դողի մէջ ինկաւ , մանաւանդ երբ որ  
քահանայի ձեռքով Աստուծոյ խորհուրդ հար-  
ցուց ու պատասխան չառաւ : Ինչ ընելիքը  
չգիտնալով՝ վճուկ կանանց դիմել ուզեց , զո-  
րոնք ինք յառաջ սպաննել տուած ու մէջ-  
տեղաց վերցուցած էր : Ուստի ծառաներուն  
ապսպրեց որ իրեն վճուկ կին մը գտնեն : Եւ  
անոնցմէ իմանալով որ Այենդովր վճուկ մը  
կայ , հետն երկու հոգի առած՝ անծանօթ  
զգեստով ան կնկան գնաց , ինչրեց որ ուզած  
մարդն իրեն ցուցնէ : Աինը զինքը չճաննա-

լով՝ պատասխան տուաւ թէ Արդէն գիտես որ Սաւուղ կախարդները մեռցուց. ինչու զիս ալ ձեռք տալ կ'ուզես: Սաւուղ երգմամբ զինքն ապահով ընելէն ետեւ՝ ուզեց որ զՍամուէլ հանէ, որն որ երկու տարի էր մեռած էր: Կախարդ կինն իր արուեստը չբանեցուցած՝ Աստուած մէկէն զՍամուէլ ցուցուց որպէս զի անոր ձեռքով Սաւուղին մտաւ որ մահն իմացընելով՝ զինքը դարձի բերելու վերջին ապդարարութիւնն ընէ: Ահուկ կինը տեսնելով որ Սամուէլ առանց իր գործակցութեան երեւցաւ, մէկէն սարսափեցաւ մնաց. եւ նոյն ատեն միտքն ինկաւ որ չըլլայ թէ իրեն եկողը Սաւուղն ըլլայ, որովհետեւ Սաւուղ Սամուէլին հետ շատ կապակցութիւն ունէր. ուստի եւ ներքին համոզմամբ իր երեսէն վեր կանչեց թէ Գու՛ն Սաւուղն էս: Սաւուղ Միվախնար, տեսածդ պատմէ, ըսաւ: Կինն ալ՝ (Սամուէլին համար) Աստուածներ տեսայ, ըսաւ, եւ աս ալ աւելցուց որ Կրկնոց հագած մէկն երեւցաւ: Թագաւորը Սամուէլին գնաց երկրպագութիւն ըրաւ: Սամուէլ իրեն բարկացաւ նէ, Սաւուղ պատասխան տուաւ թէ Շատ նեղութեան մէջ եմ, Փղշտացիք ինծի դէմ պատերազմի էլան, Աստուած ալ երեսս շինայիր. անոր համար քեզի ինկայ՝ որ ընելիքս սորվեցընես: Ինծի ինչ կը հարցընես, պատասխան տուաւ Սամուէլ. Աստուած զքեզ երեսէ ձգեց, իմ ձեռքովս քեզի իմացուցածները բոլոր պիտի կատարէ: Աստուծոյ ջնազանդելուդ համար թագաւորութիւնդ ձեռքէդ առնէ Գաւթին պիտի

տայ. վաղը դուն ու որդիքդ պիտի մեռնիք : Սաւուղ արդէն բոլոր օրը բերանը բան գրած չըլլալով՝ շատ տկարացած էր. աս գոյժն ալ որ առաւ, ոյժը կտրեցաւ գետինն ինկաւ. եւ հազիւ վճուկ կնոջ թախանձանացն անսալով՝ քիչ մը բան կերաւ բանակ դարձաւ :

2. Քիչ մը վերջը պատերազմն սկսաւ. Իսրայելացւոց կողմանէ Վեղրուայ լեռան վրայ շատ ինկող եղաւ, որոնց մէջն էր նաեւ Յովնաթան ու իր եղբարքը. մնացածները սկսան փախչիլ : Պատերազմը միայն Սաւուղին վրայ մնալով՝ թշնամեաց քաջ աղեղնաւորներն անոր ետեւէն ինկան որ մեռցընեն ու պատերազմը դադրեցընեն : Բաղձանքներնուն հասան, զՍաւուղ ծանր վիրաւորեցին : Ան ատեն թագաւորն իր կապարձակիին հրամայեց որ զինքը սրով սպաննէ, ըսելով որ Չըլլայ թէ Այլ ազգեաց ձեռքն իյնամ : Երբ որ կապարձակիին յանձն չառաւ, Սաւուղ իր սրոյն վրայ ինկաւ ինք զինքն սպաննեց : Երկրորդ օրը Փղշտացիք մեռած մարմինները կողոպտելու համար Վեղրուէ լեռը գալով՝ հոն Սաւուղին եւ անոր որդւոցը մարմինը գտան. Սաւուղին զլուխը կտրեցին ու զէնքը վրայէն առին՝ իրենց կռատունը տարին. իսկ մարմիննին Բեթսանայ պարըսպէն կախեցին : Բայց Յարիս Վաղաաղու բնակիչները՝ Սաւուղէն գտած բարիքնուն փոխարէն (Տես ԼԴ. Դաս. ԹԻւ 4.) զիշերանց գաղտուկ գացին մարմինները թաղեցին :

3. Դաւիթ Սիկելակն այրող Ամազեկացիներուն յաղթելէն երեք օր վերջը՝ Սաւուղին բանակէն զգետոր պատռած, զլուխը մոխիր

ցանած մէկն եկաւ եւ պատմեց որ պատերազմի մէջ շատ մարդ ինկաւ, զօրքը ցրուեցաւ, Սաւուղ ու Յովնաթան ալ մեռան: Գաւիթ հարցուց. Ուստի՞ գիտես որ Սաւուղ ու Յովնաթան մեռան: Անիկա պատասխան տուաւ թէ Գեղբուէ լեռը Սաւուղը տեսայ որ թշնամիներէն նեղ մտած ըլլալով՝ նիզակին վրայ ինկած էր, եւ երբ որ զիս տեսաւ եւ ո՛վ ըլլալս իմացաւ, Էկուր, ըսաւ, զիս սպաննէ: Էս ալ տեսայ որ սրոյն վրայ իյնալէն ետեւ՝ ազատիլն անկարելի է, ելայ զինքն սպաննեցի, թաղն ու ապարանջանները քեզի իմ տիրոջս բերի: Գաւիթ եւ իր մարդիկը Սաւուղին ու Յովնաթանին վրայ լացին, մինչեւ իրիկուն ծոմ կեցան: Ետքը Գաւիթ զՍաւուղ սպաննողը մեռցընել տուաւ, Աստուծոյ օժելոյն ձեռք վերցընելու յանդգնելուն համար. Սաւուղին ու Յովնաթանին վրայ ալ գեղեցիկ ողբ մը շինեց, որուն մէջ զիրենք շատ կը գովէ:

4. Սաւուղին մեռնելովը՝ թագաւորական իշխանութիւնը Գաւթի կը մնար: Ուստի եւ Գաւիթ Աստուծոյ հարցուց որ Յուդայի երկիրն երթայ, եւ ո՞ր քաղաքը նստի: Աստուած ալ անոր քերթն քաղաքը ցուցուց. եւ երբ որ հոն գնաց, Յուդայի ցեղը զինքը թագաւոր օժեց: Գաւիթ Յարիսացւոց՝ Սաւուղայ եւ անոր որդւոց մարմինները թաղելը հոն լսելով՝ իրենց մարդ խրկեց, ըրածներնուն վրայ իր հաճութիւնը ցուցուց, եւ խոստացաւ որ աս բանիս համար իրենց հատուցում մը կ'ընէ: Իսկ Խորայելացւոց մէկալ ցեղերը խել մը ատեն զինքը թագաւոր չճանչցան, որով-

Հետեւ Արեւններ՝ Սաւուղին զօրապետն՝ անոր  
 Յերուսթէ որդին թագաւոր նստեցուց : Ա-  
 սով Գաւթի եւ Սաւուղայ տան մէջ երկա-  
 րատեւ պատերազմ մը ծագեցաւ : Աս կախնե-  
 րէն մէկուն մէջ Ասայէլ՝ որ Գաւթի Յովար  
 զօրապետին եղբայրն էր, սկսաւ զԱրեւններ՝  
 հալածել : Արեւններ ետեւը դարձաւ Ասայե-  
 լին ըսաւ . Ետեւէս մ'իյնար, եղբորդ քով  
 գնա, ապա թէ ոչ՝ զքեզ կը սպաննեմ. եւ  
 երբ որ Ասայէլ մտիկ չըրաւ, Արեւններ զինքը  
 զարկաւ մեռցուց : Աս պատճառաւ Յովար  
 Արեւններին ոխ պահելով՝ զինքը մեռցընելու  
 առիթ կը փնտռէր եւ շուտով գտաւ : Ա-  
 րեւններ Յերուսթէին հետ աւրուելով եւ  
 ուզելով զԳաւթի բոլոր Իսրայելի թագաւոր  
 ընել տալ, եկաւ Գաւթին հետ խօսելու : Եւ  
 դարձած ատեն, Յովար՝ զաղտուկ քան ըսելու  
 պատրուակաւ՝ զինքը ճամբէն խոտորեցուց ու  
 պազտուելու ատեն՝ զարկաւ սպաննեց : Արեւ-  
 ններին մահուան վրայ Գաւթին սիրտը ցաւե-  
 ցաւ, բոլոր Իսրայելացւոց սիրտն ալ կոտորե-  
 ցաւ : Քիչ մը վերջը Յերուսթէին զօրապետ-  
 ներէն երկուքը նոյն իշխանը քնոյ մէջ սպան-  
 նեցին ու գլուխն առին Գաւթի բերին, որ  
 խիստ բարկանալով՝ անմիջապէս երկուքն ալ  
 մեռցընել տուաւ : Իսրայելացւոց մէկալ ցե-  
 ղերը Գաւթի բարեօրտութիւնը տեսնելով  
 հետը կապուեցան, իրենց իշխաններն եկան  
 զինքը բոլոր Իսրայելի թագաւոր օժեցին : Այս-  
 պէսով Գաւթի եօթ ու կէս տարի մինակ  
 Յուդայի թագաւոր ըլլալէն ետքը, 33 տա-  
 րեան՝ բոլոր Իսրայելի թագաւոր եղաւ :



Լ Թ . Գ Ա Ս

1. Գաւիթ Սիոն բերդն ինչպէս առաւ : Տապանակն ինչպէս իր քաղաքը բերաւ . Մեղքոյ զինքն ինչու ծաղր բրաւ : Աստուծոյ տապանակը քանի տեղ փոխադրեցաւ : — 2. Գաւիթ Մեմփրոսթէին ինչ սէր ցուցուց : Տաճար չինել ուզելուն համար Աստուած իրեն ինչ բրաւ : — 3. Գաւիթ որ ազգաց դէմ պատերազմ բացաւ :

1. Գաւիթ բոլոր Խորայեւացւոց թագաւոր ճանչցուելուն երկրորդ տարին՝ Սիոն լեռան վրայի ամրոցը բնակող Յերուսացիները պաշարելու գնաց : Յերուսացիք զինքը ծաղր բրին . Աոյրերն ու կաղերը քեղի դէմ են , ներս չես կրնար մտնել , ըսին : Գաւիթ խոստացաւ որ իր զօրքին մէջէն ամենէն յառաջ Սիոն բերդին վրայ ելլողն ընդհանուր սպարապետ կ'ընէ : Յովաբ՝ որ Աբենները սպաննելուն համար Գաւիթի հետ աւրուած էր , աս քաջութիւնն ընելով՝ հետը հաշտուեցաւ ու զօրաց վրայ ընդհանուր սպարապետ դրուեցաւ : Ամրոցն առնուելով , Գաւիթ՝ անունը Քաղաք Գաւիթի դրաւ , իր տէրութեան զխաւոր քաղաքն բրաւ , եւ հրաման հանեց որ Յերուսացւոց հետ կոյրերն ու կաղերն ալ ջարդեն : Գաւիթ ասկէ զատ Փղշտացւոց դէմ ուրիշ պատերազմներ ալ բրաւ , որոնց մէջ ամենէն աւելի յիշատակաց արժանի դէպքն աս եղաւ , որ անգամ մը պատերազմի մէջ ծարուելով՝ Ուր է , կանչեց , մէկը Բեթղեհէմի դրան քովի աղբիւրէն ինծի ջուր բերէր : Քոյն ըլլող զօրապետներէն երեք հոգի անմիջապէս թշնամեաց բանակը պատուեցին , գացին ու զած տեղէն ջուր առին բերին : Գաւիթ անոնց բ-

բաժին վրայ զարմացաւ, բայց ջուրը չխմեց, հապա Աստուծոյ նուիրեց, ըսելով թէ Աստուած չընէ, որ ուրիշին արիւնը խմեմ: Փղըշտացիք տեսնելով որ Իսրայելացւոց դէմ ըրած ամէն արշաւանքնին անյաջող գնաց, յուսահատեցան ու հանդարտեցան: Ան ատեն Գաւիթ տապանակը Արիաթարիմէն իր քաղաքը փոխադրել ուղեց: Մասնաւոր Ակայութեան խորան շինել տալէն ետեւ՝ տապանակը նոր սայլի մը վրայ դնել տալով՝ կը բերէր. Ողա ու իր եղբարքն ալ՝ որ Ամինադարին որդիքն էին, առջեւէն կ'երթային եւ սայլը կը քշէին: Մէյ մ'ալ յանկարծ զուարակները ճամբան սայլը ծռեցին, անանկ որ տապանակը տեղէն խախտեցաւ: Ողա ձեռքն երկընցուց տապանակը բռնեց. բայց ասով օրինաց դէմ ըրաւ, որովհետեւ Ղեւտացիք տապանակը ո՛չ կրնային վերցընել եւ ո՛չ ալ դպչիլ. անոր համար մէկէն ինկաւ մեռաւ: Գաւթի աչքն ասկէ վախնալով՝ տապանակը Երուսաղեմայ մտերը բնակող Ղեւտացւոյ մը տունը տարաւ, որն որ Աբեղղար Գեթացի կ'ըսուէր: Բայց որովհետեւ տապանակին պատճառաւն Աստուած անոր տունն օրհնեց, անոր համար Գաւթ երեք ամիս ետքը հոնկէ վերցուց իր քաղաքը բերաւ: Ճամբան՝ սրտին ուրախութենէն տապանակին առջեւէն կարաւելով ու խաղալով կ'երթար: Քաղաք մտած ատեն՝ Մեղքող իր կինը՝ պատուհանէն ղիկքը տեսնելով՝ վրան ծիծաղեցաւ, տուն ալ դարձաւ նէ՛ գիմացն ելաւ ծաղը ընելով անոր ըսաւ. Այսօր Իսրայելի թագաւորն ինչպէս փառաւորուած էր,

որ կաքաւչի պէս՝ աղախիններու եւ ծառայից առջեւը կը խաղար: Գաւիթ պատասխան տուաւ թէ Ջիս հօրդ ու բոլոր ընտանեացդ տեղ՝ Իտրայելի վրայ առաջնորդ ընող Աստուածն օրհնեալ ըլլայ, իր առջեւը կը խաղամ. բայց ասով քու եւ ծառայից առջեւ պզտիկ կ'իյնամ եղեր՝ բան չկայ: Աստուած զՄեղքող՝ աս ըրածին համար՝ անդաւակութեան պատժով պատժեց: Ասանկով տապանակը զանազան տեղեր (Գաղգաղա, Սելով ու Աարիաթարիմ) պտրտելէն ետեւ՝ Երուսաղէմ փոխադրեցաւ եւ ալ ուրիշ տեղ չգնաց: Իսկ Մովսիսի շինել տուած Ակայութեան խորանը՝ որուն ըստ ամենայնի նման էր Գաւթի շինել տուածը Գարաւոն մնաց, ինչպէս նաեւ ողջակիզաց սեղանն ալ: Անոր համար Գարաւոն՝ Ժողովրդեան ջերմեռանդութեան տեղ եղած էր, զո՛հ մատուցանելու համար հոն կ'երթային: Եւ որովհետեւ Սաւուղի ատեն Աստուածային պաշտամանց կարգն աւրուած էր, Գաւթի օրինաց մէջ գրուած կարգերը նորէն հաստատեց, քահանայից ու Ղեւտացւոց պաշտօնները կարգի դրաւ:

Չ. Գաւթի աս ամէն բաներն ընելէն լմընցընելէն վերջը՝ Յովնաթանին հետ դրած բարեկամութեան դաշինքը միտքը բերելով՝ ուզեց անոր տան իր սէրը ցուցընել: Հարցուց թէ անոր զաւկընէրէն դեռ ողջ մարդ մնացած է: Սիրա՝ Սաւուղի ծառաներէն մէկը՝ Յովնաթանին Մեմփիբոսթէ որդին ցուցուց, որն որ կաղ էր. վասն զի հինգ տարւան էր նէ՛ իր դաստիարակը հօրը մեռնելու լուրն առնե-

լով՝ զինքը փախցընելու ատեն՝ ըստ պատահման ձգած ոտքը կոտորած էր: Գաւիթ Մեմփիրոսթէն իրեն կանչեց, բարիք ըրաւ, Սաւուղայ անդերն իրեն տուաւ եւ անոնց վերակացութիւնը Սիրային յանձնեց: Մեմփիրոսթէ նոյն օրէն սկսեալ՝ Երուսաղէմ մնաց, եւ կերակուրը թագաւորին հետ կ'ուտէր: Նոյն ատենները Գաւիթ նաեւ Աստուծոյ տաճար մը շինել ուզեց, որն որ Նաթան մարգարէին յայտնեց: Նաթան ըսածին հաւնեցաւ. բայց Գաւիթ շատ արիւն թափած ըլլալով՝ Աստուած Նաթանին ըսաւ թէ Գաւիթի տաճար շինելու բաղձանքին հաւնեցայ, բայց ինքը չշինէ, այլ իր որդին: Իր ատոն յաւիտեանս պիտի հաստատեմ եւ իրեն հայր պիտ'որ ըլլամ. մեղանչելու ըլլայ նէ՝ թէպէտ զինքը կը պատժեմ, բայց Սաւուղայ ըրածիս պէս ողորմութիւնս վրայէն բոլորովին չեմ հեռացընէր: Նաթան ասոնք Գաւիթին պատմեց, ան ալ Աստուծոյ շնորհակալ եղաւ:

**Յ.** Գաւիթ Աստուածային խոստումներուն վստահանալով՝ Աստուծոյ ժողովրդեան թշնամի ազգերուն (Ասորոց, Փղշտացոց, Մովաբացոց ու Եդոմայեցոց) դէմ պատերազմ բացաւ, եւ եօթը տարի շարունակ հետերնին կռուելէն ետեւ՝ Աստուծոյ օգնութեամբը զանոնք նուաճեց: Ետքը Ամնացոց հետ պատերազմելու հարկադրեցաւ, վասն զի երբ որ անոնց թագաւորը՝ որ իրեն բարեկամն էր, մեռաւ, Գաւիթ անոր Անոն որդւոյն հետ ալ նոյն բարեկամութիւնը պահելու համար՝ իրեն երկու հոգի խրկեց՝ որ երթան իր կող-

մանէ հօրը մահուան վրայ ցաւակից ըլլան եւ զինքը շնորհաւորեն : Բայց նոր թագաւորն անոր խրկած մարդիկը լրտես կարծելով՝ իր իշխաններուն խորհրդովը մօրուքնին ածիլել տուաւ, զգեստնին ալ մինչեւ կէս մէջքերնին կտրած՝ խայտառակութեամբ վաճակեց : Դաւիթ ան պատգամաւորները Երկքով կեցուց՝ մինչեւ որ մօրուքնին ածի, եւ զՅովար զօրքով Ամնացուոց դէմ խրկեց, որոնք ըլլալիքն արդէն իրենք իրենցմէ զուշակելով՝ օգնութեան համար Ասորուոցմէ շատ զօրք առած ու պատերազմի պատրաստուած էին : Այսու ամենայնիւ Յովար հետերնին զարնուելով՝ 700 պատերազմական կառք, 40,000 ձիաւոր զօրք ջարդեց եւ Յացածները Դաւիթին հարկատու ըրաւ : Ուրիշ անգամ երբ որ Ամնացիք նորէն Դաւիթի դէմ էլան, դարձեալ Յովար զօրապետը վրանին խրկեց, որն որ անոնց Ռաբաթ թագաւորական քաղաքն՝ երեք տարի պաշարելէն ետեւ՝ առաւ կործանեց : Դաւիթ ալ եկաւ անոր բնակիչները չարաչար սպաննել տուաւ : Ասկէ առնուած աւարին մէջէն ամենէն յիշատակաց արժանին է Ամնացուոց թագաւորին ծանրագին քարկրով զարդարուած փառաւոր թագը՝ զորն որ Դաւիթ առաւ, սկսաւ ինք գործածել :

## Խ. Դ Ա Ս

1. Դաւիթի առջի մեղքն սրն եղաւ : — 2. Աստուած ըրածն ինչպէս երեսը զարկաւ : Մեղացն առջի պատիժը սրն է : — 3. Երկրորդն սրն է : — 4. Երրորդն սրն է : — 5. Դաւիթ Արեսողովն ապստամբութիւնը լսեց նե՛ ինչ ըրաւ : — 6. Սեմէի ս՛վ է. Դաւիթին ինչ ըրաւ : — 7. Քուսի արարացին Արեսողովն ինչ խորհուրդ տուաւ : — 8. Պատերազմն ս՛ր սկսաւ : Արեսողով ինչպէս մեռաւ : ստոր լուրը Դաւիթին ս՛վ տարաւ եւ ան ինչ ըրաւ : — 9. Դաւիթը Յորդանանէն աագին անցընողն ս՛վ եղաւ : Սեմէի եւ Մեմֆիբոսֆէ ինչ ըրին : Բերզելի ս՛վ է, ինչ ըրաւ :

1. Յովարին Ռարաթ պաշարած ատենը՝ Դաւիթ Երուսաղէմ մնացած էր : Օր մը երբ որ իրիկուան դէմ քնէն ելած՝ պալատին տանեացը վրայ կը պարտէր, ըստ պատահման տեսաւ որ դիմացի աւազանին մէջ կին մը կը լուացուի : Շուտ մը հարցուց տեղեկացաւ որ իր Ռւրիա զօրապետին կինը Բերսարէն է. զինքը կանչել տայէն, մեղանչելէն ետեւ՝ մարդ խաւրեց անոր էրիկը Ռւրիան բերել տուաւ, որպէս զի Բերսարէին քովը դանուելով՝ բանը չիմացուի : Ռւրիա եկաւ, պատերազմին ու զօրաց վրայ տեղեկութիւն տուաւ. բայց երբ որ Դաւիթ ուղեց զինքը տուն խրկել՝ որ հանգչի, անիկա յանձն չառաւ, ըսելով որ Աստուծոյ տապանակն ու բոլոր Խորայէլ վրանի տակ ըլլան, Յովար զօրքովը մերկ գետնի վրայ պառկի եւ էս տունս հանգիստ ուտեմ խմեմ. աս բանս չեմ կրնար ընել : Դաւիթ տեսաւ որ իր խորհուրդը փուճ էլաւ, ուրիշ միջոցի ձեռք զարկաւ : Ռւրիան երկու օր քովը պահէլէն ետեւ՝ զինքը Յովարին խրկած ա-

տեն՝ ձեռքը թուղթ մը տուաւ, որուն մէջ գրած էր որ զանիկա պատերազմին ամենէն վտանգաւոր տեղը դնէ: Յովար հրամանը կատարեց, որով ուրիշ շատ բազմութեան հետ մէկտեղ Ուրիան ալ զարնուեցաւ մեռաւ: Իսկ Բերսարէ էրկանը մահուան վրայ եօթն օր սուգ բռնելէն ետեւ՝ Գաւիթ զինքը կին առաւ եւ իրմէ զաւակ մ'ունեցաւ:

Ձ. Աստուած Գաւթին աս չար գործքը Նաթան մարգարէին ձեռքովն երեսը զարկաւ: Նաթան իրեն եկաւ ըսաւ որ Քաղքի մը մէջ մէկ հարուստ եւ մէկ աղքատ մարդ կար. հարուստն արջառի եւ ոչխարի տէր էր, իսկ աղքատը մինակ գառնուկ մ'ունէր, զորն որ իր զաւկըներուն պէս կը սիրէր: Օր մը հարստին հիւր մ'եկած ըլլալով՝ ասիկա իր ոչխարներուն ինայեց, զնաց աղքատին մէկ հատիկ գառնուկն առաւ, կտրեց հիւրին առջեւն հանեց: Գաւթ աս լսելով՝ շատ բարկացաւ եւ երդմամբ հաստատեց որ ասիկա ընողը մահուան արժանի է: Նաթան ան ատեն խօսքն իր վրայ դարձրնելով՝ Գուն ես ան մարդն, ըսաւ, որ Բերսարէն յափշտակեցիր եւ Ուրիան մեռցրնել տուիր: Աս ըրածիդ համար՝ Աստուած սուրբ քու տանդ մէջէն պիտի չհեռացընէ, եւ նոյն իսկ քու տնէդ գլուխդ շարիք պիտի հասցընէ: Գաւթ ըրածը ճանչցաւ, սրտանց՝ Մեղայ, ըսաւ եւ Աստուծոյ թողութիւն ուզեց: Նաթան՝ Աստուած մեղքդ թողուց, ըսաւ, բայց մեղացդ պատիժը քաշելու համար՝ Բերսարէէն ունեցած զաւակդ պիտի մեռնի: Շատ շանցաւ՝ որդին հիւրնդցաւ: Գաւթ տղուն

աղէկնայլուն համար Աստուծոյ աղաչեց, պահք բռնեց, գեանի վրայ փռուած՝ ոչ կ'ուտէր ոչ կը խմէր: Ի վերայ այսր ամենայնի տղան եօթն օրէն մեռաւ: Քովինները վախցան աս գոյժն իրեն տալու, որ չըլլայ թէ ցաւէն զլուխը բան մը գայ: Իսկ Գաւթի թէ որ իմացաւ՝ գեանէն ելաւ, լուացուեցաւ, օծուեցաւ, հագուստը փոխեց, զնաց Աստուծոյ երկրպագութիւն ըրաւ, ետքը տուն եկաւ նստաւ կերակուր կերաւ: Բերսաբէէն ուրիշ զաւակ մ'ալ ունեցաւ, որուն անունը՝ Սողոմոն դրաւ:

Յ. Գաւթին իր մեղացը համար քաշելու պատիժը՝ միայն աս չէր, ուրիշ մեծամեծ վըշտեր ալ պիտի քաշէր: Ամոն անգրանիկ որդին անկարգութիւն մ'ընելով՝ հայրը սաստիկ վըշտացուց ու Արեսողոմ՝ եղբօրը վերջին աստիճանի ատելի եղաւ: Երկու տարի ետեւ՝ Արեսողոմ մէկալ եղբարցը հետ Ամոնն ալ սեղանի հրաւիրեց ու ծառաներուն ձեռքով կերակրոյ վրայ զինքը մեռցնել տուաւ: Աս բանս Գաւթի մեծ ցաւ եղաւ. Արեսողոմ վախէն Ասուրոց երկիրը Գեսուր փախաւ, ուր երեք տարի մնալէն ետեւ՝ Յովարայ միջնորդութեամբն Երուսաղէմ՝ դարձաւ, երկու տարի մ'ալ հոն առանց հօրն երեսը տեսնելու մնաց, եւ վերջապէս նոյն Յովարայ ձեռքը հօրը հետ բոլորովին հաշտուեցաւ:

Զ. Արեսողոմ անկէ ետեւ ուրիշ անօրէն գործքի մը ձեռք զարկաւ. հօրը թագին աչք տնկելով, նոյնին հասնելու համար՝ կառքեր ու ձիաւորներ հոգաց. ժողովրդեան սիրան իրեն քաշելու համար ալ ամէն օր կանուխ կ'ըլէր



Հօրը պարապին դուռը կ'երթար, ուր որ ժողովուրդն իրենց դատին համար կը ժողվէին, հոն եկողներուն հետ սիրով ու քաղցրութեամբ կը խօսէր, վրանին գուժ կը ցուցնէր, զինքը բարեւոյց կը բռնէր կը պահէր: Չորս տարի ասանկ գործքերով Իսրայելացւոց շատերուն սիրտն իրեն քաշելէն ետեւ՝ օր մը հօրմէն քերտն երթալու հրաման ուզեց, ըսելով որ Գեսուր եղած ատենս՝ Աստուծոյ ուխտեցի որ Երուսաղէմ դառնամ նէ՛ քերտն երթամ իրեն զոհ մատուցանեմ: Այսպէսով հրամանն առաւ եւ 200 հօգի հրաւիրեց, որոնք առանց անօր ներքին խորհուրդը գիտնալու ելան գացին: Արեսողոմ քերտն հասած ատեն՝ իր կողմնակիցներէն Իսրայելացւոց երկիրները մարդ խրկեց պատուիրեց որ փողերուն ձայնն առնելուն պէս՝ քերտնի մէջ իր թագաւորելը հրատարակեն: Այսպէս ամէն բան կարգի գնելէն ու նոյն իսկ Աքիտոփէլ Գաւթին մեծ խորհրդականն իր կողմը շահելէն ետքը՝ հրամայեց որ զոհ մատուցանելն սկսի: Նոյն միջոցին իր գաղտնի խորհրդակիցները մէկէն ժողովրդեան մէջ մտնելով՝ սկսան Աեցցէ՛ Արեսողոմ թագաւոր կանչել. ժողովուրդն ալ անոնց նայելով՝ նոյնը կրկնեցին ու փողերն սկսան զարնուիլ: Բանը բոլոր Իսրայելացւոց երկիրները հրատարակուելով՝ ամէն դիաց գունդազունդ Արեսողոմին կողմն անցան:

Ճ. Գաւթի թագածն իմացաւ նէ՛ ինք զինքը Աստուծոյ յանձնեց եւ իր քովեւ եղած քիչ զօրքովն Երուսաղէմէն դուրս ելաւ: Սաղովկ քահանայապետը քահանայից ու Ղեւտացւոց

Հետ մէկտեղ տապանակը վերցոցած՝ կ'ուզէր  
 հետն երթալ . բայց թագաւորը տապանակը  
 տեղը դարձուց, ըսելով որ Եթէ Աստուած  
 կ'ուզէ նէ՝ տեղս կու գամ իր տապանակը  
 կը տեսնեմ, իսկ եթէ չէ՝ պատրաստ եմ, ի-  
 բնն հաճոյ եզածն ընէ : Գարձեալ Սաղովկայ  
 յանձնեց որ երթայ Էրուսաղէմ՝ կենայ եւ  
 գործքերուն վիճակն իրեն իմացընէ : Իսկ ինք  
 ու բոլոր հեան ըլլողները գլուխնին ծածկած,  
 ստուրնին բոկ, հետիոտս կեդրոնի հեղեղատէն  
 անցան՝ ձիթենեաց լեռն եկան : Հոն երբ որ  
 Գաւիթ իմացաւ որ Աքիտոփէլ ալ Արեստ-  
 զումին կողմն անցեր է, շատ այլալեցաւ, Աս-  
 տուծոյ ազաչեց որ Աքիտոփէլին խորհուրդը  
 ցրուէ : Լերան գլուխն ելաւ նէ՝ Աստուծոյ  
 երկրպագութիւն ըրաւ : Նոյն տեղը Քուսի Ա-  
 բաբաղին իր խորհրդականը՝ զգեստը պատռած  
 ու գլուխը մոխիր ցանած՝ եկաւ զինքը գտաւ :  
 Գաւիթ չուզեց որ անիկա հետը գայ . այլ  
 զինքն Արեստզումին քովը խրկեց, որպէս զի  
 Աքիտոփէլին խորհուրդը ցրուէ, եւ ապսպրեց  
 որ լսածը Սաղովկայ եւ Արիաթարայ որդւոցը  
 ձեռքովն իրեն իմացընէ : Ան տեղէն նոր հե-  
 աացած էր, մէյ մ'ալ Սիրա Մեմփիրոսթէին  
 ծառան կերակրեղինով երկու էշ բեռնաւորած՝  
 իրեն եկաւ . կերակուրները Գաւիթին ընծայեց :  
 Երբ որ Գաւիթ Մեմփիրոսթէն հարցուց, պա-  
 տասխանեց թէ Էրուսաղէմ է եւ հօրը թա-  
 գաւորութիւնը նորէն ձեռք անցընել կ'ուզէ :  
 Գաւիթ մէկէն անոր ըսածին հաւտալով եւ  
 Մեմփիրոսթէն ապստամբներուն կարգն ան-  
 ցընելով՝ բոլոր ստացուածքը Սիրային տուաւ :

**6.** Գաւիթ Բաւուրիմ հասած ատեն՝ Սաւուղին ազգականներէն Սեմէի անուն մէկը գիւմացն ելլելով՝ սկսաւ զինքը նախատել ու վրան քար նետել: Եկուր եկուր, անօրէն, կը կանչէր. Աստուած Սաւուղի տան արիւնը գլուխդ դարձուց: Արեսսա Գաւթի զօրապետը բարկանալով՝ ըսաւ. Անանկ սատկած շուն մը զքեզ ինչու թշնամանէ, տէր իմ: Եւրթամ գլուխն առնեմ գամ: Բայց Գաւթի գեղեցիկ խօսքով մը դէմ դրաւ. Թող անիծէ, Աստուած թողլ կու տայ որ զիս անիծէ, եւ սով կրնայ պատճառը հարցընել: Մտածեցէք մէյ մը. Եթէ իմ որդիս ետեւէս ինկեր զիս մեռցընել կ'ուզէ, որչափ եւս առաւել աս օտար մարդը կրնայ ընել: Թող տուէք որ զիս անիծանէ, կարելի է Աստուած իմ տառապանքս տեսնէ, եւ նոյն անէծքին տեղ՝ ինծի բարիք ընէ: Ասանկով Սեմէին ըրածին եւ ըսածին միտ չցնելով՝ ճամբան յառաջ տարաւ:

**7.** Նոյն միջոցին Արեսողոմ Երուսաղէմ մտաւ, ուր որ Քուսի Արաքացին երեսանց հեար բարեկամացաւ: Ան ալ իրեն ու Աբիտոփէլին յանձնեց որ բանը յաջողութեամբ գլուխ հանելու միջոցաց վրայ խորհին: Աբիտոփէլ ըսաւ որ Գաւթի մարդիկն յոգնութիւն չառած՝ շուտ մը 12,000ով վրանին երթամ, մինակ զԳաւթի մեռցընեմ եւ մէկալնոնք քու կողմդ դարձընեմ: Թէպէտ աս խորհուրդը թէ Արեսողոմին եւ թէ իր խորհրդականներուն աղէկ երեւցաւ, բայց Արեսողոմ ուղեց Քուսիին կարծիքն ալ իմանալ: Անիկա՝ Աբիտոփէլին ըսածին չհաւնել ցուցընելով՝

սկսաւ Արեսողոմին աչքը վախցընել : Խոհեմութեամբ վարուելու է, բաւ, քիչ հոգւով Գաւթի զօրաւոր մարդիկներուն դէմ ելլելը շատ վտանգաւոր բան է : Անոր համար բոլոր Խորայելացւոցմէ զօրք ժողովէ, մեծ բանակ կազմած՝ անանկ վրան զնա, եւ զիրենք դիւրաւ կրնաս յաղթել : Արեսողոմ Աստուծմէ կայրնալով՝ անոր խորհրդեան անսաց : Քուսին ասով կ'ուզէր որ Գաւթի փախչելու ատեն ունենայ, ուստի եւ բանը շուտ մ'իրեն իմացուց : Իսկ Արեսողոմէլ մէկ կողմանէ իր խորհրդեան մերժուիլն իրեն նախատինք սեպելով, մէկալ կողմանէ ալ Արեսողոմին ապագայ վիճակը յայտնի տեսնելով՝ յուսահատած տուն զնաց ինք զինքը կախեց :

Տ. Երբ որ Արեսողոմ բոլոր զօրութեամբ զօրք ժողովելու վրայ էր, Գաւթի Յօրդանան գետն անցնելով՝ Մանայիմ քաղաքը մտաւ, զօրքն երեք բաժին բրած Արեսողոմին գալուն կը սպասէր : Երբ որ անիկա եկաւ, Գաւթի զօրքն առած անձամբ դիմացն ելլել կ'ուզէր, բայց իր մարդիկը շփոզուցին : Ան ատեն Յովարին ու զօրքին բոլոր գլխաւորներուն մէկիկ մէկիկ ապսպրեց որ Արեսողոմին խնայեն, եւ աս պատուէրը տուած ատենը՝ բոլոր զօրքը լսեց : Պատերազմն Եփրեմի անտառին մէջ սկսաւ : Արեսողոմին կողմանէ 20,000 մարդ մեռաւ, ինքն ալ ստիպուեցաւ փախչիլ : Ջորի հեծած՝ կաղնիի մը տակէն անցնելու ատեն՝ մազերը ծառին ճիւղերուն պլուելով՝ ջորին է տակէն ելաւ եւ ինք կախուած մնաց : Աս բանս Գաւթի մարդիկներէն մէկը տեսնելով՝

Յովաքին իմացուց, որն որ ըսաւ. Եթէ զինքը զարկած սպաննած ըլլայիր, հիմա քեզի 50 սիկղ ու մէկ թուր կու տայի: Մարդը՝ Հազար ալ տալու ըլլայիր, պատասխանեց, ես թագաւորիս տղուն ձեռք չէի դպցըներ, մանաւանդ որ կրկին կրկին ապստրեց որ Արեսողոմին խնայե՛նք: Յովաք վրան ծիծաղելով՝ երեք նետ առաւ, գնաց Արեսողոմայ սիրար զարկաւ. իր զինակիրներէն տասը հոգի ալ վրայ հասնելով՝ մեռցուցին: Յովաք փող զարկաւ պատերազմը դադրեցուց. Արեսողոմին մարմինն ալ խորունկ փոսի մը մէջ նետել տուաւ: Ետքը Գաւթին մարդ խրկեց՝ որ աւետիս տայ: Բայց անիկա որդւոյն մահը լսելով՝ շատ ցաւեցաւ. շարունակ՝ Որդեակս Արեսողոմ, Արեսողոմ որդեակս. ո՛ւր էր՝ ես քու տեղդ մեռնէի, կ'ըսէր ու կու լար: Զօրքն ալ յաղթուածի պէս՝ քաղաք մտնելու կ'ամրնար. մինչեւ որ Յովաք եկաւ զինքը միւթարեց եւ ստիպեց որ ելլէ զօրքին երեւայ: Գաւթի թ ելաւ քաղքին դուռը կեցաւ ու զօրքը զինքը բարեւեց:

Պ. Իտրայելացիք Գաւթէն ապստամբելնուն վրայ զղջացին եւ ուղեցին զինքը նորէն իր տեղը բերել: Յուդայի ցեղն եկաւ զինքն առաւ Յորդանանէն ասդին անցուց: Աոյն աւտեն Սեմէի Գաւթին առջեւն ինկած՝ թողուցին ուղեց: Եւ թէպէտ Արեսսա ըսաւ թէ Արժանի է որ մեռնի, որովհետեւ Աստուծոյ օժեանն անիծեց, բայց Գաւթի դէմ կեցաւ եւ Սեմէիին ալ երդմամբ խօսք տուաւ որ զինքը չիմեռցըներ: Ասկէ ետքը Մեմփի-

բոսթէ գիմացն ելաւ, որն որ Գաւթին Երուսաղէմէն փախչելէն մինչեւ նոյն ատեն՝ սգոյ համար՝ ոչ ստոր լուացած, ոչ մօրուքը կտրած, ոչ ալ զգետար փոխած էր: Երբ որ Գաւթ իրեն հարցուց թէ Ինչո՞ւ հետս չեկար, Մեմփիրոսթէն՝ Տէր իմ, ըսաւ, ծառաս զիս արհամարհեց. ես իրեն ըսեր էի թէ էչս պատրաստէ՝ որ հեծնեմ՝ քեզի գամ. իսկ ինք առանձին եկաւ ու վրաս զըզարտութիւն ընելով՝ զքեզ բարկացուց: Արեւայ որ Գաւթ աս խօսքին բոլորովին չհատայ, որովհետեւ հրամայեց որ Աիրան եւ ինք ստացուածները մէջերնին բաժնեն: Իսկ Մեմփիրոսթէ բոլորովին ետ կեցաւ. թող ամէննալ Աիրան առնէ, ըսաւ. իմ թագաւորիս խաղաղութեամբ իր տեղը գառնայն՝ ինծի բաւական է: Գաւթը Յորդանանէն ասոյին անցընողներէն մէկն ալ Բերդէլի Գաղատացին եղաւ, որն որ հարուստ մարդ մըն էր, եւ Գաւթին Մանայիմ եղած ատենը՝ զինքը կերակրած էր: Ուստի Գաւթ ուզեց զինքն Երուսաղէմ բերել, որ քովը հանդիստ կենայ: Բայց անիկա չուզեց. Ես ութսուն տարւան ծեր մըն եմ, ըսաւ. պարագ տեղ քեզի ծանրութիւն չըլլամ, հապա քիչ մը տեղ հետդ գամ՝ ետքը տեղս գառնամ, որպէս մը մեռնելէս ետեւ հօրս մօրս գերեզմանը թաղուիմ: Եւ իր տեղն իր վամսամ որդին խրկեց:

## Խ Ա . Դ Ա Ս

1. Սարէէ ո՛վ է, ինչու խոստումիւն հանեց, ինչ վերջ ունեցաւ: — 2. Գաւթին երկրորդ մեղքն որն եղաւ, անոր համար ինչ պատիժ առաւ: — 3. Գաւթի ասե- նուան սոփե ինչու համար է: Գաւթի՞ անոր դազրելուն համար ինչ բրաւ: — 4. Գաւթի՞ ինչ բարեկարգութիւն բրաւ: — 5. Ազոնիա ո՛վ է, ինչ բրաւ: — 6. Գաւթին վերջին խօսակցութիւնն որն է: Չմուս՝ Սողոմոնին ինչ յանձնեց, բանի տարւան մեռաւ:

1. Արովհետեւ, ինչպէս վերը ասեանք, զԳաւթի՞ Յորդանանէն անցընողը՝ բուն Յուդայի ցեղն էր, անոր համար մէկալ ցեղերը Յուդայի վրայ նախանձելով՝ եկան Գաւթին զանդատանք բրին: Քիչ մը վերջը՝ Բենիամինի ցեղէն Սարէէ անունով մէկու մը ձեռքով բանը շատ մեծցաւ, մինչեւ տասնումէկ ցեղերը նորէն Գաւթէն բաժնուեցան: Յովաբ Յուդայի ցեղին զօրօքը Սարէէին վրայ գնաց, որն որ տասնումէկ ցեղերուն երկիրներէն զօրք ժողոված՝ Աբէլ քաղաքն ամրացած էր: Յովաբ նոյն քաղաքը պաշարած ատենը՝ իմաստուն կին մը պարսպին վրայէն ղինքը կանչել տալով՝ նոյն քաղաքին վրայ եղած հին ատենուընէ մնացած առակով մը ուզեց մտքը փոխել որ քաղաքին պաշարումը թողու: Աւ երբ որ իրմէ լսեց թէ խաղաղութիւն ըլլալու համար պարզապէս Սարէէին գլխատուելը բաւական է, գնաց քաղաքացւոց հետ խօսեցաւ, որոնք համոզուելով՝ բռնեցին անոր գլուխը կորեցին պարսպէն վար նետեցին: Ան ատեն Յովաբ պաշարումը վերցուց ու խաղաղութիւն բրաւ: Գաւթի՞ ասկէ ուրիշ շատ պատերազմ-

ներ ալ ունեցաւ . եւ Աստուծոյ օգնութեամբ բոլոր թշնամիներուն յաղթեց, որուն համար Աստուծոյ շնորհակալութեան երգ երգեց : Աս յաղթութիւններով տէրութիւնը շատ ընդարձակեցաւ : Արեւելքէն՝ Եփրատ գետը, հարաւէն՝ Արարիայի հիւսիսային կողմը, արեւմուտքէն՝ Միջերկրական ծովին քովերը, հիւսիսէն՝ մինչեւ Ասորիք իր տակն էր :

2. Ժողովուրդն Աստուծոյ հաւատարիմ շինալով՝ զինքը բարկացուց : Իսկ Աստուած թող տուաւ որ Գաւիթ սնապարծութեամբ զիրենք համրել տալով՝ մեղանչէ, եւ աս առթով զամէնքը պատժեց : Երբ որ թագաւորը աս բանս Յովարայ հրամայեց, թէ պէտեւ նոյն զօրապետը դէմ դրաւ, բայց Գաւիթ խօսքին վրայ կեցաւ, եւ ստիպեց զինքը որ զօրքին զրեխաւորացը հետ երթայ ժողովուրդը ճշգիւ համրէ : Յովար գնաց, եւ ինն ամիս ու քսան օր վերջը ժողովրդեան ճիշդ համրանքը բերաւ : Աս ազգահամարին նայելով՝ միայն Յուդայի ցեղէն 500,000 զօրք էլաւ, իսկ մէկալ ցեղերէն՝ Ղեւեայ ու Բենիամինի ցեղերը դուրս հանելով՝ 800,000 զօրք : Գաւիթ ըրածին գէշութիւնն իմանալով՝ զղջաց եւ Աստուծոյ թողութիւն խնդրեց : Բայց Աստուած չուզեց անպատիժ թողուլ, ուստի եւ ասջեւն երեք բան դրաւ՝ որ մէկն ընտրէ. կամ՝ բոլոր տէրութեան մէջ երեք տարի սով, կամ՝ երեք օր մահ եւ կամ՝ երեք ամիս իր թշնամիներուն ձեռքէն հալածուիլ : Գաւիթ մահն ընտրեց, ըսելով՝ Լաւագոյն է որ ողորմած Աստուծոյ ձեռքն իյնամ, քան թէ մարդու :



Մէյ մ'ալ երկրորդ առտու ժանտախտ մը սկսաւ, որմէ մինչեւ կէսօր 70,000 հոգի մեռան: Երբ որ աս հարուածը Երուսաղէմի մէջ ալ սկսելու վրայ էր, Աստուծոյ հրեշտակը՝ աս բանս հոն ըլլող ժողովրդեան իմացընելու համար՝ մարմնաւոր կերպարանքով Ուռնեայ Յերուսացւոյն կալին վրայ սուրբ բաց երեւցաւ: Գաւիթ աս բանս տեսնելով՝ ըսաւ. Մեղքն ընողը ես հովիւս էի, աս ոչխարքն ինչ ըրին. ձեռքդ վրաս դարձուր, բայց ժողովրդեան խնայէ: Աստուած անոր աղաչանքը լսեց, Գաղ մարդարէին ձեռքով իրեն պատուիրեց որ Ուռնեայ կալին մէջ իրեն զոհ մատուցանէ: Գաւիթ շուտ մը ան կայը դնեց ու հոն Աստուծոյ հրամանը կատարեց. Աստուած ալ ժողովրդեան հետ հաշտուելով՝ հրեշտակին պատուիրեց որ սուրբ պատեանը դնէ. ասով մահն անմիջապէս դադրեցաւ:

**3.** Գաւիթայ ատենը երեք տարի սով եղաւ, բայց չիզիտցուիր թէ իր թագաւորութեան ո՞ր տարին էր: Գաւիթ աս բանիս համար Աստուծոյ հարցուց եւ պատասխան առաւ թէ Սաւուղայ՝ Գարաւոնացիներն սպաննելուն համար է, որոնց կենացը խնայելու Յեսու երդում ըրած էր: Գաւիթ անմիջապէս Գարաւոնացիքը կանչեց, հարցուց թէ Էղած անիրաւութեան ինչ հատուցում կ'ուզէք: Անոնք պատասխանեցին որ Չմեզ երկրէն ջնջել ու զոյրը կ'ուզենք ջնջել. ուստի անոր տնէն

1 Ս. Գիւրբ Սաւուղին ո՛չ աս սպանութիւնն ըրած ատենը, ո՛չ ալ ինչ պատճառաւ աս բանս ըրած ըլլալը կը պատմէ:

եօթը հոգի տուր՝ որ սպանենք արեւուն զիւ-  
մացը կախենք: Գաւիթ Յովնաթանին բրած  
խոստման համար՝ Մեմփիրոսթէին խնայելով՝  
Սաւուզայ տնէն ուրիշ եօթը հոգի հանեց ձե-  
ռուրնին տուաւ: Աստուած ալ սովը դադրե-  
ցուց: Գաւիթ խել մը ատեն անցնելէն ետեւ՝  
ան եօթը հոգւոյ սակրներուն հետ Սաւուզին  
սակրներն ալ Յարիս Գաղատաէն հանեց, անոր  
հօրը գերեզմանին մօտ տեղ մը թաղեց:

4. Գաւիթ իր տէրութիւնը կարգաւորե-  
լու ձեռք զարկաւ: Նախ շինել տալու տաճա-  
րին հարկաւոր եղած նիւթերը պատրաստելու  
համար՝ կանչեց Իօրայելացւոց մէջ մնացած  
Քանանացւոց մնացորդներէն մէկ մասը, որոնց  
կենացը խնայած էր: Բայց աս պայմանով որ  
կաւապաշտութիւնը թողուն եւ գերւոյ պէս  
իրեն ծառայեն: Այսպէսով զանոնք քար, կիճ  
հանելու, յղկելու եւ կոփելու, վերջապէս Աս-  
տուծոյ տաճարին շինութեան հարկաւոր եղած  
ուրիշ զործքերուն ծառայեցուց: Ասոնք հո-  
գալէն ետեւ՝ իր Սողոմոն որդին Իօրայելացւոց  
գլխաւորներուն հետ կանչեց եւ հրապարակաւ  
անոր յայտնեց թէ ինչպէս Աստուծոյ տաճար  
շինելու կամք ունեցաւ, եւ թէ ասոր վրայ  
Աստուծակ ինչ պատասխան առաւ: Նոյն ա-  
տեն միանգամայն զինքն իր յաջորդն հրատա-  
րակելով՝ ապաքեց որ Աստուծոյ տաճարը շի-  
նէ. քովն ըլլողներուն ալ յանձնեց որ անոր  
օգնեն: Ասկից զատ՝ Աստուծոյ պաշտաման  
համար քահանայից ու Ղեւտացւոց կարգեր  
գրաւ, որոնց մէջ յիշատակաց արժանի աս  
եղաւ որ Ղեւտացւոց՝ Աստուծոյ ծառայելու

ատենը քիչցուց : Յառաջագոյն քսան տարւոնէ՝ մինչեւ վաթսներորդ տարինին կը ծառայէին . իսկ Գաւթի տեսնելով որ տապանակն ու Ակայութեան խորանն որոշեալ տեղ մը հաստատելէն ետեւ՝ աշխատութիւնը պիտի քիչնայ, որոշեց որ Աւետացիք անկէ վերջը երեսնէն մինչեւ յիսներորդ տարինին ծառայեն : Ասոնք կարգի դնելէն ետքը՝ իր տէրութիւնը կարգաւորելու սկսելով, ունեցած զօրքէն ուրիշ՝ ամէն մէկ ցեղէն պատերազմող ու հաւատարիմ մարդ ժողովեց, տասուերկու զօրագլուխ անուանեց, որոնց ամէն մէկուն տակը 24,000 զօրք կար : Երկու գանձապետ որոշեց, մէկը թագաւորին գանձին, մէկալը քաղաքներու եւ ամրոցներու գանձին համար, նսեւ թագաւորական կալուածներուն վրայ ալ տար զործակալ դրաւ :

5. Աս կարգադրութիւններն ըլլալուն հետեւեալ տարին՝ նորէն խռովութիւն մը պատահեցաւ : Ադանիա Գաւթին մեծ որդին՝ Տօրը աթոռին բաղձալով՝ իր կողմը շատ մարդ վաստակեցաւ, որոնց մէջն էր Յովար ու Արիաթար քահանան : Ադանիա անոնց մեծ խնջոյք տալով՝ ինք զինքը թագաւոր անուանեց : Ան ատեն՝ Նաթան մարգարէն եկաւ Բերսարէին խրատ տուաւ որ Գաւթին երթայ Սողոմոնն իր տեղը թագաւոր նստեցնելու խոստումը միտքը ձգէ : Ան ալ գնաց, Ադանիային ըրածը Գաւթին պատմելէն ետեւ՝ ըրած խոստումն յիշեցուց : Նաթան ալ վրայ հասնելով՝ հարցուց որ Ադանիայի թագաւորելն իր հրամանաւն է : Գաւթի չհրամայեց որ շուտ

մը զՍողոմոնն իր թագաւորական ջորին հեծ-  
ցուցած՝ Գեհոն տանին ու բոլոր Իսրայելա-  
ցւոց վրայ թագաւոր օծեն: Հրամանն ի գործ  
դրուեցաւ, Սողոմոնն Սաղովկայ ու Նաթան  
մարգարէին ձեռքը թագաւոր օծուելէն ետեւ՝  
մեծ հանդիսով Երուսաղէմ եկաւ: Աղոնիային  
քովիններն աս որ լսեցին՝ զինքը թողուցին  
գացին: Աղոնիան ալ վախէն գնաց Աստուծոյ  
սեղանին ապաւինեցաւ եւ հազիւ Սողոմոնին  
բերնէն՝ զինքը մեռցընել շտալու խօսք առնե-  
լէն ետքը դուրս ելաւ:

6. Գաւիթ տեսնելով որ շատ ծերացեր  
ու մեռնելու օրը մօտիկցեր է, Սողոմոնն ու  
տէրութեան մեծամեծները կանչեց, անոնց իր  
վերջին խօսակցութիւնն ըրաւ. եւ որդւոյն  
ձեռքն յանձնեց շինուելու տաճարին ձեւն ու  
հարկաւոր կահ կարասեաց ցանկը, որուն մէջ  
իւրաքանչիւրին ձեւն ու մեծութիւնը եւ ա-  
նոնց որչափ արծաթ ոսկի երթալիքն՝ Աստուծ-  
մէ տեղեկանալով՝ նշանակած էր: Մէկալնոնց  
ալ ըսաւ. Էս ձեռքէս եկածին չափ Աստու-  
ծոյ տան համար նիւթ պատրաստեցի, գուք  
ալ առանձին ձեր կողմանէ Աստուծոյ բնծայ  
մ'ընել կ'ուզէք նէ՝ ըրէք: Անոնք ալ սիրով՝  
ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ եւ ազնիւ քա-  
րեր բերին Աստուծոյ նուիրեցին: Գաւիթ  
սրտին ուրախութենէն անոնց առջեւն Աս-  
տուծոյ փառաբանութեան աղօթք ու ժողո-  
վորդեան համար աղաչանք ըրաւ. եւ ամէնքն  
ալ երեսներնուն վրայ ինկած՝ Աստուծոյ եր-  
կրօպագութիւն ըրին: Երկրորդ օրը Գաւիթ՝  
հազար զուարակ, հազար խոյ ու հազար գառն՝

ողջակէզ մատոյց . ետքը ուրախութեամբ կերան խմեցին եւ զՍողոմոն երկրորդ անգամ թագաւոր օժեցին :

Ասոր վրայ քիչ մ'ատեն անցնելէն ետեւ՝ զՍողոմոն առանձին կանչեց եւ ըսաւ . Ահաւասիկ ես կը մեռնիմ, դուն նայէ որ Աստուծոյ պատուէրները կատարես : Միանգամայն իրեն յանձնեց որ Յովարը (զԱբեններ եւ զԱմեսային մեռցնելուն համար) ըստ արդարութեան եւ ըստ իրաւանց պատժէ . Սեմէին ալ իր իմաստութեամբը դատէ ու Բերզելէայ որդւոցը բարկըրնէ : Գաւիթ 40 տարի թագաւորելէն ետեւ՝ 70 տարւան վախճանեցաւ :

Խ Բ . Գ Լ Ս

1. Սողոմոն քանի տարւան թագաւորեց : Ազնիան աւոր մեռքէն թագաւորութիւնն առնելու համար՝ ինչ հնարք բանեցուց : Յովար ինչպէս մեռաւ : Արիաթար ինչու Անաթոթիք բռնեցաւ : Սեմէի ինչպէս մեռաւ : Սողոմոն Եգիպտոսի թագաւորին աղէկին ինչու առաւ : — 2. Սողոմոն Աստուծով ինչ խնդրեց : Իր իմաստութիւնն ամենէն յառաջ որ գործքին մէջ երեւցաւ : — 3. Տաճարն երբ սկսաւ շինուիլ . ինչպէս չէնք էր : Տաճարին՝ Աստուծոյ նուիրուելուն հանդէսը քանի որ տեւեց : — 4. Ուրիշ ինչ չէնք շինեց : Սարայ թագուհին ո՞վ է եւ ինչ ըրաւ : — 5. Աստուած Սողոմոնին ինչու բարկացաւ եւ ինչ պատիժ սպասնացաւ : Յերոբոամ ո՞վ է . Եգիպտոս ինչու փախաւ եւ ինչ ըրաւ : Սողոմոնին արապին թշնամիներն որո՞նք են . քանի տարի թագաւորեց :

1. Սողոմոն տասուերկու տարւան՝ հօրն աթոռը նստաւ : Բուսի Արաքացին, Յովիգայէ, Արիաթար քահանան եւ Յովար իր

խորհրդականներն եղան : Ադոնիա Սողոմոնի ձեռքէն թագաւորութիւնը յափշտակելու ուրիշ ծածուկ հնարք մը մտածեց, բայց չաջողեցաւ : Եկաւ Բերսարէին աղաչեց որ Սողոմոնին բտէ թէ Աբիսակ Սոմնացին (Գաւթին ծերութեան ատեն առած կինն) իրեն կնութեան առնելու հրաման տայ : Սողոմոն մօրմէն աս բանս լսելուն պէս՝ Ադոնիային շարմիաքը հասկընալով՝ պատասխանեց . Ասիկա ուրիշ բան ըսել չէ՝ բայց եթէ թագաւորութիւնս Ադոնիային տալ : Արդէն պալատականներուս մէկ մասն իր կողմն է, թէ որ Աբիսակին պէս ամենուն սիրելի ու խօսքն անցնող կնիկ մ'ալ անոր կնութեան տալու ըլլամ՝ ինչ կ'ըլլայ : Ուստի եւ Բանեա զօրապետին ձեռքով շուտ մը Ադոնիան սպաննել տուաւ : Յովար աս լսելով՝ եւ մտածելով որ կարգն իրեն եկած է, որովհետեւ ինքն ալ Ադոնիային կողմն էր, գնաց Աստուծոյ սեղանն ապաւինեցաւ : Բայց Սողոմոն նոյն Բանեայ ձեռքովը զինքն ալ սպաննել տուաւ : Նմանապէս Աբիսակ արքահանան ալ Ադոնիային կողմը բռնելուն համար՝ Անաթովթ իր ազարակը քշեց : Ասով Սաւուղի ատենէն սկսեալ՝ մինչեւ նոյն ատենը Յնացած երկու քահանայապետ ըլլալու սովորութիւնը վերջացաւ <sup>1</sup> : Սողոմոն Սեմէին ալ կան-

<sup>1</sup> Երբ որ Իսրայելացիք երկու կողմ բաժնուած էին, ոմանք Սաւուղայ ոմանք ալ Գաւթի, Սաւուղին ներք՝ զՍագովկ, որն որ Իթամարին զուկընեբէն էր, իրենց քահանայապետ գրին, Գաւթիններն ալ զԱբիսակ արք, որն որ Եզրազարին զուկընեբէն էր : Գաւթի Սաւուղայ մեռնելէն ետեւ բոլոր Իսրայելացիքը սակն առաւ նէ, ան երկուքին քահա-

չեց՝ մահուան պատիժ սպառնալով պատուի-  
րեց որ Երուսաղէմ տուն շինէ, հոն բնակի  
եւ նոյն քաղաքէն դուրս շէյլէ: Սեմէի հնա-  
զանգեցաւ. բայց երեք տարի անցնելէն ետեւ՝  
իր ծառաները Վեթացւոց երկիրը փախելով՝  
գնաց որ բերէ. մէյ մ'ալ Սողոմոն իմացաւ,  
զինքը բռնել սպաննել տուաւ:

Սողոմոն ընդարձակ ու խաղաղ երկրի մը  
թագաւոր ըլլալէն ետեւ, որն որ Եփրատ գե-  
տէն մինչեւ Եգիպտոսի սահմանները կը տա-  
րածուէր, իր տէրութեան հանդարտութիւնն  
ու ապահովութիւնը պահելու համար՝ օգտա-  
կար սեպեց ազգականութիւն ունենալ Եգիպ-  
տոսի թագաւորին հետ, որն որ իր սահմանա-  
կիցներուն մէջ ամենէն զօրաւորն էր: Ասոր  
համար անոր աղջիկն իրեն կին առաւ, եւ  
օժտի տեղ Վապեր քաղաքն ընդունեցաւ, զորն  
որ Եգիպտոսի թագաւորը Քանանացւոց մէ-  
տաւած ու մէջի բնակիչները թրէ անցնելէն  
ետեւ այրած ու կործանած էր: Սողոմոն նոյն  
քաղաքը նորէն կանգնեց ու շէնցուց:

2. Տաճարը շինուած՝ ժողովուրդն իրեն  
զանազան ջերմեռանդութեան տեղեր հաստա-  
տած էր, այս ինքն Վաղգաղա, Բերսարէէ,  
Պան ու Վարաւոն: Արդ Սողոմոն իր թա-  
գաւորութեան սկիզբներն Աստուծոյ շնորհա-  
կալութեան զոհ մատուցանելու համար Վա-  
րաւոն գացած ըլլալով, Աստուած իրեն երեւ-  
նայապետութիւնն ալ ընդունեցաւ. Աբիսթար՝  
Երուսաղէմ ու Սաղովկ Վարաւոն կեցաւ: Իսկ  
Սողոմոն մինակ Սաղովկը քահանայապետ ճանչ-  
նալով՝ Սամուէլ մարգարէին Հեղեայ վրայ բրած  
մարգարէութիւնը կատարուեցաւ:

ցաւ եւ ըսաւ . Ի՛նչ որ կ'ուզես՝ խնդրէ , կու տամ : Ինքն ալ ժողովուրդն աղէկ կառավարելու համար իմաստութիւն խնդրեց : Աստուած ասոր շատ հաճեցաւ . Հարստութիւն կամ պատիւ կամ թշնամեաց մահ էւ կամ երկար կեանք ուզելու տեղ՝ իմաստութիւն ուզեցիր , ըսաւ . ահաւասիկ քեզի ան աստիճանի իմաստութիւն տուի , որ քեզի պէս ո՛չ յառաջ եղած է , ո՛չ ալ ետքէն պիտ'որ ըլլայ : Բայց աս բաւական չէ՝ չուզածն ալ տուաւ , այս ինքն հարստութիւն ու փառք . միանգամայն կեանքն երկընցքնելու ալ խոստում ըրաւ , միայն թէ հօրը Գաւթին պէս Աստուծոյ հաւատարիմ մնայ : Սողոմոն Երուսաղէմ դարձաւ , Աստուծոյ տապանակին առջեւն ողջակէզ ու խաղաղական զո՛հ մատոյց : Ասոր վրայէն շատ չանցաւ՝ Աստուծմէ ընդունած իմաստութիւնն երեւցաւ : Երկու կին առջեւը դատաստանի գալով՝ մէկը կ'ըսէր որ Երկուքնիս մէկ տան մէջ կը բնակելինք . ես զաւակ մը ծնայ , երեք օր ետքը աս կինն ալ ծնաւ : Բայց ինք գիշերը քնոյն մէջ զաւկին վրայ պառկելով՝ մեռցուց , ու գիշերանց ելաւ՝ ես քնոյ մէջ եղած ատենս՝ իմինս առաւ եւ իրենք քովս դրաւ : Աստու կանուխ արթնցայ քովս մեռած տղան գտայ , եւ լոյս աչքով աղէկ մը նայելով՝ տեսայ որ իմ զաւակս չէ : Մէկալն ալ ասոր հակառակ կը պնդէր որ Ողջն իմս է , մեռածը քուկդ է : Սողոմոն սուր մը բերել տալով՝ ըսաւ որ տղան երկու կտոր ընեն , մէկ մասը՝ մէկուն , մէկայը մէկալին տան : Ան ատեն Երկուքէն մէկն աղա-



չեց որ աղան թող ողջ մեկային տան. ասոր հակառակ մեկայը կը պնդէր որ Տղան ոչ իմն ոչ քուկդ ըլլայ, այլ բաժնուի: Ասով Սողումն աղուն ճշմարիտ մայրն սվ ըլլայն իմանայով՝ հրամայեց որ աղան ողջ անոր տան՝ որն որ կ'ուզէր որ ողջ մեկային տրուի: Բայրը ժողովուրդն աս լսելով՝ անոր Աստուծոյ իմաստութեամբ լցուած ըլլայը ճանչցաւ եւ սկսաւ վրան յարգութիւն ունենալ եւ իրմէ վախնալ:

**Յ.** Սողումն իր թագաւորութեան չորրորդ տարին՝ Աստուծոյ տաճարը շինելու սկսաւ: Բայց խկզբան Տիրոսի Քիրամ թագաւորէն խնդրեց որ իրեն վարպետ մարդիկ խրկէ, որոնք ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ բանիլ ու քանդակագործութիւն գիտնան: Գարձեալ աղաչեց որ իր մարդիկներուն՝ Լիրանանէն մայր փայտ եւ ուրիշ փայտեր կարել տայ, եւ անոնց ռոճիկը խոստացաւ տալ: Երբ որ Քիրամ յանձն առաւ աս խնդիրքները կատարելու, Սողումն իրեններէն ալ անոր մարդիկներուն օգնելու մարդ խրկեց: Տաճարին շինուած տեղը՝ Ամփրհացուոց լեռը Ուռնեայ կայն էր, որուն շինուիլը՝ եօթը տարի տեւեց: Բայց շատ փառաւոր շէնք եղաւ: Երկայնութիւնը՝ վաթսուն կանգուն էր, իսկ լայնութիւնն ու բարձրութիւնը քսանական կանգուն. ներսի դին եղեւնափայտէ ու վրան ոսկեղրուազ էր: Երկու մաս կը բաժնուէր, Սրբութիւն ու Սրբութիւն Սրբոց: Տաճարին երեք կողմը քարէ պատ կար, իսկ հիւսիսային կողմը՝ եղեւնափայտէ վանդակ քաշուած էր: Մէջը երկու պղնձէ սիւն, լուացուելու մեծ

աւազան, պղնձէ ծով ու ողջակիզաց սեղանը դրուած էր: Բոլոր սպասներն ոսկի էին. տասը ոսկի սեղան, հարիւր ոսկի տաշտ ու տասը ոսկի աշտանակ կար:

Տաճարին Աստուծոյ նուիրուելուն հանդէսը Սողոմոն մեծ փառաւորութեամբ կատարեց: Նախ Իորայեւրացւոց մեծերուն հետ Աստուծոյ տապանակը տաճար բերաւ, ետքը 22,000 եղ, 120,000 ոչխար զոհ մատոյց: Միանգամայն շնորհակալութեան աղօթք բրաւ եւ Աստուծոյ աղաչեց որ ժողովուրդն ինչ որ ինդրելու ըլլայ՝ կատարէ: Ան ատեն տաճարը լուսաւոր ամբողջ մը լեցուեցաւ, եւ երկինքէն կրակ իջնալով՝ մատուցուած ողջակէզներն այրեց: Ժողովուրդը սոսկալով երեսին վրայ ինկած՝ Աստուծոյ փառք տուաւ: Ան գիշեր Աստուած Սողոմոնին երեւցաւ, խոստացաւ որ ինդիրքը կը կատարէ, եւ ըսաւ որ Աստաճարն իմ տունս կը սեպեմ, եւ եթէ իմ ճամբէս չես խոտորիր նէ՝ թագաւորութիւնդ որդւոց որդի կը շարունակեմ: Տաճարին Աստուծոյ նուիրուելուն հանդիսութիւնն եօթն օր կատարելէն ետեւ՝ եօթն օր ալ տաղաւառահարաց ասնր կատարեցին եւ այսպէս բոլոր հանդիսութիւնը տասնուչորս օր տեւեց:

4. Սողոմոն ասկէ ետեւ երկու տուն շինեց, որոնք տասուիրեք տարւան մէջ լմնցան. մէկն իրեն, մէկալը՝ Ազիպատոսի թագաւորին աղջրկանը համար էր: Ասոնցմէ զատ քաղաքներ ալ շինեց: Իր թագաւորական աթոռին պէս ուրիշ մէկ տէրութեան մէջ չկար. ասիկա փղոսկրէ ու ոսկեպատ էր եւ վեց աս-

տիճան ունէր, որոնց երկու կողմը տասուերկու քահանա առիւծ կար: Իր տանը բոլոր կահ կարասիքը կամ զուտ ոսկիէ եւ կամ Լիրանանու փայտէ շինուած ու ոսկեգրուազ էր: Իր ժամանակը տէրութիւնն անանկ հարըստցաւ, որ արծաթը համարումը կորսընցուցած էր: Իսկ իր իմաստուն գործքերուն համբաւն ամէն տեղ տարածուելով՝ շատ տեղերէն ղինքը տեսնելու, իր իմաստութիւնը լսելու կու գային: Ասոնցմէ մէկն եղաւ Սարայ (երջանիկ Արարիայի հարաւային մասին) թագուհին, որն որ շատ բազմութեամբ ու հետը մեծ գանձ առած՝ զանազան հարցումներով անոր իմաստութիւնը քննելու եկաւ: Սողոմոն անոր ամէն հարցմանց աղէկ պատասխան տուաւ, անանկ որ թագուհին իր իմաստութեան ու պալատին փառաւորութեան վրայ խիստ զարմացաւ, եւ խոստովանեցաւ որ լրացները՝ հիմա անձամբ տեսածին եւ ոչ կէսն է եղեր: Իր քովը ըլլողներն երանեց, որ շարունակ իր իմաստութիւնը կը լսեն, զԱստուած ալ օրհնեց՝ ասանկ իմաստուն մէկն Իսրայելի աթոռը նսակցընելուն համար: Ետքը հանեց 20,000 ոսկի տաղանդ, ազնիւ խնկեր ու պատուական քարեր պարգեւեց: Սողոմոն ալ առածէն աւելի բան անոր բնծայ տուաւ:

5. Սողոմոն Աստուծոյ ընդունած այսչափ երկրաւոր բարիքներով գոհ չըլլալով եւ աւելի երջանիկ ըլլալու ետեւէ իյնալով՝ սիրտը խոտորեցաւ ու շատ օտարազգի կիներ առաւ, որոնք՝ ինչպէս հաւանական կ'երեւայ՝ դարձած Երրայեցւոց կրօնն ընդունած չէին, որն որ

Աստուծոյ յայտնի հրամանին դէմ էր: Ան աստիճանի հասաւ՝ որ իր ծերութեան ատեն ասոնց պատճառաւ մինչեւ իրենց պաշտած շատուածներուն երկրպագութիւն բրաւ: Ասոր վրայ Աստուած սաստիկ բարկանալով՝ բրաւ. Հետզ դրած դաշինքս չպահելուդ համար՝ Թագաւորութիւնդ պիտի բաժնեմ ու ծառայիդ պիտի տամ: Բայց Գաւթի սիրոյն համար՝ աս մեծ չարիքը քու կենդանութեանդ ատեն գլուխդ չեմ բերեր, այլ որդւոյդ Թագաւորութեան ատենը. դարձեալ Գաւթայ սիրոյն ու Երուսաղեմայ համար՝ անոր ձեռքը ցեղ մը կը թողում: Ան ծառան՝ որուն ձեռքը պիտ'որ անցնէր Սողոմոնի Թագաւորութիւնը, Յերոբովամ եղաւ, որն որ Եփրեմի ցեղէն էր, եւ Սողոմոն զինքն իր աշխուժութեան ու գործունէութեան համար՝ Եփրեմի ու Մանասէի ցեղերուն վրայ վերակացու դրած էր: Յերոբովամ՝ որ մը Երուսաղեմէն դուրս ելած երթալու ատեն՝ Աքիա Սիլոնացւոյն հանդիպեցաւ, որն որ զինքն առանձին տեղ մը տարաւ, հոն իր վրայի նոր վերարկուն բրանեց տասուերկու կտոր բրաւ եւ բաւ. Ասանկ ալ Աստուած Սողոմոնին Թագաւորութիւնը պիտ'որ բաժնէ, տասը ցեղը քեզի պիտի տայ եւ մէկն անոր պիտի թողու. խօսքը լմբնցուց բսերով որ Եթէ Գաւթին պէս Աստուծոյ հաւատարիմ թնալու բլաս, Իսրայելի Թագաւորութիւնը քու զաւկըներուդ մէջ որդւոց որդի կ'երթայ: Կ'երեւայ որ Յերոբովամ Աքիայէն լսածներն ուրիշին պատմած բլայ, որ բանը Սողոմոնին ականջն ալ հաս-

նելով՝ զՅերոքովամ ուզեց սպաննել. ան ալ ձեռք չիյնալու համար Եզրիպտոս փախաւ եւ մինչեւ Սողոմոնին մահը հոն կեցաւ :

Սողոմոն իր կենաց վերջին ատեններն արտաքիններէն ալ շատ նեղութիւն քաշեց : Յովար Գաւթին ատենները շատ արիւն թափելէն ետեւ՝ վերջապէս Եդոմայեցիքը նուաճած էր, բայց անոնց վերջին թագաւորին որդին Ագեր՝ Եզրիպտոս փախչելով եւ հոնտեղաց թագաւորին սիրելի ըլլալով՝ նորէն իր հայրենիքը դարձաւ ու Սողոմոնին դէմ ապստամբութիւն հանեց : Նոյնպէս Ռազոն՝ որ Ագրաւաղարայ Սուբայ թագաւորին ծառայութեան մէջն էր, Գամաուկոս նոր թագաւորութիւն կանգնեց : Եւ երկուքն ալ Սողոմոնին թշնամութիւն կը ցուցընէին : Սողոմոն քառասուն տարի թագաւորելէն ետեւ մեռաւ :

## Է. Գ Լ Ո Ւ Խ

ԻՍԻԱՅԵԼԱՑԻՈՅ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒ  
ԲԱԺՆՈՒԵԼԷՆ ՄԻՆՉԵՒ ԲԱՐԵԼՄԵՒ  
ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

(972—588)

## Խ Գ. Գ Լ Ս

1. Ռորովամ ս՛գ է: Իր թագաւորութիւնն ինչպէս երկու բաժնուեցաւ: Աղաներամե ինչո՛ւ մեռցուցին: Բերորովամ ինչպէս թագաւոր նստաւ: Ռորովամին որոնք հաւատարիմ մնացին: — 2. Ռորովամ տաօք ցեղերուն զէ՛մ ինչ պատրաստութիւն տեսաւ: Որն Լորացիք եւ որն Յուդայի թագաւորութիւն ըսուեցաւ: Անոնց վրայ ընդհանրապէս ինչ գիտնալու բան կայ:

1. ՈՒՐՈՒՈՒՄ Սողոմոնին անդրանիկ որդին՝ հօրը մեռնելէն ետեւ Յուդայի ու Բենիամինի ցեղերուն ուղերոյն իրենց թագաւոր եղաւ. իսկ մեկալ ցեղերուն թագաւոր ըլլալու համար՝ հարկ եղաւ որ Սիկիմ երթայ հոն օծուի: Ան տեղն եկած ատեն՝ նոյն ցեղերը, որոնք արդէն իսկզբանէ Յուդայի ցեղին վրայ նախանձ ունէին եւ Սողոմոնի կառավարութեան վրայ դո՛ւ չէին, ուղեցին որ անոր յաջորդն իրենց թագաւոր չճանչցած՝ վրան պայման մը դնեն, որն որ աս էր: Հայրդ, ըսին, մեր անուրը ծանրացուց. դուն վրաներնէս քիչ մը թեթեւցուր, որ քեզի հպատակ ըլլանք: Ռորովամ իրենց պատասխան տալու համար երեք օր ատեն ուղեց. եւ իսկզբան հօ-

ըը խորհրդականներուն խորհուրդ հարցընելով՝ պատասխան առաւ որ անոնց ուզածը կատարէ : Բայց մէյ մ'ալ իր հասակակից երիտասարդներուն հարցընել ուզեց, որոնք պատասխան տուին թէ Պէտք չէ որ զիջանիս, հապաքսէ որ իմ ծկոյթս հօրս մէջքէն հաստ է. եւ եթէ ինք վրանիդ ծանր անուր դրաւ նէ, ես նոյնն աւելի պիտի ծանրացընեմ, եւ եթէ ինք զձեզ զաւազանով կը խրատէր, ես զձեզ քքով պիտի խրատեմ : Ռորովամ ասոնց անխոհեմ խօսքին անսարով՝ ըստ այնմ՝ նոյն պատասխանը տուաւ : Իսրայելացւոց տասը ցեղերուն պատգամաւորներն աս պատասխանն առին նէ՝ զինքը մերժեցին ու տեղերնին դարձան : Թէպէտ Ռորովամ զանոնք հաշտեցընելու համար Ադոնիրամ հարկապետն ետեւնէն խրկեց, բայց անոնք մտիկ չըրին, մանաւանդ թէ նոյն իշխանը քարի բռնելով՝ մեռցուցին, եւ Յերբովամը՝ որ Սողոմոնին մահը լսելով նոյն ատեն Ազիպտոսէն նոր դարձած եկած էր, իրենց թագաւոր դրին. իսկ Ռորովամ վախէն Էրուսաղէմ փախաւ : Իրեն՝ մինակ Յուդայի ու Բենիամինի ցեղը մնաց, որոնց վերջինը քիչուոր ու բնակութիւնը Յուդայի ցեղին կից ըլլալով՝ անոր հետ մէկ կը համարուէր :

Չ. Ռորովամ տասը ցեղերուն դէմ պատերազմ բանալու համար Յուդայի ու Բենիամինի ցեղերէն 180,000 մարդ ժողովեց : Բայց Աստուած Սամեա մարգարէին բերնովն ըսել տուաւ որ Ան բաժանուի իմ ձեռքս եղաւ, պարապ տեղ պատերազմի մ'երէք : Ասանկով եղած բաժանուի հաստատուեցաւ, եւ Արիա

Միլնացւոյն խօսքն ելաւ : Տասը ցեղերուն թագաւորութիւնը՝ Իւրօյլիէ Բոֆօրօնիւն ըսուեցաւ, իսկ մէկայլը՝ Յոֆօրօնիւն : Աս բաժանման վրայ երկու թագաւորութեանց մէջ յաճախ ու մեծ պատերազմներ փրթաւ, որոնցմով երկուքին ալ բնական զօրութիւնն իրենց արտաքին ու զօրաւոր թշնամիներուն դէմ տկարացաւ : Միանգամայն իրենց մէջ կամաց կամաց ցեղի տարբերութիւնը վերցաւ, մինչեւ նաեւ Ղեւտացւոց քաղաքները մէկալ քաղաքներուն հետ խառնուելով՝ հասարակ քաղաքներու կարգ անցան, եւ այսպէս երկու թագաւորութեանց մէջ հաւասար բաժնուեցան :

#### Մարտիէն շրջ ընդհանուր տեղիւնիւն :

Որովհետեւ մարգարէք աւելի Իսրայելացւոց թագաւորութեան երկու բաժնուելէն ետեւ երեւնալու սկսան, անոր համար ան երկու թագաւորութեան պատմութիւնը շսկսած՝ պատշաճ կը սեպենք մարգարէից վրայ ընդհանուր տեղեկութիւն մը տալ :

Սուրբ Գիրքն աս անունն անոնց կու տայ, որոնց Աստուած ինքզինքը կը յայտներ, եւ իրենց ձեռքովն իր կամքը մարդկան կը ծանուցանէր : Ասոնք ընդհանրապէս խոտամերկեանք մը կ'անցընէին եւ շատ անգամ անօրէն ու ամբարիշտ մարդիկներու ձեռքէն կը հալածուէին եւ շատ նեղութիւն կը կրէին : Պաշտօնինն էր Աստուծոյ կամքն յայտնել, ժողովուրդը կըրթել, աստուածային պաշտամունքը կործանելու վտանգէն պահել : Աստուծոյ օրինաց ու փառաց սաստիկ նախանձախնդրութեամբ՝ ժողովրդեան եւ իշխաններուն անկարգութեանց դէմ Աստու-



ծոյ սպառնալիքն ազատադէմ քարոզել, եւ զանոնք՝ մարդիկներուն վրայ կատարուելու ուրիշ բարձր աստուածային խորհուրդներուն հետ մեկտեղ՝ զրի անցընել: Աս պաշտօնին կամ անմիջապէս Աստուծոյ եւ կամ Աստուծոյ կողմանէ մարդու մը ձեռքով կը կոչուէին, որուն հետ մեկտեղ հրաշք գործելու պարգևն ալ կ'ընդունէին:

Մարգարէից ան ամէն պարտաւորութիւնները՝ որոնք վերը յիշեցինք, ամէնքը մեկանց մեկ ստանուան մէջ չգրուեցան, այլ իւրաքանչիւր ժամանակին ու պարագաներուն համաձայն՝ կամաց կամաց աւելցան: Ուստի վերը գրուած (ամբողջ կամ ըստ մասին) պարտաւորութիւններով մարդիկ միշտ անպակաս էին. անոր համար ալ բոլոր մարգարէքը կրնանք երեք ժամանակուան բաժնել. Ա. Աշխարհքիս ստեղծմանէն մինչեւ Մովսէս. Բ. Մովսէսէն մինչեւ Բարեւոյնի գերութիւնը. Գ. Բարեւոյնի գերութիւնէն մինչեւ Քրիստոս:

Առաջին ժամանակին կը վերաբերին Ադամ, Ենոփք, Ղառք, Երբահամ, Իսահակ, Յակոբ ու Մովսէս:

Երկրորդ ժամանակինները՝ բուն մարգարէքն են, զան զի ամէն պահանջուած հանգամանքն ունին: Ասանկ մարգարէք յիսուսուվեց հատ են, որոնց մէջ Աստուծոյ կամքն ու մարդուս վրայ կատարուելու բարձր խորհուրդները զրի անցընող՝ տասնուվեց հատ են: Ասոնք ալ զարձեալ՝ իրենց գրաւոր աշխատութեան (որն որ մարգարէութիւն կ'ըսուի) նկատմամբ՝ Մեծ ու Փոքր կը բաժնուին: Մեծերը չորս են, այսինքն՝ Եսայի, Երեմիա, Եղեկիէլ ու Դանիէլ. իսկ փոքրները՝ տասուերկուսք են, այս ինքն՝ Յովնան, Ովսիա, Ամօս, Յովէլ, Միքիա, Նաուս, Սոփոնիա, Ամիակուս, Արդիա, Անգիա, Զաքարիա ու Մաղաքիա: Ասոնցմէ դուրս կան նաեւ ոմանք՝ որոնք իրենց արտաքին գործքե-

րօզն երեւելի եղած են, ինչպէս՝ Սամուէլ, Եղիա, Եղիսէ, Նաթան՝ որ թագաւորական ասն վերատեսուչը, Սողոմոնին դաստիարակն եւ թագաւորաց պատմութիւնը գրողն եղաւ :

Քահանայիցմէ զաս՝ մարգարէք ալ ուսուցչութիւն կ'ընէին : Իրենց մէջէն առաջին զպրօց բացողը՝ Սամուէլ եղաւ, որն որ զանազան աշուանք զպրօցներ գրաւ եւ ամենուն ինք կ'առաջնորդէր : Ամենէն երեւելիները՝ Աարիաթարիմ, Երիքոփ, Ռամաթ, Բեթէլ ու Փաղզաղա էին : Ասոնք անանկ զպրօցներ էին, որոնց մէջ աղաք՝ կրօնի, օրէնսդիտութեան, բանաստեղծութեան ու երաժշտութեան մէջ կը կըրթուէին. վարժութեան համար բանաստեղծական հոգեւոր երգեր կը շարադրէին ու նուազարանով կ'երգէին : Աս զպրօցներուն մէջ սորվողները՝ Որդիք մարգարէից կամ Աշակերտք կ'անուանուէին : Հաւանական կ'երեւայ թէ Գաւիթ՝ որ հոգեւոր երգ շինելու մէջ շատ քաջ էր, աս զպրօցներէն մէկուն մէջ կրթուած ըլլայ :

Երրորդ ժամանակուան մարգարէներուն մէջ ամենէն երեւելին՝ Յովհաննէս Մկրտիչն եղաւ, որ Մարգարէ Աստուծոյ Բարձրելոյ ու մարգարէից ամենէն մեծը կոչուեցաւ, սաստիկ խստամբեր կեանք անցուց, եւ Քրիստոսի՝ չէ թէ գաւիթը՝ հասպարակեամբ եկած ըլլալը քարոզեց :

Մարգարէք նաեւ ժողովրդեան բարուց ուղղութեան օգտակար խրատներ կու տային, կը սորվեցընէին որ մեզաց մէջ ըլլողն արտաքին պաշտամամբ Աստուծոյ հաճոյ շիկրնար ըլլալ, սյլ մեզաց թողութիւն գտնելու համար՝ պէտք է որ վրան զղջայ եւ ինք զինքն ուղղելու հաստատուն առաջադրութիւն զնէ. մարգս մեղան. չելէն ետեւ իր առաջուան առաքինութիւններն ամենեւին չեն օգներ : Ասոնք էին միանգամայն գալու Փրկչին գաղափարն եւ իր թագաւորութիւնը քարոզողները, երբ որ յաւիտենական

խաղաղութիւն մը ու զանազան ազգաց մէկ ճըմարիտ Աստուած պաշտելու մէջ միարանելը կը քարոզէին : Ասկէ կը հեռուի ուրեմն որ մարգարէք թէ՛ կրօնը կանգուն կը պահէին եւ կ'ընդարձակէին, եւ թէ՛ Հրեաները լաւազոյն հոգեւոր կրօնի մը կը պատրաստէին :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա .

Իւրայելի Բեռնորտ-Ֆիշը, որն որ 19 Բեռնորտ-Նեյցտ-Է-253 րարէ րեւոյ :

Խ Դ . Դ Ա Ս

1. Իւրայելի կամ տասը ցեղերու թագաւորութեան տակ որ ցեղերը կ'երթան : Յերորովամ ինչու երկու երկնջ կանգնեց : — 2. Աս բանէս ես կենալու համար Աստուծոյ առած առի խրատն որն է : — 3. Երկրորդ խրատն որն եղաւ : — 4. Յերորովամ ինչպէս մեռաւ : Աստուծոյ սպանալիքն իր տան վրայ ինչպէս կատարուեցաւ : Իր յաւըրդներն որոնք եղան եւ ինչպէս թագաւորեցին :

1. Իւրայելի կամ տասը ցեղից թագաւորութիւն ըսելով՝ կ'իմացուի Ռուբենի, Գադայ, Մանասէի կէս կէս ցեղերը, դարձեալ Էփրեմի, Գանայ, Իսաքարայ, Չարուղոնի, Շամուոնի, Նեփթաղիմայ եւ Ասերայ ցեղերը : Աս թագաւորութիւնն արեւելքէն սահմանունի անապատ Արարիան, հարաւէն՝ Աննոֆն ու Յուդայի թագաւորութիւնը, արեւմուտքէն՝ Միջերկրական ծովը, հիւսիսէն Լիբանանու լեռները : Իր գլխաւոր քաղաքը յառաջագոյն Սիւքէմ ու թերսա էր, ետքը Սամարիա եղաւ : Ընդարձակութեան կողմանէ Յու-

դայի թագաւորութենէն մեծ էր, բայց ուրիշ ամէն բանի մէջ անկէ վար:

Յերբ-է-՛ւ-՛ թագաւոր ըլլալէն ետեւ՝ վախնալով որ չըլլայ թէ իր ժողովուրդն Աստուծոյ զոհ մատուցանելու համար ստեպ Երուսաղէմ՝ երթալով գալով՝ օր մը միտքը փոխէ, եւ զինքն սպաննելով՝ Գաւթի տան հետ միանայ, ոսկիէ երկու երինջ շինել տուաւ ու ժողովրդեան ըսաւ. Ահա ասիկ զձեզ Եզրայտոսէն հանող Աստուածները. ալ Երուսաղէմ մ'երթար: Ասոնց մէկը Գան ու մէկայր Բեթէլ զնել տուաւ, ուր նաեւ սեղան մ'ալ շինեց ու ժողովրդեան մէջէն մասնաւոր քրմեր որոշեց եւ Խորայելացւոց տօներուն ժամանակին համաձայն իր մտքէն տօնի օրեր հաստատեց: Այսպէսով ժողովուրդը կռապաշտութեան մէջ ձգեց:

2. Անգամ մը Յերոբովամ Բեթէլ սեղանին վրայ զոհ մատուցանելու ատեն՝ Յուդայի երկրէն մարգարէ մ'եկաւ Աստուծոյ կողմանէ՝ աս խօսքերն ըսաւ. Սեղան սեղան, Գաւթի տնէն Յովսիա անունով մէկը պիտի գայ, քրմերդ վրադ պիտի զոհէ ու մարդիկներուն ոսկրները վրադ պիտի այրէ, եւ ասորնչան՝ թող սեղանը ճեղքուի, վրայի բաները դետին թափին: Յերոբովամ ձեռքն երկնցուց ու հրամայեց որ զինքը բռնեն, բայց ձեռքը մէկէն չորցաւ եւ սեղանն երկու ճեղքուելով՝ վրայինները թափեցան: Յերոբովամ իրեն աղաչեց որ ձեռքին համար Աստուծոյ աղօթք ընէ. այսպէս անոր աղօթքովը ձեռքն աղէկնալով՝ զինքը տուն կերակրոյ հրաւիրեց. չեղաւ նէ՛

պարզեւ խոստացաւ : Բայց անիկա յանձն չառաւ, պատասխան տալով որ թէեւ թագաւորութեանդ կէսը տալու ըլլաս՝ տունդ չեմ կրնար գալ կերակուր ուտել, վասն զի Աստուած պատուիրած է որ հոս ո՛չ ուտեմ խմեմ, ո՛չ ալ եկած ճամբէս ետ դառնամ : Բայց Բեթէլ բնակող ծեր մարգարէ մը՝ Յուդայէն եկող մարգարէին ըսածներն իր որդւոցմէ լսելով եւ անոր ո՛ր ճամբէն ետ դառնալը տեղեկանալով՝ էշ հեծաւ, ետեւէն գնաց ու զինքը կաղնիի ծառի մը տակ նստած գրտնելով՝ տուն հրաւիրեց : Երբ որ անիկա Աստուծոյ հրամանը յառաջ բերելով չուզեց, ծեր մարգարէն ստութեամբ ըսաւ թէ Ես ալ քեզի պէս մարգարէ եմ, Աստուծոյ կողմանէ ինծի հրեշտակ երեւցաւ զրուցեց որ զքեզ տունս տանիմ առջեւդ հաց ու ջուր դնեմ, որ ուտես խմես : Ան ալ հաւտաց, ծերին տունը մտաւ : Այսու ամենայնիւ Աստուծոյ առջեւը չարդարացաւ : Աստուած սեղանին վրայ նոյն ծեր մարգարէին բերնովն իրեն յայտնեց որ ըրած անհնազանդութեան համար հարցը դերեղմանը պիտի չմտնէ : Իրօք ալ նոյնը կատարուեցաւ. էշ հեծած ետ դառնալու ատեն՝ ճամբան յանկարծ դիմացն առիւծ մ'ելաւ զինքն սպաննեց, եւ առանց անոր դիակին կամ իշոյն դպչելու՝ մարմնոյն քովը կեցաւ, մինչեւ որ նոյն ծեր մարգարէն եկաւ զինքը թաղեց, եւ իր տղոցն յանձնեց որ մեռնելու ըլլայ նէ՛ զինքն ալ անոր քովը թաղեն :

**Յ.** Յերոբովամ գլուխն եկածովը չուզուեցաւ ու կռապաշտութիւնը ձեռքէ չթո-

ղուց, Աստուած ալ ուրիշ առթով մը զինքը նորէն խրատեց: Իր Աբիա որդին հիւրնդնալով՝ Յերոբովամ կնիկը ծպտեալ զգեստով ու ընծաներով Սելով Աբիա մարգարէին խորհեց, որ տղուն ինչ ըլլալիքն անկից տեղեկանայ: Աբիային աչուքները ծերութենէն վերջին աստիճանի տկարացած էր, ուստի եւ չէր կրնար տեսնել. բայց Աստուած յառաջագոյն բանն իրեն յայտնած եւ տալու պատասխանն իմացուցած ըլլալով՝ երբ որ կինն եկաւ, Աբիան ըսաւ՝ Եկուր, Յերոբովամին կինը. ինչո՞ւ անծանօթ կերպով եկեր ես: Աստուած ինծի ապսպրեց որ իր կողմանէ Յերոբովամայ զրուցեմ. Ես զքեզ բարձրացուցի, Գաւթի թագաւորութիւնը բաժնեցի՝ քու ձեռք տուի. բայց դուն Գաւթի պէս ինծի չձառայեցիր, անոր համար տանգ վրայ մեծ շարիք պիտի բերեմ. տնէդ մէկը պիտի շթողում, մեծէն մինչեւ պզտիկ պիտի ջարդեմ. քաղաքը մեռնողները՝ շները, դաշտը մեռնողներն՝ երկինքի թռչունները պիտ'որ ուտեն: Հիմակ ետ դարձիր. ոտքդ տունդ դրած իդ պէս՝ տղադ պիտի մեռնի: Աինը տուն դարձաւ, իրօք տղան մեռած գտաւ:

4. Յերոբովամ Յուդայի Աբիաս թագաւորին հետ պատերազմելով՝ յաղթուեցաւ, իր տէրութիւնը շատ տկարցաւ, շատ քաղաքներ Յուդայի թագաւորին ձեռքն անցան, որոնց մէջն էր նաեւ Բեթէլ իր քովի գեղերովը: Աս պատերազմին վրայ շատ շանցաւ՝ Յերոբովամ՝ 22 տարի թագաւորելէն ետքը՝ մեռաւ: Ն-բ-դ իր որդին՝ որ հօրը պէս կռաւ-

պաշտուածիւն ըրաւ, իր թագաւորութեան երկրորդ տարին Փղշտացւոց Գարաթոն քաղաքը պաշարած ատեն՝ Բաբելոն անունով Իսաքարի ցեղէն մէկը զինքը սպաննեց, եւ անոր տեղ թագաւոր նստելով՝ Յերոբովամին տունը թրէ անցուց. եւ այսպէս Աքիա մարգարէին խօսքը կատարուեցաւ: Բայց ինքն ալ կռապաշտուածիւն ընելուն՝ Աստուած Յէու մարգարէին ձեռօքն իմացուց որ իրեն գլուխն ալ Յերոբովամայ գլուխն եկածը պիտի գայ: Բաասաբարկանալով՝ Յէուէն սպաննել տուաւ: Քսանուչորս տարի թագաւորելէն ետեւ մեռաւ, տեղն անցաւ Եզր իր որդին, զորն որ թագաւորութեանը երկրորդ տարին իր հանդերձապետին (քաղաքապետին) տունը գինով կեցած ատեն՝ Չաբբէ զօրապետն սպաննեց եւ բոլոր անոր տունը թրէ անցընելով՝ թագաւորեց: Բայց իր թագաւորութիւնն ալ շատ չտեւեց. եղածներուն լուրը Գարաթոն Խորայէլացւոց բանակը հասածին պէս՝ զօրքը զԱբբէ թագաւոր ընտրեց, եկաւ Թերսա թագաւորական քաղքին մէջ Չամբրին պաշարեց: Չամբրի տեսնելով որ քաղաքը կ'առնուի, ձեռք չիյնալու համար՝ իր պալատին կրակ տուաւ անով տեղով այրեցաւ: Բայց ասով վէճը չըմընցաւ. Խորայէլի թագաւորութեան մէջ հերձուած մտաւ, ոմանք զԱմբի թագաւոր կ'ուղէին, ոմանք ալ Թամբի անունով մէկը. վերջապէս Ամբի գլուխ ելաւ, Սամարիա լեռը գնեց, հոն նոյն անուամբ քաղաք մը շինեց, եւ թագաւորութեան գլխաւոր քաղաքն ըրաւ: Ամբի 12 տարի թագաւորեց:

## Խ Ե . Գ Ա Ս

1. Յեզարէլ ո՛վ է . Ինչո՞ւ զԵղիան սպաննել կ'ուզէր : Եղիա ինչ բաւ . Ինչո՞ւ Սարեփթա գնաց , հան ինչ բրաւ : — 2. Եղիա Աքաաբին ինչպէս երեւցաւ . Բահազին քրմերն ինչպէս չարգել տուաւ : — 3. Յեզարէլ Եղիան նորէն բռնել սպաննել կ'ուզէր նէ՛ , անկա ինչ բաւ : Աստուած իրեն ո՛ր եւ ինչ կերպով երեւցաւ եւ ինչ բաւ : ԶԵղիան ինչպէս իր տեղը դրաւ :

**1 . Ա + — Բ՝ Ամբիին որդին՝ հօրմէն չար եղաւ . Յերոբոզամին մեղքը բաւական չէր , ուրիշ անօրէնութիւն մ՛ալ վրան աւելցուց , Սիդոնացւոց թագաւորին Յեզարէլ աղջիկը կին առաւ եւ աս կինն իր վրայ իշխելով՝ Փիւնիկեցւոց կռոց պաշտամունքն Իսրայելացւոց մէջ խոթեց : Ինչպէս հաւանական կ'երեւայ , Եղիա՛ շատ անգամ անօգուտ տեղ զԱքաաբ յորդորելէն ետեւ՝ Աստուծոյ աղէցնութեամբը վերջապէս աս խօսքս բաւ որ Իսրայելացւոց երկիրները՝ մինչեւ որ ես զրուցելու ըլլամ՝ ո՛չ ցօղ , ո՛չ անծրել պիտի գայ , սաստիկ ալ սով պիտ'որ ըլլայ : Սովը սկսաւ . անոր համար Աքաաբ ու Յեզարէլ Եղիայի բարկացան : Յեզարէլ՝ աս չարիքը բերել**

1 Աս 10 ցեղից թագաւորութիւնը թէպէտ ճշմարիտ Աստուածը թողուցած էր , բայց Աստուած զիրենք բուրբովին երեսէ չէր ձգած . անոր համար ալ մէջերէն մարգարէները պակաս չէր ընել : Նոյն ժամանակին համեմայն՝ Աստուած իր հօգուտ լեցուած եւ իր փառացը սաստիկ նախանձորդ՝ Եղիա Գեղրացի մարգարէն յարոյց , որուն ծնողացն ու ընտանեացը վրայ Ս . Գրքէն ամենեւին ծանօթութիւն չունինք : Ըստ Ս . Հարց՝ ստիկա մարգարէից դպրոցին առաջնորդ եւ ուսուցիչն էր ու կուսութեամբ կ'ապրէր :



տուողն Եղիան կարծելով՝ զինքը կը փնտռէր, որ բռնէ սպաննէ, եւ աս պատճառաւ որչափ որ Աստուծոյ մարգարէ ձեռքը կ'իյնար նէ՛ բոլոր մեռցընել կու տար: Արդիւ Աքաարին տան հաղարապետը՝ որ բարեպաշտ մէկն էր, ասոնցմէ 100 հոգի երկու այրի մէջ զաղտուկ կը պահէր ու կը կերակրէր: Եղիա թէպէտ ասոնց մէջ չէր, բայց ձեռք չինկաւ, որովհետեւ Աստուած իրեն հրամայեց որ Քոռաթու հեղեղատն երթայ պահուրաի, անկէ ջուր խմէ, իսկ ուտելիքն ինք ազուաւներու ձեռքով կը հոգայ: Եղիա հոն գնաց նստաւ, ազուաւներն Աստուծոյ հրամանաւ առտու իրիկուն հաց ու միս կը բերէին. ջուրն ալ հեղեղատէն կ'առնէր: Քանի մը օրէն հեղեղատը չորնալով՝ Աստուած հրամայեց որ Սիդոնացոց երկիրը Սարեփթա քաղաքն երթայ, հոն այրի կին մը զինքը պիտի կերակրէ: Եղիա ան քաղքին դուռը հասնելով՝ որբեւարի կին մը տեսաւ, որն որ փայտ կը ժողովէր, եւ անկից քիչ մը խմելու ջուր ուզեց: Երբ որ կինը կ'երթար որ բերէ, Եղիա ետեւէն կանչեց որ հետը պատառ մ'ալ հաց բերէ: Աինը պատասխան տուաւ որ Չունիմ: Սափորիս մէջ մինակ ափ մը ալիւր, շիշիս մէջ ալ քիչ մը եղ կայ, ըսաւ, եւ հիմա երկու կտոր փայտ կը ժողովեմ, որ ինծի ու տղոցս քիչ մը բան եփեմ: Եղիա՝ Միվախնար, ըսաւ. գնա առաջ ալիւրէդ ինծի փոքր նկան մը շինէ բեր, ետքն ալ քեզի ու տղոցդ համար շինէ: Աստուած մինչեւ որ անձրեւ խաւրէ նէ՛ ամանիդ մէջէն ալիւրը, շիշիդ մէջէն եղը շիպակսիր: Աինը գնաց Եղիային ըսածն ըրաւ,

եւ նոյն օրէն սկսեալ՝ ալիւրն ու եղն ամաննե-  
րուն մէջէն չպակսեցան: Քիչ ատենէ ետեւ  
նոյն այրի կնոջ օրդին հիւանդութեամբ մը  
մեռնելով՝ այրին Եղիային եկաւ ըսաւ. Քեզի  
ի՞նչ ըրի, տունս եկար՝ որ մեղքս Աստուծոյ  
առջեւ յիշուի ու տղաս մեռնի: Եղիան տղան  
առաւ իր վերնատունը տարաւ, հոն Աստու-  
ծոյ աղաչելով՝ նորէն անօր հոգին մարմինը  
դարձուց:

Չ. Աստուած Եղիային հրամայեց որ Ա-  
քաաբին երթայ, ըսէ թէ Անձրեւ պիտի գայ:  
Եղիա Աստուծոյ անօաց ու սաստիկ սովի ա-  
տեն ճամբայ ելաւ որ Սամարիա Աքաաբին  
երթայ: Հոն հասած օրը Աքաաբ՝ Սամարիայի  
ազբիւրներուն ու հեղեղատներուն այցելու-  
թեան ելած էր, յուսալով որ կարելի է ան  
տեղուանքէն իր ձիերուն ու ջորիներուն հա-  
մար քիչ մը բան գտնէ. նմանապէս իր տան  
Արդիու հազարապետին ալ պատուիրած էր  
որ աս վախճանաւ նոյն տեղուանքը պտըտելու  
ելլէ: Եղիա ճամբան Արդիուն առանձին զրտ-  
նելով՝ ըսաւ որ երթայ իր գալը տիրօջն իմա-  
ցընէ: Արդիու պատասխանեց թէ Ի՞նչ ըրի  
որ զիս մահուան վտանգի մէջ կը դնես: Ազգ  
չմնաց, թագաւորութիւն չմնաց՝ որ մարդ չխրկէ  
զքեզ չփնտռէ. հիմա ըսելու ըլլամ որ Եղիան  
հոս է, եւ Աստուած զքեզ առնէ ուրիշ տեղ  
տանելու ըլլայ, Աքաաբ զքեզ չգտնելով՝ զիս  
կը սպաննէ: Բայց երբ որ Եղիա ըսաւ թէ Պէտք  
է որ այսօր Աքաաբին երեւամ, Արդիու յանձն  
առաւ: Աքաաբ իմանալուն պէս՝ Եղիային առ-  
ջեւն ելաւ ու հարցուց որ ԶԻտրայէլ տակն ու

վրայ ընողը դուն ես : Ան ալ՝ Ես չեմ, ըսաւ, հապա դուն ու քու տունդ է : Ետքը հրամայեց որ երթայ Իսրայելացւոց գլխաւորներն ու Յեզարելին սեղանէն կերակրուող Բահազին 450 քրմերը կարմեղոս լեռը ժողվէ :

Աս որ եղաւ, Եղիա անոնց առջեւն ելաւ եւ ըսաւ . Մինչեւ երբ մէյ մը մէկ դին մէյ մը մէկալ դին կը կաղաք . թէ որ ճշմարիտ Աստուծոյ կը հաւտաք, մինակ անիկա պաշտեցէք, իսկ թէ որ Բահազին կը հաւտաք, մինակ իրեն պաշտօն մատուցէք : Ժողովուրդն ասոր պատասխան չտուաւ : Եղիա երկու եզրերէլ տուաւ, մէկը Բահազին քրմերուն առնել տուաւ՝ որ կտրտեն փայտերու վրայ դնեն ու ողջակէզ պատրաստեն, մէկալն ալ ինք առաւ՝ որ նոյն կերպով ողջակէզ պատրաստէ : Ետքը ըսաւ . Գուք ձեր աստուածները կանչեցէք, ես ալ իմ Աստուածս կը կանչեմ, որուն Աստուածն որ երկինքէն կրակ կ'իջեցընէ ողջակէզը կը մնաչէ, ան է ճշմարիտ Աստուածը : Ժողովուրդն իր ըսածին հաւանեցաւ : Եղիա ալ դարձաւ քրմերուն ըսաւ որ իրենք յառաջ սկսին : Անոնք ամէն բան պատրաստեցին եւ սկսան առտուընէ մինչեւ կէսօր սեղանին շորս դին դառնալով՝ Բահազը կանչել : Կէսօր եղաւ նէ՝ Եղիա զանոնք ծաղր ընելով՝ Ամուր կանչեցէք, կ'ըսէր, կրնայ ըլլալ որ քուն ըլլայ ու արթըննայ : Թէպէտ քրմերը ձայներնին աւելի բարձրացուցին ու մինչեւ իրիկուն կը պոռային, բայց լսող չկար : Նոյն ատեն Եղիա ժողովուրդը գլուխը ժողվեց ու Իսրայելացւոց ցեղերուն թուովը՝ տաս-

ուերկու քարով սեղան կանգնեց, բոլորտիքը ջրոյ տեղեր շինեց, փայտերը սեղանին վրայ դիզեց, եզն ալ կտոր կտոր ըրած անոնց վրայ հանեց, եւ ողջակիզին ու փայտերուն վրայ տասուերկու սափոր ջուր թափել տուաւ, այնպէս որ ջրի տեղերը բոլոր լեցուեցան: Աս ընելէն ետեւ՝ Աստուծոյ աղաչելով ըսաւ. Արրահամին եւ Յակոբայ ճշմարիտ Աստուածն ըլլալդ, եւ իմ՝ քու ծառադ ըլլալս ցուցուր: Աս ըսաւ չըսաւ՝ մէկէն երկինքէն կրակ իջաւ, ողջակէզն ու սեղանին վրայ եղածները լափեց լմնցուց: Ժողովուրդն երեսի վրայ ինկած՝ հրապարակաւ խոստովանեցաւ որ հուրն երկինքէն իրկողը ճշմարիտ Աստուածն է: Եղիա Բահաղու քրմերը Արսոնի հեղեղատը ժողվել ու ջարդել տուաւ, որովհետեւ հաւանականարար իրենք էին Աստուծոյ մարգարէները սպաննել տուողներն ու ժողովուրդը մոլորեցնողները:

Ետքը Եղիա Աքաարին ըսաւ որ Սաստիկ անձրեւ գալու ձայն կը լսուի, չեկած՝ ել գնա, կեր ու խմէ: Աքաար ուտելու գացած ժամանակ՝ Եղիա Կարմեղոս լերան գլուխն ելաւ եւ հոն Աստուծոյ աղօթք կ'ընէր. քովը կեցող պատանւոյն ալ ապսպրեց որ աւելի վեր ելլէ ու դէպ ի ծով նայի: Պատանին ելաւ նայեցաւ ու բան չտեսնելով՝ ետ դարձաւ ըսաւ որ Բան մը չ'երեւար: Եղիա ասանկ եօթն անգամ ընել տալէն ետեւ՝ եօթներորդ անգամուն պատանին ըսաւ որ Ծովին վրայէն փոքր ամպ մը դէպ ի ասդին կու գայ: Ան ատեն Եղիա զինքն Աքաարին վաղցուց իմաց

տալու համար, որ անձրեւի չբռնուած՝ կառք մտնէ երթայ: Բայց տուն չհասած՝ երկինքն ամպով գոցուեցաւ, անձրեւն առաւ:

**3.** Յեզարէլ Եղիային ըրածներն Աքա-  
բէն իմանալով՝ շատ բարկացաւ, անոր մարդ  
խրկեց ու երդմամբ սպառնացաւ որ Ինչպէս  
դուն Բահաղին քրմերն սպաննեցիր, անանկ  
ալ ես զքեզ պիտի սպաննեմ: Եղիա ասկէ  
վախնալով՝ Բերսարէէ եկաւ, հոն քովի պա-  
տանին թող տալով՝ առանձին մէկ օրուան  
հետու անապատ տեղ քաշուեցաւ, բեւեկ-  
նիի ծառի մը տակ նստած՝ Աստուծոյ աղօթք  
կ'ընէր որ հոգին առնէ: Ասոր վրայ Եղիային  
քունը գալով՝ ան ծառին տակը քնացաւ,  
բայց Աստուծոյ կողմանէ հրեշտակ եկաւ զինքն  
արթընցուց՝ որ ելէ կերակուր ուտէ: Եղիա  
ելաւ տեսաւ որ գլխուն վերելք նկանակ եւ  
ամանով մը ջուր կեցեր է, առաւ կերաւ ու  
նորէն քնացաւ: Հրեշտակը զինքը մէյ մ'ալ ար-  
թընցուց ըսելով որ Ել աս ալ կեր, վասն  
զի երկայն ճամբայ պիտի քալես: Եղիա ելաւ  
կերաւ ու զօրացած՝ քառասուն օր քառա-  
սուն գիշեր ճամբայ քալելէն ետեւ՝ Քորէր  
լեռն եկաւ, ուր այր մը գտնելով՝ մէջը մտաւ  
բնակեցաւ: Նոյն տեղն Աստուծոյ ձայն մ'ե-  
կաւ որ կ'ըսէր. Եղիա հոս Ինչ կ'ընես: Ան  
ալ վրէժխնդրութեան հոգւով պատասխա-  
նեց. Տէր, սեղանդ կործանեցին, մարգարէ-  
ներդ սպաննեցին, ես մինակ մնացի, զիս ալ  
կը փնտռեն՝ որ բռնեն մեռցընեն: Չայնն  
ըսաւ. Աաղը այրէն դուրս ել, Աստուած  
առջեւէդ պիտ'որ անցնի, եւ չանցած՝ լեռ-

ները շարժող ու քարերը պատռող սաստիկ հով մը պիտի գայ, ետքը շարժում՝ ետքը հուր, եւ ամենէն ետքը մեղմօղ, եւ Աստուած աս ետքինին մէջ պիտ'որ ըլլայ: Երկրորդ օրը նոյն բաներն եղան<sup>1</sup>: Եղիա մեղմօղին ձայնը լսելուն պէս՝ այրին բերանն եկաւ կեցաւ ու երեսը վերարկուով ծածկեց: Աստուած իրեն ըսաւ որ Գամաակոս երթայ, զԱզայէլ՝ Ասորոց թագաւոր, իսկ զՅէնու Ամեսեայ որդին՝ Իսրայէլի թագաւոր, եւ Եղիսէն՝ իր տեղը մարդարէ օժէ: Ասկից զատ իմացաց որ Իսրայէլի մէջ ճշմարիտ երկրպագութիւն ընող մինակ ինք չէ, հապա իրմէ զատ՝ Բահազին ծունր չկրկնող 7000 հոգի կայ: Եղիա անմիջապէս ճամբայ ելաւ ու Եղիսէն գտաւ, որ տասուերկու ջուխտ եզով երկիր կը հերկէր, եւ վերարկուն վրան նետելով՝ զնորք մարդարէութեան պաշտօնին կարգեց: Եղիսէ հրաման ուղեց որ երթայ հօրը մօրը վերջի ողջոյնը տայ: Եղիա հրաման տուաւ. Եղիսէ զոյգ մը եղ կտրեց, արօրին փայտովն եփելով՝ ժողովրդեան բաժնեց ու դարձաւ Եղիային եկաւ:

<sup>1</sup> Աս տեսիլքով Աստուած կ'ուզէր նախ զնորք բաշտերէ, ցուցնելով որ բոլոր արտածք իր իշխանութեան տակն են, մեղաւորները պատժել ուզելու ըլլայ նէ՛ ձեռքը միջոց պակաս չէ: Իսկ մեղմօղով անցնելովն՝ իրեն սորվեցնել կ'ուզէր որ քաղցր ու համբերող ըլլայ, իմացնելով որ ինք սգորմած ու քաղցր ըլլալուն՝ մարդկան շարժման նէն վերջին աստիճանի շատ պաշտ՝ վէժ ինքորութեան շեղիք:

Խ Չ . Դ Ա Ս

1. Ադերայ որդին երկու անգամ Աքաաբէն ինչպէս յաղթուեցաւ: Աքաաբ զԱստուած ինչով բարկացուց ու մարգարէին ձեռքոջ ինչ լսեց: — 2. Նարաթայ այդին ինչպէս առաւ. Եզրային բերնոջն առ բանիս հաւմար Աստուածէ ինչ լսեց: — 3. Մեքիա ո՞վ է. ինչու բանտարկուեցաւ: — 4. Աքաաբ ինչպէս մեռաւ: — 5. Ոքոզիս ինչու ճանճիկ աստուածոյն մարդ խրկեց. անոնք ճամբան որուն հանդիպեցան: Ոքոզիայի Եզրային խրկած մարդիկներուն ինչ եղաւ. Եզրիս եկաւ անոր ինչ ըսաւ: — 6. Եզրիս ինչպէս վերացաւ:

1. Ասորուոց թագաւորն Ադերայ որդին՝ ուրիշ երեսունուերկու թագաւորներով եկաւ Սամարիան պաշարեց. եւ Աքաաբին մարդ խրկեց ըսել տուաւ որ Ունեցած հարստութիւններդ, նոյն իսկ կանայքդ ու զաւկրներդ իմն են: Աքաաբ առջի բերան հաւանութիւն ցուցուց, բայց ետքէն երբ որ Ադերայ որդին ուզեց որ երկրորդ օրը զանոնք տայ, խորհուրդ ընելով՝ պատասխան տուաւ որ 2՝ըլլար: Ադերայ որդին սպառնալիք ըրաւ. բայց Աքաաբ զինքն արհամարհեց ու մարգարէի մը խօսքին անսալով՝ Ադերայ որդին իր դաշնակից թագաւորներուն հետ կեր ու խումբ մէջ եղած ատեն՝ մէկէն վրանին վաղեց, ջարդեց եւ զամէնքը փախուց: Ասորիք՝ Իսրայէլի Աստուածը լեռներու Աստուած է եւ անոր համար յաղթեցին, ըսելով՝ հետեւեալ տարին Ափեկայ դաշտին վրայ պատերազմ տուին: Բայց յոյսերնին պարսպ էլաւ, մէկ օրուան մէջ 100,000 հողի կորսնցուցին, մնացածներն ալ իրենց քաղաքը փախան. բայց քաղքին պարիսպը վրանին փլելով՝ 27,000 հողի ալ ասկէ կոր-

սուեցաւ : Ան ատեն Աղերայ որդին փախաւ իր պալատին մէկ ծածուկ սենեկին մէջ պահուեցաւ . բայց իր իշխաններն՝ ըսելով որ Խորայելի թագաւորներն ողորմած կ'ըլլան, իրենց անձնատուր ըլլալուն նշան՝ քորձ հագած ու գլուխնին չուան կապած՝ Աքաարին եկան ու քաղցր խօսքերով սիրտը շահեցան : Աքաար վրանին գթալով՝ թագաւորնին մեծարեց, իր կառքն առաւ հեար բարեկամութեան դաշինք գրաւ : Աստուած ասոր վրայ բարկանալով՝ մարգարէի ձեռքով անոր գէշ ընելը եւ անոր համար իր ժողովրդովը ջարդուելիքն իմացուց :

Չ . Նոյն պատերազմին երկրորդ տարին ուրիշ նոր դիպուած մը պատահեցաւ, որմէ Աքաարին ու իր տան գլուխը մեծ չարիք եկաւ : Նարաթ յեզրայելացին Աքաարին պալատին քովն այգի մ'ունէր : Աքաար ուղեց ան այգին ձեռքէն առնել, բանջարեղենի պարտէզ ընել, եւ անոր տեղ Նարաթին խոստացաւ որ կ'ամ նոյն պարտիզին գինը կ'ամ ուրիշ աղուոր պարտէզ մը կու տայ : Նարաթ յանձն չառաւ, ըսելով որ Նախահարցս ժառանգութիւնը քեզի չեմ կրնար տալ : Աքաարին սիրտը նեղանալով՝ արտում տուն եկաւ ու կերակուր չկերած՝ անկողին մտաւ : Յեզարէլ իմանալով որ Նարաթին այգւոյն համար սիրտը կոտրեր է, զինքը յորդորեց որ ելլէ կերակուր ուտէ եւ խոստացաւ որ ինք այգին կը գնէ : Ետքը ելաւ Աքաարին անուամբը Յեզրայէլ քաղքին դատաւորաց նամակ մը գրեց, եւ ապսպրեց որ երկու սուտ վկայով զՆա-



բաւթ Աստուծոյ ու թագաւորին դէմ յան-  
ցաւոր բռնեն, ու քարկոծելով մեռցընեն :  
Անոնք ալ առած հրամաննին կատարեցին :  
Ասանկով այդին Աքաաբին ձեռքն ինկաւ :  
Աստուած բարկանալով՝ Եղիայի ձեռքով Ա-  
քաաբին ըսաւ թէ Ան տեղն՝ ուր որ շները  
Նաբաւթին արիւնը լափեցին, քու արիւնդ  
ալ պիտի լափեն. նոյնպէս Յեզարէլին ըսաւ  
որ Յեզրայելի պարսպին քովը շները մարմինդ  
պիտի ուտեն : Աքաաբ ըրածին վրայ զղջալով՝  
Աստուած Եղիային ըսաւ որ Աս սպառնալիք-  
ներս Աքաաբին կենդանութեան ատենն իրեն  
ու իր տանը վրայ չեմ բերեր, հապա իր որ-  
դւոյն ատենը :

**Յ.** Ասոր վրայ քանի մը տարի անցնելէն  
ետեւ Աքաաբ՝ Գաղաադու Ռամաթ քա-  
ղաքը Ասորոց ձեռքէն առնելու համար՝ նո-  
րէն պատերազմ բացաւ : Նոյն ատեն Յովսա-  
փատ Յուդայի թագաւորն Աքաաբին գա-  
լով (Տես ԾԲ. Դաս. Թիւ 5.), Աքաաբ հար-  
ցուց որ Գաղաադու Ռամաթ քաղաքը գալ  
կուզէս : Ան ալ յանձն առաւ. Միայն թէ,  
ըսաւ, Աստուծոյ մէյ մը հարցընենք : Աքաաբ  
400ի չափ սուտ մարգարէ ժողովեց, հարցուց  
որ Արնամ՝ Ռամաթ երթալ : Անոնք՝ Գնա,  
Աստուած Ասորիները ձեռքդ պիտի մատնէ,  
ըսին : Յովսափատ հարցուց որ Աստուծոյ մար-  
գարէններէն չկայ, որ խորհուրդ հարցընենք :  
Աքաաբ՝ Մէկը կայ, ըսաւ, որն որ ինծի աղէկ  
բան չմարգարէանալուն՝ զինքը միշտ կ'ատեմ :  
Աս մարգարէն՝ Միքիան էր : Բայց Յովսափա-  
տին շատ յորդորելովը՝ մարգ խրկեց բերել տա-

լու : Միքիան բերողը ճամբան իրեն ըսաւ որ Մէկալ մարգարէները թագաւորին յաջողութիւն գուշակեցին , դուն ալ անոր յաջող բան մը մարգարէացիր : Միքիա պատասխանեց որ Աստուած բերանս ինչ որ կը դնէ՝ ան կը խօսիմ : Եւ այսպէս Աքաարին առջեւն ելլելով՝ երբ որ ան հարցուց թէ Պատերազմի համար Ռամաթ երթամ , Միքիան՝ Գնա , ըսաւ , Աստուած Ասորիները քու ձեռքդ պիտի տայ : Աքաար ասով գոհ չըլլալով՝ երբ որ զինքն երդուընցընելով՝ նորէն հարցուց որ Երթամ , թէ չէ , Միքիա ըսաւ . Առանց հովուի մնացած ոչխարներու պէս՝ բոլոր Իսրայէլը լերան վրայ ցրուած տեսայ . Աստուած ալ ինծի զուցեց որ ասոնք (Իսրայելացիք) անտէր են , թող տեղերնին դառնան : Գարծեալ ըսաւ թէ Աստուած թող տուած է , որ քու բոլոր մարգարէներդ միաբան քեզի ազէկ մարգարէութիւններ բնեն , որպէս զի անոնց հաւտալով՝ խարուիս եւ այսպէս Աստուծոյ ըրած սպառնալիքները զլուխդ գան : Աքաար բարկանալով՝ Միքիան բանտարկել տուաւ . բանտապանին ալ ապսպրեց որ մինչեւ որ ինք պատերազմէն դառնայ՝ հազիւ ապրելու չափ քիչ մը հաց ու ջուր տայ իրեն :

4 . Աքաար ու Յովսափատ իրենց զօրբերովը Ռամաթ գացին : Ասորւոց թագաւորն իր զօրացը պատուիրեց որ ուրիշին դէմ չպատերազմին , մինակ Իսրայելի թագաւորին դէմ : Աքաար իր թագաւորական զգեստը Յովսափատին հազցուցած եւ ինք ծպտեալ զգեստով ըլլալուն՝ Ասորւոց զօրքն առջի բերան Յովսափատին ետեւէն ինկան , բայց ետքէն

երբ որ խմացան որ ինք Աքաար չէ, թողուցին: Աքաար թէպէտ ասանկով մարդկան ձեռքէն պրծաւ, բայց Աստուծոյ ձեռքէն չկրցաւ ազատիլ. իր զօրացը մէջ կեցած ատեն՝ Ասորոց բանակէն նետուած նետէ մը վիրաւորելով՝ իր կառքը քշողին ըսաւ որ զինքը մէկ դի տանի: Բայց պատերազմն առանց ընդմիջահատելու յառաջ տարաւ, ու իր զօրացն ետեւը երեսը դէպ ի թշնամիները դարձուցած՝ կեցաւ: Մէկ կողմանէ ալ վէրքէն արիւնը կը վազէր, անանկ որ մինչեւ իրիկուն կառքը լեցուեցաւ եւ ինք իրիկունն դէմ հողին աւանդեց: Ան ատեն պատերազմը դադրեցուցին ու զինքը Սամարիա բերին թաղեցին, կառքն ալ հոն աւազանի մէջ լուարու ատեննին՝ շները կու գային արիւնը կը լցէին:

Ծ. Անոր յաջորդեց որդին՝ Ուրու, որն որ իր թագաւորութեան երկրորդ տարին իր վերնատան վանդակապատէն վար իյնալով՝ հիւանդացաւ, եւ Ակկարոնի Ճանճիկ աստուածոյն մարդ խրկեց հարցընելու որ արդեօք պիտի բժշկուի, թէ մեռնի: Աստուած զԵղիան անոր խրկած հրեշտակներուն առջեւն հանեց, ըսաւ որ Խորայելի մէջ Աստուած չկայ, ինչու ուրիշին հարցընելու կ'երթաք. գացէք Ոքոզիային ըսէք, ասոր համար անկողնէն պիտի չելլէ, պիտի մեռնի: Պատգամաւորները դարձան ու Եղիան չճանչնալուն՝ Ոքոզիային ըսին որ Ճամբան մէկը դիմացնիս ելաւ, ասանկ ասանկ խօսեցաւ: Ոքոզիա ինչ մարդ ըլլալն հարցուց եւ անոնց զրուցածէն Եղիա ըլլալն իմանալով՝ յիսուն հոգւով յիսնապետ մը խրկեց, որ ե-

կաւ զինքը լերան վրայ նստած գտաւ, եւ ըսաւ. Ա՛յր Աստուծոյ, վար իջիր, թագաւորը զքեզ կը կանչէ: Եղիա պատասխան տուաւ որ Եթէ ես այր Աստուծոյ եմ, թող երկինքէն հուր իջնայ՝ զքեզ ու քու յիսունդ այրէ: Եւ մէկէն երկնքէն կրակ իջաւ զանոնք այրեց: Ոքողիա նորէն յիսուն հոգի մ'ալ խաւրեց ուրիշ յիսնապետով մը, որն որ եկաւ առջինին պէս խօսեցաւ. Եղիա ալ նոյն պատասխանը տալով՝ դարձեալ երկնքէն հուր իջաւ զինքն իր յիսունովն այրեց: Ոքողիա երրորդ անգամ յիսուն հոգւով յիսնապետ մը խրկեց, որն որ եկաւ Եղիային առջեւը ծնկան վրայ ինկաւ, Վ'աղաչեմ, այր Աստուծոյ, ըսաւ, ինծի ու իմ հետս եկողներուն կենացը ինայէ: Աստուած աս յիսնապետին ինայեց, որովհետեւ Եղիային իրրեւ առն Աստուծոյ պէտք եղած յարգութիւնն ըրաւ. Եղիային ալ հրեշտակի ձեռքով ըսաւ որ չվահնայ ելլէ երթայ: Եղիա թագաւորին առջեւն ելաւ ու Աստուծոյ կողմանէ ըսաւ որ Ճանձիկ աստուածոյն մարդ խրկելուն համար անկողնէն պիտի չելլէ, պիտի մեռնի: Անանկ ալ եղաւ. Ոքողիա մեռաւ ու տեղը Յովրամ իր եղբայրը նստաւ:

6. Եղիա գիտնալով որ Աստուած զինքը պիտի վերացընէ, Եղիսէէն բաժնուելու առիթ կը փնտռէր: Ուստի երբ որ երկուքը մէկտեղ Գաղգաղա եկան, Եղիա անոր ըսաւ. Գու՛ն հոս կեցիր, Աստուած զիս Բեթէլ կը խրկէ: Եղիսէ չուզեց զինքը թող տալ, եւ այսպէս հետը Բեթէլ եկաւ, ուր մարգարէից որդիքն իրեն իմացուցին որ նոյն օրը Աստուած Եղիան

իրմէ պիտի հեռացրնէ : Ան ալ Գիտեմ, լռեցէք, ըսաւ : Եղիա Եղիսէն հոն ձգելու համար պատճառ բերաւ որ Աստուած զիս Երիբով կը խաւրէ : Բայց Եղիսէն դարձեալ յանձն չառաւ իրմէ բաժնուիլ, եւ այսպէս մէկտեղ Երիբով եկան : Հոն ալ մարգարէից որդիքն իրեն ըսին որ նոյն օրը Աստուած զԵղիան իրմէ պիտի բաժնէ : Ինքն ալ Գիտեմ, լռեցէք, պատասխանեց : Եղիա նոյն տեղն ալ Եղիսէին՝ Գուռն հոս մնացիր, ըսաւ . Աստուած զիս մինչեւ Յորդանան կը խրկէ : Իսկ Եղիսէ՝ Չ'ըլար, զքեզ թող չեմ տար, ըսելով՝ հետը ճամբայ ելաւ : Երբ որ Յորդանանին քովն եկան, Եղիա իր մաշկեակը ծալեց ջրին զարնելով՝ բաժնեց ու Եղիսէին հետ մէջէն դիմաց անցաւ : Հոն Եղիա չվերացած՝ Եղիսէին ըսաւ . Խնդրէ ինձմէ՝ քեզի ինչ ընեմ . ինքն ալ անոր կրկին հողին ուզեց : Եղիա՝ Գժուարին բան ուզեցիր, ըսաւ . Ի վերայ այսր ամենայնի թէ որ վեր ելլելս տեսնելու ըլլաս, ուղածդ կատարուի : Ասանկ խօսելով երթալու ատեննին՝ մէկէն հրեղէն կառքն ու երկաթները զիրենք իրարմէ բաժնեցին եւ Եղիան շարժմամբ երկինք տարին : Եղիսէ անոր վեր ելլելը տեսնելով, սկսաւ՝ Հայր, հայր, կանչել . եւ իրմէ բաժնուելուն վրայ տրտմելուն նշան՝ զգեստը պատուեց : Ետքը Եղիային մաշկեակն առած՝ Երիբով գալու համար ճամբայ ելաւ : Յորդանան գալով՝ նոյն մաշկեակով բաժնեց ու դիմաց անցաւ : Մարգարէից որդիքն իրմէ խնդրեցին որ երթան Եղիան փնտռեն . Արեւի է որ, կ'ըսէին, Աստուծոյ հողին զինքը տեղ մը

տարած ձգած ըլլայ: Հատ դժուարաւ անկէ  
հրաման առնելով՝ իրենցմէ յիսուն հոգի խըր-  
կեցին. որոնք երեք օր ամէն կողմ փնտռեցին  
եւ չկրնալով գտնել՝ ետ դարձան:

## Խ Է . Դ Ա Ս

1. Եղիսէ Երիբովի ֆասակար ջրերն ինչպէս աղէկ-  
ցուց: 2. — Յոգրած ծաղր ընող տղարն ինչ պատիժ կրեցին:
2. — Յոգրած իր դաշնակից թագաւորներուն հետ  
Մովսրացուց ինչպէս յաղթեց: — 3. Եղիսէ այրի կնոջ  
եղն ինչպէս աճեցուց: Սոմեայի կնոջ ինչ բարեք ըրաւ:  
Իր պատանեկին եփած լեզի կերակուրն ինչպէս անուշ-  
ցուց: Եթը տարւան սոփին ատենն ուրիշ ինչ հրաշք ը-  
րաւ: — 4. Նեեման ասորին ինչպէս բժշկուեցաւ: Ա-  
նոր բորտութիւնն ինչու Գեեզիին անցաւ: — 5. Ե-  
ղիսէ Ասորուց թագաւորին մարդիկներուն ինչ ըրաւ:  
— 6. Սոֆե ինչպէս վերջացաւ:

1. Եղիսէ Երիբով եղած ատեն՝ տեղացիք  
իրեն ըսին որ Աս քաղաքը բնակութեան հա-  
մար շատ աղէկ է, բայց ջուրը ֆասակար ու  
երկիրն անզաւակ է: Եղիսէ անոնց ըսաւ որ նոր  
ամանով մը ջուր բերեն: Ամանն առաւ, գնաց  
աղբիւրներն օրհնեց եւ աղ ցանեց. ասանկով  
ջրոյն ֆասակարութիւնն ու երկրին անզաւ-  
կութիւնն անցաւ: Անկէ Բեթէլ ուղեց եր-  
թալ. ճամբուն վրայ պղտիկ տղաք իրեն՝ Ալ,  
կնտակ, Ել, կնտակ, կանչելով՝ ծաղր կ'ընէին:  
Եղիսէ դարձաւ զիրենք Աստուծոյ անուամբ  
անիծեց: Մէկէն անտառէն երկու արջ ելան  
անոնցմէ քառասունուերկուքն սպաննեցին:

2. Նոյն ատենները Յոգրած Խորայելի թա-  
գաւորը՝ Եղոմայ թագաւորին ու Յուդայի  
Յովսափատ թագաւորին հետ մէկտեղ միա-  
նալով՝ Մովսրացուց թագաւորին դէմ պա-

տերազմ բացաւ, որովհետեւ Աբաարայ մե-  
 նելէն ետեւ Իսրայելացւոց հարկ տալը դա-  
 գրեցուցած էր: Եւթն որ ճամբայ ընելով՝ երբ  
 որ խմելու ջուր չգտան եւ Յովրամ՝ յուսահա-  
 տած կը կարծէր որ Աստուած զիրենք Մովա-  
 րացւոց ձեռքը պիտի մատնէ, Յովսափատ ու-  
 զեց որ մարգարէի մը ձեռքով Աստուծոյ կամքն  
 հարցընեն: Եւ խմանալով որ Եղիսէն հոն է,  
 երեքն ալ մէկտեղ ելան իրեն եկան: Եղիսէ  
 Յովրամը խստիւ յանդիմանելով՝ Ինծի ի՞նչ  
 եկեր ես, ըսաւ, հորդ մարգարէներուն զնա:  
 Ստոյգ գիտցիր որ եթէ Յովսափատէն ակնա-  
 ծուծիւն ընելու չըլլայի, քու երեսդ եւ ոչ  
 կը նայէի: Եւ որովհետեւ Իսրայելի կռապաշտ  
 թագաւորը տեսնելով կիրքն ելած ու այլայ-  
 լած էր, ուզեց իր խռոված հոգին երաժշտու-  
 թեան ձայնով հանդարտեցընել, ուստի քնար  
 զարնող մը բերել տուաւ եւ անով սաղմոս  
 երգեց: Եւ Աստուծոյ հոգին վրան դալով՝  
 ըսաւ. Հով եւ անձրեւ շտեմնուած՝ հե-  
 ղեղաւար ջրով պիտի լեցուի, Աստուած զՄո-  
 վար ձեռքերնիդ պիտի մատնէ: Երկրորդ օրը  
 զո՛հի ատեն մէկէն երկիրը ջրով լեցուեցաւ,  
 արեւուն ճառագայթներն ալ ջրոյն վրայ ցո-  
 լանալով՝ Մովաբացիք արիւն կարծեցին, եւ  
 մէջերնին ըսին որ թագաւորներն իրար կը կո-  
 տրեն, ուստի ուզեցին գալ աւարք ժողովել:  
 Բայց երբ որ եկան, մէկէն Իսրայելացիք վրա-  
 նին թափեցան, աղէկ մը ջարդ տուին: Նոյն  
 միջոցին Մովաբացւոց թագաւորը տեսնելով  
 որ բաները գէշ կ'երթան, ուզեց 700 ընտիր  
 զօրքով Եդոմի թագաւորին վրայ երթալ, եւ

երբ որ աս ալ չյաջողեցաւ, իր թագաւորութեան ժառանգ որդին զոհեց: Իսրայելացիք աս տեսան նէ՝ սոսկացած ետ դարձան:

Յ. Եղիսէին նոյն ատենները գործած զամանալի հրաշքներէն յայտնի կ'երեւար թէ Եղիայի հոգին իրեն եկած է: Մարգարէի կին մը իրեն եկաւ ըսաւ որ Այրս մեռաւ, հիմա անոր պարտատէրն եկեր առնելիքին տեղ իմ երկու տղաքս կ'ուղէ առնել իրեն ծառայեցընել: Եղիսէ հարցուց որ Տունդ ինչ ունիս: Ան ալ՝ Օծուելու համար քիչ մը եղէ զատ բան չունիմ, ըսաւ: Եղիսէ հրամայեց որ երթայ իր դրացիներէն խել մը պարապ աման առնէ ու տղոցմովն առանձին գոց սենեկի մը մէջ մտնելով՝ նոյն ամաններն եղով լեցընէ: Աինք գնաց ըսածը կատարեց եւ հազիւ ըտլոր ժողված ամանները լեցուելէն ետեւ՝ եղը դադրեցաւ: Ասով կինը չէ թէ միայն պարտքը վճարեց, հապա նաեւ իր ու տղոցն ապրուստ հոգաց:

Անգամ մ'ալ Եղիսէ Իսաբարի ցեղին մէջ Սոմնա քաղքէն անցնելու ատեն՝ ազնուական կին մը զինքը կերակրոյ հրաւիրեց: Եղիսէ ասով անոր հետ բարեկամանալով՝ քանի անգամ որ հոն կու գար՝ մէյ մը անոր կը հանդիպէր: Աինն երկանը հետ խօսելով՝ իր տանը մէջ Եղիսէին համար մասնաւոր սենեակ մը պատրաստեց: Եղիսէ անգամ մը անոր տունն եկած ատեն՝ իր ծառան խրկեց՝ կինն իր խուցը հրաւիրեց, եւ աւետեց որ տարի մը ետքը զաւակ մը պիտ'որ ունենայ: Ազնուական կինն իրօք Եղիսէին ըսած ատենը զաւակ մ'ունե-



ցաւ : Տղան մեծնալէն ետեւ՝ որ մը արտը հօ-  
րը հնձողներուն քովը կեցած ատեն, մէկէն՝  
Գլուխս գլուխս, սկսաւ կանչել, հայրը զինքը  
ծառայի մը հետ տուն խրկեց, ուր մօրը ծնկան  
վրայ քնացաւ ու կէսօրուան դէմ մեռաւ :  
Խեղճ կինը զինքը Եղիսէին խուցը տարաւ,  
անոր անկողնոյն վրայ դրաւ, դուրս ելաւ,  
դուռը վրայէն կղպեց, ու էշ հեծած՝ Եղիսէին  
եկաւ՝ Ես քեզմէ տղայ ուղեցի՞, ըսաւ . չըսի՞  
որ ինձի պարապ յոյս մի տար : Հիմա աս ինչ  
եկաւ գլուխս : Եղիսէ զինքը միտիթարելէն ե-  
տեւ՝ հետը տունն եկաւ ու տղուն մարմինն իր  
սենեկին մէջ գտնելով՝ դուռը գոցեց, սկսաւ  
Աստուծոյ աղօթք ընել : Քիչ մը վերջը տղան  
աչքը բացաւ, ողջացաւ :

Նոյն ժամանակները Սամարիայի մէջ սաս-  
տիկ սով մ'եղաւ . որն որ եօթը տարի տեւեց :  
Անգամ մը՝ որ մարգարէից որդիքը Գաղգաղա  
Եղիսէին քով ժողված էին, իր պատանւոյն  
հրամայեց որ մեծ սանով անոնց կերակուր  
պատրաստէ : Պատանին գնաց դաշտի վրայ  
վայրենի որթ մը գտաւ, եւ ինչ ըլլալը չճանչ-  
նալով՝ խել մը ժողվեց բերաւ, սանին մէջ  
եփեց անոնց առջեւը դրաւ որ ուտեն : Անոնք  
քիչ մը ճաշակելով՝ լեղի ըլլալուն չկրցան ու-  
տել նէ, Եղիսէ ալիւր բերել տուաւ մէջը  
խառնեց, ասանկով անուշուց ու կերան : Ան  
սովին ատենն էր որ Եղիսէ քիչ մը գարեղէն  
հացով ու չոր թուզով 100 հոգի կերակրելէն  
զատ՝ կտորուանք ալ աւելցուց :

4. Ասորւոց թագաւորին՝ Նեեման զօրա-  
պետը բորոտ էր : Նոյն զօրապետին կինը քովը

Իսրայելացւոցմէ գերի բռնած աղախին մ'ու-  
նենալով՝ ասիկա խրատ տուաւ որ Սամարիա  
Եղիսէին երթայ, անիկա զինքն ստուգիւ կը  
բժշկէ: Նեեման իր թագաւորէն յանձնարա-  
րական թուղթ առած՝ Իսրայելացւոց թա-  
գաւորին եկաւ, որն որ Ասորոց թագաւորին՝  
ինդրածն իմանալով՝ Էս Աստուած եմ, ըսաւ,  
որ աս մարդուն բորտութիւնը բժշկեմ. ա-  
սիկա՝ միայն ինծի դէմ պատերազմ բանալու  
առիթ գտնելու համար է: Բայց բանն Եղի-  
սէին ականջը հասնելով՝ ուզեց որ զՆեեման  
իրեն խաւրէ: Երբ որ զօրապետն իր դրան  
առջեւն եկաւ, Եղիսէ ըսել տուաւ որ Բժըշ-  
կուիլ կ'ուզէ նէ, երթայ Յորգանանին մէջ  
եօթն անգամ լուացուի: Նեեման բարկացաւ.  
Էս կարծեցի որ, ըսաւ, իր Աստուծոյն աղօ-  
թելով՝ բորտութիւնս պիտի բժշկէ: Գամաս-  
կոսի ջրերն Իսրայելի ջրերէն լուազոյն չեն:  
Աս ըսաւ ու բարկութեամբ կ'ուզէր տեղը  
զառնալ: Բայց բովի ծառաները միտքը փո-  
խեցին. Մարգարէն գժուար բան մ'ալ հրա-  
մայելու ըլլար, ըսին, պէտք է իր կատարել,  
թող թէ ասանկ թեթեւ բան մը: Նեեման  
իրենց անսալով՝ զնաց եօթն անգամ լուա-  
ցուեցաւ, եւ իրօք բորտութիւնն անցաւ:  
Ետքը Եղիսէին եկաւ ըսաւ. Հիմակ իմացայ  
որ բոլոր երկրի մէջ Իսրայելի Աստուծուն  
զատ Աստուած չկայ եղէր: Ուզեց միանգամայն  
անոր պարգև տալ. բայց Եղիսէ չառաւ: Սա-  
կայն Գեեզի՝ Նեեմանին ճամբայ ելլելէն վեր-  
ջը՝ ետեւէն զնաց, Եղիսէին կողմանէ սուտ  
խօսք մը շինելով՝ անկէ ստակ ու հագուստ

ուղեց: Նեեման մէկին տեղ՝ երեք տուաւ, եւ պարկի մը մէջ զնելով՝ իր ծառաներէն քանի մը հոգւոյ ձեռքը տուաւ, Գեեզիին հետ խորկեց: Ասիկա տուն հասած ատեն՝ անոնց ձեռքէն բաներն առաւ, զիրենք ճամբեց: Բայց Եղիսէն զինքը տեսածին պէս՝ Նեեմանին ետեւէն երթալն եւ անկէ պարգև առնելն իմացած ըլլալը յայտնելով՝ զինքն անիծեց որ Նեեմանին բորոտութիւնն իր եւ զաւկըներուն վրայ գայ: Գեեզի մէկէն բորոտեցաւ:

5. Եղիսէին գործած հրաշքներուն երեւելիներէն մէկն ալ աս եղաւ: Ասորւոց թագաւորն Խորայելացւոց թագաւորին դէմ պատերազմ՝ ըրած ատեն՝ Եղիսէ Ասորւոց թագաւորին պատերազմի վրայ մտածածներն Խորայելի թագաւորին կ'իմացընէր: Ասորւոց թագաւորը բանն իմանալով՝ զինքը բռնել տալու համար խել մը զօրք խրկեց: Չօրքը գիշերանց եկաւ Եղիսէին կեցած Գովթայիմ քաղաքը պաշարեց: Եղիսէ առտուանց դուրս ելլել որ կ'ուղէր, պատանին սկսաւ վախնալ. ան ալ՝ Մի վախնար, ըսաւ, մերիններն աւելի շատուոր են քան թէ անոնցը. եւ Աստուծոյ աղօթք ըրաւ որ ծառային աչքը բացուի: Աստուած անոր աչքը բանալով՝ տեսաւ որ Եղիսէին բոլորալքն եղած լեռները հրեղէն կառքերով ու ձիերով լեցուն են: Երբ որ թշնամիք իրենց մօտիկցան՝ Եղիսէ Աստուծոյ աղաչեց որ զանոնք շացընէ. իրօք ալ շացան, անանկ որ ոչ զինքը կը տեսնէին, ոչ ալ ուր ըլլալնին կամ ուր երթալնին գիտէին. ուստի եկան իրեն Գովթայիմ քաղաքը հարցուցին: Եղիսէ ալ՝

Եղէք զձեզ ձեր ուղած մարդուն տանիմ, ըսելով՝ առաւ զիրենք Սամարիա տարաւ. հոն Եղիսէի աղօթքովն աշուրնին բացուելով եւ իրենք զիրենք թշնամեաց քաղաքը տեսնելով՝ սաստիկ վախցան: Քայց մարդարէն անոնց կերակուր հանել տուաւ ու տեղերնին խաւրեց:

**6.** Աս ըլլալէն ետեւ Ասորոց թագաւորը Ադերայ որդին Սամարիան պաշարեց, եւ աս պատճառաւ սովը խիստ սաստկացաւ: Իսրայելի թագաւորը պարսպին վրայ պարտելու ատեն՝ կին մը իրեն ըսաւ թէ՛ Աւրիշ կնոջ մը հետ դաշինք դրինք որ նոյն օրը իմ աղասու տենք, ու երկրորդ օրը՝ իրենք. իմինս եփեցինք կերանք, հիմա իրենք պահէր է չիտար: Թագաւորն աս լսելով՝ սաստիկ բարկացաւ ու երդում ըրաւ որ Եղիսէին գլուխը նոյն օրը կտրել տայ. մարդ ալ խրկեց որ զինքը բռնել տայ. եւ ինքն ալ ելաւ անոր գնաց: Եղիսէ Աստուծոյ կողմանէ իրեն յայտնեց որ երկրորդ օրն առատութիւն եւ աժնութիւն պիտ'որ ըլլայ: Թագաւորին քովիններէն մէկը զրուցեց որ Աստուած երկինքը բանայ՝ ցորեն թափէ, ասանկ բան չիկրնար ըլլալ: Եղիսէն իրեն ըսաւ որ Աս բանը աչքովդ պիտի տեսնես, բայց պիտի չվայելես: Մարդարէին խօսքը կատարուեցաւ: Քաղքին դրան քով չորս բորոտ կային, որոնք ըստ օրինաց ուրիշներուն հետ հաղորդակցել չկրնալուն՝ պարսպէն դուրս կրկենային: Ասոնք մէջերնին խորհուրդ ըրին որ հոն կենալով սովէն մեռնելու տեղ՝ ելեն Ասորոց բանակն երթան, որ անոնցմէ կամ կերակուր ընդունին կամ մահերնին գտնեն: Աս

խորհրդով զիշերանց ելան Ասորոց բանակը դադրին. բայց հոն մարդ չգտան. վասն զի Աստուած բանակին մէջ անթիւ անհամար զօրքի ազմուկ ու ձայն լսել տարով՝ սրտերնին անանկ վախ ձգած էր, որ թողուցեր փախեր էին: Ասոնք հոն մէկ վրանէ մէկալ վրան մտնելով՝ կերան խմեցին, ուղածնուն չափ ալ արծաթ ոսկի ու զգեստ առին: Ետքը քաղաք դառնալով՝ բանը թագաւորին ականջը հասուցին: Անիկա առջի բերան չհաւտաց, թշնամեաց խաբէու թիւն կարծեց, եւ մարդ խրկեց որ ստուգէ: Երբ որ հաստատուեցաւ նէ՝ վազող վազողի եղան ու շատ աւար ժողովեցին. Եղիսէին մարգարէութեան համաձայն՝ ցորենն ու գարին ոչինչ գնով կը ծախուէր, եւ իր խօսքին չհաւտացող իշխանն ալ՝ քաղքին դրան վերակացու գրուելով՝ նոյն տեղը ոտքի տակ գնաց, կոխկռտուելով մեռաւ:

## Խ Ը . Գ Ա Ս

1. Եղիսէ զով խրկեց Յեուն թագաւոր օծելու համար: Ինք Գամաակոս ինչ ըրաւ: — 2. Յեու ինչպէս թագաւոր օծուեցաւ: Աստուած Աբաարին տան սպանաջածն ինչպէս կատարեց: Ազայէլ Խորայելացոց երկիրներուն ինչ փսա հասուց եւ ինչու:

1. Ասկէ տարիներով յառաջ Աստուած Եղիային հրամայած էր որ Յեու՝ Խորայելի եւ Ազայէլ՝ Ասորոց թագաւոր օծուին (Տես ԽԵ. Գաս. Թիւ 3.): Հաւանական կ'երեւայ թէ ասոնց գործադրութիւնն Եղիա Եղիսէին յանձնած ըլլայ: Ուստի Եղիսէ Աստուծոյ ազդեցութեամբն ուղեց նոյն հրամա-

նը կատարել . բայց երկուքն ալ մեկտեղ ան-  
 ձամբ չկրնայուն՝ իր աշկերտներէն մէկը կան-  
 չեց ըսաւ որ եղի ամանն առնէ Գաղապոս  
 Ռամաթ քաղաքն երթայ, Յովրամին զօրաց  
 Յէու սպարապետն առանձին տեղ մը տանի,  
 զինքն Իսրայելի թագաւոր օժէ . լմըննայէն ե-  
 տել ալ չկենայ, դուռը բանայ՝ փախչի գայ,  
 Ինքն ալ ելաւ Գամասկոս գնաց : Աղերայ  
 որդին նոյն ատեն հիւանդ ըլլալով՝ իր Ազայէլ  
 ծառան ընծաներով Եղիսէին խրկեց հարցը-  
 նելու որ պիտի առողջանայ թէ չէ : Եղիսէ  
 պատասխանեց որ Պիտի մեռնի, եւ սիրտն ել-  
 լելով՝ լացաւ : Եւրբ որ Ազայէլ լալուն պատ-  
 ճառը հարցուց, Կու լամ, ըսաւ, վասն զի գի-  
 տեմ Իսրայելացւոց գլուխը բերելու չարխրդ .  
 անոնց ամուր քաղաքները պիտի այրես, երի-  
 տասարդներն ու տղաքը թրէ անցընես : Ա-  
 զայէլ՝ Ես ո՞վ եմ, ըսաւ, որ անանկ բաներ  
 ընեմ : Եղիսէ պատասխանեց թէ Աստուած  
 ինծի յայտնեց որ դուն թագաւոր պիտի ըլ-  
 լաս : Ազայէլ դարձաւ Աղերայ որդւոյն ըսաւ  
 թէ Պիտի ռընտնաս . բայց երկրորդ օրը զինքն  
 անկողնոյն մէջ մեռցուց եւ ինք Ասորւոց վրայ  
 թագաւորեց :

2 . Իսկ Յովրամ Իսրայելացւոց թագաւո-  
 րը միտքը դնելով որ Ռամաթ քաղաքն Ասո-  
 րւոց ձեռքէն առնէ, Յուդայի Ռքոզիա թա-  
 գաւորին հետ Ասորւոց դէմ պատերազմ՝ բա-  
 ցաւ : Եւ թէպէտ նոյն քաղաքն Ասորւոց ձեռ-  
 քէն առաւ, բայց ամբողջ դեռ անոնց ձեռքն  
 էր, ինքն ալ պատերազմի մէջ ծանր վիրաւո-  
 րելով՝ ամբողջին պաշարումն յառաջ տանիլը

Յէուին թողուց Եզրայէլ գնաց: Նոյն միջոցին Եզրայէլին խրկած աշկերտը Ռամամթի մէջ Յէուն գտաւ, զինքն առանձին մտա սենեակ մը տարաւ, հոն Աստուծոյ անուամբը թագաւոր օծեց, եւ ըսաւ որ Աքաաբին տունը ջնջէ: Ասոնք ընելէն ետեւ՝ հոն չկեցաւ շուտ մը ելաւ գնաց: Յէու առջի բերան բանը ծածկել ուղեց, ետքը տեսաւ որ ծածկել չ'ըլլար՝ յայտնեց: Իր զօրապետները լսելուն պէս՝ սկսան փող զարնել ու Յէուին թագաւորելը հրատարակել: Յէու զօրքով Յովրամին վրայ քայեց: Եզրայէլ քաղքին աշտարակին վրայի դէտը հեռուէն ասոր գայը տեսնելով եւ փոշիէն ինչ ըլլալը չկրնալով որոշել՝ Յովրամին այսչափ կրցաւ ըսել որ Խել մը մարդ կու գայ: Յովրամ երկու անգամ ձիաւոր խրկեց որ երթան ինչ ըլլալն իմանան. բայց Յէու զանոնք ետ չգարձուց: Քիչ մը ետքը դէտը վերէն պուռաց թէ Ա'երեւայ որ ան բազմութիւնը բերողը Յէուն ըլլայ: Ան ատեն Յովրամ կառքը մտաւ Նաբաւթայ այգւոյն քով Յէուն բարեւեց: Քիչ մը իրարու հետ խօսելէն ետեւ՝ տեսնելով որ բանը գէշ է, փախչելու սկսաւ, բայց Յէուին նետած նետը կանրկէն մտաւ, սիրտը վիրաւորեց ու կառքին մէջ զինքը մեռած ձգեց: Այսպէսով Յովրամ իր թագաւորութեան 12երորդ տարին մեռաւ: Յէու մարմինը ետքէն Նաբաւթայ այգին նետել տուաւ:

Իսկ Յէզաբէլ Յէուին գալն իմանալով՝ երեսը գլուխը զարգարեց, ու պատուհանէն դուրս կարկառած՝ զՅէուն Չամբրի տիրա-

սպան կանչելով, անոր խօսք կը նետէր: Յէու Յեղարէին քովիններուն հրամայեց որ զինքը վար նետեն: Ասանկով Յեղարէլ ձիերու տակ կոխկոտուեցաւ մեռաւ: Եւ թէպէտ թագաւորը պատուիրեց որ մարմինը թաղեն, բայց թաղելու դացողները՝ գլխէն, ստուրներէն ու ձեռացը թաթէն ուրիշ բան չգտան, որովհետեւ շները կերած էին: Յէու Սամարիա ալ մարդ խրկեց Աքաաբին եօթանասուն որդիքը գլխատել տուաւ ու բոլոր անոր տունը ջնջեց: Ասանկով Աստուծոյ Աքաաբին տան սպառնացածը կատարեցաւ (Տես ԽԶ. Դաս. ԹԻ. 2.): Եւսքը հրովարտակ հանեց որ իր տէրու թեան մէջ որչափ քուրմ ու Բահաղը պաշտող կայ նէ՛՞ գան Բահաղին բլլալու մեծ հանդիսին ներկայ բլլան, եւ չեկողին մահ սպառնաց: Այսպէսով ամէնքն եկան, կռատունը ծայրէ ծայր լեցուեցաւ: Յէու կռատունը դրսէն 380 հոգւով պաշարեց, զօրացը խօտիւ ասպարեց որ մէջիններէն մէկը ողջ չլծողուն, զամէնքը քարդեն: Բահաղն ու կռատունն ալ կործանել տուաւ, եւ տեղը ոտից ճամբայ բրաւ: Յէու ասոնք ընելէն ետեւ՝ Աստուած իրեն բրաւ. Որովհետեւ իմ կամքս կատարեցիր՝ քու զաւկրներդ մինչեւ չորս ազգ Խորայելի աթոռը պիտի նստեցընեմ: Բայց Յէու բոլոր սրտով Աստուծոյ չճառայեց: Յերոբովամին կանգնած հորթը պաշտեց: Աստուած ալ զինքը պատժելու համար՝ զԱզայէլ ձեռք առաւ, որով Եղիսէին անոր վրայ բրած մարգարէութիւնը կատարուեցաւ, վասն զի Խորայելացւոց՝ Յորդանանէն անդին եղող երկիրներուն շատ փաս-



ներ տուաւ, քաղաքնին կործանեց եւ շատ արիւն թափեց: Յէու 28 տարի թագաւորելէն ետեւ՝ մեռաւ. անոր յաջորդեց Յովաքաղ իր որդին:

Խ Թ . Դ Ա Ս

1. Յովաքաղ ինչ ըրաւ: — 2. Յովա Նզդսէին մեռնելուն ժամ անոր եկաւ ինչ ըրաւ: Մարգարէն մեռնելէն ետեւ ինչ հրաշք գործեց: — 3. Յովա սրտանց դարձած էր: Յերոսոփամ Բ. ինչպէս թագաւոր էր: — 4. Ձաքարիայի թագաւորութիւնն որչափ տեւեց: Իր յաջորդներն որոնք են: Փակէլէին ասեանք թագաւորութեալտար եկաւ ինչ ըրաւ: Ովսէլ ինչպէս թագաւորեց: Սաղմանատար ինչու եկաւ ասար ցեղը գերի տարաւ: — 5. Իրենց երկիրները բնակող նոր գաղթականներուն ինչու ասիւծ կու գար Քուս կը հասցըներ:

1. Յ-Ն-Ի-Ն-Ի թագաւորութիւնը շատ ձախորդ եղաւ. վասն զի թէ ինք եւ թէ իր ժողովուրդը կապալաշտութիւն կ'ընէին: Աստուած զիրենք Ասորուոց Ագայէլ թագաւորին ձեռքը մատնեց, որն որ Իսրայելի զօրքն աղէկ մը ջարդեց, անանկ որ սաստիկ բազմութենէն՝ մինակ յիսուն հեծեալ, տասը կառք, 10,000 ալ հետեւակ մնաց: Ան ատեն Յովաքաղ մեղացը վրայ զղջաց, դարձաւ Աստուծոյ աղաչեց որ զինքը թշնամուոյն ձեռքէն ազատէ: Աստուած անոր աղաչանքը լսեց եւ փրկիչ մը խոստացաւ: Յովաքաղ 17 տարի կապալաշտութեամբ թագաւորելէն ետքը՝ մեռաւ ու Սամարիա թաղուեցաւ:

2. Իր որդին Յ-Ն-Ի իրեն յաջորդեց: Ասիկա Նզդսէին ծանր հիւանդնալը լսելով՝ զնաց

անոր մեռնելէն ետքը Իսրայելացւոց ունենալու ողորմելի վիճակն առջեւը դրաւ: Եղիսէ՛ Յովասին հրամայեց որ աղեղն ու նետերը բերէ: Երբ որ բերաւ ու լարեց, իր ձեռքն անոր ձեռքին վրայ դնելէն ետեւ՝ ըսաւ որ Արեւելքի կողմի պատուհանէն՝ աղեղն երկրնցընէ. վերջը զրուցեց որ նետով գետինը զարնէ: Ան ալ երեք անգամ գետինը զարկաւ. եւ որովհետեւ ան հարուածներն Աստուծով Ասորւոց դէմ՝ ընելու յաղթուիժիւններուն թիւը կը նշանակէին, անոր համար Եղիսէն երբ որ տեսաւ որ կեցաւ, նշանաւրով ըսաւ. թէ որ հինգ վեց անգամ նետելու ըլլայիր, Ասորիքը բոլորովին կը ջնջէիր, բայց հիմա երեք անգամ միայն պիտի յաղթես: Ասկէ ետքը Եղիսէ մեռաւ, ու Սամարիայի քովի դաշտին այրին մէջ՝ որն որ քաղաքացւոց գերեզմանի համար բացուած էր, թաղուեցաւ: Տարի մը ետքը երբ որ քանի մը հոգի մեռել կը բերէին՝ որ ան այրին մէջ թաղեն, տեսնելով որ Մովսարացի աւազակներ վրանին կու գան, մեռելն այրին մէջ նետեցին փախան: Մեռելը Եղիսէին ոսկրներուն դպչելով՝ մկէն ողջնցաւ ոտք ելաւ: Նոյն մարգարէին՝ Յովասին վրայ ըսածն ալ կատարեցաւ. որովհետեւ անիկա երեք անգամ Ասորիքը զարկաւ ու իր նախորդներուն ձեռքէն յափշտակուած քաղաքներուն շատերն ետ դարձուց:

Յ. Յովաս սրտանց Աստուծոյ դարձած չէր, Յերոբոզովին կանգնած հորթը կը պաշտէր ու Յուդայի Ամասիա թագաւորին վրայ նշանաւոր յաղթուիժիւն մ'ընելէն ետեւ՝ իր

Թագաւորութեան 12երորդ կամ 16երորդ տարին մեռաւ ու տեղը Յերոբոսովամ իր որդին նստաւ : Աս Յէր-բ-ւ-ւ-ւ-ւ Բ. Իորայելացւոց Թագաւորներուն ամենէն բախտաւորն ու յաղթողն եղաւ : Աստուած Իորայելի Թագաւորութիւնն Ասորւոց լծէն փրկելու համար՝ զինքը ձեռք առաւ : Յերոբոսովամ իր նախորդներուն ատեն Իորայելացւոց կորսոնցուցած քաղաքներն Ասորւոց ձեռքէն բոլոր ետ առաւ եւ Իորայելի տէրութեան առջի հին սահմանը հաստատեց : Յովնան մարգարէն աս Թագաւորին ատենն էր, անոր ընելու աշխարհակալութիւններուն եղանակն ինք կը զրուցէր եւ յաջողութիւն կը խոստանար : Բայց ասալ Յերոբոսովամ Ա.ին ճամբան երթալով՝ իր ժամանակն ալ Իորայելացւոց երկիրները կռապաշտութենէ յառաջ եկած անկարգութիւններէն ազատ չէին : Յերոբոսովամ Բ. 40 տարի Թագաւորելէն ետեւ՝ մեռաւ : Իրեն Զ-+-ւ-ւ-ւ որդին յաջորդեց : Ասով Աստուծոյ՝ Յեռութիւն բրած խոստումն՝ որ անոր զաւկրներէն մինչեւ չորս ազգ ետեւէ ետեւ Թագաւոր պիտի նստի, կատարուեցաւ :

4. Զաքարիայի Թագաւորութիւնը վեց ամիս տեւեց, վասն զի Մեղ-ւ-ւ-ւ Յարիսայ որդին զինքն սպաննելով՝ տեղն անցաւ : Ասոր Թագաւորութիւնն ալ ամիս մը տեւեց, ինչու որ Մ-ւ-ւ-ւ-ւ զինքը մեռցուց ու տեղն անցաւ : Տասը տարի ետքը ասոր ալ իր որդին Փ-ւ-ւ-ւ յաջորդեց : Բայց զինքն ալ իր Թագաւորութեան տասներորդ տարին՝ Փ-ւ-ւ-ւ իր զօրապետը սպաննեց ու Թագաւոր եղաւ : Իր

ժամանակը Ասորեստանեայց թագազաթփաղսար թագաւորն եկաւ Յորդանանէն անդին ըլլող Գաղայ, Ռուբենի ու Մանասէի կէս ցեղին երկիրներն առաւ, մէջի բնակիչներն Ասորեստան գերի տարաւ: Փակէէ 20 տարի թագաւորելէն ետքը Ուէէէ զինքը սպաննեց ու ինք թագաւոր նստաւ: Ասիկա թէպէտ չար էր, բայց իրմէ առջիններուն պէս չէր: Սաղմանասար Ասորեստանեայց թագաւորն եկաւ զինքը հարկատու ըրաւ: Ովսէէ քանի մը տարի հարկ վճարելէն ետեւ՝ Եզրիպտացւոց թագաւորին դիմեց: Սաղմանասար աս բանս իմանալով՝ զօրքով եկաւ, երեք տարի Սամարիա քաղաքը պաշարելէն ետեւ՝ առաւ: Ովսէէն ալ թագաւորութեանն իններորդ տարին՝ բռնեց շղթայի զարկաւ Ասորեստան խրկեց: Նոյնպէս բոլոր ժողովուրդն առաւ Ասորեստան գերի տարաւ, անոնց տեղ Բարեւունէն ու իր տակն եղող ուրիշ քաղաքներէն անոնց երկիրները գաղթական բերաւ: Աս մեծ չարիքն Աստուած գլուխնին բերաւ՝ զինքը թող տալով օտար աստուածներու երկրպագութիւն ընելնուն համար:

Ծ. Խորայեւացւոց երկիրներուն աս նոր բնակիչները ճշմարիտ Աստուծոյ վրայ գաղափար չունէին եւ իրեն չէին ծառայեր. Աստուած ալ իրենց բարկանալով՝ վրանին առիւծներ կը խրկէր, որոնք կու գային մէջերնէն շատերը կը սպաննէին: Աս բանս Ասորեստանեայց թագաւորին ականջն հասնելով՝ հրամայեց որ անկէ գերուող քահանայիցմէ մէկը նորէն հօն տանին, որ ան տեղի Աստու-

ծոյն կրօնն իրենց սորվեցընէ : Թագաւորին հրամանը կատարուեցաւ, քահանան եկաւ. ժողովուրդը ճշմարիտ Աստուածը ճանչցաւ եւ սկսաւ պաշտել, բայց անոր հաճոյ չկրցաւ ըլլալ, որովհետեւ ամէն մէկերնին իրենց անանին աստուած կը սեպհականէին եւ ճշմարիտ Աստուծոյ հետ միանգամայն անոնց ալ պաշտօն կը մատուցանէին :

Ծ . Գ Ա Ս

1. Յովսան սվ է. Աստուած անոր ինչ պատուիրեց. զինքն ինչու ծով նետեցին : — 2. Նինուէացիք Յովսանին քարոզութիւնն ինչպէս ընդունեցան : Անոնց դարձին վրայ Յովսան տրամեցաւ նէ՛ Աստուած զինքն ինչպէս խրատեց :

1. Յովսան, որ՝ վերը ըսածնուս պէս՝ Յերորովամ Բ.ին ատենն էր, Չարուղոնի ցեղին Գեթքորեր քաղաքը ծնաւ : Աստուած իրեն հրամայեց որ երթայ Նինուէի ընակիչներուն ապաշխարութիւնն քարոզէ : Յովսան մտածելով որ Նինուէացիք ապաշխարելու ըլլան՝ Աստուած իրենց պիտի ողորմի եւ ինք անոնց առջին սուտ մարգարէ պիտ'որ երեւայ, եւ կամ Իսրայելացւոց թշնամի ազգի մը առաքեալ ըլլալու վախնալով՝ երթալ չուզեց. միտքը դրաւ որ Թարսիս փախչի, յուսալով որ անանկ հեռու տեղ երթայ նէ՛ Աստուած իր հրամանը չիկրկներ : Այսպէսով ելաւ Յոպպէ գնաց, եւ անկէ նաւ մտաւ՝ Թարսիս երթալու համար : Աստուած ծովին վրայ մեծ ալեկոծութիւն հանեց, մինչեւ Յովսանին մտած նաւն ընկզմե-

լու մօտիկցաւ : Նաւին մէջիններն իրենց աստուածոց օգնութիւնը սկսան խնդրել . եւ նաւը թէթեւցընելու համար՝ մէջի բեռերը ծով կը ձգէին : Իսկ Յովնան նաւին մէկ կողմը քաշուած՝ կը խորդար : Եկան զինքն արթնցուցին, որ ելլէ իր Աստուծոյն աղօթէ : Բայց տեսնելով որ ան ալ օգուտ չ'ըներ, իմանալու համար թէ որո՞ւն պատճառաւ աս չարիքը զլուխնին կու գայ, մէջերնին վիճակ ձգեցին, եւ վիճակն Յովնանին էլաւ : Իրեն հարցուցին թէ ո՞վ է եւ ո՞ւր կ'երթայ : Յովնան Աստուծոյ ձեռքէն փախչիլն անոնց խօստովանեցաւ : Աս լսելով՝ ինչ ընելիքնին չէին զիտեր : Եւ թէպէտ Յովնան իրենց ըսաւ որ զինքը ծով նետեն, բայց անոնք չուզելով՝ կը ջանային ցամաք մօտենալ : Աւերջապէս բռնեցին զինքը ծով ձգեցին, ծովն ալ մէկէն խաղաղցաւ : Իսկ Աստուծոյ նախախնամութիւնը մեծ ձուկ մը պատրաստած էր, որն որ շուտ մը եկաւ Յովնանը կլլեց : Յովնան ասոր փորին մէջ երեք օր երեք զիշեր կեցաւ եւ Աստուծոյ օրհնութիւն կ'երգէր :

2. Նոյն երեք օրն անցնելէն ետեւ՝ ձուկը զինքը ցամաք հանեց, եւ Յովնան նորէն Աստուծաւ հրաման առնելով՝ զնաց Նինուէի մէջ քարոզեց, որ երեք օրէն նոյն քաղաքը պիտի կործանի : Նինուէացիք անոր հաւատացին, ու թագաւորնին՝ որն որ հաւանականաբար Սարգանապաղին հայրը Փուան էր, աթոռէն իջաւ, քուրձ հագած՝ մոխրի վրայ նստաւ, եւ հրաման տուաւ որ ամէնքը մեծ ու պզտիկ ծով բռնեն եւ ապաշխարեն : Աստուած

Նինուէացւոց ապաշխարութեան նայելով՝ սպառնալիքը չկատարեց: Ան ատեն Յովնան արամած՝ Աստուծոյ ըսաւ. Ես գիտէի որ դուն զղջացողին թողութիւն կու տաս, եւ անոր համար կ'ուզէի փախչիլ՝ որ սուտ ըսող չերեամ, ինչպէս հիմայ երեւցայ. ուստի գունէ կեանքս առ, որ ազատիմ: Աստուած անոր բնակութեան քովը դդմենի մը բուսցուց, որ շուտ մը մեծնալով՝ տերեւներովը վրան շուք կ'ընէր: Բայց երկրորդ առտուն որդ մը խրկեց, որ դդմենին արմատէն կտրեց ու չորցուց: Ասով Յովնան արեւէն սաստիկ տանջուելով եւ դդմենւոյն վրայ արտմելով՝ Աստուծոյ աղաչեց որ մեռնի երթայ: Աստուած ալ անոր ըսաւ. Եթէ դուն դդմենւոյ մը համար՝ որն որ մէկ դիչերուան մէջ ինք իրեն բուսաւ ու մէկ դիչերուան մէջ չորցաւ, այսչափ ցաւեցար, հապա ես ինչպէս ասանկ մեծ քաղքի մը չորորմիմ, որուն մէջ 120,000 անմեղ տղաք կան:

## Ծ Ա . Դ Ա Ս

1. Տօբիթ ո՛վ է. իր եղբայրսիրութեան գործքերն որոնք են. աչքն ինչպէս կորցաւ: — 2. Սարբա ո՛վ է եւ ինչու նախատուեցաւ: — 3. Տօբիթ Տուբային ինչ խրատ տուաւ: Տուբիա Գարայելին քովի ստակն երթալու առնելու՝ իրեն զո՛վ ուզեկից դտաւ: Ճամբան ինչ հանգիստեցաւ: Սարբան ինչպէս կին առաւ: — 4. Տօբիթին աչքն ինչպէս բացուեցաւ: Չմեռած՝ ինչ մարգարեացաւ. քանի տարւան մեռաւ: Տուբիան հորը մահուանէ ետեւ ինչ ըրաւ:

1. Սամարիա առնուելէն ու Խորայելի թագաւորութիւնը վերնալէն ետեւ՝ Սաղմանասարին ձեռքէն պրծիլ կրցող Խորայելացիներէն

ոմանք Եզդիպոսս փախան, իսկ ոմանք Յու-  
 դայի երկիրն եկան եւ հոն կամաց կամաց առ-  
 ջի կրօններնուն դառնալով՝ ճշմարիտ աստուած-  
 պաշտութեան սկսան: Ասորեստան գերի գա-  
 ցողներուն մէջն էր Տովբիթ: Ասիկա Նեփ-  
 թաղիմի ցեղէն էր, Աստուծոյ օրէնքը ճիշդ  
 կը պահէր եւ կնոջը Աննային հետ մեկտեղ  
 Տուբիա որդին Աստուծոյ երկիւղին մէջ ա-  
 ղէկ կը կրթէր: Ասիկա գերութեան ատենն  
 ալ ճշմարիտ աստուածապաշտութիւնը ձեռքէ  
 չթողուց. անոր համար Աստուած զինքն օր-  
 հնէլով՝ Սաղմանասարին առջեւը շնորհք գտաւ  
 եւ անոր տան հազարապետն եղաւ, որով կրք-  
 ցաւ հետն ըլլող ազգակիցներուն շատ բարկը  
 բնել: Անօթի ըլլողը կը կերակրէր, զգեստ  
 չունեցողին զգեստ կու տար, պարսպէն դուրս  
 նետուած սպաննուած ազգակիցները կը վեր-  
 ցնէր կը թաղէր: Անգամ մ'ալ Մարաց  
 Հռազաւ քաղաքն իր ազգակցացն այցելու-  
 թեան ելլելով՝ անոնցմէ Վարայէլ անունով  
 մէկու մը տասը քանքար արծաթ փոխ տուաւ,  
 զրով խոստում առնելով՝ որ կրցած ատեն  
 ստակն ետ դարձնէ: Իր ընկերսիրութիւնն  
 ամենէն աւելի Սենեքերիմին ատենն երեւցաւ:  
 Ասիկա Ասորեստան գտնուող Խարայէլացւոցմէ  
 շատերն սպաննելով՝ Տովբիթ անոնց մարմինը  
 գիշերները գաղտուկ կը թաղէր: Թագաւորն  
 աս բանս իմանալով՝ զինքն ալ բռնել մեռցը-  
 նել ուզեց: Տովբիթ հարկադրեցաւ ամէն բան  
 թողուլ շուտ մը փախչիլ. իր բոլոր ինչքն  
 ու ստացուածքը տէրութիւնը դրաւ եց: Բայց  
 յիսուն օր չանցած՝ Սենեքերիմ սպաննուելով



ու տեղը Ասորդան անցնելով, Աբիաբարոսին միջնորդութեամբը, որն որ իր եղբօրորդին ու Ասորդանայ պաշտօնատէրն էր, կրցաւ նորէն նինուէ գալ ու իր ստացուածքը ձեռք բերել:

Տովբիթ մինչեւ իր 70երորդ տարին ասանկ եղբայրսիրութեան գործքերը շարունակեց: Նոյն հասակին՝ Աստուած իր համբերութիւնը փորձեց: Պենտեկոստէի օր մը՝ որ մեծ խնջոյք կ'ընէր, սեղանի շնատած՝ որդին խրկեց որ երթայ նայի իր ազգէն աղքատ մը գանէ նէ՛ առնէ բերէ: Տղան դարձաւ պատմեց որ Իսրայելացւոյ մը մեռելը հրապարակը մնացեր է: Տովբիթ մէկէն տեղէն ցատքեց, զնաց անոր մարմինը դաղտուկ տուն բերաւ պահեց, իրիկուան դէմ լուացուեցաւ նստաւ կերակուր կերաւ: Արեւը մտնելէն ետեւ՝ մեռելը տարաւ թաղեց, ու գիշեր ատեն յոգնած ետ դարձաւ. բայց ըստ օրինաց պղծուած սեպուելուն՝ տուն չմտաւ, գաւթին պատին տակը երեսը բաց պառկեցաւ: Նոյն տեղը ճնճղուկներու ձագերը բաց աչքին վրայ տաք տաք ծրտելով՝ աչուրները կոյրցան: Բժիշկներուն շատ ստակ տուաւ, բայց օգուտ մը չըրաւ: Աւերջապէս անանկ աղքատցաւ, որ հարկադրեցաւ մինակ կնոջը ձեռագործովն ապրիլ: Այսու ամենայնիւ Աստուծոյ երկիւղը սրտէն չէլաւ: Անգամ մը կնոջը մանածն առնողներէն մէկը այծի ձագ մը պարզեւ տուաւ: Տովբիթ անանոյն ձայնն առնելով եւ կարծելով որ գողունի բան է, կինը կը ստիպէր որ տիրոջը դարձնէ: Աինը հազիւ կրցաւ զինքն համոզել ու հանդարտեցընել:

2. Նոյն ատենները միանգամայն լրած էր Տովրիթ Մարաց Եկբատան քաղաքը բնակող Հաագուէլ ազգականին Սարբա աղջրկանը պատահածը, որն որ իր սրտին մեծ վէրք կ'ըլլար, եւ անոր համար Աստուծոյ օգնութիւն կը խնդրէր: Աս աղջիկն եօթն անգամ կարգուելով՝ եօթն անգամ ալ հարսանեաց առջի գիշերը զինքն առնող երիտասարդը սատանան կը խղդէր: Ասով խեղճ աղջրկան անունը պարագայ տեղ աւրուեցաւ, անանկ որ անգամ մը երբ որ հօրը աղախինները կը յանդիմանէր, անոնք զինքը նախատեցին ըսելով՝ Եօթը հոգի խղդեցիր, երանի՛ թէ դուն ալ մեռնէիր, որ քու զաւկրներդ չտեսնէինք: Սարբայի սիրան ելլելով՝ Աստուծոյ գիմեց:

3. Աստուած Տովրիթին ու Սարբային ազօթքը լսեց ու Ռափայէլ հրեշտակապետին ձեռքով երկուքին խնդիրն ալ կատարեց: Տովրիթ ինք զինքը մեռնելու մօտ կարծելով՝ Տուրիա որդին կանչեց, խրատեց. Մրդեակ, ըսաւ, մայրդ մ'անարդէր, անոր քեզի համար քաշած ցաւերը յիշելով՝ ուղածն ըրէ: Միշտ զԱստուած աչքիդ առջեւն ունեցիր. չըլլայ որ օրինաց մէկ մնասին մէջ պակսելով՝ զինքը վշտացընէս: Ունեցած ինչքիդ համաձայն ուղորմութիւն տուր, շատ է նէ՛ շատ, քիչ է նէ՛ քիչ. երեսդ աղքատէն ամենեւին մի դարձրնէր, որպէս զի Աստուած ալ երեսը քեզմէ չդարձրնէ: Ինչ որ չէս ուզեր որ ուրիշը քեզի ընէ՛ նոյնը դուն ալ ուրիշին մ'ընէր. իմաստնոյն խորհուրդ հարցուր, անոր տուած խորհուրդը մ'արհամարհէր: Աղքատնալիւս

վրայ մի արտմիր . թէ որ Աստուծոյ կը վախնաս , անոր ուղածը կ'ընես , մեղքէ կը զգուշանաս , ստուգիւ ինչքդ ու ստացուածներդ նորէն ձեռքդ կ'անցնին : Նոյն ատեն միանգամայն Գարայելին տուած ստակն անոր իմացընելով՝ հրամայեց որ երթայ առնէ . եւ Գարայելէն առած թուղթն իրեն տալով՝ ըսաւ որ երթայ վարձքով ընկեր մը գտնէ եւ անոր հետ ճամբայ ելլէ : Տղան զնաց մէկը գտնելու . մէկէն Ռափայէլ հրեշտակապետն առջին ելաւ Ազարիային կերպարանքովը , որն որ Տովբիթին Անանիա ազգականին տղան էր : Տուրիա անոր սլ բլայը չգիտնալով՝ հարցուց որ Հետս Մարաց երկիրը Հռագաւ քաղաքը կու գաս , ճամբան գիտես : Ան ալ չէ թէ միայն յանձն առաւ , հուզա միանգամայն ըսաւ որ Գարայելն ալ կը ճանչնայ : Տուրիա հօրն ուղելովն օտարականը տուն բերաւ : Տովբիթ իմանալով որ Անանիային որդին Ազարիան է , ուրախացաւ ու որդին սիրով անոր յանձնեց , եւ իրեն՝ ուտելու կերակրէն զատ՝ օրը դրամ մը վարձք խոստացաւ . ըսաւ ալ որ Եթէ ողջ առողջ գառնալու բլայք՝ վրան աւելի բան կու տամ : Ասանկով երկուքը մէկտեղ ճամբայ ելան :

Օր մը Տիգրիս գետին քովը հանգչած ատեննին՝ Տուրիան գետը լուացուելու զնաց : Մէյ մ'ալ մեծ ձուկ մը վրան յարձակելով՝ խեղճ պատանին սարսափեցաւ . բայց հրեշտակէն քաջալերուած՝ անոր խօսքին անսալով՝ ձուկը բռնեց ցամաք հանեց , փորը բացաւ , սիրաւ , լերդն ու լեղին հանեց սրահեց . իսկ

ձուկը խորովեցին, կերան: Ետքը ճամբանին յառաջ տանելով՝ երբ որ Եկրատան քաղաքը մտիկցան, հրեշտակն անոր ըսաւ որ Այսօր քու ազգականդ՝ Հաագուելին տունը պիտի հանդչինք. նայէ որ անոր Սարրա աղջիկը քեզի կնութեան առնես: Տուրիան անոր եօթն այր առնելն ու եօթն ալ մեռնելն յառաջ բերելով՝ չուզեց. բայց հրեշտակը զինքն ապահովցուց որ իրեն փասս մը չ'ըլլար: Ասանկ խօսելով՝ քաղաք հասան, Հաագուելին տունն իջան: Հաագուէլ զիրենք սիրով ընդունեցաւ եւ երբ որ Տուրիային՝ Տովրիթայ տղան ըլլալն իմացաւ, մէկէն վիզը պլուեցաւ ու սրագաւ, եւ անոնց փառաւոր սեղան մը պատրաստել տուաւ: Կերակոյ շնտած՝ Տուրիա հրեշտակին մտքը ձգեց Սարրային վրայ խօսածնին: Հրեշտակն աս բանիս համար Հաագուելին խօսք բացաւ. ան ալ Սարրային եօթը հօգուոյ հետ կարգուիլն եւ անոնց մեռնիլը պատմեց եւ Տուրիային ըսաւ. Հիմա նստէ կեր խմէ: Տուրիան՝ Չէ, անանկ բան չ'ըլլար, ըսաւ, չորոշած՝ ուտելու չեմ նստիր: Ան ատեն Հաագուէլ Աստուծոյ ողորմութեան ապաւինելով՝ խօսք տուաւ: Ետքը նստան կերան խմեցին եւ ուրախացան: Տուրիա հրեշտակին խրատին համաձայն՝ զիշերը չարսկած՝ ձկան սիրտն ու լերդը ծխեց, եւ ետքը ինքն ու կինն աղօթքով Աստուծոյ գիմեցին: Հաագուէլ մտածելով որ կարելի է Տուրիային ալ մէկայնբուն պէս բան մը կ'ըլլայ, զնաց գերեզման մը պատրաստեց որ եթէ մեռնելու ըլլայ՝ բանը չհրատարակուած զինքը թաղէ:

Բայց երբ որ տեսաւ թէ մնաս չեղաւ, Աստուծոյ փառք տուաւ: Հարսնիքն ալ 14 օր երկրնցուց եւ Տուրիան քովէն չգատեց, ըսելով որ Աս օրերս անցնելէն ետեւ՝ ինչքիս կէսն առ գնա, եւ մեռնելէս ետքը՝ բոլորը ժառանգէ: Ան ատեն Տուրիա հրեշտակին յանձնեց որ երթայ Գաբայելին քովէն ստակն առնէ զայ: Հրեշտակը գնաց ստակը բերաւ եւ նոյն միջոցին հարսնիքին օրերն անցնելով՝ Տուրիա Հռազուելին կէս հարստութեամբը ճամբայ ելաւ:

4. Անդին իր հայրը մայրն անոր ուշանալուն համար՝ սաստիկ մամտութի մէջ էին, մանաւանդ խեղճ մայրը ոչ կ'ուտէր ոչ կը խմէր, շարունակ որդին կու լար: Բայց յանկարծ զինքը տեսնելով՝ մտիթարուեցան: Տուրիան հրեշտակին խօսքովը՝ ձկան լեղին հօրն աչքը քսեց ու բացաւ, եւ իր ճամբորդութեան պատմութիւնը կարգաւ մանրամասն պատմեց: Տովբիթ անոնք լսելով՝ փառք տուաւ Աստուծոյ, եւ եօթն օր հարսնիք ընել տուաւ: Նոյն օրերն անցնելէն ետեւ՝ Տովբիթ որդւոյն հետ գացող օտարականին ո՛վ ըլլալը չգիտնալով՝ անոր ըսաւ որ խոստացուած վարձքէն աւելի բան տայ. իսկ որդին կ'ուզէր բերած ինչքին կէսն անոր տալ: Հրեշտակն ան ատեն ինք զինքն յայտնեց, եւ երբ որ անոնք վախերնէն երեսի վրայ ինկան, զիրենք քաջալերեց ու Տովբիթին ըսաւ. Մի վախնար. Աստուած աղօթքդ լսելով ու բարեգործութիւններդ տեսնելով՝ զիս իրկեց որ անոնց փոխարէն քեզի բարիք ընեմ, զքեզ ու հարսդ բժշկելով:

ուստի զԱստուած օրհնեցէք: Ասոնք ըսաւ՝  
աներեւոյթ եղաւ: Տօբիթ ասոր վրայ երկայն  
ատեն խաղաղութեամբ ապրելէն ետեւ՝  
երբ որ մեռնելուն օրն հասաւ, որդին կանչեց,  
արդարութեան ու ողորմութեան վրայ խրատ  
տուաւ: Ետքը Նինուէի կործանումը մարգա-  
րէացաւ, եւ պատուիրեց որ ելլէ Մարաց երկիրն  
երթայ<sup>1</sup>: Ասկէ զատ նաեւ Երուսաղեմի  
կործանումն ու տաճարին այրիլը մարգարէա-  
ցաւ, եւ 150 տարւան մեռաւ: Տուրիա հօրը  
խրատները բռնեց, կինն ու որդիքն առաւ  
Մարաց երկիրը Հաագուէլ աներին քովը գնաց,  
հոն իր աներն ու զորանչը թաղեց, անոնց  
ինչքն ու իր հօրը տունը ժառանգելէն ետեւ՝  
ինքն ալ 127 տարւան մեռաւ ու Մարաց երկիրը  
թաղուեցաւ:

1 Տօբիթին մարգարէութիւնը կատարուեցաւ. իբրև  
ձեզ բնութե 48 տարի ետքը Կիսրոսար Ա. Մարաց  
թագաւորը, Նարուպազասը՝ որն որ ետքէն Բա-  
բելոնաց թագաւոր եղաւ, ու Պարսը՝ որն որ  
ետքէն Հայոց թագաւոր եղաւ, ձկ եղած՝ Աստ-  
րեստանեայց թագաւորութիւնը վերջուցին եւ  
անոր գլխաւոր քաղաքը Նինուէն կործանեցին:

Յոսոբայի Ռաֆայելիան, որն որ 20 Ռաֆայելիան 387 Կոստանտնուպոլիս

Ծ Բ . Գ Ա Ա

1. Յուզայի թագաւորութեան սահմանն որն է եւ քանի տարի Աստուծոյ մասնաւոր օրհնութիւնը գտաւ : Ռոբոլամ եւ իր ժողովուրդը կրօնի մէջ թոյլնալուն համար ինչ պատիւ գտան : Ռոբոլամ քանի տարի թագաւորեց : — 2. Արիստին՝ Յերոբոամայ հետ բրած պատերազմն յաջող դնաց : — 3. Ասա ինչ բարեկարգութիւն բրատ : Զարեհին ինչպէս յաղթեց : — 4. Բաասա Ռամայի բոլորտիրն ինչպէս պատ քաշել կուգէր . ինչէն արգելուեցաւ : Ասա ինչ պակասութիւն բրատ եւ ինչպէս մեռաւ : — 5. Յովսափատ ինչպէս թագաւոր էր . ինչ բարեկարգութիւններ բրատ : Ինչ յանցանք գործեց : — 6. Ամնացուց ու Մովսարացուց ինչպէս յաղթեց : Աստուած Եղիազարին մեռքովն իրեն ինչ բրատ : Քանի տարւան մեռաւ :

1. Յուզայի թագաւորութեան սահմանն էր, հարաւէն՝ Եղիազարի հեղեղատը եւ Եզամայեցուց երկիրը, արեւելքէն՝ Մեռեալ ծովը, արեւմուտքէն՝ Միջերկրական ծովն ու Փղտացուց երկիրը, հիւսիսէն՝ Իսրայելի թագաւորութիւնը :

Ռոբոլամ 41 տարւան էր թագաւորելու սկսաւ նէ : Իր ատենը՝ Յուզայի թագաւորութիւնն երեք տարի մասնաւորապէս օրհնութիւն գտաւ, եւ նոյն տարիները թէ ինք թէ իր ժողովուրդը Գաւթի պէս Աստուծոյ ծառայելուն՝ ամէն կողմանէ խաղաղ էին . նոյն

միջոցին զանազան քաղաքներ եւ անոնց համար համբարանոցներ շինեցին: Իսրայելի Թագաւորութեան մէջէն Ղեւտացիք ու քահանայք Յուդայի երկիրն եկան բնակեցան. նմանապէս Յերոբուամին կանգնել տուած կուռքին երկրպագութիւն ընել չուզողները բոլոր հոն եկան: Այսպէսով Յուդայի Թագաւորութեան հպատակներն աւելցան: Բայց ետքը Թէ Ռորոբամ եւ Թէ իր հպատակները սկսան կամաց կամաց Թոյլնալ. ան ստտիճան հասան, մինչեւ ամէն տեսակ հեթանոսական պղծութիւններ գործեցին: Աստուած անոնց բրածին պատիժը չուշացուց: Ռորոբամայ Թագաւորութեան հինգերորդ տարին Սովակիմ Եգիպտացուց Թագաւորը շատ զօրքով վրանին եկաւ, անոնց ամուր քաղաքներն առնելէն ետեւ՝ Երուսաղէմն ալ պաշարեց, առաւ. տաճարն ու Թագաւորական զանձը Թալեց: Սակայն եւ այնպէս Ռորոբամ բռնած չար ճամբան շարունակեց. միանգամայն իր Թագաւորութեան ատենը միշտ Յերոբուամին դէմ պատերազմ կ'ընէր: Աս կերպով 17 տարի Թագաւորելէն ետքը՝ մեռաւ, տեղը Աբիաս որդին անցաւ, որն որ իր 28 եղբարց մէջ հօրն ամենէն սիրելին էր:

Չ. ԱՔԷ-- ալ սրտանց Աստուծոյ չժառայեց: Իր Թագաւորութեան երկրորդ տարին Յերոբուամայ դէմ պատերազմ բացաւ. 400,000 հոգւով Սամարիա լերան վրայ բանակեցաւ. Յերոբուամ ալ 800,000 հոգւով դաշտի վրայ էր: Աբիաս՝ լերան վրայէն Յերոբուամին զօրքն յորդորեց որ Պաւթի Թագաւորութեան տակ



մտնեն ու ճշմարիտ Աստուածն իր տաճարին մէջ պաշտեն : Յերոբոսիւմ աս միջոցիս իր զօրքին մէկ մասն Արիասին կանակն անցուց, ու զինքն առջեւէն ետեւէն պաշարեց : Արիաս Աստուծոյ ապաւինած՝ հետերնին զարնուեցաւ . Աստուծոյ յաջողելովն Իսրայելացւոցմէ 5000 հոգի վերաւորեց, խել մ'ալ մեռցուց, ձեռքերնէն շատ քաղաքներ ու գեղեր առաւ : Արիաս երեք տարի թագաւորելէն ետքը մեռաւ եւ Ասա որդին իրեն յաջորդեց :

**3.** Ասա թագաւորութեան աղէկ սկիզբ բրաւ . իր երկիրներուն մէջ եղած կուռքերն ու անոնց սեղաններն եւ տաճարները կործանեց, բոլոր ժողովրդեան պատուիրեց որ իրենց հարց Աստուածը պաշտեն, անոր պատուիրանները պահեն . մինչեւ իր մայրը Մասպան՝ կռասպաշտութիւն ընելուն համար տիկնութեանէն հանեց : Աստուած ալ իրեն տարիներով խաղաղութիւն տուաւ : Ասա ան միջոցին տէրութեան երեւելի քաղաքներն ամրացուց, նոյնպէս նորոգութիւն պէտք եղած տեղերն ալ նորոգեց : Աս ամէնը լմնցընելէն ետեւ՝ զօրք ժողովելու ետեւէ եղաւ . Յուդայի երկրին մէջ 300,000 վահան ու նիզակ ունեցող զօրք դրաւ, Բենիամինի երկրին մէջ ալ 260,000 հոգի : Թագաւորութեանը 15երորդ տարին Եթովպացւոց Չարեհ թագաւորն անոր զօրքին գրեթէ կրկին բազմութեամբն իրեն դէմ եկաւ : Ասա անոր դէմ պատերազմ՝ չսկսած՝ աս աղօթքն բրաւ . Տէր, շատով կամ քիչով յաղթելը քու առջեւդ նոյն բան է . ուստի մեզի օգնութեան հասիր, ինչու որ յոյսերնիս

քու վրայ դրած ենք : Աստուած անոր աղօթքը լսեց . Եթե վրացւոց զօրքին վրայ վախ ձգելով՝ զանսնք իր ժողովրդեան ձեռքը մատնեց : Ասա Եթե վրացիքն աղէկ մը ջարդեց , եւ անբաւ սակի արծաթ ու առատ աւար առած՝ ետ դարձաւ : Յաղթանակաւ Լշրուսաղէմ մտածօրը՝ տաճարին առջև ի սեղանին վրայ անհամար ողջակէզ մատոյց , Աստուծոյ հաւատարիմ մնալու համար դրած ուխտերնին նորոգեց : Ասային հրամանաւը բոլոր իր հպատակներն առ հանդիսութեան ներկայ էին . մէջերնին Լփրեմի ու Մանասէի ցեղէն ալ շատ մարդիկ կային , որոնք Աստուծոյ Յուդայի հետ բլալը տեսնելով՝ անոր կողմն անցած էին :

4 . Իսրայելի Բաասա թագաւորն Ասային յաջողութիւններուն վրայ նախանձելով՝ Ռամա քաղաքին բոլորափրք պատ քաշել եւ անիկա ամրացրնել ուզեց , որպէս զի Յուդայի երկրէն իր երկիրը մտնելու անցքը բոլորովն դոյշէ : Ասա տաճարին ու թագաւորական զանձին մէջ որչափ որ սակի արծաթ կար՝ բռնեց Ասորւոց թագաւորին Ադերայ որդւոյն խրկեց , աղաչելով որ իր ու անոր տէրութեան մէջ եղած գաշինքը նորոգէ , իսկ Բաասայ հետ դրած գաշինքը քակէ : Ադերայ որդին ընծաներն առաւ եւ անոր խնդիրքը կատարեց : Բաասա ասոր լուրն առաւ նէ՝ Ռամայ պատրկիսկատար թողուց ելաւ գնաց : Առանկով Ռամա Ասային ձեռքն անցաւ , եւ անիկա ամրացրնելու համար Բաասայ բերած քարովն ու փայտով Գարաան ու Մարման ամրացուց : Բայց Ասորւոց թագաւորին դիմելովն Աստու-

ծոյ վրայ անխտահաւթիւն ցուցուցած ըլլալով՝ Աստուած իրեն նեղացաւ . իսկ Ասա նոյն բանն Աստուծոյ կողմանէ իրեն ծանուցանող մարդարէին վրայ սաստիկ կատաղելով՝ զինքը բանտարկեց : Ուրիշ շատ բռնութիւններ ալ ըրաւ . Բասասայ հետ շարունակ թշնամութեան մէջ էր : Իր թագաւորութեան 39երորդ տարին ոտքի ցաւի հիւանդութեան մէջ իյնալով՝ 41 տարի թագաւորելէն ետքը՝ նոյն հիւանդութեամբ մեռաւ :

Ճ. Ասայի յաջորդն եղաւ իր որդին Յուսուս, որն որ Գաւթի ճամբան բռնեց, յոյսը Աստուծոյ վրայ դրաւ եւ Աստուծոյ օրինաց համաձայն կեանք անցուց, անոր համար ալ Աստուած միշտ հետն էր : Յովսափատ ամենայն ճիգն ի գործ դրաւ կռապաշտութիւնը բոլորովին ջնջելու : Իր թագաւորութեան երրորդ տարին բոլոր տէրութեան քաղաքներն ու գեղերը քահանաներ խրկեց, Աստուծոյ օրէնքներն ամենուն սորվեցընել տուաւ : Ինք ալ անձամբ իր երկիրներուն այցելութեան ելաւ, զամէնքն յորդորեց որ Աստուծոյ հաւատարիմ մնան, ամէն մէկ քաղքին զատ զատ դատաւոր գնելով՝ անոնց խրատ տուաւ որ պարտքերնին աղէկ կատարեն : Ասանկ բարի նախանձին համար Աստուած անոր տէրութիւնն ամրացուց, հարստութիւն ու փառք տուաւ, անանկ որ բոլոր սահմանակից տէրութեանց ահաւոր եղաւ ու անոնցմէ մէկն իր երկիրներուն վրայ գալ չէր յանդգներ : Միայն իր Յովրամ որդին Աքաաբին Գողոզիա աղջկան հետ կարգեց, եւ աս բանս իրմէ ետքը

Եկող թագաւորաց զլուխը մեծ չարիք բերաւ : Յովսափաս Աքաարին խնամի բլլալով՝ հետը պատերազմի գնաց, որուն մէջ քիչ մնաց որ պիտի մեռնէր (Տե՛ս ԽԶ. Գաս. Թիւ 4.) : Գարձաւ Երուսաղէմ՝ Եկաւ նէ, Յէու մարգարէն գիմնացն ելաւ՝ Աքաարին հետ խնամու թիւն ընելուն եւ անոր օգնելուն վրայ Աստուծոյ բարկութիւնն յայտնեց, եւ մահու ընէ ազատելուն պատճառ բերաւ՝ Աստուծոյ՝ ծառայելն ու կռապաշտութիւնը վերցնելը :

6. Ասկէ ետեւ Ամնացիք ու Մովաբացիք անթիւ անհամար բազմութեամբ Յովսափասին վրայ քալեցին : Յովսափաս Աստուծոյ դիմեց ու հրամայեց որ ամէնքը ծով՝ բռնեն : Յուդայի ժողովուրդն արք եւ կանայք աղաքնին հետերնին Երուսաղէմայ տաճարն եկան ժողվեցան, Յովսափաս իրենց մէջ կեցած՝ Աստուծոյ աղօթք բրաւ : Նոյն ատեն Ողիէլ անունով Ղեւտացւոյ մը վրայ Աստուծոյ հոգին գալով՝ ժողովրդեան քաջալերութիւն տուաւ եւ Աստուծոյ կողմանէ խոստացաւ որ թշնամին պիտի յաղթեն : Երկրորդ առտու Յովսափաս՝ թշնամոյն գիմնացն երթալու ատեն՝ ժողովուրդն յորդորեց որ Աստուծոյ ապաւինին եւ անոր մարգարէներուն հաւտան. երգիչներուն ալ հրամայեց որ դաս դաս բաժնուին, ժողովրդեան առջեւէն միաբան աս երգն երգեն, Խոստովան եղերուք Տե՛առն՝ զի յաւիտեան է ողորմութիւն նորա : Աս երգեցուելու ատեն՝ Աստուած անդիէն թշնամեաց զէնքերն իրենց դէմ գարձուց, եւ այսպէս սկսան մէկզմէկ ջարդել : Յովսափասայ զօրքը

բարձր տեղւոյ մը վրայէն հեռուանց տեսան որ գետինը դիերով ծածկուեր է, անմիջապէս թշնամւոյն բանակը վազեցին. երեք օր աւար առնելէն ետեւ՝ ուրախութեամբ՝ քնարով, տաղով ու փողով Երուսաղէմ տաճարն եկան: Ասով իրենց մերձաւոր ազգերուն վրայ աւելի վախ ձգեցին:

Աս յաղթութենէն ետքը Յովսափատ՝ Իսրայելի Ռքողիա ամբարիշտ թագաւորին հետ բարեկամութեան դաշինք դրաւ ու երկուքը մէկտեղ նաւ մը շինեցին, որն որ Թարսիս պիտի երթար դար: Աստուած անոր Ռքողիային հետ բարեկամանալուն վրայ բարկացաւ. շինած նաւին Թարսիս չհասած խորտակելիքն իմացուց: Յովսափատայ թագաւորութիւնը 25 տարի տեւեց:

## Ծ Գ Պ Ա Ս

1. Յովսափ ինչպէս թագաւոր էր: Եղիային նամակին խօսքերն ինչ կերպով կատարուեցան: — 2. Ռքողիա ինչպէս թագաւոր էր: Գողողիա ինչու թագաւորական ցեղ ընկեց: — 3. Յովսափ ինչպէս թագաւորեց: Ըրած շարեացը պատժն ինչպէս տուաւ: — 4. Ամասիա Եղովթայեցւոց ինչպէս յաղթեց: Մարգարէի մեռքով Աստուած իրեն ինչ ըսաւ: Ամասիա Յովսափն ինչպէս յաղթուեցաւ:

1. Յ-Լ-Մ Յովսափատայ որդին՝ որն որ հաւանականաբար հօրը վերջին ատեններն անոր թագաւորութեան բարձակից էր, շատ իշխաններով մէկտեղ իր վեց եղբարքը մեռցուց՝ որոնց որ Յովսափատ մեծ հարստութիւն ու ամուր քաղաքներ տուած էր, եւ առանձին

սկսաւ թագաւորել: Եղիա ասոր նամակ մը խրկեց<sup>1</sup>, որուն մէջ այսպէս գրած էր. Հօրդ չհետեւեցար, հապա Խորայելի թագաւորնե-  
րուն ճամբան բռնեցիր. Յուդան նորէն կռա-  
պաշտ բրիր ու եղբարբդ՝ որոնք քան զքեզ ա-  
ղէկ էին, սպաննեցիր: Անոր համար որդւոցդ  
ու ժողովրդեանդ վրայ մեծ շարիք պիտի գայ,  
դուն ալ ծանր հիւանդութեամբ պիտի մեռ-  
նիս: Եղիային խօսքը կատարուեցաւ: Նախ  
Եղոմայեցիք իրմէ ապստամբեցան ու առան-  
ձին թագաւոր նստուցին: Յովրամ թէպէտ  
վրանին գնաց, բայց բան մը չկրցաւ ընել:  
Նոյնպէս Փղշտացիք ու Արաբացիք ոտք ելան,  
Յուդայի երկիրներն արշաւեցին ու կողոպ-  
տեցին, մինչեւ նաեւ Երուսաղէմ մտան, Յով-  
րամին ապարանքը կողոպտեցին, կինն ու որ-  
դիքը գերեցին եւ միայն անոր Աքոզիա պզտիկ  
տղան ձգեցին: Յովրամ ալ ծանր հիւան-  
դութեամբ օրէ օր տկարանալով՝ վերջապէս  
մեռաւ ու թը տարի թագաւորելէն ետքը:

2. Յովրամին Առաջին որդին իրեն յա-  
ջորդեց: Ասոր խորհրդականները՝ որոնց մէկն  
ալ էր իր մայրը Գողոզիան՝ շար ըլլալուն,  
Արաբին ճամբան բռնեց. բայց շատ չթա-  
գաւորեց. տարիէ մը Խորայելի Յովրամ թա-

1 Յայտնի չէ որ աս բանս ինչպէս եղաւ, որովհե-  
տեւ Եղիա արդէն շատոնց հրեղէն կատարով եր-  
կինք ելած էր: Կ'երեւոյ որ աս նամակը կամ յա-  
ռաջագոյն գրած ու Եղիսէին կամ մէկ ուրիշի մը  
յանձնած էր, որ ետքէն Յովրամին ձեռքը արուի,  
եւ կամ Աստուծոյ զինքը տարած տեղէն նամակը  
գրեց ու մէկու մը երեւնալով տուաւ որ թագա-  
ւորին տանի:

գաւորը տեսնելու դացած ըլլալով, Յէու՝ զնոյն թագաւորը մեռցընելէն ետեւ (Տես ԽԸ. Դաս. Թիւ 2.) զինքն ալ սպաննել տուաւ: Գողոզիա թագաւորութիւնն իրեն պահելու համար՝ արքունական ջեղը բոլոր քնջել տուաւ, մինակ Աքոզիային մէկ տարւան Յովաս որդին ձեռքէն ազատեցաւ. որովհետեւ Յովարէթ Աքոզիայի քոյրն ու Յովիդայէ քահանայապետին կնիկը, զինքն իր դայեկովը փախուց, վեց տարի տաճարին մէջ Յովիդայէին քով պահեց: Գ. Գ. Գ. իր բաղձանքին հասնելով՝ կռապաշտութիւնը հաստատեց, Աստուծոյ տաճարը կողոպտեց, անոր գանձը կռոց տաճարներ զարդարելու գործածեց:

**Յ.** Յ. Գ. Գ. եօթը տարւան եղաւ նէ՝ Յովիդայէ զօրապետներն ու զօրքը եւ Ղեւտացիները կանչեց, զինքն անոնց ցուցընելով՝ յորդորեց որ իրենց թագաւոր ճանչնան: Ետքը ամենուն առջեւը զինքը պսակեց, եւ օրինաց գիրքը գլխուն վրայ դնելով՝ Աեցցէ՛ արքայ, պռւաց: Մէկայնօնք ալ իրեն նայելով՝ նոյնը կրկնեցին: Գողոզիա առ ձայնն առնելով՝ իր մարդիկներովը տաճար վազեց: Հոն երբ որ Յովասը թագաւոր պսակուած տեսաւ, զգետար պատռեց ու Գաւաճանութիւն դաւաճանութիւն, պռւաց. իսկ Յովիդայէ զօրքին մեծերուն հրամայեց որ զինքը դուրս հանեն մեռցընեն: Հրամանն ի գործ դրուեցաւ. Գողոզիա մեռաւ: Ետքը Յովիդայէ նոյն տեղը ժողոված ամբոխին հրամայեց որ Աստուծոյ հաւատարմաբար ծառայելու խօսք տան եւ անոր օրինաց համաձայն ամէն բան կարգի

դնեն: Անոնք հրամանները կատարեցին, բոլոր կռապաշտական բաները վերցուցին: Յովաս գանձանակով ժողովել տուած ստակով Աստուծոյ տաճարը նորոգեց, աւելցուկ ստրկով ալ հարկաւորեղած զգեստներ, գործիքներ ու զարդեր շինել տուաւ: Քանի որ Յովիգայէ ողջ էր՝ Յովաս բարի Յնաց. բայց անոր մեռնելէն ետեւ՝ քովի իշխաններուն շողորդութեամբը փոխուեցաւ, կռապաշտութեան սկսաւ: Ան ատեն Չաքարիա կամ Ազարիա՝ Յովիգայէին որդին ու յաջորդն՝ Աստուծոյ կողմանէ ժողովուրդն յանդիմանեց եւ սպառնալիք բրաւ: Յովաս վրան բարկանալով՝ իր բարերարին որդին տաճարին մէջ քարկոծել տուաւ: Արան շատ չանցաւ՝ թէ՛ Յովաս ու թէ՛ ժողովուրդը պատիժնին գտան: Ասորուոց Ազայէլ թագաւորը մինչեւ Երուսաղէմայ պարիսպը մտնեցաւ. Յովաս տաճարին գանձին նուիրեալ բաներէն մեծ ստրկի գումար խրկելով՝ հազիւ կրցաւ ետ դարձնել: Բայց Ազայէլ երկրորդ տարին վրան քիչ մը զօրք խրկեց, որոնք Յուդայի բազմաթիւ զօրացը յաղթեցին, զօրաց գլխաւորները մեռցուցին, ու շատ աւար առին դացին: Նոյն ժամանակը Յովաս արդէն հիւսնդ էր. քիչ մը վերջը իր մարդիկները զինքը մեռցուցին՝ թագաւորութեանը 40երորդ տարին:

4. Ա՛հ-հ- Յովասին տղան ի սկզբան Աստուծոյ հաճոյ ճամբայ բռնեց. բայց Գաւթի պէս սրտանց անոր չձառայեց: Եդոմայեցւոց դէմ պատերազմելու համար հազար արծաթ տաղանդով Իսրայելացւոցմէ 100,000 հոգի բռնեց:



Ան ատեն Աստուծոյ կողմանէ մարգարէ մ'եկաւ ըսաւ . Ո՛վ թագաւոր, Իսրայելացիները հետոյ մ'առնէր, Աստուած անոնց հետ չէ : Մի կարծեր որ պատերազմին յաջողութիւնը զօրաց բազմութենէն է : Գիտցած ըլլաս որ թշնամւոյն ձեռքը պիտի մատնուիս : Երբ որ Ամասիա հարցուց թէ Իսրայելացւոց տուած ստակս ինչ ընեմ, անիկա պատասխան տուաւ որ Գուն ան մի հոգար, Աստուած հարուստ է, անոր կրկնապատիկը քեզի կը հատուցանէ : Ամասիա աս խրատն անսաց, օգնութեան վարձած զօրքն ետ դարձուց, եւ Աստուծոյ ապաւինելով՝ իր քիչ զօրքովն ելաւ զնաց ու յաղթեց : Բայց Աստուծով զտած աս երախտեացը դէմ մեծ ապերախտութիւն ըրաւ՝ Եդոմացւոց կուռքերն առաւ պաշտեց : Աստուած մարգարէի մը ձեռքով զինքը խրատելն ետեւ՝ տեսնելով որ օգուտ չըրաւ, թողուց որ անխոհեմութեամբ վտանգաւոր գործքի մը ձեռք զարնէ : Ամասիա Իսրայելացւոց դէմ պատերազմ հրատարակեց : Յովաս՝ անոնց թագաւորն իրեն պատասխան խրկեց որ Եդոմացւոց դէմ ըրած յաղթութիւնդ զքեզ հպարտացուց . հանդարտ տեղդ նստէ : Ամասիա անոր խօսքին ականջ չկախեց, պատերազմի ելաւ ու շարաշար յաղթուեցաւ . զինքը գերի բռնած՝ Երուսաղէմ բերին, եւ աչքին առջևը նոյն քաղքին պարսպին մեծ մասը փլցընելէն ետեւ՝ ազատ թողուցին ու թագաւորական դանձէն օսկի արծաթ առին Սամարիա դարձան : Ան ատեն Ամասիային զօրքն իրեն դէմ ապստամբեցաւ . ան ալ ձեռքեր-

նէն ապատելու համար ելաւ Լաբիս քաղաքը  
 փախաւ, բայց զօրքն ետեւէն մարդ խրկեց  
 մեռցընել տուաւ թագաւորու թեանը 29ե-  
 րորդ տարին :

## Ծ Դ • Գ Լ Ս

1. Ողիա կամ Ազարիա ինչ բարեկարգութեան ըրաւ :  
 Ինչո՞ւ բորոտցաւ : — 2. Ողեային ով յաջորդեց եւ ինչ-  
 պէս թագաւորեց : — 3. Ռատան ու Բակէէ Զուգայի  
 երկիրը մասն ինչ ըրին : — 4. Եսայի Աբազին ինչ մար-  
 գարեացաւ եւ ինչ նշան տուաւ : Մարգարէութիւնն ի-  
 լաւ : Թագազօթփազար ով է ինչո՞ւ Աբազին զէժ  
 գրգռեցաւ եւ եկաւ ինչ ըրաւ :

1. Ուշի՞ որն որ Աշուի՞ ալ կը կոչուի,  
 16 տարեկան էր հօրը Ամասիային յաջորդեց  
 նէ : Ասիկա քանի մը տարի Աստուծոյ ճամբէն  
 զնաց, անոր համար Աստուած իրեն շատ յա-  
 ջողութիւններ տարով՝ անունն երեւելի ըրաւ :  
 Ողիա շատ բարեկարգութիւններ ըրաւ, Երու-  
 սաղեմի պարիսպը նորոգեց, քաղաքներ շինեց,  
 զօրաց կարգ կանոն դրաւ ու երկրագործու-  
 թիւնը ծաղկեցուց : Բայց աս բաներուս վրայ  
 հպարտանալով՝ յանգզնեցաւ մինչեւ Աստու-  
 ծոյ խունկ մատուցանելու համար բուրվառ  
 ձեռքը տաճար մտնել : Ազարիա քահանայա-  
 պետն ու թուռն քահանայով ետեւէն վազեց  
 զինքն ուղեց արդելել : Ողիա բարկացաւ ու  
 մեկէն ճակատը բորոտեցաւ. քահանայը ալ աս  
 տեսնելուն պէս՝ զինքը տաճարէն դուրս հա-  
 նեցին : Ողիային բորոտութիւնը շանցաւ ա-  
 նանկ մնաց մինչեւ որ 52 տարի թագաւորելէն  
 ետքը մեռաւ :

2. Իր որդին Յուզեմ, որն որ հօրը կենդանութեան ատեն թագաւորած էր, (որովհետեւ իր հայրը ճակատք բորտութիւն հանելէն ետքը՝ աթոռէն հրաժարեցաւ,) հօրը մահունէն ետքը՝ 25 տարւան՝ անոր աթոռը նստաւ ու 16 տարի թագաւորեց: Աստուած իր բարութեանը համար զինքն օրհնեց. բայց ժողովուրդն Աստուծոյ օրհնքները չէր պահեր:

3. Ասոր որդին Ասա՝ 20 տարւան էր հօրը աթոռն անցաւ նէ: Ասիկա Իսրայելի թագաւորներուն ճամբան բռնեց. Բահաղին եւ ուրիշ սուտ աստուածներուն երկրպագութիւն բրաւ, մինչեւ իր որդիքը զոհեց: Ասով իր հպատակներուն ալ շար օրինակ եղաւ: Իր ատենը՝ Ռասան Ասորոց ու Փակէէ Իսրայելացոց թագաւորները Յուդայի երկիրն եկան, զօրքը զարկին ու շատ թշնամութեան գործքերէն ետեւ՝ Աշուսաղէմ՝ պաշարեցին: Բայց չկրնալով առնել՝ զօրքերնին քաղքին քովերն ասոյին անդին ցրուեցին, ան տեղերէն շատ աւար ու գերի առին: Ռասան իր առածները Գամասկոս տարաւ. Փակէէ ալ՝ 120,000 հոգի ջարդեց, որոնց մէջն էր նաեւ Ամասիա՝ Աքազին որդին, 300,000ի չափ ալ կնիկ մարդ եւ տղաք գերի բռնած՝ խել մը աւարով Սամարիա կը դառնար, բայց Ավդեդ մարգարէն Ափրեմի իշխաններովն եկաւ, յորդորելով անոր մտքը դարձուց ու գերիներն արձակել տուաւ, քովի իշխաններէն սմանք՝ անոնց մէջէն մերկերուն զգեստ տուին եւ առին Արիքով տարին:

4. Մէկ կողմանէ ալ Փղշտացիք ու Ե-

դամայեցիք եկած՝ սպանութեամբ եւ աւազակութեամբ Յուդայի երկիրներուն փնաս կուտային : Աքազ ասանկ ողորմելի վիճակի մէջ եղած ատեն՝ Եսայի մարգարէն՝ եկաւ իր թշնամիներուն ջարդուիլն եւ իր երկիրներուն անոնց ձեռքէն ազատիլը մարգարէացաւ : Աս բաժը հաստատելու համար Աքազէն ուզեց որ նշան մը խնդրէ : Աքազ կեղծաւորութեամբ

1 Եսայի մարգարէն՝ որ Ամօս անունով մկու ժրդին էր, կը կարծուի թէ Ամասիայի թագաւորական ցեղէն եղած ըլլայ : Ինք Յուդայի Ողբաթագաւորին վերջին տարին զարմանալի կերպով ժր մարգարէութեան պաշտօնին կոչուեցաւ : Տաճարին մէջ զԱստուած տեսաւ, որն որ բարձր փառաւոր աթոռի վրայ նստած էր, իր բոլորտիրէ հրեշտակներ կային վեցական թեւերով, որոնց երկուքով՝ երեսներ, երկուքով սաւառներ կը գոցէին, մկու երկուքով ալ կը թռչէին ու կ'ըսէին. Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց. լի է ամենայն երկիր փառք նորա : Մարգարէն՝ Վայ ինծի, ըսաւ, զՏէր զօրութեանց կը տեսնեմ ու պիտի բերնով ըլլայուս՝ լուս կեցեբ եմ : Ընտանն սերովբէներէն մկն՝ ունելիքով սեղանէն կայծ ժր բերաւ, անոր բերնին զպցուց ըսելով՝ Ասիկա զքեզ քու պակասութիւններէդ սրբէ : Ետքը Եսայի ըսելով որ Աստուած կը հարցընէ Ձով իրկեմ ան ժողովրդեան, պատասխան տուաւ թէ Ահա տակ ես, զիս իրկէ : Աստուած ալ զինքը իրկեց եւ նայն տանէնն սկսաւ իր պաշտօնն ի գործ գնել. կ'երեւայ որ զէթ 47 տարի ժր աս պաշտօնին մէջ Քոստան ըլլայ : Կը կարծուի որ իր կեանքը Մանասէ թագաւորին ձեռքը կ'ըքած ըլլայ, որն որ զինքը բռնած զխէն վար զէպի երկայնութեան սոցցած ըլլայ : Իր մարգարէութիւններուն մէջ՝ զարեբով ետքը գալու Մեսիային գործքերը կարգաւ կը պատմուին, անոր համար Հին կտակարանի աւտարանիլ կ'ըսուի :

պատասխան տուաւ որ Չեմ խնդրեր եւ զԱտուած չեմ փորձեր: Ետայի անիկա յանդիմանեց՝ Աստուծոյ սրբմութեան ու զօրութեան չփտաահելուն համար. ետքը ըսաւ. Ատուած իր խոստումն հաստատելու համար՝ աս նշանը կու տայ. Աոյս մը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, որն որ Եմմանուէլ պիտի կոչուի: Բայց Աքաղ իր բռնած շարձամբէն չխտորեցաւ. Աստուած ալ թողուց որ թշնամիները դան իր երկիրները տակն ու վրայ ընեն: Աքաղին ճարը հատաւ. տաճարին եւ արքունի դանձուն սակին ու արծաթը ժողովեց Ասորեստանեայց թագազաթփաղսար թագաւորին խրկեց ու անկից օգնութիւն խնդրեց: Թագազաթփաղսար իր աղաչանքը լսեց, Գամասկոս գնաց, զՌասան բռնեց սպաննեց ու բնակիչքը Աւրէն խրկեց: Ետքը Յորդանանէն անդին ըլլող Խորայեւացոց երկիրներուն վրայ եկաւ առաւ եւ բնակիչքը գերի տարաւ: Յորդանանէն ասդին ըլլողներէն ալ շատ քաղաք առաւ: Ասկէ տարի մը ետքը փակէէ սպանուելով՝ Ետայի մարգարէին խօսքը ստուգուեցաւ. Աքաղին թշնամիներն երկու տարւան մէջ վերցան: Աքաղ թագազաթփաղսարը բարեւելու համար Գամասկոս երթալով՝ ան տեղաց կոոց սեղանին հանեցաւ եւ օրինակը Ուրիա քահանայապետին խրկեց, որպէս զի ըստ ամենայնի նոյն ձեւով սեղան մը շինէ: Ասեղանը շինուեցաւ ու սղնձէ ողջակիզի սեղանին տեղը դրուեցաւ: Աքաղ անկէ ետեւ սկսաւ Գամասկոսի կուռքերը պաշտել, եւ չէ թէ միայն Յուդայի քաղաքներուն մէջ.

Հասցա նաեւ տաճարին սրահին մէջ կուսք դրաւ. եւ անձամբ ան կուսց զո՛հ մատոյց, ըսելով որ Ասոնք էին զիրենք պաշտող թագաւորներուն յազթու թիւն տուողները. ես ալ ասոնց զո՛հ կը մատուցանեմ, որպէս զի ինձի ալ օգնեն: Աս ալ բաւական չէ՝ մինչեւ տաճարը գոցել տուաւ: Բայց քիչ մը վերջը պատիժն առաւ. Աստուած զթագազաթ փաղսար անոր դէմ գրգռեց: Աքաղ ո՛չ զինուց զօրութեամբ ո՛չ առատ պարգեւով զանիկա կրնալով յազթա՛հարել՝ ձեռքէն անանկ բաներ քաշեց, որ վերը յիշուած երկու թշնամի թագաւորներէն չէր քաշած: Աւերջապէս իր թագաւորութեան 16երորդ տարին՝ առանց ամենեւին ապաշխարութեան նշան մը ցուցնելու մեռաւ:

## Ծ Ե . Գ Ա Ս

1. Եզեկիա ո՛վ է. թագաւորածին պէս ինչ ըրաւ: — 2. Ասորեստանեայց հարկ չվճարել կրցաւ: — 3. Եզեկիա իր վասնդաւոր հիւանդութենէն ինչպէս առողջացաւ: — 4. Աստուած իրեն ինչո՞ւ բարկացաւ: Եսայեայ ձեռքով ինչ ըրաւ: — 5. Աստուած՝ Մանասէին տանը Յուդային ինչո՞ւ մեծամեծ շարիք սպանաց: Մանասէ ինչպէս գերի գնաց եւ ինչ կերպով ազատեցաւ:

1. Եզեկիա Աքաղին սրդին՝ Գաւթի պէս ամէն բանի մէջ Աստուծոյ Հաճոյքը կատարեց, անոր համար Աստուած միշտ հեռն էր: Թագաւոր նստելուն պէս՝ տաճարը բանալ տուաւ, քահանայից ու Ղեւտացւոց պատուիրեց որ իրենք սրբութիւն, տաճարն ալ սրբեն: Աս հրամանն ու թ օրուան մէջ ի գործ դրուեցաւ:

Եւտքը Եղեկիա քաղաքին իշխաններովը տաճար  
 եկաւ, նախ ժողովրդեան մեղաց համար՝ քառու-  
 թեան պատարագ, ետքը հազարներով ողջա-  
 կէզ մատոյց. որոնց մատչելու ատեն՝ փողով  
 ու քնարով Գաւթայ սաղմոսները կերգե-  
 ցուէր, թագաւորն ու ժողովուրդը ծնկուր-  
 ներնուն վրայ ինկած՝ Աստուծոյ երկրպագու-  
 թիւն կ'ընէին: Ան օրուքնէ սկսեալ՝ Աստու-  
 ծոյ պաշտամունքը սկսաւ շարունակուիլ: Ե-  
 ղեկիա իր տէրութեան ամէն կողմն ու Իս-  
 րայելացւոց երկիրները հրովարտակ հանելով՝  
 ամէնքը Չատկի տօնին հանդիսութեան կան-  
 չեց: Թէպէտ հրովարտակն Իսրայելի ամէն  
 քաղաքներուն մէջ ընդունելի չեղաւ, մա-  
 նաւանդ թէ Եղեկիան ծաղր կ'ընէին, բայց  
 դանուեցան սմանք՝ որ ելան եկան: Իսկ Յու-  
 դայի բնակիչքն Աստուծակ շարժեալ իրենց  
 թագաւորին հրամանին անսացին. ասանկով  
 Նրուսաղեմայ մէջ Չատկի տօնի պատճառաւ  
 մեծ բաղմութիւն եկաւ ժողվեցաւ: Հան-  
 դիսութիւնն սկսելէն յառաջ՝ Երուսաղեմայ  
 մէջ գտնուած բոլոր կուռքերը կործանեցին,  
 կտորները Աեդրոնի հեղեղատը տարին նետե-  
 ցին: Եւտքը Չատկի տօնն սկսան, եւ եօթն  
 օր կատարելէն ետեւ՝ եօթն օր մ'ալ երկըն-  
 ցուցին, անանկ որ Սողոմոնին ատենէն մինչև  
 նոյն ատեն Երուսաղեմայ մէջ անանկ մեծ ու  
 փառաւոր հանդէսեղած չէր: Հանդիսութեան  
 օրերն անցնելէն ետեւ՝ երբ որ ամէնքը տեղեր-  
 նին դացին, Բենիամինի, Եփրեմի ու Մանա-  
 սէի քաղաքներէն եկողներն սկսան կուռքերը  
 կործանել, կռապաշտութեան եւ ոչ յիշա-

տակ մը [Թողուլ կ'ուզէին : Ազեկիա կռապաշտութեան մնացորդներն իր տէրութեան երկիրներուն մէջէն հանելու ատեն՝ նաեւ Մովսիսի շինած պղնձէ օձը կտարել տուաւ, վասն զի Իսրայելացիք մինչեւ իր ատենն անոր խունկ կը մատուցանէին : Աս բաներէն զատ՝ քահանայից ու Ղեւտացւոց պաշտամունքը Գաւթի դրած կարգին համաձայն կարգաւորեց, անանկ որ ամէնքն առանց շատ աշխատութեան իրենց պաշտօնը կը կատարէին ու փոփոխակի տաճարին կը ծառայէին :

2. Քանի մը տարիէն Ազեկիա Ասորեստանեայց իշխանութեան տակէն ուզեց ելլել . անոր համար հարկ չվճարեց . Փղշտացւոց հետ ալ զարնուեցաւ, զանոնք աղէկ մը ջարդեց, ամուր քաղաքներնին մինչեւ Գազա կործանեց : Արուսաղէմ ամրացուց, պարխապներնորոգեց, քաղաքը պաշարով ու զօրքով լեցուց ու թշնամոյն ջուր չձգելու համար դրսի ջրերը գոցեց : Նոյն միջոցին Սենեքերիմ Ասորեստանի թագաւորը հօսիայի ամուր քաղաքներուն վրայ եկաւ, զանոնք առնելէն ետքը բանակը Աքրիս դրաւ, որն որ Արուսաղէմէն շատ հեռու չէ : Ազեկիա մէկ կողմանէ տեսնելով որ Ազիպտացւոց ու Աթովպացւոց թագաւորները՝ որոնց հետ զաղտուկ դաշնակցած էր, իրեն օգնութեան դալը կ'ուշացնեն, մէկալ կողմանէ ալ այնչափ բազմաթիւ թշնամոյց դիմաց ելլելը բանին ձեռք չտարով, Սենեքերիմին մարդ խրկեց, խոստացաւ որ ուղածը կուտայ, միայն թէ ելլէ երթայ : Սենեքերիմ 300 տաղանդ արծաթ, 30 տաղանդ ալ ոսկի



պահանջեց : Եզեկիա ան պահանջմունքը կատարելու համար տաճարին ու թագաւորական զանձին մէջ գտած ոսկին արծաթը ժողովեց իրկեց : Սենեքերիմ՝ ասով գոհ չըլլալով՝ իր մեծ զորապետները զօրքով Երուսաղէմոյ վրայ խաւրեց, որպէս զի բնակիչներուն սիրտը վախ ձգելով՝ զանոնք իրեն անձնատուր ընէ : Աս զորապետներուն մէջէն Ռափսակ Երուսաղէմի մինչեւ պատը մտաիկնալով՝ Եզեկիային պատգամաւորացը հետ խօսելու ատեն, երբայցեբէն լեզուաւ՝ ժողովուրդն ոտք հանելու համար խոստմունքներ ու սպառնալիքներ կ'ընէր : Թէպէտ եւ պատգամաւորներն իրեն կ'ըսէին որ հետեւին Ասորերէն խօսի, բայց Ռափսակ մտիկ չընելով՝ խօսքը յառաջ կը տանէր, մինչեւ զԵզեկիան ծագը բրաւ ու Աստուծոյ անունը հայհոյեց : Ասկից զատ՝ Սենեքերիմ Եզեկիային նամակ մը գրեց, որն որ Աստուծոյ դէմ հայհոյութիւններով լեցուն էր : Եզեկիա ան թուղթը կարդալէն ետքը՝ ելաւ տաճար դնաց, հան՝ Աստուծոյ առջեւն ինկած՝ աղօթք բրաւ : Աստուած անոր աղօթքը լսեց, Եսայի մարգարէին ձեռքն իմացուց որ թշնամին շատ չ'անցնիր՝ քաղքին պաշարու մը թող պիտի տայ : Ան գիշեր Աստուծոյ կողմանէ հրեշտակ մը եկաւ Ասորեստանեայց բանակը մտաւ, անոնցմէ 185,000 հոգի մեռցուց : Սենեքերիմ աւտուանց ելաւ դետինը բոլոր իր մարդիկներուն գիւրովը ծածկուած գտաւ, ամօթով ու կատաղած ետ դարձաւ Նինուէ եկաւ, ուր 45 օրէն իր տան մէջ Նեսարաքա կուռքին երկրպագութիւն ընելու ա-

տեն՝ Ադրամելէք ու Սարասար իր որդիքը զինքը սպաննեցին Հայաստան փախան, և անոր տեղը Ասորդան նստաւ :

Յ. Նոյն տարին Եզեկիա սաստիկ հիւանդանալով՝ Եսայի մարգարէն եկաւ Աստուծոյ կողմանէ իրեն իմացուց որ պիտի մեռնի, և խրատ տուաւ որ չմեռած՝ գործքերը կարգի դնէ : Եզեկիա սկսաւ Աստուծոյ աղաչել որ իր հաւատարմութիւնն յիշելով՝ առողջութիւն պարգեւէ : Եսայի դեռ անոր տան սրահին մէջէն չէր ելած՝ Աստուած իրեն հրամայեց որ իր կողմանէ թագաւորին ըսէ թէ Երէք օրէն պիտի առողջանայ, Աստուծոյ աստուծոյ երթայ. Աստուած կեանքը 15 տարի մ'ալ երկրնցուց : Եզեկիա երբ որ հարցուց թէ Ուստի իմանամ որ Աստուած զիս պիտ'որ առողջացրնէ, Աս ըլլայ նշան, պատասխանեց Եսայի, արեւի ժամացուցին վրայի շուքը 10 աստիճան ետ դառնայ : Նշանը մարգարէին աղօթքովը կատարուեցաւ, և Եզեկիա Աստուծոյ շնորհակալ եղաւ :

Զ. Ամէն կողմէն Եզեկիայի շնորհաւորութեան համար արծաթ ոսկի պարգեւ կու գար, որով խիստ հարստնալով ու թագաւորական զանձը լեցուելով՝ սիրաբ բարձրացաւ : Անոր համար երբ որ Բարեթոնի Մերովդաք Բաղդան թագաւորը իր բժշկուելուն վրայ ուրախակից ըլլալու համար ընծաներով պատգամաւորներ իրկեց, Եզեկիա պարծենալով իր հարստութիւնն անոնց բացաւ ցուցուց : Պատգամաւորներն երթալէն ետեւ՝ Եսայի մարգարէն եկաւ իրեն ըսաւ. Օր պիտի գայ՝ որ տանդ

մէջ ինչ կայ չկայ, նոյն իսկ որդիքդ ալ Բարեւոն պիտ'որ երթան: Եզեկիա Աստուծոյ դատաստանին իրաւունք տուաւ եւ իր օրերուն համար խաղաղութիւն խնդրեց: Աստուած ալ իր սպառնալիքն անոր օրերը չկատարեց: Եզեկիա 29 տարի թագաւորելէն ետքը՝ մեռաւ:

**5.** Մ-ն--է Եզեկիային որդին 12 տարւան՝ հօրը աթոռը նստաւ: Ասիկա ամենեւին հօրը չհետեւեցաւ, նորէն կռապաշտութիւն խոթեց, որդիքը զօհեց, նոյն իսկ Աստուծոյ տան մէջ կուռք կանգնեց, վերջապէս ամէն տեսակ պղծութիւն գործելով՝ իր հպատակներուն ալ շար օրինակ եղաւ: Աստուած մարգարէներու ձեռքով Յուդայի ու Երուսաղեմայ մեծամեծ շարիք սպառնաց, ի վերայ այսր ամենայնի Մանասէին վրայ աղղեցութիւն չըրաւ, մանաւանդ թէ սիրտը խստացաւ եւ զԵրուսաղէմ անմեղներու արեամբ լեցուց: Աստուած Ասորեստանի թագաւորին զօրապետները վրան խրկեց, որոնք զինքը բռնեցին ձեռքը ստքը կապած՝ Բարեւոն տարին: Ան ատեն Մանասէ նեղ մտնելով՝ Աստուծոյ առջեւ խոնարհեցաւ, մեղացը վրայ զղջաց եւ բրածին թողութիւն խնդրեց: Աստուած իրեն լսեց, զինքը նորէն իր աթոռը դարձուց, ինք ալ կուռքերը վերցուց, Աստուծոյ ծառայեց, ժողովրդեան ալ հրամայեց որ Աստուծոյ ծառայեն: Մանասէ 55 տարի թագաւորեց:

## Ծ Զ . Դ Ա Ս

1. Հողփեռնէս ո՛վ է . Ինչո՞ւ զԱբիօճ՝ ձեռքն սոքը կապած՝ Բեաթղուայ բերդին տակ նետեւ տուաւ : — 2. Յուզիթ ո՛վ է . Ինչ տառապելութիւն բրաւ : — 3. Յուզիթ Ինչպէս Հողփեռնեաքն առջեւն ելաւ եւ զլուխը կարեց : Բեաթղուայիք Ինչ բրին : — 4. Յուզիթ առտուն Ինչ պատուիրեց : Զորքը բանն իմանալուն պէս՝ Ինչ բրին : Յուզիթ քանի տարւան մեռաւ :

1. Մանասէի գերութեան ատենը կամ անկէ ետ դառնալէն ետեւ՝ Հրէաստանի մէջ հետեւեալ երեւելի դէպքը պատահեցաւ : Նաբուքոզնասր (Ասորդան) Ասորեստանեայց թագաւորը՝ Մարաց Արփաքսայ թագաւորին յաղթելէն եւ զինքն սպաննելէն ետեւ՝ ուղեց նաեւ բոլոր Ասորեստանի արեւմտեան կողմի երկիրներուն տիրել : Աս վախճանաւ իր զօրաց ընդհանուր հրամանատար Հողփեռնէսը՝ անհամար զօրքով վրանին խրկեց : Շատ թագաւորութիւններ ու քաղաքներ վախերնէն Հողփեռնէսին անձնատուր եղան . ան ալ ամենուն՝ միայն իր թագաւորը պաշտել տալու համար՝ առած երկիրներուն աստուածները կը կործանէր կը վերցընէր : Յուդայի երկրին բնակիչներն ասոնք լսելով՝ վախցան որ չբլայ թէ իրենց զլուխն ալ անանկ բան մը գոյ . ուստի ամէնքը միարան որոշեցին որ բոլոր զօրութեամբ դէմ կենան , եւ այսպէս սկսան պատերազմի պատրաստութիւն աննել : Յովակիմ մեծ քահանան զամէնքը կը յորդորէր որ աղօթքով ու ծումապահութեամբ Աստուծոյ օգնութիւնը խնդրեն : Հողփեռնէս ասոնց պատերազմի պատրաստուիլն իմանալով՝

իրենց յանդգնութեան վրայ զարմացաւ, անոր  
 համար մերձաւոր ազգաց իշխանները կանչեց  
 հարցուց թէ Ասոնք իրենց ինչ բանին յու-  
 սալով իմ դիմացս պիտ'որ ելին: Ան ատեն  
 Աբիովր Ամոնացւոց իշխանն Խորայելացւոց  
 վրայ սեղեկութիւն տուաւ, եւ խօսքն Աս-  
 տուծոյ վրայ դարձրնելով՝ ըսաւ. Անոնց Աս-  
 տուածը զօրաւոր է, մէկէ մը չիյաղթուիր.  
 պէտք էք սպասել որ իրենց Աստուածը բար-  
 կացրնեն՝ որ զիրենք թողու, ան ատեն կրնաք  
 իրենց յաղթել: Հողովեռնէս աս լսելով՝ սաս-  
 տիկ բարկացաւ, եւ՝ Ո՛վ կրնայ Նաբուքոդո-  
 նոսորին յաղթել, ըսելով՝ զԱբիովր ձեռքը ոտ-  
 քը կապած՝ Բեաիղուայի բերդին տակը նետել  
 տուաւ, որ քաղաքն առնուած ատեն՝ մէջի  
 բնակչացը հետ զինքը պատժէ: Բեաուղիա  
 Չարուղնի երկրին մէջ ամուր քաղաք մը  
 եւ Յուդայի երկիրներուն իրրեւ դուռն էր:  
 Քաղաքացիք զինքը ներս առին, կապերը քա-  
 կեցին, եւ երբ որ անոր հոն գալուն պատ-  
 ճառն իմացան, սարսափած՝ Աստուծոյ դիմե-  
 ցին: Նոյն միջոցին Հողովեռնէս, 170,000 հե-  
 տեւակով 12,000 ձիաւորով եւ իրեն հնազան-  
 դած ազգերուն անհամար բազմութեամբը  
 քաղքին առջեւն հասաւ, պաշարեց: Քիչ մը  
 վերջը մէջինները մեծ նեղութեան մէջ ին-  
 կան, գլխաւորաբար ջրի պակասութենէն. որով-  
 հետեւ Հողովեռնէս բոլոր ջրի ճամբաները  
 կտրած էր: Ուստի եւ վերջի աստիճանի վհա-  
 տելով՝ որոշեցին որ հինգ օր մ'ալ սպասեն, եւ  
 թէ որ մէկ ակեղաց օգնութիւն չեն գտներ նէ,  
 ալ անձնատուր ըլլան:

2. Բեախղուայի մէջ Շմաւոնի ցեղէն Յուդիթ անունով կին մը կար, որուն այրը Մանասէ երեք տարի յառաջ մեռած եւ Յուդիթին մեծ հարստութիւն թող տուած էր: Յուդիթ այրի մնալով՝ տան մէջ մասնաւոր աղօթարան մը շինէր էր, եւ քուրձ հագած՝ օրերը շարունակ աղօթքով ու ծովագրահութեամբ կ'անցընէր, մինակ շարաթ եւ ուրիշ տօնի օրերը ծով չէր պահէր: Արդ երբ որ աս բարեպաշտ կինը Բեախղուայի հինգ օրէն անձնատուր բլալէքը լսեց, շատ նեղացաւ, եւ իր առաքինութեան ու աստուածաբանութեան համար ամենուն առջեւ մեծ համարում ունենալով՝ քաղքին ձերբէն քանի մը հողի կանչեց. Աստուծոյ իրենց ցուցուցած սղորմութիւնները յիշեցընելով՝ յորդորեց որ անձնատուր բլալու խորհուրդը մէկդի ձգեն, եւ յոյսերնին Աստուծակ չկարեն: Խօսքն անով լմընցուց որ զինքն իր նաժշտովը քաղքէն դուրս հանեն: Ար յուսամ որ, ըսաւ, ձեր անձնատուր բլալու որոշած օրը՝ Աստուած զՀոգափետնէս իմ՝ ձեռքս կը մատնէ: Բայց ընելիքս մի հարցընէք, զլուխ չհանած՝ չեմ յայտնէր:

3. Յուդիթ քուրձ հագած, զլուխը մուխիր ցանած՝ ձեռք զարնելու գործքին յաջողութիւնը Աստուծակ խնդրէլէն ետեւ՝ էլաւ փառաւոր հազուստ հագաւ, զարդարուեցաւ ու հետը նաժիշտ մ'առած՝ քաղքէն դուրս էլաւ: Թշնամիներուն պահապան զօրքը զինքը բռնեցին հարցուցին թէ ո՞վ է, ինչու հոն եկեր է: Իսկ ինք պատասխան տուաւ թէ Արբայեցի եմ եւ տեսնելով որ քաղաքացիքս

ձեր ձեռքը պիտ'որ իյնան, փախայ Հողոփեռնեօսին եկայ, որպէս զի իր զօրքին՝ Հրէաստանի լեռնային կողմերուն ճամբան ցուցրնեմ: Անոնք իր ըսածներուն հաւտայով՝ զինքն առին Հողոփեռնեօսին առջեւն հանեցին: Յուդիթ զօրագլխին առջեւը՝ Աբիովրին ըսածն հաստատեց, բայց միանգամայն ըսաւ որ Աբղէն իրենց թշնամւոյն ձեռքը մատնուելու առնանին եկած է, որովհետեւ Աստուծոյ օրինաց պահպանութեան մէջ թողլցան: Աստի ես կ'ուզեմ հոս մնալ, միայն ինծի հրաման տուր որ գիշերները բանակէն դուրս ելլեմ՝ իմ Աստուծոյս աղօթք ընեմ: Հողոփեռնեօս ըսածներուն հաւանեցաւ, եւ ուզեց որ իր սեպհական կերակրէն ու բմկելիքէն ուտէ խմէ, բայց Յուդիթ յանձն չառնելով՝ աղաչեց որ հետը բերածէն ուտէ: Արբ որ Հողոփեռնեօս հարցուց որ Հապա հետդ բերածդ լմբննալու բլլայ՝ ան տեսակ կերակուր քեզի ուստի՞ պիտի գտնենք, ինք պատասխան տուաւ թէ Մինչեւ որ հետս բերած կերակուրս լմբնցրնելու բլլամ, արդէն Աստուած իմ՝ ըսածներս կը կատարէ, եւ այնպէս ինծի ուտելիք ուրիշ տեղաց կրնանք գտնել: Հողոփեռնեօս անոր խնդիրքն ընդունեցաւ: Յուդիթ գիշերները բանակէն դուրս կ'ելլէր, կ'երթար Բետիզուայի քովերն եղած աղբեր ջրէն կը լուացուէր, ետքը իր գործքին յաջողութեան համար Աստուծոյ աղօթք կ'ընէր կու գար: Արեք որ ասանկ շարունակելէն ետեւ՝ չորրորդ իրիկունը Հողոփեռնեօս իր զօրապետներուն փառաւոր կոչունք մը տալով՝ զինքն ալ հրաւիրեց: Յու-

գիթ Աստուծոյ ապաւինած զնաց, բայց հետը բերած կերակրէն կերաւ: Ամէնքն ան իրիկունը չափէ դուրս կերան խմեցին, մանաւանդ Հողփեռնէս: Արբ որ ամէն մարդ իր տեղը զնաց եւ Հողփեռնէս զինով խորունկ կը քնանար, Յուգիթ՝ որ առանձին մնացած էր, անոր սուրբ քաշեց առաւ, գլխի մազերէն բռնած՝ Աստուծոյ օգնութիւն խնդրելով՝ սրով երկու հեղ զարկաւ, զլուխը կտրեց՝ առաւ դուրս ելաւ, նաժշտին տուաւ՝ որ կերակրոյ մտխաղին մէջ զնէ, եւ անոր հետ մեկտեղ գիշերանց մէկը շիմացած՝ մինչեւ Բեափղուայի պարիսպը հասաւ: Ներսի պահապաններուն ձայն տուաւ բտելով՝ Աստուած հետերնիս է, դաները բացէք: Անոնք բացին զինքն ու իր նաժիշտը ներս առին: Գիշերանց իր դայուսոր բոյր քաղաքը հրատարակուելով՝ ամէնքը ջահերով զինքը տեսնելու կու գային, եւ Հողփեռնէսին զլուխը տեսնելով՝ սաստիկ ուրախութեամբ ու զարմացմամբ՝ Աստուծոյ փառք կու տային: Յուգիթ Արիփղը կանչել տուաւ, որն որ Հողփեռնէսին զլուխը տեսնելուն պէս՝ մէկէն մարեցաւ ինկաւ: Ատրը ճշմարիտ Աստուծոյ զօրութեան վրայ զարմանալով՝ սրտանց Հրէից կրօնն ընդունեցաւ:

4. Աստուանց Բեափղուացիք Յուգիթին խօզրին համաձայն՝ Հողփեռնէսին զլուխը բերդէն դուրս կախելով՝ թշնամոյն վրայ վաղեցին: Անոնք գացին որ Հողփեռնէսին խմացընեն, եւ երբ որ մարմինն արխնլուայ գետինը փառած գտան, բանն խմանալով՝ սկսան կանչել. Արբայեցի կին մը զմեզ խայտառակեց:



Իսկ զօրքն աս բանս լսելուն պէս՝ փախչող փախչողի եղաւ : Յուդայի երկրին բնակիչքն ետեւնէն ինկան, սաստիկ ջարդեցին, եւ 30 օր աւարնին ժողվեցին :

Յուդիթին վեհանձնական քաջութեան համբաւը չորս դին տարածուելով՝ ամէնքը զինքը տեսնելու կու գային : Յովակիմ մեծ քահանան ձերականտին հետ եկաւ զինքն օրհնեց . ժողովուրդն ալ Հողովեանեսին ոսկեղէն ու արծաթեղէն ամաններէն իրեն ընծայ տուաւ : Իսկ ինք ուրախութեամբ լեցուած՝ Աստուծոյ փառարանութեան երգ երգեց : Անկէ ետեւ տարիներով խաղաղութեամբ ու աստուածպաշտութեամբ ապրելէն ետեւ՝ ունեցած հարստութիւնն ազգականներուն ու բարեկամներուն բաժնեց եւ 105 տարւան մեռաւ, էրկանը քով թողուեցաւ :

## Ծ Է . Գ Ա Ս

1. Ամն ինչպէս թագաւորութիւն ըրաւ : — 2. Աստուած 350 տարի յառաջ Յերոբոամայ եզած մարգարէութիւնն որուն ձեռքովք կատարեց : Յովթա էր թագաւորութեան 18երորդ տարին ինչ ըրաւ : Ինչպէս մեռաւ : — 3. Յովսրոպ ինչպէս թագաւոր էր . ինչ վերջ ունեցաւ :

1. Անն Մանասէին որդին 22 տարեկան էր երբ որ հօրը աթոռը նստաւ : Աս ալ Յուդայի չար թագաւորներէն մէկն եղաւ, հօրը պէս շատ չարութիւններ ըրաւ, բայց ետքն անոր պէս չապաշխարեց. թագաւորութեանը 12երորդ տարին իր ծառայից ձեռքով սպանուեցաւ :

Չ. Յ-է-ի-՝ անոր որդին ութը տարւան՝ հօրը աթոռն անցաւ : Աստուած իր ժողովուրդը գարձի բերելու համար ասիկա որոշած էր, եւ ինք իր կոչման հաւատարիմ մնաց. տղայութենէն վեր զԱստուած կը փնտռէր եւ անոր հաճոյ եղածը կ'ընէր : Իր թագաւորութեան 12երորդ տարին ուզէց իր երկիրներուն մէջէն կառապաշտութեան նշաններն ալ վերցընել, նաեւ նոյն իսկ տաօը ցեղերուն երկրին մէջէն ալ, որն որ նոյն ցեղերուն գերութեան երթալէն ետեւ՝ գրեթէ կէս մը անապատ մնացեր էր : Յովսիա բոլոր կուռքերը կտարտեց, փոշի դարձուց եւ անոնց կեցած տեղը մարդու ոսկրներով լեցուց, Յերոսոփամին Բեթէլ շինած սեղանը կործանեց ու քաղքին գերեզմաններուն մէջ որչափ մարդու ոսկրներ կար՝ հանեց ան սեղանին վրայ այրեց, եւ այսպէս 350 տարի յառաջ Յերոսոփամին եղած մարդարէութիւնը (Տես ԻԳ. Գատ. ԹԻւ 2.) կատարուեցաւ : Քեղկիա քահանայապետը տաճարին մէջէն Մոփսիսեան օրինաց բնագիր մատենաբ գտաւ թագաւորին իրկեց : Թագաւորն օրինաց զիրքն առ ջեւը կարդացընել տալէն ետքը՝ Քեղկիային եւ ուրիշ քոֆս ըլլողներուն հրամայեց որ թէ իրեն համար եւ թէ Յուդայի ու Իսրայելի մնացորդ ժողովրդեան համար ազօթք ընեն. Ասան զի, ըսաւ, մեր նախորդներուն՝ աս գրքին մէջ գտնուած պատուէրները չբռնելուն համար՝ Աստուած վրանիս բարկացած է : Ետքը զամէնքն Էրուսաղեմոյ տաճարը ժողովելով՝ նոր գտնուած օրինաց զիրքն առ ջեւնին կարդացընել տուաւ, եւ յորդորեց

որ որտանց Աստուծոյ յարին ու անոր պատուիրանները կատարեն : Իր թագաւորութեան 18երորդ տարին Չասկի տօնն անանկ փառաւոր հանդեսով կատարեց, որ դատաւորաց ատենէն մինչեւ իր ատենն անանկ՝ հանդիսութեամբ կատարուած չունէր : Յովսիա մինչեւ կենացը վերջը Աստուծոյ հաւատարիմ մնաց : Փարաւոն Նեքաւով Եզրիպտացւոց թագաւորին դէմ բրած պատերազմին մէջ խոցուելով՝ մեռաւ, 31 տարի թագաւորելէն ետքը : Բար Յուդա ու Իսրայէլ վրան սուգ բռնեցին :

Յ. Յովսիա երեք զուակ ձգեց, Եզրիպիմ, Յովաբաղ ու Մեթթանիա, ժողովուրդն աս երեքին մէջէն Յ-ւ-ւ-ւ-ւ, որն որ Մեզղուժ ալ կըրուէր, հօրը տեղ թագաւոր դրաւ : Ասիկա չար էր ու քիչ ալ թագաւորեց, վասն զի երեք ամիսէն Փարաւոն Նեքաւով Եզրիպտոսի թագաւորը զինքը վար առաւ, տեղը անոր մեծ եղբայրը Եզրիպիմ նստեցուց, անունն ալ փոխեց Յովակիմ՝ դրաւ : Երկրին ալ տուրք դրաւ 100 տաղանդ արծաթ, 10 տաղանդ ոսկի : Իսկ Յովաբաղը կապած Եզրիպտոս տարաւ, ուր մեռաւ ալ, ինչպէս որ յառաջագոյն Երեմիա իրեն ըսած էր<sup>1</sup> :

<sup>1</sup> Երեմիա մարգարէն Յովսիայի 30երորդ տարին մարգարէանալու սկսած էր :

## Ծ Ը • Դ Ա Ս

1. Յովակիմ Բնչպէս թագաւոր էր : Իր առաջին տարին Երեմիա Բնչ մարգարեացաւ : — 2. Աստուած Յովակիմին չորրորդ տարին Երեմիային ձեռքոյն Բնչ ըսաւ : Աս մարգարեութիւնն Բնչ կերպով կատարուեցաւ : — 3. Բարուքայ գրածներն Բնչ էին : — 4. Յովակիմ Բնչպէս մեռաւ :

1. Յ-է-իմ քսան ու հինգ տարւան էր էրր որ թագաւորեց, եւ Յուդայի չար թագաւորներուն ճամբան բռնեց : Ժողովուրդն ալ իրեն հետեւելով՝ վերջին աստիճանի ամբարշտութեան մէջ կ'իյնային : Իրենց ճամբու չգալուն մէկ պատճառն ալ սուտ մարգարեներն էին, որոնք կ'ըսէին թէ Աստուած՝ իր տաճարին համար ձեզի կը խնայէ : Անոր համար Աստուած Յովակիմին թագաւորութեան առաջին տարին Երեմիան տաճար խրկեց, հոն բլրողներուն ըսել տուաւ որ անանկ փուժ խօսքերու հաւտալով՝ իրենք զիրենք ապահով չկարծեն. միանգամայն սպառնացաւ որ եթէ իր պատուէրները չեն բռներ նէ՛ տաճարը կը կործանէ եւ զԵրուսաղէմ՝ կը թողու : Քահանաներն ու ժողովուրդն աս լսելուն պէս՝ վրան վազեցին կ'ուզէին մեռցնել : Բայց սուտ մարգարէք եւ իշխանք ըսին. Աս մարդս մեռնելու արժանի չէ, վասն զի ըսածներն Աստուծոյ կողմանէ զրուցեց : Երեմիա ազատելէն ետեւ զամէնքը ապաշխարութեան կը յորդորէր ու կը խրատէր :

2. Յովակիմին թագաւորութեան չորրորդ տարին (որ Նաբուքոդոնոսորայ առաջին տարին էր) Երեմիա Յուդայի ժողովրդեան ըսաւ .

Աս քսանուիրեք տարի է զիշեր ցորեկ ձեզի ապաշխարութիւն քարոզելէն չեմ դադարիր, եւ դուք զիս մտիկ չէք ըներ. անոր համար Աստուած զՆարուքոդոնոսոր Բարելոնի թագաւորը պիտի բերէ, որ զայ երկիրն աւրըտարկէ, բնակիչներն ալ եօթանասուն տարի Բարելոն գերութիւն պիտի քաշեն: Երեմիային խօսքը ստուգուեցաւ, նոյն տարին Բարելոնի գերութեան եօթանասուն տարիներն սկսան. Նարուքոդոնոսոր եկաւ՝ Երուսաղէմ՝ պաշարմամբ առաւ, Յուդայի երկրէն հետը շատ զերի տարաւ, որոնց մէջն էր Գանիէլ եւ իր ընկերները, նաեւ թագաւորական ցեղէ ուրիշ շատ ազնուական երիտասարդներ: Տաճարին անօթոցը մէկ մասն ալ առաւ Բարելոնի մեհեանը տարաւ: Յովակիմ թագաւորը բռնեց շղթայի զարկաւ, բայց ետքը տարւէ տարի հարկ վճարելու պայմանով ազատ թողուց:

**Յ.** Նարուքոդոնոսորայ եկած տարին Աստուած Երեմիային պատուիրեց որ Յովսիային օրէն մինչեւ նոյն ատեն Իսրայելի, Յուդայի եւ ուրիշ ազգերուն վրայ իրեն ըսածները բոլոր զիր անցընէ, որ գուցէ անով՝ զլուինին գալու շարիքները տեսնելով՝ կը դառնան: Երեմիա իր Բարուք աշկերտը կանչեց եւ ան մարգարէութիւնները գրել տալէն ետեւ՝ հրամայեց որ տօնի օր մը տաճար տանի, ժողովրդեան առջեւ կարգայ: Բարուք հրամանը կատարեց: Բանն իշխանաց ականջը հասնելով ուղեցին որ գրուածը բերէ իրենց ալ կարգայ: Ընթերցումը լմըննալէն ետեւ՝ երբ որ իմացան որ նոյն բաներն Երեմիա ըսեր եւ ինք գրեր է, խրատ

տուին որ Երեմիային հետ գաղտուկ տեղ մը պահուլտի. իսկ իրենք գիրքը տաճարին զանձատան մէջ պահել տալէն ետեւ՝ գացին եղածը թագաւորին պատմեցին: Յովակիմ մարդ խրկեց գիրքը բերել տուաւ, եւ պալատականներուն հետ կրակարանի առջեւ նստած՝ երկու երեսի չափ կարգացրնել տալէն ետեւ՝ գիրքն առաւ, զմեղինով կտրեց, առջեւի կրակին մէջ ձգեց, թէպէտ իշխաններուն մէջէն իրեն դէմ գնող եղաւ: Աս ալ բաւական չէ, զԲարութ եւ զԵրեմիա բռնելու համար մարդ խրկեց. բայց չկրցան զանոնք ձեռք բերել: Աստուած Երեմիային նորէն հրամայեց որ առջի գրուածները՝ մէյ մ'ալ գրի անցրնէ, Յովակիմայ երթայ, գիրքն այրելուն համար չարաչար մեռնելիքն ու Երուսաղեմայ վրայ բրած սպառնալիքներուն ժամանակաւ կատարուելիքն իմացրնէ: Երեմիա Աստուծոյ հրամանը կատարեց. Բարութին մէյ մ'ալ գրել տուաւ, ու մէկ քանի խիստ բաներ ալ վրան աւելցուց:

Ք. Յովակիմ սրտիժը դտաւ. երբ որ երեք տարի Նարուբոդոնոսորայ հարկ վճարելէն ետեւ՝ գաղբեցուց, Նարուբոդոնոսոր վրան Քաղդէացուց եւ Արարացուց զօրքը խրկեց, որոնց հետ Մովսէսայիք եւ Ամնացիք ալ միանալով՝ Երուսաղէմ մտան, շատ արիւնհեղու թիւն բրին: Ասով Մանասէին թափել տուած այնչափ անպարտ արեան վրէժն առնուեցաւ: Աւերջէն Երեմիային խօսքին համաձայն՝ Յովակիմ ալ բռնուեցաւ, սպաննուեցաւ եւ անթաղ Երուսաղեմայ դրան առջեւը մնաց:

Ծ Թ . Գ Ա Ս

1. Յերոնիա կամ Յովաքիմ Բնչպէս թագաւոր էր : Վերջն Բնչպէս եղաւ : — 2. Սեզեկիա ո՛վ է : Նարուքոզոնոսորոյ հաստարիմ մնաց : — 3. Երեմիա Երբ բանա գրուեցաւ . Ինչու գուր նեաուեցաւ եւ Բնչպէս ազատեցաւ : — 4. Երեմիա Սեզեկիային Բնչ խրատ տուաւ : Բարեկայիք Երուսաղէմ Բնչպէս տաին : Սեզեկիա Բնչ եղաւ : Տաճարն ու մէջիններն Բնչ եղան : — 5. Երեմիա Բնչպէս բանակն ազատեցաւ : Ինչու Եզրպոստ գնաց :

1. Յեռնէի կամ Յելէի՝ Յովակիմին որդին տասն'ութը տարւան՝ հօրը աթոռն անցաւ եւ երեք ամիս թագաւորեց : Նարուքոզոնոսոր նորէն եկաւ զԵրուսաղէմ՝ պաշարմամբ առաւ , եւ թէպէտ Յովաքիմ իր բոլոր պալատականներուն ու մօրը հետ՝ դիմացն էլաւ անձնատուր ըլլալու համար , բայց Նարուքոզոնոսոր զինքը բանեց , պղնձէ շղթայի զարկաւ , թէ՛ հետն էլողները եւ թէ՛ ժողովրդեան երեւելի մասը՝ 10,000 հոգւոյ չափ , իրբեւ զերի Բարեւուն խրկեց . Երուսաղէմայ մէջ մինակ ազքատները մնացին : Նաեւ տաճարն ու թագաւորական գանձն ալ պարպեց , Սողոմոնին շինել տուած ոսկեղէն անօթները կտարեց :

Յովաքիմ Բարեւուն բանտի մէջ մնաց մինչեւ Իդմարուդաք թագաւորելով՝ զինքը բանակն հանել , վրայի հազուստը փոխել տուաւ , եւ իրեն զերի ըլլող ուրիշ թագաւորներէն աւելի յարգելով՝ ամէն օր իր սեղանը կը նստեցընէր : Յովաքիմ հոն մեռաւ ու թաղուեցաւ :

2. Նարուքոզոնոսոր Յովաքիմին տեղ աւոր հօրեղբայրը Մեթթանիան թագաւոր

նստեցուց, անունն ալ փոխեց Սէրէիէ՛ր գրաւ :  
 Ասիկա կէս բերան մը Երեմիայէն խնդրեց որ  
 իրեն ու ժողովրդեան համար աղօթք ընէ :  
 Բայց ո՛չ իրմէ կ'ականածէր եւ ո՛չ ալ Աստու-  
 ծոյ կողմանէ բաժները բանի տեղ կը դնէր :  
 Աստուծոյ անուամբ Նարուբոզոնոսորայ ըրած  
 երդումն ալ չպահելով՝ Եզրիպտոսի թագաւոր-  
 ինն հետ դաշինք գրաւ : Նարուբոզոնոսոր աս  
 բանս իմանալով՝ Սեղեկիայի թագաւորու-  
 թեան իններորդ տարին եկաւ Երուսաղէմ  
 պաշարեց : Եզրիպտոսի թագաւորը Յուդայի  
 օգնութեան վազեց : Նարուբոզոնոսոր անի-  
 կա վանելու համար՝ Երուսաղէմայ պաշարումը  
 վերցուց դիմացը դնաց : Երուսաղէմացիք սուտ  
 մարգարէից խօսքին անսալով՝ կարծեցին որ ալ  
 պիտի չգայ, եւ սկսան ուրախանալ : Պա-  
 րապ տեղ Երեմիա Աստուծոյ կողմանէ անոնց  
 կ'ըսէր թէ Օգնութեան եկող Եզրիպտացւոց  
 զօրքն ետ պիտի դառնայ, Նարուբոզոնոսոր  
 նորէն պիտի գայ՝ Երուսաղէմ առնէ եւ այրէ :  
 Ղինքը մտիկ ընող չէր ըլլար :

**Յ.** Նոյն մարգարէն Երուսաղէմէն Բենիա-  
 մինի երկիրն երթալու ատեն՝ զինքը բռնեցին,  
 անարգեցին եւ սաստիկ ծեծելէն ետեւ՝ բան-  
 տարկեցին : Բայց երբ որ Նարուբոզոնոսոր նո-  
 րէն Երուսաղէմ պաշարելու եկաւ, Սեղե-  
 կիա զինքը գաղտուկ պալատը բերել տալով՝  
 հարցուց թէ Աստուծոյ կողմանէ ինձի ըսե-  
 լիք մ'ունիս : Երեմիա իրեն պատասխան տու-  
 աւ որ Բարելոնի թագաւորին ձեռքը պիտի  
 մատնուիս : Սեղեկիա զինքը նորէն բանտար-  
 կել տուաւ, հրամայելով որ մինչեւ որ քաղ-



քին մէջէն ուտելիքն հասնելու ըլլայ, որը հաց մը եւ ապուր տան: Երեմիա բանտի մէջ եղած ատեն՝ Աստուծոյ հրամանաւն ազարակ մը զնեց, ցուցնելու համար որ Բաբելոնի զերու-թենէն դառնալէն ետեւ՝ երկիրնին նորէն պիտի ժառանգեն: Բանտին մէջ աս ալ մարգարէացաւ որ քաղքին մէջ մնացողները՝ սրով, սովով ու հիւանդութեամբ պիտի մեռնին. իսկ Քաղզէացւոց երկիրը փախչողները պիտի ազատին: Իշխաններն աս լսելով՝ զացին թագաւորին աղաչելին որ զինքը մեռցնեն, սրով-հետեւ զօրքն ու ժողովուրդը վհատեցնելու կը ջանայ: Թագաւորն իրենց հրաման տուաւ որ ուզածնին ընեն: Անոնք ալ Երեմիան սղմատ գուր մը իջուցին: Արդամելէք Եթովպացին՝ որ թագաւորական պալատին մէջն էր, աս բանս թագաւորին ականջը հասցուց, որն որ իրեն հրամայեց որ մարգարէն դուրս հանէ: Արդամելէք հրամանը շուտ մը կատարեց: Երեմիան դուրս ելելուն պէս՝ Արդամելէքին ըսաւ որ Աստուած իր սպառնալիքները պիտի կատարէ. բայց դուն իրեն ապաւինելուդ համար՝ անոնցմէ ազատ պիտի մնաս: Իսկ ինք մինչեւ քաղքին առնուիլը՝ բանտի մէջ մնաց:

4. Սեղեկիա զԵրեմիան նորէն գաղտուկ բերել տալով՝ իրեն խորհուրդ հարցուց եւ երդում ըրաւ որ զինքը չիմեռցնէր: Երեմիա Աստուծոյ կողմանէ անոր ըսաւ. Թէ որ Բաբելոնացւոց անձնատուր կ'ըլլաս, քաղաքը չ'այրիւր, դուն ալ քու կիներովդ մահուրնէ կ'ազատիս: Ապա թէ ոչ՝ քաղաքը կ'այրի, դուն ձեռք կ'ընաս, նոյնպէս կանայքդ ու որ-

դիրք: Բայց Սեդեկիա առանց պատասխան տալու՝ զինքը նորէն բանա դարձուց: Իսկ Բաբելացիք քաղաքը երկու տարի պաշարելէն ետեւ՝ Սեդեկիայի թագաւորութեան տասնումէկերորդ տարին՝ վերջապէս պարիսպը ծակեցին: Քաղքին մէջի զինուորները զիչերանց զաղտուկ ճամբէ մը դուրս փախան. Սեդեկիա ալ փախչելու ճամբայ փնտռած առնէ՝ ձեռք ինկաւ, Նարուքոդոնոսորին առջեւը բերուեցաւ, որն որ անոր որդիքն իր աչքին առջին մեռցընել տալէն ետեւ՝ անոր աչքն ալ փորել տուաւ ու շղթայով կապած՝ Բաբելոն խրկեց, ուր կապուած մնաց մինչեւ որ մեռաւ: Թշնամուոյն զօրքը՝ Նարուզարդան զօրապետին առաջնորդութեամբը՝ քաղաք մտաւ, ժողովուրդը ջարդեց. քաղաքն ու տաճարը կողոպտեց, այրեց եւ քաղքին պարիսպները կործանեց: Իսկ վկայութեան խորանը, տապանակն ու խնկոց սեղանը թշնամեաց ձեռք չինկան, որովհետեւ Երեմիա զանոնք արդէն առած՝ Նարաւ լեռն ամուր այրի մը մէջ պահած էր: Սուրբ հուրն ալ անջուր ջրհորի մը մէջ պահուած մնաց: Նարուքոդոնոսոր Յուդայի երկիրը մնացած մարդիկն առաւ եւ ժողոված հարուստ աւարովը Բաբելոն գնաց: Յուդայի երկիրները մշակելու համար աղքատ մարդիկ թողուց, եւ զՎոդոզիա վրանին իշխան դրաւ, որն որ Երեմիային բարեկամն էր:

Ծ. Նարուքոդոնոսոր ետ չդարձած՝ զԵրեմիան Նարուզարդանին յանձնեց, ըսելով որ անկէ ականածութիւն ընէ, ըսածներն ի գործ դնէ: Զօրապետը զԵրեմիան բանտէն հանեց,

Հարցուց իրեն որ հոն մնալ կ'ուզէ, չէ նէ մէկալներուն հետ Բարեւոն երթալ: Մարգարէն պատասխան տուաւ որ Հոս աղքատներուն քովը կը մնամ. եւ Երուսաղէմ՝ դասնալով՝ երբ որ չորս դին աւերակ դարձած տեսաւ, սիրան ելլելով՝ իր ողբը շինեց:

Թշնամւոյն ձեռքէն մօտ երկիրներ փախչողները՝ Գողողիային պաշտպանութեամբը Երուսաղէմ՝ դարձան: Աս եկողներուն մէջ Իսմայէլ անունով Յուդայի թագաւորաց ցեղէն մէկը կար, որն որ Ամնացւոց թագաւորին կողմանէ խրկուած էր՝ Գողողիան մեռցրնելու համար: Իսմայէլ զինքն եւ ուրիշ շատ մարդ մեռցուց եւ իր ընկերներովն Ամնացւոց երկիրը փախաւ Յովնանին ձեռքէն ազատեցաւ, որ զինքը բռնել կ'ուզէր: Իսկ Յովնան՝ որ Գողողիային ու Երեմիային բարեկամն էր, եւ ուրիշ Հրեայք՝ վախնալով որ չըլլայ թէ Գողողիային մահուան համար Նարուքոդոնոսորին առջեւը յանցաւոր ելլեն ու պատժուին, մտածեցին Եզրիպտոս փախչիլ: Եւ թէպէտ Երեմիա իսկզբան իրենց դէմ՝ դբաւ, բայց ետքը՝ չիզիտցուիր որ ինչպէս՝ թէ՛ ինք եւ թէ՛ Բարուք հետերնին Եզրիպտոս գացին: Երեմիա հոն՝ Եզրիպտոսի եւ անոր մեհեններուն Նարուքոդոնոսորէն քանդուիլն ու ապականիլը մարդարեացաւ: Գարձեալ իր ազգը խրատեց որ կուռք չպաշտեն, եւ երբ որ տեսաւ որ անոնք մտիկ չեն ըներ, իրենց իմացուց որ Եզրիպտացւոց հետ պիտի ջնջուին: Ար կարծուի որ ժողովրդեան ասանկ համարձակ քարոզելուն՝ անոնցմէ սպանուած ըլլայ:

## Ը Պ Լ Ո Ւ Խ

ԲԱՐԵԼՄԵՒ ԳԵՐՈՒԹԵՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԳՐԻՍՍՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

(588 կամ 606-1)

## Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Ա

Բարեկենդանի գերբարեկենդանի երկնաշունչի արքայից:

(606-536)

## Կ Գ Ա Ս

1. Եղեկիէլ ո՛վ է. երբ եւ ինչպէս մարգարեական պաշտօնին կոչուեցաւ: — 2. Իր մարգարեութիւններն ինչ նիւթի վրայ են:

1. ԼՍՏՈՒԱԾ իր սպանալիքն Իսրայէլացւոց վրայ կատարած ատենն ալ՝ իր ողորմութիւնն ու զթութիւնն անոնց վրայէն պակաս չընելով՝ իրենց մէջէն ընտիր ու երեւելի մարդիկներ կը հանէր, որոնց ձեռքով անոնց պէտք եղած խրատն ու խորհուրդը տալով՝ զանոնք կը մտիթարէր ու կը քաջալերէր: Աոյն երեւելի մարգիկներուն մէկն էր, քահանայական տնէ՝ Եղեկիէլ Բուզայ որդին, որն որ Յեքոնիա թագաւորին հետ Բաբելոն գերի գացած էր: Սուրբ Գիրքն ասոր առանձնական վարուց վրայ բան մը չ'ըսեր, մինակ անոր աշխարհք մտած ըլլալն ու իր գերութեան քսանուէթներորդ տարին դեռ մարգարեու-

Թիւն ընելը կը պատմէ : — Եղեկիէլ Բոզբար գետին քովն եղած ատեն (ուր որ Բարերուն գերուողները բնակեցան) նախ Աստուած ինք զինքն ահաւոր կերպարանքով մը անոր յայտնեց : Յանկարծ հիւսիսային կողմէն հով ելլելով՝ լուսաւոր մեծ ամպ մը բերաւ, ուսկից հուր կը փայլատակէր, մէջը չորս կենդանւոյ կերպարանք կային, որոնց ամէն մէկը չորսական դէմք ունէր, իրենց աջ գին մարդու եւ առիւծու կերպարանք կար, ու ձախ գին՝ եզի եւ արծւոյ : Ասոնց ամէն մէկը չորս չորս թեւ ունէին, երկուքով իրենք զիրենք կը ծածկէին, մէկալ երկուքով կը թռչէին : իրենց կռնակն ալ աչքով լեցուն էր : Ատենէն մէյմէկ անիւ կը շարժէր՝ որն որ իրենց ընթացքէն կախում ունէր, իրենք ուր որ կ'երթային՝ ան ալ ետեւնէն կու գար. անիւներն հրազոյն էին ու վրաներնէն փայլակներ կ'ելլէին : Եզեկիէլ աս տեսիլքէն զարհուրած՝ երեսի վրայ ինկաւ. բայց Աստուած զինքն ոտք հանել տալով՝ իր ժողովրդեան ապերախտութեան վրայ դանդատանք բրաւ : Ատրք դէպ ի Եզեկիէլ ձեռք մը երկրնցաւ ու զիրք մը տուաւ, որուն ներսը դուրսը ոգը ու վայ գրուած էր : Աստուած իրեն հրամայեց որ ան զիրքն ուտէ, որ ներսի գին ողորով ու վայով լեցուի : Եզեկիէլ կերաւ ու բերանն անուշցաւ. Աստուած ան ատեն հրամայեց որ երթայ սկսի քարոզել :

Չ. Եզեկիէլին մարգարէութիւններն երեք նիւթի վրայ են : Առաջինը՝ Երուսաղեմայ կործանումէն առաջ՝ Հրէից գլուխը գալու շարիքներուն վրայ : Երկրորդը՝ օտար ազգաց, մա-

նաւանդ Հրէաստանի մօտ ըլլող ազգերուն վրայ՝ որոնք Հրէից գլուխն եկածներուն վրայ կ'ուրախանային: Երբորդը՝ Երուսաղեմայ կործանմանէն ետեւ Հրէից պատահելիքներուն վրայ էր, որուն մէջ նաեւ հեթանոսաց կոչուելուն, Քրիստոսի հովուական տէրութեան եւ մեռելոց յարութեան վրայ մարգարէութիւններ կան: Աս մարգարէութիւնները սովորաբար տեսիլքներով իրեն կը յայտնուէր. զոր օրինակ անգամ մը Աստուծոյ Հոգին զինքն առաւ դաշտ մը տարաւ, որուն երեսը չոր ոսկրներով լեցուն էր: Աստուած իրեն ըսաւ. Հրամայէ որ անոնք ողջ ըննան: Եղեկիկէլ հրամայեց, եւ մէկէն դաշտն անհամար մարդիկնեւրով լեցուեցաւ: Ասիկա մէյ մը Աստուծոյ ժողովրդեան գերութենէն դառնալուն, տաճարին ու Երուսաղեմին նորէն կանգնուելուն օրինակ էր, մէյ մ'ալ՝ մեռելոց յարութեան:

#### Կ Ա . Գ Ա Ս

1. Գանիէլ եւ իր ընկերներն սփ են: Ինչպէս՝ Նաբուքոդոնոսորայ ծառայութեան մասն: — 2. Հուշան սփ է. ինչպէ՞ մահուան գառապարտուեցաւ եւ ինչպէ՞ս ազատեցաւ:

1. Նաբուքոդոնոսորին Յովակիմայ չորրորդ տարին Բաբելոն գերի տարածներուն մէջ ամենէն երեւելիներն էին Գանիէլ ու իր ընկերները: Նաբուքոդոնոսոր՝ Աղփանէս ներքինապետին հրամայեց որ գերիներուն մէջ դանուած ամենէն շնորհալի ու խելացի ազնուական երիտասարդներէն քանի մը հոգի ընտրէ, թագաւորական պալատին մէջ երեք

տարի աղէկ մը Բաղդէացւոց կամ Բաւդէից (Բարեւրացւոց քրմերուն կամ գիտուններուն) ուսմամբը կրթէ, եւ անոնց իր կերակրէն ու բնակելիքէն տայ: Ներքինապետը թագաւորին հրամանը ճշդիւ կատարեց, Գանիէլ եւ իր ընկերները՝ որոնց անուններն են Անանիա, Ազարիա եւ Միսայէլ, ուրիշ քանի մը ազնուական երիտասարդներու հետ ընտրեց առաւ, անունին ալ փոխեց, Գանիէլը՝ Բաղտասար, Անանիան՝ Սեդրաք, Միսայէլը՝ Միսաք, Ազարիան՝ Աբեղնազով անուանեց: Գանիէլ թագաւորական սեղանին կերակուրներէն ուտել չուզեց, որովհետեւ անոնց մէջ Հրէից արգելուած կերակուր կրնար գտնուիլ ուստի Աղփանեսին աղաչեց որ իրեն եւ իր ընկերացն ընդեղէն կերակուր ու ջուր տայ: Եւ թէպէտ Աղփանէս խկզրան չէր ուզեր հաւանիլ՝ վախնալով որ կը տկարանան եւ երեսներնուն գոյնը կը նեւտէ, բայց փորձով տեսնելով որ ուրիշներէն աւելի գէր ու կայտառ կ'երեւան, անոնց միշտ նոյն կերակուրը կը կերցընէր: Աստուած ալ իրենց մեծ գիտութիւն եւ իմաստութիւն տուաւ, իսկ Գանիէլին՝ միանգամայն երազ ու տեսիլք մեկնելու կարողութիւն: Արեք տարիէն թագաւորը հետեւնին խօսելով եւ Գանիէլի ու իր ընկերացը վրայ գտած իմաստութեան ու գիտութեան պէս մէկուն վրայ չգտնելով՝ զիրենք իր քովն առաւ:

Չ. Գանիէլին մեծ իմաստութիւնը հետեւեալ դէպքին մէջ երեւցաւ: Գերութեան մէջ գտնուող Հրէից երեւելիներէն մէկն էր

Յովակիմ՝ ծերունին, որուն տունը կու գային գաս ունեցողները: Ժողովրդեան գատր տեսնելու համար ընտրուած գատաւորներէն երկուքը՝ նոյն տեղն եկած գացած ատեննին՝ Յովակիմայ Շուշան կինը տեսնելով՝ վրան աչք ձգեցին ու չար կամբերնին կատարելու համար՝ յարմար առթի մը կը սպասէին: Օր մ'ալ զինքը պարտիզին մէջ առանձին գանելով՝ վրան գացին եւ իրեն դէմ զրպարտութիւն ընելու սպասնալեօք՝ կուզէին մեղքի մէջ ձգել: Շուշան քաջութեամբ դէմ դրաւ եւ կանչուրտ տելով սկսաւ օգնութեան կանչել: Գատաւորներն ալ սկսան պոռալ եւ մէջերնէն մէկը գնաց պարտիզին դուռը բացաւ: Յովակիմայ ծառաները ձայնն առնելով՝ պարտեղ վազեցին, եւ գատաւորները Շուշանին վրայ գէշ զրպարտութիւն բրին: Արկրորդ օրը ժողովուրդը Յովակիմին տունն եկած ատեն՝ ան երկու ծեր գատաւորները Շուշանայ վրայ սուտ ամբաստանութիւն բրին: Ժողովուրդն անոնց ըսածին հաւտալով՝ ըստ օրինաց խեղճ տիկինը մահուան գատապարտեց: Շուշան ուրիշ բան չկրնալով ընել՝ Աստուծոյ դիմեց եւ ինք զինքն անոր յանձնեց: Աստուած ալ անոր հառաչանքը լսելով՝ զինքը մեռցընելու տարած ատեննին՝ Գանիելին սուրբ հոգին զարթոյց, որն որ ժողովրդեան մէջէն սկսաւ պոռալ թէ Անոր արեան անպարտ եմ: Ժողովուրդը դարձաւ իրեն հարցուց թէ Ի՞նչ կ'ըսես: Անիկա զիրենք յանդիմանեց որ աղէկ մը չբննած՝ անմեղ մը կը գատապարտեն ու մեռցընելու կը տանին: Աւ երբ որ անոնք ի-



բնն յանձնեցին որ քննէ, Գանիէլ ան երկու  
 ծերերն իրարմէ զատել տալով եւ երկուքն  
 ալ առանձին առանձին կանչելով՝ հարցումներ  
 ըրաւ եւ իրարու հակառակ պատասխաններ  
 առնելով՝ անոնց ամբաստանութեան ստու-  
 թիւնը յայտնեց: Ան ատեն ժողովուրդն Աս-  
 տուծոյ փառք տուաւ, եւ ան երկու չար  
 ծերերը Մովսիսի օրինաց համաձայն սպան-  
 նուեցան:

## Կ Բ . Գ Ա Ս

1. Նարուբողանասորայ երազն ինչ էր, ո՞վ գտաւ ու  
 մեկնեց: — 2. Գանիէի երեք ընկերներն ինչու հոռո  
 նետուեցան եւ ինչպէս ազատեցան: — 3. Աստուած  
 Նարուբողանասորայ հպարտութիւնը չպատժած՝ ինչ  
 տեսիլքով խրատեց: Աւրան ինչ պատիժ իրկեց:

1. Նարուբողանասոր՝ իր թագաւորութեան  
 երկրորդ տարին երազ մը տեսաւ, որմէ շատ  
 վախնալով՝ իր տէրութեան ըոյրը մոզերն ու  
 կախարդներն առջեւ կանչեց. եւ որովհետեւ  
 նոյն իսկ երազն ալ մոռցեր էր, անոր համար  
 մահ սպառնալով՝ անոնցմէ խնդրեց որ թէ  
 տեսած երազն ու թէ՛ անոր մեկնութիւնն իրեն  
 բռնն: Անոնք երբ որ չկրցան, բարկացաւ եւ  
 հրամայեց որ Բարելոնի ըոյրը իմաստունները  
 մեռցընեն: Անմիջապէս հրամանը չորս դին ի  
 դորձ գրուելու սկսաւ. Գանիէլ ու իր ըն-  
 կերներն ալ ասոնցմէ սեպուելով՝ զիրենք ալ  
 կը փնտռէին որ սպաննեն: Գանիէլ ընկերնե-  
 րուն հետ ազօթքով Աստուծոյ դիմելէն ետեւ՝  
 թագաւորին առջեւն ելաւ, անոր տեսած ե-

բազն սկսաւ պատմել . Մեծ արձան մը տե-  
սար , ըսաւ , որուն գլուխը՝ սսկիէ , լանջքն ու  
բազուկը՝ արծրթէ , մէջքն ու բարձը՝ պղնձէ ,  
սրունքները՝ երկրթէ , իսկ ստուընբուն կէսը՝  
երկրթէ , կէսը խեցիէ էր : Մէյ մ'ալ մէկէն  
լերան վրայէն ինքիբմէ քար մը գլտորեցաւ ,  
արձանին երկրթէ ու խեցիէ ստուընբուն զար-  
նուելով՝ ջախջախեց , փոշի դարձուց , հոջն ալ  
առաւ տարաւ . իսկ քարը մեծցաւ խոշոր լեռ  
դարձաւ ու բոլոր աշխարհք բռնեց : Աս ըսե-  
լէն ետեւ՝ մեկնութիւնն ալ տուաւ . Գուն՝  
արբայից արբայ ես , ըսաւ . երկնից Աստուածը  
քեզի մեծ իշխանութիւնն ու զօրութիւն տուած  
եւ ամէն բան քեզի հնազանդեցուցած է : Ար-  
ձանին սսկիէ գլուխը դուն ես . քեզմէ ետքը  
քեզմէ տկար թագաւորութիւն մը պիտ'որ ել-  
լէ , որն որ է արծրթէ , անկէ ալ ետքը պի-  
տի ելլէ ուրիշ թագաւորութիւն մը՝ որն որ  
արձանին պղնձէ մէջքոջն ու բարձովը նշանա-  
կուեցաւ , եւ բոլոր երկրին պիտի տիրէ : Չոր-  
բորդ թագաւորութիւնն երկաթի պէս զօրա-  
ւոր պիտի ըլլայ , ամէն բան մանրէ ու մաշէ .  
բայց արձանին ստուընբուն պէս ալ՝ նոյն  
թագաւորութեան կէսը տկար , կէսը զօրաւոր  
պիտի ըլլայ : Աստուած աս վերջին թագաւո-  
րութեան ատեն՝ յաւիտեանս տեւող ուրիշ  
թագաւորութիւն մը պիտի հանէ , որն որ  
մէկալ թագաւորութիւնները պիտի փշրէ ու  
մանրէ , եւ մինակ ինք պիտի մնայ : Աս ալ  
լեռնէն վար գլտորող քարն է : Նարուքո-

1 Ոսկւոյ , արծաթի , պղնձի ու երկաթի մետաղ-  
ներով նշանակուած թագաւորութիւնները՝ Բա-

դոնտոր աս լսելով՝ Երեսին վրայ ինկած՝ Գանիելին երկրպագութիւն ըրաւ, անոր Աստուծոյն՝ Ճշմարիտ Աստուած բլայր խոստովանեցաւ եւ զինքը բոլոր իր տէրութեան վրայ իշխան ու Բարեւոյնի իմաստուններուն գլուխ դրաւ: Գանիելի խնդրովն իր ընկերները տէրութեան պաշտօնի մէջ մտան, իսկ ինք միշտ թագաւորին պալատն էր:

Չ. Նարուքոդոնտոր Հրէաստան առնելէն ետեւ՝ Երեսիա ու Եզեկիէլ մարգարէներուն գուշակութեան համաձայն՝ Հրէից մօտ բլտղաղգերը նուաճեց: Տիւրոս քաղաքը տասուիրէք տարի պաշարելէն ետքը՝ առաւ, Սիդոնացիքը, Մովաբացիքը, Եդոմացիքն ու Ամոնացիքը նուաճեց, նաեւ Եզիպտոս առաւ: Յաղթութեամբ ետ դարձած ատեն՝ իր տէրութեան մէջ ոսկիէ արձան մը կանգնել տուաւ, որուն բարձրութիւնը վաթսուն կանգուն էր, իսկ լայնութիւնը՝ վեց: Ասոր հանդէսը կատարելու համար իր տէրութեան բոլոր մեծամեծ պաշտօնատէրները հրաւիրեց, եւ երբ որ ժողովեցան, հրամայեց որ փողերուն ձայնն առնելուն պէս՝ ամէնքն ալ երեսի վրայ ինկած՝ արձանին երկրպագութիւն ընեն. եւ չընողը վառած հնոցի մէջ նետեն: Գանիէլ աս հանդիսութեան ներկայ չէր. իսկ իր ընկերները՝ թէպէտ եւ հոն էին, բայց երկրպագութիւն չըրին: Թագաւորն աս լսելով՝ բարկացաւ, զանոնք առջևը կանչեց յանդիմանեց

բելացոց, Պարսից, Յունաց ու Հռոմայեցոց թագաւորութիւններն են. յախտեանս տեսող թագաւորութիւնն ալ Քրիստոսինն է:

եւ բորբոքեալ Հնոցի մէջ նետել տալու սպառնալիք ընելով՝ հրամայեց որ անկէ ետեւ՝ երբ որ փողերուն ձայնն առնեն նէ, իր արձանին երկրպագութիւն ընեն: Անոնք մէկէն պատասխան տուին որ Մեր պաշտած Աստուածը կրնայ զմեզ Հնոցէն ու քու ձեռքէդ ազատել. ուստի կանգնած արձանիդ երկրպագութիւն չենք ըներ: Նարուքող սնոսոր անմիջապէս հրամայեց որ Հնոցը եօթնաբարեկ վառեն եւ ան երեքը կապած՝ մէջը նետեն: Հրամանն ի գործ դրուեցաւ. նաւթով եւ ասոր նման դիւրավառ նիւթերով Հնոցն անանկ բորբոքեցաւ, որ բոցը քառասունուինը կանգուն վեր կ'ելէր: Գանիելի երեք ընկերքը բռնեցին, ձեռու ընին ու ոտու ընին կապած՝ մէջը նետեցին: Բայց Աստուած անոնց օգնութեան հասնելով՝ հրեշտակ մը խրկեց, որն որ քովերնէն կրակը մէկդի բրաւ եւ զով հողմ հանելով՝ զիրենք անփսս պահեց. անանկ որ հրեշտակին հետ Հնոցին մէջ ասդին անդին պտրտելով՝ զԱստուած կը փառաւորէին: Նարուքող սնոսոր զանոնք տեսնելու գալով եւ Հնոցին մէջ չորս հոգի տեսնելով, զարմացած՝ հարցուց որ Մենք երեք հոգի չնետեցինք, չորրորդ մ'ալ կը տեսնեմ: Ատքը երեքն ալ իրենց անունովը կանչելով՝ Օսաայք Աստուծոյ բարձրելոյ, դուրս ելէք, ըսաւ: Անոնք դուրս եկան նէ, Նարուքող սնոսոր տեսնելով որ բոյրրովին անփսս են Քնացեր, մազերնին խկ քիչ մը բլայ՝ չէ պրեր, Աստուծոյ փառք տուաւ եւ զԱնիկա հայհոյողին մահ սպառնաց: Ասանկով Գանիելի երեք ընկերները նորէն իրենց առջի պա-

տիւն ընդունեցան եւ Նարուբոդոնոսորայ  
 հպատակ եղող Հրէից վրայ իշխան եղան :

Յ . Թեպէտ Նարուբոդոնոսոր այսպէս Աս-  
 տուած ճանչցաւ , բայց վարքն ամենեւին չուղ-  
 ղեց : Աիրան իր յաղթութիւններուն վրայ  
 սաստիկ բարձրացած ըլլալուն համար՝ Աս-  
 տուած զինքը պատժել ուզեց . բայց պատի-  
 ժը գլուխը չբերած՝ տեսիլքով մը զինքը խրա-  
 տեց : Թագաւորը քնոյն մջ արտաբոյ կարգի  
 բարձր ծառ մը տեսաւ , որուն ծայրը մինչեւ  
 երկինք կը հասնէր , վրան շատ պտուղ կար ,  
 տերեւներն ալ գեղեցիկ էին , ամէնքն անկէ  
 կը կերակրուէին , վայրենի զազանները տակը  
 կը հանգչէին , երկինքի թռչուններն ալ ու-  
 տերուն վրայ : Մէյ մ'ալ երկինքէն հրեշտակ  
 մ'իջաւ , բարձր ձայնիւ ըսաւ . Ոստերը կտրե-  
 ցէք ու վրայի պտուղները ցրուեցէք . բայց  
 արմատէն ելած մէկ շառաւիղը պղնձէ ու եր-  
 կրթէ շղթայով կապած՝ դաշտի խոտերուն  
 վրայ Յնայ , թող երկինքի ցօղէն թրջի ու վայ-  
 րի անասնոց հետ ճարակի , մարդու սրտիտեղ՝  
 անասնոց սիրտ տրուի եւ անանկ եօթը ժամա-  
 նակ (խել մը ատեն) կենայ , մինչեւ որ ամէնքն  
 իմանան որ Բարձրեայն ամէն թագաւորներուն  
 կը տիրէ : Նարուբոդոնոսոր աս տեսիլքէն զար-  
 հուրելով՝ զԳրանիէլ կանչեց , իրեն պատմեց եւ  
 մեկնութիւնն ուզեց : Ան ալ մէկ ժամի չափ  
 միտքը խռոված կենայէն ետեւ՝ Ան բարձր ու  
 գեղեցիկ ծառը դուն ես , ըսաւ . հրեշտակին  
 զրուցածներն ալ ան չարիքը կը նշանակեն ,  
 որ Բարձրեայը գլուխդ պիտի բերէ : Գուն  
 մարդկային ընկերութենէ պիտի մերժուիս ,

խել մը ատեն վայրի գազաններուն հետ ընակիս եւ արջառի պէս խոտ պիտի ուտես, մինչեւ ճանչնաս որ Աստուած ամէն թագաւորներուն վրայ կը տիրէ: Բայց թագաւորութիւնդ պիտի չկորսնցընես նորէն աթոռ պիտի ելլես: Արդ որպէս զի ան գարու չարիքէն ազատիս՝ մեղքերուդ համար ողորմութիւն տուր: Նաբուքոդոնոսոր անոր խորհուրդը չբռնեց, ուստի տարի մը ետքը իր պալատին տանիքին վրայ պտըտած ատեն՝ երբ որ հզարտութեամբ ինք իրեն կ'ըսէր. Իմ զօրութեամբս աս մեծ Բաբելոնը շինեցի, մէկէն երկինքէն ձայն առաւ, որ կ'ըսէր. Նաբուքոդոնոսոր, թագաւորութիւնդ վրայէդ գնաց, ասկէ ետքը արջառի պէս խոտ պիտ'որ ուտես: Իրօք ալ անանկ եղաւ, մինչեւ որ սահմանուած ատենը հասնելով՝ միտքը նորէն վրան եկաւ, եւ աչքն երկինք վերցընելով՝ Աստուծոյ բարձրելոյն գովութիւն ու փառք տուաւ: Ան ատեն պատժէն ազատեցաւ, իր պալատականներուն ուղեւովը՝ գահն անցաւ եւ զԱստուած օրհնեց ըսելով՝ Էս Նաբուքոդոնոսոր՝ ամբարտաւանները խոնարհեցընող երկնաւոր թագաւորը կ'օրհնեմ, կը դովեմ ու կը փառաւորեմ:

## Կ Գ . Գ Ա Ս

1. Աիւրոս ս՛վ է, Բարեւոն ինչպէս մտաւ: Մարգու  
ձեռքի մատուցները պատին վրայ ինչ գրեցին. ս՛վ կրցաւ  
կարգաւ: — 2. Գանիէլ՝ առաջին անգամ գուր ինչու  
նետուեցաւ. ինչպէս ազատեցաւ: — 3. Բելայ առջեւը  
գրուած կերակուրները քրմերուն ուտելն ինչպէս ցու-  
ցուց: — 4. Ինչու երկրորդ անգամ գուր նետուեցաւ:  
Իրեն ս՛վ կերակուր տարաւ: Ինչպէս ազատեցաւ:

1. Նարուքոզոնոսը իր պատուհասէն  
բժշկուելէն քիչ մը ետքը մեռնելով՝ տեղն  
անցաւ Իդմարուդաք, ասոր ալ Բաղտասար  
յաջորդեց: Բաղտասարայ ատեն Աիւրոս՝ իր  
մօրեղբօրը Աիւքսար Բ.ին տակ իրբել զօրա-  
վար՝ Մարայ, Պարսից եւ Հոյոց զօրքերով  
զԲաղտասար եւ զԱրիւսոս անոր դաշնակիցը  
յաջողութեամբ զարկաւ ու Բաղտասարը Բա-  
բելոնի մէջ պաշարեց: Երկու տարւան մէջ  
Եփրատայ վերի գիւրն ուրիշ ճամբայ բանա-  
լով՝ Բարելայուոց հանդիսաւոր մեծ տօնի մը  
գիշեր, որ ատենն որ ամէնքը սովորաբար շուայ-  
տութեան ու արբեցութեան մէջ կ'ըլլային,  
գետին ջուրը մօտ տեղի ծովակին մէջ դար-  
ձուց ու զօրքը նոյն գետին յառաջագոյն վա-  
զած տեղէն քաղաք խոթեց:

Բաղտասար քաղաքն առնուելէն յառաջ  
նոյն հանդիսաւոր տօնին մէջ տէրութեան  
մեծամեծներուն մեծ սեղան տուաւ, եւ զի-  
նովնալով՝ տաճարէն ու Երուսաղեմէն առ-  
նուած սօկիէ, արծրթէ ամանները բերել  
տուաւ, անոնցմով թէ ինք ու մեծամեծները  
եւ թէ կանայքը կը խմէին եւ իրենց կուռքե-  
րուն փառք կու տային: Մէյ մ'ալ յանկարծ

մարդու ձեռքի մատուրներ երեւնալով՝ անոնց նստած տեղւոյն պատին վրայ բան մը գրեցին: Թագաւորն աս տեսնելով՝ սաստիկ այլայլեցաւ եւ անմիջապէս մտերն ու իմաստունները բերել տալով՝ ան գրերը կարդացողին ու մեկնողին մեծամեծ պարգեւներ եւ իշխանութիւններ խոստացաւ, բայց մէջերնէն մէկը չկրցաւ կարդալ: Թագուհւոյն խրատովը Գանիէլ կանչուեցաւ, որն որ եկաւ, Բաղտասարայ բրած խոստումները մերժելով՝ այսպէս խօսեցաւ. Ա՛րքայ, Աստուած Նարուքոզոնոսորայ մեծ զօրութիւն ու տէրութիւն տուաւ, եւ երբ որ անիկա հպարտացաւ, զինքը խոնարհեցընելու համար՝ անասնոյ կերպարանք խոթեց, մինչեւ որ Աստուծոյ բարձրոյն զօրութիւնը ճանչցաւ: Գուն ասոնք զխանալով՝ Աստուծոյ առջևը չխոնարհեցար, այլ անոր տաճարին ամանները կերուխումի գործածեցիր. շաստուածները կ'օրհնես եւ ճշմարիտ Աստուածը չես փառաւորեր: Անոր համար ինքն ալ անձանօթ ձեռքով մը աս գրեց. Մ-նէ, Թ-իէշ, Փ-շէ- . Մանէ՛ ըսել է Աստուած Թագաւորութիւնդ չափեց եւ վերջը հասցուց. Թեկէզ՝ Աշուեցար ու պակաս էլար. Փարէս՝ Թագաւորութիւնդ բաժնուեցաւ՝ կէսը Մարաց, կէսը Պարսից տրուեցաւ: Ան ատեն Թագաւորն անոր ծիրանի հազուց ու զինքն իր երկրորդը հրատարակեց: Բայց նոյն գիշեր Բարելոն՝ վերը զրուցուած կերպով առնուեցաւ եւ Բաղտասար սպանուելով՝ տէրութիւնը Ախարսար Բ.ին ձեռքն անցաւ. ասանկով Ախարսարայ



տակ, մէյ մը Բաղտասարայ թագաւորու-  
թիւնն եղաւ, որ է՝ Բաբելլացւոց եւ Ասորես-  
տանեայց, մէյ մ'ալ բուն իրենը, այս ինքն՝  
Մարաց եւ Պարսից :

Ձ. Արաքսար ամօռը Բաբելլոն դրաւ, եւ  
Հաւանականարար զԱլիւրոս իր թագաւորու-  
թեան բարձակից բրաւ : Արաքսար ան չորս  
թագաւորութիւնները 120 նահանգ բաժնեց,  
անոնց ամէն մէկուն վրայ մէյ մէկ նախարար  
դրաւ, ասոնց ամենուն ալ վրայ՝ երեք իշխան,  
որոնց մէկն էր Գանիէլ՝ որուն մեծ իմաստու-  
թեան զարնուելով՝ ան երեք իշխանաց զլուխ  
կ'ուզէր կարգել : Անոր Համար ամէնքը վրան  
նախանձելով՝ զինքը ձգելու առիթ կը փն-  
տռէին. եւ որովհետեւ ուրիշ բան չէին կրնար  
գտնել, մտածեցին իր Աստուծոյն օրինաց ճիշդ  
պահպանութիւնը ձեռք առնել : Աւ այսպէս  
ամէնքը միաբան Արաքսարէն խնդրեցին որ  
Հրաման Հանէ որ երեսուն օր մէկը աստուած-  
ներէն կամ ուրիշ մէկէ մը ամենեւին բան  
չխնդրէ, այլ մինակ թագաւորէն խնդրէ, եւ  
աս Հրամանին գէմ՝ ընողն՝ առիւծներու գու-  
րը նետուի : Թագաւորն անոնց խօսքը մտիկ  
ընելով՝ ան Հրամանը Հանեց : Բայց Գանիէլ  
նոյնը բանի տեղ չգնելով՝ օրը երեք ժամի  
չափ դէպ ի Արուսաղէմայ կողմը նայող պա-  
տուհանը կը բանար, ծնկան վրայ ինկած՝ Աս-  
տուծոյ աղօթք կ'ընէր : Թշնամիներն ասոր կը  
սպասէին. ուստի գացին զինքը թագաւորին  
մատնեցին : Թագաւորն աս բանիս վրայ խիստ  
տրտմեցաւ, եւ մինչեւ իրիկուն՝ ճամբով մը  
զԳանիէլ աղատելու կը ջանար : Իսկ թշնամի-

ները՝ Մարաց ու Պարսից թագաւորներուն հրամաններն անփոփոխ մնալու օրէնքն յառաջ բերելով՝ ոտք կը կոխէին որ պատժուի: Ան ատեն թագաւորը Ղրանիէլ առիւծուց գուրը նետել տուաւ եւ զբին բերանը մեծ քարով գոցել ու իր մատանեաւը կնքել տայէն ետեւ՝ արամու թեամբ տուն դարձաւ, կերակուր չկերած՝ պառկելու գնաց: Բայց զիշերը քունը չտանելով՝ առտու բլալուն պէս՝ շուամբ զբին քովը գնաց, Գանիէլ, պաշտած Աստուածդ զքեզ առիւծներու բերնէն կրցաւ ազատել, կանչեց: Գանիէլ ներսէն պատասխան տուաւ որ Իմ Աստուածս իր հրեշտակը խրկեց, առիւծուց բերանը գոցեց, անոնք ինծի բան մը չկրցան ընել: Թագաւորը սաստիկ ուրախութեամբ լեցուած՝ զինքը հանել տուաւ զը շարախօսները նոյն գուրը նետել տուաւ, որոնք անմիջապէս առիւծներուն կերակուր եղան: Արարար առանձին հրովարտակով իր ժողովրդեան ապստրեց որ ամէնքը Գանիէլի պաշտած Աստուածն յարգեն ու փառաւորեն:

Յ. Բարեխաղիք կուռք մ'ունէին Բէլ անունով, որուն օրը շատ ախիւր, քառասուն ոչխար, վեց մար գինի կ'երթար: Օր մը թագաւորը Գանիէլին հարցուց որ Ինչու Բելին երկրպագութիւն չես ըներ: Ան ալ պատասխանեց. Ես մինակ երկիրն ու երկիրը ստեղծող Ճշմարիտ Աստուծոյ կենդանոյ երկրպագութիւն կ'ընեմ: Թագաւորը հարցուց. Ի՞նչ, Բէլը կենդանի Աստուծոյ տեղ չե՞ս գներ, չե՞ս տեսներ՝ օրը որչափ բան կ'ուտէ: Գանիէլ ծիծաղելով ըսաւ որ Բելին

ներսի դին՝ կաւ, դրսի դին՝ պղինձ է. պարապ տեղ մի խաբուիր՝ անիկա ամենեւին բան մը կերած չունի: Ան ատեն թագաւորը նոյն կուռքին քրմերը բերել տալով՝ ըսաւ. Եթէ ինձի չէք ըսեր որ Բելին համար դացած կերակուցն ո՞վ կ'ուտէ, ամէնքդ ալ կը մեռցընեմ. իսկ թէ որ Բելին ուտելը ցուցընելու ըլլաք, Գանիէլ կը մեռնի: Քրմերն իրեն պատասխան տուին որ Մենք դուրս ելլենք, դուն Բելայ առջեւը կերակուրները դիր, դուրս ել, տաճարը գոցէ, մատանուովդ ալ կնքէ, որ մէկը կարող չըլլայ բանալ. եւ եթէ երկրորդ օրը ներս մտած ատենդ՝ չես գտներ որ Բէլ ան կերակուրները կերած լմնցուցած է, մենք ամէնքս մեռնինք: Թագաւորն անոնց ըսածը կատարեց. բայց դուրս չելած՝ Գանիէլ թագաւորին առջեւն իր յատուկ ծառաներուն ձեռքովը տաճարին յատակը մտնելու ցանել տուաւ: Գուռը գոցուեցաւ եւ թագաւորին մատանուովը կնքուեցաւ: Երկրորդ օրը թագաւորը Գանիէլին հետ տաճար գալով, դուռը բացուելուն պէս՝ մէկէն աչուրները Բելին առջեւի սեղանին դարձուց, եւ հոն ամենեւին կերակուր չգտնելով, սկսաւ՝ Մեծ ես, Բէլ, կանչել: Բայց Գանիէլ ծիծաղելով՝ գետինը ցուցուց, ուր որ լեցուն սաքի տեղեր կային: Թագաւորը նայելով՝ Ես հոս էրիկ մարդիկներու, կնիկ մարդիկներու եւ տղոց սաքի տեղեր կը տեսնեմ, ըսաւ: Շուտ մը քրմերն եւ անոնց կանայքն ու տղաքը բերել տուաւ, որոնք նեղ մտնելով՝ Բելայ առջեւը դրուած սեղանին տակը գաղտուկ ծամբայ մը

ցուցուցին, որմէ զիշերները տաճար կը մտնէին կուռքին համար դրուած կերակուրները կ'ուտէին: Թագաւորը զամէնքն ալ սպաննել տուաւ ու Գանիելի ձեռքովը Բէլն ու տաճարը կործանեց:

¶ Բարեւրացիք մեծ վիշապ մ'ալ կը պաշտէին: Օր մը Թագաւորը Գանիելի հարցուց. Ասոր համար ալ կրնաս ըսել որ կենդանի Աստուած չէ: Գանիել պատասխան տուաւ որ Ինծի հրաման կու տաս նէ, առանց սրոյ ու գաւազանի զինքը մեռցընեմ: Թագաւորն աս բանիս հաւանելով՝ Գանիել զնաց եղ, ձէթ, մաղ ու ճարպ մէկտեղ եփեց, վիշապին տուաւ, որն որ ուտելուն պէս՝ պայթեցաւ: Գանիել զարձաւ՝ Տեւէք, ըսաւ, ինչպիսի Աստուծոյ երկրպագու թիւն կ'ընէք եղեր: Բարեւրացիք կատղեցան. Թագաւորնիս Հրեայ եղեր է. Բէլը կործանեց, վիշապն սպաննեց, քրմերը մեռցընել տուաւ ըսելով, զյուխր ժողովեցան, ուղեցին որ զԳանիել ձեռքերնին տայ. Ապա թէ ոչ՝ զքեզ եւ բոլոր տունդ թրէ կ'անցընենք, կ'ըսէին: Թագաւորը նեղ մտնելով՝ Գանիելը ձեռուրնին տուաւ: Անոնք զինքն առին առիւծներու գուրը նեւեցին, որուն մէջ եօթն առիւծ կար, որոնց օրը երկու մարդ, երկու ոչխար կը արուէր, բայց նոյն օրը բան մը չտուին, որպէս զի զԳանիել շուտ մը զիշատեն: Հրէաստան Ամբակում անունով մտրգարէ մը կար. ասիկա իր մշակացը կերակուր տանելու համար անդ երթալու ատեն՝ Աստուծոյ կողմանէ հրէշտակ մը իրեն երեւցաւ ըսաւ որ ճաշը Բարելուն առիւծնե-

բու գուրբ տանի Գանիելին տայ, եւ մազէն բռնելով՝ մէկէն զինքը Բաբելոնի գրին քովը տարաւ : Ամբակում զԳանիել վերէն կանչելով՝ կերակուրը տուաւ . Գանիել ալ Աստուծոյ գոհացաւ, ելաւ կերաւ : Ետքը հրեշտակը նորէն Ամբակումին մազէն բռնեց տեղը տարաւ : Գանիել վեց օր ասանկ հոն մնալէն ետեւ՝ եօթներորդ օրը թագաւորը արամած՝ գրին քովն եկաւ վրան լարու համար : Բայց երբ որ գրէն վար նայեցաւ եւ առիւծներու մէջտեղը զինքն ողջ առողջ նստած գտաւ, սկսաւ կանչել . Մե՛ծ ես, Տէր Աստուած Գանիելի : Եւ շուտ մը զԳանիել անկէ հանել տալով՝ հրամայեց որ իր թշնամիները մէջը նետեն :



Գանիել՝ Մեծայն իւր շնորհքով :

Գանիելի բոլոր տեսած տեսիլքներուն ու յայտնութիւններուն մէջ ամենէն աւելի յիշատակաց արժանին՝ Մեսիայի վրայ ունեցած յայտնութիւնն է՝ զորն որ Աստուած կիսքսար Բին առաջին տարին իրեն ցուցուց : Գանիել իր գերութեան ատենը միշտ Աստուածաշնչի գիրքը եւ մանաւանդ Երեմիայի մարգարէութիւնները կը կարգար, որուն մէջի Երուսաղեմայ կործանման ու Բաբելոնի գերութեան եօթանասուն տարի տեւելուն վրայ գրուածը վրան մեծ ազդեցութիւն կ'ընէր : Երբ որ մտածելով գտաւ որ Բաբելոնի գերութեան եօթանասներորդ տարին (Յովակիմայ առջի անգամ գերի բռնուած ժամանակէն հաշուելով) ընննալու վրայ է, շէպ ի երեկոյեան պատարագին ջրերը ազօթքի կեցած ատեն՝ իր ու ժողովրդեան մեղքը խոստովանելէն ետեւ՝ գերութենէ ազատելուն :

աաճարին ու Երուսաղեմայ նորոգուելուն համար մասնաւորապէս աղօթք բրաւ: Նոյն ատեն Աստուած Գարրիէլ հրեշտակին ձեռքով չէ թէ միայն Հրէից զերութենէ դարձը, այլ նաեւ բոլոր մարդիկներուն քրիստոսի ձեռքով փրկուիլն իրեն իմացուց: Աղօթքին մէջ Գարրիէլ հրեշտակը տեսաւ, որ թռչելով իրեն եկաւ ըսաւ. Աստուծոյ հաճելի ըլլալուդ համար՝ աղօթքի նստելուդ պէս՝ Աստուած ինձի հրամայեց որ դամ աս լրերը քեզի տամ: Քու ժողովրդեանդ ու Երուսաղեմայ վրայ եօթանասուն եօթներորդք սահմանուեցան, որպէս զի այնչափ ատենուան միջոցին մէջ անօրէնութիւններն ու մեղքերը վերջանան, արդարութիւնը հաստատուի, մարգարէութիւնները կատարուին ու սրբութիւն սրբոց օծուի: Աստի գիացիր որ Երուսաղեմայ շինութեան համար հրաման ելած ատենէն մինչեւ Օձեալ առաջնորդը (Քրիստոս) եօթն եօթներորդ ու վաթսունուերկու եօթներորդ պիտի անցնի: Վաթսունուերկու եօթներորդէն վերջը Օձեալը պիտի սպաննուի եւ զանկիա ուրացող ժողովուրդն՝ ալ Աստուծոյ ժողովուրդ պիտի շկոչուի: Ազգ մը իր առաջնորդովը կամ զօրապետովը պիտի գոյ քաղաքն ու սրբութիւնը պիտի աւրէ: Նոյն եօթներորդին մէջ շատերն ուխտ պիտի դնեն, եւ նոյն եօթներորդին կեսին՝ զոհերն ու նուէրները պիտի դադրին:

Հրեշտակը Երուսաղեմայ ու Տաճարին շինուելուն համար ելած հրովարտակէն մինչեւ Քրիստոս՝ եօթանասուն եօթներորդ ( $7 \times 70 = 490$  տարի) հաշուեց: Ետքը այսչափ տարւան մէջ ըլլալու բաներուն իւրաքանչիւր ատենն որոշելու գալով՝ 490 տարին երեք զար բաժնեց: Առջի զարուն մէջ (եօթը եօթներորդ, այս ինքն՝  $7 \times 7 = 49$  տարի) Երուսաղեմ ու աաճարը պիտի նորոգուի: Երկրորդ զարուն մէջ (վաթսունուերկու եօթներորդ, այս ինքն՝  $7 \times 62 = 434$

տարի) Երուսաղեմայ ու տաճարին շինուիլը լճրննալէն մինչեւ Քրիստոսի մկրտուիլն ու Հոգւոյն սրբոյ ձեռքով (մկրտութեան ատեն) օծուիլն՝ անցած ատենները կը պարունակուին : Երբորդ դարուն մէջ որն որ եօթը տարւան միջոցէ, Քրիստոս պիտի քարոզէ, ու վերջին ընթրեաց մէջ հաղորդութեան սուրբ խորհուրդը հաստատելովը՝ շաաերուն (իր հաւատացեալներուն) հեա նոր դաշինք պիտի դնէ : Եւ նոյն դարուն կեսին իր խաչ ելլելովը՝ հին օրէնքը պիտի դադրի, անոր զոհերն ու պատարագները զօրութիւննին պիտի կորսընցընեն :

Չիզիտցուիր որ արդեօք Գանիէլ Հրէից՝ գերութենէ դառնալը տեսաւ թէ չէ. վասն զի ստոյգ կ'երեւայ որ Աիւրոսին ինքնիշխան թագաւորելուն առաջին տարին մեռած ըլլայ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Տ Ի .

Գեբր-իեմէ երէք պարտիկ Բագարաց որմի :

(536-330)

Կ Գ . Գ Ա Ս

1. Աիւրոս ուստի շարժեալ՝ Հրէից հրաման տուաւ որ տեղերնին դառնան ու տաճարը շինեն : Իրենց ուրիշ ինչ բարիք ըստ : Ճամբայ ելլողներն սրլափ հոգի էին : Սաճարացիք տաճարին շինուիլն ինչպէս խափանեցին : —
2. Ինչպէս եղաւ որ Հրեայք նորէն տաճարին շինուիլը յատալ տարին, եւ որուն ատենը կատարեալ լճընցաւ :

1. Աիւրոսար Բ. Բարեւրնի առնուելէն երկու տարի ետքը մեռաւ եւ Աիւրոս առանձին թագաւորեց : Նոյն տարին Բարեւրնի

գերութեան եօթանասներորդ տարին լմբնալով՝ Աստուած մարգարէից ձեռքով ժողովրդեան խոստացածը կատարեց, զիրենք գերութենէ դարձնելով: Հաւանականաբար Գանիէլ նոյն թագաւորին հասկըցուցած էր Եսայի մարգարէին իր վրայ բրած մարգարէութիւնները. անոր համար ինքն ալ առանձին տիրելու սկսածին պէս՝ Աստուծով շարժեալ իր տակն ըլլող Հրէից հրովարտակով մը հրաման տուաւ, որ ամէնքը Երուսաղէմ երթան, հոն Խորալեյի Աստուծոյն տաճար շինեն: Աս հրովարտակին զօրութեամբ Յուդայի ու Բենիամինի ցեղն եւ մէկալ ցեղերէն զօժ որ Աստուած շարժեց նէ, բոլոր քահանայից ու Ղեւտացւոց հետ, Երուսաղէմ երթալու եւ Աստուծոյ տաճարը շինելու պատրաստուեցան: Նարուբոդոնոսորայ՝ Երուսաղէմի տաճարէն առած անօթներն ալ ետ դարձուց Աբարոս եւ հրամայեց որ տաճարն իր ծախքովը շինուի: Աս ալ բաւական չէ, նոյն իսկ իրենց զբացի օտար ազգերն սկսան իրենց արծաթ, ոսկի, կահ եւ անասուն պարգեւել: Առջի անգամ Երուսաղէմ երթալու ճամբայ ելլողները՝ 42,000 հոգի էին, ասոնցմէ զատ 7000 ծառայ եւ աշակին կար: Իրենց գլուխ եւ առաջնորդ ըլլողն էր Յեսու նոյն ատենուան քահանայապետը եւ Չորաբարէլ, որն որ Սաղաթիելին որդին եւ Յուդայի Յեքոնիա թագաւորին թոռն էր: Տաղաւարահարաց տօնին մօտ օրերը Երուսաղէմ հասնելով՝ հանդիսութեամբ նոյն տօնը կատարեցին, եւ ան օրէն սկսեալ՝ օրէնքէն որոշուած զոհերը շարունակեցին:



Երկրորդ տաճարին հիմը հանդիսութեամբ դրին. քահանայք փողով, Ղեւտացիք ծնծղաներով՝ Աստուծոյ օրհնութիւններ կ'երգէին: Առջնպէս ժողովուրդն ուրախութեամբ Աստուծոյ փառք կու տար: Սամարացիք՝ որոնք կէս մը տասը ցեղերուն Իսրայելացիներէն, կէս մ'ալ զանազան հեթանոս ազգերէ բլլալով՝ ճշմարիտ Աստուծոյ ծանօթութիւնն եւ անոր օրէնքները կուստապաշտական սովորութիւններով խանդարած էին, կ'ուզէին որ տաճարին շինութեան իրենք ալ օգնեն, որպէս զի ասով բուն Իսրայելացւոց հետ հաղորդակցութիւն ունենան: Բայց Չորաբարէլ, Յեսու քահանայապետն ու ժողովրդեան ուրիշ զխաւորները զանոնք մերժեցին՝ մնար վարդապետութիւն ունենալուն համար: Անոնք ասոր վրայ բարկանալով՝ Պարսից իշխաններուն ստակ կերցուցին եւ Հրէից վրայ բրած սուտամբաստանութիւննին կրցան Պարսից թագաւորներուն հաւտացընել: Այսպէսով տաճարին շինութիւնը տասնուհինգ տարի, մինչեւ Գարեհ Աին երկրորդ տարին, արդելուած մնաց:

2. Ասով Հրեայք եռանդնին կորսընցընելով՝ Աստուծոյ տաճարը շինելու ատենը դեռ եկած չէ, կ'ըտէին. եւ իրենք զիրենք՝ ասուն շինելու, աներնին զարդարելու եւ երկիր բանելու կու տային: Աստուած Անդէաս ու Չաքարիա մարգարէները խրկեց, որոնք իրենց անհոգութիւնն յանդիմանեցին. եւ Քրիստոսի դալտեամբ՝ ետքի ատենուան աւելի սրայծառութիւնը ցուցընելով՝ զանոնք քաջալերե-

ցին: Ժողովուրդն անսնց տուած խրախոյսէն շարժելով՝ Զորաբարելի ու Յետուայ առաջնորդութեամբը տաճարին շինութիւնն յառաջ տարին: Երբ որ Պարսից դաւառապետներն իրենցմէ լսեցին որ Ալուրոսին հրամանաւ շէնքը յառաջ կը տանին, չհաւատով՝ Ալուրոսին աս վախճանաւ հանած հրովարտակը փնտռել տուին, որն որ դանուելով՝ Գարեհ՛ Ա. բոլոր դաւառապետաց հրամայեց որ չէ թէ միայն անսնց արգելք չդնեն, այլ մանաւանդ օգնեն ալ: Այսպէսով տաճարը նոյն Գարեհին վեցերորդ տարին լմնցաւ, եւ նուիրման հանդէսը շատ փառաւորութեամբ կատարուեցաւ: Քահանայք ու Ղեւտացիք նորէն սկսան իրենց կարգը բռնել ու պաշտօննին կատարել:

#### Կ Ե . Գ Ա Ս

1. Էսթեր ով է. Ինչպէս Արտաշէսին տիկինն եղաւ: — 2. Համան ով է. Հրեից գեժ Ինչ շարիք նիւթեց: Էսթեր աս առթին ինչ բաւ: — 3. Ատառած Համանայ նիւթած շարիքն Ինչպէս իր գլուխը դարձուց:

1. Էսթեր Բենիամինի ցեղէն Ամինադարին աղջիկն էր՝ հայրը մայրը մեռնելէն ետքը՝ զինքն իր հօրեղբայրը Մուրդաէ կը հօգար, որն որ Նարուբոդոնոսորէն գերուելով Սիսիս արքայանիտա քաղաքը կը բնակէր: Արտաշէս (հաւանականաբար Ա.) իր Ասթինէ կինը երեսէ ձգելով՝ բոլոր Պարսից տէրութեան մէջ տիկնութեան յարմար աղջիկներ կը փնտռուէր: Աս վախճանաւ ընտրուած քանի մը աղջկանց մէջ Էսթեր ալ մտնելով՝ անսնց

Հեա մէկտեղ արքունիք բերուեցաւ եւ ներքին-  
 նւոյ մը յանձնուեցաւ : Տարի մը պատրաս-  
 տուելէն ետեւ՝ երբ որ թագաւորին առջեւն  
 ելան՝ Արտաշէս ամենէն աւելի զԱսթեր հաւ-  
 նեցաւ, զլուխը թագ դրաւ եւ թագուհի բ-  
 րաւ : Ասթեր Մուրղքէին խրատուն անսարով՝  
 իր սով եւ ուստի բլլալը, նմանապէս Մուրղ-  
 քէին՝ իր ազգականն բլլալը ծածուկ կը պա-  
 հէր : Մուրղքէ թագաւորին տան հոգաբար-  
 ձուն էր եւ իր հաւատարմութեան համար  
 մեծ համարում ունէր : Անգամ մը Արտաշի-  
 սին պալատան ներքինիներէն երկուքը միա-  
 բանեցան թագաւորը սպաննելու : Մուրղքէ  
 անոնց չար խորհուրդն իմանալով՝ անմիջապէս  
 բանն Ասթերայ ձեռքով թագաւորին աղանջն  
 հասցուց : Արտաշէս զանոնք բռնել կախել  
 տուաւ, բայց Մուրղքէն աս բանիս համար  
 չվարձատրեց, միայն թէ անոր աս հաւատար-  
 մութեան գործքը յիշատակարանի մէջ անցը-  
 նել տուաւ :

2. Անոր վրայ քանի մը տարի անցնելէն  
 ետեւ՝ Արտաշէս իր իշխաններէն Համան ա-  
 նունով մէկը բարձրացուց, իր երկրորդն բ-  
 րաւ, եւ հրամայեց որ ամէնքն անոր երկրպա-  
 գութուն ընեն : Աս հրամանին ամէն մարդ  
 հնազանդեցաւ, բայց Մուրղքէ չէր կատարեր :  
 Համան՝ որ արդէն անոր մատնած երկու ներ-  
 քիններուն համար՝ վրան սիս պահած էր, աս  
 բանիս վրայ աւելի կատուելով, ուզեց չէ թէ  
 միայն իրմէ, այլ բոլոր Հրէից ազգէն վրէժ  
 առնել : Աւստի դնաց Արտաշիսին առջեւը  
 Հրէից վրայ շարախօսութիւն բրաւ, զանոնք

տէրութեան փաստակար ցուցուց, եւ անբաւ  
ստակ խոստանալով՝ խնդրեց որ իրեն հպատակ  
եղող Հրեաները սրէ անցընելու հրաման տայ :  
Արտաշէս առ բանիս հաւանեցաւ ու ձեռքի  
մատնին Համանին տուաւ, որպէս զի առ նիւ-  
թիս վրայ հանուելու հրովարտակն անով կնքէ :  
Շուտ մը հրովարտակը տէրութեան չորս դին  
տարածուեցաւ, եւ ամէն տեղ Հրեայք մեծ  
սգոյ մէջ մտան : Մուրդքէ զգեստը պատռած,  
քուրձ հագած՝ պալատին դուռն եկաւ . բայց  
քուրձ հագած բլալուն՝ ներս չկրնալով մտ-  
նել, Եսթերի ներքինւոյն ձեռքովը բանն ա-  
նոր հասկըցուց եւ ըսել տուաւ որ ան հրո-  
վարտակն ետ կանչել տալու համար ձեռքէն  
եկածին շափ աշխատելն իր պարսքն է : Ես-  
թեր պատասխան տուաւ որ թագաւորը չկան-  
չած՝ առ ջեւը չեմ կրնար ելլել, ապա թէ ոչ՝  
կը մեռնիմ : Բայց Մուրդքէ մտիկ չըբաւ,  
ոտը կոխեց որ ասոր ճարն հոգայ : Եսթեր ան  
ատեն ապսպրեց որ Սիսիս քաղաքն եղող  
Հրեայք երեք որ երեք գիշեր ծոմ բռնեն .  
ինքն ալ նոյն օրերը քուրձ հագած՝ շարունակ  
Աստուծոյ աղօթք կ'ընէր :

Երեք օրէն ետքը փառաւոր զգեստներ հա-  
գած ու զարդարուած՝ երկու նաժշտով թա-  
գաւորին առ ջեւն ելաւ . բայց սրտին վախէն՝  
մէկէն հոն մարեցաւ ինկաւ : Աստուած թա-  
գաւորին սիրտն ի դուրս շարժելով՝ ամօռէն  
ցատրեց, թագուհւոյն քովը դնաց՝ զինքը  
վեր վերցուց եւ անոյշ խօսքերով քաջալերեց :  
Եսթեր ասով քիչ մը սիրտ առաւ, բայց նո-  
րէն մարեցաւ : Ան ատեն թագաւորը սաստիկ

այլայլելով՝ անոր մինչեւ իր թագաւորութեան կէտը խոստացաւ: Էսթեր երբ որ արթնցաւ ու տեսաւ որ թագաւորն իրեն այնչափ սէր կը ցուցնէ, համարձակելով զինքն ու Համանը սեղանի հրաւիրեց, ան ալ յանձն առաւ: Սեղանի վրայ Արտաշէս Էսթերոյ բաւ որ ուզածն իրմէ խնդրէ: Ան ալ խնդրեց որ երկրորդ օրը դարձեալ Համանին հետ սեղան գայ: Համան կերակրէն ետեւ տուն երթալու ատեն՝ Մուրդբէին պատահեցաւ, որն որ իրեն երկրպագութիւն չբրաւ. անոր համար Համան նորէն սաստիկ բարկանալով՝ տունը կնոջն ու բարեկամներուն ըսաւ. Այսօր մինակ ես ու թագաւորն Էսթերին սեղանին հրաւիրուած էինք. բայց ասիկա աչքիս բան մը չ'երեւար՝ քանի որ Մուրդբէն կը տեսնեմ: Անոնք իրեն խորհուրդ տուին որ երկրորդ օրը զանիկակախել տայ: Համան անոնց տուած խորհրդեան անսալով՝ հրամայեց որ Մուրդբէն կախելու համար յիտուն կանգուն բարձր կախաղան մը պատրաստեն: Բայց Աստուած բանն ուրիշ կերպ դարձուց:

**Յ.** Ան գիշեր թագաւորին քունը չտանելով՝ ատեն անցընելու համար ուղեց որ յիշատակարանները կարդան: Մէյ մ'ալ կախել տուած երկու ներքինաց պատմութիւնն առջեւն էլաւ, որուն մէջ Մուրդբէին հաւատարմութեան գործքը լսելով՝ քովիններուն հարցուց թէ Անոր ինչ հատուցում եղաւ: Անոնք ըսին որ Հատուցում մը չբրիր: Ասանկով ան գիշեր անցաւ: Համան առտուանց կանուխ թագաւորին եկած էր որ Մուրդ-

քէն կախելու հրաման առնէ: Թագաւորն իմանալով որ հոն է, զինքը ներս կանչեց, հարցուց որ Փառաւորել ուզած մարդուս ինչ պէտք եմ ընել: Համան ինք իրեն մտածելով որ Խնձմէ զատ ո՛վ կայ՝ որ Թագաւորը փառաւորել ուզէ, ասանկ պատասխան տուաւ. Ան մարդուն Թագաւորական զգեստ հագցընեն եւ ամենէն սիրելի իշխաններէդ մէկը զինքը քու ձեռք հեծցուցած՝ քաղքին հրապարակները պտըտցընէ, առջեւէն ալ քարոզ կարդայ որ Ասիկա Թագաւորին սիրելին է: Թագաւորն անոր զրուցածն հաւնելով՝ Գնա, ըսաւ, նոյնը Մուրդքէին ըրէ: Համան ձայն չկրցաւ հանել, գնաց հրամանը կատարեց. ետքը սիրտը սաստիկ կոտրած՝ տուն եկաւ եղաձը պատմեց: Քիչ մը վերջը երկու ներքինիք եկան զինքը Ասթերայ սեղանին հրաւիրեցին: Հոն Արտաշէս նորէն Թագաւորին ըսաւ որ Խնդրէ ինձմէ ինչ որ կուզես. զիմնաս որ Թագաւորութեանս կէսն ալ ուզելու ըլլաս՝ կու տամ: Ասթեր ան ատեն պատասխանեց. Տէր իմ, խաբերայ Համանին ջնջել ուզած ազգիս կեանքը կը խնդրեմ: Թագաւորն աս լրածին պէս՝ այլայլած սեղանէն ելաւ: մտտեղի ծաղկընոցը գնաց: Իսկ Համան առանձին մնալով՝ գնաց Ասթերայ ոտքն ինկաւ, իր կենացը համար անոր աղաչեց: Նոյն միջոցին Թագաւորն ետ դառնալով ու զինքն Ասթերայ քովը տեսնելով՝ ծուռ մտքի գնաց. Համանայ վրայ աւելի բարկացաւ, եւ անոր Մուրդքէին համար կախաղան պատրաստած ըլլալը լսելով, մէկէն հրամայեց որ զինքը նոյն կա-

խաղանէն կախեն ու հարստութիւններն Եսթերայ տան. միանգամայն իմանալով որ Եսթեր Մուրդըէին ազգականն է, բոլոր Համանայ պատիւն անոր տուաւ: Ետքը Համանին հանած հրովարտակին հակառակ նոր հրովարտակ մը հանեց, որուն զօրութեամբ՝ ան օրը որ Հրեայք պիտի ջարդուէին, նոյն օրն իրենք ուրիշները ջարդեցին ու Համանին տնէն ողջ մէկը չձգեցին: Գարձեալ աս բանիս յիշատակին համար Աստուծոյ շնորհակալութեան երկու տօն հաստատեցին: Սիսիս քաղքին Հրեաները Ադար ամսոյն 14ին կը սկսէին, իսկ գրսի երկիրներուն Հրեաները՝ նոյն ամսոյն 15ին:

## Կ Զ . Գ Ա Ս

1. Եզր Երուսաղէմ ինչպէս եկաւ, ինչ բրաւ: — 2. Նեեմի ինչպէս կուսակալութեան պատիւ տաած Երուսաղէմ եկաւ: Նոյն քաղքին պատերն ինչպէս եւ սրբաբնակարան մէջ շինուեցան: — 3. Եզր օրինաց գիրքը ժողովրդեան կարգալու տանն՝ անոնք ինչ կ'ընէին: — 4. Սուրբ հօրն ինչպէս գտնուեցաւ: — 5. Երկրորդ անգամ դառնալուն՝ Երուսաղէմ ինչպէս գտաւ: Մազաբիա ո՛վ է: — 6. Մանասէ ո՛վ է. վրան ինչ գիտնալու բան կայ:

1. Արաաշէս Ա. Երկայնաբաղուկ իր թագաւորութեան եօթներորդ տարին, կարելի է Եսթեր տիկնոջ յորդորելովը, գերութեան մէջ մնացած Հրէից մասնաւոր հրովարտակ հանեց, որ Հրէաստան դառնան: Հրովարտակը Եզր քահանային եւ օրինաց դպրին ուղղուած էր, եւ իրեն կը յանձնուէր որ Հրէաստանի գործքերը հոգայ եւ ամէն բան կարգի դնէ: Նաեւ ստակ ժողովելու իշխանութիւն տուաւ, դան-

ձապեաներուն ալ պատուիրեց որ հարկաւոր եղածը տան : Եզր Հրէից բազմութեամբ ճամբայ ելաւ եւ Երուսաղէմ հասնելով՝ բերած դանձր տաճար տուաւ : Ժողովրդեան մեղացը թողութեան համար Աստուծոյ աղօթք ըրաւ, եւ իրենցմէ խօսք առաւ որ մէջերնէն օտար կանայքը կը հեռացնեն :

Չ. Բարեւունի գերութեան մէջ Գաւթայ տնէն Նեեմի անունով մէկը կար, որն որ Շաւշ կամ Սիսիս կը բնակէր, եւ Արտաշէս Ա. Երկայնարազուկին տակառապետութիւն կ'ընէր : Ասիկա աղօթքով ու ծով՝ բռնելով Աստուծոյ աղաչելէն ետեւ որ թագաւորին սիրտը շարժէ, անոր թագաւորութեան քառասներորդ տարին խնդրեց որ զինքն Հրէաստան խրկէ, որ Երուսաղէմայ պարիսպները նորոգէ : Թագաւորը չէ թէ միայն երթալու հրաման տուաւ հապա նաեւ զինքը Հրէաստանի կուսակալ ըրաւ : Նեեմի Աստուծոյ օգնութեամբը Երուսաղէմ եկաւ, պարիսպները նորոգել սկսաւ : Հրէից թշնամիներն ու Սանարաղատ Սամարիայի հեթանոս կուսակալը, որ իսկզբան ծաղր կ'ընէին, երբ որ պարիսպներուն բարձրանալը տեսան, սկսան արգելել : Նեեմի նախ Հրէայքը ժողովեց, աղօթքով Աստուծոյ դիմեց, ետքը քաղքին պաշտպանութեան համար երիտասարդներուն մէկ մասին ձեռքը զէնք տուաւ, մէկ մասին ալ՝ մէկ ձեռքով դործել ու մէկալ ձեռքով զէնք բռնել տուաւ : Թըշնամիք տեսան որ գլուխ պիտի չկրնան ելլել՝ Զանացին Նեեմին խորելով ձեռք ձգել. անոր համար ըսին որ Գայ մէյ մը հետերնիս խօ-



սի. բայց Նեեմի ձեռքերնին չինկաւ: Նոյն միջոցին պարսպաց շինուիլը շարունակուելով՝ յիսունուերկու օրուան մէջ յաջողութեամբ լմնցաւ: Նեեմի պարսպին դռներն անցուց եւ անոնց վրայ պահապաններ դրաւ: Հրէից մերձաւոր ազգերն եւ նոյն իսկ իրենց թշնամիներն իմանալով որ պարսպներուն այսչափ ատենուան մէջ լմննալն Աստուծոյ գործն է, սկսան Հրէիցմէ վախնալ:

**Յ.** Տաղաւարահարաց տօնին պատճառաւ որն որ մտաւ էր, Երուսաղեմայ մէջ մեծ բազմութիւն կար: Տօնին առաջին օրը ժողովուրդը Եզրայ քով ժողովեցաւ, խնդրեց որ Մովսիսի օրինաց զիրքն իրենց մէյ մը կարդայ: Եզր անոնց խնդիրքը սիրով յանձն առնելով՝ նախ Աստուծոյ փառք տալէն ետքը՝ առտուրնէ մինչեւ կէս օր բարձր ձայնիւ կարդաց: Ժողովուրդը միտ կը դնէր ու կու լար: Աէս օրուան դէմ լացքի ողբի ձայնն այնչափ բարձրացաւ, որ Նեեմի կարդալը դադարեցուց, ըսելով որ երթան կերակուր ուտեն չունեցողներուն ալ տան: Հաղիւ Ղեւտայիք՝ կրցան ժողովուրդը հանդարտեցնել ու տեղերնին խրկել: Երկրորդ օրը նորէն Եզրայ քով ժողովելով, երբ որ իմացան թէ ըստ օրինաց պէտք է որ Տաղաւարահարաց տօնին օրերը վրանի տակ անցնեն, Եզրին հրամանաւր դացին ծառերու ճիւղեր ու տերեւներ ժողովեցին բերին, վրան շինեցին, սկսան մէջը բնակիլ: Եզր նոյն տօնին եօթն օրերը շարունակ օրինաց զիրքը կարդաց: Ան օրերն անցնելէն ետքը՝ ժողովուրդն օրէնքները հաւատարմու-

Թեամբ պահելու մեծ բաղձանք ցուցուց, ամէնքը միարան ծոմ կեցան ու քուրճ հազած եւ գլուխնին մոխիր ցանած՝ մեղքերնին խոտովանեցան. Աստուծոյ բրած ուխտերնին ալ նորոգեցին, քրն որ իրենց գլխաւորներուն աւուան ստորագրութեամբը հաստատուեցաւ: Էւ որովհետեւ ժողովուրդն աւելի գեղերու մէջ բնակիլ ու երկիր բանիլ՝ քան թէ Երուսաղէմ մնալ կ'ուզէր, անոր համար որոշուեցաւ որ իրենց տասներորդ մասն Երուսաղէմ կենայ եւ մնացողները վիճակաւ ընտրուին: Ոմանք ալ իրենցմէ Երուսաղէմ մնալ ուզեցին եւ ժողովրդենէն ասոր համար օրհնուեցան:

4. Մինչեւ նոյն ատեն Հրեայք պատարագի օտար հուր գործածելու ստիպուած էին, վասն զի Նարուքոդոնոսոր Երուսաղէմը շառած՝ քահանայք Երեմիային հրամանաւր սուրբ հուրն անջուր ջրհորի մը մէջ տարած պահած էին (Տես ԾԹ. Դաս. ԹԻւ 4.): Հիմա Նեեմի մարդ խրկեց ան ջրհորը փնտռեց գտաւ, բայց մէջը տղմոտ ջրէն զատ բան չկար: Նոյն ջուրը հանել բերել տուաւ, եւ սեղանի փայտերուն ու պատարագին վրայ ցանածին պէս՝ մէկէն հուր բորոնքեցաւ, եւ ժողովրդեան աղօթք ընելու ատենը պատարագն սպառեց:

5. Նեեմի Պարսկաստանէն ելած ատեն խօսք տուած էր որ որոշեալ ժամանակին ետ կը դառնայ: Ուստի տասուերկու տարի Հրեաստան կուսակալութիւն ընելէն ետքը, էլաւ Պարսից արքունիքը գնաց. բայց քիչ մը վերջը ետ դարձաւ: Սակայն նոյն ատեն Հրեաներն օրինաց պահպանութեան մէջ շատ թոյլ-

ցած էին. վասն զի՝ ինչպէս հաւանական կ'երեւայ՝ նոյն ատեն Եզր մեռած ըլլալով, Եղիասիբ քահանայապետութիւն կ'ընէր, որն որ օրինաց այնչափ նախանձաւոր չէր: Ղեւտացւոց տրուելու հասը չէր տրուեր. շարած օրերը սուրբ չէր պահուեր. շատերը հեթանոս ազգերու հետ խնամութիւն կ'ընէին: Նեեմի ձեռքէն եկածն ընելով՝ աս անկարգութիւնները վերցուց: Իրեն հետ մեկտեղ քահանայից ու ժողովրդոց անկարգութեանցը դէմ կը դառնար Մաղաքիա՝ մարգարեից ամենէն վերջինը, որուն ցեղին ու կենացը վրայ Ս. Գրոց մէջ ամենեւին տեղեկութիւն մը չկայ:

**Ե.** Յովիդայէ քահանայապետին Մանասէ որդին՝ օրինաց դէմ Սամարիայի Սանաբաղատ կուտակալին աղջիկը կին առած էր: Նեեմի աս բանիս համար զինքը Հրէից հասարակութենէն մերժեց: Մանասէ Սանաբաղատին զնաց, ան ալ Գարեհ Բէն հրաման առնելով՝ Գարիզին լերան վրայ տաճար շինեց եւ զՄանասէ հոն քահանայապետ դրաւ: Նոյն ատենէն սկսեալ՝ Սամարացիք առանձին տաճար ունեցան. բայց պաշտաման համար զիսաւոր տեղերնին Սիւքէմ էր՝ որն որ Գարիզին լերան մօտ է: Հրէից մէջէն՝ օրինաց դէմ ամուսնացող ու հրաժարիլ չուզողները՝ Սամարացւոց հետ միացան: Ասոնք միայն Մովսիսի հինգ գրքերը, կարելի է Յեսուայ գիրքն ալ կ'ընդունէին, եւ ան գրքերուն մէջ շատ տեղ Մեսիան խոստացուելուն՝ իրենք ալ Հրէից հետ Մեսիայի գալտեան կը սպասէին եւ օրինաց ճիշդ պահպանութիւն կ'ընէին:

## Հ Ա Տ Ո Ւ Ա Վ Գ .

Պարզութեանց ու Սելէ-կէանց արեւն Հրէաստան  
պարտաւ-ձնէրը

(300 — 167)

## Կ Է . Գ Ա Ս

1. Հրեայք Աղէքսանդր Մեծին տակն ինչպէս էին : Անոր յաջորդաց ատենն ինչ վիճակ ունեցան : Եթեանանից թարգմանութիւնն ո՛վ ընել տուաւ : — 2. Հրեայք Աղէքսանդրիայի հրապարակն ինչու բերուեցան : Թագաւորն առաջին հրովարտակին դէմ ինչ նոր հրաման տուաւ : — 3. Հրեայք Ասորոց տակ ինչպէս էին : Հեղեոգորսս Հրէաստան ինչու եկաւ , ինչ պատիժ կրեց : — 4. Յասն ինչպէս եղբորը տեղ անցաւ , եւ ինչպէս՝ Մենեղաւոս ալ անոր տեղը : Միան Անգրոնիկոսին ձեռքոջ ինչու մեռաւ : Անգրոնիկոս եւ Լիւսիմաքոս պատիժնին ինչպէս գտան : Մենեղաւոս փառնդէն ինչպէս ազատեցաւ : — 5. Անտիոքոսին նորէն Եգիպտոս գացած ատեն՝ Հրէաստան ինչ պատահեցաւ : Անկէ ետ դարձաւ նէ՛ Երուսաղեմոյ գլուխն ինչ շարիք հասցուց :

1. Սուրբ Գիրք մինչեւ Աղէքսանդր Մեծին ատեն՝ որն որ Պարսից տէրութիւնը կործանեց եւ անոնց վրայ իշխեց , վերը յիշածներնէս աւելի բան չիպատմեր : Հրեայք ինչպէս Պարսից տակ՝ նոյնպէս աս աշխարհակալ թագաւորին կենդանութեան ատեն՝ հանգիստ էին եւ իրենց երկրին իրաւունքն ու ազատութիւնը կը վայելէին : Նոյն ատենուան քահանայապետներն իրենց հոգեւոր իշխանութեան հետ աշխարհական իշխանութիւնն ալ միացուցած ըլլալով՝ Հրեայք զանոնք իրենց

Թէ հոգեւոր գլուխ եւ թէ իրենց երկրին իշխան կամ կուսակալ կը ճանչնային: Բայց կրնայ ըսուիլ որ Աղէքսանդր մեռածին պէս հանգստութիւննին կորսնցուցին. վասն զինոյն ատեն Աղէքսանդրին ընդարձակ տէրութիւնն երեք գլխաւոր մաս բաժնուելով, որ է Մակեդոնիա, Ասորիք (որ Սելեւկեանց Թագաւորութիւն կ'ըսուէր) եւ Եգիպտոս (որ Պտղոմեանց Թագաւորութիւն կը կոչուէր), Հրէաստանի համար նոր ողբալի դար մը բացուեցաւ: Սելեւկեանց ու Պտղոմեանց մէջ երկարատեւ պատերազմ մը փրթելով՝ Հրէաստան անոնց ձեռքին խաղալիկ եղաւ, մէյ մը մէկուէն, մէյ մը մէկալին տակ կ'իյնար:

Աս ատենները Ս. գիրքն երրայեցերենէ յունարէն թարգմանուեցաւ, Պտղոմէոս Բ. Փիղադեղփոս (Եղբայրասէր) Եգիպտացւոց Թագաւորին եւ կամ ինչպէս աւելի հաւանական կ'երեւայ՝ անոր հօրը Պտղոմէոս Ղազոսին ատեն: Աս թարգմանութիւնը՝ աշխատողներուն թուովը՝ Եօթանասնից թարգմանութիւն ըսուեցաւ:

Ձ. Հրէից՝ Եգիպտացւոց տակեղած ատեն՝ Պտղոմէոս Գ. Փիղոպատովը Երուսաղէմ եկաւ, Աստուծոյ զոհ մատուցանելէն ետեւ՝ հետաքրքրութեամբ Սրբութիւն սրբոցն ալ տեսնել ուզեց: Հրեայք շատ դէմ կեցան, սակայն ճար չեղաւ ներս մտաւ. բայց մէկէն ասդին անդին զարնուելով՝ անդամալոյծ գետինն ինկաւ: Ծառաները վրայ հասան, զինքը դուրս տարին եւ շատ ատեն անցնելէն ետքը՝ հազիւ խելքը վրան եկաւ: Պտղոմէոս

եւ զարձաւ հրաման հանեց որ իր իշխանութեան տակ ըլլող Հրեայք կուռք պաշտեն, չպաշտողները՝ կապանօք Աղէքսանդրիա տարուին: Աս պատճառաւ շատերն Աղէքսանդրիայի հրապարակը բերուեցան. եօթըհարիւր փիղ պատրաստեցին, որպէս զի կատղեցուցած՝ վրանին թողուն, եւ անոնց ջարդը տեսնելով՝ ուրախանան: Աստուած Հրէից աղօթքն ու պաղատանքը լսելով՝ թագաւորին քունն երեք օր ծանրացուց եւ իրենց ջարդն ուշացուց: Իսկ փղերն արձակելու օրը՝ երկու հրեշտակ զօրքին ու փղաց մէջ խռովութիւն ձգելով, փղերը Հրէից տեղ՝ զօրքը կը մեռցնէին: Նոյն ատեն թագաւորին սիրտը փոխուելով՝ առջի հրամանին հակառակ նոր հրաման հանեց որ Աղէքսանդրիայի հրապարակին մէջ Հրեայք եօթն օր իր ստրկովն ուտեն խմեն, նաեւ իրենց իրաւունքն ու ազատութիւնը հաստատելէն ետքը՝ աւելի բան ալ վրան աւելցուց:

Յ. Անոր մահուընէ ետեւ Անտիոքոս Գ. Մեծ՝ Ասորոց թագաւորը՝ բոլոր Պաղեստին տակն առաւ, եւ աս բանիս մէջ Հրեայք իր կողմը բռնած եւ իրեն օգնած ըլլալուն՝ անոնց շատ բարիք ըրաւ, հարկէն ազատեց: Ասոր յաջորդը Սելէւկոս Գ. Փիղոպատովը իր նախորդին պէս Հրեայքը կը սիրէր, մինչեւ հրամայեց որ Աստուծոյ պաշտաման զացած ծախքն իր գանձէն վճարուի: Ան ատենուան Ռնիա քահանայապետն օրէնքները ճշգիւ պահել տալէն զատ՝ պատճառ կ'ըլլար որ նոյն իսկ հեթանոս իշխանները տաճարը կը յար-

զէին եւ մեծամեծ պարգեւներ կը խաւրէին: Բայց ետքէն բաները փոխուեցան. մէկ կողմանէ տաճարին մեծ հարստութեան համար, մէկալ կողմանէ Ասորոց թագաւորներուն՝ Հռոմայեցւոց հետ ունեցած ձախորդ պատերազմներէն յառաջ եկած սաստիկ կարօտութեան համար՝ Հրեայք մեծ նեղութիւն քաշեցին: Միմոն՝ որ տաճարին վերակացուն էր, Ոնիային հետ աւրուելով՝ չարութեան համար Սելէւկոսին ականջը հասցուց որ տաճարին զանձուն մէջ շատ ստակ կայ: Սելէւկոս ան ստակներն առնելու համար՝ իր Հեղիոգորոս պաշտօնատարը խաւրեց: Ոնիա անոր զալուն պատճառն իմանալով՝ ըսաւ որ Ստուգիւ զանձուն մէջ պահուած ստակ կայ, բայց Միմոնին հասկըցուցածին չափ չէ. եղածն ալ՝ կէս մը այրիներուն ու որբերուն համար է, կէս մ'ալ աւանդ: Բայց Հեղիոգորոս մտիկ չըրաւ, տաճար մանելու եւ անոր զանձէն ոսկի, արծաթ տանելու օր որոշեց: Հրեայք նեղ մտնելով՝ աս բանիս համար Աստուծոյ աղաչեցին: Սահմանած օրը զալով՝ Հեղիոգորոս ծառաներովը զանձատուն մտաւ, բայց հոն մէկէն պատիժն Աստուծոյ գտաւ. փառաւոր ձիու վրայ նստած մէկը տեսնուելով՝ ձին առջևի ոտուրներովը զՀեղիոգորոս պառկեցուց, եւ նոյն ատեն ուրիշ երկու երիտասարդներ երեւնալով՝ զինքը բռնեցին, սաստիկ ծեծեցին, անզգայ ու կիսամահ թողուցին: Քովինները զինքը դուրս տարին, Ոնիային աղաչեցին որ անոր համար Աստուծոյ աղօթք ընէ: Քահանայապետն անոր համար

Աստուծոյ զո՛հ մատուցանելով՝ նոյն երիտա-  
սարդները նորէն երեւցան զինքն ողջնցուցին :  
Հեղիօդորոս Ռնիային շնորհակալ եղաւ , Աս-  
տուծոյ ողջակէզ մատոյց ու ետ դարձաւ :

4. Ասկէ ետեւ ձախորդութիւնները շրջ-  
թայի պէս ետեւէ ետեւ գալով՝ Հրէաստան  
տարիներով խաղաղութիւն չկրցաւ գտնել :  
Սելէւկոսին յաջորդն Անտիոքոս Գ. Եպի-  
փանին ատենը քահանայապետութիւնն՝ աւե-  
լի ստակ խոստացողին կը տրուէր : Յասոն  
Գ. Ռնիային եղբայրը՝ քահանայապետութեան  
բաղձալով՝ Անտիոքոսին գնաց , շատ տուրք  
խոստանալէն զատ՝ Հրեայքը կռապաշտութեան  
դարձնելու խօսք ալ տուաւ : Այսպէսով բա-  
րեպաշտ Ռնիան վար առաւ ինք տեղը նստաւ ,  
Երուսաղէմայ մէջ՝ Հեթանոսական խաղեր ու  
սովորութիւններ խոթեց , որն որ շատ Հրէից՝  
կռապաշտութեան մէջ իյնալու պատճառ ե-  
ղաւ : Երեք տարիէն Մենեղաոս՝ անօրէն Սի-  
մոնին եղբայրը՝ Անտիոքոսին աւելի ստակ խոս-  
տանալով , Յասոնին ձեռքէն քահանայապե-  
տութիւնն առաւ . բայց խոստացած ստակը  
Ժամանակին վճարել չկրնալուն համար՝ դու-  
ռը կանչուելով , իր Լիւսիմաքոս եղբայրը  
փոխանորդ դրաւ՝ ելաւ գնաց : Նոյն եղբորը  
ձեռքովը տաճարին ոսկիէ արծրթէ անօթ-  
ներն առաւ , կէս մը Անդրոնիկոս իշխանին  
տուաւ , կէս մ'ալ մօտաւոր երկիրները ծա-  
խեց : Աս բանիս համար Ռնիայէն յանդիմա-  
նուելով՝ Անդրոնիկոսին ձեռքով զանիկա  
սպաննել տուաւ : Բարեպաշտ քահանայապե-  
տին մահուան չէ թէ միայն Հրեաները՝ այլ



նոյն իսկ հեթանոսք ալ ցաւ ցուցուցին, ու Անդրոնիկոսին դէմ թագաւորին ամբաստանութիւն ըրին: Անտիոքոս՝ որ Ռնիային իմաստութիւնն ու սրբութիւնը կը ճանչնար, վրան շատ ցաւեցաւ, անտիջապէս զԱնդրոնիկոս պատուէն վար առաւ ու Ռնիային սպանուած տեղը մեռցընել տուաւ: Ասկէ յառաջ Ալեքսիմաքոս պատիժը գտած էր, վասն զի բրած շարութիւնն հրատարակուելով՝ իրեն դէմ խռովութիւն մ'ելաւ, որուն մէջ խոցուեցաւ ու մեռաւ: Մնաց միայն Մենեղաւոս՝ որուն դէմ թէպէտ թագաւորին առջեւն ամբաստանութիւն եղաւ եւ դատաստանի կանչուեցաւ, բայց ստակ կերցընելով՝ դատաստանէն անպարտ ելաւ, ու նենդութեամբ բանն անանկ դարձուց, որ իր ամբաստանողները յանցաւոր ցուցուց եւ մահուան դատապարտել տուաւ:

5. Ասոնք ըլլալէն ետեւ Անտիոքոս նորէն պատերազմով Եգիպտոս դնաց: Աստուած ան միջոցին՝ Հրէից գլուխը բերելու շարիքներն արտաքոյ կարգի նշաններով իմացուց. քառասուն որ քառասուն դիշեր երկինքը փառաւոր հագուած ու զինաւորած ձիաւորներ կ'երեւային, որոնք իրարու հետ կը զարնուէին. իրենց զէնքերէն երբեմն թնդիւն ու շաչիւն կը լսուէր, երբեմն շողիւն ու փայլիւն կ'երեւար: Նոյն ատեն Երուսաղեմի մէջ սուտ լուր մը տարածուելով թէ Անտիոքոս Եգիպտոս մեռած ըլլայ, Յասոն 1000 հողուով եկաւ Մենեղաւոսին ձեռքէն քահանայապետութիւնն առաւ եւ քաղքին բնակիչներէն շատ մարդ ջարդեց: Մենեղաւոս փախաւ Սիսն բերդն

ապաւինեցաւ . Յասոն զինքը չկրնալով բռնել , եւ ինչպէս հաւանական կ'երեւայ՝ Անտիոքոսին մտօնկնալուն լուրն առնելով՝ Թողուց Ամոնացւոց երկիրը գնաց , ուր որ ամենուն ատելի եղած՝ մեռաւ : Իսկ Անտիոքոս աս խռովութիւնները լսելով՝ կարծեց որ Հրեայք իրմէ ապստամբիլ կ'ուզեն . ուստի Եզրուսաղէմ յազմութիւն ընելէն ետքը՝ շատ զօրքով Հրէաստան եկաւ , Եզրուսաղէմ մտաւ , ձեռքն անցնողները կէս մը իրրեւ գերի ծախեց , կէս մ'ալ սրէ անցընել տուաւ , որոնց ամենուն մէկէն գումարը 80.000 հոգւոյ կը հասնէր : Մենեղաւոսին առաջնորդութեամբը նաեւ տաճար մտաւ , կողոպտեց :

Երկու տարի վերջը Ապողոնիոս անունով հարկահասն իշխան մը խրկեց , որն որ զօրքով Եզրուսաղէմ մտաւ : Առջի բերան խաղաղութիւն հաստատելու համար եկած ձեւացուց . բայց ետքէն շարաթ որ մը յանկարծ քաղքին մէջի չափահասները թրէ անցուց , կնիկ մարդիկն ու տղաքք իրրեւ գերի ծախեց , քաղքին երեւելի փայտաշէն տներն այրեց եւ պարիսպները կործանեց : Սիոն լերան վրայի միջնաբերդը գէնքով , զօրքով ու պաշարով աղէկ մը ամրացուց :

Աս բաւական չէ , Անտիոքոս Հրէից հրաման հանեց որ իրենց կրօնը թողուն , ուրիշ ազգաց պէս կուռք պաշտեն : Առանձին մարդիկ ալ որոշեց՝ որոնք բռնութեամբ իրենց կուռք պաշտել պիտի տային . տաճարին մէջ Արամազդայ արձանը կանգնել տուաւ : Ասկից զատ՝ Յուդայի երկիրներուն ամէն

կողմը կուոց սեղան շինուեցաւ: Հրեայք ան սեղաններուն առջեւը կը տարուէին, եւ զո՛հ մատուցանել շուղողները կը սպանուէին: Ս. Գիւրքը կը պատուէին ու կ'այրէին. տղայքնին թշխատել տուող մարք՝ որդիքնին վզերնէն կախուած՝ մէկտեղ կը մեռցընէին: Նոյնպէս խոզի միս շուտողը կը մեռնէր: Աս հալածանաց մէջ թէպէտ թագաւորին անօրէն հրամանին հետեւողներ կը գտնուէին, բայց կրօններնուն վրայ քաջութեամբ արիւն թափողներ ալ շատ եղան:

#### Կ Ը . Դ Ա Ս

1. Եղիազար ո՛վ է: Բարեկամներն իրեն ինչ խորհուրդ կու տային: — 2. Եթէն եզրարք իրենց մօրը հետ ինչպէս նահատակեցան:

1. Անտիոքոսին հալածման ատենը Եղիազար քահանային քաջութիւնն ու տուած բարի օրինակը յիշատակաց արժանի է: Աս յարգելի ծերը բռնութեամբ կը ստիպէին որ խոզի միս ուտէ. բայց ինք օրինաց համար մեռնէին՝ աս կեանքէն աւելի լաւ սեպելով՝ յօժարութեամբ մահը յանձն առաւ: Պարապ տեղ իր բարեկամներէն ոմանք՝ զինքը մահուրնէ ազատելու համար՝ կ'ըսէին որ Գուն արտաբուստ անոր հրամանը կատարէ. մենք քեզի ուրիշ միս կու տանք: Եղիազար անոնց պատասխան տուաւ որ Անանկ բան չեմ՝ ըներ. երիտասարդները կը խարուին՝ կարծելով որ ես իննսուն տարւան ծերս մահուրնէ ազատելու համար կուսպաշտութիւն յանձն ա-

ուի: Ասանկով իմ ծերութեանս նախատինք  
ու անէծք կը բերեմ: Ասկէ զատ՝ մարդիկնե-  
րը խաբելու ալ ըլլամ, զԱստուած չեմ կրնար  
խաբել: Աս ըսելով՝ քաջութեամբ մեռաւ:

Ք. Նոյն հալածանաց ատենը եօթն եղ-  
բարք ալ իրենց մօրը հետ նահատակուեցան:  
Երբ որ զիրենք անխնայ ծեծելով՝ խոզի միս  
ուտելու կը ստիպէին, մեծ եղբայրնին ամե-  
նուն կողմանէ կը զրուցէր որ Մենք օրինաց  
համար մեռնելու պատրաստ ենք: Թագաւորն  
անոր վրայ սաստիկ բարկանալով՝ մէկալ եղ-  
բարց ու մօրն առջեւ լեզուն կտրել տուաւ.  
զլխուն մօրթն ալ երեսին վրայ դարձընելէն  
եւ ձեռուրներն ու ոտուրները կտրելէն ետեւ՝  
ողջ ողջ տապակի մէջ գնել տուաւ: Ասոր  
տանջուելու ատենը՝ մայրն ու եղբարքն իրար  
կը միտիթարէին: Ետքէն երկրորդը ձեռք ա-  
ռին. անոր ալ զլխի մօրթն երեսը դարձընե-  
լէն ետեւ՝ հարցուցին որ Գեռ մէկ անդամդ  
չկտրուած՝ խոզի միս ուտել յանձն կ'առնես:  
Երբ որ յանձն չառաւ, զինքն ալ առջինին  
պէս տանջելով՝ մեռցուցին: Մեռնելու ատեն  
Թագաւորին ըսաւ. Գուն զմեզ հիմակ եր-  
կրաւոր կեանքէ մը կը զրկես, բայց տիեզերաց  
Թագաւորն զմեզ նորէն կը յարուցանէ: Ար-  
գը երրորդին գալով՝ երբ որ լեզուն կտրել  
կ'ուզէին, անիկա ինքիրեն լեզուն դուրս հա-  
նեց ու ձեռուրներն ալ երկրնցընելով՝ ըսաւ.  
Ես աս անդամներս ետքէն Աստուծոյ կ'ըն-  
դունիմ, բայց հիմակ Աստուծոյ օրինացը հա-  
մար զանոնք կ'արհամարհեմ: Աս կերպով վեց  
եղբարք քաջութեամբ նահատակեցան: Իսկ

մայրերնին՝ պզտիկ զաւակին հետ այրական հոգւով կեցած՝ անոնց նահատակութեան կը նայէր, ու ազդու եւ իմաստուն խօսքերով ամէն մէկը կը խրատէր: Անտիրոջոս ուզեց ամենէն պզտիկ տղան քաղցրութեամբ որսալ. անոր համար իրեն ամէն տեսակ երկրաւոր բարիք խոստացաւ՝ միայն թէ իր հարց օրէնքը թողու. բայց երբ որ տեսաւ թէ տղան մտիկ չ'ընէր, մօրը յանձնեց որ զինքը խրատէ ու մահուընէ ազատէ: Մայրն իրեն դառնալով՝ Ո՛րդեակ, ըսաւ, մէյ մը աչքդ երկինք ու երկիր դարձուր. յիշէ որ անոնց ամէնքն ոչընչէ ստեղծող Աստուած քեզի զօրութիւն կու տայ, որ աս դահձէն չվախնալով՝ եղբարցդ կարգն անցնելու արժանի ըլլաս: Հիմա մեռնին յանձն առ, որպէս զի անդիի աշխարհք զքեզ ալ մէկալ եղբարցդ հետ ընդունիմ: Տղան ան ստեն դարձաւ զինքը տանջելու համար եկողներուն ըսաւ. Ի՛նչ կը սպասէք. ես թագաւորին հրամանին չեմ հնազանդիր, եւ օրինաց համար մեռնելու պատրաստ եմ: Ետքը խօսքը թագաւորին դարձընելով՝ ըսաւ. Գուն Աստուծոյ ձեռքէն պիտի չազատիս. Աստուծոյ կ'աղաչեմ որ ողորմութիւնն իր ժողովրդեան վրայ ցուցընէ, զքեզ ալ չարաչար տանջանքով տանջէ, որպէս զի իմանաս որ ճշմարիտ Աստուած մինակ ինքն է: Թաղաւորը բարկանալով՝ զինքը մէկալներէն աւելի խիստ տանջանքով մեռցընել տուաւ: Վերջապէս մայրերնին ալ՝ քաջութեամբ նահատակեցաւ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Դ .

Մ-ի-բ-յե-ց-ո-ց ու-ր-ե-ր-ը-ն-ե-ր-ը :

( 167 - 107 )

Կ թ . Դ Ա Ս

1. Մատաթիա ո՛վ է : Կրօնի պատերազմն էնչ առթով սկսաւ : — 2. Շարաթ որով պատերազմիչ շուղողներն որոնք էին , մէջերնէն քանի հոգի կորսընցուցին : Մատաթիա շարաթ որուան համար էնչ որոշում ըրաւ : Մեռնելէն յառաջ էնչ ըրաւ : — 3. Յուդայի առաջին արշաւանքն յաջողեցաւ : Աիկանովք ո՛վ է եւ էնչ ըրաւ : Յուդա Աիսիասին ալ յաղթելէն ետեւ էնչ գործեց : Հրէից մատաւոր ազգերն անոնց յաջողութենէն ետեւ էնչպէս վարուեցան : — 4. Անտիոքոս էնչպէս մեռաւ : — 5. Յուդա Տիմոթէոսին դէժ պատերազմած առնն Աստուծո՛վ էնչ սգնութիւն գասաւ : Տիմոթէոս էնչպէս մեռաւ : Աիսիաս Բեթսովրա կրցաւ առնել :

1. Անտիոքոսին հալածանաց առնը՝ Մատաթիա քահանան Արուսաղէմի գլուխն եկած խեղճութիւնները տեսնելով՝ ելաւ հինգ որդւոցը հետ՝ որոնք էին Յովհաննէս , Սիմոն , Յուդա Մակարէ , Էղիազար ու Յովնաթան , Մովզիիմ իր ծննդեան քաղաքը քաշուեցաւ , ուր անոնց հետ միշտ սուգ կը բռնէր եւ ժողովրդեան ու Արուսաղէմաց թշուառութեանց վրայ կու լար : Թագաւորին մարդիկներէն Մովզիիմ ալ եկան , որպէս զի փախչողները կոսոց զո՛հ մատուցանելու ստիպէն : Ասոնք Մատաթիային ըսին որ Դու՛ն աս քաղքիս մէջ ամենէն երեւելին ես , թէ որ թագաւորին

հրամանը կատարես նէ՝ որդւոցդ հետ անոր բարեկամ կ'ըլլաս եւ իրմէ մեծամեծ պարգեւ կ'առնես: Մատաթիա պատասխանեց թէ Ամէնքը թագաւորին հնազանդելու ալ ըլլան, ես, որդիքս ու եղբարքս Աստուծոյ օրինաց հաւատարիմ մնալ կ'ուզենք: Նոյն միջոցին Հրեայ մը տեսաւ, որ հրապարակաւ բազնին առջեւը զո՛հ մատուցանելու կ'երթար. մէկէն Աստուծոյ օրինաց նախանձը սրտին մէջ աւելի բորբոքելով՝ զնաց զանիկա մեռցուց, բազինը կործանեց եւ սկսաւ կանչել. Աստուծոյ օրինաց նախանձաւոր ըլլողն ետեւէս գայ: Ասանկով ինք եւ բոլոր ընտանիքը ստացուածնին թողուցին, լեռներու վրայ քաշուեցան:

Չ. Հրէից մէջէն օրինապահներն ու աստուածապաշտներն անոնց օրինակին հետեւելով, իրենց ընտանիքն առած՝ անապատ փախան, հոն ամուր տեղեր ապաւինեցան: Աս բանս Երուսաղէմ լսուածին պէս՝ քաղքին պահապան զօրքերէն վրանին հասան, եւ շարած օրով զիրենք պաշարելով՝ հրաման խրկեցին որ զան թագաւորին հրամանը կատարեն. եւ երբ որ անոնք յանձն չառին՝ վրանին յարձակեցան: Հրեայք ամենեւին իրենք զիրենք չպաշտպանեցին, եւ ոչ կեցած տեղերնուն նեղ ճամբաները գոցեցին, հապա իրար կը քաջալերէին ըսելով՝ Լաւ է որ մեռնինք քան թէ օրինաց դէմ ընենք ու շարածը պղծենք: Նոյն օրը մէջերնէն 2000 հոգի կորսընցուցին: Մատաթիան եւ իրեններն առ լսեցին նէ՝ մէջերնին ըսին որ Եթէ ամէնքս մէկալ եղբայրներնուս ըրածին պէս ընելու ըլլանք՝ շուտով

կը ջնջուինք : Անոր համար որոշեցին որ անկէ ետեւ հարկ ըլլայ նէ՝ շարած օրն ալ իրենք զիրենք պաշտպանեն : Քիչ մը ետքը իրենց թիւն ամելով՝ մեծ գունդ մը կազմեցին : Մատաթիա նոյնին գլուխն անցած՝ ամէն զի կ'երթար, ամբարիշտները կը զարնէր, բազինները կը կործանէր : Իր մեռնելու օրը մօտիկնալով՝ որդիքը կանչեց, զիրենք յորգորեց որ կեանքերնին՝ Աստուծոյ ուխտին վրայ դնեն : Սիմոն եղբայրնին վրանին գլխաւոր դրաւ . իսկ Յուդա Մակարէն՝ զօրավար : Ասոնք կարգի դնելէն ետեւ՝ զիրենք օրհնեց ու մեռաւ եւ Մովդիիմ՝ թաղուեցաւ :

**Յ.** Յուդա Մակարէ՝ եւ իրենները գաղտուկ ասդին անդին կ'երթային, որչափ որ Աստուծոյ օրինաց հաւատարիմ մնացող Հրեայ կը գտնէին՝ քովերնին կը կանչէին : Ասանկով 6000 հոգի զէնք առնող ըլլալէն ետեւ՝ աղօթքով Աստուծոյ գիմելով՝ սկսաւ թշնամեաց վրայ արշաւել : Առջի յարձակման՝ Ապողոնիոս հարկահան իշխանին ու Նրէն Ասորուոց զօրավետին յաղթեց, զԱպողոնիոս մեռցուց եւ անոր սուրն ինք սկսաւ գործածել : Անտիոքոս աս որ լսեց՝ շատ բարկանալով՝ միտքը դրաւ որ Հրէից ազգն երկրի վրայէն բոլորովին ջնջէ :

1 Մակարէ անունը՝ որն որ մօրճ ըսել է, իսկզբան Յուդան առաւ, որն որ բազկով՝ երբեւ մրճով՝ իր ազգին թշնամիները կը ջարջախէր : Բայց աս անունը չէ թէ միայն իր ընտանեացն անցաւ, այլ նաեւ անոնց՝ որոնք կրօնի համար պատերազմեցան կամ նահատակուեցան, զոր որինակ՝ նախնիքաց թուին Քիչի եօթը նահատակից եղբարց ալ նոյն անունը կը տրուի :



Բայց ինք նոյն ատեն Պարսկաստան եւ կամ անկէ աւելի վերերն երթալու ստիպուած ըլլալով՝ Հրէից համար մտքը դրածն հոգալը՝ Լիւսիաս կուսակալին յանձնեց: Ան ալ Նիկանովը զօրապետին ապսպրեց որ իրեն եղած յանձնարարութիւնը գլուխ հանէ: Նիկանովը՝ Պտղոմէոս ու Գորգիաս իրեն երկու օգնականներովը՝ հետը 40,000 հետեւակ ու 7000 հեծեալ առած՝ Հրէաստան եկաւ: Ասիկա յաղթութեան վրայ այնչափ ապահով էր, մինչեւ պատերազմի չսկսած՝ նստաւ հաշիւ ըրաւ որ բոլոր Հրեաները գերի ծախելով որչափ ստակ կրնայ ժողվել, եւ այնչափ ստակն ինչ բանի գործածելիքն ալ որոշեց: Աս մտքով ծովեզերեայ քաղաքներուն մարդագին վաճառականները կանչեց, իննսուն Հրեան մէկ քանքարի ծախելու իրենց խօսք տուաւ: Յուդանոյն միջոցին իր 6000 հոգին ժողվեց եւ զանոնք քաջալերեց ըսելով՝ Անոնք իրենց զէնքին զօրութեան ապաւինած են, իսկ մենք Աստուծոյ՝ որ ամէն բանի կարող է, ուզելու ըլլայ նէ՝ չէ թէ մինակ մեր թշնամիները, հապա բոլոր աշխարհքն ալ կը կործանէ ու կը ջնջէ: Պատերազմէն առաջ զիրենք Մասեփա՝ Երուսաղէմայ գիմացը տարաւ, ամբողջ օր մը հոն ծով կեցան, խորզով ու մտխրով Աստուծոյ առջեւն ինկած՝ անոր օգնականութիւնը խնդրեցին: Ասկից զատ՝ Եզրայ գիւրքը բերել տուաւ՝ հրապարակաւ անոնց առջեւը կարդացուց: Ետքը զօրքն երեք մաս բաժնեց, մէկուն՝ ինք գլուխ կեցաւ, մէկալ երկուքին վրայ ալ Սիմոն ու Յովնաթան եղբարքը կե-

ցուց : Աստուծով բանն յաջողեցաւ , թշնամիներէն 9000 հոգիէն աւելի մարդ ջարդեց , մնացածն հալածեց եւ շարաթ օրը հասնելուն համար՝ թշնամին թողուց ետ դարձաւ , Աստուծոյ շնորհակալ եղաւ : Շարաթ օրն անցնելէն ետեւ՝ պատերազմին մէջ ժողովուած աւարը՝ որուն մէջն էր մարդագին վաճառականներուն բերած ստակն ալ , հիւանդներու , այրիներու եւ որբերու բաժնուեցան : Իսկ ամբարտաւանՆիկանովր անձանօթ զգեստով հազիւ կրցաւ Անտիոք փախչիլ :

Ահսիաս ձախորդ պատերազմին լուրն առնելով՝ շատ տրտմեցաւ . երկրորդ տարին 60,000 հետեւակով ու 5000 ձիաւորով անձամբ Հրէաստան եկաւ : Յուդա զԱստուած օգնութեան կանչեց , 11,000ով դիմացը գնաց , յաղթեց , զԱհսիաս ամօթով Անտիոք դարձուց . եւ ինք էրուսաղէմ ու Սիօն լեռը գնաց , տաճարը հեթանոսական պղծութենէն սրբեց , սեղանը շիտկեց , տաճարին նոր սպաս շինել տուաւ : Ան բանիս յիշատակին համար՝ հաստատեցին որ ամէն տարի ութ օր տօն կատարեն : Միջնաբերդին մէջի Ասորուոց պահապաններուն չգպան , բայց քաղքին կործանուած պատերը շինեցին ու աշտարակներով ամրացուցին : Մօտաւոր ազգերը մանաւանդ Եդոմայեցիք ու Ամոնացիք՝ տեսնելով որ Հրեայք զօրացան ու իրենց պաշտամունքը համարձակ կը կատարեն , անոնց դէմ նախանձելով՝ պատերազմ բացին , որոնց հետ Ասորիք ալ միաբանած էին , իրենց Տիմօթէոս զօրավարին առաջնորդութեամբը . բայց Յուդա զամէնքն ալ յաղթեց :

4. Իսկ Անտիոքոս՝ որ Ասիայի վերին կողմերը գացած էր, ամօթով անկէ ետ դառնալու ատեն՝ լսելով որ Հրէաստանի մէջ ալ գործքը ձախորդ է գացեր, սաստիկ կատաղած՝ միտքը գրաւ որ բոլոր զօրութիւնն հոն դարձնելով՝ Պարսկաստանի կողմերէն ամօթով ետ դառնալու վրէժը Հրէիցմէ առնէ: Որպէս զի շուտով հասնի՝ ճամբան կառապանին ստեպ ստեպ կը պատուիրէր որ կառքը որչափ կարելի է՝ վազցընէ: Բայց ամբարտաւանութեամբ բսելու ատենն որ զՀրէաստան աւերակ ու Հրէից դերեզման պիտ'որ, ընեմ՝ մէկէն փորտախքը սաստիկ ցաւ մ'ինկաւ: Ասոյն միջոցին՝ կառապանը դարձեալ արտորցընելու ատեն՝ որ շուտով քչէ տանի, մէկէն կառքէն վարինկաւ: Յուն երթալով աւելի սաստկացաւ, մինչեւ նաեւ մարմնոյն վրայ փուտ ինկաւ եւ որդ գոյացաւ: Ան ատեն առջի ամբարտաւան միտքը փոխեց, Աստուծոյ զիմեց. բայց Աստուծմէ ողորմութիւն չգտաւ, վասն զի զղջումը սրտանց չէր, եւ չարաչար մեռաւ:

5. Ասոր՝ Անտիոքոս Ե. Եւպատոր կամ Հօրամոյն յաջորդեց, որն որ հօրը պէս Հրեաները կ'ատէր: Յուդա անոր ատենն ալ հեթանոսաց դէմ իր արշաւանքը շարունակեց: Ասորուոց Տիմոթէոս զօրապետը՝ որն որ արդէն անգամ մը Հրէից հետ զարնուած եւ յաղթուած էր, նորէն շատ զօրքով Հրէաստանի վրայ եկաւ: Յուդա Մակաբէ՝ իրեններովն Աստուծոյ օգնականութիւնը խնդրելէն ետքը՝ զօրքով զիմացն ելաւ: Արեգակը ծագելուն պէս՝ երկու բանակներն իրարու զարնուեցան:

Պատերազմը տարցած ատեն՝ օդին մէջ ոսկիէ սանձերով հինգ ձիաւորք երեւցան, որոնք թշնամեաց բանակին քովէն՝ Հրէից բանակը մտան, Յուդան մէջերնին առին՝ անոր կողմանէ սկսան պատերազմիլ: Թշնամեաց կողմանէ եկած նետերն ետ կը դարձնէին, եւ անոնց վրայ անանկ յաջողութեամբ նետ կը նետէին՝ որ թշնամեաց աչքին հանդիպցընելով՝ կը կոյրցընէին: Նոյն պատերազմին մէջ թշնամեաց կողմանէ 20,500 հոգի ինկաւ: Տիմոթէոս Վաղարա ամուր քաղաքը փախաւ. Յուդա գնաց զինքն հոն պաշարեց. մէջինները քաղքին ամրութեան ապաւինած՝ Յուդային զօրքը ծաղր կ'ընէին: Ան ատեն Հրէիցմէ 20 հոգի Աստուծոյ նախանձովը վառուած՝ քաջութեամբ յարձակեցան բերդին վրայ ելան. առանկով բերդն առնուեցաւ եւ աւերակ եղաւ. Տիմոթէոս ալ հոն բռնուելով՝ մեռաւ: Հրեայք իրենց բրած յաղթութեան համար՝ Աստուծոյ շնորհակալութիւն մատուցին:

Ասկէ անմիջապէս ետքը Ղըրուսաղէմ՝ հեթանոսաց բնակութիւն ընելու մտքով Ախոսիաս զօրավարը շատ զօրքով եկաւ Բեթսովրա ամրոցը պաշարեց, որն որ Երուսաղէմէն վեց ժամ հեռու էր: Յուդա իրեններովը լալով ողբով Աստուծմէ խնդրեց որ զիրենք փրկէ. իրենք ալ Երուսաղէմէն ելան՝ որ թշնամեաց վրայ քայլեն: Մէյ մ'ալ հեծեալ մ'երեւցաւ, որն որ ճերմակ հագած էր եւ ոսկիէ զէնք ունէր, եւ առջեւէն երթալով՝ ձեռքինիզակը թշնամեաց վրայ նետեց: Յուդայիններն աս տեսնելով՝ Աստուծոյ զօհութիւն մատու-

ցին ու թշնամեաց վրայ յարձակեցան, որոնց մեծ ջարդ տուին, մնացածները փախուցին: Լիւսիաս ալ ամօթով նորէն փախչելու պատրաստուեցաւ, եւ իմանալով որ անոնց յաղթելն անկարելի է, հետերնին հաշտութիւն ընել ուզեց: Յուդա ամէն բանի մէջ հասարակաց բարին գիտելով՝ յանձն առաւ, ան պայմանով որ Հրէից ամէն տեղ թողառուութիւն ըլլայ իրենց օրինաց համաձայն սպրելու: Նոյն դաշինքին զօրութեամբ իւրաքանչիւր Հրեաց իր երկիրը գնաց ընակելու:

## Հ. Գ Ա Ս

**1.** Խաղաղութիւնն երկայն տեւեց: Յուդա Գորգիասին շէտ տուած պատերազմն ինչպէս լծընցուց: Մեռած Հրէից քովն ինչ ելաւ: — **2.** Անտիոքոս Ե. ու Լիւսիաս ինչու նորէն Հրէաստան եկան: Մենեղաւոս ինչպէս մեռաւ: Յուդա ինչպէս գիմացներն երաւ: Եզդագար անունով Հրեաց մը ինչ քաջութիւն ըրաւ: Անտիոքոս ինչու Հրէից հետ գաշինք գնելու ստիպուեցաւ, նոյն գաշինքն հաւատարմութեամբ բռնեց: — **3.** Գեմարտոս գԲարիդ եւ զԱզիմոս ինչու Հրէաստան իրկեց: Արկանոֆ Հրէաստան ինչ ըրաւ: Հոսրոսին վրայ ինչ կը պատմուի: — **4.** Նիկանոֆրայ հետ պատերազմելն յառաջ Յուդա ինչ տեսիլք տեսաւ: Պատերազմն ինչ վերջ ունեցաւ: — **5.** Յուդա ինչու Հոսմայեցուց հետ դաշինք զրաւ: Ինչպէս մեռաւ:

**1.** Լիւսիասին հետ հաստատուած խաղաղութիւնն երկայն շտեւեց: Հրէաստանի մտա ըլլող հեթանոս հրամանատարներն Հրէից այնչափ փնասներ տուին, որ Յուդա Մակարէ ձեռքը նորէն զէնք առնելու ստիպուեցաւ: Աւստի զԱստուած օգնութեան կանչելով՝ անոնց վրայ գնաց, սաստիկ ջարդեց, եւ իր կողմանէ

մինակ մէկ հոգի կորսնցընելով՝ Պենտեկոստէի տօնին մօտերը Երուսաղէմ դարձաւ, ուր Աստուծոյ շնորհակալութեան զոհ մատոյց: Տօնն անցնելէն ետեւ՝ Եդովմայեցւոց Կորգիտոս կուսակալին դէմ պատերազմի դնաց: Նոյն պատերազմին մէջ Հրէիցմէ քանի մը հոգի մեռաւ: Յուդա աս տեսնելով՝ Աստուծակօզնութիւն խնդրեց, եւ քաջալերուած՝ թշնամիները զարկաւ փախուց: Երկրորդ առտու իրեններովն իր մեռելները թաղելու գալով՝ անոնց քովէն կոնց ընծայուած բաներ գտաւ: որոնք քովերնին պահելն Հրէից արգելուած էր: Նոյն ատեն ամենուն յայտնի եղաւ որ անոնց մահուան պատճառն իրենց աս մեղքն է եղեր, անոր համար Աստուծոյ արդար դատատանն օրհնեցին, եւ ան ողորմելիներուն մեղացը համար թողութիւն խնդրեցին: Յուդա Մակաբէ ասկէ առիթ առնելով՝ իրեններուն իրատ տուաւ որ մեղքէ զգուշանան, նաեւ ստակ ժողովեց Երուսաղէմ խրկեց՝ որ մեռնողներուն մեղացը համար Աստուծոյ պատարագ մատուցանեն:

Չ. Միջնաբերդը դեռ Ասորոց ձեռքն ըլլալով՝ Յուդա նոյն ամրոցն առնել ուզեց, ուստի եւ զօրքով պաշարելու եկաւ: Պաշարումն երկըննալով՝ մէջիններէն ոմանք մէկ քանի ուրացեալ Հրէից հետ գաղտուկ գացին Անտիոքոս Է.ին աղաչեցին որ ամրոցին պաշարումը վերցընէ: Անտիոքոս ու Լիւսիաս 100,000 հետեւակ, 20,000 ձիաւոր, 32 փիղ, 300 գերանդաղէն կառք առին Հրէաստան եկան: Անոնց հետն էր Մենեղաւոս անօրէնն

այ՝ որն որ շարունակ քահանայապետ ըլլալու ետեւէ կ'իյնար. բայց չկրցաւ յաջողցնել. վասն զի Անտիոքոս խմանալով որ աս ամէն շարեաց պատճառն ան է, մէկէն զինքը մոխրով լեցուն աշտարակի մը մէջ նետել տուաւ, ուր որ շարաշար մեռաւ: Յուդա իրեններովն զԱստուած օգնութեան կանչեց, իր զօրքը քաջաբերեց եւ աս խօսքն իրենց նշանաբան տուաւ: Յաշիւ--նի--ն Ա--տ--ն--ն: Ատրք գիշերանց թրշնամի դն վրայ գնաց, անոնցմէ 4000 հօգի սպաննեց, փղապետն ալ մէկտեղ, եւ ետ դարձաւ: Անտիոքոս՝ իր զօրաց բազմութեան ապաւինած՝ փող զարնել տուաւ եւ նորէն պատերազմի ելաւ, փղերուն ալ գինի խմցուց՝ որ կատաղին: Ամէն մէկ փիղ վանդակակապ մարտկոց մը կը կրէր ու փղապանը վրան կը նստէր, աջ ու ձախ դիէն ձիաւոր եւ ոտանաւոր զօրք կ'երթար: Յուդա աս ահագին բանակին զխմացն ելաւ, անոնցմէ շատ մարդ սպաննեց: Ազիազար անունով Հրեայ մը՝ մէկախներէն շատ փառաւոր զարդարուած փիղ մը տեսնելով եւ կարծելով որ վրայինը թագաւորն է, իր ազգին փրկութեան համար կեանքը վտանգի մէջ դրաւ, քաջութեամբ գնդին մէջ մտաւ, գիմացն էլողը զարկաւ ձգեց, եւ փղին մօտիկնայով՝ տակը մտաւ փորը ծանր խոցեց. փիղը վրան ինկաւ, ինք տակը ճմլած մնաց: Թէպէտ ան միջոցին Յուդայիները մէկ կողմանէ կը պատերազմէին, բայց վերջապէս ետ քաշուին օգտակար սեպեցին: Անտիոքոս ետեւէն ինկաւ, մինչեւ եկաւ Արուսաղէմը պաշարեց, Բայց Հրէից՝ հաստատութեամբ դէմ կենալն

ու իր երկրին մէջ ապստամբութիւն ելլելուն լուրը՝ զինքն ստիպեցին որ հետերնին խաղաղութեան դաշինք դնէ : Սակայն դաշինքը չպահեց, վասն զի խաղաղութիւնն հաստատուելէն ետեւ՝ երբ որ Սիոն լեռը մտաւ, անոր ամբողջութիւնը զննեց, բռնութեամբ Երուսաղեմայ բոլորափքն եղած պատը քակել տուաւ եւ անանկ ետ դարձաւ : Անտիրոսս պատիժը գտաւ : Սելեւկիոս Գ.ին որդին Գեմետրիոս Ա. զինքն ու Լիւսիաք սպաննեց ու թաղաւոր նստաւ :

**Յ.** Աղկիմոս՝ որ ատենօք քահանայապետ եղած եւ ետքէն հալածանաց ատեն Հրէութիւնն ուրացած ու Անտիրոսս Ե.էն Մենեղաւոսին տեղ քահանայապետ որոշուած էր, ու մինչեւ նոյն ատեն չէր եղած, Գեմետրիոսին եկաւ, Յուդայի եւ անոր կողմնակցաց վրայ չարախօսութիւն բրաւ, եւ խօսքն ասով վերջացուց թէ Քանի որ Յուդա Մակարէն ողջ է՝ Հրէաստան չիսաղաղնար : Ուրիշներն ալ վրայ տալով՝ Գեմետրիոս զՔաբիդ Եփրատէն ասողին ըլլող երկիրներուն կուսակալ դրաւ ու շատ զօրքով Աղկիմոսին հետ Հրէաստան խրկեց : Ասոնք առջի բերան անանկ ձեւացուցին որ խաղաղութիւն հաստատելու եկած են, եւ անոր համար կ'ուզեն մէկտեղ գալ խաղաղութեան պայմաններուն վրայ խորհիլ : Յուդա եւ իր եղբարքն անոնց չհաւատալով՝ չգացին. իսկ քահանայիցմէ ու բարեպաշտ ժողովրդեան մէջէն՝ որոնք Աղկիմոսին վտահելով գացած էին, 60 հոգւոյ չափ բռնուեցան ջրհորի մը մէջ նետուեցան : Աղկիմոս ու Բաքիդ Յուդային բան մը չկրնալով ընել՝ դար-



ձան նորէն զԴեմետրիոս զրգռեցին. ան ալ  
 Նիկանովրը շատ զօրքով խրկեց, որ Յուդան  
 բռնէ ու տեղը զԱղկիմոս քահանայապետ  
 դնէ: Նիկանովր Հրէաստան եկաւ Սիմոնին  
 հետ մէկ անգամ զարնուեցաւ ու յաղթեց.  
 բայց Յուդայիներուն կտրիճութիւնը լրած  
 ըլլալով՝ պատերազմը շարունակելու սիրտ չը-  
 բաւ, այլ Յուդային հետ դաշինք դրաւ, Ե-  
 րուսաղէմ մտաւ, մինչեւ նաեւ Յուդային ըն-  
 տանեացը հետ խնամութիւն ըրաւ: Աղկիմոս  
 աս բանիս վրայ նեղանալով՝ գնաց զինքը թա-  
 դաւորին ամբաստանեց, ան ալ Նիկանովրին  
 խտաիւ պատուէր խրկեց որ Յուդան բռնէ,  
 Անտիոք խաւրէ: Յուդա բանն խմանալով՝  
 խել մը ընտիր զօրքով քաղքէն փախաւ. Նի-  
 կանովր ետեւէն ինկաւ, քահանայից պատա-  
 րագ մատուցանելու ատեն տաճար եկաւ՝ ա-  
 նոնց սպառնաց որ Եթէ Յուդան չէք գտներ,  
 կապած՝ ձեռքս չէք տար, տաճարը կը կործա-  
 նեմ, մեհեան կ'ընեմ: Անոնք լալով սկսան Աս-  
 տուծոյ աղաչել որ իր տաճարը պահէ: Նիկա-  
 նովր անոնց դէմ՝ թշնամութիւն ցուցընելով  
 թագաւորին աչքը մտնելու համար՝ ուղեց մեծ  
 շարիք մ'ընել. ուստի Հռաքս անունով իրենց  
 ծերերէն մէկուն ետեւէն ինկաւ, որն որ մեծ  
 հայրենասիրութիւն ունենալուն՝ Երբայեցւոց  
 հայր կը կոչուէր, եւ անոր տունը 500 մար-  
 դով պաշարեց: Երբ որ զինուորները բռնու-  
 թեամբ ներս մտնելու համար՝ դուռը կտարե-  
 լու եւ այրելու ետեւէ կ'ըլլային, Հռաքս  
 կռապաշտներուն ձեռքը չկնալու համար՝ սու-  
 րը փորը խոթեց, ինք զինքը վար նետեց ու

չմեռած՝ ոտք ելաւ, դուրս ինկած փորոտի-  
քը ձեռքն առած՝ Տէր, այսպէս իրեն հասու-  
ցանես, ըսաւ, ինկաւ մեռաւ<sup>1</sup> :

4. Ասկէ ետքը Նիկանոսը Յուդային Սա-  
մարիա ըլլալը լսելով՝ ուզեց շարած օրով  
վրան երթալ, հետն ըլլող Հրեաներն ալ մէկ-  
տեղ տանիլ կ'ուզէր: Եւ երբ որ անոնք կ'ը-  
սէին թէ նոյն օրը սուրբ պահէ, անօրէնն ար-  
համարհելով եւ հայհոյելով՝ գիտցածէն ետ  
չկեցաւ: Ան միջոցին Յուդա յոյսն Աստուծոյ  
դրած՝ իրենները կը քաջալերէր որ հեթա-  
նոսներէն չվախնան, եւ զիրենք աւելի յար-  
դորելու համար հետեւեալ տեսիլքը պատմեց:  
Տեսայ որ, ըսաւ, Մնիա քահանայապետը ձե-  
ռուրները տարածած՝ բոլոր Հրէից ազգին հա-  
մար կ'աղօթէր: Հետը երկայնահասակ լու-  
սաւոր մարդ մ'ալ կար, որուն համար Մնիան  
ինծի ըսաւ թէ Երեմիա մարգարէն է՝ որ ժո-  
ղովրդեան ու սուրբ քաղաքին համար անդա-  
դար Աստուծոյ կ'աղաչէ: Նոյն ատեն Երեմիա  
աջ ձեռքն ինծի երկընցուց՝ ոսկիէ սուր մը  
տուաւ, ըսելով՝ Աս սուրբ սուրն առ. ասով  
բոլոր թշնամիները պիտի նուաճես: Ամէնքը  
քաջալերուելով ու տաճարն ալ վտանգի մէջ  
տեսնելով՝ որոշեցին որ թշնամուոյն վրայ յար-  
ձակին: Երբ որ երկու կողմանէ իրարու դէմ  
ճակատեցան, Յուդա ձեռքն երկինք վերցը-  
նելով՝ Աստուծոյ օգնութիւն խնդրեց: Նի-  
կանոսը ան միջոցին փող զարնել տալով՝ իր

<sup>1</sup> Նորագոյն Աստուածարաններէն ոմանք զծիրն  
արգարացընելու համար՝ Աս բանս Աստուծոյ ազ-  
գեցութեամբն ըրաւ, կ'ըսեն:

զօրքը Յուդային վրայ քաղեցուց: Յուդա աս-  
դիէն վրանին գնաց. իր զօրքը ձեռքով կը  
պատերազմէր, մտքով Աստուծոյ դարձած կ'ա-  
ղօթէր, եւ այսպէս Աստուծոյ յաջողելովը  
թշնամւոյն կողմէն 35,000 հոգի մեռցուցին,  
Նիկանովր ալ մեռաւ, եւ իրեններն սկսան  
փախչիլ: Յուդա Երուսաղէմ դարձաւ, ասոր  
յիշատակին համար յաղթութեան օրը տօնի  
օր բրաւ:

5. Յուդա տեսնելով որ մերձաւոր ազգե-  
րուն շրէից դէմ բրած բռնութեան վերջը  
պիտի չգայ, եւ միանգամայն Հռոմայեցւոց  
քաջ ազգ ըլլայն եւ իրենց դաշնակիցներուն  
աղէկ օգնելը գիտնալով՝ հետերնին դաշինք  
դնելու համար Հռոմ դեսպան խրկեց: Հռո-  
մայեցիք աս բանս սիրով յանձն առին, եւ  
տուած խոստումնին պղնձէ տախտակի վրայ  
գրած՝ դեսպաններուն ձեռքը տուին, որ հե-  
տերնին տանին, յիշատակի համար պահեն:

Իսկ Գեմետր Նիկանովրայ մահը լսելով՝  
Բաբելոնը նորէն Աղկիմոսին հետ Յուդային  
վրայ խրկեց: Նոյն ատեն Յուդային քով մի-  
նակ 3000 զօրք կար, որոնցմէ շատերը վախնա-  
լով՝ ցրուեցան, եւ մինակ 800 ձիաւոր մնաց:  
անոնք ալ կ'ըսէին որ Ասանգամ ետ կե-  
նանք: Բայց Յուդա՝ Ես փախչիլ չեմ գիտեր,  
ըսելով՝ այնչափ հողւով ամբողջ օր մը պա-  
տերազմեցաւ, ու թշնամւոյն աջ թեւին յաղ-  
թեց. իսկ ձախ թեւի զօրքն իր ետեւն ան-  
ցնելով՝ զինքը չորս դիէն պաշարեցին: Յու-  
դա ինկաւ մեռաւ, զօրքին մէջէն կրցողը  
փախաւ: Ետքը Սիմոն ու Յովնաթան անոր

մարմինը Մովսիսիմ՝ իր հօրը գերեզմանը տարին թաղեցին : Հրեայք վրան մեծ սուգ բռնեցին . վրան կու լային ըսելով՝ Իսրայելին հզոր փրկիչն ինչպէս կորսընցուցինք : Սաուգիւ փրկիչնին էր, վասն զի իր մեռնելէն ետեւ՝ ամբարիշտք ատեն գտան, զօրացան : Նոյն իսկ Հրէիցմէ Բաբելոն կողմն անցնող եղաւ : Անորէն Աղկիմոս ալ քահանայապետ եղաւ, եւ զինքն ան իշխանութեան հասցընողներուն հաճելի գործք մ'ընելու համար՝ տաճարին սրահին ներքին պատը կործանելու հրաման տուաւ : Բայց հազիւ հրամանն ի գործ դրուելու սկսած էր՝ ինք շարաշար մեռաւ :

## Հ Ա . Դ Ա Ս

1. Բաբելոն Գոթաթանին բան մը կրցաւ ընել : Հրեաստան խաղաղութիւնը հաստատուեցաւ նէ՛ Գոթաթան ինչ ըրաւ : — 2. Աղէքսանդրոս Բաղաս Գոթաթանին հետ ինչպէս վարուեցաւ : Դեմեարիոս Բ. հօրը թաղաորութիւնը ձեռք անցընելէն ետեւ՝ Գոթաթանին հետ ինչպէս վարուեցաւ : Գոթաթան ինչու Անտիոքոս Զ. ին կողմն անցաւ : Տրիփոն գոթաթան ինչու բռնեց : — 3. Սիմոն գոթաթան Տրիփոնին ձեռքէն կրցաւ ազատել : Հրեաստան երբ կատարեալ ազատ եղաւ : Սիմոն ինչ վարձք ընդունեցաւ : — 4. Անտիոքոս Սիդային ո՞վ է . Սիմոնին ինչ պատիւ տուաւ, եւ ետքը ինչ պահանջեց : Վենդերոս Հրէից բան մը կրցաւ ընել : Սիմոն ինչպէս մեռաւ :

1. Ճշմարիտ Իսրայելացիք՝ Յուդային Յովնաթան եղբայրն իրենց իշխան ու զօրավար ընտրեցին, ան ալ իրեններովը թափովեայ անապատը փախաւ : Բաբելոն հոն զինքը բռնելու շատ աշխատեցաւ, բայց չկրցաւ . իսկ անոր

Յովհաննէս եղբայրը նենդութեամբ բռնեց սպաննեց : Յովնաթան իր եղբորը վրէժը Բաբիդէն առաւ, իրեն ալ յաղթեց : Աղկիմոսին մեռնիլն աս միջոցին պատահելով՝ Բաբիդ իր տեղը դարձաւ, այսպէսով Հրէաստան երկու տարի խաղաղ մնաց : Բայց երկու տարիէն՝ անօրէն Հրէից յորդորելովը՝ Բաբիդ դարձեալ զՅովնաթան մեռցընելու ետեւէ սկսաւ ըլլալ : Սակայն աս հեղ ալ չկրնալով՝ հետը խաղաղութիւն ըրաւ, ու Հրէաստանէն ելաւ դնաց, երգմամբ խօզր տալով որ մէյ մ'ալ ետ չիդառնար : Ասով Հրէաստանի խաղաղութիւնն հաստատուելով՝ Յովնաթան իր Ժողովուրդը կը հոգար. Մաքմաս կը նստէր զանոնք կը դատէր եւ անօրէն Խորայելացիները կը կշտամբէր :

Ք. Երբ որ Աղէքսանդրոս Բաղաս՝ Անտիոքոս Գ.ին որդին եմ ըսելով՝ Հռոմայեցւոց ձեռք բռնելովը Գեմեստրիոսին դէմ ելաւ, Գեմեստրիոս ուզեց Յովնաթանին հետ բարեկամանալ : Բայց նոյն ատեն Աղէքսանդրոս ալ զինքը շահել ուզելով՝ իրեն թագաւորական ծիրանի խրկեց : Յովնաթան Երուսաղէմ մտնելէն եւ աղէկ մը ամբացընելէն ետեւ՝ Աղէքսանդրոսին կողմն անցաւ, վասն զի Գեմեստրիոսին վրայ վստահութիւն չունէր : Աս վերջինն Աղէքսանդրոսին հետ ըրած պատերազմին մէջ մեռնելով՝ Աղէքսանդրոս թագաւոր եղաւ եւ Եգիպտոսի Պաղոմէոս Զ. թագաւորին Աղէոպատրա աղջիկը կին առաւ : Յովնաթան հարսնիքի ատեն ան երկու թագաւորներէն մեծ պատիւ գտաւ :

Ասկէ տարի մը ետքը Գեմետրիոսին որդին Գեմետրիոս Բ. Աիլիկիայի կողմերէն՝ հօրը թագաւորութիւնն առնելու համար նաւերով կու գար. ասոր հետ միաբանողներ շատ եղան, որոնց մէկն ալ ստորին Ասորուոց ու Պաղեստինի կուսակալն Անտիոքոսն էր: Յովնաթան ասոր յաղթելով, Աղէքսանդր՝ զԱկկարոն քաղաքն իրեն վարձք տուաւ: Բայց ետքը երբ որ Աղէքսանդր յաղթուեցաւ եւ Գեմետրիոս Բ. հօրը թագաւորութիւնն առաւնէ, Յովնաթանայ հետ դաշինք դրաւ, եւ զանազան երկիրներ տալով՝ իշխանութիւնն ընդարձակեց, հարկէ ալ ազատ ըրաւ: Յովնաթան ասոր փոխարէն՝ 300 քանքար խրկեց, նաեւ 3000 հոգի իր զօրքէն մարդ տուաւ անոր օգնելու համար: Բայց Գեմետրիոս իր պահապան զօրքն Հրէաստանէն կանչելը կուշացրնէր: Անոր համար երբ որ Տրիփոն զօրապետն Աղէքսանդրոսին Անտիոքոս որդին թագաւոր նստեցուց, Յովնաթան նոյն Անտիոքոս Զին կողմն անցաւ: Բիշ մը ետքը Տրիփոն թագաւոր ըլլալ ուզելով՝ զԱնտիոքոս մեռցրնելու առիթ կը փնտռէր: Բայց գիտնալով ալ որ Յովնաթան զինքը թագաւոր պիտի չընդունի, նախ ուզեց զանիկա մէջտեղաց վերցրնել եւ զօրքով վրան եկաւ: Յովնաթան 40,000ով դիմացն ելաւ. Տրիփոն զինքը սանկով նանկով համոզելով՝ զօրքը քովէն հեռացրնել տուաւ եւ զինքը բռնեց:

**3.** Իսկ Սիմոն Յովնաթանին եղբայրը, զորն որ Անտիոքոս Զ. ծովեզերեայ կողմերուն կուսակալ ու զօրավար դրած էր, եղ-

բօրբ բանուիլը լսելուն պէս՝ վազեց Երուսաղէմ՝ զնաց, Հրեայք սոք հանեց եւ խել մը զօրք առած՝ Տրիփոնին զիմացը զնաց, Յովնաթանն ուզեց ու պատանդի համար անոր երկու որդիքը տուաւ : Տրիփոն ստեց՝ Յովնաթանը չարձակեց ու յառաջ կը քալէր . բայց Սիմոն ամէն տեղ անոր զիմացը կ'ելէր կ'արգելէր : Վերջապէս այնչափ եղաւ որ Տրիփոն Յովնաթանն ու անոր որդիքն սպաննեց : Սիմոն անոնց մարմինն առաւ : Մովղիիմ՝ բերաւ եւ վրանին փառաւոր շիրիմ՝ մը շինեց : Նոյն միջոցին Տրիփոն Ասորիք դարձաւ զԱնտիոքոս Չ . մեռցնել տուաւ եւ ինք տեղն անցաւ : Ան ատեն Սիմոն պատգամաւոր խրկեց Գեմեարիոս Բ . ին՝ որուն գեռ ձեռքն էր Ասորոց երկիրներուն մէկ մասը . Գեմեարիոս իրեն հետ դաշինք դրաւ , զինքն իրրեւ իշխան ազգապետ ընդունեցաւ ու հարկէ ազատ բրաւ : Ասկէ ետքը Ասորիք միջնարեդը Սիմոնին ձեռք տուին . ինքն ալ բոլոր նոյն տեղուանքն հէթանոսական պղծութիւններէ սրբելէն ետեւ՝ իր իշխանութեան երկիրները կարգաւորելու եւ շէնջընելու ետեւէ կ'ըլլար : Ասով բոլոր ազգին առջեւը մեծ արդիւնք ստանալով՝ մինչեւ Քրիստոսի գալուստը քահանայապետութիւնն իր ցեղին մէջ մնաց :

▲ . Աղէտպատրա՛ զորն որ հայրը Աղէքսանդրոսէն առած՝ Գեմեարիոս Բ . ին տուած էր , Տրիփոնին դէմ օգնական մը գտնելու համար՝ երկանը եղբօրը՝ Անտիոքոս Սիդալոյն հետ ամուսնացաւ : Ասիկա Սիմոնին հետ բարեկամանալու համար՝ զինքն իր իշխա-

նութեան մէջ հաստատելէն զատ՝ ստակ կտրե-  
 լու ալ հրաման տուաւ: Բայց երբ որ Աս-  
 րիք գնաց ու Տրիփոնին զօրքն իր կողմն ան-  
 ցաւ նէ, Սիմոնին բրած խոստումներուն վրայ  
 զղջալով՝ սպառնալեօք պահանջեց որ կամ՝  
 միջնաբերդը քանի մը քաղաքներու հետ ետ  
 տայ, կամ՝ 5000 քանքար տայ: Սիմոն՝ առ-  
 առաւելն 100 քանքար տալ խոստացաւ: Աս  
 ատեն Անտիոքոս Է.ին զօրապետը կենդե-  
 բոս Հրէաստանի վրայ եկաւ: Սիմոնին Յու-  
 դա ու Յովհաննէս որդիքը զանիկա զարկին  
 ու զօրութիւնը կոտորելով իրենց սահմաննե-  
 րէն մերժեցին: Ասանկով Հրէաստան երեք  
 տարի խաղաղ մնաց. վասն զի Անտիոքոս Է.  
 Հռոմայեցւոցմէ կը վախնար, որոնք Հրէից  
 բարեկամ ու պաշտպան ըլլալնին հրատարա-  
 կած էին: Աս խաղաղութեան ատենները Սի-  
 մոն՝ Յուդա ու Մատաթիա որդւոցը հետ  
 Հրէաստան ասդին անդին պտրտելու ելած  
 ըլլալով՝ Երիբովի մէջ իր Պտղոմէոս փեսան  
 խնջոյքի ատեն թէ՛ զինքը թէ՛ որդիքն սպան-  
 նել տուաւ: Բայց Յովհաննէս՝ Սիմոնին ամե-  
 նէն պղտիկ որդին՝ բանն իմանալով, զինքն  
 ալ սպաննելու համար Պտղոմէոսին խրկած  
 մարդիկները բռնեց մեռցուց, եւ ինք հօրը  
 յաջորդեց:



Հ Ա Տ Ո Ւ Ա Մ Ե .

Քրիստոսի թանգեղանի յարմար է իր արեւ-  
ները Հրեից + ազգային -- կրօնային վիճակը :

(107—1, . . .)

Յովհաննէսին՝ իր հօրը յաջորդելէն մինչեւ  
Քրիստոսի ծնունդն անցած ժամանակին վրայ՝  
Ս . Գրոց մէջ ամենեւին յիշատակութիւն մը  
չկայ : Բայց որովհետեւ թէ նոյն ժամանակին  
դէպքերը եւ թէ Քրիստոսի ատենները Հրեից  
քաղաքական ու կրօնական վիճակը զիանալ  
հարկաւոր է, անոր համար աս Հատուածիս  
մէջ անոնց վրայ կը խօսինք : Բայց յառաջ  
խօսինք

Փարիսեացի -- Սարգիսեացի աւանդներն  
էրոյ :

Փարիսեցիք՝ թէ որ ամենէն ուշ ժամանակն  
առնելու ըլլանք՝ Մակարայեցոց ատեններն ե-  
լան : Ամբողջ Ս . Գիրքը կ'ընդունէին, հնու-  
թեանց ու աւանդութեանց նախանձաւոր պաշտ-  
պանիչներն էին, կարծելով որ ասոնք են Ս .  
Գրոց ամբողջացուցիչ մասունքները : Բայց աս  
աւանդութեանց մէջ հաստատուն չմնացին, սլլ  
ստեպ իրենց ուզածին համաձայն Ս . Գրոց մեկ-  
նութիւններ կու ապին, օրինաց պահպանու-  
թեան նեղացուցիչ ճշդութիւն եւ իրենց դոր-  
ծոցը մէջ արտաքին սրբութիւն մը կը պահան-  
ջէին : Եւ ան հրամանին կատարումը՝ որ բա-  
ժակներու եւ ուրիշ ասոնց նման բաներու  
մաքրութեան վրայ էր՝ իրենց հպարտութիւնն  
այնչափի հասցուց, որ սլ սկսան իրենք զիրենք  
սուրբի տեղ դնել եւ ուրիշները մանաւանդ

ոամիկը վար զարնել ու նախատել: Սրտերնին կեղծաւորութեամբ եւ ուրիշ ամէն տեսակ մոլութիւններով լեցուն էր, որոնց համար որ քրիստոս զիրենք «Գերեզմանաց բռեւոց», նմանցուց, որոնք թէպէտ արտաբուսա մարուք կ'երեւան, բայց ի ներքուստ լի են ժանաահոտութեամբ ու զարչելի ոսկրոտիքներով: Ի վերայ այսր ամենայնի խեղճ ժողովուրդն՝ ասոնց արտաքին սրբութենէն խարուած՝ իրենց կը հետեւէր:

Ասոր հակառակ Սաղուկեցիք տեսնելով որ ժամանակը նորոգութեան մը կարօտութիւն ունի, յանդգնեցան իրենք իրենցմէ առ բանս գլուխ հանելու: Ասոնք Ս. Գրքին մէջէն միայն Մովսիսի հինգ գրքերը կ'ընդունէին. աւանդութիւններն ու օրինաց սովորութիւններն ամենեւին բանի տեղ չէին դնէր: Աւրացան հոգւոյն անմահութիւնը, ուստի որ մահուրնէ ետքը պատիժը կամ վարձքն ու յարութեան յոյսն ալ ուրանալը շատ զիւրաւ հետեւեցաւ: Հրեշտակներու եւ սատանաներու գոյութեան հաւատք չէին ընծայեր: Իրենց առ աստիճանի անլուր մոլորութեանց մէջ իյնալուն պատճառը՝ Ս. Գիրքն աղէկ չհասկընալն էր: Աս ասանկ ըլլալէն ետեւ՝ երկրիս վրայ երջանիկ ու հանգիստ կեանք մը անցընելէն ուրիշ բանի մը չէին բաղձար: Սկսան իրենք զիրենք բոլորովին փափկութեանց, անառակութեանց եւ աշխարհքիս անցողական գրօսանքներու տալ: Վերը զրուցածներնուս պէս՝ ժողովրդեան մեծ մասը, զիտուններն ու զպիրները՝ Փարիսեցւոց կողմէն էին. իսկ աղնուականաց ու հարուստներուն մեծ մասը՝ Սաղուկեցւոց կողմը:

Աս երկու աղանդներուն վրայ այսչափս բաւական սեպելով՝ պատմութեան զառնանք:

Հ Ի Գ Ա Ս

1. Յովհաննէս ինչպէս տիրեց: — 2. Իրեն ս՛վ յաւ-  
 չորդեց: — 3. Աղէքսանդրոս Ա. ինչ մարդ էր. ինչ  
 բռնութեան գործքեր գործեց եւ ինչպէս մեռաւ: — 4.  
 Աղէքսանդրոս իր իշխանութիւնն ինչպէս վարեց: — 5.  
 Ապուստ՛ Արարիայի թագաւորն ինչու՛ Հրէից գե՛մ պա-  
 տերազմի ելաւ: Պսմպէոս Երուսաղէմ եկաւ ինչ ըրաւ:  
 Հրեայք նրբ եւ ինչ պատճառաւ թագաւորութիւննին  
 կորսնցուցին:

1. Յովհաննէս՝ Սիմոնին որդին, որ Հիւր-  
 կանիա գաւառը յաղթելուն՝ Հիւրկանոս Ա.  
 կոչուեցաւ, իսկզբան թէպէտ Ասորւոց ձեռ-  
 քէն շատ կը նեղուէր, բայց վերջէն յաջողու-  
 թեամբ իր Երկիրն անոնց ձեռքէն բոլորովին  
 ազատեց. Հրէից իշխանութեան սահմաններն  
 ալ ընդարձակեց, Ասորւոց, Եգիպտացւոց ու  
 Արարացւոց ձեռքէն քաղաքներն առնելով:  
 Քանի մը տարի ետքը Սամարիա քաղաքին  
 բնակիչներէն գրգռուելով՝ վրանին վազեց,  
 քաղաքն առաւ հիմնայատակ կործանեց: Այս-  
 պէս քաջութեամբ 28 տարի առաջնորդելէն  
 ետեւ՝ կնքեց կենացն օրերը, իրեն հետ տա-  
 նելով նաեւ Մակարայեցւոց փառաւոր քա-  
 ջութեան անունը, որն որ 60 տարիէ ի վեր  
 բոլոր դրացի ազգերը կը սարսափեցընէր:

Արդէն աս քաջ Մակարայեցւոյն վերջին  
 ատենները՝ Փարիսեցւոց ու Սադուկեցւոց ա-  
 ղանդները քաղաքային կուսակցութեան կեր-  
 պարանք մ'առած էին: Նոյն իսկ Հիւրկանոս  
 ալ՝ որ յառաջ Փարիսեցւոց կողմն էր, (որոնք  
 եկեղեցական իշխանութիւնն աշխարհական իշ-  
 խանութենէ բաժնել կ'ուզէին) վերջէն Սա-  
 դուկեցւոց կողմն անցաւ:

**2.** Յովհանն Լիւրկանոս Ա. հինգ որդի թողուցեր էր: Ասոնց ամենէն մեծը՝ Յուդա Արիստարուղոս Ա. թագաւորութեան պատիւ աննելով՝ իր երկրորդ եղբայրն Անտիգոնոս իրեն օգնական ըրաւ. իսկ միւս եղբայրները բոլոր բանտարկեց, մայրն ալ բանտի մէջ անօթութենէ մեռցուց, որովհետեւ հայրը տութեան առաջնորդութիւնը մօրը յանձնած էր: Անգամ մը երբ որ Արիստարուղոս կարճ պատերազմէ մը ետեւ Երուսաղէմ՝ եկաւ, հոն իր թշնամեացը նենդութեամբը՝ որոնց զլուխ էր իր կինը Սողոմէ, իր Անտիգոնոս եղբայրը մեռցուց: Եւ թէպէտ ետքէն զըզջաց, բայց ան զեղջը շատ ուշ ըլլալուն՝ օգուտ մը չըրաւ, յուսահատութեան մէջ իյնալով՝ փշեց հոգին անօրէն մայրասպանն ու եղբայրասպանը՝ տարի մը թագաւորելէն ետեւ:

**3.** Արիստարուղոս մեռնելուն պէս՝ իր կինը Սողոմէն, որ Աղէքսանդրա ալ կը կոչուի, անոր եղբարքը բանտէն հանել տուաւ ու ամենէն մեծը Յաննէոս Աղէքսանդրոս Ա. թագաւոր դրաւ: Ասիկա իր թագաւորութիւնը հաստատուն բռնելու համար՝ Աղէքսանդրային հետ կարգուեցաւ ու իր երկրորդ եղբայրը փոքր կասկածի մը համար մեռցնել տուաւ: Անգամ մը երբ որ դրացի ազգաց յաղթած՝ փառաւորութեամբ Երուսաղէմ մտաւ, Փարիսեցւոց գրգռութեամբը հրապարակաւ նախատինք մը կրելուն համար՝ 6000 հոգի իրեն վրէժխնդրութեանը զոհ ըրաւ: Ասկից բրգաւ քաղաքային պատերազմ մը՝ որ ամբողջ 6 տարի քշեց: Ասոր մէջ Աղէքսան-

դրոս երբեմն յաղթող երբեմն յաղթուող կը գտնուէր. անգամ մ'ալ յաղթութենէ մը ետքը 800 հրեայ խաչ հանելու անոնց կանայքն ու որդիքներն առջեւնին չարչարելով սպաննել տուաւ. ինքն ալ անդիէն իր հարձերոջն աս ազիտողորմ տեսարանին առջեւը նստած՝ գազանային սրտով մը եղածներուն վրայ կ'ուրախանար: Իրմէ ապստամբած քաղաքներուն շատերն ալ ետ առնելէն ետեւ՝ ինք զինքը բոլորովին արբեցութեան տուաւ: Էրեք տարի տենդի հիւանդութենէ սաստիկ կը շարչարուէր. անգամ մ'ալ պատերազմի մը մէջ նոյն հիւանդութիւնը սաստկանալով՝ իր Աղէքսանդրա կիներն իրեն յաջորդ անուանեց, եւ անոր խրատ տուաւ որ եթէ իշխանութիւնը հաստատուն բռնել կ'ուզէ՝ Փարիսեցւոց կողմը բռնէ: Աս վայրենի, գազանասիրտ թագաւորն ու քահանայապետը 49 տարւան մեռաւ:

4. Աղէքսանդրա թագաւորութիւնն առնելուն պէս՝ մերժեց իր Հիւրկանոս ու Արիստարուղ որդիքները, որոնցմէ առաջինը քահանայապետ էր: Թէպէտ դրացի իշխանները զինքը կը պատուէին եւ իրմէ կը վախնային, որով խաղաղութիւնն ալ արտաբուստ շարուեցաւ. բայց ինք իր իշխանութիւնը բոլորովին Փարիսեցւոց ձեռքը թողուց, որոնք ամենայն ինչ իրենց կամօցը համաձայն կը կարգաւորէին ու իրենց հակառակորդները կը շարչարէին կը հալածէին: Արիստարուղ աս տեսնելով՝ իր հօրը ծեր զինուորները չորս դին ժողոված՝ մօրմէն պահանջեց որ անոնց ամուր

ու ապահով քաղաքներ տայ, որպէս զի Փարիսեցւոց մոլեգնութենէն ազատին: Երբ որ Աղէքսանդրա մեռնելու անկողինն ինկաւ, Արիստարուղ անմիջապէս Հրէաստանի ամուր քաղաքները գրաւեց, բայց մայրը զՀիւրկանոս Բ. իր որդին յաջորդ անուանելով մեռաւ:

Ճ. Հիւրկանոս Բ. որուն պաշտպանն էին միշտ Փարիսեցիք, երկու տարի միայն կրցաւ թագաւորել, որովհետեւ Արիստարուղ իրեն բոլորովին յաղթելով՝ զօրքերն իրմէ հեռացան. այսպէսով նեղ մտած՝ տաճարին մէջ հրապարակաւ թագաւորական ու քահանայապետական պատիւներէն հրաժարեցաւ: Արիստարուղ Բ. բաղձացածին հասաւ, բայց թշնամի ալ շատ ունեցաւ: Թշնամիք բանն այնչափի հասուցին, որ Ապառաժ Արարիայի Արեւաս թագաւորն իր վրայ պատերազմի ելաւ՝ Հիւրկանոսին համար: Արիստարուղ թէպէտ սկզբան նեղ մտաւ, բայց վերջէն Հռոմայեցւոց օգնութեամբն ան նեղութենէն ազատելով՝ թշնամւոյն ալ մեծ ջարդ տուաւ: Աստուծոներս Պոմպէոս Գամասիոս գալով՝ երկու եղբարքն ալ առջևը կանչեց: Եւ թէպէտ ինք աւելի Հիւրկանոսին կողմը միտած էր, բայց անտարբերութեամբ երկուքն ալ խրատեց որ խաղաղութեամբ տեղերնին երթան, մինչեւ որ ինք իր գործքերը կարգադրէ: Արիստարուղ Հռոմայեցւոյն միտքն իմանալով՝ վազեց Երուսաղէմ սկսաւ պատերազմի պատրաստուիլ: Պոմպէոս ալ աճապարեց Երուսաղէմի առջին հասաւ, զԱրիստարուղ բռնեց, երեք ամիս ալ տաճարը պաշարելով՝ մեծ կո-

տորածով առաւ, բայց Արրութիւնը պատուեց ու մեծարեց: Այսպէս երկու եղբարց անմիաբանութեան համար՝ Հրէից ազատութիւնն՝ որ իրենց այնչափ ծանրի նստած էր, նորէն կորսուեցաւ: Թէպէտ Հիւրկանոս քահանայապետութիւնը նորէն ձեռք ձգեց, բայց թագաւորի անուն չունենալէն զատ՝ Հռոմայեցւոց իշխանութեան տակ մտաւ եւ իրենց հարկ կը վճարէր: Պոմպէոս զԱրիստարուղ որդւոցը հետ Հռոմ տանելով՝ իր յաղթանակին զարդըրաւ: Քիչ մը ետքը Արիստարուղոս իր Աղէքսանդրոս Բ. որդւովը նորէն Հրէաստան գալով՝ սկսաւ զամէնքը սաք հանել. բայց շուտով յաղթուելով՝ երկուքն ալ անձնատուր եղան: Եւ թէպէտ Աղէքսանդրոս Բ. միշտ փորձեր փորձելու ետեւէ էր, բայց յաջողութիւն մը չունեցաւ եւ վերջապէս հօրը հետ ալ սպաննուեցաւ:

## Հ Գ . Գ Ա Ս

1. Հերովդէս ինչպէս եւ որսն ոգնութեամբը թագաւոր եղաւ: — 2. Ինչ անգթութեան գործքեր գործեց: Հրէից աչքը մտնելու համար ինչ քրաւ: Ինչպէս մեռաւ: — 3. Հերովդէսին ով յաջորդեց: Պոնտոս Պիղատոս ով էր: — 4. Պիլիպպոս եւ Հերովդէս Անդիպպաս ով եւ ինչպիսի մարդիկ էին: — 5. Հրեայք Նոյն ատեններն ինչ իշխանութիւն ունէին: Արօնի կողմնէ ինչ վեճակի մէջ էին: — 6. Նոյն ատեններն ուրիշ ազգաց կրօնական ու բարոյական վեճակն ինչպէս էր:

1. Երբ որ Յուլիոս Աեսար Հռոմայեցւոց տէրութեան գլուխ եղաւ, զՀիւրկանոս Բ. իր իշխանութեան մէջ հաստատեց ու Անտիպատրոս անուէնով Աղոմայեցի մ'ալ անոր յան-

ձանցիչ ու բոլոր Հրէաստանի իշխան գրաւ : Աս Անտիպատրոս իր իշխանութիւնն՝ իր Փասայէլ ու Հերովդէս որդւոցը մէջ բաժնեց : Հերովդէս զօրաւոր ըլլալով՝ իր իշխանութիւնը հաստատուն բռնեց ու Յուլիոսի յաջորդ Անտոնինոսէն Հրէաստանի Չորրորդապետ անուանեցաւ : Ասոր վրայ Անտիգոնոս Բ. Արիստարքուզոսին որդին, անդիէն ասդիէն օգնութիւն գտնելով՝ եկաւ Երուսաղէմ՝ առաւ, Հիւրկանոսին ականջները կտրեց, որպէս զի կարող չըլլայ նորէն իր պաշտօնին հասնիլ, աս ատենս Փասայէլ ալ ինք զինքը մեռցուց : Նոյն միջոցին Հերովդէս ելաւ Հռոմ փախաւ : Հոն Անտոնինոս զինքը շատ սիրով ընդունելով՝ մեծ փառաւորութեամբ թագաւոր պսակեց, յայտարարութիւն մ'ալ հանեց որ Անտիգոնոս Հռոմայեցւոց թշնամի է : Այսպէսով Հերովդէս Հռոմայեցւոց օգնութեամբը զօրացած՝ Երուսաղէմի վրայ վազեց, շատ աշխատելէն ետեւ՝ սոսկալի արիւն թափելով՝ առաւ քաղաքը : Իսկ Անտիգոնոս ինք զինքը Հռոմայեցւոց ձեռքն յանձնեց, որոնք զինքը՝ Հերովդէսէն կաշառուած Անտոնինոսին հրամանաւր անխնայ ծեծելով գլխատեցին : Այսպէս խեղճութեամբ մտրեցաւ Մակարայեցւոց իշխանութիւնը՝ Բրիտանոսէն 37 տարի յառաջ, որն որ 130 տարի տեւած էր :

Չ. Հերովդէս այսպէս անիրաւութեամբ թագաւորութեան հասնելով, միտքը գրաւ որ իր իշխանութեան ապահովութեանը համար բոլոր Մակարայեցւոց ցեղը ջնջէ վերջընէ : Ուստի թագաւորութիւնն առնելուն պէս՝



Անտիգոնոսին կողմնակիցներէն 45 հոգի սպաննել տուաւ եւ շատերուն ինչքն յափշտակեց : ԶՀիւրկանոս Բ. ալ Պարսկաստանէն կանչեց, որ հոն Հրէից մէջ մեծ պատուոյ հասած էր : Իսկ Աղէքսանդրոս Բ. ին Արիստարուղոս որդւոյն՝ որ 17 տարւան էր, թէպէտ քահանայապետութեան պատիւ շնորհեց, որովհետեւ անոր մայրն Անտոնինոսի բարեկամն էր, բայց վերջէն վրան նախանձելով՝ բաղնիքի մէջ խղղել տուաւ, որով Մակարայեցւոց վերջին արու զուակն ալ շիջաւ : Նմանապէս 80 տարւան ծերունի Հիւրկանոսն ալ պարզ կասկածանքի մը համար մեռցընել տուաւ եւ իր Մակարայեցի Մարիամնա կինն ալ մահուան դատապարտեց : Եւրբ որ այսպէս անգթութեամբ մէկ կողմանէ ձեռուրները Մակարայեցւոց արեան մէջ կը թաթխէր, մէկալ կողմանէ ալ իր Անտոնիոս բարեկամը թող տալով՝ Ոկտաւիանոս Օգոստոսին աչքը մանելու կը ջանար, որուն յաջողելովը՝ կամաց կամաց բոլոր Պաղեստինի տէր եղաւ : Եւ որպէս զի Հրէից սիրտն ալ քիչ մը առնէ, որոնք իր զազանական բարուցու անկարգութեանց համար՝ իրմէ բոլորովին պաղած էին, միտքը դրաւ որ անոնց տաճարը բոլորովին կործանէ ու նորէն աւելի զեղեցիկ շինէ : Բայց տեսնելով որ ասով Հրեայք կասկածի կ'երթան, զիրենք համոզուց որ ապահովութեան համար մաս մաս կը քակէ կը շինէ : Այսպէսով թէպէտ բուն տաճարը երկու տարւան մէջ լմընցաւ, բայց տեղն ի տեղը ամէն զարդերովը լմըննալը՝ 40 տարւան մէջ եղաւ : Աս ալ զիտնալու է՝ որ

տաճարին աս շէնքը միշտ նորոգումն երկրորդ տաճարին կը համարուի, եւ ոչ թէ երրորդ շինութիւն: Ասով եւ ուրիշ այլեւայլ փառաւոր ու զարդարուն շէնքեր շինելով՝ փուճակը կ'աշխատէր Հերովդէս որ Հրէից ու բունր իր հպատակներուն սիրաբը շահի: Ալ իր անկարողութեանց չափը լեցուած էր. ամէն մարդ զինքը կ'ատէր, իրմէ կը փախչէր: Այսպէսով ամենէն թող տրուած՝ մէկու մը վրայ վստահութիւն չունէր, սիրան բրած անորէնութիւններով լի էր. իր փառասիրութեան զոհ եղած անմեղ մանկանց արիւնն (Տես Բ. Մասն, Գ. Դաս. Թիւ 1.) աչքէն չէր հեռանար: Քիչ մը վերջը զարշելի հիւանդութեան մը մէջ ինկաւ, որն որ յայտնի կ'երեւար թէ Աստուծոյ արդարութեան պատիժն է. մարմնոյն վրայ զազրելի որդեր կը վխտային, մարմնոյն հոտէն քովը մարդ չէր կրնար երթալ: Աս վիճակիս մէջ երբ որ իմացաւ որ ալ չկրնար ապրիլ, բոլորովին կատղեցաւ, յուսահատեցաւ, ու նոյն յուսահատութեան մէջ 70 տարեան բռնաւորն անցաւ ի յաւիտենականութիւն, իր թագաւորութեան 37երորդ տարին, Քրիստոսի 1 կամ 3 թուականին, բրածներուն փոխարէնն ընդունելու:

**3.** Հերովդէս՝ որ Մեծ կոչուեցաւ, կտակին մէջ իր թագաւորութիւնն երեք որդւոցը բաժնած էր: Ամենէն մեծ որդւոյն ամենեւին բան մը չէր թողուցած՝ մօրը բրած դաւաճանութեան համար: Երկրորդ որդին Արքեղայոս՝ իրրեւ ազգապետ՝ առաւ Հրէաստանը, Սամարիան ու Եդոմը. եւ հօրը պէս ան-

զթու թեամբ եւ բռնութեամբ կ'իշխէր: Բայց իր իշխանութեան 10երորդ տարին՝ վրան եղած ամբաստանութեանց համար Հռոմ պատասխանատուութեան կանչուեցաւ. եւ ինք զինքն արդարացընել չկրնալով՝ իշխանութեանէ վար ինկաւ, ու բոլոր ինչքերէն զրկուած՝ Գաղղիացւոց Աիէննա քաղաքն արտորուելով՝ հոն մեռաւ: Իր երկիրներն Ասորիքի հետ մէկտեղ Հռոմայեցւոց դաւառ սեպուեցան, որոնց անկէ ետեւ դատաւորներ կ'առաջնորդէին, եւ զլիսաւոր տեղերնին Աեսարիա էր: Աս դատաւորաց պաշտօնն էր 1. Խաղաղութիւնը պահել, 2. Հարկերը ժողովել, 3. Ապստեր տեղ դատաստան տեսնել: Հրեայք աս դատաւորաց տակ շատ կը նեղուէին, բայց մանաւանդ Պոնտոս Պիղատոսին տակ, որն որ իրենց կրօնն անարգելով՝ զիրենք շատ դառնացուց: Բայց երբ որ իր չարեաց չափը լեցուեցաւ, մանաւանդ երբ զՅիսուս Քրիստոս անիրաւ դատաստանով մահուան դատապարտեց, Հռոմ կանչուեցաւ, որ գայ ըրած գործոցը պատասխան տայ: Աս ալ չկրնալով ինք զինքն արդարացընել՝ նոյնպէս Գաղղիացւոց Աիէննա քաղաքն արտորուեցաւ: Ար պատմուի որ հոն յուսահատութեամբ ինք զինքը մեռցուցած ըլլայ:

4. Փիլիպպոս՝ Հերովդեսին պղտիկ որդիքներէն մէկը՝ իբրեւ Չորրորդապետ՝ առաւ արեւելեան Յորդանանին հիւսիսային կողմը, այս ինքն՝ Բատանէա, Տրաքոնիտիս, Գաւղանիտիս ու Աւրանիտիս: Ար պատմուի որ ասիկայ արդար, խելացի ու հանճարեղ մարդ

մ'եղած ըլլայ: Իր նստած Պանէաս քաղաքն ընդարձակելով՝ անունը կեսարիա Փիլիպպեայ դրաւ ու Քրիստոսի 34 թուականին մեռաւ անորդի, ու սաՀմաններն Ասորիքի հետ միացան: Հերովդէս Անդիպպաս՝ Փիլիպպոսին եղբայրը՝ իրրեւ Չորրորդապետ՝ Բերէայի ու Գալիլեայի սաՀմաններն առաւ ու Տիրերիաս քաղաքը կը նստէր: Աս մարդն ինք զինքը բոլորովին անպիտանութեան տուաւ. ետքն ալ թագաւորի անուն առնել ուղեւով՝ Արոն պատրուեցաւ: Աս ան մարդն էր՝ որ Յովհաննէս Մկրտչին գլուխը կտրեց (Տես Բ. Մասն, Ժ. Դաս. Թիւ 2.) եւ որուն առջեւ Քրիստոս նախատուեցաւ (Տես Բ. Մասն, ԻԱ. Դաս. Թիւ 2.):

5. Աս ատեններս Հրէից ձեռքն ուրիշ իշխանութիւն չկար, բաց ի Մովսիսի դրած 70 հոգւոյ ձերակուտին իշխանութենէն, որն որ ասդին անդին քաղաքներու մէջ դրուած զատաստանարաններուն ամենէն գլխաւորն ըլլալով՝ Վերին ատեան կոչուեցաւ ու միշտ քահանայապետին գահերիցութեան տակն էր: Քրիստոսի ժամանակը քահանայապետութիւնը՝ որ միայն պատուոյ անուն մըն էր, երկու հոգւոյ վրայ էր, այս ինքն՝ Աննայի ու Ապիափայի, որոնք հաւանականարար վերին ատեանին տարւէ տարի փոփոխակի կ'առաջնորդէին: Վերջին ատեններն աս ատեանը բոլորովին քաղաքային իշխանութենէ զրկուեցաւ:

Արօնի կողմանէ նայելով՝ ինչպէս որ վերերը տեսանք, երբ որ Յովհաննէս Հիւրկանոս Աին յաջորդացը մէջ կրօնի ու հասարակաց

բարեոյն համար աշխատելու եռանդը մարեցաւ, եւ անոր հակառակ փառասիրութեան հոգին մտաւ, ալ Հրեայք իրենք զիրենք բռնութիւն անգթութեան ու անիրաւութեան զորժքերու տուին. եւ ոմանց՝ Փարիսեցւոց, ոմանց ալ Սադուկեցւոց կողմը բռնելով՝ ժողովրդեան մէջ անմիաբանութեան ու խռովութեան հուրը բորբոքեցաւ, ուսկից որ բարուց ապականութիւնն ըստ ինքեան հետեւելով՝ երթալով սաստկացաւ: Այսպիսի խեղճ ու ողորմելի վիճակի մէջ էր Աստուծոյ ժողովուրդը Քրիստոսի ծննդեան ատենները: Հրեայք թէպէտ Բարելոնի գերութենէն ետեւ նիւթապէս կռապաշտութեան շսկան, բայց մէջերնին ինչպէս որ պէտք է նէ՝ հոգւով ու ճշմարտութեամբ զԱստուած պաշտող՝ շատ քիչ կը գտնուէր: Ըստ մեծի մասին այնպիսի բարուց ապականութեան մէջ էին, որ իրենց համազօր պատմագիր մը նոյն ատենուան էջուսաղէմը՝ Սողոմի կը նմանցընէ, մանաւանդ թէ Սողոմէն ալ վար կը սեպէ:

**6.** Իսկ թէ որ Հրէաստանէն դուրս ուրիշ ամէն ազգաց վրայ քննողական հայեցուած մ'արձակելու ըլլանք, սակից տարբեր բան չենք տեսներ. ամէն ազգ, ամէն մարդ ծանր ծանր մեղաց ու սոսկալի մոլութեանց մէջ թաթխուած էին: Ամենեւին մարդկային զօրութիւն մը չէր կրնար այս ամենայն շարեաց առջեւ առնուլ: Մարդկային ազգն աստուածային զօրութեան մը հարկաւորութիւն ունէր, որ իր շարաշար մոլութիւններէն ազատի ու յաւիտենական մահուրէնէն փրկուի:

Նոյն ատեն ամէն աստուածապաշտը կը զգային այս հարկաւորութիւնը, եւ կը խոստովանէին որ այսպիսի ապականեալ ժամանակէ մը առանց աստուածային զօրութեան ազատին անկարելի է: Անոր համար ամէն աստուածապաշտ ստէպ հոգոց հանելով ու բարեպաշտական հառաչանքներով կը սպասէր ան երջանիկ բոպէին, որուն մէջ՝ խոստացուած Փրկելիչը պիտի գար:

Թէ որ աչքերնիս մէյ մը ետեւ դարձնելու ըլլանք, կը տեսնենք որ աշխարհքիս սկիզբէն ամէն ճշմարիտ աստուածապաշտ պարզ աս խոստման յիշատակաւր մեծ միտիթարութիւն կը զգար: Յակօր իր մահուան անկողնոյն մէջ իր որդւոցը՝ Փրկիչ խոստացուած ըլլալը յիշեցրնելէն ուրիշ միտիթարական խօսք մը չկրցաւ գտնել: Մովսէս կը միտիթարէր իր ժողովուրդը՝ որ իրենցմէ պիտի յարուցանէ Աստուած աշխարհքիս Փրկիչը. ինքն ալ ստէպ կ'աղաչէր Աստուծոյ ըսելով որ Առաքեա զոր առաքելոց իցես: Դաւիթ երբ որ խմացաւ որ Փրկիչն իր զաւկրներէն պիտի սերի, ուրախութենէն ինք իրմէ ելաւ ու Աստուծոյ շնորհակալ ըլլալու խօսք չկրցաւ գտնել: Եսայի քանի անգամ որ մարդարեական հոգւով դալու Փրկիչին վրայ կը խօսէր ժողովրդեան, զիրենք կը յորդորէր որ ուրախանան ու միտիթարուին: Արջապէս որչափ որ աս խոստման կատարուելուն ժամանակը կը մերձենար, այնչափ ալ Փրկիչին գալստեան մեծ փափաքով ու եռանդեամբ կը սպասուէր: Բայց վերջի ա-

տենները երբ որ Հերովդէս Մեծին ձեռքովն իշխանութեան գաւազանը Յուդայէն վերցաւ, ան ատեն նոյն իսկ ամբարիշտ Հրեաներն ալ սկսան Փրկչին գալստեան սպասել, բայց չէ թէ որ իրենց մեղքերէն ու մոլութիւններէն ազատին, այլ որպէս զի Հերովդէսին ու Հռոմայեցւոց բռնութենէն զերծին: Ինչու որ իրենք աշխարհային սիրով զգածեալ ըլլալով՝ Ս. Գիրքն իրենց աշխարհասէր սրտին համեմատ մեկնելու սկսան, ու կարծեցին որ Փրկչին աշխարհքիս թագաւորութիւնները զէնքի զօրութեամբ պիտի նուաճէ եւ իրենց թագաւորութիւնը նորէն կանգնելով՝ փառաւորութեան վերջի ծագը պիտի հասցնէ: Բայց ասոնց ակնկալութեան հակառակ՝ վերջապէս եկաւ հասաւ ան երջանիկ րոպէն, որուն մէջ խաւրեց Աստուած 4000 տարի յառաջ խոստացած Փրկիչը, որ իր երկնաւոր աթոռէն իջաւ, ծառայի կերպարանք առնելով՝ ազատեց զմեզ մեղքէ ու սատանայի ձեռքէն ու Աստուծոյ որդի եւ երկնից ժառանգ ըրաւ:





ԵՐԿՐՈՐԴ ՄԵՍ

ՆՈՐ ԿՏԵԿԵՐԸՆ



# ԵՐԿՐՈՐԳՒ ՄԵՍ

## ՆՈՐ ԿՏԵԿԵՐԸՆ

### Ը. ԳՒՂՈՒԻ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԵՆԷՆ ՄԻՆՁԵՒ ՔԱՐՈՂ  
ՉՈՒԹԵԱՆ ՍԿՍԻԼԸ

(1 — 30)

### Ա. Գ Ա Ս

1. Չաքարիա ով է, զաւակ ունենալիքն ինչպէս իմացաւ: — 2. Մարիամ ու Յովսէփ ինչ կարգէ ու վիճակէ էին: Հրեշտակն Աստուածամայրութեան աւետիքն որուն բերաւ: — 3. Մարիամ աւետուելէն ետեւ ինչ բրաւ: Էզրիսարէթ ու Մարիամ իրար ինչպէս ոգջունեցին: — 4. Չաքարիայի լեզուն երբ բացուեցաւ: — 5. Մարդեզունութեան խորհուրդը Ս. Յովսէփայ ինչ կերպով յայտնուեցաւ:

1. **ՀՐԷԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՎՂԷՍ ՄԵԾ ԹԱԳԱՆՈՐԻՆ** օրերը՝ Չաքարիա անունով սուրբ քահանայ մը կար, որ Էզրիսարէթ կնոջը հետ, անարատ ու արդար կեանք մը կ'անցընէր: Երկուքն ալ հասակնին առած էին եւ զաւակ չունէին: Անգամ մը երբ որ Չաքարիա տաճարին մէջ, բուրվառ ձեռքը՝ վարագուրէն ներս դէպ ի խնկոց սեղանը գնաց, մէկէն սեղանին աջ գին հրեշտակ մը տեսաւ: Չարհուրեցաւ Չաքարիա, բայց հրեշտակը զինքը քաջալերելով՝

Մի վախնար, ըսաւ, Աստուած աղօթքդ լսեց՝  
Եղիսարէթ կինդ զաւակ մը պիտ'որ ունե-  
նայ. անուէր Յովհաննէս դիր: Ինք Աստու-  
ծոյ առջին մեծ ըլլալով՝ քեզի ու շատերուն  
մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Մօրն  
արգանդէն չէլած՝ Հոգւով սրբով պիտի լե-  
ցուի. Իսրայելացւոցմէ շատերը նորէն Աստու-  
ծոյ պիտի դարձնէ եւ անհաւատները ճշմա-  
րիտ գիտութեան բերելով՝ Աստուծոյ սուրբ  
Ժողովուրդ մը պիտի պատրաստէ:

Չաքարիա այլայլելով եւ ան ծեր հասակին  
մէջ զաւակ ունենալն իրեն անկարելի բան ե-  
րեւնալով՝ տարակուսելով մը հրեշտակէն նշան  
խնդրեց: Խնդիրքը կատարուեցաւ, որն որ  
միանգամայն գործած պակսութեանը պատիժն  
եղաւ: Խօսողն՝ իր Գարրիէլ հրեշտակն ըլ-  
լալը ծանուցանելէն ետեւ՝ ըսաւ թէ Մինչեւ  
որ քեզի բրած խոստմանս կատարուիլը տես-  
նես նէ՝ համբ ըլլաս: Աս ըսաւ ու մէկէն ան-  
երեւոյթ եղաւ: Չաքարիա պապանձած Յնաց  
ու բերնէն խօսք չէր կրնար հանել: Ժողո-  
վուրդն՝ որ դուրսը կը սպասէր եւ անոր այս-  
չափ ուշանալուն վրայ կը զարմանար, դուրս  
ելած ատեն տեսնելով որ զիրենք օրհնելու  
տեղ՝ լեզուն կապուած կը կենար, իմացան որ  
անսովոր բան մը պատահեր է: Չաքարիա տա-  
ճարին մէջ կենալու օրերն անցընելէն ետեւ՝  
տուն դարձաւ եւ իրեն եղած խոստումը կա-  
տարուելով՝ Եղիսարէթ յղացաւ:

Չ. Ասկէ վեց ամիս ետքը՝ Գարրիէլ հրեշ-  
տակը Մարիամ անուն կուսի մը երեւցաւ,  
որ Գալիլեայի Նազարէթ աննշան քաղքին մէջ

կը բնակէր, եւ թէպէտ Դաւթի թագաւորական տնէն էր, բայց աղքատ ըլլալուն համար՝ ապրուստն իր ձեռագործովը կը հոգարու Յովսէփ անունով բարեպաշտ հիւսան մը նշանած էր: Աս Աոյան որչափ որ ինչքով աղքատ էր, այնչափ ալ առաքինութեամբ հարուստ էր, եւ մեծ եռանդեամբ Փրկչին գալըստեան կը սպասէր: Հրեշտակն երբ որ ներս մտաւ, Ուրախ լեր, բերկրեալ, Տէր ընդ քեզ, ըսելով՝ զինքը բարեւեց: Մարեմայ սիրտը մէկէն դող ելաւ, եւ շատ խոնարհամիտ ըլլալուն՝ սկսաւ մտմտալ թէ Աս ինչ պիտի ըլլայ: Հրեշտակը զինքը քաջալերեց. Մի վախնար, ըսաւ, Աստուծոյ առջեւը շնորհք գտար. որդի մը պիտի ծնանիս եւ անունը Յիսուս (Փրկիչ) պիտի դնես. որն որ մեծ մէկը պիտի ըլլայ ու Որդի Բարձրելոյ կոչուի: Աստուած Դաւթի աթոռն իրեն պիտի տայ ու բոլոր մարդկային ազգին վրայ յաւիտեան պիտի թագաւորէ: Մարիամ հրեշտակին հարցուց թէ Աս բանս ինչպէս կ'ըլլայ, վասն զի ես այր չեմ գիտեր: Հրեշտակը պատասխան տուաւ որ Հոգւոյն սրբոյ զօրութեամբը պիտի կատարուի: Եւ իր Եղիսաբէթ ազգականին՝ ան ծեր հասակին մէջ յղի ըլլալը վրայ բերելով՝ հասկըցուց որ Աստուծոյ առջին անկարելի բան չկայ: Նոյն ատեն Մարիամ ինք զինքը խոնարհեցրնելով՝ Ահաւասիկ, ես Աստուծոյ ազախինս կեցեր եմ, ըսաւ, թող զրուցածիդ պէս ըլլայ: Աս խօսքս ըսաւ չըսաւ՝ Որդին Աստուծոյ իր ծոցին մէջ մարմին առաւ:

Յ. Մարիամ անպայման խնդուութեամբ լե-



մէնքը զարմացան . իսկ Չարարիային լեզուննոյն  
ատեն մէկէն բացուելով՝ Հոգւով սրբով լե-  
ցուեցաւ : Օրհնէւ Տէր Աստուծոյ փառաբա-  
նութիւնն ըսաւ : Աս անակնկալ դիպուածը  
հոն եղողները սուրբ երկիւղով լեցուց :

5. Ան օրերը Մարիամ՝ ալ արդէն յղի ըլ-  
լալով՝ երբ որ Յովսէփ իր խօսնայրն աս բանս  
տեսաւ , շատ այլայլեցաւ , որովհետեւ Մարիա-  
մնւ եղած աւետիքը չէր գիտեր . բայց արդար  
ըլլալով եւ շուղելով որ բանը հրատարակուի ,  
միտքը դրաւ կերպով մը գաղտուկ քովէն հե-  
ռացրնել : Յովսէփ աս մտածմանց մէջ ե-  
ղած ատեն՝ Աստուած մարդեղութեան խոր-  
հուրդն իրեն ալ յայտնեց : Երազին մէջ հրեշ-  
տակ մ'երեւցաւ , Յովսէփ , ըսաւ , զՄարիամ  
քովդ պահելու մի վախնար , անոր ծնունդը Հո-  
գւոյն սրբոյ հրաշքովն է : Ծնած որդւոյն ա-  
նունը՝ Յիսուս գիր , անիկա իր ժողովուրդը  
մեղքէ պիտի փրկէ : Յովսէփ հրեշտակին պա-  
տուէրը կատարեց , զՄարիամ քովը պահեց :

## Բ . Գ . Ա . Ս

1. Մարիամ եւ Յովսէփ ինչո՞ւ Բեթղեհէմ գացին : Յի-  
սուս ուրեղ ծնաւ : — 2. Անոր ծնունդն որոնց յայ-  
տնուեցաւ եւ որո՞ւն ձեռքով : — 3. Մոգերն ուստի շար-  
ժեալ Երուսաղէմ եկան : Հերովդէս ինչ ըրաւ : Անոնք  
նորածին թագաւորին տեղն ինչպէս գտան եւ ինչ ը-  
րին : — 4. Յիսուս 40 օրուան եղաւ նե՞ ծնողքն ինչ  
ըրին : Սիմէոն եւ Աննա ո՞վ են :

1. Ան օրերը Օգոստոս կայսրը հրովար-  
տակ հանած էր որ Հռոմայեցւոց տէրութեան  
տակ ըլլողներուն ամէնքն ալ իրենց բուն քա-

ղաքը դրի անցուին: Աս պատճառաւ հարկեղաւ որ Մարիամ ու Յովսէփ՝ որոնք Գաւթի թագաւորական անէն էին, Բեթղէհէմ երթան: Չմեռ ատեն ատանկ ճամբորդութիւն ընելն իրենց սրչափ ծանր ալ էր նէ՛ ան հրամանին հնազանդելու համար շուտ մը ճամբայ ելան: Բեթղէհէմ հասած ատեննին՝ ուշ իրիկուն մըն էր եւ արդէն շատ մարդ եկած ըլլալով՝ ամէն տեղ լեցուն էր: Աս պատճառաւ զիշերն անցընելու իջեզան մը չկրնալով գտնել, մեծ նեղութեան մէջ ինկան: Քաղքին մէկ ծայրն այր մը կար, որն որ տեղւոյն հովիւներուն եւ անոնց հօտին բնակարանն էր. Մարիամ ու Յովսէփ հարկադրեցան ան գիշեր նոյն տեղը պառկիլ, ուր Յիսուս՝ Որդին Աստուծոյ ծնաւ: Մարիամ իր աստուածային ծնունդը խանձարրով պատեց ու մտոյ մը մէջ դրաւ, վասն զի ուրիշ յարմար տեղ չկար:

Չ. Ժամանակը կէս գիշեր ըլլալով՝ ամէն մարդ խորունկ քնոյ մէջ էր. մինակ մօտ տեղ քանի մը աղքատ հովիւներ կային, որոնք բացը մթին իրենց հօտին պահպանութիւն կ'ընէին: Մէյ մ'ալ յանկարծ երկնքէն հրեշտակ մը երեւցաւ եւ երկնային պայծառ լոյս մը անոնց բոլորտիրը պատեց: Հովիւներն աս տեսնելով՝ չափէ դուրս զարհուրեցան. բայց հրեշտակը զիրենք քաջալերեց. Մի վախնաք, բաւ, ձեզի մեծ ուրախութիւն մ'աւետելու եկայ, որ բոլոր ժողովրդեան ալ խնդութեան պատճառ պիտ'որ ըլլայ: Աս գիշեր Բեթղէհէմ ձեզի Փրկիչ ծնաւ, եւ ասոր նշանն աս ըլլայ, որ մտոյ մէջ խանձարրով



պատած նորածին տղայ մը գտնէք : Ան միջոցին ուրիշ հրեշտակներու բազմութիւն մ'ալ երեւցաւ . որոնք՝ Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն , բեւոյժ՝ զԱստուած կ'օրհնէին : Անոնց երկինք վերանայէն ետեւ՝ հովիւներն իրարու բռին . Այլէք Բեթղէմէմ՝ երթանք , նայինք Աստուծոյ մեզի յայտնածն ինչ է : Արտորալով այրն եկան , զՅովսէփ եւ զՄարիամ ու սրանչելի մանուկը մարոյն մէջ տեսան , իրեն երկրպագութիւն բրին : Ասածնուն ու տեսածնուն համար Աստուծոյ փառք տալով՝ աս բանիս լուրն ասդին անդին տարածեցին : Աւթօր ետքը մանուկն ըստ օրինաց թրփատեցին եւ անունը Յիսուս դրին , որ Փրկիչ ըսել է , ինչպէս որ յառաջ հրեշտակն ապսպրած էր :

**3.** Յիսուսի ծնանելէն ու թրփատուելէն ետքն ալ , դեռ մինակ քանի մը անձինք անոր ծնունդն իմացան եւ ուրախացան . անդին թագաւորը , քահանայապետք ու դպիրք՝ որոնք Ս . Գրքին քաջ տեղեակ էին , եւ ուրիշները չէին գիտեր : Աստուած զարմանալի կերպով անոնց ալ հրատարակեց , ցուցրնելով միանգամայն՝ որ իր միածին Արդին առհասարակ Հրէից ու Հեթանոսաց փրկութեան համար եկած է : Նորածին մանուկ Յիսուս դեռ Բեթղէմէմ գտնուած ատեն՝ արեւելքի կողմերէն մտնէր՝ Աշուսաղէմ՝ եկան , հարցուցին թէ

<sup>1</sup> Անոնք գիտուն՝ աստղաբաշխութեան տեղեակ մարդիկ էին : Հին աստղութիւն մը իրենց համար կ'ըսէ թէ թագաւորական զարմ յառաջ եկած երեք հօգի էին . անոր համար ալ սովորաբար երեք թագաւորք կ'անուանուին :

Հրէից նոր ծնած թագաւորն ուր է : Մենք արեւելք իր աստղը տեսանք եւ իրեն երկրպագութիւն ընելու եկանք : Հերովդէս աս բանս լսելով՝ շատ ալլալլեցաւ, վախնալով որ իր թագաւորութիւնը ձեռքէն կը յափշտակէ . ուստի քահանայապետներն ու դպիրները կանչեց հարցուց որ Քրիստոս ուր պիտի ծնանի : Անոնք Միքիայի մարդարէութեան համաձայն պատասխան տուին թէ Հրէաստանի Բեթղէհէմ քաղաքը : Ան ատեն Հերովդէս մոզերը գաղտուկ կանչեց, իրենց տեսած աստեղ վրայ ճիշդ տեղեկութիւն ուզեց առաւ . ետքը զիրենք Բեթղէհէմ խրկելով՝ խորամանկ խաբէութեամբ ըսաւ թէ Գացէք մանուկն հոն փնտռեցէք, եւ եթէ գտնէք նէ՛ ինծի ալ իմացուցէք, որպէս զի ես ալ անոր երկրպագութիւն ընեմ : Մոզերն երկրորդ օրը կանուխ դեռ չուսընցած՝ ճամբայ ելլելով՝ արեւելք տեսած աստղնին նորէն իրենց առաջնորդութիւն ըրաւ, եւ Յովսեփայ ու Մարիամոյ բնակած տեղւոյն վրայ եկաւ կեցաւ : Ներսմտան, նորածին մանուկն եւ մայրը տեսան, ծնկերնուն վրայ ինկած՝ անոր երկրպագութիւն բրին, ու դանձերնին բացին՝ սփի, կրնդրուկ եւ զժուռս ընծայ տուին : Նոյն գիշեր Բեթղէհէմ կեցան, ան դիտմամբ որ առտու կանուխ Հերովդէսին դառնան : Բայց Աստուած թագաւորին չար միտքը գիտնալով՝ երազի մէջ անոնց պատուիրեց որ չըլլայ թէ երթան : Անոնք ալ հնազանդեցան՝ ուրիշ ճամբով տեղերնին դարձան :

4. Նորածին մանուկ Յիսուսը 40 օրուան

որ եղաւ՝ Սուրբ Կոյն իր Որդին առաւ տա-  
 ճար տարաւ եւ զոյգ մը տատրակով կամ ա-  
 ղաւնով Աստուծոյ ընծայեց, ինչպէս որ առ-  
 հասարակ Հրէից կանայք ըստ մովսիսական օ-  
 բինաց կ'ընէին: Երուսաղէմ Սիմէոն անունով  
 արդարու բարեպաշտ ծերունի մը կար, որուն  
 Հոգին սուրբ խոստացած էր որ Աստուծոյ օ-  
 ծեայք (գ.բ.բիստոս) շտեաճ՝ պիտի շնեանի:  
 Սիմէոն նոյն ատեն Հոգւոյն սրբոյ ազգեցու-  
 թեամբը տաճար եկաւ, մանուկ Յիսուսը  
 զիրկն առաւ եւ աչուրները երկինք վերցու-  
 ցած՝ Աստուծոյ ասանկ աղօթք ըրաւ. Տէր,  
 քու խոստմանդ համաձայն՝ ծառայիդ հոգին  
 ալ խաղաղութեամբ արձակէ, վասն զի բոլոր  
 ազգերուն Փրկիչը, հեթանոսաց լոյսը եւ քու  
 ժողովրդեանդ փառքը տեսայ: Սիմէոն ան  
 տղուն գլուխը զայլքներն ու մօրը սրտին մեծ  
 կսկիծ ըլլալիքը մարդարեացաւ: Նոյն միջոցին  
 84 տարւան Աննա մարդարե կինը վրայ հա-  
 սաւ, որն որ էրկանը մեռնելէն ետեւ աշ-  
 խարհք թող տուած՝ տաճարին մէջ աղօթքով  
 ու պահքով օրերը կ'անցընէր. աս ալ զՅի-  
 սուս տեսնելուն վրայ շատ ուրախացաւ եւ  
 Աստուծոյ փառք տուաւ:

## Գ. Դ Ա Ս

1. Երբ որ մոգերը չգարձան՝ Հերոփղէս ինչ ըրաւ: -
2. Յիսուս երբ կորուսեցաւ, եւ ուր գտնուեցաւ: Մինչ-  
 չեւ իր երեսներորդ տարին ինչ ըրաւ:

Ա. Հերոփղէս նորածին մանկան տեղն ի-  
 մանայու համար՝ փուճ տեղ մոգերուն դար-  
 ձին երկայն ատեն սպասելէն ետքը, տեսնելով

որ խարուեցաւ, խիստ բարկացաւ, եւ շատ մը զօրք խրկեց, Բեթղեհէմ եւ անոր սահմանները որչափ որ երկու տարւնէ վար տղայ կար՝ բոլորն ալ անողորմաբար սպաննել տուաւ: Անգութ եւ անօրէն բռնաւորը կը կարծէր որ ան ընդհանուր կոտորածին մէջ մանուկ Յիսուսն ալ կը սպաննուի: Բայց միտքը դրածին չհասաւ: Իր անողորմ հրամանն էլէլէն յառաջ՝ Յովսէփ քնոյն մէջ հրեշտակի ձեռքով Աստուծոյ հրաման առաւ որ Մանուկն ու անոր մայրն առնէ Եգիպտոս փախչի, եւ հոն կենայ մինչեւ որ իրեն ըսուելու ըլլայ, վասն զի Հերովդէս մանուկը մեռցընել կուզէ: Աստուծոյ Որդին աս կերպով Հերովդէսին ձեռքէն ազատելն ետեւ՝ Եգիպտոս մնաց, մինչեւ որ նոյն անգութ բռնաւորը չարաչար մեռաւ: Նոյն ատեն հրեշտակը Յովսէփայ նորէն երեւցաւ եւ ըսաւ. Մանուկն եւ իր մայրն առ՝ Իսրայելի երկիրը դարձիր. վասն զի իրեն չարիք ընել ուղղները մեռան: Յովսէփ՝ զՅիսուս եւ զՄարիամ առաւ Իսրայելի երկիրն եկաւ. բայց լսելով թէ Արքեղայոս իր հօրը Հերովդէսին տեղն անցեր է, Հրէաստան երթալու վախցաւ եւ տեսիլքի մէջ Աստուծոյ հրամանն առնելով՝ Գալիլեա գնաց ու Նազարէթ ընակեցաւ, որով մարգարէներուն խօսքը կատարուեցաւ թէ Նազովրեցի պիտի անուանի:

Ձ. Յիսուս հոն մեծցաւ եւ իմաստութեամբ լեցուեցաւ, Աստուծոյ շնորհքն ալ վրան երթալով աւելի կ'երեւար: Իր ծնողքն ամէն տարի զատկի տօնին Երուսաղէմ կ'երթային:

Երբ որ Յիսուս 12 տարւան եղաւ, զինքն ալ  
 Հեռերնին տարին: Տօնին օրերն անցնելն ե-  
 տեւ՝ Յիսուս տաճար մնաց առանց ծնողացը  
 գիտնարուն: Մարիամ եւ Յովսէփ իսկզբան  
 կարծելով որ ուրիշ ճամբորդներուն Հեան է,  
 այնչափ հոգ չէին ըներ. լայց օրուան մը ճամ-  
 բայ ընելն ետեւ՝ երբ որ իրենց ուղեկից դրա-  
 ցիներուն եւ ուրիշ ծանօթներուն մէջ փըն-  
 տաեցին չգտան, մեծ ցաւով նորէն Երու-  
 սաղէմ դարձան՝ երեք օր չօրս դին իյնալն  
 ետքը տաճարին մէջ գտան, որ դպրաց մէջ  
 նստած անոնց հարցումներ կ'ընէր եւ ըսածնին  
 մտիկ կ'ընէր: Հոն ըլլողներն իր մեծ իմաստու-  
 թեան ու տուած պատասխաններուն վրայ կը  
 զարմանային: Ծնողքը զինքն անոնց մէջ տես-  
 նելով՝ զարմացան եւ մայրն ըսաւ. Ի՞նչ բրիւր,  
 որդեակ. հայրդ ու ես զքեզ փնտաւելն բա-  
 ներնիս բուսաւ: Ինք ալ պատասխան տուաւ  
 թէ Չէիք գիտեր որ ես Հօրս տան մէջը պէտք  
 եմ ըլլալ: Յիսուս Հեռերնին Նազարէթ դար-  
 ձաւ եւ քանի որ հասակը կ'առնէր ու կը մեծ-  
 նար, նոյն համեմատութեամբ իր վրայ ծած-  
 կուած անհուն իմաստութեան ու գիտութեան  
 եւ շնորհաց գանձերը կամաց կամաց կը յայ-  
 տնուէին: Աւերջապէս մինչեւ իր երեսներորդ  
 տարին անյայտ կեանք մ'անցուց. միշտ հօրը  
 մօրը հնազանդ էր, եւ ինչպէս սովորաբար կը  
 կարծուի՝ հօրը քովը հիւսնութիւն ընելով՝  
 անոր կ'օգնէր:

## Բ. Գ. Լ. ՈՒ Խ

ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆ ՍԿՍԵԼԷՆ ՄԻՆ-  
ՉԵՒ ՉԱՐՉԱՐՈՒԻԼՆ ՈՒ ՄԵՌՆԵԻԼԸ

(30 - 33)

## Գ. Գ. Լ. Ս

1. Յովհաննէս ինչ հրաման առաւ Աստուծոյ : — 2. Յիսուս երբ եւ ուր մկրտուելու եկաւ : Մկրտուելէն ետեւ՝ ինչ նոր բան պատահեցաւ : — 3. Յիսուս ինչո՞ւ մարմնով տկարցաւ : Ստաման զինքը քանի կերպով փորձեց : — 4. Քրիստոսի առաջին աշակերտողներն որոնք եղան : — 5. Քրիստոսի առջի հրաշքը ո՞րն է :

**1.** ՏԻՔԵՐԻՈՍ կայսեր 15երորդ տարին՝ Աստուած Չարարիայի որդւոյն Յովհաննէսին իմացուց որ զՔրիստոս արժանապէս ընդունելու համար Հրեաները պատրաստելու առնն է : Յովհաննէս ելաւ անապատէն՝ ուր որ պղտիկուց վեր քաշուած էր, եւ ապաշխարութիւն քարոզելով՝ Յորդանանին եզերքն եկաւ : Ինք ուղտի մազէ շինուած զգեստ մը հագած ու մէջքը կաշի դօտի կապած էր, մարախ ու վայրենի մեղր կ'ուտէր : Ժողովուրդն իր բարի վարքն ու խտամբերութիւնը տեսնելով՝ վրան անանկ մեծ համարում ստացան, որ զինքը չէ թէ միայն մարգարէներէն վեր կը գնէին, այլ նաեւ շատերը մտքերնին դրած էին՝ որ անտարակոյս Քրիստոսն է : Բայց ինք խոնարհութեամբ ձեռքէն եկածը կ'ընէր անոնց իր վրայ ունեցած ծուռ համարումն ուղղելու :

Ես Գրիառոսի կարապետն (առջեւէն եկողն) եմ, կ'ըսէր, որն որ թէպէտ արդէն եկած է ձեր մէջը կը գանուի. բայց դուք զինքը չէք ծանշնար: Ես զձեզ ջրով կը մկրտեմ (որն որ պարզապէս սպաշխարութեան արտաքին նշան մըն էր) բայց Գրիառոս՝ որուն քովն որ ես ոչինչ եմ, Հոգւով սրբով եւ հրով պիտի մկրտէ:

2. Շատ չանցաւ՝ Յիսուս ալ հասարակ ժողովրդեան հետ Յորդանան Յովհաննէսէն մկրտուելու եկաւ: Յովհաննէս Յիսուսին մեղաւոր ժողովրդեան մէջ խառնուած իրեն գալը տեսնելով՝ խոնարհական յարգանքք առջի բերան յանձն շառաւ զինքը մկրտել: Իսկ Յիսուս ստիպեց որ Աստուծմէ առած ան սուրբ պաշտօնն իր վրայ ալ կատարէ: Յովհաննէս ան ատեն յանձն առաւ: Յիսուս մկրտուելէն ու ջրէն դուրս ելլելէն ետքը՝ Հոգին սուրբ նիւթական աղաւնւոյ կերպարանքով վրան իջաւ: Նոյն միջոցին երկինքէն ձայն մ'եկաւ որ Աս է իմ սիրելի եւ ինձի հաճոյ Որդիս:

3. Յիսուս մկրտուելէն ետեւ՝ Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբն անապատ քաշուեցաւ. քառասուն օր քառասուն զիշեր բերանը բան մը չցրաւ: Աս խիստ ծովնապահութեան վերջերն իր մարդկային բնութիւնը շատ տկարութիւն զգալով՝ սատանան զինքը փորձելու յանդրգնեցաւ: Աւստի քովն եկաւ ըսաւ որ Եթէ Աստուծոյ որդին ես, աս քարերուն ըսէ որ հաց ըլլան: Ինքն ալ պատասխան տուաւ թէ Մարդս պարզապէս հացով չ'ապրիր, այլ Աստուծոյ բերնէն ելած ամէն խօսքով: Սատանան ետքը իշխեց զինքն անկէ Արուստղեմայ

տաճարին աշտարակին վրայ հանել, ուր իրեն ըսաւ որ Էթէ Աստուծոյ Որդին ես՝ զքեզ ասկէ վար նետէ, վասն զի գրուած է Թէ Աստուած իր հրեշտակներուն պատուիրած է որ զքեզ ձեռքերնուն վրայ տանին, որպէս զի չըլլայ Թէ ստրգ քարի մը զարնես: Յիսուս ասոր պատասխան տուաւ Թէ Գրուած է, Քուտէր Աստուածդ մի փորձեր: Սատանան զինքն առաւ բարձր լեռան մը վրայ հանեց, եւ աշխարհքիս Թագաւորութիւններն ու փառքը ցուցընելով՝ խոստացաւ ամէնն ալ իրեն տալ, եթէ առջեւն ինկած՝ երկրպագութիւն ընէ իրեն: Յիսուս զինքը վաճնտեց. Քովէս գնա, սատանայ, ըսաւ. գրուած է որ Միայն Աստուծոյ երկրպագութիւն ընես եւ մինակ զինքը պաշտես: Սատանան ելաւ զնաց ու հրեշտակներն եկած զինքը կը պաշտէին:

4. Յիսուս անապատէն ելաւ՝ նորէն Յորդանանին քովերն եկաւ, ուր որ Յովհաննէս իր պաշտօնը կը շարունակէր. եւ դեռ անոր չմօտիկցած՝ Յովհաննէս իր աշակերտացը յայտնեց որ անիկա Քրիստոսն է, որն որ իրրեւ Գառն Աստուծոյ աշխարհքիս մեղքերը պիտի վերցընէ: Իր աշակերտներէն երկուքը, որոնց մէկն էր Անդրէաս, զանիկա տեսնելու եկան: Անդրէաս գնաց Սիմոն եղբայրը բերաւ. Յիսուս Սիմոնին ըսաւ որ Պետրոս (վէժ) պիտի կոչուի: Ասոնցմէ զաս՝ զինքը տեսնելու եկողներ շատ եղան, որոնց մէջ երեւելիներն են Փիլիպոս ու Նաթանայէլ:

5. Ասկէ երեք օր ետքը Գալիլեայի Աանա քաղաքը հարսնիք մը եղաւ. հարսնիքին տէ-



բերը Սուրբ Կուսին ճանչուօր ըլլալով՝ զինքն  
 ալ Յիսուսին հետ հրաւիրեցին : Սեղանի վրայ  
 զինին հասնելով՝ Տիրամայրն անմիջապէս առ  
 բանս Արդւոյն իմացուց : Յիսուս՝ Մեզի ինչ,  
 ժամանակս եկած չէ ըսելով՝ թէ պէտ արտա-  
 քուստ Մօրը խնդիրքը մերժել ցուցուց, բայց  
 անտարակոյս խօսքին հետ ներքին հաւանու-  
 թեան ցոյց մը տուած պիտ'որ ըլլայ, որ Տի-  
 րամայրն իմանալով՝ սեղանի վրայ ծառայողնե-  
 րուն պատուիրեց որ Արդւոյն ըսածը կատա-  
 րեն : Հոն վեց կճեայ թակոյկ կար, որոնց ամէն  
 մէկն երկու երեք մար կ'առնէր : Յիսուս ծա-  
 ռաներուն պատուիրեց որ ան վեցն ալ ջրով  
 լեցընեն, տաճարապետին տանին : Տաճարա-  
 պետը համը նայելով եւ տեսնելով որ ազնիւ  
 զինի է, գնաց փեսային ըսաւ թէ Ամէն մարդ  
 ազնիւ զինին առաջ կը գործածէ ու կոչնա-  
 կաններն աղէկ մը խմցընելէն ետքը՝ անպիտան  
 զինին կը հանէ : Իսկ դուն աղէկը մինչեւ հի-  
 մա պահեր ես : Յիսուսի հրապարակաւ գոր-  
 ծած առջի հրաշքն առ է, որով ան օգուտն  
 եղաւ, որ թէ իր աշակերտները՝ որոնք մէկ-  
 տեղ էին, եւ թէ ընդհանրապէս հարսնիքին  
 մէջ ըլլողները՝ իր վրայ ունեցած հաւատքներ-  
 նուն մէջ աւելի հաստատուեցան 1 :

1 Եովսէփ Աստուածասօր յիշատակը՝ ոչ հոս եւ  
 ոչ ալ աւել ետքը կ'ըլլայ : Հասարակաց կարծեաց  
 նայելով՝ Քրիստոս քարոզելու շնորհով՝ անիկա  
 մտած էր :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ն Ը .

Քրիստոսի Կրօնը ինչպէս որ ինչպէս  
— Քրիստոսի Կրօնը ինչպէս որ ինչպէս

Ե . Գ Ա Ս

1. Յիսուս իր քարոզութեան առջի զատկին որը Երուսաղէմ ինչ բրաւ : — 2. Նիկոզեմոս սվ է, ինչ բրաւ : — 3. Յովհաննու աշակերտներն իրենց վարդապետին ինչ ամբաստանութիւն ըսին : Յիսուս ինչու Գալիլէա դարձաւ : — 4. Սամարացի կնոջ հետ ինչ խոսեցաւ :

1. Քրիստոս մօրը, ազգականներուն եւ աշակերտներուն հետ հարսնիքէն դառնալէն ետեւ՝ Կափառնաուժ եկաւ, ուր որ երկայն չկեցաւ, այլ Չատիկի տօնը մտն ըլլալուն՝ Երուսաղէմ գնաց : Հոն տաճարին սրահին մէջ մտնող եւ անասնոյ խուժանին՝ աղմուկը

1 Աս երկրորդ տաճարը՝ երեք սրահով մեծ ու փառաւոր շէնք մըն էր : Աստիկն սրահը հեթանոսներն (Հրեայ չեղողներն) ալ կրնային մտնել, եւ տակաւ Քրիստոսի տակնը կենդանոց վաճառատեղի եղած էր. փան զի Հրեից մէջէն հարուստ ըլլողն՝ արջառ ու ոչխար, աղքատ ըլլողն աղանձի պատարագ մատուցանելու պարտաւորութիւն ունենալով՝ իրենց մեծ գիւրութիւն էր, մանաւանդ գրտի երկիրներէն եկողներուն, զնելու կենդանին տաճարին քովը դանել եւ հոն ստակ աւել տալ : Մէկ կողմէն ալ քահանաները հպարտութեան հողով հեթանոսներն արհամարհելով՝ ան սրահը ոչինչ սարկով մը՝ արջառ, ոչխար եւ աղանձի ծախող վաճառականներուն վարձքի տուած էին : Քրիստոս աս տեսնելով՝ շատ ցաւեցաւ որ հեթանոսներուն եւ ոչ փոքր տեղ մը թողուցեր են Աստուծոյ երկրպագութիւն ընելու :

տեսնելով՝ բարկացաւ, չուանէ խարազան մը շինեց, լուծայափոխներն ու կենդանի ծախողներն իրենց կենդանիներովը դուրս վաճառեց, լուծայափոխներուն սեղանները կործանեց, վրայի ստակները ցրուեց, աղաւնի ծախողներուն ալ հրամայեց որ առնեն ուրիշ տեղ տանին. իր երկնաւոր Հօրը տունը վաճառատեղի չէ: Քահանայք ու Հրէից գլխաւորներն իրեն գէժ դարձան, ըսին որ Ասրանս ընելու իշխանութիւն ունենալդ ինչ նշանով կրնաս ցուցնել: Քրիստոս պատասխան տուաւ որ Տաճարը փլցուցէք, երեք օրուան մէջ նորէն շինեմ: Ասոնք Յիսուսին պատասխանը նիւթական կերպով հասկընալով՝ չհաւտացին եւ ըսին որ Տաճարը 46 տարուան մէջ շինուեցաւ, դուն ինչպէս երեք օրուան մէջ պիտ'որ շինես: Բայց Յիսուս տաճար ըսելով՝ իր մարմինը կ'իմանար, ուստի եւ ան տուած նշանով՝ իր յարութիւնն ակնարկեց: Աոյն տօնին ատենը Յիսուս շատ հրաշք գործեց, որմէ իրեն հաւտացող շատ եղաւ:

Չ. Ասոնցմէ մէկն ալ Աիկոզեմոս էր, որն որ Փարիսեցւոց աղանդէն եւ Հրէից իշխան էր: Ասիկա Քրիստոսի հակառակորդներուն խօսելու առիթ չտալու համար՝ զիշեր ատեն անոր եկաւ աղաչեց որ իր վարդապետութիւններն իրեն սորվեցընէ: Յիսուս նախ եւ առաջ անոր ըսաւ թէ Իմ հաստատելու թագաւորութիւնս մտնելու համար՝ պէտք է որ մարդս նորէն ծնանի: Աիկոզեմոս ծնունդ բառը լսեց նէ՛ հասարակ մարմնաւոր ծնունդ կարծելով՝ աս բանս անհնարին սեպեց: Յիսուս անոր

Թանձրամտութիւնն յանդիմանեց որ ամէն բան նիւթականի տանելով՝ Հողւոյն սրբոյ գործքը՝ որով որ մարդս նորէն հողւոր կենօք կը ծնանի, շիկրնար ըմբռնել: Ետքը խօսքն Աստուծոյ առ մարդն ունեցած սիրոյն վրայ դարձնելով՝ բսաւ որ Աստուած մարդուն փրկութեան համար իր Միածին Արդւոյն շինայեց: Խօսքը լմնցուց իր ո՞վ ըլլալն ու մարդս առ Աստուած դարձնելու համար եկած ըլլալն անոր սորվեցընելով:

Յ. Յիսուս Երուսաղեմէն ելաւ Հրէաստանի շատ կողմերը պարտեցաւ աշակերտացը հետ, որոնք իր անուամբը կը քարոզէին ու կը մկրտէին: Յովհաննէս Մկրտչէն մկրտուողներն առ տեսան նէ, նախանձելով՝ գացին իրենց վարդապետին ամբաստանութիւն ըրին: Յովհաննէս իրենց հասկըցուց որ անոնք այնպիսի մէկուն անուամբը կը մկրտեն, որ Քրիստոս՝ աշխարհքիս Փրկիչն է: Ասկէ քիչ մը ետքը Յիսուս յետևով որ Յովհաննէս բանադրուեր է՝ եւ զինքն ալ կ'ուզէն ձեռք բերել, Հրէաստանը թողուց զէպ ի Վալիլեա ճամբայելաւ:

Զ. Ճամբան Սամարացւոց երկրէն անցած ատեն՝ կէս օրուան մը մտա Յակովբայ փորել տուած ջրհորի մը քով նստաւ յոգնութիւն առնելու համար: Նոյն միջոցին աշակերտները քիչ մը բան զնելու համար քաղաք գացած ըլլալով՝ ինք հոն առանձին մնացած էր: Մէյ

1 Յովհաննէս զՀերոփչէս Ենօրպոս յանդիմանեց իր Փիլիպպոս եղբորը կինն առնելուն համար: Հերոփչէս Փարիսեցւոց խորհրդեան անստով՝ զՅովհաննէս բռնեց բանաստեղծեց:

մ'ալ անդիէն Սամարացի կին մը ջուր ան-  
 նելու եկաւ: Յիսուս անկէ խմելու ջուր  
 որ ուզեց, կինը զարմացած՝ Ինչպէս կրնաս,  
 ըսաւ, Հրեայ ըլլալովդ՝ Սամարացի կնոջմէ մը  
 ջուր ուզել<sup>1</sup>: Յիսուս պատասխանեց որ Էթէ  
 գիտնալու ըլլայիր որ քեզմէ ջուր ուզողն ո՛վ  
 է, դուն իրմէ կը խնդրէիր եւ քեզի կենդանի  
 ջուր (այս ինքն՝ Հոգւոյն սրբոյ շնորհքը) կու-  
 տար: Իսկ կինն ատ խօսքին միտքը չհասկընա-  
 լով՝ ըսաւ. Աս Հորը խորունկ է, դուն գոյլ  
 չունիս. կենդանի ջուրն ուտա՞ր պիտի հանես:  
 Իսկ Յիսուս իր խօսքն յառաջ տանելով՝ ը-  
 սաւ. Աս հորին ջրէն խմողը նորէն կը ծարուի,  
 բայց իմ տալու ջուրս խմողը՝ երբեք մէյ  
 մ'ալ չիծարուիր: Աինք դեռ Քրիստոսի խօս-  
 քերուն միտքը չհասկընալով՝ կարծէր որ տե-  
 սակ մը ջրոյ վրայ կը խօսի, անոր համար իրն-  
 գրեց որ նոյն ջրէն իրեն տայ, որ մէյ մ'ալ  
 չծարուի ու ջուր կրելու կարօտութիւն չու-  
 նենայ: Յիսուս անոր հրամայեց որ երթայ է-  
 րիկը կանչէ: Աինք՝ Էս էրիկ չունիմ, պատաս-  
 խանեց: Յիսուս՝ Ազէկ ըսիր որ, ըսաւ, էրիկ  
 չունիմ, ինչու որ հինգ էրիկ փոխեցիր, հիմա-  
 կուան ունեցածդ ալ քուկդ չէ: Աինն այսպէս  
 իր յանցանքը գիտնալուն վրայ զարմացաւ եւ  
 խօսքն ուրիշ հարկաւոր նիւթի մը վրայ դարձը-  
 նելով, հարցուց թէ Մեր հարըն աս լերան  
 վրայ երկրպագութիւն ըրին, եւ դուք կ'ըսէք

<sup>1</sup> Հրեայք Սամարացիները լափէ դուրս կ'ատէին, ի-  
 բարու բարեւ չէին տար, մէկ սկաւառակէ կերա-  
 կուր ուտելը կամ մէկ սափորէ ջուր խմելը՝ մեծ  
 յանցանք կը սեպէին:

որ Աստուծոյ երկրպագութիւնն ընելու տեղը՝ մինակ Երուսաղէմ՝ է<sup>1</sup>։ Յիսուս տուած պատասխանին մէջ հասկըցուց որ Սամարացոց աստուածային պաշտամունքն ուղիղ չէ. իսկ Հրէից պաշտամանն տեղ՝ ներքին հոգեւոր պաշտամունք մը պիտի հաստատուի, որն որ տեղւոյ մը հետ կապուած պիտի չըլլայ, հապա աշխարհքիս ամէն կողմը պիտի կատարուի։ Աինք նոյն ժամանակին հասնելու մեծ բաղձանք ցուցնելով ըսաւ որ Քրիստոս գայ նե՛ ամէն բան կը սորվեցընէ։ Յիսուս ան ատեն ինք զինքն յայտնեց, ըսելով որ Ահաւասիկ ես եմ։ Աինն ուրախութենէն ինք իրմէ ելլելով՝ սափորը թողուց քաղաք վազեց, սկսաւ կանչել թէ Եկէք տեսէք, մէկը կայ՝ որ բրածնեբա բոլոր գիտէ. չըլլայ թէ Քրիստոսն ըլլայ։ Նոյն միջոցին աշակերտները կերակուրը գնած եկան, եւ կ'աղաչէին որ քիչ մը բան ուտէ։ Յիսուս՝ որ Սամարացի կնոջ դարձին վրայ մեծ ուրախութեան մէջ էր, անոնց ըսաւ. Ես ուտելու բան ունիմ, որն որ դուք չէք գիտեր։ Անոնք աս խօսքին միտքը չհասկընալով՝ իրարու կ'ըսէին թէ Արդեօք մէկն իրեն ուտելու բան բերաւ։ Յիսուս անոնց պատասխան տուաւ որ Զիս խրկողին կամքը կատարելն եւ իր գործքը գլուխ հանելն՝ իմ կերակուրս է։ Աս խօսակցութեան մէջ Սամարացիք եկան, ա-

<sup>1</sup> Հրէայք կը պնդէին որ Երուսաղեմն գուրս Աստուծոյ պաշտան մատուցանել չ'ըլլար. Սամարացիք՝ Գարիգին լեբան վրայ գոհ մատուցանելուն՝ աս բանիս չէին համոզուեր, եւ 100 տարիէ վերաստիկա մէջերն զիճարանութեան նիւթ եղած էր։

զաչեցին որ իրենց քաղաքը դայ: Յիսուս սիրով յանձն առաւ, երկու օր քովերնին կեցաւ եւ իր քարոզութեամբը մէջերնէն շատերը դարձուց:

## Զ. Դ Ա Ս

1. Յիսուս թագաւորազնին որդին ինչպէս բժշկեց: Աստուծանումի մօտ աշակերտութեան զով կանչեց: Նոյն ատեն ինչ հրաշք գործեց: — 2. Աստուծանում ինչ ըրաւ: Ծովին վրայ ինչ պատահեցաւ: Քերպեսացոց երկիրն ինչ ըրաւ: — 3. Անդամալոյծն՝ որ յարկին վրայէն իր առջեւն իջուցին, ինչպէս բժշկեց:

1. Յիսուս գործած հրաշքներովն իր ամենակարողութիւնը ցուցնելէն եւ իր Աստուածութիւնը խօսքով ու գործքով հաւատալի ընելէն ետեւ՝ նորէն կանա դարձաւ: Հոնկէ՝ Աստուծանում եղող թագաւորազնի մը որդին՝ որն որ մեռնելու մօտ ծանր հիւանդ էր, մէկ խօսքով բժշկեց, անոր հօրը՝ որ իրենն աղաչելու եկած էր, զրուցելով որ Գնա, որդիդ ողջընցած է:

Քիչ մը վերջը գնաց բնակութիւնը Աստուծանում հաստատեց, որն որ Գեննեսարութայ (Տիրերիայ կամ Գալիլեայ) ծովակին քով շինուած էր: Օր մը Յիսուս ան ծովակին երկայնութեան պարտած ատեն՝ երկու ձկնորսի պատահեցաւ, որոնք ուռկաննին ծով երկընցուցած էին. մէկը Սիմոնն էր՝ որ ետքէն Պետրոս ըսուեցաւ, մէկայն՝ իր Անդրէաս եղբայրը Ասոնք թէպէտ զՅիսուս տեսած եւ իրեն հաւտացած էին (Տե՛ս Դ. Գա՛ս. ԹԻ՛ւ 4.), բայց

դեռ անոր հետ պարտելու պարտաւորութիւն չունենալնուն՝ նորէն տեղերնին դարձած՝ իրենց գործքը կը նայէին: Առնց մէք մը վեր ալ Չերեղեայ երկու որդիքը Յակոբոս եւ Յովհաննէս իրենց հօրը հետնաւի մէջ ուսկաննին կը կարէին. եւ չորսերնին ալ Բեթսայիդացի էին: Յիսուս զիրենք կանչեց, որ բաներնին գործքերնին թող տան իր ետեւէն զան, անոնք ալ սիրով յանձն առին: Այն միջոցին զՅիսուս տեսնելու եւ իր քարոզութիւնները լսելու համար՝ զլուխը մեծ բազմութիւն ժողովելով՝ Յիսուս Աւտրոսին նաւը մտաւ, զրուցեց որ ցամաքէն քիչ մը հեռանայ եւ նաւին մէջէն ժողովողեան կը քարոզէր: Լմըննալէն ետքը Աւտրոսին բաւ որ նաւն աւելի բացը տանի եւ ուսկանը ծով երկընցքնէ: Աւտրոս պատասխան տուաւ որ Բոլոր գիշեր աշխատեցանք, բան չկրցանք բռնել. բայց քու խօսքիդ համար ուսկանը նորէն կը ձգենք: Աս որ եղաւ, մէկէն ուսկանին մէջ այնչափ ձուկ եկաւ որ ուսկանն սկսաւ պատռտիլ. անոր համար իրենց որսակիցներուն՝ Յովհաննէսին եւ Յակոբոսին ձայն տուին, որ իրենց նաւով օգնութեան հասնին: Չկերն այնչափ շատ էին, որ երկու նաւն ալ ընկղմելու մօտ լեցուեցան: Աւտրոս նոյն ատեն ներքին համոզմամբ միտքը դնելով՝ որ առանկ զօրութիւն ունեցողք պէտք է որ մարդկային բնութենէ վեր մէկն բլայ, Յիսուսին ոտքն իյնալով՝ Հեռու գնա ինձմէ, Տէր, կանչեց, վասն զի ես մեղաւոր մարդ մըն եմ: Մի վահնար, պատասխանեց Յիսուս, ասկէ ետեւ մարդիկ պիտի որսաս: Մէկալ ըն-



կերացն ալ՝ որ զարհուրած էին, իմ ետեւէս եկէք, բաւ. ձեզի մարդիկ որսալ պիտի տամ:

Ձ. Իրենց հետ մէկտեղ Յիսուս Ասփառնաւ մտաւ, եւ հոն դիւահար մը բժշկելէն ետեւ՝ Պետրոսին տունը գնաց, անոր զորանչք տենդէ բժշկեց: Ասփառնաւ միշտ հրաշագործութիւն կ'ընէր, անոր համար գլուխ ամբոխ պահաս չէր: Անդամ մը անոնցմէ քիչ մը ատեն խոյս տարու համար՝ նաւով ծովին դիմացի կողմն անցնիլ ուզեց: Աւս ճամբան յանկարծ ծովն սկսաւ ալէկոծիլ: Յիսուսնոյն ատեն քնդ մէջ ըլլալով՝ աշակերտները զինքը կ'արթընցընէին, ան ատիճանի վախցած էին, որ ազատելու համար՝ հրաշքէն ուրիշ միջոց չէին տեսներ: Յիսուս իրենց թերահաւատութեան համար զիրենք յանդիմանելէն ետքը՝ ծովին ու հովին սաստելով հրամայեց որ հանգչին: Մէկէն ծովը խաղաղցաւ. իսկ աշակերտները զարմացած՝ իրարու կ'ըսէին. Աս ո՞վ պիտ'որ ըլլայ, որ հովն ու ծովն իրեն կը հնազանդին: Ասանկով դիմաց Գերգեսացւոց երկիրն անցան: Հոն երկու դիւահարաց պատահեցան, որոնք գերեզմաններու մէջ կը բնակէին, եւ արտաբոյ կարգի կատաղի ըլլալուն՝ քովերնին մարդ չէր կրնար մտիկնալ. մէկուն ոտքն ալ շատ անգամ շղթայով կապած էին, բայց անիկա միշտ շղթան կը փրցընէր, լեռներու վրայ կը պոռար, կը պոռչրտար եւ ինք զինքը կը քարկոծէր: Ասոնք Յիսուսին ոտքն ինկած՝ կը կանչէին որ Յիսուս, Արդի Աստուծոյ, եկար որ ատենէն յառաջ զմեզ տանջէս: Աոյն լերան ոտքը խողերու երամակ մը կար:

դեւերն Յիսուսին աղաչեցին որ խոզերուն մէջ մտնեն: Յիսուս հրամանն որ տուաւ, խոզերը դիւահարելով՝ իրենք զիրենք ծով նետեցին ու խղիուեցան: Իսկ զանոնք արածող հովիւները քաղաք դարձան, եղածին համբաւն հոն եւ մերձաւոր երկիրները տարածեցին: Քաղաքացիք հոն թափեցան ու վրանին մեծ վախ ինկած ըլլալով՝ Յիսուսին աղաչեցին որ իրենց երկրէն հեռանայ: Յիսուս նաւ մտնելու ատեն՝ ան երկու դիւահարք ուղեցին հետն երթալ: Բայց ինք յանձն չառաւ: Չեր ընտանեաց քովը գացէք, ըսաւ, եւ Աստուծակէ ընդունած շնորհքնիդ անոնց պատմեցէք:

**Յ**. Երբ որ Կափառնաու մ'դարձաւ ու քաղաքացիք իր գալն իմացան, վազող վազողի կ'ըլլար, անանկ որ քանի մը հողի բժշկելու համար անդամալոյժ մը բերելով՝ հիւանդն Յիսուսին կեցած տունը չկրցան խոթել, եւ հարկադրեցան տան յարկը քակել՝ անդամալոյժն անկէ վար իջեցրնել: Յիսուս աս տեսաւ նէ՝ սիրտը շարժեցաւ, եւ դարձաւ անդամալուծին՝ Մեղքդ թողուի, ըսաւ: Փարիսեցիք աս բանս հայհոյութիւն կարծեցին: Աստուծակէ զատ՝ ո՞վ կրնայ մեղքը թողուլ, կ'ըսէին: Յիսուս ցուցրնելու համար որ ինք մեղաց թողութիւն տալու իշխանութիւն ունի, անդամալուծին ըսաւ. Ոտք ել, անկողինդ առ ժողովէ, տունդ գնա: Անդամալոյժը շուտ մ'ելաւ, հրամանը կատարեց: Հոն կեցողներն աս տեսնելով՝ Աստուծոյ փառք կու տային եւ կ'ըսէին որ Ասանկ բան տեսած չէինք:

## Է. Գ Ա Ս

1. Մատթէոս ս՛գ է. Յիսուս զինքն երբ աշակերտութեան կանչեց: Մատթէոս շնորհակալութեան համար ինչ բռաւ: — 2. Յայրոս ս՛գ է. Յիսուսէն ինչ ինչդրեց: Տեսառես կինն ինչպէս բժշկեցաւ: — 3. Կոյրերն ինչ կը ինչդրէին: Յիսուս Նազարէթ ինչ բռաւ:

1. Յիսուս՝ կափառնառւմէն նորէն Գալիլեայի ծովին եզերքն երթալու ճամբան բրանելով՝ մաքսատան մը առջեւէն անցած ատեն՝ Մատթէոս անունով մաքսաւոր մը տեսաւ եւ զինքը կանչեց: Մատթէոս շուտ մը ինչ ունէր չունէր՝ թողուց, Յիսուսին ետեւէն գնաց: Բայց նախ շնորհակալութեան գործք մ՛ընելու համար՝ զանիկա իր տունը սեղանի հրամցուց, որուն իր մաքսաւոր բարեկամներէն ալ շատերը հրաւիրեց: Փարիսեցիք աս որ տեսան, սկսան զՅիսուս բամբասել՝ որ մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ նստած կերակուր կուտէ: Իսկ Յիսուս այսչափ միայն ըսաւ որ Ես մարդիկներու բժիշկ ըլլալովս՝ ինչ աստիճանի կամ՝ արուեստի մարդիկ ըլլալուն միաչընելով, զանոնք բժշկելու կը նայիմ:

2. Գալիլեայի ծովին եզերքն եղած ատեն՝ Յայրոս անունով Հրէից ժողովրդապետ մ՛եկաւ ոտքն ինկաւ եւ աղաչելով ըսաւ. Ազջիկս մեռնելու վրայ է, եկուր ձեռքդ վրան դիր, որ առողջանայ: Յիսուս սկսաւ հետն երթալ, ժողովուրդն ալ ետեւէն կու գար եւ շատ բազմութիւն ըլլալով՝ զինքը կը նեղէին: Նոյն միջոցին՝ տեսառեսութենէ բանուած կին մը, որն որ 12 տարիէ վեր ունեցածը չունեցածը բժշկաց տուած էր եւ օգուտ չէր

տեսած, գաղտուկ՝ Յիսուսին ետեւէն գացող  
ամբոխին մէջ մտաւ, հաստատութեամբ միտ-  
քը դնելով որ եթէ անոր հանդերձին ծայրին  
ալ դպչելու ըլլայ, կը բժշկուի: Իբրք ալ  
դպչելուն պէս՝ արեան հոսուժը կտրեցաւ:  
Յիսուս՝ որ եղածն աղէկ գիտէր, դարձաւ  
հարցուց որ Զգեսաներուս ո՞վ դպաւ: Աշ-  
կերաները պատասխան տուին թէ կը տեսնես  
որ ամբոխն զքեզ կը նեղէ: Բայց Յիսուս  
չորս գին կը նայէր, իրրեւ թէ իրեն դպչո-  
ղը զանելու համար: Իսկ կինն ըրածին հա-  
մար վախնալով՝ գնաց գողալով առջեւն ին-  
կաւ, եղածը պատմեց: Յիսուս անոր ըսաւ.  
Դուստր, հաւատքդ զքեզ բժշկեց, հանգիստ  
տեղդ գնա:

Նոյն ատեն՝ ժողովրդապետին լուր եկաւ  
որ Աղջիկդ մեռաւ, պարապ տեղ Աւարդա-  
պետը մ'աշխատեցրնէր: Յիսուս դարձաւ ժողո-  
վրդապետին ըսաւ. Մի վախնար, միայն հաւա-  
տա, անիկա կ'ողջըննայ: Երբ որ տուն հա-  
սաւ, հետք միայն զՊեարոս, զՅակոբոս, զՅով-  
հաննէս եւ աղջկան ծնողքն առաւ: Տան  
մէջիները մեռնողը կու լային. իսկ ինք կ'ըսէր  
որ Մի լաք. աղջիկը մեռած չէ, հապա զը  
քնանայ: Քովիներովը մեռելին խուցը մտաւ,  
աղջկան ձեռքէն բռնեց եւ ըսաւ. Աղջիկ,  
քեզի կ'ըսեմ, ոտք ել: Ան ալ անմիջապէս  
ոտք ելաւ եւ սկսաւ քայլել: Արդէս զի կա-  
տարեալ ողջընցած ըլլալը տեսնուի, Յիսուս  
հրամայեց որ ուտելու բան տան: Աղջկան  
ծնողքն ասոր վրայ կը զարմանային. իսկ Յի-  
սուս պատուիրեց որ մէկու չպատմեն:

**Յ .** Գաղիլեայի ժողէն ետ դառնալու ա-  
 տեն՝ երկու կողք ետեւէն կու գային եւ կը  
 կանչէին . Որդի Գաւթի, մեզի ողորմէ : Աս  
 կերպով մինչեւ տուն ետեւէն եկան : Հոն ի-  
 բնոց հարցուց թէ Ար հաւտա՞ք որ ես ձեզի  
 աս բանս կրնամ ընել : Անոնք երբ որ Ար հաւ-  
 տանք, ըսին, Յիսուս աչուրնին ձեռքով շո-  
 շափեց եւ ըսաւ . Հաւտացածնուդ պէս ըլլայ :  
 Աչքերնին նոյն ատեն մէկէն բացուեցաւ :  
 Ետքը Ապիառնաուսն ելաւ Նազարէթ իր  
 գաւառը դարձաւ ու շարաթ օրերը ժողո-  
 վըրդանոցին մէջ կը վարդապետէր : Առողնե-  
 րը վրան կը զարմանային ու կ'ըսէին . Ասիկա  
 Յովսէփ հիւսան որդին չէ՞ . ասանկ իմաս-  
 տութիւն ու զօրութիւն ուստի ձեռք է բե-  
 րեր : Յիսուս անոնց անհաւատութեան համար  
 հոն շատ հրաշք չըրաւ, մինակ՝ ձեռք դնե-  
 լով՝ քանի մը հիւանդ բժշկեց :

Քրիստոսի Կրօնը ինչպէս երկրորդ Կրօնը  
 երկրորդ շարժիչը :

Ը . Դ Ա Ս

1. Յիսուս երեսուն'ութ ըտարեան հիւանդն ուր, Բնչակե  
 եւ երբ բժշկեց : Փարիսեցիք ինչո՞ւ իրեն դէմ բարկա-  
 ցան : — 2. Առաքելոց գործքն ինչ է, քանի հոգի են  
 եւ անուանին ինչ է : Արամ վարդապետութիւնն երբ  
 խօսեցաւ . նիւթն ինչ է : — 3. Ահնէն վար իջաւ .  
 լու տանն ինչ պատահեցաւ : — 4. Հարիւրապետն ծա-  
 ռանն ինչպէս բժշկուեցաւ : Յիսուս աս առթով Հրէից  
 ինչ բան խնայուց : — 5. Նոյն քաղաքն այրի կոչ  
 որդին ինչպէս ողջըցաւ : — 6. Յովհաննէս իր աշակերտ-  
 ներն ինչո՞ւ Յիսուսի խաւրից : Յիսուս անոնց առջեւն  
 ինչ ըրաւ : Անոնց երթալէն ետեւ՝ ժողովրդեան ինչ  
 ըրաւ :

1. Յիսուս զատկի տօնին պատճառաւ Ա-  
 ըրուսաղէմ եկաւ : Արուսաղէմայ մէկ դրան  
 քով առողջութեան աղբիւր մը կար, որուն  
 ջուրը հոն աւազանի մը մէջ կը ժողվէր : Նոյն  
 ջուրն երբեմն պղպջակ դուրս կու տար, եւ  
 ան ժամանակ հրեշտակ մը կ'իջնար՝ աւազա-  
 նին ջուրը կը շարժէր : Շարժման ատեն  
 ամենէն յառաջ մէջը մտնողը կը բժշկուէր :  
 Աւազանին բոլորտիքը հինգ սրահով խոշոր  
 շէնք մը շինուած էր, որուն մէջը՝ կոյր, կաղ,  
 զօսացեալ եւ վերջապէս ամէն տեսակ հիւանդ  
 կը գտնուէր, որոնք ջրոց շարժելուն կը սպա-  
 սէին : Մէջերնին մէկը կար՝ որ երեսուն'ութը

տարիէ վեր հոն հիւանդ կը պառկէր: Յիսուս աս գիտնալով՝ իրեն հարցուց որ Բժշկուիլ կուզէս: Անիկա ըսաւ թէ Մէկը չունիմ՝ որ աւազանին ջուրը շարժած ատեն՝ անմիջապէս մէջը մտնելու ինձի օգնէ. մինչեւ որ ես տեղէս շարժելու ըլլամ՝ ուրիշները կը յառաջեն: Յիսուս անոր ըսաւ. Ոտք ել, անկողինդ առ զնա: Հիւանդը բժշկեցաւ, ոտք ելաւ, ուրախութեամբ ու շնորհակալութեամբ անկողինը ժողվեց առաւ քալելու սկսաւ: Արթալով բազմութիւնն աւելնալուն՝ Յիսուս հոն չկեցաւ զնաց, անանկ որ բժշկուողը եւ ոչ իր անունը կրցաւ իմանալ: Աս բժշկութիւնն ըրած օրը շարաթ օր մըն էր: Հրեայք նոյն օրը հիւանդին անկողինն առնել երթալը տեսնելով՝ ետեւէն կանչեցին որ Այսօր շարաթ է, անկողինդ պէտք չես տանիլ: Ան ալ պատասխան տուաւ որ Զիս բժշկողն ասանկ հրամայեց: Հրեայք բժշկողին ո՞վ ըլլալն հարցուցին. ինք նոյն ատեն չկրցաւ անունը տալ. բայց ետքէն երբ որ Յիսուս ըլլալն իմացաւ, անոնց հասկրցուց: Անոնք՝ որ ոչ Աստուծոյ երկիւղ, ոչ ալ ընկերին սէր, հապա մինակ արտաքին սովորութիւններու պահպանութիւն գիտէին, Յիսուսին շարաթ օրով բժշկութիւն ընելուն վրայ նեղացան, մինչեւ զինքը կը հալածէին: Իսկ յամառ Փարիսեցիք, որոնք իրեն դէմ ահաայ կը կրճտէին, աս դէպքը եւ մանաւանդ Վալիլեա դառնալու ատեն՝ շարաթ օր մը մէկ ժողովդանոցի մէջ աջ ձեռքը գօսացեալ մարդը բժշկելը տեսնելով՝ շատ կատղեցան, եւ անմիջապէս դուրս ելլելով՝

Հերովդէս Անդիպպասին կողմիններուն հետ խորհուրդ ըրին թէ ինչպէս զինքը մեռցնեն : Յիսուս անոնց մտքը զխոնարով՝ անկէ հեռացաւ , Գալիլեայի ծովին քովերը գնաց , ետեւէն ալ մեծ բազմութիւն կու դար : Աս պատճառաւ աշակերտացը հրամայեց որ նաւակ մը պատրաստեն , որպէս զի ժողովրդեան մէջ կենարով չնեղուի . վասն զի հիւանդութիւն ունեցողները վրան թափած՝ քսուելով կը բժշկուէին :

Ձ . Որովհետեւ Յիսուս Աստուծոյ թագաւորութիւնը երկրի վրայ հաստատելու եւ իր ջանքովն ամենուն առհասարակ ճշմարիտ Աստուածը պաշտել տալու եկած էր , հարկ էր որ իրեն համար առանձին գունդ մը կազմէր , որն որ միշտ քովը գտնուելով , իր վարդապետութիւնները լսելով , տուած բարի օրինակները տեսնելով՝ ետքէն իր վկաներն եւ իր կոչմանը գործակիցներն ըլլային : Աւստի նախն մէջ խօսիլը լմնցրնելէն ետեւ՝ լերան վրայ ելաւ , բոլոր գիշեր աղօթք ըրաւ , եւ առտու ըլլալուն պէս՝ իր աշակերտներուն մէջէն ոմանք լերան վրայ կանչելով՝ անոնցմէ տասուերկու հոգի զատեց , որոնք Առաքեալ անուանեց : Ասոնց անուններն են . Ա . Սիմոն Աեւորոս , Բ . Անդրէաս անոր եղբայրը , Գ . Յակովբոս մեծ՝ Ջերեկեայ որդին , Դ . Յովհաննէս անոր եղբայրը , Ե . Փիլիպպոս , Ջ . Բարթողիմէոս , Է . Թովմաս , Ը . Մատթէոս , Թ . Յակովբոս՝ փոքր , Արթեայ որդին , Եղբայր (ազգական) Տեառն , Ժ . Սիմոն Արանանացի , ԺԱ . Դերէոս՝ որ Թադէոս անուանուեցաւ ,



իր հաստատելու թագաւորութեան (Աղեղեցւոյն) մէջ՝ Արրահամու, Իսահակայ եւ Յակորայ ժառանգութեան անարժան եղող որդւոց տեղը պիտի գրաւեն:

**5.** Ասկէ ետքը Յիսուս՝ իր աշակերտներէն շատերուն ու ժողովրդեան բազմութեան հետ՝ Գալիլեայի Նային քաղաքն եկաւ: Ներս չմտած՝ քաղքին դրան քով տեսան որ այրի կնոջ մը մէկհատիկ զաւկին մեռելը դուրս կը հանեն: Յիսուս գթալով՝ դազաղին մօտեցաւ, մեռած տղուն ըսաւ. Պատանի, քեզի կ'ըսեմ, ել: Ան ալ ելաւ նստաւ եւ սկսաւ խօսիլ: Յիսուս զինքը մօրը յանձնեց: Հոն ըլլողներուն վրայ վախ ինկաւ, սկսան զԱստուած փառաւորել ու կանչել որ Ասանկ հրաշք գործող մարգարէ մը՝ Մեսիայէն ուրիշը չիկրնար ըլլալ:

**6.** Աս զարմանալի հրաշքներուն համբաւը չորս դին տարածուելով՝ մինչեւ Յովհաննէս Մկրտչին կեցած բանտը հասաւ: Յովհաննէս՝ առ առ թով ուղեց իր աշակերտներուն իմացընել որ Յիսուս ճշմարիտ Մեսիան է: Ուստի անոնցմէ երկու հոգի Յիսուսին խրկեց, որոնք իրենց վարդապետին կողմանէ ազաչեցին որ եթէ Մեսիան ստուգիւ ինքն է նէ, յայտնէ, որպէս զի պարապ տեղ ուրիշի չտպասեն: Յիսուս՝ առանց հետերնին երկայն բարակ խօսելու, ամենէն զօրաւոր կերպով զիրենք համոզելու համար՝ առջեւնին շատ մը հիւանդներ բժշկեց, որոնց մէջ դիւահարներ, կոյրեր ու կաղեր ալ կային: Ետքը դարձաւ անոնց ըսաւ. Գացէք Յովհաննէսին

ԺԲ. Յուզա Իսկարիովտացի: Ասոնց հետ մէկտեղ տափարակ տեղ մ'իջաւ եւ հոն անթիւ անհամար բազմութեան մէջ եղող հիւանդները բժշկեց: Ետքը նորէն լեռն ելաւ, ուր որ աշակերտները քովը ժողվեցան: Հոն բերանը բացաւ, երկայն վարդապետութիւն մ'ըբաւ, որուն մէջ քրիստոնէական վարուց վերաբերեալ ամէն կանոններն եւ աւետարանական խրատները բովանդակուած են, ու Լէրմն շարժողիւն կը կոչուի: Ասոր մէջ չորս գլխաւոր նիւթի վրայ կը խօսի. Ա. Ճշմարիտ երջանկութիւնն ու ապերջանկութիւնն՝ աշխարհքս ինչ բանի վրայ կը կարծէ նէ՝ անոր վրայ կայացած չէ. աւ. նիւթիս մէջ ութ երանի տուաւ եւ չորս վայ: Բ. Յաւիտենական փրկութեան հասնելու համար իր ընկերին բարի օրինակ ըլլալու է, եւ Աստուծոյ օրէնքը Փարիսեցւոց ըրածին պէս՝ մինակ արտաբուսաւ, նիւթապէս կատարելու չէ, հապա նաեւ անոնց ներքին հոգեւոր իմաստին համեմատ: Գ. Ամէն բան նաեւ նոյն իսկ բարի գործքերը՝ յաւիտենական փրկութեան մեղի միջնորդ չեն ըլլար՝ եթէ անոնց ձեռքով աշխարհքիս ունայնութիւնները փնտռենք, կամ թէ սրտերնիս Աստուծոյ եւ աշխարհքիս մէջ բաժնենք: Գ. Ով որ իր սիրաբ մարուր պահել կ'ուզէ, ուրիշին պակասութիւններուն միտ դնելու չէ, այլ իր անձնական պակասութիւններուն նայելու է. եւ ջանալու է որ չար ցանկութիւններուն ընդարձակ ճամբէն չերթայ, այլ նեղ ճամբէն՝ որն որ Աստուծոյ պատուիրաններուն ճամբան է:

3. Վարդապետութիւնը լմացնելով լեռնէն վար իջած ատեն՝ բորոտ մ'եկաւ իրմէ բժշկութիւն խնդրեց: Յիսուս ձեռքը վրան երկընցրելուն պէս՝ բորոտութիւնն անցաւ: Ըստ օրինաց՝ բորոտ մը սրբուած չէր համարուեր՝ մինչեւ որ քահանան չտեսներ ու չհաստատեր. անոր համար Յիսուս զինքը քահանային խրկեց:

4. Երբ որ Ասփառնաում եկաւ, Հրեայք հարիւրապետի մը կողմանէ իրեն եկան աղաչեցին որ անոր ծանր հիւանդ սիրելի ծառան բժշկէ, եւ զինքը կը թախանձէին ըսելով թէ Արժանի է որ աս շնորհքն անոր ընես, որովհետեւ ազգերնիս կը սիրէ ու ժողովրդանոցնիս ինք շինել տուած է: Յիսուս յանձն առաւ, ելաւ հետերնին գնաց: Հարիւրապետին տան մտփկները հասած ատեն՝ անիկա մարդ խրկեց ըսաւ որ Ա՛լ յառաջ մի դար, քեզի պէս հիւր մ'ընդունելու արժանի չեմ. քու պարզ խօսքդ ալ ծառաս բժշկելու բաւական է: Յիսուս անոր աս աստիճանի հաւատքին ու խոնարհութեան վրայ զարմանալով, ըսաւ. Եւ ոչ Իսրայելացւոց մէջ անոր չափ հաւատք ունեցող մէկը գտած եմ: Անմիջապէս ալ հիւանդին բժշկութիւն պարգեւեց, անանկ որ պատգամաւորք տուն դարձած ատեննին՝ զինքը բժշկուած գտան: Աս առթով Յիսուս իրենց հասկըցուց որ Արրահամու, Իսահակայ, Յակոբայ որդիք ըլլալուն համար՝ անոնց ծառանդութեան առանձին իրաւունք մը չունին, հապա՛ իրենց նախահարց հաւատքը չունենալուն համար՝ Աստուած հեթանոսաց մէջէն ճշմարիտ ծառանդներ պիտի հանէ, որոնք

ըսէք. Աղյբերը կը տեսնեն, կաղերը կը քալեն, բորտաները կը սրբուին, խուլերը կը լսեն ու մեռելները կը յառնեն: Անոնք երթալէն ետեւ՝ Յիսուս ամենուն առջին սկսաւ Յովհաննու առարկնութիւնները գովել. անոր զարմանալի հաստատութիւնը, անսպասի մէջ հրեշտակի պէս կեանք անցընելը, խտտամբեր վարքը. խօսքը լմընցուց ըսելով որ Քալոր մարգարէներէն վեր է:

## Թ. Դ Ա Ս

1. Միման սփ է. մեղաւոր կնոջ Յիսուսի բաժնիքը տեսնելով մտքէն ինչ անցուց. Յիսուս անոր ինչ խօսեցաւ: — 2. Յիսուս՝ տասուերկու առաքեալներէն զատ՝ քանի մը բարեպաշտ կանանց ընկերակցութեամբ Քաղարներ ու գեղեր պարտելով ինչ գործէց եւ ինչ ոգտակար խօսակցութիւն ըրաւ: Մայրդ, եղբարդդ հետդ կ'ուզեն խօսիլ ըսողին ինչ պատասխանեց: — 3. Մեր մանացանին առակն եւ անոր մեկնութիւնն ինչ է: — 4. Երկնից տրքայութեան բերած առակն եւ անոր մեկնութիւնն ինչ է: Նոյնին՝ ուրիշ ինչ առակ բերաւ:

1. Թէպէտ եւ Փարիսեցիք Յիսուսի վրայ կը նախանձէին եւ իրեն չարիք ընելու կը ջանային, բայց ինք անոնց միշտ բարիք կ'ընէր եւ ընտանութիւն ու սէր կը ցուցընէր, անանկ որ իրենցմէ Միման անունով մէկն ազակելով որ իր սեղանին գայ, յանձն առաւ գնաց: Քաղբին մէջ վատանուն կին մը կար, որն որ Յիսուսին՝ Փարիսեցւոյն տունն ըլլալը լսելով՝ շիշ մը աղնիւ եղ առաւ, հոն գնաց, իրեն ոտքն ինկաւ, սկսաւ մեղացը վրայ արցունք թափել, որով Յիսուսի ոտքը կը թրջէր, մազերովը կը շորցընէր, ետքը կը պագնէր ու

եղով կ'օձէր: Փարիսեցին առ տեսնելով՝ մտա-  
քէն Յիսուսի համար կ'ըսէր որ Եթէ մար-  
գարէ մ'ըլար՝ անոր սկէ եւ ինչպիսի կին ըլ-  
լալը կ'իմանար: Յիսուս Փարիսեցւոյն մտա-  
ծածն իմանալով՝ ըսաւ. Սիմոն, քեզի ըսելիք  
մ'ունիմ: Փոխառաւ մը երկու հոգւոյ վրայ  
առնելիք ունէր, մէկէն՝ 500 դահեկան, մէկա-  
լէն՝ 50: Տեսնելով որ կարող պիտի չըլլան  
վճարել՝ երկուքին ալ պարտքը շնորհեց: Հի-  
մա ըսէ, ան երկուքէն որք փոխառուն աւելի  
սիրելու պարտական է: Ինծի կ'երեւայ որ, ը-  
սաւ Սիմոն, որուն որ աւելի թողուց նէ՛ ա-  
նիկա աւելի պարտական է: Աղէկ ըսիր, պա-  
տասխանեց Յիսուս. սա կինը կը տեսնես.  
քու տունդ եկայ՝ ոտքիս ջուր չբերիր. իսկ  
ինք՝ արցունքովն ոտքս լուաց ու մազովը չոր-  
ցուց: Գուն ինծի համբոյր մը շտուիր. իսկ  
ինք՝ քանի որ եկաւ նէ՛ ոտքս պագնելէն շի-  
ղաղբիր: Գուն գլուխս եղով չօձեցիր. ինք՝  
անոյշ եղով օձեց: Արդ որովհետեւ զիս շատ  
սիրեց, անոր համար կ'ըսեմ՝ որ Մեղքերուն  
թողութիւն արուի: Կնոջ ալ դարձաւ նոյնը  
կրկնեց: Աեղանի վրայ ըլլողներն սկսան իրա-  
բու ըսել: Աս սկէ՛ որ մեղք կը թողու:  
Յիսուս առանց անոնց միտ գնելու՝ հանդարտ  
կերպով կնոջ ըսաւ. Ել տուն գնա. հաւատքդ  
զքեզ փրկեց:

Ձ. Ասկէ ետքը Յիսուս քաղաքներն ու  
գեղերը պտրտելով՝ Աստուծոյ արքայութիւնը  
կը քարոզէր: Տասուերկու առաքելացմէ զատ  
հետը նաեւ քանի մը կանայք կ'երթային, զո-  
րոնք Յիսուս զանազան հիւանդութիւններէ

ազատած էր: Ասոնցմէ մէկն էր Մարիամ Մագդաղենացին՝ որմէ եօթը դեւ ելած էր: Ասոնք իրենց ստրկովը Յիսուսի ապրուստը կը հոգային: Երբ որ նորէն կափառնաում դարձաւ, հոն գլուխը մեծ բազմութիւն ժողովեցաւ, մինչև ոչ ինք ոչ ալ աշկերտները հաց ուտելու ատեն կրնային գտնել: Իր քարոզութիւնները շնորհունող եւ իրեն չհաւտացող ազգականներէն ոմանք՝ անոր հոն ըլլալը լսելով՝ զինքը տեսնելու եւ լսելու եկան, վասն զի մոլեգնած կը կարծէին: Նոյն ատեն իրեն կոյր ու համր դիւահար մը բերին. Յիսուս զանիկա բժշկելով՝ դիւահարը սկսաւ խօսիլ, Ժողովուրդն ասոր վրայ զարմանք ցուցնելով՝ կ'ըսէր. Արդեօք աս է Գաւթին որդին Յիսուսը: Իսկ փարիսեցիք՝ գործած հրաշքը լսեցին նէ՛ Գիւաց իշխանին ձեռքով կը գործէ, ըսին: Յիսուս նոյն խօսքին անիրաւ ըլլալը ցուցուց, եւ աս առթով ժողովրդեան օգտակար խօսակցութիւն մ'ըրաւ, որուն մէջ Հոգւոյն սրբոյ դէմ՝ դնելը՝ վերջին աստիճանի մեծ մեղք ըլլալը սորվեցուց: Յովնանին՝ ձկան փորը երեք օր երեք գիշեր մնալն յիշատակելով՝ իրեն ալ անոր պէս երկրիս սիրտը նոյնչափ ատեն մնալէն ետեւ յարութիւն առնելը գուշակեց: Գարձեալ՝ ապաշխարելէն ետեւ նորէն առջի շար ճամբան դառնալը՝ որչափ գէշ բան ըլլալը մտքերնիս հաստատելու համար, զրուցեց որ նոյն ատեն մկուռն տեղ՝ եօթը շարագոյն դեւ այնպիսուոյն փորը կը մտնէ: Յիսուս աս խօսակցութիւնները ժողովրդեան ընելու ատեն՝ մէկը իրեն ըսաւ. Մայրդ ու եղբարքդ

դուրան են, կ'ուզեն հետո խօսիլ: Ինքն ալ պատասխան տուաւ որ Ո՛վ է իմ մայրս ու եղբարքս. եւ ձեռքն աշակերտներուն երկընցընելով՝ Ահա իմ մայրս ու եղբարքս, ըսաւ. վասն զի ով որ երկնաւոր Հօրս կամբք կը կատարէ, ան է իմ եղբայրս, քոյրս ու մայրս:

Յ. Նոյն օրը ելաւ ծովին քովը գնաց եւ հօն կը վարդապետէր: Բայց տեսնելով որ շատ մարդ կու գայ կը խոնի, նաւ մտաւ եւ անոր մէջէն սկսաւ ժողովրդեան առականերով խօսիլ: Առջի բերած օրինակն աս եղաւ: Սերմանացան մը ելաւ իր սերմը ցանելու, ըսաւ: Յանած ատեն՝ սերմին մէջէն ոմանք ճամբու վրայ ինկան, կոխուեցան, թռչուններն ալ կերան լմընցուցին. ոմանք ապառաժի վրայ ինկան, ուր ամենէին հող չկար, եւ թէպէտ շուտ մը բուսան, բայց հիւթ չկրնալով գտնել եւ արմատ չունենալով՝ արեւը ծագելուն պէս՝ չորցան զացին. ոմանք փշերու մէջ իյնալով, բուսած ատեննին՝ փշերը զիրենք խղդեցին. ոմանք ալ աղէկ երկիր իյնալով՝ մէկին տեղ հարիւրաւոր, վաթսնաւոր ու երեսնաւոր պտուղ տուին: Ետքը առաքելոց ինդրելովն ասիկա մեկնեց: Սերմն՝ Աստուծոյ խօսքերն են, ըսաւ. ճամբու վրայ ինկած կ'ըլլայ, անոնց քովը՝ որոնք Աստուծոյ խօսքերը կը լսեն, բայց զանոնք ընդունելու եւ անոնց հաւտալու ներքին պատրաստութիւն չունենալուն համար՝ մտքը չեն իմանար. սատանան ալ կու գայ իրենց սրտէն ան խօսքերը կը հանէ, որպէս զի չըլլայ թէ հաւատան ու երանելի ըլլան: Ապառաժի վրայ ին-

կամ Աստուծոյ խօսքերն անոնց է՝ որոնք թէպէտ լրած ատեննին ուրախութեամբ կ'ընդունին, բայց արմատ կամ հաստատուն հաստք չունենալուն՝ վրանին նեղութիւն կամ հալածանք մը եկածին պէս՝ կը գայթակղին կ'իյնան: Փշերուն մէջ ինկածներն անոնցն է՝ որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն ու կ'ընդունին, բայց սրտերնուն մէջ եղող աշխարհքիս հոգը, հարստութիւնն եւ ունայնութիւնները կը խղզեն: Իսկ բարի երկրի վրայ ինկածներն անոնցն է՝ որոնք անոնք սրտանց աղէկ ու ներքին պատրաստութեամբ կ'ընդունին եւ կը պահեն:

4. Յիսուս առջեւնին ուրիշ նմանութիւն ալ գրաւ: Երկնից արքայութիւնը (եկեղեցին) մարդու մը նմանցուց, որն որ իր ազարակին մէջ բարի սերմ ցանեց. իսկ թշնամին եկաւ անոր քնացած ատեն՝ բարի սերման մէջ որով ցանեց ելաւ գնաց: Յորենը բուսաւ եւ աճեցաւ՝ որովն ալ հետը: Ծառաներն եկան ազարակին տիրոջն ըսին որ Ազարակին մէջ բարի սերմ չցանեցիր, որովն ուստի՞ ելաւ: Ան ալ պատասխան տուաւ որ Անիկա թշնամին ցանեց: Ծառայք հրաման ուղեցին որ երթան որովները՝ հանեն. բայց ազարակին տէրը չթողուց, ըսելով որ Չըլլայ թէ անոնք հանած ատեննիդ՝ ցորենն ալ մէկտեղ հանէք. լաւագոյն է որ մինչեւ հնձոց ժամանակն ածին. նոյն ատեն հնձողներուն կը պատուիրեմ որ նախ որովն կտրեն խրձունք ընեն այրելու համար, ետքը ցորենը թողվին շտեմարանս դնեն: Ասոր ալ աս մեկնութիւնը տուաւ:



բարի սերմը ցանողը՝ Որդի Մարգոյ (Քրիստոս) է, ըսաւ. եւ ազարակն՝ աս աշխարհս է. ցորենն՝ արքայութեան որդիքն, իսկ որոմը՝ սատանայի որդիքն են. որոմը ցանողն ալ սատանան է. իսկ հունձը՝ աշխարհիս կատարածն է: Ուստի ինչպէս որ որոմը կը ժողվեն ու կ'այրեն, ասանկ ալ աշխարհիս վերջը պիտի ըլլայ: Նոյն ատեն Աստուծոյ Որդին իր հրեշտակները պիտի խրկէ, որոնք չարերն արքայութենէն պիտի մերժեն հնոց նեան, որ յաւիտեանս լան ու ակռանին կրճատեն. իսկ արդարք երկնից արքայութեան մէջ արեգական պէս պիտի ծաղին: Յիսուս երկնից արքայութեան ուրիշ նմանութիւններ ալ բերաւ. ազարակի մը մէջ ծածկուած գանձի նմանցուց, զորն որ մարդս գտնելով՝ պահեց, ու ինդութենէն՝ ինչ ունէր չունէր՝ զնաց ծախեց, ան ստրկով ազարակը գնեց: Գարձեալ նմանցուց մանանխոյ հատի, մարգարտի, խմորոյ, ծովը ձգուած ուռկանի՝ որուն մէջ առէն տեսակ ձուկ կ'ըլլայ, զիչեր ցորեկ ինքիրեն ածող ու հասնող սերման:

## Ժ . Դ Ա Ս

1. Առաքեալները քարոզութեան շիրկած՝ Յիսուս անոնց  
ինչ իշխանութիւն տուաւ եւ իրենց կոչման հարկաւոր  
ինչ խրատ : — 2. Յովհաննէս ուր եւ ինչու գլխաւե-  
ցաւ : — 3. Ինչ առթով հացը առջի անգամ բազմա-  
ցուց : — 4. Երբ ծովէն վրայ քաշելով առաքեալներուն  
սգնութեան հասաւ . Պետրոս ինչ բրտ : — 5. Հրեայք  
երկրորդ օրը ինչու կախաւնաւած եկան զենքը կը փըն-  
տակին : Յիսուս հեռերնին ինչ խօսեցաւ :

1. Յիսուս ժողովրդեան վրայ ցաւելով՝  
որ առանց հովուի մնացած ոչխարներու կը  
նմանէին, Հունձք շատ են, բսաւ, բայց մշակ-  
ները քիչ. ուստի հնձոց տիրոջն աղաչեցէք որ  
անոնց մշակ գտնէ խրկէ : Աս խօսքիս վրայ,  
առաքելոց՝ հրապարակաւ քարոզելու, հիւանդ-  
ներ բժշկելու, դիւահարները դիւաց ձեռքէն  
ազատելու իշխանութիւն տուաւ եւ պատուի-  
րեց որ ինչպէս իրենք աս պաշտօնն ու զօ-  
րութիւնը ձրի առին, ձրի ալ ի գործ դնեն :  
Իրենց հրամայեց որ երթան քարոզին, միայն  
թէ նոյն ժամանակը հեթանոսաց ու Սամա-  
րացւոց քաղաքները չհանդիպին, այլ աւելի  
Իսրայելի կորսուած ոչխարներուն երթան :  
Չիրենք խրկելէն յառաջ՝ առաքելական պաշտօ-  
նին հարկաւոր խրատներ տուաւ . պատուիրեց  
որ ճամբու դիւրութեան համար յառաջուց  
բան մը չհօգան. եւ ապահով ընելու համար  
որ արդէն զիրենք հոգացող կայ, բսաւ թէ  
Մշակն իր կերակրոյն արժանի է : Աս ալ պա-  
տուիրեց որ եթէ տեղ մը ընդունելութիւն  
չգտնեն եւ իրենց վարդապետութեան ականջ  
դնող չըլլայ, անկէ դուրս ելած ատեննին՝

ուրբերնուն փոշին թօթուեն : Առաքեալք սկսան երկու երկու՝ քաղաքներու գեղեր պարտելով՝ ապաշխարութիւն քարոզել եւ հիւանդներ բժշկել : Յիսուս ալ անոնց դացած քաղաքները կը հանդիպէր եւ հոն կը վարդապետէր :

2. Աս առնես էր որ Հերովդէս Անդիպպաս՝ զՅովհաննէս Մկրտիչ բանտարկողը՝ իր ծննդեան օրը նախարարներուն, հազարապետներուն եւ տէրութեան ուրիշ մեծամեծներուն սեղան մը տուաւ : Հերովդիադայ ազջիկն ելաւ կաքաւեց, եւ բազմականներուն շատ հաճելի ըլլալով՝ Հերովդէս երգմամբ իրեն խոստացաւ որ ինչ որ կ'ուզէ նէ՝ խընդրէ, եթէ թագաւորութեանը կէսն ալ ուզելու ըլլայ՝ կ'ընդունի : Ազջիկը մօրը խորհուրդ հարցնելէն ետեւ՝ անոր խրատին համաձայն՝ Յովհաննէս Մկրտչին զլուին ուզեց : Հերովդէս ասոր վրայ շատ տրամեցաւ, բայց հրապարակաւ տուած խոստման դէմ չուզելով ընել՝ դահիճ մը խրկեց անոր զլուխը կտրել ու սկտեղ վրայ դրած բերել տուաւ, ինչպէս որ մօրմէն գրգռուելով ուզած էր ազջիկը, որն որ առաւ Հերովդիադային տարաւ : Յովհաննու աշակերաներն աս լսելով՝ գացին մարմինը թաղեցին եւ եկան Յիսուսին պատմեցին :

3. Առաքեալք քարոզութենէ դառնալով՝ գործածնին ու սորվեցուցածնին եկան Յիսուսին պատմեցին, որն որ՝ Եկէք առանձին տեղ մ'երթանք, քիչ մը հանգչիք, բտելով՝ զիրենք նաւ խոթեց դիմաց անապատ տեղ մը տարաւ : Հոն ալ շատ բազմութիւն ժողովելով՝ Յիսուս

սկսաւ անոնց Աստուծոյ արքայութիւնը քարոզել ու հիւանդները բժշկել: Իրիկուան զէմ Փիլիպպոսին հարցուց որ Այսչափ բազմութեան ուտելու հաց ուտա՞ի գնենք: Բայց աս հարցումը զանիկափորձելու համար ըրաւ. ինք ընելիքն արդէն զիտէր: Ան ալ պատասխան տուաւ որ Երկու հարիւր գահեկանի հաց բաւական չէ, թէպէտեւ ամէն մէկը քիչ մը բան ուտէ: Մէկալ առաքեալները խորհուրդ կուտային որ մութը չկոխած՝ ժողովուրդն արձակէ, որպէս զի երթան ուտելիք գնեն: Յիսուս՝ Բան չկայ, ըսաւ, անոնց ուտելու բան դուք տուէք: Ան ատեն Անդրէաս սրատասխան տուաւ որ Տղայ մը հինգ նկանակ եւ երկու ձուկ ունի, բայց այսչափ բազմութեան ինչ պիտ'որ ըլլայ: Հոն շատ խոտ կար. Յիսուս հրամայեց որ ժողովուրդը խուճի խուճի խոտին վրայ նստի: Միայն էրիկ մարդիկ՝ առանց կանայքն ու տղաքն համբերու՝ 5000ի չափ կային: Յիսուս ան հինգ հացն ու երկու ձուկն առաւ, երկինք նայեցաւ եւ աշակերտներուն տուաւ, անոնք ալ ժողովրդեան բաժնեցին: Ամէնքն աղէկ մը կշտանալէն ետեւ Յիսուս հրամայեց որ աւելցուկը ժողովն: Առաքեալք հրամանը կատարեցին, եւ հացի կտորուանքէն 12 զամբիւղ լեցուեցաւ: Ժողովուրդն աս տեսաւ նէ՛ խոտովանեցաւ որ ինքն է ճշմարիտ մարգարէն եւ ուզեց զինքը թագաւոր գնել: Բայց Յիսուս աճապարեց շուտ մը առաքեալները նաւ դրաւ ճամբեց. ինքն ալ ժողովուրդը թողուց, լերան վրայ ելաւ աղօթելու:

4. Առաքելաբ ծովին մէջ ալէկոծութեան բռնուեցան. եւ հոփն իրենց դէմ ըլլալով՝ նաւն ալեաց վրայ առդին անդին կ'երթար կու գար: Գիշերուան չորրորդ պահուն (առտուան մտերը) տեսան որ Յիսուս քալելով ծովին վրայէն կու գայ: Առջի բերան աչքերնուն չհաւտացին, սուտ տեսիլք կարծեցին ու վախերնէն սկսան կանչել: Յիսուս անոնց ձայն տուաւ որ Ես եմ, մի վախճաք: Պետրոս՝ Տէր, բսաւ, դուն ես նէ՝ հրամայէ որ քալելով ջրին վրայէն քեզի դամ: Յիսուս հրաման տուաւ, ան ալ քալելով ջրին վրայէն Յիսուսին կու գար. բայց մէկէն սաստիկ հով մը փչելով՝ Պետրոս սկսաւ վախնալ, եւ ընկզմու մտիկնալով՝ զՅիսուս օգնութեան կանչեց: Ան՝ թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցիր, բռնելով՝ ձեռքէն բռնեց: Նաւ մտած ատեննին՝ հոփը դադրելով՝ առդին ցամաք հասան, եւ ամէնքը Յիսուսի երկրպագութիւն ընելով՝ անոր Որդի Աստուծոյ ըլլալը խոստովանեցան:

5. Նախընթաց օրը հրաշքով կերակրուողները՝ երկրորդ առտու զՅիսուս նոյն տեղը չգտնելով՝ փնտռելու համար նաւով դիմաց կափառնաում անցան, ու ժողովրդանոցին մէջ գտնելով՝ հարցուցին որ Աւրգապետ, ե՞րբ հոս եկար. վասն զի առաքելոց դիմաց անցնելու ատեն՝ իր մէջերնին չըլլալը տեսած էին: Յիսուս մտքերնին գիտնալով՝ որ առջի օրուան նման ուրիշ հրաշք մ'ալ տեսնել եւ վայելել է, զիրենք յանդիմանեց, եւ հաղորդութեան խորհուրդն առջեւնին գնելով՝ զիրենք հոգի սնուցանող Աստուածային կերակրայն

հրաւիրեց : Գացէք գործեցէք, ըսաւ, բայց կորստական կերակրոյ համար չէ, այլ յաւիտեանս տեսող ու սնունդ տուող կերակրոյ համար, զորն որ ձեզի Որդին Մարդոյ (Քրիստոս) պիտի տայ : Ժողովուրդն աս խօսքերէն առնուելով՝ կ'ըսէին թէ Մովսէս անապատի մէջ մեր հարց մանանայ կերցուց. իսկ դուն այսպէս բան ըրած չես : Յիսուս անոնց պատասխան տուաւ որ Մովսէս ձեր հարցը ճշմարիտ երկնաւոր հաց չտուաւ. բայց ասիկա՝ իմ երկնաւոր Հայրս ձեզի կու տայ, եւ է աշխարհքիս կենդանութիւն տուող երկինքէն իջած հացը : Անոնք նոյն կենսատու հացն որ ուզեցին, Յիսուս՝ Էսեմ, ըսաւ. ինձի եկողը՝ մէյ մ'ալ չ'անօթենար, եւ ինձի հաւտացողը՝ ալ չիժարաւիր : Ետքը իր ճշմարիտ Մեսիա ըլլալուն եւ իր մարմինն ու արիւնը մեզի կերակուր տալուն վրայ խօսեցաւ : Աս բանս Հրէից եւ հաւատացելոցմէ շատերուն խիստ երեւնալով՝ փոխանակ մտքերնէն վեր եղածին յարգութեամբ հաւտալու՝ իրմէ բաժնուեցան. բայց առօքելոց մէջէն մէկն անոնց չհետեւեցաւ եւ Պետրոս ամենուն կողմանէ՝ Յիսուսին Աստուծոյ Որդին ըլլալը հրապարակաւ խոստովանեցաւ :

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ .

Քրիստոսի զորք-պետ-նէն երբորդ Կրիստոսի  
է- երբորդ շարիչ :

Ժ Ա . Գ Ա Ա

1. Փարիսեցիք դպրաց հետ Յիսուսի ինչ զանգատանք  
բոն : Քանանացի կինն ինչ ուղեց . ուզածն ընդունե-  
ցաւ : — 2. Խուլն եւ համրն ինչպէս բժշկեց : — 3.  
Երբ երկորդ անգամ հացը բազմացուց : — 4. Գաղ-  
մանունեայ կողմերն երթալու առնն՝ ճամբան ինչ ըրաւ :  
Ինթացիքա զով բժշկեց : — 5. Ինչ առթով զՊետրոս՝  
եկեղեցւոյ դուռն եւ իր փոխանորդն ըրաւ : Պետրոս Յի-  
սուսի հետ ինչ բանի վրայ կապեց եւ ինչ յանդիմանու-  
թիւն լսեց : — 6. Յիսուս ինչպէս այլակերպեցաւ : —  
7. Առանտն ինչպէս բժշկուեցաւ : Առաքեալք ինչու-  
շէին կրցեր զանիկա բժշկել : — 8. Պետրոս կաթառնա-  
ուս՝ երկգրամեանն ուստի գտաւ ու վճարեց : Յիսուս  
առաքելոց ինչ խոսակցութիւն ըրաւ :

1. Քանի մը փարիսեցիք դպրաց հետ մէկ  
եղած՝ առաքելոց անլուայ ձեռքով հաց ու-  
տելուն վրայ Յիսուսի ամբաստանութիւնն ըրին :  
Յիսուս անոնց կեղծաւորութիւնն ու աւելոր-  
դապաշտութիւնն երեսնին զարնելէն ու սորվե-  
ցնելէն ետքը՝ որ միայն մարդուն օրտէն ելած  
պղծութիւնն ու շարիքը զինքը կը պղծէ, ելաւ  
Տիւրոսի ու Սիզոնի կողմերը գնաց : Հոն տուն

1 Կ'երեւայ որ աս անգամ Յիսուս զտակի տօնին  
համար Երուսաղէմ գաղտուկ գացած եւ անմի-  
ջապէս տօնին օրն անցնելէն ետքը Գալիլեա դար-  
ձած ըլլայ . որովհետեւ Հրեայք զինքը բռնել ու  
մեռցընել կ'ուզէին :

մը մտաւ ու չէր ուզէր ինք զինքը մէկուն յայտնել . բայց կարելի չէրաւ : Տնէն ելած՝ առաքելոց հետ երթալու ատեն՝ քանանացի հեթանոս կին մը սկսաւ ետեւէն կանչել . Տէր, Որդի Գաւթի, որորմէ ինծի, դուստրս չարաչար կ'այսահարի : Առջի բերան Յիսուս պատասխան չտուաւ . առաքեալք իրեն կ'աղաչէին որ կնոջ խնդիրքը կատարէ, որպէս զի ետեւնէն չկանչէ : Նոյն միջոցին կինն Յիսուսին մօտիկնալով՝ երկրպագութիւն ըրաւ եւ ըսաւ . Տէր, ինծի օգնէ : Յիսուս անոր հաւատքը փորձելու համար, Հրէից սովորական խօսքին համաձայն, որ հեթանոսաց՝ Առապաշտչուն կը կանչէին, պատասխան տուաւ թէ Տղոց ձեռքէն հացն առնել, շներուն առջեւ նետել չիվայել : Աինք խոնարհութեամբ զրուցեց որ Տէր, շներն ալ իրենց տիրոջ սեղանէն ինկած փշրանքով կը կերակրին : Յիսուս անոր հաւատքը գովեց . Հաւատքդ մեծ է, ըսաւ, ու զածդ ըլլայ : Նոյն վայրկենին աղջիկը դիւին ձեռքէն մէկէն աղատեցաւ :

2. Յիսուս Տիւրոսէն՝ Գալիլեայի ծովին քովերը դառնալով՝ իրեն խուլ եւ համբ մարդ մը բերին, որ բժշկէ : Յիսուս զանիկա ամբոխէն դուրս հանեց, մատուրներն ականջը դրաւ ու թքաւ, եւ լեզուէն բռնելով՝ երկինք նայեցաւ, հռաչելով՝ Ա՛փփաթա, ըսաւ, որ Բացուէ՛ կը նշանակէ : Անմիջապէս ականջը բացուեցաւ, լեզուին կապանքն ալ քակուելով՝ սկսաւ ուղիղ խօսիլ :

3. Ասկից ետեւ Յիսուս Գալիլեայի ծովին մօտ լերան մը վրայ ելաւ նստաւ, ուր



խիստ մեծ բազմութիւն զլուխը թափեցաւ, որոնք՝ կաղ, կոյր, համբ ու միակողմանի եւ ուրիշ ամէն տեսակ հիւանդներ բերած էին, եւ զամէնքը բժշկեց: Ժողովուրդն աւ բանիս վրայ կը զարմանար ու զԱստուած կը փառաւորէր: Յիսուս առաքեալքը կանչեց՝ Աս ժողովրդեան վրայ կը զթամ, բսաւ, որովհետեւ երեք օր է քովս են եւ ուտելու բան չունին: Անօթի զիրենք արձակել չեմ ուզեր, չըլլայ թէ ճամբան քաղցէն շատ նեղին: Անոնք պատասխան տուին որ Անապատի մէջ այսչափ ժողովրդեան հաց ուստի գտնենք: Յիսուս հարցուց թէ Քանի՞ հաց ունիք: Անոնք՝ Եօթը հաց, քիչ մ'ալ ձուկ ունինք, բսին: Յիսուս ժողովրդեան հրամայեց որ գետինը նստին. հացն եւ ձուկն առաւ, զոհացաւ, կտրեց, առաքելոց տուաւ, որոնք ժողովրդեան բաժնեցին: Ամէնքը, որ առանց տղաքն ու կանայքն համբելու՝ 4000 հոգի էին, կշտանալու շափ աղէկ մը կերան եւ աւելցուկ կտորուանքէն եօթը զամբիւղ լեցուեցաւ: Յիսուս անսիջապէս ժողովուրդն արձակեց, առաքելոց հետ նաւ մտաւ, Մագդաղեայ կամ Գաղմանուհեայ կողմերը գնաց:

4. Ճամբան՝ Փարիսեցիքն ու Սադուկեցիքը՝ երկինքէն նշան խնդրելնուն համար՝ յանդիմանելէն եւ առաքեալքն անոնց խմբէն (վարդապետութենէն) զգուշացրնելէն ետքը, Բեթսայիդա եկաւ: Հոն առջևը կոյր մը բերին, որ բժշկէ: Յիսուս անոր ձեռքէն բռնեց մէկդի տարաւ, աչքը թքաւ, ետքը ձեռքն աչքին վրայ դնելով՝ հարցուց որ Բան մը կը

տեսնէս : Ան ալ պատասխան տուաւ որ Մար-  
գիկը՝ ծառերու նման կը տեսնեմ, որ կը պտը-  
տին : Չեոքը մէյ մ'ալ աչքին վրայ դրաւ ,  
եւ կոյրն ամէն բան պայծառ սկսաւ տեսնել :  
Յիսուս զինքը ճամբեց ու պատուիրեց որ ե-  
ղածը մարդու չպատմէ :

5. Անկէ կեսարեայ Փիլիպպեայ կողմերը  
գալով՝ հան առաքելոց հարցուց թէ Մար-  
գիկ զիս զո՞վ կը կարծեն : Անոնք պատասխա-  
նեցին . Ոմանք՝ Յովհաննէս Մկրտիչ , ոմանք՝  
Էզրիա , ոմանք ալ՝ Երեմիա կամ մարգարե-  
ներէն մէկը : Իսկ դուք զո՞վ կը կարծէք հար-  
ցուց նէ , Պետրոս առաքեալ ամենուն կող-  
մանէ պատասխան տուաւ որ Գու՛ն՝ Քրիստոս ,  
Աստուծոյ Որդին էս : Յիսուս անոր երանի  
տուաւ , որ իր երկնաւոր Հայրն աս բանս ի-  
րեն յայտնեց : Բայց՝ որպէս զի ըլլայ թէ ժո-  
ղովրդեան զրգռութեան առիթ տուած սե-  
պուի , անոնց ամենուն խտրի պատուիրեց որ  
աս բանս մէկու չյայտնեն : Նոյն ատեն զՊե-  
տրոս առաքեալ իր եկեղեցւոյն զլուին եւ իր  
փոխանորդն բրաւ , ըսելով՝ Գու՛ն էս վէմ ,  
եւ էս իմ եկեղեցիս աս վիման վրայ պիտի շի-  
նեմ , որուն՝ դժոխոց դռները (իշխանութիւնը)  
կարող պիտի չըլլան յաղթահարել . երկնից  
արքայութեան (եկեղեցւոյ) փականքը քեզի կու  
տամ . երկրի վրայ կապածդ՝ երկինք կապուած ,  
եւ երկրի վրայ արձակածդ՝ երկինք ալ ար-  
ձակած ըլլայ : Նոյն օրը միանգամայն անոնց  
յայտնեց թէ Երուսաղէմ՝ պիտ'որ երթայ ,  
չարչարանք քաշէ , մեռնի ու երկք օրէն յա-  
րութիւն առնէ : Պետրոս առաքեալ զինքը

Մէկ կողմը տանելով՝ սկսաւ հետը կազել որ ասոնք չըլան: Յիսուս զինքը վաւրնտեց. քովէս գնա, սատանայ, ըսաւ, մարդկօրէն եւ ոչ թէ ըստ Աստուծոյ խորհելովդ՝ ինծի գայթաղու- թիւն (մոլորեցուցիչ) կ'ըլլաս: Ետքը ամենուն մէկտեղ խրատ տուաւ որ փրկութեան հաս- նելու համար՝ պէտք է նեղութիւն քաշել. եւ աս խօսակցութեան մէջ զրուզեց որ իմ ե- տեւէս գալ ուզողը՝ պէտք է որ իր անձն ու- բանայ, իրան առնէ՝ ետեւէս գայ: Բոլոր աշ- խարհք շահել մարդուս ինչ օգուտ կ'ընէ, թէ որ հոգին կորսնցընելու ըլլայ:

Ք. Ասկէ վեց օր ետքը Յիսուս՝ Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հետն առաւ՝ առանձին բարձր լեռ մը (Թարոր) ելաւ աղօթելու: Նոյն ատեն իր դէմքը փո- խուեցաւ, արեւուն պէս լուսաւոր եղաւ, զգեստներն ալ՝ ձեան պէս ճերմկեցան: Միան- գամայն Մովսէս ու Եղիա երեւցան, սկսան հետն իր մահուան վրայ խօսիլ: Պետրոսին ու մէկալ երկու առաքելոց քունը նոյն միջոցին տարած ըլլալով՝ երբ որ արթնցան եւ Յի- սուսի փառաւորութիւնն ու քովինները տե- սան նէ, զարմացան մնացին: Երբ որ Մովսէս ու Եղիա գացին, Պետրոս Յիսուսին ըսաւ. Հոս աղէկ է. թէ որ կ'ուզես՝ երեք տաղաւար շինենք, մէկը՝ քեզի, մէկալներն ալ՝ Մովսիսի ու Եղիայի համար. ապշութենէն՝ ըսածը չէր գիտեր: Աս ըսելու ատեն՝ մէկէն լուսաւոր ամպ մը եկաւ՝ վրանին շուք բրաւ, ձայն մ'ալ լսուեցաւ որ Աս է իմ սիրելի ու հաճելի որ- դիս, անոր անսոցէք: Նոյն ձայնէն առաքե-

լոց վրայ մեծ վախ գալով՝ երեսներնուն վրայ  
ինկան: Յիսուս քովերնին գնաց, զիրենք քա-  
ջալերեց եւ ետքը պատուիրեց որ նոյն դէպքը  
մէկու շպատմեն մինչեւ որ յարութիւն առնէ:

7. Առնէն իջած ատեն՝ Յիսուսին առ-  
ջէւը մեծ բազմութիւն մ'ելաւ, որ յառաջ  
առաքելոց քովը ժողոված էր: Մէջերնէն մէ-  
կը ոտքն ինկած՝ կ'աղաչէր որ իր մէկհատիկ  
որդւոյն ողորմի, որն որ լուսնոտ էր ու դիւէն  
շարաշար կը տանջուէր. Առաքելոց բերի, ը-  
սաւ, բայց չկրցան բժշկել: Յիսուս թէ ա-  
նոր, թէ իր որդւոյն եւ թէ առաքելոց թե-  
րահաւատութիւնը յանդիմանեց, եւ հրամայ-  
եց որ տղան առջէւը բերէ: Տղան որ բերին,  
սատանան զինքն անանկ շարժեց՝ որ գետինն  
ինկաւ, սկսաւ թաւալիլ ու փրփրալ: Յիսուս  
հարցուց թէ Ո՛րչափ ատեն է որ աս բանս  
պատահեցաւ: Հայրը պատասխան տուաւ որ  
Պղտիկութենէ վեր, դէւը զինքն սպաննելու  
համար՝ երբեմն կրակի, երբեմն ջրոյ մէջ կը  
ձգէ: Ուստի թէ որ կրնաս, մեր վրայ զթայ  
ու մեզի օգնէ: Յիսուս պատասխան տուաւ  
որ Հաւտացողին՝ ամէն բան կարելի է: Ան ա-  
տեն մօրդն սկսաւ կանչել. Հաւատամ, Տէր,  
օգնէ անհաւատութեանս: Յիսուս տեսաւ որ  
բազմութիւնն երթալով կը շատնայ, դիւին  
բսաւ. Խնու եւ համր դեւ, կը հրամայեմ որ  
անկէ ելլես ու մէյ մ'ալ չմտնես: Գեւը մէ-  
կէն տղան սաստիկ շարշարեց ու կիսամեռ  
թողուց գնաց, մինչեւ շատերը կարծեցին որ  
մեռաւ. բայց Յիսուս ձեռքէն բռնեց վերցուց  
եւ այսպէս կատարեալ առողջացուց:

չտուին: Յակովբոս ու Յովհաննէս՝ իրմէ հրամանն ուղեցին որ երկինքէն կրակ իջեցընեն, զանոնք այրեն: Անիկա իրենց պատասխան տուաւ որ Ըսածնիդ չէք գիտեր. ես չէ թէ մարդիկները կորսընցընելու, հապա փրկելու եկած եմ: Այսպէսով անկէ էլան ուրիշ գեղ զացին: Ճամբան տասը բորտի հանդիպեցան, որոնք հեռուն կեցած՝ կը կանչէին թէ Աւարդապետ, մեզի ողորմէ: Յիսուս օրինաց համաձայն իրենց հրամայեց որ իրենք զիրենք քահանային ցուցընեն: Անոնք՝ երթալուն պէս բժշկուեցան: Բայց մէջերնէն մինակ մկը Յիսուսին եկաւ շնորհակալ եղաւ, որն որ սամարացի էր: Յիսուս հարցուց թէ Տասը հոգի չբժշկուեցան. մկայներն ո՞ւր են: Ետքը իրեն ըսաւ. Գնա, հաւատքդ զքեզ փրկեց:

Ձ. Տաղաւարահարաց տօնին վերջին օրերը Յիսուս տաճար գալով՝ սկսաւ ժողովրդեան վարդապետել: Անոնք վրան զարմանք կը ցուցընէին եւ շէին կրնար իմանալ որ այնչտի գիտութիւն ուստի ունեցեր է, որովհետեւ գիտէին որ ո՛չ մարդկային ուսում ո՛չ ալ իրենց օրէնքը սորված է: Իսկ Փարիսեցիք վրան կը նախանձէին, եւ անոր երկնաւոր վարդապետութիւններուն դէմ դնել չկրնալով՝ որոշեցին որ կերպով մը զինքն արդելեն եւ եթէ կրնան՝ նաեւ անոր կենաց որոգայթ դնեն: Բայց առջի փորձերնին չյաջողեցաւ. վասն զի Յիսուսի մեռնելու ատենը դեռ եկած չէր: Քահանայապետք ու դպիրք մարդ խրկած էին որ անոր վարդապետած ատեն՝ վրայ հասնին, զինքը բռնեն: Խրկուողները՝ խօսքերը զարմա-

Յ. Ասկէ կափառնաւ՝ դարձաւ ու սո-  
 փորական տուրքը վճարելու համար՝ Պետրոս  
 առաքեալը խրկեց որ երթայ ծով կարթ նե-  
 տէ, առջի բռնած ձկան բերանը բանայ, ելած  
 ստակը երկուքնեքնուն համար վճարէ: Հոս՝  
 Յիսուսին հասարակօրէն կեցած տունը՝ եր-  
 կնից արքայութեան (Եկեղեցւոյ) մէջ ո՛վ գլուխ  
 ըլլալուն վրայ առաքեալք մեծ խնդիր յարու-  
 ցին: Յիսուս թէպէտ արդէն իրենց առջեւ  
 Պետրոս առաքեալն ամենուն գլուխ դրած էր,  
 բայց որովհետեւ իր ամէն խօսքին ու գործքին  
 վրայ զաղտնութեան քող կար, որն որ Հո-  
 դուստոս սրբոյ գալէն ետեւ պիտի վերնար, անոր  
 համար մէջերնէն մէկը նախադասուած ըլլալը՝  
 դեռ չէին գիտեր: Յիսուս նոյն խնդիրը դա-  
 դրեցուց, անոնց աս հարկաւոր խրատը տալով՝  
 թէ Մէջերնէդ գլխաւոր ըլլողն՝ ինք զինքն ա-  
 մենէն պղտիկ բռնէ: Աս ըսաւ ու հոն կեցող  
 տղայ մը ցուցնելով՝ վրան աւելցուց որ եթէ  
 Տղոց պէս չէք ըլլար, երկնից արքայութիւնը  
 չէք կրնար մտնել: Ետքը գայթակղութեան  
 վրայ խօսեցաւ եւ սաստիկ փնասակար բան ըլ-  
 լալը յայտնեց: Եղբայրական յանդիմանութեան  
 վրայ ալ խօսք բացուելով՝ Պետրոս առաքեալ  
 հարցուց որ Տէր, եթէ եղբայրս եօթն ան-  
 գամ նորէն նորէն ինձի դէմ մեղանչելու ըլ-  
 լայ, իրեն ներե՞մ: Իսկ Յիսուս պատասխան  
 տուաւ թէ Եօթը չէ՝ եօթանասունուեօթն  
 անգամ ալ մեղանչելու ըլլայ, ներելու ես:  
 Որով ցուցուց որ միշտ ներելու ենք: Աս վախ-  
 ճանաւ երկնից արքայութիւնը թագաւորի մը  
 նմանցուց, որն որ իր ծառաներէն մէկուն

վրայ 10.000 քանքար առնելիք ունենալով՝ հրամայեց որ զինքը տնով տեղով ծախեն, որպէս զի կարող ըլլայ պարտքը վճարել: Բայց երբ որ ծառան ոտքն ինկաւ աղաչեց որ իրեն քիչ մը ատեն տայ, թագաւորը վրան զթալով՝ զինքը բոլոր պարտքէն ազատ բրաւ: Իսկ ծառան ուրիշէ մը 100 դահեկան առնելիք ունենալով՝ կը ստիպէր որ պարտքը շուտ վճարէ, մինչեւ բանտ ալ դնել տուաւ: Թագաւորն աս բանտ լսեց նէ՝ բարկացաւ, շնորհք ընդունող ծառան կանչեց, յանդիմանեց եւ զինքը բռնել կապել տուաւ, որ մինչեւ բոլոր պարտքը վճարէ նէ՝ անանկ մնայ: Ասանկ ալ, ըսաւ Յիսուս, իմ երկնաւոր Հայրս ձեզի կ'ընէ, եթէ որ ձեր ընկերին յանցանքը սրտանց չէք ներեր:

## Ժ Բ • Դ Ա Ս

1. Ետեւորոս ու Եովհաննէս ինչո՞ւ Սամարացոց այրին ուղեցին: Տասը բորոսներն ինչ կերպով բժշկուեցան: — 2. Փարիսեցիք Յիսուսի դէմ ինչ մտածեցին: — 3. ՉՅիսուս ինչո՞ւ քարկոծել կ'ուզէին: Մեղաւոր կինը մահուանէ ինչպէս ազատեցաւ: — 4. Ի ծնէ կոյրն ինչպէս բժշկուեցաւ. ինչո՞ւ Հրէից հասարակութենէն դուրս ելաւ: — 5. Օրէնսագետին մէկը զՅիսուս փորձելու համար ինչ հարցոց եւ ինչ պատասխան տուաւ: — 6. Յիսուսի եօթմանասուներկու աշակերտներն ինչ ըրին:

1. Յիսուսի աշխարհքէս ելլելու ատենը մտտիկնալով՝ միտքը դրաւ որ մէյ մ'ալ Արուսաղէմ երթայ եւ առջեւէն քանի մը հոգի խրկեց որ իրեն տեղ գտնեն: Ասոնք Սամարիայի գեղ մը հասնելով՝ ընակիչները Յիսուսին տեղ

նալով մտիկ ընելէն ետեւ՝ եկան ըսին որ անոր խօսածներուն պէս մէկը խօսած չէ: Քահանայապետք ու դպիրք զիրենք յանդիմանեցին եւ ըսին թէ Յած ժողովրդէն զաս՝ մէկը ան խաբեբային հաւտացած չէ: Նիկողեմոս՝ որ արդէն յառաջագոյն գաղտ Յիսուսի եկած եւ անոր վարդապետութիւնները լսած ու հաւտացած էր, իրենց ըսաւ որ Մէկու մը վրայ աղէկ քննութիւն չըրած՝ դատապարտելն օրէնքը կ'արդելէ: Անոնք պատասխան տուին որ Անիկա Գալիլեացի է. Գիրքը քննէ նայէ, ան տեղէն մարդարէ չ'ելլեր:

**Յ.** Յիսուս նոյն տօնին օրերն իր Աստուծոյ Որդի ըլլալը յայտնի քարոզած ատեն՝ Հրեայք զինքը քարի բռնել ու զեցին. ան ալ տաճարը թողուց Չիթենեաց լեռն ելաւ, գիշերը հոն անցուց: Երկրորդ օրը նորէն տաճար եկաւ նէ, դպիրք ու Փարիսեցիք՝ ծանր մեղաց մէջ բռնուած կին մը բերին առջեւը, եւ հարցուցին որ Աւրդապետ, Մովսէս կը հրամայէ որ այսպիսիները քարկոծուին. դուն ինչ կ'ըսես: Աս ըրին որպէս զի եթէ զինքն իր քաղցր բնաւորութեան համաձայն՝ ազատելու ըլլայ, իրրեւ օրինաց հակառակող՝ մահուան դատապարտեն: Իսկ Յիսուս զետինը նայելով՝ իրենց գործած մեղքերը նշանակեց, որոնք կնոջ գործածէն աւելի ծանր էին: Աւ վերջապէս գլուխը վերցուց ըսաւ որ Մէջերնէդ անմեղ ըլլողը՝ նախ սկսի քարկոծելու: Ետքը գլուխը ծռեց իր գործքին նայեցաւ: Անոնք Յիսուսին գրածներէն յանցանքնին տեսնելով՝ մէկիկ մէկիկ դուրս ելան, եւ ինքն ու կինը մինակ մնացին:



Ան ատեն Յիսուս կնոջն ըսաւ . Ո՛ր է, զքեզ մէկը չդատապարտեց . ես ալ չեմ դատապարտեր . զնա ու մէյ մ'ալ մի մեղանչեր :

4 . Յիսուս տաճարէն երթալու ատեն՝ ի ծնէ կոյրի մը հանդիպեցաւ : Առաքեալք իրեն հարցուցին որ Անոր կոյր ծնանելուն յանցանքն որո՞ւն է, իրե՛ն՝ թէ ծնողացը : Յիսուս պատասխան տուաւ թէ Ո՛չ իրենց ո՛չ ասոր . այլ կոյր ծնաւ՝ որպէս զի Աստուծոյ գործքը վրան երեւայ : Ետքը զեփնը թքաւ՝ կաւ շինեց, կուրին աչացը քսեց ու պատուիրեց որ Սելովամայ աւազանը լուացուի . կոյրը զնաց լուացուեցաւ եւ աչուրները բացուեցան : Զինքը ճանչցողները վրան կը զարմանային ու կը տարակուսէին որ Արդեօք ան է թէ չէ : Անոր համար պատմել տուին թէ ինչպէս բժշկուեցաւ . ետքը զինքն առին Փարիսեցւոց տարին : Աս բժշկութիւնը շարաթօր կատարուած ըլլալով՝ ոմանք կ'ըսէին թէ զինքը բժշկողն Աստուծմէ իրկուած շիկրնար ըլլալ, վասն զի շարաթօր կը պղծէ . ոմանք ալ կ'ըսէին թէ Մեղաւոր մարդն ասանկ հրաշք ինչպէս կրնայ գործել : Կոյրին ալ հարցուցին թէ զինքը բժշկողը՝ զո՞վ կը կարծէ . անիկա՝ Մարգարէ է, ըսաւ : Անոնք չհաւտացին՝ ծնողքը կանչեցին, հարցուցին որ Ստուգիւ ասիկա ձեր որդին է եւ աչուրներն ինչպէս բացուեցան : Անոնք Հրէիցմէ վախնալով պատասխան տուին թէ Գիտենք որ մեր որդին է եւ կոյր ծնաւ . բայց ինչպէս բժշկուած ըլլալը չենք գիտեր, իրեն հարցուցէք : Հրեայք նորէն կուրին հարցուցին թէ Զքեզ ո՞վ բժշկեց, եւ իրենց կա-

մայ համաձայն պատասխան չառնելուն համար՝ զինքն իրենց հասարակութենէն հանեցին : Յիսուս ուրիշ անգամ իրեն հանդիպելով՝ իր Մեսիա ըլլալն յայտնեց . ան ալ հատուց եւ իրեն երկրպագութիւն ըրաւ :

**5** . Օրէնսդէտին մէկը՝ զՅիսուս փորձելու համար որ արդեօք օրէնքը զիտէ՞ թէ չէ , հարցուց . Աւորդապետ , յաւիտենական կեանք ժառանգելու համար՝ ի՞նչ պէտք եմ գործել : Յիսուս պատասխան տուաւ թէ Օրինաց մէջ ասոր վրայ ի՞նչ գրուած է : Անիկա՝ Գրուած է որ , ըսաւ , Քու Աստուածդ՝ հոգւով եւ մարմնով եւ ամենայն զօրութեամբդ սիրես , ընկերդ ալ՝ քու անձինդ պէս : Յիսուս պատասխանեց որ Աղէկ ըսիր . ասանկ ըրէ , յաւիտենական կեանքը կը գտնես : Օրէնսդէտը հարցուց թէ Ընկերս ո՞վ է : Յիսուս անոր ասուակով պատասխան տուաւ : Մարդուն մէկը Արուսազէմէն Արիքով երթալու ատեն՝ աւազակներու ձեռք ինկաւ , որոնք զինքը մերկացուցին , վերաւորեցին ու կիսամահ թողուցին : Քահանայ մը անկէ անցնելով եւ ան վերաւոր մարդը տեսնելով՝ թողուց զնաց . նմանապէս Ղեւտացի մը նոյնը տեսաւ՝ անցաւ զնաց . ետքը Սամարացի մը անկէ անցնելով՝ վերաւորած մարդն որ տեսաւ , վրան խղճաց , վէրքին վրայ զինի ու ձէթ դրաւ կապեց , զրաստ հեծցուցած՝ պանդոկ մը տարաւ դարմանեց : Արիքորդ օրը երթալու ատեն՝ պանդոկապետին հանեց երկու դահեկան տուաւ , ըսելով՝ Իրեն դարման տար . վրան ուրիշ ինչ ծախք որ կ'ընեն՝ երկրորդ անգամ գալուօ կը հասուցա-

նեմ: Յիսուս դարձաւ օրէնսդիտին հարցոց .  
 Ան երեքին մէջէն սրբ զիրաւորուողին ընկեր  
 կ'երևայ: Ան ալ պատասխանեց թէ Սամա-  
 րացին: Յիսուս ան ատեն ըսաւ . Գնա դուն  
 ալ անանկ բրէ: Ասով իբրև թէ ըսաւ որ  
 Հրէի ու Հեթանոսի նկատում չընելով՝ ամե-  
 նուն օգնելու է՝ երբ որ ձեռքերնէս կու գայ .  
 ինչու որ ամէնքս ալ իրարու ընկեր ենք:

6. Յիսուս՝ տասուերկու առաքելայներէն  
 զաւ՝ 72 աշակերտ ալ ընտրած էր, որոնց ա-  
 ռաքելոց տուած խրատները տալէն ետեւ՝ եր-  
 կու երկու առջեւէն խրկեց ան քաղաքներն  
 ու զեզերը պտրտելու, ուր որ ինքն ալ ետքէն  
 պիտի հանդիպէր: Ասոնք երկայն ատեն անց-  
 նելէն ետեւ՝ ուրախութեամբ եկան ըսին որ  
 Տէր, նոյն իսկ սատանաները քու անուամբդ  
 մեզի կը հնազանդին: Յիսուս զիբնք խրատեց,  
 որ սատանաներուն իրենց հնազանդելուն վրայ  
 չուրախանան, հապա անոր վրայ ուրախանան  
 որ անունին երկինք գրուած է:

### Ժ Գ . Գ Ա Ս

1. Յիսուս աղօթք ընելու վրայ ինչ խօսեցաւ: — 2.  
 Ապաշխարութեան վրայ ինչ առակ բերաւ: — 3. Մե-  
 ծասան ու Ղապարտին առակն ինչ է: — 4. Միայն  
 հարստութիւն ժողովելու ետեւէ իյնողներուն վրայ ինչ  
 առակ բերաւ:

1. Յիսուս առանձին տեղ մը աղօթելէն  
 ետեւ՝ իր աշակերտներէն մէկը խնդրեց որ ի-  
 րենց աղօթք ընել սորվեցընէ: Ինքն ալ աս  
 առթով աղօթքի վրայ զանազան բաներ վար-  
 դապեաեց, որոնց նայելով՝ աղօթքներնուս մէջ՝

երկինք ու երկիր ստեղծող Աստուծոյ՝ Հօր անունը պիտի տանք, եւ հետն այնպէս վստահութեամբ պիտի խօսինք, ինչպէս որ բարի որդի մը՝ իր բարի հօրը հետ կը խօսի: Ամէնքն աւ Հօր որդւոց պէս պիտի սիրենք, անանկ որ ամէն անգամ աղօթք բրած ստեննիս՝ անոնք ալ մեկտեղ պիտի իմացուին: Աղօթքներնուս մէջ հողեւոր բարիքէն զատ՝ մարմնաւոր բարիք ալ կրնանք խնդրել, միայն թէ անոնք Աստուծոյ փառաց ծառայեն: Իսկ աղօթքի մէջ յարատեւութիւն ունենալու վրայ աւ առակս ալ բերաւ: Քաղքի մը մէջ դատաւոր մը կար, որ ոչ Աստուծմէ վախնալ ունէր ոչ ալ մարդիկներէն ամբշնալ: Որբեւարի կին մ'ալ կու գար ամէն օր կ'աղաչէր որ իրեն դատաստանը կտրէ: Երկայն ատեն ասանկ երթալէն ետեւ՝ օր մը դատաւորն ինք իրեն ըսաւ. թէպէտ ես ոչ վախնալ ունիմ ոչ ալ ամբշնալ, բայց աւ որբեւարիին դատաստանը կտրեմ ու ձեռքէն ազատիմ: Յիսուս ասկէ հետեւցուց որ եթէ անիրաւ դատաւորը շատ աղաչելուն չկրցաւ դէմ դնել, հապա Աստուած ինչպէս չորրորմի աղաչողին: Աս ալ աւելցուց թէ Երբ որ ձեզմէ երկու հոգի կը միաբանին, իմ՝ երկնաւոր Հայրս իրենց ամէն խնդրուածը կը կատարէ. վասն զի ուր որ երկու կամ երեք հոգի իմ անուամբս միաբանած են՝ ես ալ մէջներնին եմ:

Չ. Ազգայնարութեան վրայ ալ զանազան օրինակներ բերաւ, որոնց գլխաւորը՝ հետեւեալն է: Մարդ մը երկու որդի ունէր, ըսաւ. օր մը պղտիկն իրեն իյնալու ժառանգութիւնը

Հօրմէն խնդրեց առաւ, հեռու քաղաք մը գնաց, մնխելով բոլորը կերաւ լմննցուց: Առջն միջոցին սաստիկ սով ելլելով եւ ուտելու հաց չկրնալով գտնել՝ մէկուն քով ծառայութեան մտաւ, որն որ զինքն իր ազարակը խրկեց խողերն արածել կու տար: Իսեղծը փորը կշտացընելու համար խողերուն կերած եղջիւրէն պարտաւորեցաւ ուտել, բայց ան ալ տուող չէր ըլլար: Ասանկ ողորմելութեան մէջ՝ հօրը տունը միտքն ինկաւ, ուր որ ծառաներն իսկ հանգիստ կ'ապրէին. ուստի որոշեց որ երթայ հօրն աղաչէ որ ծառայի տեղ զինքը տուն առնէ: Հայրը զինքը հեռուէն տեսնելուն պէս՝ վաղեց զիզը պլլուեցաւ. տղան ըրածին թողութիւն խնդրեց եւ ուզեց որ զինքը ծառայի տեղ ընդունի: Իսկ հայրն անոր առջի զգեստները հաղցուց եւ գիրցուցած եզր կտրելով՝ մեծ սեղան տուաւ: Աս միջոցին՝ երէց եզրայրը տուն գալով եւ ուրախութեան ձայնն առնելով՝ երբ որ ծառային հարցուց իմացաւ որ եզրօրը համար է, նեղացաւ ու հօրը զրուցեց թէ Այսչափ ատեն ես քեզի ծառայեցի ու հնազանդեցայ, երբեք ուլ մը տուած չունիս՝ որ բարեկամներուս հետ ուրախանամ. իսկ ծառանգութիւնը մնխողին՝ գիրցուցած եզր կտրեցիր: Հայրը պատասխանեց. Արդեակ, ամէն ունեցածս քուկդ է. բայց եզրօրդ համար պէտք է որ աս ուրախութիւնն ընեմ, որովհետեւ կորսուած էր ու գտնուեցաւ:

**Յ.** Իսկ արծաթասէր Փարիսեցւոց աս առակը բերաւ: Հարուստ մարդ մը կար, որ կը հազուէր կը կասուէր, կ'ուտէր կը խմէր:

Անոր դրան քոյր Ղազար անուն աղքատ մը կը կենար, որն որ մեծատան սեղանին փշրանքներովը կ'ապրէր. բայց ան ալ տուող չկար. շները կու գային վէրքերը կը լցէին: Արկուքն ալ մեռնելով՝ մեծատունը դժոխք ինկաւ, ուսկից տեսաւ աղքատ Ղազարը՝ որ Աբրահամայ գիրկը կը հանգչէր, եւ անոր աղաչեց որ բերնին պապակն անցընելու համար՝ Ղազարը խրկէ, որ մատին ծայրովն իրեն քիչ մը ջուր տայ: Աբրահամ՝ 2'ըլլար, ըսաւ. միտքդ բեր մէյ մը աշխարհք ըրածներդ եւ ասոր կրածները: Ան ատեն աղաչեց որ գոնէ զՂազար իր եղբարցը խրկէ, դժոխքին տանջանքն իմացընէ, որպէս զի գէթ իրենք ալ հոն չեյնան: Աբրահամ պատասխան տուաւ որ Աթէ անոնք լսած ու կարդացած խրատնին չեն պահէր, ուրիշ բան պարապ է. մարդ մը յարութիւն ալ առնէ՝ երթայ իրենց պատմէ, մտիկ չեն ըներ:

4. Անգամ մը մէկը իրմէ խնդրելով որ եղբայրը՝ ժառանգութիւնը մէջերնին բաժնելու յորդորէ, աս առակը բերաւ: Հարուստ մարդու մը անդն առատ պտուղ բերելով՝ սկսաւ մտածել որ անոնք ինչ ընէ, որովհետեւ մտքէն կ'ըսէր թէ անոնք պահելու տեղ չունի: Վերջապէս որոշեց որ շտեմարանը քակէ, աւելի ընդարձակը շինել տայ, որպէս զի ցորենն ու երկրին մէկալ բարութիւնները հոն պահէ, եւ ինք իրեն ըսէ թէ Ամեն տեսակ բարիքն ունիս, որ քեզի տարիներով կը բաւեն. նստէ կեր խմէ, հանգիտող նայէ: Բայց ինք ասոնք կարգի գնելու ատեն՝ Աստուած

իրեն ըսաւ . Ա՛նխելք , աս գիշեր հոգիդ պիտի առնեն , ժողված հարստութիւններդ որո՞ւն պիտի մնան : Աոյնը կը պատահի , ըսաւ Յիսուս , անոնց՝ որոնք միայն գանձ ժողվելու կը նային ու Աստուծոյ առջեւ արդիւնք չունին :

Ժ Գ . Գ Ա Ս

1 . Հրեայք զՅիսուս երկրորդ անգամ ինչու քարկոծել ուզեցին . ինք ուր գնաց եւ ինչ ըրաւ : — 2 . Հարուստ մարդը Յիսուսին ինչ ըսաւ եւ ինչ պատասխան առաւ : Պետրոս ինչ հարցուց : Մշակներուն առակն ո՞րն է : — 3 . Յիսուս Փարիսեցոց անձնասիրութիւնն ինչպէս խայտարակեց :

1 . Յիսուս ձմեռը նաւակատեաց տօնին օրերը տաճարին՝ Սրահ՝ Սողոմոնի ըսուած տեղը պտըտելու ատեն՝ Հրեայք զլուխը ժողվեցան ըսին որ Եթէ Մեսիան ես նէ , յայտնի ըսէ : Յիսուս պատասխանեց . Էս զիս արդէն բաւական յայտնած եմ , բայց դուք չէք ուզեր իմանալ , վասն զի երկնաւոր Հօրս ինձի տուած ոչխարներէն չէք . ես ու Հայրս մէկ ենք : Հրեայք մէկէն զինքը քարկոծել ուզեցին : Յիսուս զիրենք թողուց , Յորդանանէն անցաւ՝ ան կողմը գնաց , ուր որ յառաջ Յովհաննէս կը մկրտէր : Հոն շատերն իրեն կու գային կը հաւատային : Ասեւ տղաք ալ բերին որ ձեռքը վրանին գնէ եւ աղօթէ : Ասաք ալք տղաքը կ'արգելէին . խկ Յիսուս նեղացաւ . Թող տուէր որ , ըսաւ , ինձի գան . երկնից արքայութիւնն այսպիսիներուն է : Ստուգիւ կ'ըսեմ , որ աս տղոց պէս երկնից արքայութիւնը չընդունողը՝ հոն չիկրնար մշտնել : Ետքը տղաքը գիրկն առաւ օրհնեց :

2. Յիսուս նորէն Յորդանանէն ասդին անցնելով՝ Հրէաստանի սահմանն եկաւ : Հոն հարուստ մը հարցուց թէ Յախտենական կեանք ժառանգելու համար՝ ինչ ընեմ : Յիսուս առջեւը պատուիրանները դրաւ՝ որ պահէ : Անիկա պատասխանեց թէ՛ Պղտիկուց վեր անոնք կը պահեմ : Ան ատեն Յիսուս ըսաւ . Եթէ կատարեալ կ'ուզես ըլլալ, հարստութիւնդ թող՝ ետեւէս եկուր : Աս խօսքը հարստին բանին ձեռք չտալով՝ ձայն չհանեց, արամած ելաւ զնաց : Յիսուս մեծ սրտի ցաւով առաքելոց իմացուց թէ յոյսերնին ընչից վրայ զնող հարուստներուն արքայութիւն երթալն որչափ դժուարին է : Ան ատեն Պետրոս հարցուց որ Մենք ամէն բաներնիս թողուցինք ետեւէդ եկանք, մեզի ինչ պիտի ըլլայ : Ան ալ իրենց վերջի դատաստանին օրը տասուերկու ամիսս նստած՝ ուրիշները դատելու իշխանութիւն տուաւ, եւ իր անուան համար հայրը մայրը, եղբարքը, քոյրը, կիներն եւ կամ՝ որդիքը թող տուողին՝ աս աշխարհքիս մէջ անոնց հարիւրապատիկն, անդիի աշխարհքն ալ յախտենական կեանք խոստացաւ : Միայն թէ, ըսաւ, շատերը՝ որ առաջ էին, ետ պիտի մնան, ու ետ մնացողներն՝ առաջ պիտ'որ անցնին : Ասոր՝ մշակներուն առակը բերաւ : Այգւոյ մը տէրն առտու մ'ելաւ իր այգւոյն համար մշակներ բռնեց, դահեկանի մը խօսք կապելով : Ետքը ժամը երեքին, վեցին, իննին, տասնումէկին նորէն մարդիկ գտաւ այգին խրկեց : Իրիկունը վերջի եկողներէն սկսեալ ամենուն ալ հաւասար մէյ մէկ դահեկան վարձք տուաւ : Առջի



Եկողներն իսկզբան կարծեցին որ իրենց աւելի պիտի տայ . եւ երբ որ յոյսերնին պարագ էլաւ, սկսան տրտնջել : Ան ատեն տանուտէրն ըսաւ . Հետերնիդ մէկ դահեկանի գին չկտրեցի՛, առէք գացէք :

Յ . Անգամ մ'ալ փարիսեցւոց եւ անոնց նման կեղծաւորաց անձնասիրութիւնը յանդիմանելու համար՝ աս առախ բերաւ : Օր մը, ըսաւ, երկու հոգի տաճար գացին աղօթելու : Մէկը՝ որ փարիսեցի էր, ոտքի վրայ կեցած՝ ասանկ կ'ըսէր . Աստուած իմ, քեզի փառք կու տամ որ ուրիշ մարդիկներու պէս՝ գող, անիրաւ, խառնագնաց կամ աս մարտաւորին պէս չեմ . հասցա շարաթը երեք անգամ պահք կը բռնեմ եւ ամէն ստացուածէս տասանորդ կու տամ : Իսկ մէկայն՝ որ մարտաւոր էր, եւ ոչ աչքը վեր վերցընելու կը համարձակէր, ու կուրծքը զարնելով՝ օրտանց կ'ըսէր . Աստուած իմ, ինծի ողորմէ : Ստուգիւ կ'ըսեմ որ, ըսաւ Յիսուս, վերջինն առջինէն աւելի արդարացած տուն դարձաւ : Ասան զի ինք զինքը բարձրացընողը պիտի խոնարհի, եւ խոնարհեցընողը պիտի բարձրանայ :

Ժ Ե . Գ Լ Ս

1. Յիսուս Ղազարոսին հիւանդանալն ուր լսեց, զիքն ինչպէս յարոյց : — 2. Սողոմ ո՛վ է . Յիսուսն ինչ ինչոքեց եւ ինչ պատասխան ասաւ : Զակբէս ո՛վ է . Ինչպէս դարձաւ : Բարախէս ինչպէս բժշկուեցաւ :

1. Յիսուս երբ որ դեռ Յորդանանու քովն էր, Ղազարոս իր բարեկամը ծանր հիւրնդնալով՝ անոր Մարիամ ու Մարթա քոյ-

րերն իրեն իմացուցին որ եղբայրնին հիւանդ է: Յիսուս երկու օր մ'ալ հոն ուշանալէն ետեւ՝ առաքելոց ըսաւ թէ Հրէաստան երթամ, որ զՂազարոս արթընցնեմ: Անոնք ըսածք չհասկընալով՝ սկսան զարմանալ: Անտան յայանի ըսաւ թէ Ղազարոս մեռաւ. բայց ես ուրախ եմ, որ ասով ձեր հաւատքն աւելի պիտի հաստատուի: Ասանկով ճամբայ ելաւ Բեթանիա հասաւ Ղազարոսին տունը. որն որ չորս օր յառաջ մեռած ու թաղուած էր: Մարթա զիմացք վազեց. Տէր, ըսաւ. հոս ըլլայիր նէ՛ եղբայրս չէր մեռներ. բայց կը հաւատամ որ կ'ուզես նէ՛ կրնաս ողջընցնել: Աս ըսաւ ու զնաց Մարիամ քոյրը կանչեց. սղաւոր բարեկամներն ալ լալով հետն եկան: Ասկէ Յիսուսին սիրան ալ ելլելով՝ լացաւ եւ հարցուց թէ Ո՞ր թաղեցիր: Անոնք զինքը գերեզմանը տարին: Յիսուս վրայի քարը վերցրնել տուաւ ու ամուր ձայնով կանչեց. Ղազարէ, դուրս ել: Մէկէն մեռելը պատանքովն ելաւ կեցաւ: Յիսուս հրամայեց որ պատանքը քակեն: Աս առթով դարձող ու Յիսուսին հաւատացող շատ եղաւ. բայց ոմանք զացին բանը Փարիսեցւոց իմացուցին. անոնք ալ քահանայապետներուն հետ խորհուրդ բրին որ զՅիսուս բռնեն մեռցնեն: Անոր համար Յիսուս երեսը ծածկեց, առաքելոց հետ Եփրայիմ գեղը զնաց. Փարիսեցիք ու քահանայապետք խտտիւ պատուիրեցին որ անոր ուր ըլլայն իմացողը՝ գայ իրենց զրուցէ:

**2.** Յիսուս քիչ մը ատեն Եփրայիմ կենայէն ետեւ՝ Երուսաղէմ գալու նորէն ճամ-

բայ ելաւ : Կոյն ատեն Սողոմէ՝ Չերեղեայ որդւոց մայրն՝ իր որդիքներէն զբողոսած՝ Յիսուսին ոտքն ինկաւ, աղաչեց որ թագաւոր նստելու ըլլայ նէ՝ իր երկու որդիքը՝ Յակովբոս ու Յովհաննէս՝ աջ ու ձախ դին նստեցընէ : Յիսուս գիտնալով որ աստաջարկութիւնն անոր որդւոց զխուն տակէն է, պատասխանն անոնց ուղղեց ու սորվեցուց որ իր թագաւորութեան (Աշկեղեցւոյն) մէջ՝ իշխելը՝ չարչարանք քաշելու, նեղութեանց համբերելու եւ ինք զինքը զոհելու վրայ կայացած է : Ասանկ խօսակցութեամբ ճամբանին յառաջ տանելով՝ Երիբով մտտեցան : Հոն ճամբուն վրայ մուրացիկ կոյր մը բժշկեց : Աստաթով մեծ բազմութիւն զլուխը ժողվեցաւ : Չակքէոս մարտապետն ալ զՅիսուս տեսնել ուղելով եւ հասակին կարծութեանը համար չկրնալով՝ ծառի մը վրայ ելաւ : Յիսուս զինքը տեսաւ ու կանչեց լսելով՝ Այսօր կերակուրը քու տունդ պիտ'որ ուտեմ : Չակքէոս զինքն ուրախութեամբ ընդունեցաւ եւ կերակրոյ ատեն խօսք տուաւ որ ունեցածին կէսը աղքատաց տայ եւ էթէ անիրաւութիւն բրած է նէ՝ չորեքպատիկը հատուցանէ : Յիսուս զլուխը մեծ բազմութիւն ժողված Երիբովէն ելելու ատեն՝ Բարտիմէոս կոչըր մէկ ուրիշ կոյր մուրացկանի հետ իր անցնիլը լսելով՝ սկսան կանչել : Որդի Դաւթի, մեզի ողորմէ : Թէպէտ ժողովուրդն իրենց ձայնը կտրել տալ կ'ուզէր, բայց անոնք մտիկ չէին ըներ : Յիսուս կեցաւ, զիրենք առջեւը բերել տուաւ եւ հարցուց որ ինչ կ'ուզեն : Անոնք ալ՝ Ա'ուզենք որ աչուրնիս

բացուի, ըսին: Յիսուս վրանին զթացաւ. ձեռքով աշուրնին շոշափեց ու ըսաւ. Հաւատքնիդ զձեզ փրկեց, հանգիստ տեղերնիդ դացէք: Եւ այն ատեն մէկէն սկսան աղէկ տեսնել եւ ետեւէն գային:

## Ժ Զ . Գ Ը Ս

1. Յիսուս Սիմոն բորտին տունը կերակուր կերած ատեն՝ Ինչ պատահեցաւ: — 2. Երուսաղէմ Ինչպէս մտաւ: — 3. Տաճարին մէջ Ինչ ըրաւ: Հեթանոսք ատակեց ձեռքով իրմ Ինչ խնդրեցին: Յիսուս Ինչ խոսեցաւ:

1. Չատկի տօնէն վեց օր յառաջ Յիսուս նորէն Բեթանիա եկաւ, ուր որ զՂազար յարուցած էր: Հոն Սիմոն անունով բորտ մը՝ որն որ քիչ մը յառաջ Յիսուսէն բժշկուած էր, զինքն առաքելոց հետ սեղանի հրաւիրեց. հրաւիրուողներուն մէկն ալ Ղազարն էր, որուն Մարթա քոյրը սեղանին կը ծառայէր, իսկ Մարիամ քոյրը Յիսուսին ոտքն ազնիւ եղով օծեց ու գլխի մաղերովը սրբեց շորքուց. եղին աւելցածն ալ գլուխը թափեց: Յուդա Իսկարիովտացին ըսաւ որ Մեղք այնչափ եղին, կրնար ծախուիլ ու գինն աղքատաց ողորմութիւն տրուիլ: Բայց աս խօսքը՝ չէ թէ աղքատաց վրայ գութ ունենալէն ըսաւ, այլ որովհետեւ անոնց ստակ բաշխելու արկզն ինք կը կրէր, կը յուսար որ անոնց ողորմութենէն իրեն ալ մաս կրնայ հանել: Առաքելոց մէջէն ոմանք անոր խօսքին իրաւունք տուին: Իսկ Յիսուս Մարիամին կողմը բռնելով՝ ըսաւ. Ինք աղէկ գործք ըրաւ: Աղքատներն ամէն ատեն հետերնիդ են, երբ

որ կ'ուզէք՝ կրնաք անոնց ողորմութիւն տալ . բայց ես միշտ հետեւնիդ չեմ : Հրեայք Յիսուսին Բեթանիա ըլլալն իմացան նէ՝ հոն կը վազէին , որպէս զի թէ զինքը եւ թէ զՂազար տեսնեն : Անոր համար քահանայապետք մտածեցին որ Ղազարն ալ մեռցնեն , վասն զի անոր պատճառաւ շատերը Յիսուսի կը հաւատային :

2. Երկրորդ օրը Յիսուս առաքելաց հետ Երուսաղէմ՝ գալու ճամբայ ելաւ . Չիթենեաց լերան մօտ Բեթփազէ գեղը մօտիկցաւ նէ՝ առաքեալներէն երկու հոգի խրկեց ըսելով՝ Չեր գիմացի գեղը գացէք . հոն մտածնուդ պէս՝ կապուած էշ մը պիտի տեսնէք , քուրակն ալ քովը . քակեցէք ինծի բերէք : Իսկ թէ որ հարցնող կ'ըլլայ թէ ինչու կը քակէք , ըսէք որ իր տիրոջը պէտք է , անմիջապէս կը թողու : Անոնք գացին էշն ու քուրակը քակեցին բերին , եւ Յիսուսը հեծցուցած՝ սկսան Երուսաղէմ գալ : Չիթենեաց լերան գլուխը հասան նէ՝ առաքեալք ու Յիսուսին առջեւէն ետեւէն եկող ժողովուրդն սկսան կանչել թէ Օրհնութիւն Որդւոյ Գաւթի , օրհնեալ եկեալ յանուն տեսան , օրհնութիւն ի բարձունս : Հոն Յիսուս զԵրուսաղէմ տեսնելով՝ նոյն քաղքին գլուխը գալիքը մարգարէացաւ , եւ սիրտն ելլելով՝ լացաւ : Յիսուսին Երուսաղէմ՝ գալուն լուրը տարածուելով , զատկի տօնին պատճառաբոյրը հոն ժողոված բազմութիւնն անմիջապէս արմաւենիի ու ձիթենիի ծիւղեր առին , զինքը գիմաւորելու եկան , եւ՝ Ովսաննա որ գաս յանուն Տեսան , թագաւոր Իսրայելի , կը

կանչէին: Շատերը զգեաւորն ճամբուն վրայ կը փռէին, շաւերն ալ ծառերէն դալար ծիւղեր կտրելով՝ անոր անցնելու ճամբուն վրայ կը տարածէին: Յիսուս անոնց հետ Եւրուսաղէմ՝ որ մտաւ, բոլոր քաղաքն ոտք ելաւ, եւ իրարու կը հարցընէին թէ Աս ո՞վ է. հետն եկողներն ալ պատասխան կու տային որ Յիսուսն է՝ Գալիլեայի Նազարեթէն եկող մարգարէն: Իսկ Փարիսեցիք կատաղած՝ իրարու կ'ըսէին որ Բան մը չկրցանք ընել, բոլոր աշխարհք անոր ետեւէն կ'երթայ:

Յ. Յիսուս շիտակ տաճար գնաց: Առջրերն ու կաղերն՝ որոնք սովորաբար տաճարին դրանքով բաղմուտեամբ կը կենային, իրեն եկան, զիրենք բժշկեց: Ասոր վրայ ժողովուրդն աւելի ուրախացաւ եւ նոյն իսկ տղաք ալ ցնծութեան ձայներով իրեն՝ Օրհնութիւն Արդւոյ Գաւթի, կը կանչէին: Քահանայապետք ու դպիրք բարկութիւննին չկրցան բռնել, մէջերնէն ոմանք տղաքը ցուցընելով՝ Յիսուսին ըսին թէ Չէս լներ, ինչ կ'ըսեն: Յիսուս աս հարցման պատասխան՝ սուրբ Գրքէն վկայութիւն բերաւ որ Ի բերանոյ տղայոց եւ ստնդեաց կատարեցեր զօրհնութիւն: Ոմանք ալ ըսին. Աւրդապետ, աշակերտներուդ հրամայէ որ ձայներնին քաշեն: Ինք ալ պատասխան տուաւ որ Անոնք լուելու բլլան՝ քարերը կ'աղաղակեն: Նոյն ատեն Եւրուսաղէմ՝ մէկ քանի Հեթանոս ալ կար՝, որոնք նախ Փի-

1 Մեր տղային աւանդութեան նայելով՝ ասոնք Արդար Հայոց թագաւորին՝ առ Յիսուս խրկած հրեշտակներն էին, որոնց ձեռքովնոյն թագաւո-

խաղաղութիւն եկան ըսին որ Տէր, զՅիսուս տեսնել կ'ուզենք: Ան ալ Անդրէասին իմացուց եւ երկուքը մէկտեղ բանը Յիսուսին հասկըցուցին: Յիսուս ըսաւ. Հիմաի ալ ատենն հասած է՝ որ Արդին մարդոյ փառաւորութի. այս ինքն մեռնելով իր փառքը մտնէ, եւ չէ թէ միայն Հրէիցմէ, հապա հեթանոսներէն ալ իրրեւ Մեսիա ճանչցուի ու յարգուի: Եւ աս բաներուն իր մեռնելէն կախում ունենալը ցուցընելու համար՝ ցորենի հատը մէջ բերաւ, որն որ Երկրի մէջ մեռնելու եւ թաղուելու է որ, ըսաւ, շատ արդիւնք բերէ: Ետքը նոյն վախճանաւ՝ նաեւ հօր Աստուծոյ ազաշանք ըրաւ: Նոյն ատեն երկինքէն ձայն եկաւ որ կ'ըսէր Էս գքեզ արդէն փառաւորած եմ, եւ դարձեալ պիտի փառաւորեմ: Իր բոլորովքը կեցող ժողովուրդն աս ձայնն ատնելով, ոմանք՝ Արտում եղաւ, ոմանք ալ՝ Չէ, հետը հրեշտակ խօսեցաւ, կ'ըսէին: Բայց Յիսուս անոնց իմացընելէն ետքը որ ան ձայնն իրենց համար եկած է, որպէս զի լսեն եւ իր՝ Մեսիա բլլալուն հաւատան, նաեւ աշխարհքիս՝ սատանային լուծին տակէն ելլելը եւ նոյն իսկ իր՝ ինչ մահուամբ մեռնելիքն անոնց պատմեց, ըսելով որ Երկրէն բարձրանալու բլլամ նէ՝ ամէնքդ ինծի պիտի ձգեմ: Ասանկ խօսակցութիւններով շատ իշխաններ ալ անոր հաւտացին, բայց իրենք զիրենք չէին յայտներ, որպէս զի

ըր Յիսուսին հաւտալը յայտնելն ետեւ՝ զանիկա եր քօզե կը հրաւիրէր, որպէս զի թէ զինքը բոլորութենէն բժշկէ եւ թէ ինք Հրէից մեռքէն ճողորթի: Խոր. Գիրք Բ. Գլ. ԼԲ:

չըլայ որ Հրէից հասարակութենէն դուրս  
 վանտուին. որովհետեւ աւելի կ'ուզէին մարդ-  
 կան առջեւ իրենց պատիւը պահել, քան թէ  
 Աստուծոյ պատիւը: Յիսուս իրիկուան դէմ՝  
 Երուսաղեմէն ելաւ Բեթանիա գնաց ու գի-  
 շերը հոն մնաց: Ասանկ մինչեւ որ իր թշնա-  
 միներուն ձեռքն ինկաւ, առատւըները՝ Երու-  
 սաղէմ՝ կու գար, իրիկունները՝ կամ Բեթա-  
 նիա եւ կամ Չիթենեաց լեռը կ'երթար, հոն  
 քահանայապետներուն անձանօթ տեղ մը կը  
 կենար:

## Ժ Է . Դ Ա Ս

1. Յիսուս թզենին անիծելուն ստիճիս առաքելաց ինչ  
 խրատ տուաւ: — 2. Քահանայապետներուն ու ծերե-  
 րուն անհաւատութիւնն յանդիմանելու համար բերած  
 առակներն որոնք են: — 3. Քահանայապետք ու Փա-  
 րիսեցիք Յիսուսի բերնէն խօսք որալու համար ինչ  
 մտածեցին: Սաղուկեցիք ինչ հարցուցին եւ ինչ պա-  
 տասխան առին: Յիսուս վարդապետած ատեն ինչ գի-  
 տեց: — 4. Երուսաղեմայ կործանման եւ աշխարհքիս  
 կատարածին ինչ նշան տուաւ: — 5. Իր երկրորդ գա-  
 լտատեան վրայ ինչ օրինակներ բերաւ:

1. Յիսուս երկրորդ օրը նորէն քաղաք  
 դարձած ատեն՝ անօթենալով, հոն ճամբուն  
 վրայի թզենիէն ուղեց քիչ մը ուտել, եւ  
 վրան տերեւէն ուրիշ բան չգտնելով՝ ծառն  
 անիծեց եւ անցաւ տաճար գնաց: Բան գնող  
 ծախողները դուրս հանեց, եւ մինչեւ իրիկուն  
 կեցաւ վարդապետեց: Քահանայապետներն  
 ու Փարիսեցիները թէպէտ կ'ուզէին զինքը  
 բռնել, բայց տեսնելով որ բովանդակ ժողո-



վուրդն իրեն հակած է՝ չէին համարձակեր։ Յիսուս իրիկուան դէմ նորէն Երուսաղէմէն ելաւ զնաց. եւ երկրորդ օրը նոյն ճամբէն անցած ատեն՝ քովինները տեսան որ նախն թաց օրն անիծած թղենին չորցեր է։ Պետրոս Յիսուսին ցուցնելով՝ ըսաւ. Վարդապետ, անիծած թղենիդ ահաւասիկ չորցեր է։ Ան ալ աս առթով՝ հաստատուն հաւատք ունենալու վրայ իրենց խրատ տուաւ եւ ըսաւ. Հաստատութեամբ հաւտալու որ ըլլաք՝ չէ թէ միայն իմ թղենւոյն բրածս կրնաք ընել, հապա նաեւ աս լերան ըսէք որ ել, ծով ինկիր, կ'ըլլայ։

Չ. Յիսուս տաճար եկաւ սկսաւ ժողովրդեան վարդապետել եւ քահանայապետներուն ու ժողովրդեան ծերերուն անհաւատութիւնն երեսնին զարկաւ. եւ հեթանոսներուն՝ զիրենք յառաջելիքը ցուցնելու համար հետեւեալ առակը զրուցեց։ Մարդուն մէկն երկու տղայ ունէր. մէկուն ըսաւ որ Այսօր զնա այդին բանէ։ Տղան՝ Կ'երթամ, ըսաւ ու չգնաց։ Ան ատեն հայրը մէկալ որդւոյն ըսաւ։ Անիկա՝ թէպէտ Չեմ երթար, ըսաւ, բայց ետքը զզջաց ու ելաւ զնաց։ Հիմա զրուցեցէք ան երկուքէն ո՞րը հօրը պատուէրը կատարեց։ Անոնք ալ՝ Ետքինն, ըսին։ Իսկ իրենց Աստուծոյ երեսէն ձգուելուն՝ աս առակը բերաւ. Թագաւոր մը իր որդւոյն հարսանիքն ընելով՝ ծառաները բարեկամներուն խրկեց, զանոնք հարսնիք հրաւիրեց։ Իսկ անոնք մէյմէկ պատրուակաւ հրաժարեցան. մինչեւ մէջերնէն ոմանք՝ հրաւիրելու եկող ծա-

բաները բռնեցին սպաննեցին : Թագաւորն աս լսեց նէ՝ կրակ կտրեցաւ, մէկէն զօրք խրկեց՝ ան սպաննողները բռնել մեռցընել տուաւ : Ետքը ծառայիցն ըսաւ . Հարսնիքս պատրաստ է ու հրաւիրուողներն արժանի չէին : Հիմա գացէք ճամբաները զով որ կը գանէք՝ հարսնիք հրաւիրեցէք : Ծառաներն հրամանը կատարելով՝ հարսնիքին տեղը բազմականով լեցուեցաւ : Նոյն ատեն թագաւորը կոչնականները տեսնելու գալով՝ մէջերնին մէկը դիտեց, որ օրուան վայել զգեստ հագած չէր . եւ զինքն յանդիմանելէն ետեւ ծառաներուն հրամայեց որ ձեռքը ստքը կապեն, դուրս հանեն ձգեն :

Չիրենք յանդիմանելու համար բերած աս երկու առակէն զատ՝ նաեւ աս ալ բերաւ : Մարդ մը այգի անկեց ու մշակներու ձեռք յանձնեց զնայ : Ատենին մարդ խրկեց որ բերած պտուղն առնեն : Բայց մշակները զանոնք բռնեցին՝ մէկը տանջեցին, մէկը սպաննեցին, մէկայլը քարկոծեցին : Տէրը մտածեց որ իր տղան խրկէ . Գուցէ, ըսաւ, անկէ կ'ամբշնան : Իսկ մշակներն ան ալ բռնեցին մեռցուցին, որպէս զի այգին իրենց մնայ : Յիսուս աս ըսելէն ետքը՝ անոնց հարցուց որ Հիմակ այգւոյն տէրը գալու ըլլայ նէ՝ անոնց ինչ պէտք է ընել : Մէջերնէն ոմանք պատասխան տուին . կը վայլէ որ զանոնք շարաշար մեռցընէ . ոմանք ալ իմանալով որ ըսածն իրենց համար է, զէմ կը կենային :

Յ. Քահանայապետք ու Փարիսեցիք, թէպէտ իմացան որ Յիսուսի ան առակներն իրենց զէմ է եւ զինքը բռնել կ'ուզէին, բայց ժո-

զոգրդենէ կը վախնային : Անոր համար մէկտեղ  
 եկան խորհուրդ բրին թէ ինչպէս կրնան բեր-  
 նէն անանկ խօզք մը որսալ, որով ժողովըր-  
 դեան աչքէն հանեն : Ուստի իրենց աշկերտնե-  
 րէն քանի մը հոգի խրկեցին, որոնք եկան ի-  
 բն ըսին . Աւորդապետ, գիտենք որ դուն ար-  
 դար ես եւ առանց ակնածելու՝ ուղիղ կը դա-  
 տես : Արդ՝ ըսէ, կայսեր հարկ վճարել պէտք  
 է թէ չէ : Յիսուս պատասխանեց . Անդժաւորք,  
 զիս ինչո՞ւ կը փորձէք, դահեկան մը բերէք  
 տեսնեմ : Երբ որ անոնք ալ հանեցին տուին,  
 Յիսուս հարցուց . Այսչի պատկերն որո՞ւնն է :  
 Կայսերն է, ըսին : Յիսուս պատասխանեց . Ա-  
 նանկ է նէ՛ ինչ որ կայսերն է՝ կայսեր տուէք,  
 եւ ինչ որ Աստուծոյ է՝ Աստուծոյ : Սաղու-  
 կեցիք ալ՝ որ յարութեան չէին հաւատար,  
 Յիսուսին հարցուցին . Օրինաց մէջ գրուած  
 է որ Եթէ կարգուած մէկը առանց զաւկի  
 մեռնի նէ, մեռնողին եղբայրն անոր կինն առ-  
 նէ : Արդ եթէ՞ն եղբարք մէկ կինը կարգաւ  
 առին եւ ամէնքն ալ առանց զաւկի մեռան .  
 Հիմա յարութիւն առնելու ըլլան նէ՛ ան կինն  
 որո՞ւն պիտ' որ ըլլայ : Յիսուս ըսաւ . Գուք  
 ո՛չ Գրոց խօսքին միտքը կը հասկընաք, ո՛չ ալ  
 Աստուծոյ զօրութիւնը գիտէք : Յարութենէն  
 ետեւ՝ ալ կարգուիլ բան չկայ . անտուն մար-  
 դիկ հրեշտակաց պէս պիտ'որ ըլլան :

Յիսուս ետքէն ժողովրդեան խրատ տուաւ  
 որ դպրաց ու Փարիսեցւոց կեղծաւորութենէն  
 զգուշանան, անոնց վայ տուաւ ու Երուսաղե-  
 մին կործանելիքը մարգարէացաւ : Նոյն միջո-  
 ցին գիմացի գանձանակին ստակ ձգողներուն

նայելով՝ տեսաւ որ մեծատունները շատ բան կու տային . աղքատ որրեւարի մ'ալ եկաւ երկու լուծաւ ձգեց : Յիսուս նոյն կինն աշկերտներուն ցուցնելով ըսաւ որ Աս աղքատ կինը մէկալներէն աւելի տուաւ . վասն զի մէկալնոնք աւելորդ ինչքերնէն տուին , իսկ աս ողորմելին՝ իր օրըստօրեայ ապրուստին պէտք եղած ստակը տուաւ : Ասով իրենց իմացուց որ Աստուած՝ տրուած ստակին շինայիր , հապատուողին բարեսրտութեան :

4 . Իրիկուան դէմ տաճարէն ելած ատեն՝ աշակերտները տաճարին փառաւոր շինուածքը ցուցնելով՝ Աւորդապետ , ըսին , կը տեսնե՞ս ինչ քարեր են եւ ինչ շինուած : Յիսուս պատասխան տուաւ . Ան շէնքը կը տեսնէ՞ք . օր պիտի գայ որ անոր մէկ քարը մէկալին վրայ պիտի չմնայ : Աս խօսքին վրայ զարմանալով՝ երբ որ Չիթենեաց լեռն եկան , ուստի որ տաճարը կ'երեւար , Պետրոս , Անդրէաս , Յակոբոս ու Յովհաննէս իրեն առանձին հարցուցին որ Աւորդապետ , ան ըսածդ երբ պիտի ըլլայ , եւ ինչ նշանէն իմանանք՝ որ քու նորէն գալուդ ատենն ու աշխարհքիս վերջը հասած է : Ասան զի իրենք կը կարծէին որ աս ամէն բան Երուսաղեմայ կործանման հետ մէկէն մէկ օրուան մէջ պիտի ըլլայ : Յիսուս իրենց խնդրոյն պատասխան տալու ատեն՝ ան դէպքերուն զանազան ու զատ զատ նշաններ տալով՝ իրենց հասկըցուց որ ամէնքը մէկէն պիտի չպատահին : Ուստի Երուսաղեմի կործանումէն սկսելով՝ երեք նշան տուաւ . նախ՝ սուտ Բրիստոսներու գալն ու շատերը խաբելը . երկրորդ՝

զանազան խեղճութիւններ . ինչպէս ազգ ազգի  
դէմ, թագաւորութիւն թագաւորութեան  
դէմ ելլել, սով, ժանտախտ, եւ այլն . երրորդ՝  
աս բաներն ըլլալէն յառաջ՝ իրենց քաշելու  
հալածումը, որուն վրայ խօսած ժամանակ՝  
զիրենք խրատեց որ դատաւորաց առջեւ ել-  
լելու ատեննին՝ հոգ չընեն թէ ինչ պէտք  
են ըսել, հապա երկինքէն ինչ որ կ'ազգուի  
նէ՝ նոյնը խօսին : Հոն խօսողը դուք չէք, ը-  
սաւ, հապա Հոգին սուրբ : Գարձեալ զիրենք  
յորդորեց որ հաւատքներնուն մէջ հաստատուն  
մեան ու նեղութեանց համբերեն : Ասոնք լմն-  
ցընելէն ետքը՝ աշխարհքիս կատարածին նշան-  
ները զրուցեց, որոնք են արեւուն խաւարիլը,  
լուսնին լոյս չտալը, աստղներուն՝ իրենց ճամ-  
բէն խտտորիլը եւ բոլոր երկնից հաստատու-  
թեան՝ տեղէն խախտիլը . դարձեալ ծովին  
խռովութեան ահեղ ձայնը, մարդիկներուն  
ահն ու դողը :

Յ. Ան նշանները յայտնելէն ետեւ՝ զիրենք  
խրատեց որ իր աշխարհքս դատելու համար  
զալուն՝ միշտ պատրաստ ըլլան, որպէս զի չըլ-  
լայ թէ յանկարծակիի գան : Եւ աս նիւթիս  
վրայ իրենց զանազան օրինակներ բերաւ : Տասը  
կուսանք կային, ըսաւ, որոնց հինգն յիմար ու  
հինգն իմաստուն էին : Ասոնք լապտերնին վա-  
ռած՝ փեռային զիմացն ելլելու գացին : Փեռան  
իր գալն որ ուշացուց՝ իրենք ալ քնացան :  
Աէս գիշերին՝ ձայն ելաւ որ Ահա փեռան կու-  
գայ, զիմացն ելէք : Անոնք արթընցան, լապ-  
տերնին պատրաստեցին : Բայց յիմարները պա-  
տրաստ եղ չունենալով՝ իմաստուններէն փոխ

ուզեցին: Անոնք ալ վախնալով որ չըլլայ թէ ետքէն իրենց ալ քիչ գայ, չտուին եւ ըսին որ երթան գնեն: Յիմարք գացին որ գնեն, մէյ մ'ալ փեսան եկաւ. իմաստունք ներս մտան, հարսնիքին դուռը գոցուեցաւ: Էտքէն յիմարներն ալ եկան սկսան աղաչել որ դուռը բանան. բայց ճար չեղաւ դուրս մնացին: Գուք ալ արթուն կեցէք, որովհետեւ ոչ օրը գիտէք ոչ ժամը: Ասոր վրայ հետեւեալ առակն ալ աւելցուց: Մարդուն մէկը օտար երկիր երթալու առնէ՝ ծառաները կանչեց. մէկուն՝ հինգ քանքար, մէկուն՝ երկու քանքար, մէկուն ալ մէկ քանքար տալով՝ ապագրեց որ գործածեն ու շահին: Էրբ որ դարձաւ եկաւ, դանոնք առջևը կանչելով՝ շահածներնուն համարը պահանջեց: Հինգ քանքար առնողը՝ հինգ ալ վրան վաստրկած բերաւ. երկու առնողն ալ՝ երկուք: Տէրերնին երկուքն ալ գովեց ու վարձատրեց: Իսկ մէկ առնողը՝ նոյնը բերաւ եւս դարձուց, ըսելով թէ Արովհետեւ գիտէի քու խիստ ըլլալդ, անոր համար գացի քանքարդ գետնի տակ թաղեցի, ահաւասիկ, հիմակ եւս կը բերեմ: Ան առնէն տէրը վրան սաստիկ նեղանալով՝ ըսաւ. թէ որ անանկ է, ինչու գոնէ՞ սեղանաւորի չտուիր, որպէս զի շահովը ետ առնէի: Ասանկով զինքը պատժել տուաւ եւ ան մէկ քանքարն ալ մէկալնոնց բաժնեց: Յիսուս ասոնք ըսելէն ետքը բոլոր աշխարհքս դատելու համար իր փառաւոր երկրորդ գալուստը տեղն ի տեղը ստորագրեց:

## Ժ Ը . Գ Ա Ս

1. Յիսուս զատկական գառնն ուր կերուս : Առաքելոց  
 սարն ինչպէս լուաց : — 2. ԶՅուդա ապաշխարութեան  
 բերելու համար ինչ խոսեցաւ : — 3. Ինչ առթով Պե-  
 տրոսին իմացուց որ զինքն երեք անգամ պիտ'որ ուրա-  
 նայ : — 4. Հարգութեան խորհուրդն ինչ կերպով հաս-  
 տատեց : Սեզանէն ետեւ ուր գնաց :

1. Զատկէն երկու օր յառաջ քահանայ-  
 ապետք ու գպիրք ժողովրդեան ծերերուն հետ  
 կայիափա քահանայապետին առնն ժողվելով՝  
 որոշեցին որ զՅիսուս մեռցընեն : Այլայն կը-  
 սէին թէ Աստուծոյն օրերը չըլլայ, որպէս զի  
 խառնութիւն մը չէր : Նոյն միջոցին Յուդա  
 Սկարիփտացին եկաւ իրենց ըսաւ . Ինձի ինչ  
 կու տար, ես զինքը ձեզի կը մատնեմ : Անոք  
 30 արծաթ խոստացան : Յուդա յանձն առաւ,  
 եւ նոյն ատենէն՝ զՅիսուս մատնելու առիթ  
 կը փնտռէր : Յիսուս զՊետրոս եւ զՅովհան-  
 նէս քաղաք խրկելով՝ ըսաւ . Հոն մտածնուց  
 պէս՝ կանակը սափոր առած մարդու մը պիտի  
 հանդիպիք, ետեւէն գացէք, անոր մտած տան  
 արջն ըսէք որ Արդապետին առնն հասած  
 է, կ'ուզէ զատիկը առնն ընել : Անիկա զձեզ  
 զարդարուած վերնատուն մը կը հանէ, հոն  
 սեզանը պատրաստեցէք : Ան երկուքը գացին  
 Յիսուսին ըսածին պէս ամէն բան ճիշդ գտան  
 ու պատրաստեցին : Իրիկուան դէմ՝ Յիսուս  
 առաքելոց հետ նոյն վերնատունը գնաց նստաւ՝  
 զատկական գառն ուտելու : Աերակոյ սկսե-  
 լէն յառաջ՝ Մեծապէս կը բաղձայի, ըսաւ,  
 չչարչարուած՝ աս զատկական գառը հետեր-  
 նիդ ուտել : Ուտելու ատեննին՝ Յիսուս սե-

ղանէն ելաւ, վրայի զգեստը հանեց մէկ դի գրաւ, մէջքը ղենջակ մը կապեց, կոնքի մէջ ջուր լեցուց, սկսաւ առաքելոց ոտքը լուալ ու սրբել: Պետրոս առջի բերան դէմ կեցաւ, ըսելով՝ Տէր, դուն իմ ոտքս պիտի լուաս: Յիսուս պատասխանեց. Ըրածս դուն հիմա չես գիտեր, բայց ետքը կ'իմանաս: Աս ալ չօգտեց նէ՛ վրան աւելցուց որ Եթէ ոտքդ չեմ լուար նէ՛ հետս մաս չես ունենար: Ան ասեն Պետրոս ըսաւ. Այսպէս է նէ՛ ոտքս միայն չէ, հապա ձեռուքներս ու գլուխս ալ լուա: Յիսուս ամենուն ոտքը լուալէն ետեւ՝ անոնց ասանկ ըսաւ. Ես վարդապետ ու տէր ըլլալով՝ ձեր ոտքը լուացի նէ, դուք ալ իրարու ոտք պիտի լուաք: Մտածեցէք որ ծառան իր տիրոջմէն վեր չիկրնար ըլլալ. Թէ որ աս գիտէք եւ ի դործ կը դնէք, աւելի երանելի կ'ըլլաք:

Չ. Անկէ ետեւ նորէն սեղան նստելով՝ Յիսուս ըսաւ. Գուք սուրբ էք, բայց ամէնքդ չէ: Ես ընտրածներս գիտեմ. բայց Գրքին ան ըսածը թէ Հետո կերակուր ուտողն ինձի խարէութիւն ըրաւ, պիտի կատարուի: Աս խօսքերը՝ Յուդան դարձի բերելու համար ըսաւ. նոյն վնխճանաւ նաեւ զրուցեց որ Մէջերնէդ մէկը զիս պիտի մատնէ: Առաքեալք աս լսելով՝ զարհուրեցան ու արտմեցան, եւ սկսան ըսել Արդեօք է՞ն էմ, Տէր: Յիսուս իր խօսքին աւելի ազդեցութիւն տալու համար՝ անմիջապէս վրայ բերաւ որ Տասուերկուքէն մէկը՝ որն որ ձեռքը հետս առջելի սկաւառակը խոթեց: Պետրոս՝ Յիսուսի սի-



բելի աշակերտին (Յովհաննու) նշանով հասկըցուց որ կամացուկ մը հարցընէ թէ ո՞վ պիտի մատնէ: Յովհաննէս Յիսուսին լանջքն ինկած՝ հարցուց. ան ալ մեղմ ձայնով պատասխան տուաւ թէ Ան է՝ որուն պատառը կը թաթխեմ կու տամ. ու թաթխեց Յուդային տուաւ, որն որ յանդգնութեամբ ու կեղծաւորութեամբ հարցուց թէ Արդեօք ես եմ, վորդապետ: Յիսուս ալ՝ Գուն ես, ըսաւ: Բայց Յուդա չղղաց, իր շար մտացը վրայ յամառ կեցաւ: Յիսուս զինքը ճամբեց, ըսելով՝ Ինչ պիտի ընես նէ՝ գնա բրէ: Առաքեալք ասկէ բան մը չհասկըցան. արկին ինքը կրելուն՝ կարծեցին որ կարելի է բան մը գնելու կամ աղքատաց բան մը տալու խրկեց:

**Յ.** Յուդա երթալէն ետեւ՝ Յիսուս մէկայնոնց աս յանձնարարութիւնն բրաւ. Ինչպէս որ ես զձեզ սիրեցի, դուք ալ անանկ իրար սիրեցէք. մարդիկ աս սէրը վրանիդ տեսնելով՝ կարող ըլլան որոշել որ իմ աշակերտս էք: Պետրոս՝ ինք զինքը պատրաստացուցուց Յիսուսի համար իր կեանքը զոհելու: Ան ալ իրեն պատասխան տուաւ որ Աքաղաղն երկու անգամ չխօսած՝ երեք անգամ զիս պիտի ուրանաս: Նմանապէս մէկայնոնց ալ իմացուց որ հաւատքներնուն մէջ պիտի թեթեւին, զինքը թողուն փախչին: Պետրոս՝ Ուրիշները գայթաղելու ալ ըլլան, ըսաւ, ես չեմ գայթաղելի: Եւ թէպէտ Յիսուս իր առջի պատասխանը կրկնեց, բայց անիկա կը պնդէր թէ Չքեզ չեմ ուրանար. հետդ բանտ երթալու եւ մեռնելու ալ պատրաստ եմ:

4. Աս խօսակցութիւններէն ետքը՝ Յիսուս սեղանին վրայի հացէն առաւ, աշուրներն երկինք վերցուց, գոհացաւ, կտրեց, աշակերտաց տուաւ ըսելով՝ Առէք կերէք, այս է մարմին իմ: Նմանապէս բաժակն առաւ գոհացաւ եւ աշակերտաց տուաւ ըսելով՝ Արբէք ի դմանէ ամենէքին, այդ է արիւն իմ: Աս ընելէն ետեւ՝ պատուիրեց որ իր մահուան յիշատակին համար աս խորհուրդը միշտ կատարեն: Առաքեալք՝ իրենց սիրելի վարդապետին մահը եւ գլուխնին գալիքները, Պետրոսին ուրացութիւնն ու մէջերնէն մէկուն ընելու զարհուրելի մատնութիւնը ըսելով՝ սրտերնին կտրած կը կենային: Անոր համար Յիսուս սկսաւ զանոնք մխիթարել. եւ գլխաւորաբար ասոր վրայ խօսեցաւ որ ձախորդութենէ չվախնան ու չխռովին, միայն Աստուծոյ եւ իրեն հաւատան. ապահով ըլլան որ իր օգնութեամբն ամէն դժուարութիւններուն կը յաղթեն. հաւատքն ամէն բանի կը յաղթէ: Աս գեղեցիկ խօսակցութիւնն ընելէն ետեւ՝ դէպ ի Չիթենեաց լեռը ճամբայ ելան:

## Գ . Գ Լ Ո Ւ Խ

ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐՈՒԵԼԷՆ ՈՒ ՄԵՌՆԵԼԷՆ  
ՄԻՆՉԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՒՆ ԱՌՆԵԼԸ

### Ժ Թ . Գ Ա Ս

1. Յիսուս Գեթսեմանի պարտեզին մէջ ինչ ըրաւ : —
2. Ինչպէս բռնուեցաւ ու կապուեցաւ : —
3. Աննային առջեւ ինչ ըրաւ :

1. ՉԻԹԵՆԵԼՅ լերան սարը Գեթսեմանի անունով գեղ մը կար քովը պզտիկ պարտեզով մը, որուն մէջ ձիթենւոյ շատ ծառեր կային . Յիսուս առաքելոց հետ ան պարտեզը մտնելով՝ անոնց ըսաւ . Երթամ աղօթք ընեմ . Գուք ալ հոս կեցէք աղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չիյնաք : Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հետն առած՝ նոյն պարտեզին դէպ ի ներսի կողմերը գնաց, եւ սկսաւ տխրիլ ու հոգալ : Քիչ մը վերջը քովիններուն ըսաւ որ Գուք հոս կեցէք աղօթք ըրէք . եւ ինք անկէ քարընկէց մը հետեւ գնաց, երեսի վրայ գեախնն ինկած՝ Հայր, ըսաւ, թէ որ կ'ուզես՝ աս բաժակը (չարչարանքով մեռնիլս) ինձմէ վերցուր . բայց չէ թէ իմ (մարդկային) կամքս, հապա քու (աստուածային) կամքդ ըլլայ : Աս աղօթքն ընելէն ետքը՝ ելաւ իր երեք աշակերտներուն եկաւ, եւ զանոնք քուն գտնելով՝ Սիմոն, ըսաւ, կը բնանաս . ժամ մը արթուն չկրցա՞ք կենալ : Արթուն կեցէք ու աղօթք ըրէք, որ փորձու-

Թեան մէջ չիյնաք: Աս ըսաւ ու նորէն գնաց երեսին վրայ ինկած սրտանց աղաչեց, ըսելով որ Հայր, եթէ կարելի է՝ աս բաժակս ինձ մտաւ. բայց իմ կամքս չըլլայ, հապա՛ քուկդ: Ետքը նորէն աշակերտներուն քոֆն եկաւ եւ զիրենք դարձեալ քնոյ մէջ գտաւ. թողուց զանոնք գնաց աւելի եռանդով աղօթք ըրաւ: Նոյն ատեն հոգեվարու թեան տազնապի մէջ ինկաւ, քրտինքն արեան կաթիլներու պէս գետինը կը վազէր. բայց ինքն Հօր Աստուծոյ նոյն վերի աղօթքը կ'ընէր: Ան ատեն երկինքէն հրեշտակ եկաւ զինքը զօրացուց:

Չ. Յիսուս ինք զինքը մեռնելու պատրաստ ցուցնելով՝ դարձեալ աշակերտներուն եկաւ, ըսաւ. Դեռ կը քնանաք. ալ բաւական է. թշնամիներուս ձեռքը մատնուելուս ատենն հասաւ: Ելէք երթանք. ահաւասիկ զիս մատնողը կը մօտիկնայ: Յուդա՛ որ նոյն պարտեզը գիտէր, որովհետեւ Յիսուս աշակերտներովը շատ հեղ հոն եկած էր, նոյն ատեն դռնէն ներս մտաւ. հետը շատ զօրք եւ քահանայապետներէն ու ժողովրդեան ծերերէն խրկուած ծառաներու մեծ ամբոխ կար, որոնք լապտերներով, ջահերով, սրերով ու բրերով կու գային: Յուդա արդէն յառաջագոյն անոնց աս նշանը տուած էր թէ Չո՛վ որ պագնելու ըլլամ՝ ան է, բռնեցէք զգուշութեամբ տարէք: Ուստի պարտեզ մտածին պէս՝ ամբոխին հետ ուղղակի Յիսուսին գնաց, զինքը բարեւեց. Ո՞ղջ լեր, վարդապետ, ըսելով՝ պագաւ: Յիսուս սիրոյ հայեցուածով մը Ը՛նկեր, ըսաւ, ինչո՞ւ եկար. զՈրդին մարդոյ պագնե-

լով կը ժառնես: Ետքը ամբօխին առջեւը գնաց, Չով կը փնտռէք, ըսաւ: Անոնք՝ Յիսուս Նազովրեցին հարցուցին: Յիսուս՝ Ես եմ որ ըսաւ, ամէնքն ետեւ ետեւ երթալով՝ գետինը զարնուեցան: Թէ որ զիս կ'ուզէք, ըսաւ Յիսուս, ասոնք թողուցէք: Առաքեալք Յիսուսէն խնդրեցին որ թշնամիները սրով զարնեն ու Պետրոս մէկէն քահանայապետաց ծառաներէն մէկուն՝ որ Մաղքոս կ'ըսուէր, աջ ահանջը զարկաւ ձգեց: Յիսուս Պետրոսին ըսաւ. Սուրբ պատեանը խոթէ. սուր առնողը սրով կ'իյնայ. Մաղքոսին ահանջն ալ բժշկեց եւ դարձաւ իր վրան եկողներուն՝ Աւազակ բռնելու պէս վրաս եկեր էք, ըսաւ. ես ամէն որ հրապարակաւ կը վարդապետէի, եւ մէկը զիս չբռնեց: Ետքը թողուց որ զինքը կապեն, առաքեալք ալ նոյն ատեն զինքը թողուցին փախան:

**3.** Ամբօխին առաջնորդող հարիւրապետը զՅիսուս առաւ Աննային տարաւ, որն որնոյն տարւան Վայիափա քահանայապետին աներն էր: Աննա Յիսուսին հարցումներ ըրաւ, առաքելոց ու իր վարդապետութեան վրայ: Յիսուս պատասխանեց որ Բոլոր վարդապետածներս ամենուն առջեւը վարդապետած եմ. ինծի ինչ կը հարցնես, լսողներուն հարցուր: Հոն կեցող ծառաներէն մէկն անոր երեսը ապտակ զարկաւ, ըսելով՝ Քահանայապետին ասանկ պատասխան կու տաս: Յիսուս հանդարտ կերպով ծառային ըսաւ. Թէ որ անիրաւ բան խօսեցայ, ցուցուր. իսկ եթէ իրաւամբ խօսեցայ, ինչու կը զարնես:

## Ի . Գ . Ա . Ս

1 . Յիսուս Ապրիափային առջեւ ինչպէս մահուան դատապարտուեցաւ : — 2 . Պետրոս զՅիսուս ինչ առթով ուրացաւ : — 3 . Յուդա ինչ բրաւ :

1 . Աննա զՅիսուս կապած՝ Ապրիափային տունը խրկեց, ուր որ վերին ատեանն եւ անկէ կաշառք կերող սուտ վկաները պատրաստ կը կենային : Յիսուս ատեանին առջեւն ելլելուն պէս՝ սուտ վկաներն սկսան ետեւէ ետեւ վրան զրպարտութիւններ ընել . բայց մէկուն ըսածը մէկային չէր համաձայներ : Յիսուս լուռ կեցած՝ հանդարտ մտիկ կ'ընէր : Աւերջապէս քահանայապետն ոտք ելաւ, մէջտեղը կեցած՝ Յիսուսին հարցուց . Չե՞ս լսեր, վրադ ինչէր կը խօսին, պատասխան չտաս : Բայց ինք դարձեալ լուռ կեցաւ : Քահանայապետը նորէն հարցուց . Չքեզ կ'երդուրնցընե՞մ, ըսէ՛ Աստուծոյ Որդին Քրիստոս դո՞ւն ես : Յիսուս՝ Ես եմ, ըսաւ . եւ շատ չ'անցնիր՝ զիս Աստուծոյ աջ դին նստած պիտի տեսնէք . ատեն մ'ալ պիտի գայ՝ պիտի տեսնէք որ ամպերուն վրայ նստած պիտի գամ : Նոյն ատեն քահանայապետը զգեստը պատռելով՝ ըսաւ . Ակայ ի՞նչ պէտք է . բերնէն ելած հայհոյութիւնը մենք անձամբ լսեցինք : Ի՞նչ ընենք, ձեզի ինչպէս աղէկ կ'երեւայ : Մէկայնոնք ալ միաբան վճռեցին որ մահապարտ է : Չինուորներն ասոր վրայ զՅիսուս առին քահանայապետին սրահը տարին, եւ հոն բոլոր զիշեր զինքը կը շարչարէին ու կը թշնամանէին . մէկը կը թքնէր, մէկը լաթով երեսը կը ծածկէր ու

զլուխը զարնելով՝ կը հարցընէր թէ Զարնոզն ո՞վ է, գիտցիր տեսնեմ:

2. Յիսուս քահանայապետին առջևը քննուելու ատեն՝ Պետրոս ու Յովհաննէս հեռուէն մինչև ի նոյն տեղն ետեւէն եկած էին: Գիշերը ցուրտ բլլալուն՝ սրահին մէջ տեղը կրակ վառեցին, որուն չորս դին սպասաւորները ժողված կը տաքնային: Պետրոս ալ անոնց քով կեցած կը տաքնար: Գոնապանութիւն ընող աղախինք զինքը տեսնելով՝ բարձր ձայնիւ ըսաւ. Գուն ալ Գալիլեացի Յիսուսին հետն էիր: Պետրոս վախնալով՝ Չէ, զինքը չեմ ճանչնար, ըսաւ, սրահը թողուց դուրս ելաւ: Նոյն ատեն արաղաղն առջի անգամ խօսեցաւ: Պետրոս նորէն նոյն սրահը մտաւ, վասն զի Յիսուսին վերջն ինչ բլլալիքն իմանալու բաղձանքը զինքը հանգիստ չէր թողուր: Աւրիշ աղախին մը զինքը տեսաւ եւ զրուցեց. Տեսէք, աս ալ Նազովրեցի Յիսուսին հետն էր: Ծառաներէն մէկն ալ նոյնը հաստատեց. Հա, դուն ալ անոր ետեւէն դացողներէն ես, ըսաւ: Պետրոս նորէն զՅիսուս ուրանալով՝ Ես անոնցմէ չեմ, ան մարդը չեմ ճանչնար, ըսաւ: Քանի մը վայրկեանէն՝ երբ որ Յիսուսի մահուան դատապարտուելուն լուրը սրահին մէջ տարածուեցաւ, հոն բլլող ծառաներէն մէկը զՊետրոս ցուցընելով՝ ըսաւ. Ստուգիւ աս ալ անոր կողմնակիցներէն է: Պետրոս մէկ անգամ ալ ուրացաւ: Մէկալ ծառաներն ալ չորս դին առին՝ Հա, անանկ է, ըսին. վասն զի դուն ալ Գալիլեացի ես, լեզուդ իսկ կը ցուցընէ: Ետքը ուրիշ ծառայ

մ'եկաւ, որն որ Մաղքոսին ազգականներէն էր, անոր ըսաւ. Չքեզ քիչ մը յառաջ անոր հետ Գեթսեմանի պարտեզը շտեսայ : Պետրոս ան ատեն սկսաւ երդնուլ որ Չեր ըսած մարդը չեմ ճանչնար : Մէյ մ'ալ աքաղաղը երկրորդ անգամ խօսեցաւ : Նոյն վայրկենին՝ զՅիսուս քահանայապետին առջեւէն առած՝ Պետրոսին եղած սրահը խօթեցին, Յիսուս անոր երեսը նայեցաւ, ինքն ալ անմիջապէս ըսածն յիշեց ու զղջաց, դուրս ելաւ, սկսաւ դառնապէս լալ :

**Յ.** Իսկ Յուդա՝ Յիսուսի մահուան դատապարտուելուն լուրն առաւ նէ, ըրածին վրայ զղջաց, զՅիսուս ազատելու համար ուղեց ամէն միջոց ի գործ դնել. երեսուն արծաթը քահանայապետներուն դարձուց ու պռալով ըսաւ. Մեղայ, արդար արիւնը մատնեցի : Անոնք պաղութեամբ պատասխանեցին որ Մեր ինչուն պէտքն է, դուն գիտես : Յուդա տաճարին մէջ ան ստակները գետինը նետեց ելաւ գնաց, յուսահատութենէն՝ ինք զինքը կախեց : Քահանայապետներն ստակն առին եւ մէջերնին խօսելով որոշեցին որ գանձանակին մէջ չձգեն, որովհետեւ արեան գին է. այլ անով՝ օտարներու գերեզմանի համար՝ բրուտի ազարակ մը գնեցին : Ան օրէն սկսեալ ժողովուրդը նոյն ազարակն Ակեղղամա անուանեց, որ՝ Ազարակ արեան, ըսել է :



## Ի Ա . Գ Ա Ս

1. Յիսուս վերին ատեանէն որսւն խրկուեցաւ: Պիղատոս Յիսուսին անմեղութիւնն իմացաւ նէ՛ ինչ ըրաւ: — 2. Չինքն Հերովդեսին ինչո՞ւ խրկեց: Բարաբրա ո՞վ է: Պիղատոս կրցաւ զՅիսուս փրկել: — 3. Գառաւորին զինուորները Յիսուսին ինչ ըրին: Պիղատոս ինչէն զինքը մահուան դատապարտելու ստիպուեցաւ:

1. Ուրբաթ առտու վերին ատեանը կանուխ ժողվելով՝ զՅիսուս կանչեցին, հարցուցին որ Գուռն Գրիստոսն էս: Անիկա պատասխան տուաւ որ Ասելու ըլլամ՝ չէք հաւտար: Ասկէ ետքը Որդին մարդոյ Աստուծոյ զօրութեան աջ դին պիտի անցնի նստի: Մէկէն ամէնքն սկսան կանչել որ Ուրեմն՝ դուռն Աստուծոյ Որդին էս: Էւ երբ որ ինք ըսածնին հաստատեց, Ինչ պարագ տեղ վկայ կը փրնտենք, ըսին. անոր հայհոյութիւնը մենք անձամբ լսեցինք: Անոր համար զինքը կապած՝ Պոնտոս Պիղատոս՝ երկրին հեթանոս ոստիկանին խրկեցին:

Չատկի տօնին ատենները դատաստանական ամբաստանութիւն ընելն Հրէից արդելուած ըլլալով՝ դատաստանարան չէին կրնար մանել, հոն ոտք կոխողը՝ զատկական գառն ուտելու անարժան կը սեպուէր: Անոր համար զՅիսուս Պիղատոսի պալատին առջևը քարայատակ ըսուած տեղը կեցընելով՝ աղաչեցին որ Պիղատոս դուրս ելլէ: Պիղատոս եկաւ հարցուց որ Յիսուսին վրայ ինչ ամբաստանութիւն ունին. իրենք ալ պատասխան տուին որ Չարագործ չըլլար նէ՛ քու ձեռքդ չէինք տար: Պիղատոս ըսաւ. Անանկ է նէ՛

առէք տարէք, ձեր օրինաց համաձայն դատեցէք: Անոնք պատասխան տուին որ Մենք չենք կրնար մարդ սպաննել. եւ տեսնելով որ Պիղատոս այնչափ յօժարութիւն չիցուցըներ իրենց կամքը կատարելու, սկսան զՅիսուս ամբաստանել, ըսելով որ Ժողովուրդն ապստամբութեան կը յորդորէ, կայսեր տուրք տալը կ'արգելէ, ինք զինքը՝ Քրիստոս, Իսրայելի թագաւոր կ'անուանէ: Պիղատոս Յիսուսին հարցուց որ Հրէից թագաւորը դուն ես: Յիսուս՝ Ես եմ, ըսաւ: Քահանայք նորէ նոր ամբաստանութիւններ կ'ընէին. իսկ Յիսուս լուռ կը կենար: Ան տեսն Պիղատոս ըսաւ. Չես լսեր՝ վրադ ինչեր կ'ըսեն: Յիսուս բերան չբացաւ: Պիղատոս հասկընալով որ անոնք նախանձէ շարժեալ զինքն իր ձեռքը տուին, զՅիսուս ներս առաւ, հարցուց որ Գո՞ւն ես Հրէից թագաւորը: Յիսուս պատասխանեց. Աս բանս քեզմէ՞ կ'ըսես, թէ ուրիշէն լսեցիր: Պիղատոս ըսաւ որ Ես ալ Հրեայ եմ. քու ազգդ ու քահանայապետներիդ զքեզ իմ ձեռքս տուին. զրուցէ՛ ինչ բրած ես: Յիսուս ըսաւ. Իմ թագաւորութիւնս աս աշխարհքիս մէջ չէ. ապա թէ ոչ՝ ծառաներ կ'ունենայի, որոնք ինձի համար կը պատերազմէին, չէին թողուր որ Հրէից ձեռքն իյնամ: Պիղատոս հարցուց. Անանկ է նէ՞ դուն թագաւոր մըն ես: Յիսուս աս հարցման անանկ պատասխան մը տուաւ որով կ'ուզէր ըսել թէ թագաւոր եմ: Պիղատոս Յիսուսի վրայ յանցանք մը չգտնելով՝ զինքը թողուց, դուրս ելաւ:

Չ. Պիղատոս դուրսը կեցող Հրէից Յի-

սուսի համար ըսաւ որ Ես անոր վրայ ամենեւին յանցանք մը չգտայ: Անոնք սկսան վրան աւելի ամբաստանութիւններ ընել. կ'ըսէին որ Ժողովուրդն ոտք կը հանէ, Գալիլէէն սկսած՝ իր վարդապետութիւնները մինչեւ Երուսաղէմ տարածեց: Պիղատոս անոր Գալիլեացի ըլլալը լսեց նէ՝ բռնեց Հերովդէսին՝ ան տեղւոյն չորրորդապետին խրկեց, որն որ զատկի տօնին պատճառաւ Երուսաղէմ եկած էր: Հերովդէս Յիսուսի վրայ շատ բաներ լած ըլլալով՝ զինքը մէյ մը տեսնել կ'ուզէր, յուսալով որ իր առջեւն ալ հրաշք մը գործէ: Անոր համար իր մեծամեծները քովը ժողոված, ինքն ալ իր իշխանութեան ակթորը նստած՝ առջևը բերել տուաւ եւ զանազան հարցումներ ըրաւ: Իսկ Յիսուս լուռ կը կենար: Աս միջոցին Հրեայք եկան եւ սկսան հոս ալ կրկնել ամբաստանութիւննին՝ թէ Ինք զինքը թագաւոր կ'անուանէ: Հերովդէս Յիսուսին լուռ կենալուն վրայ նեղանալով՝ պալատականոքը զինքն արհամարհեց, եւ ծաղրելու համար՝ վրան ճերմակ լաթ ձգած՝ Պիղատոսին դարձուց:

Հրեայք սովորութիւն մը ունէին որ ամէն տարի՝ զատկի տօնին, իրենց Եգիպտացւոց ձեռքէն ազատելուն յիշատակին համար բանտարկեալ մը կ'ազատէին: Արդ Պիղատոս աս առթով զՅիսուս ազատել կ'ուզէր: Նոյնատեն բանտին մէջ Յեսու Բարաբրա անունով երեւելի չարագործ մարդ մը կար: Պիղատոս դարձաւ ժողովրդեան ըսաւ. Գուք մէկը բերիք ձեռքս տուիք իրրեւ ժողովուրդն ոտք հանող. բայց ես հարցուփորձ ըրի, եւ ձեր

ամբաստանութիւններէն մէկը վրան շտեպայ. նոյնպէս Հերովդէս ալ վրան բան մը չկրցաւ գտնել: Հիմա ձեզի բանտարկեալ մը արձակելու ատենն է. զով կ'ուզէք որ թողու՞մ, Բարաբրան խոսվարարն ու մարդասպանը, թէ զՅիսուս Նազովրեցին: Հոս Պիղատոս խօսքը կտրեց. վասն զի նոյն ատեն իր կինը ծառայի ձեռքով անոր գաղտուկ ըսել տուաւ որ Արգարը մի դատապարտեր, վասն զի երագիս մէջ անոր վրայ շատ բաներ տեսայ: Նոյն միջոցին քահանայապետը ու ձեռք՝ ժողովուրդը գրքագետցին ու համոզեցին որ Բարաբրային արձակուիին ու Յիսուսին մահուան դատապարտուիին ուղեն: Ուստի երբ որ Պիղատոս նորէն նոյն խնդիրն առաջարկեց նէ՛ ամէնքը մէկ բերան պռացին որ Բարաբրան արձակէ: Պիղատոս հարցուց թէ ՉՅիսուս ի՞նչ ընեմ: Անոնք ալ խաչ հանէ, խաչ հանէ, պռացին: Երբորդ անգամ ըսաւ որ Արան մահուան արժանի յանցանք չգտայ. խրատեմ ու արձակեմ: Անոնք նորէն մէկ բերան սկսան կանչել որ խաչ հանէ: Պիղատոս անոնց անսալով՝ Բարաբրան արձակեց եւ զՅիսուս ձաղկելու խրկեց, յուսալով որ կարելի է անով մտքերնին փոխուի:

Յ. Չինուորք զՅիսուս առին, ներս՝ գաւթին մէջի հրապարակը տարին ու բոլոր իրենց գունդն անոր գլուխը ժողվելով՝ զինքը հանուեցուցին, սեան մը կապեցին, խարազանով ձաղկեցին: Եւ որովհետեւ Յիսուս ինք զինքը թագաւոր անուանած էր, անոր համար զանկա թագաւոր ձեւացրնելով՝ ձաղը կ'ընէին,

կանակը կարմիր վերարկու մը տուին, գլուխը փշէ պսակ գրին, ձեռքն ալ եղէգ մը տուած՝ վրան խնտալով առջեւը կ'իյնային, Ա՛ղջ լեր, թագաւոր Հրէից, կ'ըսէին, ու երեսը թքնելով՝ ձեռքէն եղէգը կ'առնէին գլխուն կը զարնէին: Ասանկով Յիսուսին բովանդակ գլուխն արիւնլուայ բրին: Պիղատոս առ անարժան գործքերը վերջացընել տուաւ, եւ Յիսուսին խեղճ վիճակն իր սիրտը շարժելուն՝ կը յուսար որ Հրէից սիրտն ալ կը շարժի: Անոր համար նորէն պալատէն դուրս ժողովրդեան առջեւն ելաւ, Յիսուսն ալ բերել տուաւ եւ իրենց ցուցընելով՝ ըսաւ. Ահա ասիկ նորէն մէյ մ'ալ առջեւնիդ բերել կու տամ՝ եւ կը խոստովանիմ՝ որ վրան ամենեւին բան մը գտած չեմ: Բայց անոնք զթալու տեղ՝ աւելի կատղեցան, տեսածնուն պէս՝ խաչ հանէ, խաչ հանէ, կը կանչէին: Պիղատոս չուզելով մը պատասխան տուաւ որ Եթէ դուք ձեր օրինաց համաձայն կրնաք խաչ հանել նէ՛ առէք խաչեցէք. ես վրան ամենեւին մահուան արժանի բան չգտայ: Քահանայապետները կ'ըսէին որ Մենք օրէնք ունինք, որուն նայելով՝ պէտք է որ մեռնի, վասն զի ինք զինքն Աստուծոյ Որդի կ'անուանէ: Պիղատոս առ լսեց նէ՛ աւելի վախցաւ. զինքը ներս տարաւ հարցուց որ Ուստի՞ ես: Յիսուս լսեց նէ՛ Պիղատոս ըսաւ. Հետո չէս խօսիր, չես գիտեր որ զքեզ խաչելու եւ արձակելու իշխանութիւն ունիմ: Յիսուս ասոր պատասխան տուաւ որ Եթէ Աստուած թոյլ տուած չըլլար, դուն ինձի բան մը չէիր կրնար ընել: Ասկէ սիրտն աւելի

դող ելլելով՝ կ'ուզէր արձակել: Ան ատեն  
 Հրեայք սկսան կանչուըռտել. Եթէ զինքը  
 կ'արձակես՝ կայսեր բարեկամ չես: Աս ձայնն  
 իր արդարասիրութեան հոգին փոխեց. վասն  
 զի կայսեր հաճոյ ըլլալն իրեն ամէն բանէն  
 վեր էր: Ի վերայ այսր ամենայնի ուրիշ փորձ  
 մ'ալ փորձեց. դրսէն ծաղր ընել ձեւացընե-  
 լով՝ Ահաւասիկ ձեր թագաւորն ըսաւ եւ  
 զՅիսուս նորէն առջեւնին հանեց: Իսկ անոնք  
 կատղելով՝ կը կանչէին որ խաչ հանէ: Պի-  
 ղատոս կ'ըսէր որ Ինչպէս կրնամ ձեր թա-  
 գաւորը խաչ հանել. անոնք պատասխան տուին  
 որ Մենք կայսրմէ ուրիշ թագաւոր չունինք:  
 Պիղատոս տեսնելով որ ալ ճար չկայ, ամա-  
 նով մը ջուր բերել տուաւ, անոնց առջեւը  
 ձեռքը լուաց եւ ըսաւ. Ես աս անմեղին ա-  
 բեան պարտական չեմ, դուք զիտէք: Խստա-  
 սիրտ ժողովուրդը պատասխան տուաւ որ  
 Անոր արիւնք մեր ու որդիքներնուս վրայ ըլ-  
 լայ: Ան ատեն ալ Պիղատոս զՅիսուս իրենց  
 ձեռքը տուաւ որ խաչեն:

## Ի Բ . Դ Ա Ս

1. Հրեայք զՅիսուս ինչպէս խաչելու տարին. ո՞ր  
 խաչեցին: — 2. Յիսուս խաչին վրայ ինչ բրտ. հոգին  
 ինչպէս աւանդեց: — 3. Ինչպէս թագուեցաւ: Հրեայք  
 անոր մարմնոյն ինչ զգուշութիւններ ըրին:

1. Չինուորք Յիսուսին վրայէն կարմիր  
 վերարկուն մէկ դի առին ու խաչն ուսը  
 տուած՝ Երուսաղեմի փողոցներէն անցընելով՝  
 կը տանէին Գողգոթա՝ որ կառափելու տեղ  
 ըսել է: Յիսուս ծանր խաչին բեռան տակ

ճնշուած ըլլալով՝ օգնելու համար բռնի Սիմոն Ալուրենացին բռնեցին, որն որ նոյն ատեն ազարակէն կը դառնար: Յիսուսին ետեւէն եկող արիւնկղակ մարդիկներուն ու խառնիճաղանճ ամբոխին մէջ՝ բարեպաշտ կանայք ալ կային, որոնք դառն արտասուօք կու լային: Յիսուս դարձաւ անոնց ըսաւ. Ձիս մի լաք, հապա զձեզ ու ձեր որդիքը լացէք, վասն զի օր պիտի դայ՝ որ զուակ չունեցողն երանելի պիտ'օր ըլլայ. նոյն ատեն լեռներուն պիտի կանչէք որ վրանիդ փլչին եւ բլուրներուն՝ որ զձեզ ծածկեն: Գողգոթա լեռան սաքը՝ լեղւով խառն գինի առջեւը բերին, որ խմէ: Աս բանս սովորաբար ամէն շարագործներուն կ'ընէին խաչ հանելէն յառաջ, որպէս զի ցաւ չզգան: Բայց Յիսուս յանձն չառաւ: Վերջապէս զինքը լեռան վրայ հանեցին ու խաչեցին, նմանապէս ուրիշ երկու շարագործ ալ անոր աջ ու ձախ գին խաչեցին: Յիսուս իր սաստիկ ցաւօցը մէջ՝ զինքը խաչ հանողներուն համար աղօթեց, ըսելով՝ Հայր անոնց մեղքին թողու՛թիւն տուր, վասն զի ըրածնին չեն գիտեր: Պիղատոս անոր խաչին վրայ տախտակի մը վրայ գրած հաստատել տուաւ աս խօսքերը. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից: Քահանայապետներն ըսին որ Անանկ մի գրեր, հապա գրէ որ ինք զինքը Հրէից թագաւոր անուանեց: Բայց Պիղատոս՝ Գրածս գրած է, ըսաւ: Իսկ զինուորները Յիսուսին զգեստները մէջերնին բաժնեցին եւ անկէ ամէն մէկերնուն մաս հանեցին. բայց պատմուճանն առանց կարանի ըլլալուն՝ վրան վիճակ ձգեցին: Ան-

կէ ետեւ խաչին ոտքը նստած՝ պահպանու-  
թիւն կ'ընէին:

Չ. Յիսուս անհանդուրժելի ցաւերու մէջ  
ընկղմած էր: Մէկ կողմանէ ալ քահանայա-  
պետք ու դպիրք խաչին քովն եկած՝ զինքը  
ծաղր ընելով կ'ըսէին. Ուրիշներն ազատեց,  
ինք զինքը չիկրնար ազատել. թէ որ Քրիս-  
տոսն է՝ թող խաչէն վար իջնայ, իրեն կը  
հաւատանք: Շատերն ալ գլուխնին շարժե-  
լով կ'ըսէին. Ահ, որ Աստուծոյ տաճարը  
պիտի կործանէիր ու երեք օրուան մէջ նորէն  
պիտի շինէիր. հիմա նայէ որ զքեզ փրկես:  
Չ ինուորներն ալ անոնց հետ միացան, իրեն  
քացցախ կու տային ու կը կանչէին Եթէ թա-  
ղաւոր ու Հրէից փրկիչն ես, զքեզ փրկէ:  
Մինչեւ հետը խաչուած երկու աւազակին մէկը  
նախատելով՝ իրեն ըսաւ. Թէ որ Քրիստոսն  
ես՝ զքեզ ալ զմեզ ալ փրկէ: Բայց ընկերք  
զինքն յանդիմանելէն եւ իրենց՝ յանցաւոր ու  
Յիսուսի՝ անմեղ ըլլալը խոստովանելէն ետեւ,  
դարձաւ Յիսուսին ըսաւ. Տէր, արքայու-  
թեամբդ եկած ատենդ՝ զիս յիշէ: Յիսուս  
զինքը քաջալերեց, ըսելով՝ Այսօր հետս դրախ-  
տը պիտի ըլլաս:

Խաչին ոտքը Յովհաննէս սիրելի աշակերտը  
կը կենար, անոր քովն ալ Աստուածածինն ան-  
պատմելի ցաւոց մէջ: Յիսուս աչուրները Մօ-  
րը դարձուցած՝ զՅովհաննէս ցուցուց ըսելով՝  
Ահա ասիկ քու որդիդ. ետքը Յովհաննէսին  
նայելով եւ զՍ. Աղոյսը ցուցրնելով՝ Ահա աս-  
իկ Մայրդ, ըսաւ: Յովհաննէս նոյն ատենէն  
սկսեալ՝ Ս. Աստուածածինն իր տունն առաւ:



եւ որդւոյ պէս անոր ամէն բանը կը հոգար :  
 Ս . Հարբ կ'ըսեն որ հոս Ս . Յովհաննէսով Ե-  
 կեղեցւոյ ամէն որդիքը նշանակուեցան , ուս-  
 տի եւ ամէն հաւատացեալք Ս . Աուսին յան-  
 ձնուեցան :

Յիսուսի խաչ ելլելէն երեք ժամ ետքը  
 կէսօրը երկինքը մթընցաւ ու բոլոր երկիրը  
 սաստիկ խաւար մը բռնեց , որն որ երեք ժամ  
 տեւեց : Աէսօրէն ետքը ժամը երեքին՝ Յիսուս  
 կանչեց . Եղի Եղի , լամա սարաքթանի , այս  
 ինքն՝ Աստուած իմ , Աստուած իմ , ինչու զիս  
 թող տուիր : Խաչին քովն ըլլողներն սկսան  
 զինքը ծաղր ընել որ Լսեցիք , Եղիան կանչեց .  
 սմանք ալ կ'ըսէին . Տեսնենք Եղիան կու գայ  
 մի զինքը փրկելու : Քիչ մը վերջը Յիսուս  
 ծարաւի եմ կանչելով՝ զինուորին մէկը լե-  
 դով խառն քացախի մէջ սպունդ մը թաթ-  
 խեց եւ եղեգի ճոթ կապած՝ բերանն երկըն-  
 ցուց : Յիսուս ճաշակելէն ետեւ՝ Ամենայն ինչ  
 կատարեալ է , ըսաւ . եւ ետքը բարձր ձայնի՝  
 Հայր , հոգիս քու ձեռքդ կը յանձնեմ , կանչեց  
 ու գլուխը ծռելով՝ հոգին աւանդեց : Մեկէն  
 երկիրը շարժեցաւ , քարերը ճաթեցան , զե-  
 րեզմանները բացուեցան , ու տաճարին մէջ  
 Սրբութիւն սրբոցին առջեւը կախուած վա-  
 րագոյրը վերէն վար պատուեցաւ :<sup>1</sup>

Հոն կեցող զինուորներուն հարիւրապետն  
 առ բաները տեսնելով՝ վկայեց որ Արդարեւ

<sup>1</sup> Ասոր պատուիլը՝ Քրիստոսի մահուամբը՝ Մովսէս-  
 կան որինաց զազրելուն , շնորհաց օրէնքին սկսե-  
 լուն , երկնից բացուելուն , աստուածային կրօնին  
 աշխարհքիս յայտնուելուն օրինակ էր :

Աստուծոյ Որդի է. պահպանութիւն ընող մեկալ զինուորներն ալ նոյնը կը հաստատէին: Իսկ ժողովուրդը սարսափած՝ կուրծքին կը զարնէր եւ լռութեամբ ետ կը դառնար:

**3.** Յիսուսին երկու շարագործներուն հետ խաչ ելած օրն ուրբաթ էր, զատկի տօնէն օր մը յառաջ: Որպէս զի չըլլայ որ մինչեւ շարաթ օրը անոնց մարմինը խաչին վրայ մնայ, Հրեայք զացին Պիղատոսին աղաչեցին որ անոնց ծունկը կտորեն: Պիղատոս հրաման տալով՝ անզգամ՝ զինուորներն եկան երկու աւազակին ծնկուրները խորտակեցին. բայց տեսնելով որ Յիսուս արդէն մեռեր է, անորը չխորտակեցին. միայն զինուորներէն մէկը՝ աւելի անպահով ըլլալու համար՝ փոքով անոր կողը խոցեց եւ անմիջապէս արիւն ու ջուր վաղեց:

Իսկ Յովսէփ Արիմաթացին՝ որ հարուստ մարդ մըն էր ու Հրէից ծերակուտին երեւելիներէն մէկը, եւ նոյն ատեն Արուսաղէմ կը բնակէր ու գաղտնի Յիսուսին կը հաւատար, Պիղատոսին դնաց անոր մարմինը վերցընելու հրաման ուղեց. Պիղատոս իրեն աղաչանացը զիջաւ: Ուստի նոյն օրը իրիկուան դէմ Յովսէփ Յիսուսին մարմինը պատելու եկաւ. Նիկողեմոս ալ մէկտեղ էր: Ասոնք Քրիստոսի մարմինը խաչէն վար առին, եւ ինչպէս որ նոյն ատեն երեւելի մարդիկներուն մարմինը թաղելու սովորութիւն էր՝ ազնիւ խնկերով մարմինն օժեցին ու պաստառակալի մէջ փաթտեցին: Յովսէփ Գողգոթա լերան մօտ պարտէզ մ'ունէր, ուր քարի մէջ փորուած փառաւոր նոր գերեզման կար, որուն մէջ դէռ

մեռել զբուսած չէր: Յիսուսի մարմինն ասոր մէջ դնելէն եւ գերեզմանին բերանը խոշոր քար մը զլտորցընելէն ետեւ՝ արտում տխուր աներնին գացին:

Մէկալ կողմանէ քահանայապետք ու գպիրք Պիղատոսին գացին ըսին թէ Ան խարերան իր կենդանութեան ատեն զբուցած էր որ Լրեք օրէն պիտի յարութիւն առնեմ. ուստի գերեզմանին քով երեք օր պահապան կեցուր. չըլլայ թէ աշակերտները զիշերանց մարմինը գողնան ու ձայն հանեն որ յարութիւն առաւ: Պիղատոս անոնց պատասխան տուաւ որ Պահապանները ձեր ձեռաց տակն են. գացէք ու զած զգուշութիւննիդ ըրէք: Անոնք ալ գացին գերեզմանին չորս դին պահապաններ կեցուցին, բերնի քարն ալ կնքեցին, որ չըլլայ թէ մէկն առանց իրենց գիտութեան տեղէն շարժէ:



ազնիւ ինկերով ու անուշահոտ իւղերով  
 օծեն: Ճամբան տրամուխեամբ գալու ատեն-  
 նին՝ իրարու կ'ըսէին թէ Վերեզմանին բերնի  
 քարն ո՞վ պիտի վերցընէ: Բայց պարտեղէն  
 ներս մտնելուն պէս՝ տեսնելով որ քարն արդէն  
 մէկ դի առնուած է, զարմացան մնացին ու  
 սոսկալով գերեզմանին քով գացին սկսան մե-  
 ջը նայիլ: Սակայն տեսնելով որ Յիսուսի  
 մարմինն հոն չէ, ալ աւելի խոռվեցան: Մէյ  
 մ'ալ գերեզմանին աջ դին գեղեցիկ երի-  
 տասարդի կերպարանօք հրեշտակ մը տեսան,  
 որն որ ձեան պէս ճերմակ զգեստ հագած  
 էր: Զարմացած նայելու ատեննին՝ առջինին  
 նման ուրիշ երկու հրեշտակ ալ տեսան, որոնց  
 զգեստին փայլունութենէն գերեզմանը լուսա-  
 ւորուեցաւ. իսկ իրենք վախերնէն գետինն ին-  
 կան: Ան ատեն հրեշտակներէն մէկն իրենց  
 ըսաւ. Մի վախնաք, գիտեմ որ Նազովրեցի  
 խաչելեալ Յիսուսը կ'ուղէք. բայց ինչո՞ւ կեն-  
 դանին՝ մեռածներուն մէջ կը փնտռէք: Հոս  
 չէ, յարեաւ. եւ ինչպէս յառաջ ըսած էր՝  
 Գալիլեա կ'երթայ: Շուտով գացէք անոր  
 աշակերտներուն ու Պետրոսին աս բանս իմա-  
 ցուցէք: Անոնք ահիւ եւ դողութեամբ անկէ  
 ելան գացին:

2. Մարիամ Մագդաղենացին արդէն մէկ-  
 ալ կանանցմէ յառաջ գերեզման եկած, եւ  
 դատարկ գտնելով՝ շփոթած արտօրնօք ետ  
 դարձած էր՝ բանը Պետրոսին ու Յովհաննէ-  
 սին հասկըցընելու: Երբ որ զիրենք գտաւ, մեծ  
 սրտիցաւով ըսաւ. Տէրը գերեզմանէն վերցու-  
 ցեր են, ո՞վ գիտէ ուր են տարեր: Ետքը դար-

ձաւ նորէն Յիսուսին դերեզմանն եկաւ եւ նստած կու լար: Լալու ատեն՝ դէպ ի գերեզմանին մէջը նայելով՝ ճերմակ հագած երկու հրեշտակ տեսաւ, որոնք Յիսուսի մարմնոյն կեցած տեղւոյն երկու ճոթը կը կենային: Ասոնք իրեն ըսին. Աին դու, ինչ կու լաս: Ան պատասխան տուաւ որ Տէրս գերեզմանէն հաներ են, չեմ գիտեր ո՛ւր դրեր են: Աս ըսաւ, կռնակը դարձաւ, զՅիսուս առջևը կեցած գտաւ. բայց անոր ո՛վ ըլլալը չիմացաւ: Յիսուս իրեն լալուն պատճառը հարցուց: Մարիամ զինքը պարտիզպան կարծելով՝ ըսաւ որ Եթէ դուն վերցուցած ես, ըսէ ո՛ւր դրիր: Յիսուս իր ծանօթ ու քաղցր ձայնովն անոր անունն որ տուաւ, Մարիամ անմիջապէս զինքը ճանչնալով՝ Աւրդապետ, կանչեց: Տէրն անոր ապսպրեց որ երթայ իր կողմանէ իր եղբարցը (աշակերտներուն) ըսէ թէ Ինք հիմա իր եւ անոնց շօրը կ'երթայ. եւ աս ըսելուն պէս՝ աներեւոյթ եղաւ: Ետքը իւղարեր կանանց մէկ մասին ալ երեւնալով՝ որոնք տըրտմութեամբ քաղաք կը դառնային, Ողջոյն ընդ ձեզ ըսաւ: Անոնք ուրախութենէն իրենք իրենցմէ ելան ու ստըն ինկած՝ երկրպագութիւն ըրին: Յիսուս զիրենք քաջալերեց. Մի վախնաք, ըսաւ. գացէք իմ եղբարցս ըսէք որ Գալիլեա երթան, ուր զիս կը տեսնեն:

**Յ.** Պետրոս ու Յովհաննէս ամենէն առաջ Մագդաղենացիէն գերեզմանին բաց ու դատարկ ըլլալուն լուրն առնելով՝ անմիջապէս հոն վաղեցին եւ իրօք գերեզմանին մէջ միայն Յիսուսի վարչամակը գտնելով՝ ետ դարձան

Էրուսաղէմ՝ եկան . մէկալ աշակերտներն ալ անոնց քով ժողովեցան : Գերեզմանին դատարկ ըլլալուն լուրն ամենուն ցաւը նորոգեց եւ ամէնքն ալ տրտմած էին : Մէյ մ'ալ իւղարեր կանանցմէ ոմանք հասան եւ տեսածնին ու հրեշտակէն առած պատուէրնին պատմեցին : Բայց ասոնք չհաւտացին : Անկէ ետքը Մագդաղենացին հասնելով՝ ըսաւ թէ զՅիսուս տեսայ, որ աս աս զրուցեց : Անոնք ասոր ալ չուզեցին հաւտալ : Աւերջապէս իւղարեր կանանցմէ ուրիշ ոմանք ալ եկան ու գերեզմանին քով հրեշտակ տեսնելնին եւ ճամբան Յիսուսի հետ խօսելնին պատմեցին : Ի վերայ այսր ամենայնի առաքեալք ասոնց ալ չհաւտալով՝ խօսքերնին երազի խօսակցութիւններ կը սեպէին :

Յիսուսին յարութիւն առնելուն լուրք քահանայապետաց ականջն ալ հասաւ . պահպանութիւն ընող զինուորները՝ որ վախերնէն թողուցած փախած էին, քաղաք եկան եղածն անոնց պատմեցին : Անոնք ալ ժողովրդեան ծերերուն հետ մէկտեղ աս բանիս վրայ խորհուրդ ընելէն ետեւ՝ նոյն զինուորները կանչեցին, ձեռուրնին խել մը ստակ տուին, որպէս զի չորս կողմն ըսեն թէ Գիշերը քնացած ատեննիս՝ աշակերտները զինքը գողցան : Միանգամայն զիրենք ապահովուցին որ եթէ բանը մեծերնուն ականջը հասնելու ըլլայ, իրենք մէջը կը մտնեն, կը յարմարցընեն : Անոնք ալ ստակն առին եւ նոյն սուտ համբաւը չորս դին տարածեցին :

4. Յիսուսին յարութիւն առած օրը՝ ա-

չակերտներէն երկու հոգի Երուսաղէմէն երեք ու կէս ժամ հետու եղող Եմմաուս գեղը կ'երթային: Ճամբան Յիսուսի վրայ խօսած ատեննին՝ անիկա յանկարծ անծանօթ մարդու կերպարանքով եկաւ իրենց ընկերացաւ եւ հարցուց թէ Մէջերնիդ ինչ բանի վրայ կը խօսիք եւ ինչո՞ւ տրտմած էք: Իրենցմէ կղէտվպաս անունով մէկը պատասխան տուաւ որ Դու՛ն միայն կաս Երուսաղէմի մէջ, որ աս օրերս եղածները չես գիտեր: Եւ երբ որ Յիսուս ինչ ըլլայն հարցուց, անիկա պատասխանեց որ ՉՅիսուս Նազովրեցին՝ որ խօսքով ու գործքով Աստուծոյ ու մարդկան առջեւ հզօր մարգարէ մըն էր, մեր քահանայապետներն ու իշխանները բռնեցին մահուան դատապարտեցին ու խաչ հանեցին: Մենք կը յուսայինք որ ինք զմեզ պիտի փրկէրայց աս երրորդ օրն է, որ աս բաներս եղան. եւ այսօր կ'ըսեն թէ մէկուն մէկային երեւցեր է: Ան ատեն Յիսուս մարգարէից խօսքերովն սկսաւ ցուցընել որ ան բաները պէտք էր որ ըլլային: Աս խօսակցութեան մէջ մինչեւ Եմմաուս գեղը մօտիկնալով՝ Յիսուս կ'ուզէր ալ յառաջ երթալ: Անոնք աղաչեցին որ քովերնին մնայ. ասանկով մէկտեղ սեղան նստան: Նստածնուն պէս՝ Յիսուս հացն առաւ օրհնեց ու բաժնեց: Ան ատեն աչուրնին բացուելով՝ զինքը ճանչցան. բայց ինք մէկէն աներեւոյթ եղաւ: Երբ որ մտքերնուն ապշութիւնն անցնելով՝ խելքերնին գլուխնին եկաւ, սկսան իրարու ըսել որ Արդէն հետերնիս խօսած ատեն՝ սրտերնիս կը ճմլէր:



Անմիջապէս սեղանէն ելան, Երուսաղէմ դարձան, որպէս զի աս ուրախալի լուրը մէկալնոնց ալ տան: Հոն առաքեալներն ու աշակերտներէն շատերը ժողոված դտան, որոնք Յիսուսի վրայ նոր լուր մ'ալ առած էին. Յիսուս Պետրոսին ալ երեւցած զինքը միսիթարած էր, վասն զի զՏէրն ուրանալուն համար սաստիկ ցաւոց մէջ ընկղմած էր: Եմմաուուս գեղէն դարձողները տեսնելնուն պէս՝ ամէնքը մէկտեղ կանչեցին որ Սաուզիւ Յիսուս յարութիւն առած է. Սիմոնին ալ երեւցեր է: Իրենք ալ ճամբանու Եմմաուուս պատահածը պատմեցին:

Ծ. Նոյն իրիկունը երբ որ Յիսուսի առաքեալները մէկտեղ ժողոված էին, եւ Հրէիցմէ վահնալնուն համար դռները գոցած՝ Յիսուսին յարութեան վրայ կը խօսէին, յանկարծ Տէրն մեր եկաւ, Խաղաղութիւն ընդ ձեզ, ըսելով՝ զիրենք ողջունեց: Անոնք աս անակնկալ երեւութէն այնպէս այլայլեցան, որ կարծեցին թէ տեսածնին ոգի մըն է: Իսկ Յիսուս իրենց ըսաւ. Ինչո՞ւ խռովեր էք, ինչո՞ւ մողբերնիդ անանկ խորհուրդներ կը բերէք: Մի վահնաք, ես նոյնն եմ. շոշափեցէք զիս ու տեսէք. Հոգին մարմին ու սակր չունի, ինչպէս զիս կը տեսնէք որ ունիմ: Ասոր վրայ ձեռուրներն, ոտուրներն ու կողը ցուցուց: Այսու ամենայնիւ ապշութիւննին բողբոմքն չէր փարատած, ուստի եւ չէին կրնար հաւատալ որ ինքն է: Ան ատեն Յիսուս հարցուց որ Ուտելու բան մը ունիք: Անոնք առջեւը խորոված ձուկ ու քիչ մը մեղր գրին: Յիսուս անոնցմէ կերաւ եւ աւել-

ցուկն իրենց տուաւ : Ետքը մտքերնին լուսաորեց, որպէս զի Ս. Գրքին իմաստն հասկընան : Իրենցմէ բաժնուելու ատեն աս խօսքերս ըսաւ . Ինչպէս որ Հայրս զիս խաւրեց, այնպէս ալ ես զձեզ կը խաւրեմ : Աս զրուցեց ու վրանին փշելով՝ Առէք Հոգի սուրբ, ըսաւ . որուն մեղքն որ կը թողուք՝ թող տրուած ըլլայ, եւ որուն որ կը պահէք՝ պահուած :

Բայց Յիսուս ասոնց երեւցած ատեն թողմաս հետերնին չէր . ետքն երբ որ պատմեցին թէ Մենք զՏէր տեսանք, անիկա չհատաց . Մինչեւ որ անոր ձեռքի դամբուն տեղերը չեմ տեսներ, եւ ձեռօք ան դամբուն տեղն ու կողը չեմ շօշափեր, չեմ հաւտար, ըսաւ : Ութ օր ետքը երբ որ նորէն տան դռները գոց՝ մէկտեղ կը խօսէին եւ թողմաս ալ մէջերնին էր, Յիսուս դարձեալ երեւնալով՝ զանոնք բարեւեց : Ետքը զթողմաս կանչեց, Աւերբերս շօշափէ եւ անհաւատ մ'ըլլար, հապա հաւատացեալ եղիր, ըսաւ : Թողմաս հաւտարով՝ Տէր իմ եւ Աստուած իմ, ըսաւ : Յիսուս պատասխանեց որ Գուն տեսար ու հաւտացիր, երանի անոնց՝ որոնք առանց տեսնելու պիտի հաւտան :

**Ե.** Ուրիշ անգամ մ'ալ Յիսուս Տիրերիայ ծովին քով երեւցաւ : Պետրոս, թողմաս, Նաթանայէլ, Չերեղեայ որդիքն եւ աշակերտներէն երկու հոգի մէկտեղ զանուելով՝ Պետրոսին առաջարկութեամբը ձուկ որսալու դացին : Բայց բոլոր գիշերն աշխատեցան բան մը չկրցան բռնել : Երբ որ առտու եղաւ,

Յիսուս ծովին քով եկաւ կեցաւ եւ իրենց կանչեց որ Մանկունք, ուտելու բան ունիք: Անոնք առանց զինքը ճանչնալու՝ Չէ, ըսին: Յիսուս պատուիրեց որ ուսկանը նաւին աջ կողմը ձգեն. եւ երբ որ նետեցին, այնչափ ձուկ եկաւ որ ուսկանը վեր չէին կրնար հանել: Ան ատեն Յովհաննէս ուրախութեամբ Պետրոսին ըսաւ որ Տէրն է: Պետրոս աս ըսելուն պէս՝ մէկէն ծով նետուեցաւ ու լողալով Յիսուսին եկաւ. իսկ մէկալնոնք նաւով ետեւէն կու գային, ձկով լեցուն ուսկանն ալ հետերնին: Յամաք ելան նէ՛ տեսան որ կրակ վառուած է, վրան ձուկ, քոֆն ալ հաց: Յիսուս անոնց հրամայեց որ իրենց բռնած ձկերէն բերեն: Պետրոս զնաց ուսկանը դուրս հանեց, մէջը 153 հաս միայն խոշոր ձուկ կար, ի վերայ այսր ամենայնի ուսկանին ամենեւին փասս մը չէր հասած: Անոնցմէ մէկ քանին կրակին վրայ խորվելէն ետքը՝ Յիսուս իրենց ըսաւ որ գան մէկտեղ ուտեն: Աւտելը լմըննալէն ետեւ՝ երեք անգամ Պետրոսին հարցուց որ Միմոն Յովնանու, զիս կը սիրե՞ս. եւ երբ որ անիկա երեք անգամ պատասխան տուաւ որ Ար սիրեմ, Յիսուս զինքն իր եկեղեցւոյն գլուխ դրաւ եւ միանգամայն խաչի վրայ մեռնելիքն ակնարկեց:

Ասկէ ուրիշ մէյ մ'ալ Գալիլեայի լերան վրայ երեւցաւ: Նոյն տեղն արդէն յառաջագոյն առաքեալներուն որոշած ըլլալով՝ իր գրեթէ բոլոր հաւատացեալները յառաջուրնէ հոն ժողված էին, այնպէս որ 500 հողիէն աւելի կային: Ոմանք զինքը տեսածնուն պէս՝ հաւ-

տացին, երկրպագութիւն ըրին, ոմանք ալ առջի բերան տարակուսեցան որ արդեօք ինքն է՝ թէ չէ: Յիսուս առաքելոց մէջ կենալով՝ իբննց հրաման տուաւ որ երթան հեթանոսներուն իր հաւատքը քարոզեն, զանանք մկրտեն եւ խոստացաւ որ մինչեւ աշխարհքիս վերջը հետեւնին կ'ըլլայ:

### Ի Գ . Գ Ա Ս

1. Յիսուս ուր, երբ եւ ինչպէս համբարձաւ: — 2. Պետրոս առաքելալ իր գլուխ ըլլալն ամենէն առաջ ինչ բանի մէջ ցուցուց: Աւերնատան մէջ քանի հոգի էին. 3000 հոգի ինչ աս թով դարձան:

1. Յիսուս իր յարութենէն վերջը մինչեւ 40 օր առաքելոց երեւնալով՝ հետեւնին խօսելէն ետեւ՝ պենտեկոստէի տօնին մօտ վերջին անգամ մ'ալ երեւցաւ ու ըսաւ. Հօրմէս խոստացուած պարգեւը պիտի խրկեմ. մինչեւ որ ընդունելու ըլլաք՝ Արուսաղեմէն մ'ելլէք: Յովհաննէս ջրով մկրտեց, իսկ դուք քանի մը օրէն Հոգւով սրբով պիտի մկրտուիք. եւ անով զօրացեալ՝ պիտի սկսիք Արուսաղեմի, Հրէաստանի, Սամարիայի եւ ուրիշ ամէն երկիրներու մէջ իմ անուանս վկայելու: Ատքը զիրենք առաւ Չիթենեաց լեռը տարաւ, հոն զիրենք օրհնեց եւ սկսաւ աշքերնուն առջեւն երկինք համբառնալ: Մէյ մ'ալ լուսաւոր ամպ մ'եկաւ զինքը ծածկեց: Առաքելալք անոր երկինք երթալը մտադրութեամբ դիտելու տունն՝ ձերմակ զգեստով երկու հոգի երեւցան եւ անոնց ըսին. Գաղիլեացիք, ինչ կեցեք երկինք կը նայիք: Աս Յիսուս՝ որ

Հիմա զձեզ թողուց երկինք ելաւ, նոյնպէս  
 օր մը նորէն պիտի գայ: Աս լսելով երեսներ-  
 նուն վրայ ինկան երկրպագութիւն ըրին ու  
 Երուսաղէմ դարձան, վերնատուն մը ժողված՝  
 շարունակ զԱստուած կ'օրհնէին եւ աղօթք  
 կ'ընէին:

2. Պետրոս քիչ մը յառաջ Յիսուսէն  
 առած հովուապետութեան պաշտօնն սկսաւ  
 ի գործ դնել. ինք առաջարկեց որ Յուդային  
 տեղը մէկն առաքեալ ընտրելով՝ իրենց 12  
 թիւը լեցընեն: Աս վախճանաւ երկու հոգւոյ  
 վրայ վիճակ ձգուեցաւ, Յովսէփին կամ Յուս-  
 տոսին եւ Մատաթիային վրայ: Վիճակը Մա-  
 տաթիային ելլելով՝ առաքելոց կարգն անցաւ:  
 Աս տասուերկուքն՝ աշակերտաց ու բարեպաշտ  
 կանանց եւ Ս. Աստուածածնայ. հետ՝ Քրիս-  
 տոսի համբարձումէն տասն օր ետքը Պենտե-  
 կոստէի տօնին օրը, երբ որ իրենց սովորական  
 ժողվելու տեղը կեցած աղօթք կ'ընէին, մէ-  
 կէն սաստիկ հով փչելու ձայնի նման ձայն  
 մ'եկաւ, բոլոր տունը լեցուց, եւ նստած  
 վերնատան մէջ՝ հրեղէն լեզուներ երեւցան,  
 որոնք եկան հոն ըլլողներէն ամէն մէկուն զըլ-  
 խուն վրայ կեցան: Ասով ամէնքը Հոգւով  
 սրբով լեցուելով՝ սկսան զանազան լեզուներ  
 խօսիլ, ինչպէս որ Հոգին սուրբ իրենց ամէն  
 մէկուն կ'ազդէր: Պենտեկոստէի տօնին պատ-  
 ճառաւ նոյն տառնուան ծանօթ ազգերէն Ե-  
 րուսաղէմ մեծ բազմութիւն կար, որոնք ան  
 սոսկալի ձայնն առնելով՝ առաքելոց եղած տան  
 առջեւ վազեցին, ու զարմացան Յնացին՝ երբ  
 որ տեսան որ անոնց ամէն մէկն իրենց երկրին

սեպհական լեզուաւը կը խօսին եւ Աստուծոյ մեծամեծ գործքերը կը պատմեն: Սկասն իրարու հարցընել որ Ասոնք ամէնքն ալ Գալիլեացի չեն. ինչպէս ուրեմն մեր ամէն մէկուն սեպհական լեզուաւը կը խօսին: Բայց մէջերնէն ոմանք ալ եղան՝ որ ըսին թէ գինով են: Պետրոս մէկալ առաքելոց հետ անոնց առջեւն ելաւ, բրած զրպարտութիւններնուն սխալ ըլլալը ցուցուց. եւ Հոգւով սրբով խօսած ազգու ճառովն անոնց հասկըցուց որ խաչին վրայ չարչարուելով մեռնողը՝ Քրիստոսն էր, որն որ դարերով յառաջ խոստացուած էր ու կը սպասուէր եւ հիմա մարգարէից խօսքերն իր վրայ կատարուեցան: Ժողովուրդն աս լսելով՝ զզջաց եւ ամէնքը Պետրոսին ու մէկալ առաքեալներուն կը հարցընէին որ Ինչընենք: Պետրոս պատասխան տուաւ որ Մեղքերնուդ թողութիւն գտնելու համար՝ ապաշխարեցէք, Յիսուսի անուամբ մկրտուեցէք: Իրեն խօսքին շատերն անսալով՝ մկրտուեցան, անանկ որ նոյն օրը 3000 հոգւոյ չափ դարձան, Յիսուսի աշակերտեցան: Աս կերպով ամէն օր կը շատնար հաւատացելոց թիւը, որոնք միշտ առաքելոց քարոզութիւնները կը լսէին, մէկտեղ աղօթք կ'ընէին ու հաղորդութեան խորհրդոյն մասնակից կ'ըլլային: Ամէնքը մէկ սիրտ մէկ հոգի էին, ամէն բաներնին ալ հասարակաց էր. ինչք ու ստացուած ունեցողը կը ծախէր, ստակը կարօտելոց կը բաժնէր:

## Ե . Գ . Լ . Ո . Ի . Ի

ԱՌԱՔԵԼՈՅ ՔԱՐՈՋԵԼՈՒ ՍԿՍԵԼԷՆ ՄԻՆՉԵՒ  
ՊԵՏՐՈՍԻ ՈՒ ՊՕՂՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆԸ

(33 — 67)

## Հ Ա Տ Ո Ւ Ա Ն Ա .

ԲՐԷՄԻՆԷՆՆԵՐԻՆԸ ԵՐՈՍՈՂԷՐՆԵՐԻՆ  
ԸՆ ԺԱՐՊՈՒՄԻՆ :

## Ի Ե . Գ Ա Ս

1. Ի ծնե կազն ինչպէս բժշկուեցաւ : Պետրոս եւ Յով-  
հաննէս ինչու բանս մտան : — 2. Ինչպէս աղատեցան :  
— 3. Անանիոս ու Սափիրոս ինչ պատիժ կրեցին :

1. ՊԵՆՏԵԿՈՍՏԷՒ ԵՒ ՄՈՆԻՆՈՐ օրերը Պետրոս  
ու Յովհաննէս առաքեալք անգամ մը կէս  
օրէն Ետրը ժամե երեքին տաճար գացած էին :  
Տաճարին՝ Գեղեցիկ ըսուած դրան քով ի ծնե  
կաղ աղքատ մը կար, որն որ 40 տարւընե  
աւելի էր ողորմութիւն առնելու համար՝ ա-  
մէն օր հոն կ'երթար կը կենար : Ան երկուքին  
տաճար մտնելը տեսնելով՝ աղաչեց որ իրեն  
բան մը տան : Անոնք կեցան եւ Պետրոս՝ Մե-  
ղի նայէ : ըսաւ : Երբ որ աղքատը նայեցաւ,  
Պետրոս իրեն զուցեց . Արժաթ սակիչուներմ,  
բայց ունեցածս կու տամ . Յիսուս նազովըն-  
ցւոյն անուամբն էլիբ քայէ : Աս ըսաւ ու ձեռ-  
քէն բռնեց վերցուց : Կաղը մէկէն բժշկեցաւ

Եւ իրենց հետ տաճար մտնելով՝ ուրախու-  
թեամբ զԱստուած կ'օրհնէր: Ժողովուրդն՝  
որ զինքը կը ճանչնար, երբ որ քալելը տեսաւ,  
սկսաւ զարմանալ, եւ ամէնքն ան երկու ա-  
ռաքելոց զլուխը թափեցան՝ որ իմանան թէ ի  
ծնէ կաղն ինչպէս մէկէն աղէկցաւ: Աս առ-  
թով Պետրոս անոնց առջեւը Յիսուսի յա-  
րութեան վրայ խօսեցաւ, եւ իր աս երկրորդ  
հրապարակական ճառովը 5000 հոգւոյ շափ  
մարդ դարձուց: Իսկ քահանայապետք, Սա-  
ղուկեցիք եւ տաճարին պահապանաց մեծերը  
մէկէն վրանին հասնելով՝ զՊետրոս եւ զՅով-  
հաննէս բռնեցին բանտարկեցին. վասն զի  
առաքելոց ժողովրդեան քարոզելուն շատ դէմ  
էին. մանաւանդ Սաղուկեցիք՝ որոնք յարու-  
թեան չհաւտարով՝ չէին ուզեր որ Քրիստոսի  
յարութիւն առնելը քարոզուի:

Չ. Երկրորդ առտու Կայիափա ու Աննա  
քահանայապետները՝ ժողովրդեան ծերերն ու  
դպիրները ժողովելով՝ Պետրոս եւ Յովհաննէս  
առաքելայներն առջեւնին կանչեցին, հարցու-  
ցին թէ Որո՞նք անուամբն ու իշխանութեամբն  
ան կաղը բժշկեցիք: Պետրոս պատասխան  
տուաւ որ Մինակ Յիսուս Քրիստոսի անու-  
նը տարով՝ անիկա բժշկեցաւ. միանգամայն  
ան իրենց խաչել տուած Յիսուսին՝ ճշմարիտ  
Մեսիա ըլլալն ալ յայտնապէս խոստովանե-  
ցաւ: Անոնք թէպէտ ասանկ համարձակ պա-  
տասխանէն աւելի եւս ատելութեան գրգռե-  
ցան, բայց որովհետեւ ժողովուրդն առաքելոց  
քարոզած վարդապետութիւնը սիրով մտիկ  
կ'ընէր, անոր համար չյանդգնեցան իրենց բան



մ'ընել : Ուստի նորէն խորհուրդ ընելով՝ որոշեցին որ ան երկուքը թող տան . միայն իրենց ապսպրեցին որ անկէ ետեւ զՅիսուս չքարոզեն : Առաքեալք ասոր պատասխան տուին որ Ինչ արգելք զներու եւ սպառնալիք ընելու ըլլաք , շէնք կրնար Աստուծակ աւելի ձեզի հնազանդիլ : Արձակուելէն ետեւ՝ եղածը գացին հաւատացելոց պատմեցին . անոնք ալ միաբան աղօթքով Աստուծակ խնդրեցին որ իր ծառաներուն զորութիւն տայ աշխարհքիս իշխանութեան դէմ՝ կենալու : Կոյն ատեն մէկէն իրենց կեցած տեղը շարժեցաւ եւ ամէնքը Հոգւով սրբով զօրացան , անանկ որ յառաջուրնէ աւելի համարձակ իրենց քարոզութիւնն յառաջ տարին :

Յ . Ինչպէս զուցեցինք հաւատացելոց մէջէն հարուստ ըլլողը՝ տունն ու ազարակը կը ծախէր , գինն առաքելոց կը բերէր , որպէս զի կարօտներուն բաժնեն : Աս հարուստներուն մէջ Անանիա ու Սափիրա անունով երկու ամուսինք կային : Անանիա ուրիշներուն նայելով՝ իր ազարակը ծախեց . բայց զնոյն մէկ մասը կնոջը հաւանութեամբ քովը պահեց , մէկալ մասը տարաւ առաքելոց ստբը դրաւ : Պետրոս առաքեալ անոր բրածն երեսը զարկաւ եւ ըսաւ որ Աս խաբէական գործքովդ չէ թէ մարդս հապաղ Աստուած ուղեցիր խաբել : Անանիան աս լրածին պէս՝ մէկէն ինկաւ մեռաւ : Հաւատացեալներէն քանի մը հոգի վերցուցին , տարին թաղեցին : Երեք ժամ ետքը Սափիրա գալով՝ Պետրոս իրեն հարցուց որ Ազարակն այնչափի ծախեցիր : Եւ երբ որ

կինն հաստատեց, Պետրոս՝ Աս ինչ է, ըսաւ, ինչո՞ւ երկուքնիդ զԱստուած խաբելու խօսք մէկ էք ըրեր. դուն ալ երկանդ քով թաղուիս: Կինն անմիջապէս ինկաւ մեռաւ. եւ էրիկը թաղողներն առին զինքն ալ քովը թաղեցին: Աս բանիս լուրը հաւատացելոց ականջը հասնելով՝ վրանին վախ ինկաւ:

### Ի Ձ . Գ Ա Ս

1. Տասուերկու առաքեալներն ինչո՞ւ բանա գացին: Որո՞ւն ձեռքոքն ազատեցան: Գամաղել է՞ ս՛վ է. Խորհրդեան մէջ ինչ խօսեցաւ: — 2. Եթէր սարկուադուծք երբ ընտրուեցան: Ստեփանոս ս՛վ է. ինչո՞ւ քարկոծեցաւ:

1. Հաւատացեալք օրէ օր կ'աւելնային. առաքելոց ձեռքով անհամար հրաշքներ կը դործուէր, մինչեւ հիւանդներն իրենց անկողնովը ճամբուն վրայ կը դնէին, որպէս զի Պետրոս առաքեալ անցած ատեն՝ շուքն անոնց վրայ իյնալով՝ հիւանդութիւններնէն բժշկուին: Երուսաղէմայ բոլորաիրն ըլլող քաղաքներէն մարդիկ խումբ խումբ կու գային, հիւանդներ կը բերէին. եւ ամէնքն ալ կ'առողջանային: Յիսուսի Քրիստոսի անուան աս կերպով փառաւորուելուն՝ քահանայապետք եւ իրենց կողմնակիցները չկրնալով տանիլ՝ օր մը բոլոր առաքեալները բռնել բանա դնել տուին: Բայց զիչերը Աստուած հրեշտակ մը խրկելով՝ բանտերնուն դռները բանալ եւ զանոնք դուրս հանել տուաւ: Հրեշտակն անոնց ապսպրեց որ տաճար երթան յառաջուան պէս ժողովրդեան առջևը խօսին: Աստուանց վերին ատեանը ժողվեցաւ եւ հրամայեց որ առա-

քեալք առ ջեւնին բերուն: Ծառաները գացին բերելու. մէյ մ'ալ տեսան որ բանտին մէջ մարդ չկայ: Գարձան ըսին որ Բանտն ամենայն զգուշութեամբ գոցուած էր, դրան առ ջեւն ալ ըստ սովորութեան պահապանք կը սպասէին, բայց զիրենք մէջը չգտանք: Հոն ըլլողները զարմացան մնացին: Աոյն ատեն մէկը եկաւ զրուցեց թէ Ան բանտարկած մարդիկնիդ՝ տաճարին մէջ կեցած՝ ժողովրդեան կը քարոզեն: Անմիջապէս մարդ խրկեցին որ զանոնք բերեն, բայց բռնի չէ. վասն զի կը վախնային որ չըլլայ թէ ժողովրդենէն քարկոծուն: Երբ որ առաքեալք վերին ատենին առ ջեւն ելան, քահանայապետն անոնց ըսաւ. Չեզի խտիւ չէինք պատուիրած որ ան (Յիսուսի Քրիստոսի) անուամբ չվարդապետէք: Գուք չէ թէ միայն անոր վարդապետութեամբ բոլոր առ քաղաքը լեցուցիք, հապանաեւ զմեզ անոր (Յիսուսին) արեան թափուելուն յանցաւոր կը բռնէք: Պետրոս պատասխան տուաւ որ Աւելի Ատուծոյ հնազանդելու է քան թէ մարդկան. Ատուած՝ ձեր սպաննել տուած Յիսուսը յարոյց. դուք զինքը խաչ հանեցիք, բայց Ատուած իր ամենազօր բազկաւք բարձրացուց եւ մարդկան առաջնորդ ու փրկիչ ըրաւ, որպէս զի Իսրայէլ անով ապաշխարութեան դառնայ ու մեղաց թողութիւն գանէ: Աս պատասխանին համար՝ ատենին մէջ ըլլողները սաստիկ կատղեցան, մինչեւ մտածեցին որ զամենքն ալ սպաննել տան: Գամաղիէլ անունով մէկը՝ որն որ թէպէտ Փարիսեցոց ազանդին կը հետեւէր, բայց քաջ օրէնսդէտ

էր ու բոլոր ժողովրդեան առջեւ մեծ համարում ունէր, ոտք ելելով՝ առարեալները դուրս հանել տուաւ ու ժողովականներուն ըսաւ. Ի՛նչ բայելացիր, ասոնց դէմ՝ բնելիքներնուդ վրայ աղէկ մտածեցէք: Քիչ մը ասեն յառաջ Թեւդաս անունով մէկն ելաւ եւ ձայն հանելով որ մեծ մէկն է, առջի բերան 400 հոգւոյ շափ մարդ իր կողմը ձգեց. բայց ետքէն ինք սպանուեցաւ, իր կողմնակիցները ջրուեցան, եւ այսպէս ձեռք զարկածը գլուխ չկրցաւ հանել: Ետքը Յուդա Վալիլեացին ելաւ եւ շատերն իր կողմը ձգեց. բայց ան ալ սպանուեցաւ ու կողմնակիցները ջրուեցան: Անոր համար իմ կարծիքս ան է, որ աս մարդիկները չհալածէք. թէ որ իրենց ձեռք զարկածը մարդկային գործք է, ինք իրմէ կ'անցնի կերթայ. իսկ թէ որ Աստուծոյ է, ինչ որ ընէք՝ պարագ է, չէք կրնար դէմ կենալ: Ժողովականները թէպէտ կատղած էին, բայց Վամաղիելին խօսքին դէմ չկրնալով դնել, առարեալները մեռցնելու գիտաւորութիւնը փոխեցին. սակայն առանց պատժի ալ թողուլ չուզեցին, հապա աղէկ մը ձաղկել տուին եւ ասպարեցին որ մէյ մ'ալ Յիսուսի անուամբ չվարդապետեն: Անոնք Քրիստոսի համար նախատուելնուն վրայ ուրախանալով՝ ելան զացին, եւ առջինէն աւելի կը քարոզէին:

2. Երբ որ հաւատացելոց թիւը շատ բազմացաւ, երբեմն մէջերնին տրտունջ կ'ըլլար որ աղքատ այրիներուն օրրատօրական պէտքը չհոգացուիր: Տասուերկու առարեալք աս լսելով՝ հաւատացեալները մէկտեղ ժողովեցին եւ

ըսին . Մենք չենք կրնար Աստուծոյ խօսքը քարոզելը թող տալով՝ մարմնաւոր սեղանը հագալ . անոր համար մէջերնէդ եօթը հոգի ընտարեցէք , որոնց որ կարող ըլլաք վկայել թէ Հոգւով սրբով եւ խմաստութեամբ լի են , որպէս զի մարմնաւոր պիտոյքը հոգալն անոնց յանձնենք եւ մենք մինակ աղօթքի ու քարոզութեան պարապինք : Աս առաջարկութիւնն ընդունելի ըլլալով՝ եօթը հոգի ընտարեցին , որոնց մէջէն երեւելիներն էին Ստեփանոս ու Փիլիպոսս եւ զանոնք առաքելոց առջեւը բերին , որոնք անոնց վրայ աղօթք ըրին ու ձեռք դրին : Անկէ ետեւ Աստուծոյ աւետարանն աւելի կը տարածուէր ու Աբուսաղեմի մէջ դարձողներուն թիւը համրանքը չկար : Մինչեւ նաեւ Հրէից քահանայիցմէ շատերը կը դառնային :

Ստեփանոս՝ որ հաստատուն հաւատքով ու Հոգւով սրբով լի մարդ մըն էր , ժողովրդեան մէջ շատ հրաշքներ կը գործէր : Աբուսաղեմայ մէջ նոյն ատեն շատ ժողովրդանոցներ կար՝ աղօթք ընելու եւ Ս . Գիւրքը լսելու համար : Ասոնց մէջի գիտուններէն ոմանք մէկ եղան , ուղեցին Ստեփանոսին դէմ՝ դնել . բայց անոր խօսքերուն չկրնալով պատասխան տալ , ամօթով ու կատաղութեամբ լեցուած զացին զաղանի քանի մը շարագործ մարդիկներ դրողեցին որ անոր դէմ սուտ վկայութիւն տան : Ասոնք կ'ըսէին թէ Ասեցինք որ Մովսիսի ու Աստուծոյ դէմ կը հայհոյէր : Ասով ժողովուրդը , ծերերն ու դպիրք Ստեփանոսին դէմ ելան եւ վերին ատենին առջեւը կանչեցին :

Հոն երբ որ սուս վկաներն իրենց զըպարտու-  
թիւնները կրկնեցին, ասենին մէջ նստողները  
տեսան որ Ստեփանոսին երեսը հրեշտակի պէս  
ահեղ կ'երեւար: Քահանայապետն ոտք ելաւ  
հարցուց թէ Գուն ասոնց ըսածին ինչ պա-  
տասխան կու տաս: Ստեփանոս Ս. Գրքին  
պատմութիւնը համառօտիւ պատմելով՝ Աս-  
տուծոյ, Մովսիսի, տաճարին եւ օրինաց վրայ  
ունեցած յարգութիւնը յայտնեց, միանգա-  
մայն ցուցուց որ Իսրայելացիներէն շատերն  
ասոնց դէմ կը գործէին: Իր երկայն խօ-  
սակցութիւնը լմընցուց ըսելով որ Գուք  
խտասիրտ ըլլալնուդ՝ միշտ Հոգւոյն սրբոյ  
հակառակ էք. ինչպէս ձեր հարքն ըրին, նոյն-  
պէս դուք ալ կ'ընէք. անոնք Արդարոյն  
(Քրիստոսի) զարուստը պատմողներն սպաննե-  
ցին, իսկ դուք հիմակ Արդարոյն մատնիչ ու  
սպանող եղաք: Ժողովականք աս լսելով՝ սկը-  
սան բարկութենէն ահաանին կրճտել: Իսկ  
Ստեփանոս Հոգւով սրբով լեցուած՝ երկինք  
նայեցաւ ու Աստուծոյ փառքն եւ զՅիսուս  
Աստուծոյ աջ կողմը նստած տեսնելով՝ բարձր  
ձայնիւ կանչեց թէ Երկինքը բացուած ու Որ-  
դին մարդոյ Աստուծոյ աջ դին նստած կը  
տեսնեմ: Անոնք աս լսեցին նէ՛ ահանջնին գո-  
ցեցին ու պոռալով վրան վազեցին, քաշեցին  
քաղքէն դուրս հանեցին քարկոծելու տեղը  
տարին: Հոն զինքն հանուեցուցին, զգեստնե-  
րը Սաւուղ անունով երիտասարդի մը տունին  
եւ զՍտեփանոս քարկոծեցին, որն որ հոգին  
Յիսուսի նուիրեց, ծունկ ինկած՝ սպանողնե-  
րուն համար Աստուծոյ աղաչեց որ ըրածնին

իրենց մեղք չհամարի ու հողին աւանդեց :  
Սաւուղ՝ որ Ստեփանոսին զգեստները պա-  
հեց, անոր մեռնելուն ալ զործակից էր :  
Իսկ բարի մարդիկ եկան անոր մարմինը վեր-  
ցուցին թաղեցին եւ վրան սուգ բռնեցին :

### Ի Է • Դ Ա Ս

1. Փիլիպպոս ինչ աստով Սամարիա եկաւ. հոն ինչ  
բրտու : Սիմոն մոգ ով է : Պետրոս եւ Յովհաննէս Սա-  
մարիա ինչ բրին : — 2. Աւերբերին ինչպէս զարձաւ :

1. Ստեփանոսին մարտիրոսութենէն ետքը  
Երուսաղէմայ մէջ հաւատացելոց դէմ՝ հալա-  
ծում էլլելով՝ ամէնքը Հրէաստանի ու Սա-  
մարիայի մէջ ասդին անդին ցրուեցան : Սա-  
ւուղ եկեղեցին կը հալածէր, տնէ տուն կը  
մտնէր՝ դտած հաւատացեալները կը բռնէր կը  
բանտարկէր : Երուողներն ասդին անդին կ'եր-  
թային զՅիսուս կը քարոզէին :

Փիլիպպոս Սամարիա եկաւ եւ հոն զՔրիս-  
տոս կը քարոզէր. ժողովուրդն անոր զործած  
հրաշքները տեսնելով՝ իր վարդապետութիւնն  
յօժարութեամբ մտիկ կ'ընէր : Հոն Սիմոն ա-  
նունով մէկը կար, որ իր կախարդութեամբը  
Սամարացիները խաբած էր, այնպէս որ անունը  
դրած էին Աստուծոյ մեծ զօրութիւնը : Բայց  
երբ որ իրենք Փիլիպպոսի ձեռօքը մղրտեցան,  
Սիմոնն ալ մղրտուեցաւ ու Փիլիպպոսին յա-  
րեցաւ, վասն զի անոր զործած մեծամեծ  
հրաշքները զինքն արտաքոյ կարգի զարմացու-  
ցած էին : Աւաբեալք երբ որ Երուսաղէմ  
լսեցին որ Աստուծոյ խօսքը Սամարիա ընդու-  
ներեն, Պետրոս եւ Յովհաննէս հոն եկան ու

ձեռքերնին մկրտուողներուն վրայ գնելով՝ Հոգին սուրբ կու տային: Սիմոն առ անունելով՝ առաքելոց առջևը ստակ գրաւ, որ ձեռք գնելով Հոգին սուրբ տալու իշխանութիւնն իրեն ալ պարգևէն: Անոնք պատասխան տուին որ Ստակդ քեզի հետ կորսուի, որովհետև Աստուծոյ պարգևը ստրկով գնել կ'ուզես: Աստուծոյ առջևը սիրող ուղիղ չէ, առքուստի չարութեանդ վրայ ապաշխարէ ու Աստուծոյ աղաչէ որ քեզի թողութիւն տայ: Սիմոն անոնց յանձնեց որ իրեն համար աղօթեն: Ան երկու առաքելալք Սամարիայի եւ անոր շատ գեղերուն մէջ աւետարանը քարոզելէն ետև՝ նորէն Երուսաղէմ դարձան:

Չ. Իսկ Փիլիպպոսին՝ Աստուծոյ կողմանէ հրեշտակ մ'եկաւ ըսաւ որ դէպ ի հարաւ գացող ճամբան երթայ, որն որ անապատի մէջէն Վազա կը տանի: Փիլիպպոս հոն երթալու ատեն՝ տեսաւ որ փառաւոր կառքով երևելի Եթովպացի մը կ'անցնի: Ասիկա Աանդակայ Եթովպացի արկնոջ սենեկապետներուն վերինն ու անոր բոլոր գանձուն վերակացուն էր, որ Աստուծոյ երկրպագութիւն ընելու համար Երուսաղէմ եկած էա կը գառնար: Փիլիպպոս կառքը տեսածին պէս՝ Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբը քովը գնաց, եւ տեսնելով որ Եսայի մարգարէին զիբրը կը կարգայ, հարցուց թէ կը հասկընաս: Ներքինն՝ Չէ, ըսաւ եւ աղաչեց որ ելլէ քովը նստի ու կարդացածն իրեն մեկնէ: Իսկ կարդացածն ան տեղն էր՝ ուր որ Քրիստոսի վրայ կ'ըսէր. Աշխարհի պէս առանց ձայնի մնացընէ-



լու գնաց : Ներքինին հարցուց թէ Աս բանս որո՞ւնն համար կ'ըսէ : Փիլիպպոս ան խօսքին Քրիստոսի վրայ ըլլալը հասկըցուց եւ բոլոր Քրիստոսի հաւատքն անոր սորվեցուց : Աս խօսակցութեան մէջ ջրի մը քով հասնելով՝ ներքինին մկրտուիլ ուզեց , մկրտուեցաւ ու Հոգին սուրբ վրան եկաւ : Հրեշտակը յանկարծ զՓիլիպպոս անկէ վերցուց , ուրիշ քաղաք տարաւ . ներքինին ալ ուրախութեամբ իր տեղը գնաց : Փիլիպպոս մէկէն ինք զինքն Ազովտոս գտաւ , ան կողմերը պարտելով՝ աւետարանեց ու մինչեւ կեսարիա հասաւ :

### Ի Ը . Գ Ա Ս

1 . Պօղոս աստիճանն դարձն ինչպէս եղաւ : Գամսակուն ինչո՞ւ փախաւ : — 2 . Պետրոս Ա իւզդա գով բժշկեց : Յոպտէ զով յարոյց :

1 . Պօղոս կամ՝ առջի անունովն անուանելով՝ Սաւուղ , սաստիկ վրէժխնդրութեամբ Աստուծոյ Եկեղեցին հալածելու ետեւէ ըլլալով՝ քահանայապետներէն խնդրեց որ Գամսակոսի ժողովրդանոցներուն ուղղուած թուղթ տան իրեն , որուն մէջ իրեն իշխանութիւն տրուած ըլլայ հոն դանուող հաւատացեալները բռնելու կապած Երուսաղէմ բերելու : Անոնք յօժարութեամբ նոյն թուղթը տուին : Սաւուղ երթալու ատեն՝ Գամսակոսի մօտերը մէկէն չորս գին սաստիկ լոյս մը փայլատակելով , սարսափած զեօինն ինկաւ : Նոյն ատեն ձայն մ'առաւ որ կ'ըսէր . Սաւուղ Սաւուղ , զիս ինչո՞ւ կը հալածես : Անիկա հարցուց թէ Տէր , դուն ո՞վ ես : Զայնն ըսաւ որ Էս՝ Յի-

սուս Նազովրեցին եմ: Եւ երբ որ Սաւուղ հարցուց թէ Տէր, ինչ կ'ուզես որ ընեմ, ձայնը պատասխան տուաւ. Ել քաղաք դնա, ինչ ընելիքդ հոն քեզի կ'ըսեն: Քովինները միայն ձայնը կը լսէին, ուրիշ բան չէին տեսներ: Սաւուղ ոտք էլաւ, աչքը բաց՝ բան չէր տեսներ, անոր համար ձեռքէն բռնեցին Գամասուկոս տարին, ուր երեք օր բերանը բան չգրաւ. շարունակ Աստուծոյ կ'աղօթէր: Գամասուկոս Անանիա անունով Յիսուսի աշակերտներէն մէկը կար. Սաւուղին նոյն քաղաքը գալուն երրորդ օրը զիչեր ասեն տեսիլքի մէջ Քրիստոս իրեն հրամայեց որ անոր կեցած տեղն երթայ: Անանիա՝ անոր ինչպէս մարդ ըլլալն յառաջ բերելով շուզեց. բայց Քրիստոս պատուէրը կրկնեց, ըսելով որ Անիկա իմ անունս հեթանոսաց, թագաւորաց եւ Խորայելացւոց քարոզելու ընտիր գործիքս պիտի ըլլայ: Արդէն ալ իմ անուանս համար ինչ նեղութիւններ քաշելիքն իրեն ցուցուցած եմ: Անանիա աս տեսիլքը տեսած ատեն՝ ասոր նման տեսիլք մ'ալ Սաւուղ ունեցաւ. տեսաւ որ Անանիան իրեն եկեր ձեռքն աչուրներուն վրայ կը դնէ, որպէս զի բժշկուի:

Աստու կանուխ՝ Անանիա Սաւուղին կեցած տունն եկաւ, զինքը գտաւ եւ ըսաւ. Սաւուղ եղբայր, ինձի նայէ. ճամբան քեզի երեւցող Տէրն զիս իրկեց, որ աչքդ բացուի ու Հոգւով սրբով լեցուիս: Աս ըսելով՝ ձեռքն անոր աչքին վրայ դրաւ, որով կեղեւանքի պէս բաներ ինկան, սկսաւ տեսնել եւ Անանիան ճանչցաւ, որուն գէմքը տեսիլքին մէջ

տեսած էր : Ետքը Անանիային խօսքովը մկրտուեցաւ , նստաւ կերակուր կերաւ ու զօրացաւ : Հոն բլլող հաւատացելոց հետ տեսնուեցաւ եւ առջևի շարաթ օրը ժողովողանոցն երթալով՝ հրապարակաւ քարոզեց թէ Խաչ ելլող Յիսուսը ճշմարիտ Գրիստոսն , Աստուծոյ Որդին է : Լսողները զարմացած իրարու կը հարցընէին թէ Աս ան մարդը չէ՞ , որ Երուսաղէմ հաւատացեալները կ'ուզէր բռնորովին ջնջել , եւ հոս ալ նոյն վախճանաւ կու գար : Բայց Պօղոս անանկ յայտնի կերպով ցուցուց իրենց թէ Յիսուս դարերով վերսպասուած Մեսիան է , որ պատահան չկրցան տալ : Հրեայք դուրս ելան սրոշեցին որ զինքն սպանեն . եւ որպէս զի չբլլայ որ փախցընեն՝ ամէն դրանց քով պահապան կեցուցին : Հաւատացեալք բանն իմանալով՝ զինքը քաղքին պարսպին վրայ շինուած տան մը պատուհանէն վանդակով վար իջուցին ու փախուցին : Պօղոս քանի մը օրէն Երուսաղէմ հասաւ , ուր աշակերտներուն ընկերանալ կ'ուզէր . բայց անոնք վախնալով՝ իրմէ կը քաշուէին : Վերջապէս Բառնաբաս՝ որ զինքը Գամասկոս տեսած էր , առաւ առաքելոց տարաւ , եւ ինչպէս դառնալն ու Գամասկոս բրածներն մէկիկ մէկիկ անոնց պատմեց . ասով զինքը մջերնին առին :

Չ . Աշակերտաց մէջէն հալածանաց պատճառաւ Հրէաստան , Սամարիա ու Գալիլեա ասպին անդին ցրուողները , ամէն դի աւետարանք քարոզելով՝ անհամար մարդիկ դարձուցին : Բիշ մը ետքը հալածանքը դադրելով՝

Պետրոս ուզեց ան տեղուանքը պարտիլ ու հաւատացեալները տեսնել: Լիւզդա դալով՝ Էնեաս անունով մարդու մը տուն մտաւ, որն որ անդամալոյծ բլալուն՝ ութը տարի էր անկողնէն ելած շունէր: Պետրոս անոր քովը գնաց՝ Էնեաս, ըսաւ, Յիսուս Քրիստոս զքեզ բժշկեց. ոտք ել, անկողինդ թօթուէ: Ենեաս հրամանին անսաց ու բժշկեցաւ: Չինքը ճանչցողներն՝ ողջ առողջ պարտիլը տեսնելով՝ կը դառնային Յիսուսի կը հաւայային:

Յոգալէ քաղաքը Տարիթա անունով հաւատացեալ կին մը կար, որ խիստ բարեգործ էր, մանաւանդ աղքատաց շատ ողորմութիւն կ'ընէր: Ասիկա մեռնելով՝ յուղարկաւ որութեան ամէն բանը պատրաստած վերնատան մէջ դրած էին: Աշակերտները Պետրոսին Լիւզդա բլալն իմանալով՝ երկու հոգի խրկեցին աղաչեցին որ շուտ մը հոն գայ: Պետրոս անմիջապէս անոնց հետ ճամբայ ելաւ եկաւ: Հաւատացեալք զինքն առին վերնատուն տարին: Այրիներն ու աղքատները մեռելին չորս գին առած՝ կու լային ու Տարիթային իր ձեռքովը շինած զգեստները կը ցուցընէին: Պետրոս զամէնքը զուրս հանեց, ծունկ իջաւ, աղօթքի կեցաւ ու մեռելոյն ըսաւ. Տարիթա, ել: Մեռելը մէկէն աչուրները բացաւ Պետրոսին նայեցաւ, ելաւ նստաւ: Պետրոս ձեռքն երկընցուց զինքը վեր վերցուց ու դրսինները կանչելով՝ Տարիթան կենդանի առջեւնին հանեց: Աս տեսնելով՝ ամէնքն ուրախութեամբ լեցուեցան, եւ աս բանիս լուրը քաղքին մէջ տարածուելով՝ շատերը դարձան:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ն Թ .

Քրիստոսն է ուրիշն ընդ Հեթանոսներսն ի ը  
+ արողոթի :

Ի Թ . Գ Ա Ս

1. Աստուած Պետրոսին Բնչպէս յայտնեց թէ ոչ  
Հրէից ու Հեթանոսաց զանազանութիւն պիտի չսուց :  
Պետրոս ասած պատուէրը յասալ որուն վրայ կատա-  
րեց : — 2. Անտիոքացիք Բնչպէս զարձան : Սոփի ա-  
տեն Բնչ ըրին : — 3. Պետրոս Բնչու նորէն բանա-  
մտաւ : Որուն ձեռքսքն ազատեցաւ :

1. Կեսարիա քաղաքը Կուռնելիոս անու-  
նով բարեպաշտ հարիւրապետ մը կար, որն որ  
Իտալացի բուսած գնդէն էր : Անգամ մը  
աղօթք ըրած ատեն՝ հրեշտակ մ'եկաւ՝ Կուռ-  
նելիէ, բսաւ, աղօթքդ ու սղորմութիւններդ  
Աստուծոյ հաճոյ եղան : Յոպպէ մարդ խրկէ,  
Պետրոս առաքեալը կանչէ. անիկա քեզի  
փրկութեան ճամբան կը սորվեցընէ : Կուռ-  
նելիոս շուտ մը երեք հոգի խրկեց : Անոնց  
նոյն քաղաքը մօտիկցած ատեն՝ Պետրոս տա-  
նիք ելած՝ Աստուծոյ աղօթք կ'ընէր : Մէյ  
մ'ալ յանկարծ երկինքը բացուեցաւ, եւ ա-  
մէն տեսակ կենդանիներով լեցուն, չորս ծայ-  
րերէն կախուած աման մը առջեւն իջաւ :  
Երբ որ առաքեալը զարմացած կը նայէր, ձայն  
մ' առաւ թէ Պետրոս, ել ասոնք մտրթէ,  
կեր : Ինք չուզեց, ըսելով որ Պիղծ բան չեմ  
ուտեր. բայց ձայնը պատասխան տուաւ թէ  
Աստուծոյ սուրբ ըրած բանին՝ պիղծ մ'ը-

սեր : Նոյն ձայնն ասանկ երկու հեղ կրկնուելէն ետեւ՝ անօթն երկինք վերացաւ : Պետրոս ասոր վրայ մտածելու ատեն՝ Կուռնելիոսին մարդիկն եկան, զինքը կանչեցին եւ իրենց տիրոջը հանդիպածը պատմեցին : Պետրոս նոյն օրը զիրենք քովը պահելով՝ երկրորդ օրը հետերնին Կեսարիա գնաց, ուր որ Կուռնելիոս իր ազգականներն ու բարեկամները ժողոված՝ անոր գալուն կը սպասէր : Պետրոս տունը մտածին պէս՝ հարիւրապետը ոտքն ինկաւ : Պետրոս զանիկա վերցուց եւ զինքը կանչելուն պատճառն հարցուց : Կուռնելիոս հրեշտակէն առած պատուէրը պատմելէն ետեւ՝ խնդրեց որ Աստուծոյ հրամանն իրենց բռնէ : Առաքելապետը հաւատոյ ամէն էական մասունքն իրենց մեկնելու ատեն՝ Հոգին սուրբ վրանին իջաւ : Ան ատեն առանց ընդդիմութեան զիրենք մկրտեց, եւ աղաչելուն համար՝ քանի մը օր քովերնին մնաց :

Չ. Երբ որ Պետրոս Երուսաղէմ դարձաւ, Հրէիցմէ դարձողներէն ոմանք՝ հեթանոս մարդու տուն երթալուն կենալուն համար՝ սկսան երեսը վար առնել : Բայց երբ որ Պետրոս եղածները պատմեց, ձայներնին քաշեցին ու Աստուծոյ փառք տուին : Ասկէ ետքը Աւետարանը սկսան նաեւ հեթանոսաց ալ քարոզել : Արիւրացի ու Աիւրենացի հաւատացեալներէն քանի մը հոգի Անտիոք գացին քարոզեցին ու շատ մարդ դարձուցին : Ասոր լուրն Երուսաղէմ հասած ատեն՝ զԲառնաբաս հոն խաւրեցին, որ գնաց նոր դարձողներն իրենց հաւատքին մէջ հաստատեց, ետքը՝ Տար-

սոն զնաց Պօղոս առաքեալն առաւ հոն բերաւ ու մէկտեղ տարի մը կեցան: Յիսուսի հաւտացողներուն Քրիստոսն անուն տալը՝ ամենէն առաջ առ Անտիոք քաղաքը սկսաւ: Այդն ատենները Աբուսաղեմէն Ազարոս անունով մէկը գալով՝ Հոգւով սրբով մարգարեացաւ որ մեծ սով պիտի ըլլայ: որն որ իրօք ալ քիչ մը ետքը կատարուեցաւ: Սովը չսկսած՝ Անտիոքի հաւատացեալները Աբուսաղեմի հաւատացեալներուն կենաց պահպանութեան պէտք եղած բաները յառաջուրնէ Հոգացին ու խաւրեցին:

**Յ.** Այդն ատենները Հերովդէս Ազրիսպաս քանի մը տեղաց եկեղեցիները սկսաւ չարչարել: Յովհաննէսին եղբայրն Յակոբոս Մեծը սրով սպաննել տուաւ: Տեսնելով որ Հրեայք առ բրածին հաւնեցան, զՊետրոս ալ բանտարկել տուաւ, որպէս զի զատկի տօնն անցնելէն ետեւ՝ Ժողովրդեան առջեւ զինքը մեռցնել տայ: Պետրոս բանտին մէջ եղած ատեն՝ բոլոր եկեղեցին իրեն համար Աստուծոյ ազօթք կ'ընէր: Մահուան դատապարտուելու նախընթաց զիշերը, երբ որ Պետրոս երկու զինուորաց մէջ՝ կրկին շղթայով կապուած կը քնանար եւ բանտին դրան առջեւ իսկ մը պահպաններ կը սպասէին, յանկարծ բանտը լուսաւորուեցաւ, Աստուծոյ կողմանէ հրեշտակ մ'եկաւ զինքն արթնցուց: Մէկէն շղթաներն ալ քակուեցան, եւ հրեշտակն իրեն հրամայեց որ ետեւէն գայ: Պետրոս եղածն երազ կը կարծէր, բայց երբ որ բանտին երկրթէ դուռն ինքիւրեն բացուելով՝

դուրս ելաւ եւ հրեշտակն աներեւոյթ եղաւ, իմացաւ թէ հրաշք է եւ Աստուծոյ փառք տալով՝ Մարկոսին տունը գնաց, ուր որ շատ հաւատացեալք ժողոված՝ իրեն համար աղօթք կ'ընէին: Պետրոս դուռը զարկած ատեն՝ աղախին մ'եկաւ, չբացած՝ հարցուց թէ ո՞վ է: Չայնէն՝ Պետրոսն ըլլալը ճանչնալով՝ ուրախութենէն առանց դուռը բանալու՝ ներս վազեց, պատմեց: Ներօինները չէին հաւտար իսկ Պետրոս դուռը շարունակ կը զարնէր: Աերջապէս եկան բացին. Պետրոս եղածը պատմեց եւ անկից ուրիշ տեղ գնաց: Աստուանց պահապանները տեսնելով որ Պետրոս մէջերնին չէ, իրար անցան. իսկ Հերովդէս երբ որ զինքն ուզեց ու չգտաւ, պահապանները մեռցընել տուաւ: Ետքը ելաւ Աեօարիա գնաց, ուր երեւելի որ մը թագաւորական զգեստով զահին վրայ նստած՝ ժողովողեան հրապարակախօսութիւն ըրած ատեն՝ երբ որ ժողովուրդը կը կանչէր թէ Ասիկա մարդու խօսք չէ՝ հապա Աստուծոյ, հոն մէկէն վրան Աստուծմէ փորձի ցաւ մ'եկաւ. մինչեւ որդնտակեցաւ, չարաչար մեռաւ:

## Լ : Գ Ա Ս

1. Պօղոս ու Բառնարաս՝ հեթանոսաց առաքեալ ըլլալու ինչպէս կոչուեցան: Սերգիոս ինչպէս դարձաւ: —
2. Պօղոս եւ Բառնարաս առաքեալները որ քաղաքները քարոզեցին: Լիւարա ինչ պատահեցաւ:

**Ա.** Պօղոս ու Բառնարաս Անտիոքացւոց տուբբերը Երուսաղէմ տանելէն ետեւ Յովհաննէս Մարկոս (Աւետարանիչը) հետերնին



առած՝ Անտիոք դարձան : Այդն ատեն Անտիոքայ հաւատացելոց մէջ՝ Հոգւոյն սրբոյ զանազան պարզեւներն ունեցող մարդիկ կային . զոր օրինակ՝ ոմանք մարգարէութեան պարգեւ , ոմանք քրիստոնէութեան մէջ կրթելու պարգեւ ունէին : Անգամ մը երբ որ ասոնք աստուածային պաշտօնը կը կատարէին , Հոգին սուրբ իրենց հրամայեց որ Պօղոս եւ զԲառնարաս որոշեն ան գործքին՝ որուն զիրենք կոչած է : Ամէնքն աղօթքով ու պահքով աս երկուքին համար Աստուծոյ շնորհքը խնդրեցին , որ իրենց կոչուած առաքելական պաշտօնին աղէկ ծառայեն : Ետքը աստիճանաւ իրենցմէ վեր բլտղները՝ ձեռք զնելով՝ զանոնք եպիսկոպոս ձեռնադրեցին ու ճամբայ դրին : Պօղոս ու Բառնարաս Ասիայի երեւելի քաղաքները պտրտեցան . ամէն տեղ Աստուծոյ պատգամները սիրով ընդունողներ կը գտնուէին : Պափոս քաղքին մէջ Սերգիոս փոխանակ բղէշին Պօղոս ու Բառնարաս առաքելայնէրուն աղաչեց որ գան իրեն ճշմարիտ հաւատքը սորվեցրնեն : Հոն Եղիմաս անունով Հրեայ սուտ մարգարէ մը կար , որն որ իշխանին միտքը փոխել կ'ուզէր . Պօղոս զԵղիմաս անիծեց . Ո՛վ խարդախ , սատանայի որդի , ըսաւ . Աստուծոյ պատիժը վրայք բլայքիչ մ'ատեն կոյր բլաս : Մէկէն Եղիմաս կոյրցաւ . Սերգիոս աս ատենելով՝ շուտ մը դարձաւ քրիստոնէայ եղաւ :

Ձ . Ասկէ ետքը Յովհաննէս Մարկոս՝ Պօղոս ու Բառնարաս առաքելայնէրը թողուց Երուսաղէմ դարձաւ , անոնք ալ ելան Ան-

տիրք Պիտիգեայ եկան, Աստուծոյ պատգամը բոլոր քաղքին մէջ քարոզեցին: Հրեայք իրենց վրայ նախանձելով՝ Պօղոս առաքելոյն դէմ խօսեցան ու հայհոյեցին: Առաքեալք ըսին թէ Որովհետեւ Աստուծոյ պատգամը կը մերժէք, մենք ալ հեթանոսաց կը դառնանք կ'երթանք: Ասոր վրայ հեթանոսաց մէջ աւելի դարձողներ եղան: Հրեայք բարկացան, զՊօղոս եւ զԲառնարաս իրենց երկիրներէն հայածեցին, որոնք ելլելու առեն՝ ոտքի փոշինին թօթուեցին անանկ գացին: Երբ որ Իկոնիոն եկան, հան ալ հալածուելով՝ Վիւսորա գացին: Նոյն տեղը Պօղոս կռապաշտից առջեւը պարզապէս հրամայելով՝ կազ ծնած մարդ մը բժշկեց. անոնք աս տեսնելով՝ սկսան կանչել թէ Աստուածները մարդու կերպարանք մտած՝ եկեր են. զԲառնարաս Արամազդ կ'անուանէին, զՊօղոս՝ Հերմէս: Արամազդին քուրմը՝ ցուլ ու պսակ առած՝ խել մը ամբօխով եկաւ, կ'ուզէր առջեւնին զո՛հ մատուցանել: Պօղոս ու Բառնարաս զղեստնին պատուելով՝ սկսան կանչել թէ Մենք ալ ձեզի պէս մարդ ենք, ճշմարիտ Աստուածը ձեզի քարոզելու եկած ենք: Ասանկով ժողովուրդը զո՛հ մատուցանելէն հազիւ կրցան ետ կեցընել: Բայց երբ որ Անտիոքայ եւ Իկոնիոնի Հրեաները լսեցին թէ ան երկու առաքեալք Վիւսորա շատ մարդ կը դարձընեն, եկան ժողովուրդը համոզեցին թէ անոնք մոլորութիւններ կը վարդապետեն: Ասանկով զիրենք ան երկուքին դէմ անանկ գրգռեցին, մինչեւ սկսան Պօղոս առաքեալը քարի բռնելով հալածել ու կիսա-

մահ քաղքէն դուրս հանեցին : Այսու ամե-  
նայնիւ իր առաքելական պաշտօնին մէջ չպա-  
ղեցաւ , այլ Բառնարասին հետ նորէն Լիւս-  
տրա , անկէ Իկոնիոն , անկէ ալ Անտիոք Պի-  
սիդեայ երթալով՝ հաւատացեալքը հաւատը-  
ներնուն մէջ հաստատեցին , աղօթքով ու  
պահքով ամէն տեղ երէց (եպիսկոպոս) դրին .  
ետքը Պիսիդեայէն ու Պամփիլեայէն անցնե-  
լով՝ Անտիոք քաղաքն եկան , ուր բոլոր հաւա-  
տացեալքը ժողվեցին իրենց ճամբորդութեան  
մէջ անցած աս ամէն բաները պատմեցին :

### Լ Ա . Գ Ա Ս

1. Ինչո՞ւ առաքեալք ժողովք ըրին Երուսաղէմ : Ժո-  
ղովքին կանոններն ո՞վ Անտիոք տարաւ : Պետրոս երբ  
նորէն Հոսով դարձաւ : — 2. Պօղոս ուստի շարժեալ  
Մակեդոնիա դնաց : Պօղոս եւ Շիքաս Ինչո՞ւ բռնա-  
մտան եւ Ինչպէս ազատեցան : — 3. Պօղոս առաքեալ  
Աթէնք Ինչ ըրաւ : — 4. Կորնթոս Ինչ կերպով  
ապրեցաւ :

1. Պօղոս եւ Բառնարաս քիչ մը ատեն  
հոն կենալէն ետեւ՝ Հրէաստանէն քանի մը  
հոգի եկան , Անտիոքայ մէջ հեթանոսութենէ  
դարձող հաւատացելոց կը վարդապետէին որ  
եթէ Մովսիսի օրինաց համաձայն չեն թըլ-  
փատիր նէ՛ , չեն կրնար փրկութեան հասնիլ :  
Պօղոս ու Բառնարաս առաքեալներն աս  
վարդապետութեան դէմ դնելով՝ մեծ խոս-  
վութիւն ծագեցաւ : Նոյն պատճառաւ որո-  
շուեցաւ որ ան երկու առաքեալք քանի մը  
հաւատացելոց հետ Երուսաղէմ ըլլող առա-  
քելոց ու երիցանց երթան , ան ելած վիճին  
վերջ մը տալու համար : Ան ատեն Կղաւ-

դիտու կայտրը Հրէից դէմ (որոնց հետ կ'իմացուէին նաեւ քրիստոնեայ Հրեաներն ալ) հրովարտակ հանելով՝ զամենքը Հռոմէն կը հալածէր. Պետրոս առաքեալն ալ որ վեց եօթը տարիէ վեր նոյն քաղաքն էր, առ հրովարտակին զօրութեամբ ստիպեցաւ հոնկից ելլել: Պօղոս ու Բառնարաս Երուսաղէմ եկած աւաններն՝ զինքը նոր եկած զանելով՝ իր գահերիցութեամբը հոն ուրիշ առաքելոց հետ ժողովք ըրին եւ միաբան որոշեցին որ թլփատութիւն չըլլայ. բայց թէ դարձող թէ չդարձող Հրէից դայթակղութեան առիթ չտայու համար՝ հին օրինաց հեղձուցիկ միա չուտելու օրէնքն ուղեցին պահել: Ասոնք որոշելէն ետեւ՝ Պօղոս ու Բառնարաս առաքեալներն Աստուծոյ իրենց ձեռքովը հեթանոսաց մէջ ըրած սքանչելիքները պատմեցին: Ժողովականք պատշաճ սեպեցին որ Պօղոս ու Բառնարաս առաքեալներուն հետ քանի մը հօգի խրկեն Անտիոք, որ իրենց ժողովքին որոշումները գրով տանին, հոն հաւատացելոց առջեւը կարդան եւ անոնք բռնել տան:

Պետրոս առաքեալ անկէ ետքը Երուսաղէմէն ելաւ Անտիոք եկաւ, եւ ինչպէս որ հին աւանդութիւնը կ'ըսէ՝ հոն քիչ մը ատեն կենայէն վերջը՝ Ասիա պտըտեցաւ ու կղաւղիտին մահուընէ ետքը դարձեալ Հռոմ գնաց եւ հոն իր օթոսը հաստատեց:

Չ. Պօղոս առաքեալ ալ քիչ մը ատեն Անտիոք մնայէն ետեւ՝ ուղեց յառաջագոյն քարոզած քաղաքներուն նորէն մէյ մ'ալ այցելութիւն ընել եւ հաւատացելոց հետ տեսնուիլ:

Աս երկրորդ ճամբորդութեան ատեն իրեն ուղեկից առաւ զՇիղա, զՂուկաս եւ զՏիմոթէոս : Նոյն քաղաքներն երթալէն, հաւատացեալները հաւատքներնուն մէջ հաստատելն ետքը՝ երբ որ Պօղոս առաքեալ գեռ շէր գիտեր ուր երթալիքը, Աստուած տեսիլքով մը միտքն որոշեց : Գիշեր մը Մակեդոնացի մը երեւնալով՝ աղաչեց որ մէյ մը Մակեդոնիայէն ալ անցնի եւ իրենց օգնէ : Պօղոս առաքեալ եւ իր ուղեկիցներն ուրախութեամբ նաւ մտան ու յաջող նաւարկութեամբ Փիլիպպուս հասան, որ Մակեդոնիայի ծովեզերեայ քաղաքն է : Հսն ամենեւին ճանչուորչուննալով՝ առջի օրերը քաշուած աղօթքի կը պարապէին : Առջեւի շարած օրը քաղքէն էլան, գետին քովը գացին . լսած էին որ ան տեղաց շրէից հրապարակաւ աղօթելու սովորական տեղն ան է : Գետին քով քանի մը կանանց հետ սկսան խօսիլ, որոնց մէջ կը գտնուէր Լիդիա անունով ազնուական տիկինը՝ որն որ ծիրանի վաճառող էր : Աստուած անոր սիրտը շարժելով՝ Առաքելոյն ըսածներուն հաւտաց ու մկրտուեցաւ . եւ իրենց աղաչեց որ եթէ իր սրտանց դառնալուն կը հաւատան նէ, տունը դան բնակին . եւ այնչափ ըրաւ՝ մինչեւ ստիպեցան աղաչանքը կատարելու :

Անգամ մ'ալ Շիղային հետ աղօթելու գացած ատեննին՝ հարցուկ դիւահար աղախնոյ մը պատահեցան, որն որ ետեւնէն կանչեց թէ Աստիք Աստուծոյ ծառաներն են, մեղի փրկութեան ճամբան կը սորվեցընեն : Աս խօսքս ամէն անգամ զիրենք տեսնելուն՝ կը կրկնէր : Օր մը

Պօղոս դարձաւ սատանային ըսաւ. Յիսուսի Քրիստոսի անուամբը քեզի կը հրամայեմ որ անկէ ելլես: Աինք շուտ մը սատանային ձեռքէն ազատեցաւ: Բայց աղախնոյն տէրերն ասոր շատ նեղացան, որովհետեւ աղախինն իրենց գաղտուկ բաներ յայտնելով՝ անոր կանրկէն մեծ վաստակ ունէին: Անոր համար Պօղոսի ու Շիղայի վրայ ամբաստանութիւն ընելով թէ ժողովուրդը կը խռովեն, զիրենք շարաշար ծեծել բանա զնել տուին: Անոնք կէս գիշերին բանտին մէջ աղօթք ըրած ատեն՝ յանկարծ շարժ մը եղաւ, բանտն հիմէն շարժեցաւ ու դռները բացուեցան: Բանտին վերակացուն ձայնէն արթընցաւ, դռները բաց տեսնելով եւ կարծելով թէ ան երկուքը փախեր են, սուրը քաշեց ինք զինքը պիտի մեռցնէր: Բայց Պօղոս իրեն կանչեց որ Մի վախնար, հոս ենք: Բանտապետն եղած հրաշքին վրայ զարմանալով՝ զնաց անոնց ոտքն ինկաւ, բանտէն հանեց տուն տարաւ, եւ հարցուց թէ Փրկուելու համար ի՞նչ պէտք է ընել: Անոնք իրեն ճշմարիտ հաւատքը սորվեցուցին եւ նոյն գիշեր բոլոր ընտանիքովը մկրտեցին: Գիշերուան շարժը բոլոր քաղաքը մեծ վախի մէջ ձգած էր: Առտու ըլլալուն պէս՝ քաղքին մեծերը մարդ խրկեցին որ ան երկուքին կապանքը քակեն բանտէն հանեն: Երբ որ բանտապետն եկաւ աս բանս առաքելոց պատմեց, Պօղոս իրրեւ քարոզիչ Աւետարանի շուղելով որ ուրիշներուն առջեւը շարագործութեան համար պատժուած երեւայ, պատասխան տուաւ թէ Մենք Հռոմայեցի ըլ-

լալովնիս՝ առանց մեր դատին նայելու՝ հրապարակաւ ծեծել ու բանտարկել տուին, հիմակ ալ անձայն պիտի հանեն ճամբէն՝ : Անանկ բան չ'ըլլար . թող իրենք զան զմեզ հանեն : Սպասուորք աս պատասխանը քաղքին մեծերուն տարին , սրոնք անոնց Հռոմայեցի ըլլալը լսելով՝ շատ վախցան . եւ անձամբ եկան իրենցմէ թողութիւն ուղեցին , զիրենք բանտէն հանեցին : Պօղոս ու Շիղա հոնկից թեւսաղոնիկէ անցան , անկէ ալ Բերէա գացին , ուր որ նմանապէս հալածուժ քաշելով՝ բրիտանոնէից հասարակութիւն հաստատեցին :

**3.** Պօղոս առաքեալ քաղքէ քաղաք պտրտելով՝ Աթէնք եկաւ , եւ բոլոր քաղաքը կռապաշտութեան մէջ տեսնելով՝ շատ ցաւեցաւ : Ժողովրդանոցներու մէջ՝ Հրէից հետ , հրապարակներու մէջ՝ որուն որ կը հանդիպէր նէ , կը խօսէր , կ'ուղէր զանոնք կռապաշտութենէ դարձնել : Անոնց գիտուններէն ոմանք առին զինքն Արիստպագոս (հրապարակական տեղ մը) տարին , ուղեցին հասկընալ թէ վարդապետածն ինչ է : Առաքեալն իրենց խօսակցութիւն մ'ընելով՝ ըսաւ որ Քաղքին չորս դին պտրտելու ատենս՝ ձեր պաշտած աստուած-

1 Հռոմայեցի կամ Հռոմեական քաղաքացի ըլլալը՝ Հռոմայեցուց որինոց համակայն՝ չէր կրնար ձողկուիլ : Առաքեալն ինք զինքը Հռոմայեցի անուանեց կամ անոր համար որ Տարսոն՝ իր ծննդեան քաղաքը՝ որ Օգոստոս կոչսեր ատեն ազաւ քաղաք էր , ետքէն հաւանականաբար նաեւ Հռոմի քաղաքային իրաւունք ալ ստացեր էր . եւ կամ անոր համար որ իր հաւը կամ հայրը նոյն իրաւունքը գնած էին , ինչպէս որ շատերը կ'ընէին :

ներուն մէջ Անձնօթի Աստուծոյ վերնագրով  
բազին մ'ալ կար: Աս առթով իրենց անծա-  
նօթ մնացած ճշմարիտ Աստուծոյն սով ըլլալն,  
անոր գործքերն ու մեռելոց յարութիւնը  
պատմեց: Թէպէտ ոմանք ըսածները ծաղր  
կ'ընէին. բայց ոմանք ալ հաւատացին ու դար-  
ձան: Աս վերջիններուն մէջն էին Գիսնեսիոս  
Արիսպագացին ու Գամարիս անունով ազ-  
նուական կիներ:

4. Առաքեալն Աթենքէն Կորնթոս գնաց,  
ուր Ակիւղաս անունով խորանակար (չաբը  
շինող) մէկը գտաւ, եւ ինքն ալ նոյն արու-  
եսան ունենալուն, անոր քովը սկսաւ բնակիլ  
եւ արուեստը բանելով՝ իր ապրուստը կը հո-  
գար: Բայց շարաթ օրերը ժողովրդանոց կ'եր-  
թար, Հրէից ու Յունաց ազգու կերպով Աւե-  
տարանը կը քարոզէր: Ակիւղաս եւ իր Պրիս-  
կիլա կինն առջի դարձողներն եղան. ասոնցմէ  
զատ շատ Հրէայք եւ Յոյնք դարձան ու մկր-  
տուեցան: Պօղոս մէկու կէս տարի հոն կեցաւ  
քարոզեց եւ բաղմատիւ քրիստոնեայ հասա-  
րակութիւն մը հաստատեց: Անկէ նաւով  
Էփեսոս դարձաւ, Էփեսոսէն՝ Կեսարիա, Կե-  
սարիայէն ալ՝ Երուսաղէմ, վերջապէս նորէն  
Անտիոք քաղաքն եկաւ, ուսկից ճամբայ ե-  
լած էր:



Լ Բ . Գ Ա Ս

1. Առաքեալն իր երրորդ ճամբորդութեան մէջ Եփեսոս ինչ ըրաւ : Սկեւի սփ է : Դեմեաբիոս արծաթադործն առաքելոյն ինչ շարիք հասցուց : — 2. Պօղոս Տրոփազա ինչ ըրաւ : Եփեսոսի երկցներուն ինչ ըրաւ : — 3. Երուսաղէմ զինքն ինչու բռնեցին : — 4. Կեսարիա Փելըս դատաւորին, Փեստոսին ու Ազրիպպասին առջեւն ինչ խօսեցաւ : — 5. Նաւով Խաւիա երթալու ատեն ինչ պատահեցաւ : — 6. Մեղիտինէ եւ Հոսմ ինչ ըրաւ :

1. Պօղոս քիչ մը ատեն Անտիոք կենալէն ետեւ՝ երրորդ անգամ ճամբորդութիւն ընելու սկսելով, Գաղատիա ու Փոնիգիա պտրտեցաւ, նոյնտեղաց հաւատացելոց հետ տեսնուեցաւ եւ զանոնք հաւատքներնուն մէջ հաստատելով՝ Եփեսոս գնաց : Հոն Յովհաննէս Մկրտչին քարոզութենէն դարձողներէն 12 հոգի գտնելով՝ հարցուց թէ Հոգին սուրբ ընդունած էք : Անոնք պատասխան տուին որ Հոգւոյն սրբոյ անունն իսկ լսած չունինք : Պօղոս առաքեալ իմանալով որ Յովհաննու մկրտութիւնն ընդունած են, անոր եւ Քրիստոսի մկրտութեան մէջ եղած տարբերութիւնն իմացուց : Ան ատեն անոնք Յիսուսի հաւտացին, անոր անուամբը մկրտուեցան եւ Պօղոս վրանին ձեռք դնելով՝ Հոգին սուրբ ընդունեցան : Առաքեալն ան կողմերը երկու տարիի չափ կեցաւ քարոզեց, անանկ որ Ասիայի՝ Հառմայեցւոց իշխանութեան տակ ըլլող մասին Յոյներէն ու Հրեաներէն մարդ չմնաց՝ որ անոր վարդապետութիւնը չսէ : Աստուած իրեն ձեռքովը՝ շատ սքանչելիք կ'ընէր, մինչեւ անոր թաշկինակը կամ վարչամակը

հիւանդաց կը տանէին, որով անոնք ախտերնէն կը բժշկուէին:

Նոյն ատենները եւ անկից քիչ մը յառաջ Հրէից մէջ կային ոմանք՝ որ Աստուծոյ կամ անոր սիրելի ըլլողներուն անունը տալով՝ դուրս կը հալածէին եւ երդմնեցուցիչ կ'ըսուէին: Սկեւի անունով Հրեայ քահանայ մը եօթը զաւակ ունէր, որոնք երդմնեցուցիչ էին: Ասոնք տեսնելով որ Պօղոս առաքեալ Յիսուսի անուամբը դուրս կը հանէ, ուզեցին նոյն անունը գործածել. ուստի դիւահարի մը բսին թէ Պօղոսին քարոզած Յիսուսին անուամբը զքեզ կ'երդուրնցընենք որ անկէ ելես: Դիւահարը պատասխանեց թէ զՅիսուս գիտեմ՝ եւ զՊօղոս կը ճանչնամ. բայց զուք ո՞վ էք: Աս բառ ու մէկէն վրանին վազեց, անսնցմէ երկուքն անանկ շարշարեց, որ հազիւ մերկ ու վերաւորած կըցան ազատիլ: Եփեսացիք սա բանս լսելով՝ սրտերնին մեծ վախ ինկաւ. հաւատացեալներէն շատերը Պօղոսին եկան մեղքերնին խոստովանեցան. նա եւ շատ հեթանոս կախարդներու զխաւորներ՝ իրենց կախարդական զրքերը կը բերէին հրապարակաւ կ'այրէին: Աս բաներէն հաւատացելոց թիւն երթալով կ'աւելնար: Նոյն քաղաքը Գեմետրիոս անունով արծաթագործ մը կար, որն որ Արտեմիս շատուածուհւոյն փոքր տաճարներ շինելով՝ արուեստաւորներուն շատ գործք կը հանէր: Ասիկա տեսնելով որ Պօղոս հեթանոսներէն շատ մարդ գարծընելով իր շահուն մեծ արգելք կ'ըլլայ, գնաց արուեստաւորները գրգռեց, մեծ խոռ-

փութիւն հանեց : Ժողովուրդը կատաղած՝ թէ-  
ատրոն վազեց, զՎայիոս եւ զԱրիստարքոս Պո-  
ղոսի ուղեկիցները բռնեց : Առաքեալն ուղեց  
կատաղած ժողովրդեան մէջ մտնել, զանոնք խա-  
ղաղցրնել, բայց հաւատացեալք չթողուցին :

Ք. Խառովութիւնը գաղթելէն ետեւ՝ Պողոս  
առաքեալ դէպ ի Մակեդոնիա ու Յունաս-  
տան ճամբայ ելաւ, եւ ան կողմերը պտրտե-  
լէն ետեւ՝ նորէն Տրովագա եկաւ : Հոն կիրակի  
օր մը՝ երբ որ հաւատացեալք պատարագի հա-  
մար մէկտեղ ժողոված էին, Պողոս անոնց երկայն  
խօսակցութիւն մ'ըրաւ : Աշտիքոս անունով  
երիտասարդ մը նոյն տան երրորդ գատիկներ  
պատուհանին վրայ նստած՝ անոր խօսքը մտիկ  
ընելու ժամանակ քունը տանելով՝ վար ինկաւ-  
մեռաւ : Պողոս առաքեալ վար իջաւ, զանի-  
կա գրկեց եւ ըսաւ. Մի վախճաք, հոգին  
տուած չէ : Իրօք ալ պատանին ողջնցաւ եւ  
առին ներս տարին : Պողոս իր խօսքը մինչեւ  
արշալոյս շարունակեց. ետքը ճամբայ ելաւ Մե-  
լիտոն եկաւ : Թէպէտ Եփեսոս հեռու չէր,  
բայց որովհետեւ Պենտէկոստէին օրերը կը  
մտանային եւ ինք կը փութար նոյն տօնին  
Երուսաղէմ՝ գանուիլ, անոր համար Եփեսոս  
չկրցաւ երթալ. միայն ան տեղաց երիցունքը  
(քահանայքն ու եպիսկոպոսուները) կանչեց,  
անոնց վերջին խօսակցութիւն մ'ըրաւ, որուն  
մէջ յառաջուրնէ անոնց ըսաւ թէ Երուսա-  
ղէմ իր գլուխը շատ բաներ պիտի գան եւ  
զինքը մէյ մ'ալ պիտի չկրնան տեսնել : Աս-  
կից զատ՝ իրենց մարդարեացաւ թէ մէջերնէն  
ծուռ վարդապետութիւն սորվեցրնող մարդիկ

պիտ'որ ելլեն եւ հաւատացեալներէն շատերը պիտի մոլորեցընեն: Խօսքը լմնցուց զանոնք Աստուծոյ յանձնելով: Էտքը ամէնքը ծուներ իջան, մէկտեղ աղօթք բրին, եւ սրտերնին ելլելով՝ կու լային որ մէյ մ'ալ պիտի չկրնան զինքը տեսնել: Պարանոցն ինկած՝ կը համբուրէին եւ հետը մինչեւ նաւ ընկերացան:

**Յ.** Պօղոս Էբուսաղէմ հասնելով՝ հաւատացեալք զինքը մեծ ուրախութեամբ ընդունեցան: Բայց երբ որ Ասիացի Հրեայք զինքը տաճարին մէջ տեսան, բոլոր ժողովուրդն իրեն դէմ գրգռելով, զինքը բռնեցին եւ կը կանչէին որ Իսրայելացիք, օգնութեան հասէք. ասիկա ան մարդն է՝ որն որ ժողովրդեան, օրինաց եւ աս սուրբ տեղոյն դէմ բաներ կը քարոզէ: Խռովարարները զՊօղոս տաճարէն դուրս հանեցին, սկսան ծեծել եւ կ'ուզէին հոն զարնել մեռցընել. բայց հոն տեղի հռոմայեցի զօրաց հազարապետն անմիջապէս խել մը զօրքով վրայ հասնելով՝ զարնելէն դադրեցան: Հազարապետը Պօղոս առաքեալը կրկին շղթայով կապել տուաւ եւ ս'ով ըլլայն հարցուց: Բայց ամբօխն այնպէս կը պօռար որ Առաքեալը չկրցաւ պատասխան տալ: Հազարապետը հրամայեց որ զինքն առնեն ամբողջ տանին: Ճամբան հետն այնչափ ամբօխ կու գար, որ հազիւ կրցան զինուորք զինքը վեր հանել: Պօղոս հազարապետէն հրաման առնելով՝ ուզեց ժողովրդեան խօսք մը խօսիլ. բայց երբ որ սկսաւ զՅիսուս քարոզել, ժողովուրդն արտաքոյ կարգի բարկացաւ. իսկ հազարապետը վախնալով որ ժո.

զոգրդեան մէջ աւելի մեծ շփոթութիւն մը չելէ, հրամայեց որ զինքը ներս տանին ձաղկեն: Սակայն երբ որ Պօղոս իր հոռմայեցի բլլալն իմացուց, չհամարձակեցան բան մ'ընել: Հաղարապետն երկրորդ օրը Հրէից խորհրդեան ատեննը ժողովել տալով՝ առաքեալն առջեւնին հանեց, որպէս զի լսէ թէ վրան ինչ ամբաստանութիւն ունին: Բայց ժողովականաց մէջ երկպառակութիւն ելլելով՝ որոշ բան մը չկրցաւ իմանալ: Նոյն գիշեր Բրիտոսոս առաքելոյն երեւցաւ ըսաւ որ Հաստատուն կեցիր. ինչպէս որ Երուսաղէմ ինծի վկայեցիր, ասանկ նաեւ Հոռմ ալ պիտի վկայես:

Ք. Երկրորդ առտու կանուխ Հրէիցմէ քառասուն հոգիէ աւելի ժողովեցան, ուխտ դրին որ Պօղոս չտպաննած՝ բերաննին բան մը չդնեն: Աս բանը Պօղոսին քեռորդւոյն ձեռքով հաղարապետին ականջն հասնելով՝ զինքն զգուշութեամբ կեսարիա՝ Փելիքս դատարին խրկեց: Փելիքս զինքն երկու տարի բանտի մէջ պահեց, յուսարով որ Պօղոս բանտէն երելու համար՝ իրեն ստակ կու տայ: Աս յուսով զինքը շատ անգամ առջեւը բերել կու տար, ան ալ ամէն անգամ Յիսուսի Բրիտոսոսի հաւատքն իրեն կը քարոզէր: Երկու տարիէն Փելիքսին տեղ փետոսս անցնելով՝ Առաքեալն առջեւն հանեց: Երուսաղէմէն եկող Հրեայք սկսան վրան ծանր ծանր ամբաստանութիւններ ընել. բայց ըսածնին չկրցան հաստատել. վասն զի Պօղոս համոզական պատճառներով ցուցուց որ օրինաց,

տաճարին ու կայսեր դէմ բան մը գործած չէ։ Այսու ամենայնիւ Փետտոս՝ Հրէից հաճելի ըլլալու համար՝ ուղեց որ Երուսաղէմ տարուի եւ հոն իր առջեւը դատաստան ըլլայ։ Բայց երբ որ Առաքեալը կայսեր բողոքեց, հարկ եղաւ որ Փետտոս յանձն առնու զինքը Հռոմ խրկել։

Ասոր վրայ որ մ'անցաւ, Ագրիպպաս թագաւորն իր Բերենիկէ քրոջը հետ Աեսարիա գալով՝ ուղեց զՊօղոս տեսնել. եւ երբ որ առջեւն ելաւ, հրամայեց որ իր դատը զրուցէ։ Առաքեալն սկսաւ իր պատմութիւնը կարգաւ պատմել, որմէ թագաւորն անանկ շարժեցաւ որ ըսաւ թէ Քիչ Ֆնաց զիս քրիստոնեայ ըլլալու պիտի համոզէիր։ Պօղոս պատասխան տուաւ որ Երանի՛ թէ աս բանս իրօք կատարուէր՝ չէ թէ միայն քու վրադ, հապա բոլոր իմ քարոզութիւնս լսողներուն վրայ։ Ագրիպպաս ու Փետտոս քովիններնուն հետ ելան, առանձին տեղ մը գացին եւ իրարու կ'ըսէին թէ Աս մարդս մահուան ու կապանքի արժանի բան մը գործած չէ։ Ագրիպպաս ալ Փետտոսին զրուցեց որ Եթէ կայսեր բողոքած չըլլար, հիմա զինքը կրնայինք թող տալ։

Ծ. Առաքեալը քիչ մը վերջը ուրիշ բանտարկեալներու հետ Յուլիոս անունով հարիւրապետի մը պահպանութեան տակ՝ դէպ իտալիա ճամբայ ելաւ։ Խել մը որ նաւարկելէն ետեւ Պօղոս առաքեալ խրատ տուաւ որ քիչ մը ժամանակ գտնուած նաւահանգիստնին կենան, ըսելով որ Հիմա նաւարկելն ինձի վտանգաւոր կ'երեւայ։ Բայց հարիւրապետն աւելի

նաւապետին ականջ դնելով՝ նաւարկութիւնը շարունակել տուաւ: Ատոր վրայ հազիւ թէ քիչ մը անցաւ, մէյ մ'ալ յանկարծ փոթորիկ մը փրթաւ, որմէ այնպէս նեղ մտան որ սկըսան նաւին կահ կարասիքն ու բեռերը ծով նետել: Փոթորիկն օրերով նոյն սաստկութեամբ շարունակելով՝ ալ ամէնքը յոյսերնին կտրեցին: Բայց Պօղոս զիրենք կը քաջալերէր որ չվհատին եւ Աստուծոյ կողմանէ կ'ապահովցընէր որ ամենեւին մէկու մը կենաց ֆեսս պիտի չհասնի: Աւերջապէս նաւը Մելիտանէ կղզւոյն մօտերը նստեցաւ: Չինուորք մտածեցին որ բանտարկեալները սպաննեն, որ չըլլայ թէ լողալով ցամաք ելլեն փախչին: Բայց հարիւրապետը՝ որ Պօղոսին ազատիլ կ'ուզէր, յանձն չառաւ, հապա հրամայեց որ լողալ կրցողը ծով նետուի, ցամաք ելլէ. լողալ չկրցողներն ալ տախտակներուն կամ կահերուն կապեցին, եւ այսպէս ամէնքն ալ՝ որ 276 հոգի էին, ազատեցան:

6. Աղզւոյն բնակիչները զիրենք սիրով ընդունեցան: Հոն ալ առաքելոյն համբաւը շուտ մը տարածուեցաւ. կրակ վառած ըլլալով՝ Պօղոս գնաց խալի ժողովեց, մէջը նետեց. մէկէն իժ մը կրակին տաքութենէն դուրս ցատքեց, անոր ձեռքը փաթթուեցաւ: Աղզւոյն բնակիչքն աս տեսնելով՝ իրարու կ'ըսէին թէ Ասիկա մարդասպան պիտի ըլլայ, որ թէպէտ ալէկոծութենէն ազատեցաւ, բայց իրաւունքը չթողուց որ ապրի: Իսկ ինք առանց ֆեսսելու ձեռքը թօթուեց, իժը կրակի մէջ ձգեց: Մէկաւնոյն կը կարծէին որ ձեռքն անմիջապէս

պիտի ուռի, եւ ինք մեռած դետինն իյնայ : Բայց երբ որ երկայն ատեն անցաւ եւ տեսան որ անշնաս կեցեր է, մտքերնին փոխեցին ու կ'ըսէին թէ Աստուած պիտի ըլլայ : Պոպիլիոս՝ կղզւոյն գլխաւորը՝ նոյն տեղւոյն մտերը գեղեր ունենալով՝ այլեկոծութիւն քաշողներուն երեք օր հիւրընկալութիւն ըրաւ : Նոյն ատեն հայրը հիւանդնալով՝ Պօղոս աղօթք ըրաւ, ձեռքը վրան դրաւ առողջացուց : Աս տեսնելնուն պէս՝ կղզւոյն բոլոր հիւանդներն իրեն բերին եւ ամէնքը բժշկուեցան :

Երեք ամիս հոն կենալէն ետեւ՝ ճամբայ ինկան : Հոռո՛ հասած ատեննին՝ Առաքեալը քովի զինուորներէն զատեցին, առանձին բնակարան մը տուին : Պօղոս Հրեայքը կանչեց, առտուրնէ մինչեւ իրիկուն՝ Մովսիսի օրէնքներէն ու մարդարէիցմէ ցուցուց Մեսիային եկած ըլլալը, որմէ շատերը դարձան : Առաքեալն երկու տարի ամբողջ հոն վարձած տան մէջ մնաց, եկողը սիրով կ'ընդունէր ու համարձակ Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը կը քարոզէր :

Պօղոս առաքեալ Հոռո՛ բանալէն ազատելէն ետեւ՝ սկսաւ նորէն շորս դին պտըտիլ Քրիստոսի հաւատքը տարածելու համար : Չանազան տեղեր եպիսկոպոսներ դրաւ, ինչպէս զՏիտոս՝ Արեալէ կղզին եւ զՏիմոթէոս՝ Եփեսոս, որպէս զի իրմէ լրածնին՝ հաւատարմութեամբ ուրիշներուն աւանդեն : Նմանապէս մէկալ առաքեալներն ալ քրիստոնէա-



կան վարդապետութիւններն աշխարհքիս այլ-  
եւայլ կողմերը տարածեցին, զանոնք իրենց  
յաջորդներուն անսխալ աւանդեցին: Աս մի-  
ջոցին նաև աշխարհքս թող տալու եւ Յի-  
սուսի Քրիստոսի վարդապետութեան համար  
կեանքերնին զոհելու ատենն եկաւ:

Քրիստոսի ծննդէնէն 66 կամ 67 տարի  
ետքը՝ Պօղոս նորէն Հռոմ գալով՝ Ներոնին  
քրիստոնէից դէմ հանած մեծ հալածանաց ա-  
տեն՝ Պետրոս առաքելապետին հետ մարտիրո-  
սական մահուամբ մեռաւ: Ինք իրբեւ Հռո-  
մայեցի՝ գլխատեցաւ, իսկ Պետրոս խաչուե-  
ցաւ, բայց իր վարդապետին մահուամբը մեռ-  
նելու ինք զինքն անարժան սեպելով՝ խնդրեց  
եւ ընդունեցաւ որ գլխիփայր խաչուի: Ասոնցմէ  
յառաջ նահատակուած էր Յակոբոս Փոքր՝  
Երուսաղէմայ եպիսկոպոսը, որն որ Յիսուսին  
Ատուծոյ Որդի ըլլալը հրապարակաւ խոստո-  
վանելուն համար՝ տաճարին աշտարակէն վար  
նետուեցաւ ու թափչի (յաթ ճերմըկցընողնե-  
րու) տոփանով սպաննուեցաւ: Հին աւան-  
դութեան մը նայելով՝ Մատթիա առաքեալն  
ալ Երուսաղէմ քարկոծմամբ մեռաւ: Մատ-  
թէոս՝ որ աւետարանը Հրէից ու Եթովպա-  
ցւոց քարոզեց, կ'ըսուի որ սեղանի վրայ պա-  
տարազ մատուցանելու ատեն՝ սրով խոցուած  
ու մեռած ըլլայ: Բարթուղիմէոս Հայաստան՝  
կռապաշտներուն դաւաճանութեամբը ողջ ողջ  
մորթապէրծ եղաւ ու գլխատուեցաւ: Ան-  
դրէաս Պատրէա՝ Յունաստանի մէջ, խաչուե-  
ցաւ: Թովմաս՝ որ աւետարանը Մարաց ու  
Պարթեւաց քարոզեց, տիգով խոցուելով մե-

ուաւ : Փիլիպպոս՝ որ Սկիւթացւոց ու Փոփուգացւոց քարոզեց , խաչուեցաւ ու քարկոծեցաւ : Սիմոն ու Թադէոս առաքեալները՝ որոնք քրիստոնէութեան դրօշը մինչեւ Պարսկաստան հասուցին , հաւատքի համար հոն մեռան : Ասանկ ալ բոլոր առաքեալք՝ բաց ի Յովհաննէս աւետարանչէն՝ մարտիրոսական մահուամբ մեռան :

Յովհաննէս աւետարանիչ՝ Յիսուսին սիրելի աշկերտը , Ս . Աստուածածնայ հետ Լշփեսոս կեցաւ , Փոքր Ասիայի եկեղեցիներուն այցելութեան ելաւ : Ետքը Գոմետիանոսին հալածանաց ատենը՝ Հռոմ՝ եռացեալ ձիւթոյ կաթոսայի մէջ նետուեցաւ . եւ անկէ անփսաս ելելով՝ Պաղմոս կղզին աքսորուեցաւ , ուր Հոգւոյն սրբոյ ազդեցութեամբը յայտնութեան գիրքը գրեց : Նորէն Լշփեսոս դառնալէն ետքը՝ շատ ծեր ըլլալով՝ աշակերտները ձեռքէն կը բռնէին անանկ աստուածային պաշտօն կատարելու կը տանէին : Ինք հաւատացեալները միշտ՝ Ո՛րդեակք , իրար սիրեցէք , բսելով՝ կը բարեւէր : Վերջապէս մեռաւ բարի մահուամբ՝ Քրիստոսի ծննդենէն 100 տարի ետքը :



ՔՐԻՍՏՈՍԻ  
ՅԱՌԱՅՆ

Ա . ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ . ՏԱԽՏԱԿ

Ե Ր Ը Ե Թ Ի Ք

4000	Աշխարհքիս ստեղծումը
2345	Ջրհեղեղ
2200	Եբեք
1990	Աբրահամ
1890	Սահակ <sup>ք</sup>
1830	Յակոբ
1800	ԺԲ . Նահապետք
1740	Յովսէփ
1550	Մովսէս
1495	Օրէնադրութիւն
1400	Յեսու . Դատարարք — 1100
1100	Թագաւորութիւն անբաժին
1100	Սաւուղ
1050	Դաւիթ
1010	Սողոմոն

ՔՐԻՍՏՈՍԹՈՍ ՅԱԼԻՆՆԻ	Բ. ԺԱՄԲԱՆԱԿԱԿՑԱ	
	Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն	
	ՅՈՒՂԱԳ	ԻՍՐԱԵԼԻ
972	Ռոբոբոբոբ	Յեբոբոբոբ Ա.
955	Աբոբ	
952	Ա-	
950		Նարոբո
949		Բարոբո
927		Երո
926		Զարոբո, Աբոբ, (Թարոբո)
915		Աբոբո
912	Յոբոբոբո	
894		Ոբոբո
893		Յոբոբո
890	Յոբոբո	
884	Ոբոբո	Յե-
883	Գոբոբո	
877	Յոբո	
856		Յոբոբո
840		Յոբո
838	Աբոբո	
825		Յեբոբոբո Բ.
810	Ոբո	
784		Անտրոբոբո
770		Զարոբո Սեբոբո Մանոբո
759	Յոբոբո	Փոբո
757		Փոբո
743	Աբո	
737		Անտրոբոբո
726	Երեբո	Ոբո
720		Ինտրոբոբո Թարոբո Թեանտրո
699	Մանոբո	
644	Աբո	

ՔՐԻՍՏՈՍԻԿ ՅԵՒԹԱՆԿ	ԿԱՆ ՏԱԽՏԱԿ	
	ՃԱՄԱՆԱԿԱԳՈՑ ԻՆԸՊԵՐԷՆԷՔ	ԱՅՈՐԵՍՏԱՆԵՆԱՑՔ
912	Եղիւս — 896	
908	Եղիւսէ + 840	
830	Ա-Քան	
790	Ող-էէ — 720	
770	Աճեմ	Փուլու
759	Եւայի — 714 Միքիւս — 720	
750		Թարգմանքի վարդապետ
730		Սարգիստիստար
714	Նաւարի	Սեփեքեթի
680		Աւարդան (Նարեկի վարդապետի նախը Ա.)

ԳՐԻՍՏՈՍԷ ՅԼԹԵՂՔ	Գ. ԺԱՄԱՆԱԿԱԿՑԱ	
	Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն	
	ՅՈՒԴԱՅ	
642	Յովսէփ	
611	Յովսէփայ	
610	Յովսէփիմ	
599	Յովսէփիմ կամ Յեքոնիա	
599	Սեդեկիա	
588	Յուզայի Թագաւորու Թեան զերջն	

ՔՐԻՍՏՈՍԷ ՅԱԹԱԶ	ԿԱՆ ՏԱԽՏԱԿ	
	ՃԱԾԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՐԳԱՐԷՔ	ԱՍՈՐ . ԵՒ ԲԱՐ .
630	Սփռնիա	
628	Երեմիա — 570	
	Բարուք † 576	
620		Նարուպաղասար
610	Աճբակուժ	
606		Սարակոս կամ Քինա- լազան . Ասորեստանեաց պետութեան կործանու- մը : — Բարեկարգուց Բ . պետութիւնը
600	Դանիէլ — 536	Նարուքոզանասար (Բ .)
595	Եզեկիէլ	
590	Աբդիաս	
561		Եւիզմարուզաք
559		Ներիգլասար Ղարոսարքաք
555		Բաղասար
538		Պարսից իշխանութեան տակ

ՔՐԻՍՏՈՍԷ ՅԱԹԱՆՔ	Դ. ԺԱՄԱՆԱԿԱԿՑԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ	
	Հ Ր Ե Ա Յ Ք	Պ Ա Ր Ս Ի Կ Ք
536	70 ասրւանդերու թիւը կը բննայ, Ջորաբարէւ	Աիւրսո + 529
520		Ամբիւսէս
522		Ջմերգիս
522		Դարեհ Ս. Արշտուայայ
486	Եսթեր տիկին	Քսերքսէս Ա.
465		Արտաշէս Ա. Երկայնա-
450	Եզր, Նեեմի	բազուկ
424		Քսերքսէս Բ.
423		Դարեհ Բ. Հարճորդի
404	Յաքոբան քահանայապետ	Արտաշէս Բ. Ուշեղ
358		Արտաշէս Գ. Ողջոս
334	Յազդոս քահանայապետ	Դարեհ Գ. Կոչումանոս
332	Հրեայք Մակեդոնացւոց տակ կը մանեն	
330		+ Դարեհ, Պարսիկք Մա- կեդոնացւոց տակ կը մանեն
336	Աղեքսանդր Մեծ + 323. Իր յաջորդներն Եզրպ- աստ ու Ասորիքի մէջ	



ԳՐԻՊՏՈՒԹՅԱՆ ՆԱԾԱԳՐ	Ե. ԺԱՄԱՆԱԿԱԿՑԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ		
	ՀՐԵԱԸՖՔ	ԵԳԻՊՏՈՍ	ԼՍՈՐԻՔ
331	ՈՆԻՄ Ա.	Պաղոմեոս Ա.	Սեղեկոս Ա.
323			
313			Ներկատոր
300	ՍԻՄՈՆ Ա. ԼՐ- ՂԱՐ		
284		Պաղոմեոս Բ.	
281		Փիլադելֆոս	
262			Անտիոքոս Ա. Սովետր
250	ՈՆԻՄ Բ.		Անտիոքոս Բ. Թեոս
247			Սեղեկոս Բ. Ապոկրիֆոս
243		Պաղոմեոս Գ.	
227		Էւերգետեոս	
224			Սեղեկոս Գ. Կերունոս
221			Անտիոքոս Գ. Մեծ
204		Պաղոմեոս Դ. Փիլադելֆոս	
195	ՈՆԻՄ Գ.		Սեղեկոս Դ. Փիլադելֆոս
187			
181		Պաղոմեոս Զ.	
176		Փիլադելֆոս	
167	Մատթիթ		Անտիոքոս Դ. Էպիֆանեոս
166	Յուդա Մակարէ		
161			Անտիոքոս Ե. Էպիֆանեոս
150			Դեմետրիոս Ա. Սովետր
149	Յոննաթան		
148			Աղքատանդր Ա.

ԳՐԻՍՏՈՒՆ ՅԱԹԱՆՔ	Ջ. ԺԱՄԲԱՆԱԿԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՏԱԿ		
	ՀՐԵԱՅՔ	ԵԳԻՊՏՈՍ	ԱՍՈՐԻՔ
147		Պաղամեոս Է. Փիսկան	
145			Դեմեար Բ. Նե- կասոս
144			Անտիոքոս Զ. Թէոս
143	Շմուսն		
139			Անտիոքոս Է.
135	Հիւրկանոս Ա.		Սիդէացի
130			Դեմեար Բ. Նա. րէն
126			Անտիոքոս Ը. Գրիւպոս
116		Պաղամեոս Ը. Ղաթարոս	
107	Արիստարուզ Ա.		
106	Աղեքսանդր Ա.		
96			Անտիոքոս Թ. Կիզիկոս
90			Անտիոքոս Ժ. Էւսեբէս
84			Տիգրան Բ. Հայ- ոց արքայ
81		Պաղամեոս Թ. Ազեա	
79	Աղեքսանդրա		
71	Հիւրկանոս Բ.		
69	Արիստարուզ Բ.		
64	Հիւրկանոս Բ. Նորէն		
63			
51		Պաղամեոս Ժ. Դիոնիսիոս	Անտիոքոս Ասի- ացի կը մերժի
47		Կղէոպարոս †31	Ասորիք Նահանգ Հասմայեցոց
39	Անտիգանոս Բ.		
37	Հերոփղէս † 1. Մակարայեցոց ցեղին ընկածը		
30		Եգիպոսոս Նա. Հանգ Հոս. Ճայեցոց	

ՔՐԻՍ-  
ՏՈՍԷ  
ԵՏՔԸ

Է. ԺԱՄԱՆԱԿԱԳՐ · ՏԱԽՏԱԿ

1	Քրիստոս ծնու.
30	Մկրտեցու.
34	Չարչարեցու եւ մեռու.
	Ստեփանոս քարկոծեցու.
39	Կուսնեցիոս դարևու.
41	Մատթէոսի աւետարանը
50	Ընտրելոց ժողովքը Երուսաղեմի մէջ
45/55	Մարկոսի աւետարանը
55/60	Ղուկասու աւետարանը
67/68	Պետրոսի եւ Պողոսի նահատակութիւնը



# Ա Ս Գ Ր Վ Ի Ն

## ԳԼՈՒԽՆԵՐՆ ՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆԻԲԸ

### Հ Ի Ն Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն

- Ա . ԳԼ . Աշխարհքիս ստեղծմանէն մինչեւ  
ջրհեղեղ . 4000 — 2345 Քրիս . Յառ .  
որ է 1655 տարւան պատմութիւն . 1
- Բ . ԳԼ . Ջրհեղեղէն մինչեւ Արրամին կո-  
չումը . 2345 — 1915, որ ըսել է 430  
տարւան պատմութիւն . . . . . 13
- Գ . ԳԼ . Արրամու կոչումէն մինչեւ Իսրայ-  
ելացւոց Եգիպտոսէն ելլելը . 1915 —  
1500 կամ 1485, որ է 415 կամ 430  
տարւան պատմութիւն . . . . . 19
- Դ . ԳԼ . Իսրայելացւոց Եգիպտոսէն ելլե-  
լէն մինչեւ Աւետեաց երկիր մտնելը .  
1500 — 1460, այս ինքն՝ 40 տարւան  
պատմութիւն . . . . . 62
- Ե . ԳԼ . Իսրայելացւոց Աւետեաց երկիրը  
մտնելէն մինչեւ Սաուղայ թագաւո-  
րելը . 1460 — 1092, որ ըսել է 362  
տարւան պատմութիւն . . . . . 111
- Զ . ԳԼ . Թագաւորութեան սկզբէն մինչեւ  
երկու բաժնուիլը . 1092 — 972, որ է  
120 տարւան պատմութիւն . . . . . 155

- Է. ԳԼ. Իսրայելացւոց թագաւորութեան  
երկու բաժնուելէն մինչեւ Բարեւոյնի  
գերութիւնը . 972 — 588, այս ինքն  
384 տարւան պատմութիւն . . . . . 214
- ՀԱՏ. Ա. Իսրայելի թագաւորու-  
թիւնը, որն որ 19 թագաւոր ունե-  
ցաւ եւ 253 տարի տեւեց . . . . . 219
- ՀԱՏ. Բ. Յուդայի թագաւորու-  
թիւնը, որն որ 20 թագաւոր ունեցաւ  
ու 387 տարի տեւեց . . . . . 263
- Ը. ԳԼ. Բարեւոյնի գերութենէն մինչեւ  
Քրիստոսի գալուստը . 588 կամ 606 —  
1, որ է 606 տարւան պատմութիւն . 300
- ՀԱՏ. Ա. Բարեւոյնի գերութեան եւ  
թանասուն տարիները . 606 — 536 . 300
- ՀԱՏ. Բ. Գերութենէ ետքը պարսիկ  
թագաւորաց ասկ . 536 — 330 . . 319
- ՀԱՏ. Գ. Պաղովմանց ու Սելեւկեանց  
ատեն Հրէաստան պատահածները .  
300 — 167 . . . . . 332
- ՀԱՏ. Դ. Մակաբայեցւոց պատե-  
րազմները . 167 — 107. . . . . 342
- ՀԱՏ. Ե. Քրիստոսի ծննդենէն յա-  
ռաջ եւ իր ատենները Հրէից քաղա-  
քական ու կրօնական վիճակը 107 — 1 361
- Ն Ո Ր Կ Տ Ա Վ Ա Ր Ա Ն
- Ա. ԳԼ. Քրիստոսի ծննդենէն մինչեւ քա-  
րոզութեան սկսիլը . 1 — 30, որ ըսել  
է 30 տարւան պատմութիւն . . . . . 379

- Բ. ԳԼ. Քրիստոսի քարոզութեան սկսելէն մինչև շարձարուիլն ու մեռնիլը . . . 390
- ՀԱՏ. Ա. Քրիստոսի քարոզութեան առաջին տարին եւ առաջին զատիկը . . . 394
- ՀԱՏ. Բ. Քրիստոսի քարոզութեան երկրորդ տարին ու երկրորդ զատիկը . . . 406
- ՀԱՏ. Գ. Քրիստոսի վարդապետութեան երրորդ տարին եւ երրորդ զատիկը . . . 423
- Գ. ԳԼ. Յիսուսի շարձարուելէն ու մեռնելէն մինչև յարութիւն առնելը . . . 459
- Դ. ԳԼ. Յիսուսի յարութենէն մինչև առաքելոց քարոզութիւնը . . . 476
- Ե. ԳԼ. Առաքելոց քարոզելու սկսելէն մինչև Պետրոսի ու Պօղոսի մարտիրոսութիւնը . 33 — 67, որ է 34 տարւան պատմութիւն . . . 487
- ՀԱՏ. Ա. Քրիստոսանէութիւնը Երուսաղէմ ու Սամարիա կը քարոզուի . . . 487
- ՀԱՏ. Բ. Քրիստոսանէութիւնը Հեթանոսներուն կը քարոզուի . . . 501

